ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ

ԵՐԿԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ— 1981

Ap 1 ԳՄԴ 84.4Հ
Ա 315

Բնագիրը, առաջաբանն ու ծանոթագրությունները՝
ՍՈՒՐԵՆ ԵՏԻՊՅԱՆԻ

135847

Ալիշան, Ղ.

Ա315 Երկեր (Բնագիրը, առաջաբանը և ծանոթագր. Ս. Շտիկյանի)— Եր.։ Սովետ. գրող, 1981.— 400 էջ։

Ներկա հատորում առաջին անգամ ի մի են բերված հեղինակի չափածո և արձակ ստեղծագործությունները։ Զետեղված են նաև հայագիտությանը, փիլիսոփայությանը, թարգմանությանը, մանկավարժությանը և դաստիարակությանը նվիրված հոդվածներ, որոնք մի նոր և գեղեցիկ կողմից են բացահայտում Ալիշանին՝ որպես հայագետի, փիլիսոփայի և մտածողի։

4702080200
Ա ——————— 80 «Ֆ»
705 (01) 80

Ap1
ԳՄԴ 84.4Հ

© «Սովետական գրող» հրատարակչություն,
կազմողի, առաջաբանի և ծանոթագրությունների համար

ԱՌԱՋԱԲԱՆ

«Չկա պատերազմի գործից ավելի ամոթալի գործ, չկա մարդու մեջ դրանից ավելի անմարդկային բան, մանավանդ, եթե մեկը քննի պատճառներն ու արդյունքները»։

(Ղ. Ալիշան)

Ավելի քան վաթսուն տարի տևող իր գիտական գործունեության ընթացքում Ղևոնդ Ալիշանը հանդես եկավ հայկական մշակութային կյանքի ամենատարբեր ասպարեզներում՝ դրսևորելով իրեն որպես ականավոր բանաստեղծ ու արձակագիր, որպես Հայաստան աշխարհի հմուտ տեղագիր-պատմաբան ու աշխարհագրագետ, որպես կարող թարգմանիչ (անգլերենից, ֆրանսերենից, գերմաներենից, պարսկերենից, իտալերենից—հայերեն), որի՝ Բայրոնից, Շիլլերից, Մալերբից, Լամարթինից, Շատոբրիանից, Լոնգֆելլոյից, Ուիլլիսից և էլի ուրիշներից կատարած չափածո և արձակ թարգմանությունները չեն հնացել առ այսօր. հրաշալի կերպով դրսևորեց իրեն ազգային հրապարակախոսության բնագավառում, ոչ պակաս հաջողությամբ հանդես եկավ որպես հայ դասականների քննական բնագրերի պատրաստող ու հրատարակող և այլն։ Այս էր պատճառը, որ Ալիշանի մասին չթաքցված հիացմունքով ու անսքող համակրանքով էին արտահայտվում եվրոպական և ռուս մշակույթի այնպիսի ականավոր մեծություններ, ինչպիսիք էին Աբիխը, Դյուլյորիեն, Զախառն, Մառը, Վեսելովսկին, Բրյուսովը, Ստասովը և ուրիշներ։

Երևտասարդ վարդապետը առաջին անգամ և հիմնավորապես խոսակցություն բացեց իր մասին իրենց պարբերականում՝ «Բազմավեպում», 1847 թ. հուլիս ամսին

«Նահապետ» կեղծանունով հրատարակված «Հայոց աշխարհիկ» բանաստեղծությամբ։ Նույն թվականի վերջերին դարձյալ նույն ստորագրությամբ լույս աշխարհ եկած «Պլպուլն Ավարայրի» պոեմը արդեն կասկած չթողեց, որ հանձին Ալիշան—Նահապետի հայ նոր գրականությունը հարստանում է մի նոր և ըստ ամենայնի ինքնատիպ դասականով։ Հետագա տարիների ընթացքում հրատարակված մյուս գործերը («Հայ հայրենիք», «Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ», «Մասիսու սարերն», «Հրազդան» և այլն), որոնց դիմավորում էին ընթերցողների լայն զանգվածները խանդավառ հրճվանքով, արժանանում էին մեկից ավելի արտատպությունների, և որոնք 60-ական թվականներին ամփոփվելով «Երգք Նահապետի» ընդհանուր խորագրի ներքո, դարձան մեր գրականության չթառամող ծաղկեփունջը։

Պատասխանելու համար այն հարցին, թե ինչու Ալիշանի «Երգք Նահապետի» բանաստեղծաշարի՝ ընդամենը տասնմեկ անուն ստեղծագործություններին վիճակված էր գրական-գեղագիտական մի ամբողջ մեծ շարժման սկզբնավորողն ու նրա զոյության փաստն ազդարարողը դառնալ, մենք պետք է միտ բերենք, որ դրանք սկսեցին հանդես գալ, ինչպես արդեն ասացինք, անցյալ դարի 50—60-ական թվականներին։ Հայկական հողևոր կյանքում կլասիցիզմի տիրապետության ժամանակաշրջանն էր այս, որը, մանավանդ Մխիթարյան հեղինակների շնորհիվ, կարողացել էր հասնել իր առավելագույն հոտակ դրսևորմանն ու գրական-գեղագիտական իմաստով ամբողջացմանը։ Եվ ի թիվս դրամատուրգիայի, հռետորական արվեստի վերաբերյալ իրենց մշակած տեսությանը, հայ կլասիցիստները որոշակի ու կայուն տեսակետ էին զարգացրել նաև պոեզիայի ժանրերի վերաբերյալ։ Հետևելով Բուալոյին, Մխիթարյան կլասիցիստներն էլ ուսուցանում էին, որ պոեզիան, լինելով գեղարվեստական մտածողության դրսևորման բարձրագույն եղանակը, պետք է իր ընտրության ոլորտում վերցնի միայն և բացառապես «Բանք վսեմականք»-ը։ Իսկ այդպիսիք համարվում էին աստվածաշնչային զանազան պատմությունները, հայոց թագավորների, իշխանների, ազնվականների կյանքը, եկեղեցական հոգևորականների գործունեությունը, նշանավոր հայազգի զորավարների ռազմավարական արվեստի այլևայլ դրվագները, հայոց հեթանոսական շրջանի առասպելներից վերցված թեմաները (օր՝ Հայկ—Բել, Արա Գեղեցիկ—Շամիրամ, Արտաշես—Սաթենիկ) և այլն։ Այդ էր պահանջում բանաստեղծներից կլասիցիզմի հայ տեսաբաններից մեկը՝ Ղուկաս Ինճիճյանը, նույն տեսակետը դրամատուրգիայի բնագավառում զարգացնում էր Պետրոս Մինասյանը, այդ սկզբունքներին հետևելով էին ստեղծագործում Եղիա Թովմաճյանը, Մանվել Ջախջախյանը, Արսեն Բագրատունին և ուրիշներ։

Ալիշանն իր «Երգք Նահապետի» շարքով եկավ վճռական ու հիմնավոր հարված հասցնելու այս մտայնությանը։ Հակադրվելով իր նախորդներին, նա երգեց իր արյուն-ավեր «Հայոց աշխարհիկը», «Շնչիկը հազադին ոտնառած» ծերունի Նահապետի բերանով ողբաց իր հոգեհարազատ հայրենիքը («Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ»), պանդխտությունից դեպի հայրենի եզերքները վերադարձած Բաբկենի հետ լացեց՝ սիրելի Հրազդանի ափերին տիրող կործանումները տեսնելով («Հրազդան»), խոսակցության կոչեց Ավագ և Փոքր Մասիսներին, երգեց Շավարշանի գաշտի «Նոր շուշանի» Սանդուխտի գմայլելիորեն քնքուշ սերը և այլն։ Թեմաներ էին սրանք, որոնք ընդհանուր ոչինչ չունեին հայ կլասիցիստների նախընտրած «վսեմական» սյուժեների հետ և որոնցից այդ գրականության թեկուզ ամե-

նաանշան ներկայացուցիչը ինքնագոհ արհամարհանքով գլուխ կգարձներ։ Բայց թեմաներ էին դրանք, որոնք նորություն ու թարմություն էին 19-րդ դարի հայ գեղարվեստական գրականության անդաստանում, այդ իսկ պատճառով էլ ամենևին չմնացին աննկատ և, որ կարևոր էր, ազդարարեցին գրական նոր ուղղության՝ ռոմանտիզմի առկայության փաստը։

Ապա, հետևելով եվրոպական կլասիցիստներին և հատկապես Բուալոյին, հայ կլասիցիստներն էլ զարգացնում էին այն տեսությունը, որ վերևում հիշատակված «վսեմական» թեմաները գեղարվեստորեն վերարտադրելու համար անհրաժեշտ է օգտագործել նրան համապատասխանող «վսեմական» լեզու։ Եթե եվրոպացիները դրան հասնում էին հղկելով ու կոկելով իրենց ազգային լեզուները, դուրս նետելով օտարամուտ բառերն ու արտահայտությունները, ապա նրանց հայ հետևորդների վիճակն այս տեսակետից ավելի «բարվոք» էր. հին լեզուն՝ գրաբարը, որը բազմիցս հայտարարվել էր «աստվածապարգև», «երկնառաք», «միակ ու անփոխարինելի», հայ կլասիցիստները այդ լեզուն էլ վերցրեցին որպես իրենց մտածողության դրսևորմանը համապատասխանող լավագույն միջոց։ Գրաբարով սկսեցին գրել Մխիթարյան միաբանության՝ առանց բացառության, բոլոր հին ու նոր հեղինակները, սկսած միաբանության հիմնադրից՝ Մխիթար Սեբաստացուց, այդ բնագավառում իրենց հմտությունն ու քաջագիտակությունը ցույց տալու համար սկսեցին կիրառել բազում-բազմաթիվ ինքնահնար բառաբարդումներ, ածանցումներ ու դարձվածքներ, որով ավելի խճողեցին առանց այն էլ բարդ այդ լեզուն, բանական իմացության բարձրագույն չափանիշը համարեցին այն իրողությունը, թե տվյալ անձնավորությունն ինչ աստիճան խորությամբ է յուրացրել այն և նա էլի ինչ նորահնար ձևեր ու արհեստական միջոցներ կարող է ներգնել լեզուն ավելի ճոխացնելու համար և այլն։ Եվ եթե 18-րդ դարի վերջերին ու 19-րդ դարի սկզբներին ինչ-որ չափով արգարացվում ու գրականագիտորեն պատճառաբանվում էր գրաբարի՝ որպես ազգային գեղագիտական մտածողության ձևի գոյության հանգամանքը, ապա դրությունը բոլորովին այլ էր 19-րդ դարի կեսերից սկսած։ Ավելի ու ավելի կտրվելով ու հեռանալով ժողովրդից, հիշյալ ժամանակաշրջանում գրաբարը դարձել էր մի անկենդան մարմին, հագցված կենդանի, հարաշարժ օրգանիզմի վրա և բնականաբար միայն խանգարում էր ու արգելակում նրա զարգացմանը։

Մեծ մտածողներին հատուկ խորաթափանցությամբ Ալիշանը հասկացավ այս և, համարձակորեն դեմընթաց գնալով տիրող մտայնությանը, «Երգք Նահապետաց» շարքի իր բոլոր գործերը գրեց աշխարհաբարով, ավելի ճիշտ՝ մի ինքնատիպ, «ալիշանյան աշխարհաբարով» (Հր. Աճառյան), որն իր տեսակի մեջ եզակի ու անկրկնելի մնաց։ Դժվար էր այդպիսի սխրանքի գիմելը, առավել ևս դժվար էր այն հասարակայնորեն իրականացնելը, որովհետև գրական ասպարեզի վրա իշխում էր գրաբարի կրքոտ պաշտպանն ու ջատագովը՝ Արսեն Բագրատունին, ի դեպ Ալիշանի մտերիմ ավագ ընկերն ու արտամոտ բարեկամը, իսկ նրա «Հայկ Փիլոզաֆ» դյուցազներգությունը, որը բաղկացած էր մի քանի տասնյակ հազար չափածո տողերից, լայնորեն դիտվում էր որպես «գրոց լեզվի» վերջնական ու անմնացորդ հաղթանակի անառարկելի ապացույց։ Այդպիսի սխրանքի իրականացնելը ոչ պակաս դժվար էր նաև այն պատճառով, որովհետև գարակեսի հայ գրականության անդաստանում դեռ շարունակում էին իրենց իրավունքների մեջ

մնալ ու իրենց հասարակական զգալի փայաթաժինն ունենալ գրաբարի կողմնակիցներն ու պաշտպանները, որոնք անխնա պայքարի գրոշ էին պարզում բոլոր նրանց դեմ, ովքեր փորձում էին հակառակ մտայնություն հանդես բերել։

Ալիշանի շնորհիվ Մխիթարյան գեղարվեստական գրականությունը դուրս եկավ միաբանության քարեղեն ընդերքից, դադարեց ընտրյալ վարդապետների մի փոքրիկ խմբի նեղ-անհատական «սեփականությունը» լինելու տխուր իրավիճակից, ինչպիսին որ էր մինչև Ալիշանը և դեմքով ուղղվեց դեպի հայ ժողովրդի լայն զանգվածները, «սրտի խոսք» դառնալով նրա համար։

Սագում է բնականոն մի հարց. որտեղի՞ց Ալիշանի գեղարվեստական ստեղծագործության մեջ հայտնվեց և որոշակի բովանդակություն ստացավ այս աշխարհիկ, ժողովրդական տարրը։ Չէ՞ որ նա էլ, իր բազմաթիվ նախորդ գրչակիցների նման, ձևավորվել ու հասունացել էր նույն Մխիթարյան միաբանության ներսում, «Մխիթարյան շնորհաշուք կաղապարի ներքո», ունեցել էր գրական ներշնչանքի և հասարակական ոգևորության նույն ակունքներն ու աղբյուրները։ Ինչպե՞ս նա կարողացավ այդպես որոշակի զատվել իր մեծ ու փոքր նախորդներից։

Այս հարցի՝ թեկուզ համառոտակի պատասխանը բացահայտում է Ալիշանի ծավալած եռանդալից գործունեությունը մեր մշակութային կյանքի այնպիսի մի բնագավառում, որը, մեղմ ասած, աչքաթող էր արված նրա ժամանակ և որի առաջին գնահատողն ու գիտակցորեն իմաստավորողը եղավ հենց ինքը։ Խոսքը վերաբերում է հայկական ժողովրդական բանահյուսությանը, նրա՝ որպես մտածողության մի որոշակի ձևի ճանաչմանն ու որպես այդպիսին իմաստավորմանը և հետևաբար, հասարակական-գեղագիտական բնույթի ինքնուրույն մի դիսցիպլինի հրապարակայնորեն վավերացմանը։

Մինչալիշանյան շրջանի Մխիթարյան (և ոչ միայն Մխիթարյան) գեղագետների ու գրողների կարծիքը այս կապակցությամբ առավել քան հստակ է ու որոշակի, և այդ էլ է գալիս կլասիցիզմի պոետիկայի առաջադիր սկզբունքներից. քանի որ պոեզիան, չափածո խոսքը, բարձրագույնս կազմակերպված մտածողության դրսևորման մի ձևն է, և նրա հիմնական ու գերագույն նպատակն է «ճաշակ առնել դեպի վսեմն ու վեհը», ուրեմն նա իր տեսադաշտում չի կարող վերցնել «ցածր» արվեստը՝ ժողովրդական բառ ու բանը, առավել ևս, չի կարող լրջորեն անդրադառնալ նրա գիտական քննությանը։ «Հեռո՛ւ կացեք ժողովրդական գռեհիկ խոսք ու արվեստից, դուք ոչինչ չունեք նրանցից սովորելու», քարոզում էր Բուալոն, և նույնը, իհարկե, հարմարեցված հայկական պայմաններին ու միջավայրին, կրկնում էին կլասիցիզմի հայկական տեսաբանները։ «Ռամկորենն» արհամարհական տերմինով էր որակված հայկական ժողովրդական բառ ու բանը, նրանց անդրադառնալը՝ անիմաստ ու անկարևոր աշխատանք, իսկ նրանց ուսումնասիրելը կամ քննության նյութ դարձնելը՝ ժամանակի անտեղի կորուստ։

Ալիշանը եկավ հակադրվելու իշխող այս մտայնությանը և անթերկյուղ համարձակությամբ դիմեց հայ հանրությանը, պահանջելով ու հորդորելով հիմնավորապես զբաղվել ազգային երգերի և ժողովրդական ավանդությունների հավաքմամբ, դասակարգմամբ և ուսումնասիրությամբ։ Ներկա հատորում զետեղված «Ազգային երգերու և ուրիշ ավանդներու վրա» հոդվածաշարը, որն սկսեց հրատարակվել «Ռազմավեպում», 1843 թվականից սկսած, եղավ այդ նոր մտայնության

գրսևորման ամենափայլուն ապացույցը։ «Փափագելի լան է,—գրում էր Ալիշանը,—որ մեր ազգայինք ալ... վառվեին ազգային ավանդությանց սիրովը ու ձեռքիրենն եկածին չափ շանային հավաքել այնպիսի երգեր, անմեղ խաղեր, պատմություններ ու առակներ, ետքը ուրիշներուն ալ հաղորդեին, կամ առանձին տպագրությամբ, և կամ ազգային օրագիրներուն մեկուն խրկելով»։ Ցանցած մի քանի ամիս Ալիշանը նորից է անդրադառնում հայկական ժողովրդական «Ռամկական երգերին» և այս անգամ կատարում է նրանց գիտական արժեքավորումը։ Կարուկ կերպով հակադրվելով իր ժամանակակիցներին ու նախորդներին, նա գրում էր. «Այդպիսի երգերը շատ անգամ ավելի լավ կիմացընեն ազգին հանճարը, քան թե ծանր գրվածքներ և կգտնվին անոնց մեջ անանկ սքանչելի զուրցվածք, որ միայն իրենց ռամկական անունին համար հասարակ բան մը կկարծվին, բայց ճշմարիտը գերագույն գրվածոց կարգը անցնելու են»։

Ալիշանը բացահայտում է ժողովրդական բառուբանի պատմական տեղն ու նշանակությունը հայ ժողովրդի հասարակական կյանքում։ Ցուցնելով այս հարցում ոչ մի նախորդ, և հենց ինքը լինելով իր իսկ բացած՝ առ այդօր անհայտ գիտական ճանապարհի առաջնեկը, նա գրում էր լրացուցիչ մեկնաբանության կարիք չունեցող հետևյալ տողերը. «Ինչպես քաշվածքը կամ պատկերը կենդանություն կուտա պատմության, այնպես ալ երգը. վասն զի երկուքն ալ բանաստեղծություն են։ Եվ ազգային պատմության ասա կերպով կենդանություն տվող պատկերներն ու երգերը որչափ որ հին ըլլան, այնչափ ալ ավելի ախորժելի կըլլան ազգասիրաց... Ազգային կամ ռամկական ըսված երգերը թեպետև զուրկ ըլլան վեհական և գեղեցկաշար լեզվին գեղեցկութենեն, սակայն շատ հեղ քան զայն լեզվով գրվածները ազգու և սիրելի կըլլան։ Վասն զի բանաստեղծությունը և զգացմունքը լեզվին հետ կապված չէ, կամ գեթ այնչափ կապված չէ, հապա զուրցված կերպին, իսկ զգացմունքը ավելի նյութին և անոր կարդացողին մերձավորությանը հետ»։

Առանց վերապահության կարելի է ասել, որ հայկական բանահյուսությունը ձևավորվելու և մյուս գիտությունների շարքում որպես առանձին առարկա ճանաչվելու ու ընկալվելու հարցում գործի առյուծի բաժինը պատկանում է Ղևոնդ Ալիշանին։

Հայկական ժողովրդական բանահյուսությունն է Նահապետի պոեզիան սնող հիմնական ակունքներից մեկը։ Որ «Գլուխն Ավարայրին», «Մասիսու սարերնը», «Ողբամ զքեզ Հայոց աշխարհը» և առհասարակ «Երգք Նահապետի» խորագրի ներքո ամփոփված մյուս գործերը գրելիս Ալիշանը եղել է հայկական ժողովրդական այդ պարզ, անպաճույճ ստեղծագործությունների որոշակի ազդեցության ներքո, այս հանգամանքի ամենաբազմակողմանի իմաստով. դա հաղիվ թե հնարավոր լինի վիճարկել։ Եվ այս հանգամանքն էր, որ մի ամբողջ գլխով բարձրացրեց Ալիշանին իր մեծ ու փոքր նախորդների, ասենք՝ Հյուրմյուզյանի, Ջաթշախյանի կամ Ավգերյանի նկատմամբ, գարձնելով, Աղայանի բնութագրմամբ՝ «Նահապետ հազար թոռների»։

Պակաս կարևոր չէ Ալիշանի նորարարական դերը Մխիթարյան գեղարվեստական գրականության մի այլ ասպարեզի՝ գեղարվեստական արձակի բնագավառում։ Մինչև Ալիշանը հլած Մխիթարյան հեղինակների մոտ գերակշիռ մեծամասնություն է կազմում չափածո խոսքը։ Կարելի է այդ միարանությանը պատկանող

մեկից ավելի անդամներ նշել, որոնք գրել են միայն չափածո և նույնիսկ գիտական ուսումնասիրություններ ու ծավալուն հոդվածներ են գրել չափածո և հանգավորված տողերով։ Հիշենք Թեկուզ Ղուկաս Ինճիճյանին, որը 1794 թ. Վենետիկում հրատարակել է իր «Ամարանոց Բիւզանդեան» աշխատությունը, որտեղ գիտաշխարհագրական բնույթի հարուստ տեղեկություններ է հաղորդվում Պոլսի, նրա թաղամասերի, նրա պատմական արժեք ներկայացնող հուշարձանների, Պոլիսն իրարից բաժանող Բոսֆոր նեղուցի և այլ այս կարգի իրողությունների մասին, և այդ ամենը մի քանի հազար չափածո տողերով, ըստ որում առանց բացառության բոլոր տողերը վերջանում են միևնույն «ին» հանգով։ Եվ այսպես էլ շարունակվեց մինչև 19-րդ դարի 40-ական թվականները, երբ «Բազմավեպում» «Ամսոց թնական նշանները» ընդհանուր խորագրի ներքո սկսեց հրատարակվել Ալիշանի նովել-մանրապատումները, նվիրված տարվա յուրաքանչյուր ամսվան։ Հեղինակը, գրուցելով իր փոքրիկ բարեկամի՝ Գրիգորիկի հետ, նրան ձեռք-ձեռքի տված, անցնում է ամսից-ամիս և աշխույժ ու կենդանի գրույցի ձևով տալիս է յուրաքանչյուր ամսվա բնութագրական առանձնահատկությունները, նրա նշանակությունը մարդկանց հասարակական գոյավիճակի կազմակերպման համար, մեկնաբանում է անելիքների այն խումբը, որը պահանջում է տարվա տվյալ ամիսը կամ եղանակը և այլն։ Ներկա հատորում զետեղված են հիշյալ բոլոր նովելմանրապատումները, որոնց թեկուզ մակերեսային ընթերցումից էլ ակնհայտորեն երևում է Ալիշան—արձակագրի անուրանալի կարողությունները զբրական այս ժանրում։ Եվ գեղարվեստական արձակի բնագավառում Ալիշանի այս երախայրիքը ամենևին էլ միակը չմնաց։ Բնականոն զարգացումը հանդիսացան «Հովիվք Շիրակայ» չորս նովելատիպ պատմվածքները, գրված առաջին և միակ անգամ գրաբար լեզվով, որտեղ հեղինակը գովերգում է գյուղական կյանքի իդիլիան, կուսական բնությունն իր անկրկնելի գեղեցկություններով, և այդ հենքի վրա դրվատում է «քիրտն ի ճակատ» աշխատանքը, այն համարելով ամեն տիպի բարիքի ու մարդկային բարեկեցության ստեղծողը։ Սրան հաջորդեց «Նվեր տղայոց» արձակ գեղարվեստական ստեղծագործությունը (Վենետիկ, 1866 թ.), որի առանցքը բնության միջոցով ու նրա օգնությամբ երեխաներին հշմարտացի ու բանական դաստիարակություն տալու խնդիրն է. մի թեմա, որը բարձրացված է գեղարվեստական անառարկելի վարպետությամբ։ Գագաթնակետն ու գլուխգործոցը հռչակավոր «Հուշիկք հայրենյաց հայոց» պատմագեղարվեստական երկհատոր ստեղծագործությունն է, (Վենետիկ, 1869—1870։ Մինչ այդ հատվածաբար հրատարակվել է «Բազմավեպում», 1862 թ. հունվարից սկսած)։ Մխիթարյան գեղարվեստական գրականության մեջ, այսպիսով, 1840-ական թվականներից սկսած, ստիճանաբար և հաստատուն կերպով սկսեց իր գոյությունն ազդարարել գեղարվեստական մտածողության մի նոր որակ, տարիների ընթացքում այն հասակ առավ ու ըստ ամենայնի ամրապնդվեց, իսկ 18-րդ դարի 90-ական թվականներից սկսած ոչ միայն հասարակական համընդհանուր ճանաչում ու արժեքավորում ստացավ, այլև իր արտահայտած նոր գաղափարների, ազգային և հայրենասիրական խնդիրների յուրովի բարձրացման ու մեկնաբանման և այլ, այս կարգի հարցադրումների առաջքաշման շնորհիվ սկսեց իր որոշակի ու վճռական տեղն ունենալ հայ ժողովրդի գեղարվեստական գրականության համընդհանուր շղթայում։ Եվ այս բնագավառում, ինչպես տեսանք, Ալիշանի գերն ու կատարած գործը ամենևին էլ երկրորդականներից չի եղել։

Իհարկե, Ալիշան—բանաստեղծի և արձակագրի ծավալած գործունեությունը ամենևին էլ առանձին ու ինքնաբավ չէր ընթանում Ալիշան—գիտնականի գործունեությունից։ Ավելին. առանց երկընտրանքի կարելի է ասել, որ բազում տպագիր աղբյուրներից, աշխարհի շատ նշանավոր քաղաքների գրադարաններից ու արխիվներից, իրենց մասնագիտական ձեռագրերից նյութեր հավաքելով իր գիտական ուսումնասիրությունների համար, Ալիշանը հենց այդ նյութերն էլ, իհարկե համապատասխան ընտրությամբ, օգտագործում էր որպես իր գեղարվեստական ստեղծագործությունների անհրաժեշտ ատաղձ, պատկերա-մտածողական որոշակի համակարգով կարողանում էր վերաշարադրել «չոր» փաստերն ու իրողությունները։ Ներկա հատորում զետեղված Ալիշանի հայագիտական-բանասիրական աշխատությունները, որոնք մի-մի անկրկնելի էջեր են նրա գիտական կյանքում, չնայած իրենց շուրջ հարյուր հիսուն տարվա մեծամենությանը, առաջ քաշած հարցադրումների, պարունակած գրական-բանասիրական նորությունների, հայագիտական այս կամ այն երևույթին տրված գնահատության տեսակետից շարունակում են պիտանի ու այժմեական լինել անգամ այսօր։

Խոսքն այս իմաստով առաջին հերթին վերաբերում է Ալիշանի «Հովհաննես Սարկավագ վարդապետ» խորագիրը կրող հոդվածին, Սարկավագի «Բան առ ձագն... որ կոչի սարիկ» պոեմի հանրահայտ հավելվածով (տե՛ս հիշյալ հոդվածին տրված ծանոթագրությունը), որն առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպի» 1847 թ. հուլիսյան համարում։ Ալիշանին էր վիճակված Հովհաննես Իմաստասերի գրչին պատկանող այդ չափածո երկասիրության հայտնաբերման մեծ պատիվը, առաջին անգամ հրապարակավ, համապատասխան ծանոթագրություններով ու մեկնաբանություններով այն ընթերցողներին ներկայացնելու երջանկությունը, ճշտելու այդ ստեղծագործության հետ կապվող բազմաթիվ հարցեր, սկսած վերնագրից, մինչև բնագրային առանձնահատկությունները։ Հիշյալ պոեմի արժեքն ու նշանակությունը պատկերացնելու համար բավական է մեջ բերել ակադ. Մ. Աբեղյանի կարծիքը. «Այս մեծ քերթվածքն իր ձևով ու բովանդակությամբ,— գրում էր նա,— մի նշանակալից նորություն է մեր հին գրականության մեջ։ Եթե դա փրկված չլիներ կորստից, մեր նոր մտավոր հոսանքի զարգացման տեսությունը թերի կմնար»[1]։ Իսկ ինչ վերաբերում է Ալիշանի՝ Հովհաննես Սարկավագին նվիրված ուսումնասիրությանը, որը զետեղված է ներկա հատորում, ապա եթե նշենք, որ խոսելով դրա մասին, Մ. Աբեղյանն այն որակել է «Հմտալից հոդված» արտահայտությամբ, իսկ նրանում արծարծված տեսական-գրականագիտական գրույթների գերակշիռ մասն ընկած է Հովհաննես Սարկավագով զբաղվող հետագայի մեր հայագետների աշխատությունների հիմքում (օր. Հ. Ոսկանյան, «Հովհաննես Սարկավագի գրությունները», «Հանդես Ամսօրյա», 1925 թ., էջ 118 և հտն., Մ. Աբեղյան, «Հայ հին գրականության պատմություն», Երևան, 1970 թ., «Հովհաննես Սարկավագ վարդապետ» գլուխը, Արբրահամյան Ա., «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», Երևան, 1956 թ. և այլն), ապա համապատասխան մեկնաբանություններն արդեն ավելորդ կլինեն։

Պակաս նշանակալից չեղավ Ալիշան-հայագետի անփոխարինելի դերը Մովսես Խորենացու կապակցությամբ։ Ամբողջ տասնչորս դար բացարձակ ու ան-

---

[1] Մ. Աբեղյան, «Երկեր», հատ. Դ, Երևան, 1970, էջ 72։

լինելի հեղինակություն եղած Պատմահայրը, հիմնականում ՆԹ-րդ դարի վերջերից սկսած, ենթարկվեց եվրոպացի գանազան հայագետների «քննափետությանը» (Մ. Աբեղյան)։ «Ապացուցեցին», որ Խորենացին դիտամբ կեղծել է իր աղբյուրները, ապրելիքն՝ հորինել է գոյություն չունեցող հնամենի ու հարգարժան աղբյուրներ, իր «Պատմությունը» ավելի հավատի ներկայացնելու համար, որ նա յուրացրել է իրենից առաջ եղած հայ պատմիչների աշխատությունների ամբողջ գլուխներ և, հյուսելով իր «Պատմության» մեջ, ներկայացրել է որպես իր անփականը, «ցույց տվեցին», որ Խորենացին դիտավորյալ կերպով լռության է մատնել, կամ շուտ տված է ներկայացրել պատմական մի շարք անձանց գործն ու հասարակական-քաղաքական նշանավոր իրադարձությունները, հետևաբար և նրա երկասիրության գիտական հավաստիությունը լուրջ կասկած է ներշնչում, «գտան» վերջապես, որ Խորենացին նկարագրել է մեկից ավելի դեպքեր, խոսել է ոչ քիչ թվով երևույթների մասին, որոնք սակայն չեն հաստատվում արտաքին պատմիչների կողմից, ուրեմն Պատմահոր երևակայության արդյունքն են և այլն։ Եվ հայ բանասերներից Ալիշանն առաջիններից մեկն էր, եթե ոչ ամենաառաջինը, որ ձայն բարձրացրեց այս խաչակրաց արշավանքը դադարեցնելու համար։ «Մովսես Խորենացի և իր Հայոց պատմությունը», «Մովսես Քերթողահայր հայոց», «Յաղագս Մովսիսի Խորենացւոյ Դ. անուանեալ գրոցն պատմութեան» և այլ հոդվածներով, որոնցից առաջին երկուսը զետեղված են ներկա հատորում, Ալիշանը եկավ իր մասնագիտական խոսքն ասելու այդ հարցի վերաբերյալ և քաջագիտակ բանասերին հատուկ նախանձելի հմտությամբ ցույց տվեց Խորենացու մեծ դերը հայ ժողովրդի մտավոր կյանքում։ Ջանասիրաբար պրպտումներ կատարելով Վենետիկի Մխիթարյան միաբանության՝ իրենց հարուստ մատենադարանում, հնօրյա ձեռագրերից ամենայն խնամքով հավաքելով մի փոքրիկ փաստ, աննշան թվացող մի տեղեկություն, մեր այս կամ այն պատմիչի՝ Խորենացու կապակցությամբ ասված վկայությունը, հաճախ մեկ-երկու բառից բաղկացած ասույթներ Պատմահոր մասին, այդ ամենն անց կացնելով իր գրականագիտական-մատենագիտական Ներքնատումների բովով, քննելով ամբարած նյութը ժամանակաշրջանի եվրոպական հայագիտության առաջավոր մակարդակի դիրքերից ու այդ մակարդակի պահանջների հենքի վրա, Ալիշանը կարողացել է տալ մեկը մյուսից ավելի ուշագրավ հոդվածներ՝ նվիրված Պատմահորը։

Զբաղվելով հայագիտական-բանասիրական գործունեությամբ, իրենց ամսագրի՝ «Բազմավեպի» էջերում հանդես գալով բազում շահեկան հոդվածներով (ըստ որում ամենևին հազվագյուտ չեն միևնույն համարում երկու և նույնիսկ երեք անուն գործով հանդես գալու դեպքերը), վարելով Մխիթարյան միաբանության առաջնորդի՝ որբատեր տեղակալի, «Բազմավեպի» խմբագրի, Վենետիկի Մուրատյան վարժարանի «Պատմության և բարոյականության» առարկաների ուսուցչի, ապա տեսուչի աշխատատար պարտականությունները, մի քանի անգամ գիտական «գործուղման» մեկնելով Եվրոպայի գրեթե բոլոր նշանավոր մտավոր կենտրոնները (Հռոմ, Տուրին, Փարիզ, Մարսել, Լոնդոն, Օքսֆորդ, Դենտ, Ամստերդամ և այլն),— Ալիշանը, սակայն, ամենևին էլ չդարձավ «կաբինետային» գիտնական։ Այսպիսի ներքին նկարագիրը և իր ժողովրդի հանդեպ ապավ, հայեցողականորեն—անկիրք վարքագիծը մինչև կյանքի վերջն էլ անհամատեղելի եղավ նրա հասարակական պահվածքի հետ։ Եվ ժամանակաշրջանն էլ այդպիսին չէր։ Դեռ դարասկզբից ամբողջ աշխար-

հին արդեն որոշակիորեն հայտնի դարձավ, որ Թուսաստանն ոչնչել է գրաղվել Կովկասյան պարանոցում գտնվող ժողովուրդների, այդ թվում նաև հայերի հարցով։ Նուստով ռուսական փաստաթղթի բանակներն սկսեցին իրենց հաղթական առաջխաղացումը Կովկասում՝ պարտություն պարտության հետևից մատնելով «կարմիր աստղի ու կիսալուսնի ասպետներին» (Մարքս)։ Հայ ժողովրդի և նրա մտավորականության համար ակնհայտ դարձավ, որ մոտենում էր երանելի փրկության րոպեն։ Ուստի անհրաժեշտ էր հրահրիչ խոսքով դիմել հայության լայն զանգվածներին, ոտքի ելնելու, ռուսական բանակներին ըստ հնարավորին օգնելու, կռվով բազձալի ազատությունը նվաճելու անսքող կոչ անել։ Ալիշանն այդ ամենն արդեն անում էր իր «Նուագք» հինգհատորյա ժողովածուում զետեղված ազգային-հայրենասիրական ընտիր բանաստեղծություններով, որոնցից մանավանդ երրորդ՝ «Հայրենիք» հատորում տեղ գտած գործերի ներքին գաղափարական առանցքը «Ի զէ՛ն ի վրէ՛ժ օ՛ն անդր յառաջի» փառաբանությունն է ու պրոպագանդումը, նույն բանն էլ նա անում էր նաև իր հրապարակախոսական գործունեությամբ։ 1850-ական թվականներին, երբ հայ ժողովրդի՝ Թուրքական լծից ազատագրության հարցը գտնվում էր առավել քան հասունացման ընթացքում, Ալիշանը գրում էր. «Ինախնիք այն ատեն պարծանք են մեզի, երբ մենք ալ իրենց նման ըլլանք, ինչպես որ մեզի նախատինք ալ չեն ըլլար անոնք, թե որ մենք անոնցմե լավ ըլլանք։ Մեր ինչ ըլլալը մեզնե կախված է. անոնց պարծանքն ու փառքը մեզ լույս մըն է մեր ճամբուն վրա, բայց մենք պետք է որ աչվընիս բանանք ու ոտվընիս շարժենք»։

Իսկ այդ մեծ առաքելությունն ամբողջությամբ ու ճշգրտորեն իրականացնել կարողանալու համար Ալիշանը պահանջում է վերլուծաբար քննել ազգի անցյալը, բացահայտել նրա թե՛ դրական և թե՛ պարսավելի կողմերը, երկուսն էլ առաջիկայում նկատի ունենալու և դրանց նկատմամբ համապատասխան ճշգրիտ վերաբերմունք մշակելու համար։ Ալիշանյան զգաստ տրամաբանությունը, երևույթների քննության ու մեկնաբանության հարցերում հանդես բերած ճիշտ դատողությունները, այս կապակցությամբ, վեր են ամեն գովասանքից։ «Թե որ անցածներուն վրա է պարծելիքնիս,— գրում էր նա,— պետք է անցյալը ներկայն դանազանենք ու ըսենք թե ինչ ունինք, թե չէ ունինք։ Ու երբոր հիշենք, թե մեր պապերուն քով կարասով լեցուն ստակ կար, հիշենք ալ, որ մեր քսակը պարապ է։ Երբոր անոնց սամուրները հիշենք, նայինք, թե մեր ուսերն ալ կտաքնա՞ն»։

Այսպես ուրեմն, պետք է ճանաչել ճշմարտությունը, որքան էլ ծանր ու անցանկալի լինի, և վճռականորեն ձեռնամուխ լինել ազգի պակասություններ ուղղման, ի վերջո նրանց վերացման բարդ գործին. «Ըլլանք մարդասեր, բայց չվակչինք շողոքորթի կամ հացկատակի պես ազգի հետև ու առնունք անցնինք անոր ըրածը չրածը գրուցելու, խենթություններն ալ խելոքությանցը հետ պաշտելու»։ Պետք է լինել ուղղասեր և անաչառ, չգերագնահատել ազգային արժեքները, չհիշտակվել դրանցով, բայց և չանտեսել ու չարհամարհել դրանք։ Ալիշանը վճռականորեն դեմ է ինչպես ազգային ինապարծությանը, այնպես էլ ազգի նկատմամբ ժխտողական վերաբերմունքին։ «Ազգը միշտ վար գարնել, անգործար պակասությունները հիշել, ողբալ և արհամարհել, ասենք մարդուն սիրտը կկոտրեն, կթուլացնեն, կհուսահատեցնեն։ Միշտ գովելն և գովելի ցուցնելն ալ՝ սիրտը կուռեցնեն, միտքը կկուրացնեն, ինապարծ ազգասեր մը կընեն...»։

Առաջ քաշելով հայրենի երկրի փրկության, օտարազգի նվաճողներից զենքի ուժով այն ազատագրելու, ազգային մշակույթի զարթոնքը ըստ ամենայնի խրախուսելու ու զարգացնելու հետ կապված հարցերը, խստորեն նշավակելով ինչպես ազգամոլներին, այնպես էլ ազգայացներին, հիմնականում ճշգրտորեն կանխորոշելով հայ ժողովրդի հետագա առաջընթացի ուղիները, Ալիշանը սակայն ամենևին էլ սնամեջ պատրանքներ չի տածում նրա՝ առանց իր բնօրրանի զարգացման, «աշխարհաքաղաքացիորեն գոյատևելու», կամ «հայրենիքեն դուրս հայ ըլլալու» մասին իր ժամանակ բավականին տարածված տեսությունների նկատմամբ։ Նա սկզբունքային ու անպիշում հակառակորդն է «Շնական փիլիսոփայությանը» այսինքն Կինիկներին (հունարեն «կյունես» բառից, որ նշանակում է «շուն»), որոնց զարգացրած տեսության համաձայն առաջնայինը մարդ-անհատի անձնական ապրումներն են, նրա պահանջները, նրա զգացմունքները, որոնց ըստ ամենայնի լիակատար բավարարումն էլ համարվում էր հիմնականը և նոր միայն մյուս «ընդհանուր» գաղափարները (ազգություն, հայրենիք), որոնք դասվում էին երկրորդական գործոնների շարքը։ «Սուտ է այն փիլիսոփան,— գրում էր նա,— որ ազգասիրությունը մարդասիրության դեմ կկարծե, որ հայրենիքը հերձված կսեպե երկրես և կբսե. բոլոր երկիրս ալ հայրենիք է լավ մարդու։ ...Իր ազգը չսիրողը հավիտյան մարդասեր չըլլար»։

Շարունակելով իր բանավեճը այս կարգի տեսությունների ջատագովների հետ (որոնցից, ի դեպ, կային նաև իրենց՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամների թվում), նա գրում է այսօր էլ ճիշտ հնչող հետևյալ տողերը. «Մեր ազգին սկիզբը ոչ ի Պոլիս եղեր է, ոչ Գաղատիա, ոչ Կաֆա, ոչ Կալկաթա, ամենքս ալ մեկմնկե առաջ նոնե Հայաստանեն եկած ենք, և հիմա, ուր ալ որ ենք, պանդուխտ ենք»։

Այսուհանդերձ, իհարկե, Ալիշան—հրապարակախոսը, մնում է ինչպես իր միջավայրի, այնպես էլ ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական պայմանների հարազատ ծնունդն ու արդյունքը։ Ազգերի՝ որպես այդպիսին բաժանման և տարբեր լեզուների առաջացման հիմնական պատճառը, օրինակ, նա համարում է Բաբելոնի հանրահայտ աշտարակաշինությունն իր համապատասխան պատմությամբ, հունական ու եվրոպական պատմիչների հաղորդած վկայությունները «ճշտում» կամ «լրացում է» ըստ Աստվածաշնչի հաղորդած տվյալների. մի դիրք, որը բացարձակ ու անառարկելի հեղինակություն է նրա համար, իր զարգացրած այս կամ այն միտքը կամ գիտական տվյալ եզրահանգումը հավաստելու համար որպես կռվան մեկից ավելի անգամ վկայակոչում է Խիկար իմաստունին և այլն։ Իր այս խոսելի կողմերով հանդերձ, Ալիշանի հրապարակախոսությունը իր ուրույն և անկապտելի տեղն ունի մինչհյուսիսափայլյան շրջանի հայկական հրապարակախոսության շարքում, որպես նրա նախնական և կարևոր օղակներից մեկի և որի ուսումնասիրությունը այդ առումով կարող է շատ նոր և ուշագրավ հանգամանքներ բացահայտել։

Մի քանի խոսք էլ ներկա հատորում տեղ գտած այն հոդվածների մասին, որոնք բացահայտում են Ալիշանի կարծիքները փիլիսոփայական-տեսական հարցերի վերաբերյալ։ Փիլիսոփայական հարցերին Ալիշանն անդրադարձել է տարբեր առիթներով և, որ շատ կարևոր է, անդրադարձել է որոշակի աշխարհայեցության դիրքերից։ «Մենք հավանյալ և հավատացյալ ենք Մովսիսական գրոց պատ-

մության, որ ամենեն առաջ մեզի ցուցընե զտիեզերս իբրև ամենածրար ձու մը ստեղծված անժամանակեն Գերագույն Բանի, որս հոգին...գրգայր ի վերա անդընդապատյար տարուբերած տարերացն, իր կամքով և հրամանավ կոչելով և կոկելով ի զանազան ձև ու բնություն, որով միանգամայն կերպացավ կաղնին առանց կաղնի և հավն՝ առանց հավկրթի»[1]։

Օբյեկտիվ իդեալիզմի տեսանկյունից Ալիշանը վերլուծում ու քննում է արտաքին աշխարհն ու նրա այլևայլ դրսևորումները, անում եզրակացություններ, որոնք կարևոր են ինչպես Ալիշան-տեսաբանին ճիշտ հասկանալու, այնպես էլ ժամանակաշրջանի հայ փիլիսոփայական և տեսական մտքի ընթացքը ճիշտ պատկերացնելու համար։

Այսպես ուրեմն, մարդուց և բնությունից դուրս, նրանց համար քննդնված ու հաստատուն դարձած օրինաչափություններից անկախ, գոյություն ունի ինքնաբավ մի սուբստանց՝ Գերագույն Բանը։ Այն ունի իր զարգացման ներքին օրինաչափությունները, Ալիշանի բառերով ասած՝ «շարժմունքին ինքնահատուկ ձևերը», որոնք կարելի է հասկանալ և քննության առարկա դարձնել իր դրսևորումների մեջ, այսինքն տեսանելի և ընկալելի այն ձևերի մեջ, որով ներկայանում է բանականությամբ օժտված անհատներին։ Գերագույն Բանի կամ «Բարձրագույնս կազմակերպված մտածողության» դրսևորման առաջին և հիմնական ձևը բնությունն է, արտաքին աշխարհն իր հազարերանգ գեղեցկություններով, իր այլևայլ գոյավիճակներով, ձևերի ու չափերի իր անկրկնելի միասնականությամբ։ Բնությունն իբրև այդպիսին կատարյալ է ու անթերի, լիակատար կերպով ամբողջացված ու լրացված։ Այն ենթարկելով ուսումնասիրության ու տրամաբանական քննության, կարելի է հասկանալ ու մեկնաբանել գերագույն ճշմարտության դրսևորման օրինաչափությունները։ «Գրեթե ամեն փիլիսոփայից դրության սկիզբը բնության վարկածներն են,—գրում է Ալիշանը,—ամեն բանասնեղծից առած և տված ոգին բնութենեն է, ամենեն ախորժելի գրքեր՝ բնության նկարագիրներն են»։ Այս է պատճառը, շարունակում է Ալիշանը, որ բոլոր դարերում և ժամանակներում, թե՛ հռչակավոր իմաստասերը, թե՛ արյունարբու զորականը, թե՛ աշխարհակալ արքաներն ու իրենց փառքով գոռոզ տիրակալները մշտապես ձգտել են դեպի «ամենապատում բնության գիրքը» այնտեղ հանգիստ գտնելու, իսկ հիմնականում՝ այնտեղ խորհելու, մտորելու համար, այսինքն՝ Գերագույն մտածողության՝ բնության միջոցով դրսևորվող օրինաչափությունները լավ իրենց կարողությունների և հնարավորությունների ընկալելու ու մեկնաբանելու համար։

Փիլիսոփայական դատողությունների այս համախումբը, որն Ալիշանը զարգացնում է «Հրահանգ, զրոանք և սիրիանք հասարակաց» հոդվածում, իր հետագա խորացումն ու ամբողջացումն է գտնում մյուս՝ «Ծնունդ ներքո» աշխատության մեջ։ Եվ չնայած այն գրել է նախորդից մոտ քսան տարի հետո, բայց Ալիշանի փիլիսոփայական հայացքներում որևէ արմատական, էական փոփոխություն տեղի չի ունեցել։ Հիշատակված երկու աշխատությունները, ինչպես նաև մի քանի ուրիշ հոդվածներ կամ հոդվածներում առկա դրույթներ, նյութ են տալիս ուսումնասիրողներին բացահայտելու Ալիշանի փիլիսոփայական հայացքները. մի կարևոր գործ, որը, ցավոք, առ այսօր չի արված։

---

[1] Ալիշան Ղ., «Հուշիկք հայրենյաց հայոց», հատ. Առաջին, Վենետիկ, 1921, էջ 175։

Պատմա-մանկավարժական բնույթի հոդվածներում հեղինակը նկատի ունենալով իրենց երկու գպրոցների՝ Մուրատյան և Թափայելյան վարժարանների բազմամյա ուսուցչի և տեսուչի իր փորձը (մոտ քսան տարի ուսուցիչ, որից տասը՝ նաև տեսուչ) և իմաստավորելով այդ փորձը եվրոպական դասական մանկավարժության ձեռք բերած նորագույն նվաճումների հենքի վրա, բարձրացնում է «Հայ մանկտիկների» դաստիարակության հետ կապված այնպիսի հարցեր, որոնք խիստ ուշագրավ են անգամ այսօր։ Հայ մտավորականներից Ալիշանն առաջիններից էր, որ ձեռնամուխ եղավ եվրոպական դասական մտքի ներկայացուցիչների ստեղծագործությունները հայերեն թարգմանելու աշխատանքներին, այդ թարգմանություններից մի քանիսը հրատարակեց «Բազմավեպի» տարբեր տարիների համարներում, երանց կցելով այդ թարգմանությունների հեղինակների (Թր.՝ Շատոբրիան, Շիլլեր) մասին խորագետ կենսագրական-բնութագրականներ։

Ալիշանի չափածո և արձակ երկերի ներկա հատընտիրը մի նոր և գեղեցիկ կողմից է բացահայտում նրան մեր այսօրվա ընթերցողների համար որպես բանաստեղծի, որպես հայագետի և մտածողի։

ՍԱՐԻԳԵՆ ՇՏԻԿՅԱՆ

ԵՐԳՔ ՆԱՀԱՊԵՏԻ

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻԿ

Հայո՜ց աշխարհիկ, գարունդ է հասել,
Ահա գեղեցիկ գարուն քո եկել.
Ո՜վ դու ի վաղուց մոռցված հայրենիք,
Ո՜վ դու իմ սրտիս անմոռաց տեղիք.
Ահա գարունիկդ հասել է, հասել,
Ավագ Մասյաց ծայրն ընդ քեզ հաշտ հայել.
Այն սև-սև ամպերն են դարձել ի փախ,
Այն ճերմակ-ճերմակ սարերն են անվախ.
Զընիկն ի ծոցին բացեր է ճանապարհ,
Քաղցրիկ կըրկըջով գլորե գետս հազար.
Այն բարձրը ժայռից, որ երկնուց են մոտ
Կենաց օրհնության ծագե առավոտ։
Ահա քո բլուրներն, Հայո՜ց աշխարհիկ,
Այն քո բյուր բլուրներ՝ ու բյուր վրտակիկք
Հազար քո ձորերդ ու հազար քո դաշտ՝
Տարան ցուրտ ձըմեռդ ու ձյուներըդ շատ,
Լերինք և հովիտք ընդարձակ ու լայն
Նախշուն զարդարվեն նոր հարսին նըման.
Կապուտակ սարերդ գունըզգուն պըսակ
Կապեն ի գլուխ զինչ նոր թագվորակ.
Ի ծայրից սարից որ երկնուց են մոտ՝
Փըռվի մինչ ի խորն հորոտն ու մորոտ.[1]
Գետեղերք ամեն բացել են շուշան

Պայծառ դընդղղնով[2] ցընցղղկեն[3] գնան.
Սարեվերքն ամեն ղվարդն երևցուցին,
Ա՜հ կարմրուկ վարդեր, զավակք եդեմին։
Պըլպուլն ի հեռվանց թողեց ճրգնարան
Ծովեր ու ցամքըներ թեվեց անգուման,[4]
Կանչեց ի օդուն երեք հետ բարև
Ոտկունքըն դըրավ ի սարին վերև,
Սարին վերևեն ի վարդին տերև,
Հայո՜ց աշխարհիկ, քեզ երետ[5] բարև.
Սարեկն ի սարին եկաց ու մընաց,
Անմեղ նախընծով եղավ երգասաց.
Արագիլն երդիսն ավլեց իր բունիկ,
Կանգնեցավ կըղաց՝ «Հայո՜ց աշխարհիկ».
Արտուտիկն թռավ, թռավ վարուվեր,
Մանրիկ ճըլվըլով ասաց շատ բաներ.
Տատրակիկն իջավ, իջավ ցած ու ցած
Կըրծկունքն ի գետին ըզկո՜ւկո՜ւ ճըվաց.
Հովիվն ու հոտաղ, գառինք, եզն ու կով
Գոհացան զաստված՝ մարգեր շուրջ գալով։
Հանց քեզ տերն է տվել գարուն գեղեցիկ
Որ դրախտի նմանիս, Հայո՜ց աշխարհիկ.
Դրախտիկն որ անցել դաձնա քեզ գարնամբ,
Ջինչ պայծառ արևն որ ծածկեր ի ամպ։
Բայց Նահապետիս ի՞նչ ասեմ ծերուկ,
Որ եմ քան զամեն ծաղիկ վաղանցուկ.
Իմ գարունս անցել ու հասել աշուն,
Ցամքած տերևուկս ըսպասեմ հովուն՝
Թե ե՞րբ ի լերանց ծոցուն փըչե խոր
Ջըդե անկըսկիծ[6] զիս ի մահուն ձոր։
Նահապետիս կյանքն եղավ բավական,
Խընդությամբ կեցավ ի յուրն Հայաստան.
Ժամ է որ երթա ի այն հայրենիք
Ուր իսկի չզատվին եղբարք սիրելիք.
Խընդությամբ կերթամ քեզնից, Հայաստան,
Քեզնից առած հողս՝ ի քեղ տամ թաղման.
Ի քո ծոցեդ վեր կանգնեցավ Ադամ,
Ես ի քո ծոցեդ տ՝ ելնեմ անթառամ։

Ա՜յ մանկտիք, եկեք շուրջ Նահապետիս
Ականջ դիք շայիր[7] հորդ հտքի ձայնիս.
Պլպուլն ու սարեկն երգերն են նորել,
Իմն՝ հետ տատրակին հողու հավսարել.
Մանկտիք, զիս հայոց հողն ու ջուր սնուցել,
Ես այն հողն ու ջուր սըրտով եմ սիրել.
Հայրենյաց հարուստ է հող, ջուրն անուշ,
Քանց օտար վարդ՝ քաղցր է հայրենյաց փուշ.
Հայաստանի օդն է քաղցր ու բարակ,
Հովերն են անուշ, պայծառ են վըտակք.
Ջուրն ու պըտուղն համ տան անմահության,
Խոտն ոսկեզօծ զգառներուն բերան.
Յոսկեթել ամպոց այգուն զովագին
Թորթոր[8] իջանե ցողիկ մանրագին,
Կարմիր ճաճանչով արևուն շաղված
Գա ի խավըրծիլ մանանա[9] կենաց։
Ո՜հ լերունք ծաղկած, ո՜հ ջուրք ծիծաղկոտ,
Ջանուշիկ հովերդ ի զիս ածեք մոտ.
Հողմունք անուշիկք՝ եկեք մոտ ի զիս
Շունչ ու երգս առեք տարեք ի Մասիս.
Տարեք վերջի շունչս ի տուն տապանին
Ու լըսեցուցեք զավկաց Թորգոմին։
Զե՛զ կասեմ մանկունք սիրունք նազելիք,
Որոց է բնական Հայոց աշխարհիկ.
Մ՝ ուրանայք զերկիրդ ու զազգդ սիրուն,
Ծառն արմատով ծառ, տունն հիմամբն է տուն.
Մեր տերն ի երկնուց ծայրեն երբ իջավ
Երկրիս հիման քարն յԱյրարատ դրավ.
Այն մեր Մասիսու երկնաձև սարեն
Աչեց ըզբոլոր՝ վերացավ նորեն.
Հոն չափեց սահման յուր նախաստեղծին
Ջեփրատն ու զԵրասխ բաժակ դրավ դրախտին.
Կենաց փայտին ծառն ի հոն ծաղկեցավ,
Ջար գիտութենե բարին մեզ տըրվավ։
Ի հայոց հողեն կազմեցավ Ադամ
Ջօդն հայոց Եվայն ծրծեց քաղցրահամ.
Աչքերըն պայծառ, երեսքն աննըման

135847

Հրեշտակաց առջևն հոն հանդիսացան.
Ծաղկունքս այս ծընած են ի այն ծաղկոց
Որ Եվայի պսակ եղան ու նրստոց.
Այս մեր սարերուս ծերուկ արձագանգք
Աստուծո ձայնին տրվին պատասխանք.
Աստից երգք սիրոյ ու ապաշխարության
Երկինքն ի վեր նախ երկրես վերացան.
Արյամբն Աբելի Քրիստոս հոս զենավ,
Կրկին և կրկին մեզ հույս խոստացավ.
Ադամ ծերունին այս սարիս ներքև
Ջավակացն ասաց զիր հետին բարև.
Այս ձորիկն ի վայր լալով գնաց Եվա,
Գլուխն ի քար դրրավ կարոտ Եդեմա.
Ի հոն են նընջել մարդիկն առաջին,
Որ հետ հրեշտակաց զաստված օրհնեցին։

Երբ գոռաց երկինքն, ու գետին սարսեց
Ամպերն ի ծով, ծովն ի ամպեր վազեց,
Այն սարին ծայրեն Նոյ մտավ ի տապան,
Ջրագունդ երկրիս շուրջն եկավ մանուման.[10]
Իջավ բազմեցավ ի բարձրն Մասիս
Ջաղու[11] աղավնին ղրրկեց ավետիս.
Երկիրս էր դատարկ անապատ ահեղ,
Լուկ[12] ի Հայաստան կայր մարդկության տեղ։
Մեք եմք հարազատ ծեր Նոյի ծընունդք,
Որ ժառանգեցինք զհովիտս ու լերունք։
Նախընծեցավ Բել բրոնավոր արքայն,
Զհասակն անճոռնի կանգնեց բարձր ու լայն.
Շատ զորքեր շարան բերավ անհամար,
Թուխ արև բրոնեց մեր երկնուց պայծառ.
Լրսեց Հայկն արի, ձենեց քաջերուն,
Սարն ի վար վազեց զինչ կայծակ ամպուն.
Ջաղեղրն լարեց կամրրջի նրման
Որոտաց թրոուց ըզնետրն գերան,
Ձերկաթն ու պրղինձ կրրծից հրսկային
Սրրտովն ու թոքով հանեց կրոընկին.
Փլավ Բելն ի բլլրեն ի խոր Գերեզման,
Ձետ ծուխ սև զորքերն եղան ցիրուցան։

Շատ կրտրբՀվորայք հանեց Հայաստան,
Շատ Բելեր փլուցին քաջքն Հայկի նման.
Հոռոմն, Ասորին, Մար, Սրկյութ, Պարսիկ
Հայոց թրերուն եղան պատառիկ.
Այս սարեր, ձորեր ու դաշտերս ամեն
Կարմիր են քրտնել, կարմիր խրմել են.
Ի հոն են խաղցել Տիգրան ու Տրդատ,
Վարդանն ու Վահան, Աշոտ ու Սրմբատ։
Հոն կրակե թռուցել նետ հայոց մանկտին,
Թրզի պես թափել գունդ-գունդ թշնամին.
Այս բլուրներուս ծայր դրոշը կներ բացվել,
Առյուծն ու արծիվ հետ խաշին վառել.
Ձենք ծարված գացել, դարձել են արբած,
Ճրմռոտած ճակատք պարզել են պսակած.
Ընկել են ընկել հոն հայոց այլ քաջք
Մեկ ձեռքըն նիզակ ու մեկալըն խաչ.
Թրռել ի դաշտեն ելեր են երկին
Բազմել հետ Գրիգոր, Տրդատ, Վարդանին։
Աբգար թագավոր մեր քաջ իմաստուն
Թրղթով է խոսեր հետ աստվածորդվույն,
Երնեկ և ընծա առել Քրիստոսեն,
Դեսպան[13] ընդունել զառաքյալ Թադեն.
Զառաջին պատկերն այն սուրբ դաստառակ
Փրկչին կողաբաց Գեղարդըն միակ,
Այլ շատ նշխարքներ, մատունք զանազան
Ի ծոցն է պահել աշխարհս Հայաստան,
Շատ առաքյալներ ունի յուր քարոզ,
Շատ սուրբ հայրապետ, ամբավ մարտիրոս.
Բյուրավոր ունի մատրունք[14] ու տաճար
Անապատ ու վանք հազար ու հազար։
Ի աստուծո առեր ըզլեզուն ու զգիր,
Թարգմաներ ամեն ազգե գիրք ընտիր
Ճարպիկ տղայք ղրրկել ի Ստամպոլ, Աթենք,
Հայն հոռոմ լեզվով հաղթել է զՀելլենք.
Շատ գրրքունք գրրեր մեր հարքն ու մաղաթ
Ձետ ցորեն դիզել քանց բարձր Արարատ։
Բայց ափսո՜ս հիմա, որ չար թշնամիք

Իսկի չեն խնայել Հայո՜ց աշխարհիկ,
Եկեղեցիք, վանք, գրրատուն, դարպաս[15]
Զարկել են թրրով, հրրով դաս ու դաս.
Զազգն ընչոք տեղոք քանդել ու գերել,
Դեմ չորս հովերուն տրվել ու ցրրվել։
Ավա՜ղ քեզ, ավա՜ղ, Հայոց աշխարհիկ,
Տուն երկնանման, փրլած տաղվարիկ։
Այլ ի՞նչ ափսոսամ ըղքեզ, Հայաստան,
Երբ ձեռքն Աստուծո տեսնում հանդիման.
Ինքն է հրամայած քակել, ինք շինե,
Զինչ ըզհետ ձրմռան ըզգարուն հանե.
Զաշխարհ մեր սիրեաց Աստված ի սկզբան,
Թե անեծք երետ՝ սիրո էր և այն։
Ի թուխ ամպերեն ելնե փոթորիկ,
Հողու հավսարին ծառերն ու մայրիք,
Տերևքն և ողկույզքըն մարգարտաշար
Ի ոտից ներքև երթան ի խավար.
Ամպն և փոթորիկ շուտով վերանա,
Նոր արև, գարուն, ծառն ու այգին գա։
Արմատք հին՝ նոր ճյուղ, հին ճյուղք՝ նոր ծաղիկ
Ընծայեն բնության, Հայոց աշխարհիկ.
Դուք այլ կործանած սյունք, դուք այլ կանգնիք.
Կապին կամարքդ, ո՜հ, սուրբ եկեղեցիք.
Քակյալ վանորեք շինիք հոգվոց տուն,
Դառնան ձեր սաղմոսք, ձեր քաղցր ալելուն։
Այդ քո ավերակք, Հայո՜ց աշխարհիկ,
Նըշան մեծության են, թոռմած ծաղիկ.
Թոռմած ես՝ բայց վարդ, ցամքած՝ բայց հալվե.
Ով քեզ օտար ծաղկան հետ փոխե՝
Նա կույր է, հիմար. զհոտն անմահության
Ընդ սուտ գույն փոխե տրխմարն ու տրղայն.
Հիմար է հիմար, որ ղպարծանքն հարանց
Երթա վաճառե ընդ օտար աղանց.
Աշխարհիս օրենք՝ որ ծնողք չրփոխվին,
Հայրենափոխք չեն, ուրացողք լինին.
Ծառն՝ արմատով ծառ, ծառովն է արմատ.
Դալար մանկտիք, ձեր տակն է Արարատ.

Գի՜նդ կացնք, աստված ցողե ի վերեն,
Ծըլիք ու ծաղկիք, քանց վարդ ի թըփեն.
Ջըլնի ոք նախանձ, չըլնի հակառակ,
Թե չէ՝ նման խոտու լինի խայտառակ,
Այլք ծըլին ծաղկին, թէպէտ քըչիկ մի ուշ.
Ջարկամըն մնա միշտ դըժնիկ, միշտ փուշ.
Որք խելոք, սիրով կան զինչ աղբըրիկք
Տեսնեն քո գարունդ, Հայո՜ց աշխարհիկ։
Այլ ես Նահապետ, ցամքած ծերունիս՝
Երթամ մեր հին հարցըն տամ ավետիս,
Ասեմ թե գարուն երեկ տան Հայոց,
Դուք Նահապետիս ասացեք՝ հոգվո՜ց,
Ձեր Նահապետիդ՝ տո՜ւր կակուղ հողիկ,
Որ քեզ պինդ սիրեց, Հայո՜ց աշխարհիկ։

ՀԱՅ ՀԱՅՐԵՆԻՔ

Առավոտուն դըռնակն է բաց.
Ե՛լ, ե՛լ արևդ Հայաստանյայց։
Ահա ելնեն որք՝ին[1] ի քուն
Ու Նահապետն այլ որ անքուն՝
Աստվածազարդն ելնե հանդես,
Հայ հայրենյացն ելնե ի տես։
Ելներ, ելներ նա մինչ Արտոս,
Ջաչերն ածել ընդ չորս բոլորս,
Երբ սեավ գիսակն էր ճակատուն
Ոտկունքն արագ էր քանց այծուն,
Աստվածազարդ ելներ հանդես
Հայ հայրենյացն ելներ ի տես։
Դուք որ սարերդ ի վեր երթայք,
Ա՜յ իմ սիրուն կտրըճորայք,
Գեմ[2] թե զդալար աչվիդ սիրեք,
Նահապետին մըտիկ արեք.
Աստվածազարդ ելեք հանդես
Հայ հայրենյացս ելեք ի տես։
Ահա ելանք ի մեծ հանդես.
Հայ հայրենյացս ելանք ի տես.

Ահա տեսանք զաշխարհն Հայոց
Որ ըզդրախտիկն առել ի ծոց
Դեմ երկընուց կայր կանգնըման
Անդրանկածին մորըն նրման։
Ահա եկեր արևն յամպոց,
Վարդ կու թափեր աշխարհն Հայոց.
Ցողըն տեղայր զով ու սիրուն
Զինչ մարգարտին ի սատափուն.
Կարմիր կանաչ ծին[3] ծիրանի
Գոտի ածվեր Հայաստանի։
Լերանց սարերըն բարձրածայր
Ոսկի պըսակ եդան հավսար.
Հայոց գետերն հազարավոր
Իջանեին ճաճանչավոր.
Հազար թե գետ, բյուր թե առվի
Հայոց ծովակքն այլ ավելի։
Ա՜յ դրախտի ջրեր, իջե՛ք, իջե՛ք
Ձերկիրն հայոց արբեցուցեք.
Ահա վտակունք կըրկըջային,
Ձորն ու հովիտ արբենային,
Ամեն կաթեն աստղիկ ծրներ,
Ամեն ծրնեն ծաղիկ ծագեր։
Ահա տեսանք ղծաղկունքն Հայոց
Գույնն էր երկնից, հոտըն խընկոց.
Վարդն ու շուշան էին վառման
Հարսնամատերն ի ջուր փրման.
Հորոտ մորոտն[4] էր տարածել
Ըզտեսողաց աչքըն քաղել։
Ահա տեսանք ղհավերն հայոց,
Ձայնն հրեշտակի, գույնն էր ծաղկոց.
Կռունկ ու արագիլ գային հիտրաց,[5]
Ղարիպներուն սիրտըն ճըխաց.
Աբեղաձագ, սարեկ, արտուտ,
Կաքվուկ, պըլպուլ վարդակարոտ։
Ահա տեսանք մեծ կարավան
Ի չորս դիհաց[6] եկեր կու գան.
Քուրդըն կու գայր արտ ամռան

Հոտերն ի հետ շարան-շարան.
Աղջկունք առյալ դասրըն[7] հյուսեն,
Մանկունք ըզսառն աղբյուրս իրմեն։
Ահա տեսանք զվաստակն Հայոց,
Սերմն էր իջել երկնից ամպոց.
Հոն որ Ադամ վարեր գութան
Քանց ըզքառսուն հասկերըն տան.
Հոն որ Աբել գառն ընծայեր՝
Մաքիքն ածեն միշտ ջուխտըկներ.
Հոն որ զայգին է տընկեր Նոյ՝
Ոսկի ողկույզքն են խաղողոյ.
Կաթն այն կըրծքի, գինին բազկի,
Ջուրն հասիաթ[8] է ամենի։
Ահա տեսանք զխորանքն Հայոց
Կամար կապեր են երկնից ծոց.
Եկեղեցյաց թիվն հաղարով,
Մատրունք սրբոց չեն համարով.
Խունկրն ծըխեն առտու՝ ըրկուն,
Աստված առնու զհոտըն սիրուն։
Ահա տեսանք զքարերն Հայոց,
Մեր պապերուն մահվան օրոց.
Գերեզմաններըն լուռ էին,
Խաչվեմքն ի քովն աղոթեին,
Տերն ողորմի հանգուցելոց
Եվ ամենայն երկրիս Հայոց։
Ահա տեսանք զերկինք պայծառ,
Շըրթներն՝ երկրիս Հայոց հավատ,
Հավերն ի հունչ, հովերն ի շունչ
Օդըն վառվառ, ջուրն ի մրմունջ.
Լուսիկս է ճոխ, արևս անուշ,
Սարերն ի վար իջնումք մեք ուշ։
Ահա ի գունդն երթայր արև
Նահապետին մենք տանք բարև,
Մեր Նահապետն այլ ձեզ բարև.
Աստված վերեն տա շատ արև
Իժիր[9] գնացեք դուք այդ հանդես
Հայ հայրենյացդ ելեք ի տես։

ՈՂԲԱՄ ԶՔԵԶ, ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ

Զայս իմ կենաց դառնահամ ծովս որ եմ կտրել՝
Հայո՜ց աշխարհ, ըզքեզ իսկի չեմ մոռացել.
Հիմ՝ որ շընչիկս ի հագագիս է ոտնառած,
Մազթափ ճակատիս գետընուց ակընկորած[1],
Ընդ չորս բոլորդ հետ հայիմ, հետ ծածկին հեռի,
Այլուի քըշիկ մ՝ ու Նահապետըն տի մեռնի.
Ո՜հ, զիմ կընտիկ[2] ճակատս այլ չեմ կարեր կանգնել
Ու պըսպըղուն Մասյաց սարերն ի վեր նայել.
Այլուի քըշիկ մ՝ ու այս ափունքըս տի լռեն,
Այս բարկ շըքերս ըզծերունիս չի տի գըտնեն.
Դուք բազմաշար Մոկաց լերունք քարաբերանք,
Դուք ինձ եղիք գերեզման, դուք ինձ արձագանք.
Փետտած քընար, ահա քեզիկ տամ թույլ մատներս,
Անմա՜շ փափագ, անմաշ կըրակ մըտե՛ք ի ներս,
Զայն պատառուկ սիրտն որ տեսնուք՝ այնոր ներքև
Ճընշած կըրծկունքս աղեկըտրին, ո՜հ, զինահար[3],
Այսօր քաշեմ ու դուրս բերեմ զիմ ցավս հազար.
Թող ի Տարոն հասնին ձայներս, սարքըն պատռին,
Մեղրա գետույն ալիքն անույշ՝ լեղի կըտրին,
Հետ Խորոնից քերթողահոր պատմագըրին[4]
Թող կիսատ շունչքս ողբակցելով երթան ոլրին,
Զաշխարհն Հայոց ես լամ զիմ քաղցրըն հայրենիք,
Արյուն արցունքըս հետ թափեմ դառն ու ցրտիկ։
Ահա թուլցած աղիքըս պինդ, պինդ քարշեցան,
Մոխրեն ի դուրս կրակունք ելան սիրտըս լցվան.
Թրռավ ելավ Նահապետին սիրտ վեր ու վեր,
Իջավ խորցավ գերեզմանաց վախեր վըհեր։
Ողբա՜մ ըզքեզ, Հայոց աշխարհ, ողբա՜մ ըզքեզ,
Որ փառավոր նըստած երբեմն արքայապես՝
Արևելքից և հյուսիսո ազգացն հազար
Ճոկան[5] ի ձեռդ առած՝ կայիր հրամանատար,
Ողբամ զիշխանքդ ու թագավորքդ, որ անց կացին,
Ողբամ զորդիքդ մեծ Գրիգորի, որ չերևին.
Ըզբյուր հազար ցավերդ ողբամ, աշխարհ Հայոց,
Զոր թշնամիքդ ետուն ու միտք կուրացելոց։

Զարթի՛ր, զարթիր Երեմիա մարգարե զգոն,
Տես ի՞նչ եղավ գեղեցիկ նորըս մեր Սիոն.
Ոչ Հովսիաս մեզ մընաց, ոչ Սեդեկիա,
Աշխարհս ամեն ոտնակոխած ավեր մընա.
Ջրկա քաջաց հայր Մատաթի, ոչ Մակաբե,
Որ զայսպիսի մեր կործանմունք նորեն կանգնե...
Ո՜հ, իշխանաց աթոռանին անկեր գետին,
Թանձրատեսակ ծրխով լըցվեր եկեղեցին։
Զարթի՛ր, ելիր արե՛կ[6] թէ ճար գիտես ցավույս,
Հուսակըտուր պընդե զաղիս սիրտ տուր երգույս։
Ե՛կ ի Մըսրա, ե՛կ ուռենյաց Բաբելոնի,
Սաղմոսարանդ իջո՛, արե՛կ Արածանի
Կա ուռեստան և Հայոց, կան մեր շատ ալիք,
Կան կաղամախք, կան սև նոճիք կան և սոսիք.
Մեր գերեզմանքս այլ շատ, մեռելքս այլուի[7] շատ են.
Որբ ու այրի՝ եկեղեցիք դարպասք[8] ամեն.
Թե լուկ հայիս իմ աշխարհին երեսըն սև՝
Վերզրդ վառի, սըրտիկդ ըլլի ներքև վերև։
Դու այլ զարթի՛ր ու եկ քերդողըդ մեր Մովսես,
Որ ողբակից հրավիրեիր ըզմարգարես.
Տես, ա՞յս երկիրն է Հայկազանց և Արշակունյաց
Որոց փառոք լըցեր ըզգիրըս պատմությանց,
Այս ա՞յն երկիրն է Տիգրանին և Արամա,
Որ բրոնեին ըգբրոնավորքն զինչ տրդա.
Այս ա՞յն երկիր մեծ Տրդատա՝ քաջ Վարդանին,
Ում նախանձեր Պարսիկ, Հոռոմն և Ասորին.
Եվ ա՞յս երկիր Լուսավորչին ու Ներսիսի.
Ա՞յս Սահակա, Մեսրովպա, քո իսկ Մովսիսի.
Ո՜հ, ինչպե՜ս փառքն ամեն մրթնած և այլափոխք,
Միայն անփոխ գուշակությունք քո կան ցավոք.
Ավար, ավեր, սուր, գերություն, սուգ և շարիք,
Ա՛յլ շար՝ նախանձ, տրգիտություն մընան հիմիկ,
Դարեր անցին գնացին, Հայոց փառքըն մոռցված՝
Նահապետիս միայն խավարն ու սուգ մընաց։
Հե՜ խեղճ ծերուկ, զարկ ըզգործիդ ու զքեզ քարի՝
Կամ թե քաղե՛ զաղիք սըրտիդ, որ քաջ թըրթռի.

Խոսին կանչեն այրած՝ լերդերդ, լրսե աշխարհ,
Քո գանկրտանք բրոնեն լեռներ ձորեր հավսար։
Ողբամ, ողբամ, հազար ողբամ զքեզ՝ Հայաստան,
Երբեմըն բյուր փառաց տեղիք, հիմա դամբան.
Քո ծիրանիքըն մերկացան, քո թագդ առավ,
Արիությունըն հայկական ելավ թրռավ։
Քո սուրբ հաջորդք քահանայիցըն պակսեցան,
Ամեն չարիք մրտին ի մեջ ժողովրդյան.
Քո ծառաներն ապրստամբ դեմ քեզ առին սուր,
Քո իշխաններըն՝ մեջ քո տան վառեցին հուր։
Լրսեցին Պարսք ու բարբարոսք գազանական,
Մեկ առ մեկ ձայն տրվին՝ ելե՛ք ի Հայաստան.
Ելան եկան ամառնամուտ ամպոց նրման,
Որ Առնոսա սարերն ի կախ կու կրրկրռան.
Հայաստանի չորս բոլորտիքըն պատեց սև,
Բյուր տակ ամպեն ինչպե՞ս ի դուրս ելնե արև,
Պահակք բացվան, սահմանքն առան, արգելքն ընկան,
Փախի՛ր պահվի՛ր, թե չէ՝ մաշիս, ո՞վ Հայաստան...
Բայց ո՞ւր փախչիս դու ժողովուրդ անհայր անտեր,
Բերդն ու պարիսպ, շենքն են հողու հավասարեր։
Ա՜հ անիծյալ երկաթ ու ձեռք, որ զայն սրրեց,
Հայոց արյուն քե՞զ լուկ այսքան անույշ թրվեց.
Միթե անկուշտ քաղցիդ ու չար կեռիքներուդ՝
Չի՞մ Հայաստան որսիկ ցրցուց արևն անգութ.
Ո՞ր բրոնավոր, ո՞ր տիրապետ, ո՞ր անօրեն
Չեկավ սրրով բաժին մ'առնուլ Հայոց երկրեն.
Ո՞ր բարբարոս ավերածու ձեռաց նշան
Չեթող վրկա մեր շենքերուս երկնանրման.
Մեկրն կրտրեց, մեկրն հրնձեց, մեկրն լափեց,
Մեկն այլ փորեց, զարմատն հանած հողրն ցրվեց։
Ա՜հ, այս տեսույս ո՞վ դիմանա թե չէ արձան,
Կամ ի՞նչ ցեղ[9] քեզ չողբա, խեղճուկ իմ Հայաստան։
Տեսեք գեղանքն ու քաղքրնին խառնուփրնթոր,
Սառնապաղուկ գետոց ջրրերն՝ արյուն հորդոր.
Տեսեք ռամիկն ու մեծատուն՝ ամենքն աղքատ
Տրնակորույս, բարբարական[10] դաշտե ի դաշտ.
Փախչին գրնան, չրգիտեն ո՞ւր, հետ չրնային,

Զի սուրն անգութ փրոե զիրենք ցուրտ ի գետին.
Դոքա այլ ո՞ւր ըզփախ առել ըշտապ կերթան.
Ամենքն ի մեկ տեղ. ո՜հ, ամենքն ի գերեզման։
Ահա ծերեր, որ հարկևոր[11] ալիքն առել
Փախչիլ փորձեն, փորձա՜նք գոչեն, ընկնին մեռել.
Ահա անսիրտ խեղճ կընկրտիք, որ անլաչակ
Հետ էրկընուն կանչվրտելով մընան մինակ.
Պարկեշտ աղջկունքն, որ արևեն ծածկրվեին,
Գալանակերպ մարդկան ձեռքե ի ձեռք ընկնին.
Ահա մատղաշ մայրն որ կաթնածուծ տրղեկն առեր
Լեղապատառ խոլոռ մոլոր կերթա վրհեր,
Պահ մի թողու զտրդայն ի վայր, դեմ գա դահճին,
Ցամքած ծոցիկն առել՝ մոր գութ հիշե նրմին.
Բայց սուրն ահեղ ոչ մոր գրթա ոչ որդեկին,
Մաղիկն ու ճյուղ մեկտեղ կըտրե վառ վառ նոին.
Կաթն ու արյուն զինչ եղ ու մեղր հետ կաթկրթին...
Հրեշտա՜կք, թե գութ ունիք՝ հանե՛ք զայս կաթս երկին։
Ո՜հ, ես քանի՞ քանի՞ ներքև այս ձորերուս
Գերեզմանաց վրրա թափել եմ արտասուս,
Ուր քորք ու եղբարք, հարս ու փեսա, հարք և որդիք
Կարճ օրերով զերկայն գիշերրն կու հանգչիք։
Ա՜հ Նահապետ, քանի՞ հիշես թափես արտասունք,
Երնե՜կ այտոնց որ զինչ վրկա[12] մեռան սիրունք.
Առին զաչերն այս սեվոտած մոխրած երկրես,
Չրտեսան վայս ավերակներս ուր ժուռ գամ ես.
Երնե՜կ անոնց, որ չրտեսան գետին փրված
Զանվո նըշխարքն հազար ու մեկ եկեղեցյաց.
Ոչ զայն ամուր բերդրստանին ու պուրճրնուն[13]
Ամպադրացի ծայրերն հավսար գետնի հողուն։
Վա՜յ իմ աչացս, որ լույսն Հայոց սև եմ տեսել.
Թագավորաց դարպասն[14] եզանց գոմ է դարձել.
Վա՜յ իմ ձեռացս, որ հող ժողվել եմ զիշխանաց՝
Մազապակաս ճակտիս վրրա իմ զայն ցանած.
Վա՜յ իմ ոտացս, որ սուրբ կոխել են դմբեթունք՝
Ուր լոկ արևն հասցրներ թույլ, թույլ փայլփրլմունք.
Վա՜յ զիս, վա՜յ վա՜յ, որ զՀայաստան մեռել դիտեմ,
Ի գերեզման դարձել տեղիք նրման Եդեմ։

Լո՜ւռ գերեզմանք, լո՜ւռ մեռյալք, քաղցր ըլլի ձեր քուն,
Քանզի լըռեց և ընկավ սուր ձեր թըշնամվույն.
Բայց դու, Հայո՜ց աշխարհիկ, ե՞րբ դու այլ հանգչիս,
Ե՞րբ տի ցամքին աղբյուր արտասունք Նահապետիս։
Ո՜հ, ես տեսնում ա՛յլ մեծ չարիք, ողբամ զքեզ,
Ողբամ հազար, որ այդ չարյաց պատճառ դուն ես։
Ար՝ ե՛կ, ար՝ ե՛կ հայր իմ ողբոցըս դու Մովսես,
Իմ սիրտ այլ չի՛ երթալ, ասա՛ դու քաջ գիտես.
Քո Երեմիկդ ու քո Զաքարդ հե՛տ առ ողբա՛
Հայոց ազգիս տարակուսյալ գըլխուն վըրա.
Ողբամ ըզքեզ, Հայո՜ց աշխարհ, ողբամ ողբ բյուր,
Քան ըզգետերն հորդացընեմ աչացս աղբյուր.
Գեմ ժողովուրդըն շըվարած մընաց մոլար,
Ոչ ձեռնըտու, ոչ առաջնորդ ունի, ոչ ճար.
Առան վերցվան մեր թագավորքն ու քահանայք
Եպիսկոպոսականքն և վարժապետքըն քաջիմացք,
Աթոռանին ու սուրբ բեմերն ի լաց ողոք
Ի բըռնության ներքև ընկած կանչեն բողոք...
Միշտ ոտնակոխ, միշտ բարեզուրկ, ի լաց, ա՛ի կոծ
Ջարն ուզե զքեզ, ո՜վ իմ բարի աշխարհ Հայոց...
Այլ դու լըռե՛, ծածկե՛ ղչարիք երկրիդ, Մովսես,
Մ՝ ա՛սեր զամեն, որ ի Հայոց մեջ կու տեսնես.
Մի՛ զայն եղբարց հարազատաց ընդդիմությունս,
Ջանգիտություն որ ի հավատք և ի ուսմունս,
Եվ մի՛ զարդար՝ բայց խիստ՝ երկնից ծեծ վրեժխընդիր,
Որ զՀայաստան օտարաստան ըրավ ցան ու ցիր։
Ա՜հ, Նահապետ, ծածկե կնգղով գլխիկդ ու քնար,
Թուլցուր թելերդ և այլ սրգով առաջ մ՝ ե՛րթար։
Գիտեմ, գիտեմ այն մեր մեղաց պարտքն էր արդար.
Սակայն երկնուց արդարություն չունի՞ վրճար.
Եվ հրեական ազգին նըման նըզովք երես՝
Դարե ի դար հուսահատյալ տի գնա՞ն հայերս։
Չէ՛. ողորմածն Աստված թողել չէ զՀայաստան.
Նա ինքըն զինքըն է գըլորել այս խոր զընդան.
Երբ որ կամի՝ կանգնի. բայց թող գընա՛ն կռիվք,
Երթա նախանձ, թող գա սեր, թող միանան սիրտք.
Այնժամ չողբա զքեզ Նահապետս, Հայո՜ց աշխարհ,

Այլ երանիս կարդա բերանս հողու հավսար։
Ի եզր հողուս երդումն ուզեմ ձեզնից, ո՞վ Հայք,
Այս հառաչանքս ըլլան ձեր ձայն, ձեր այս փափագ.
Որ հանդարտիկ ելնե հոգյակս երթա խաղաղ,
Գերեզմանիս ծագն արևն Հայոց ծիծաղ...
Թե չէ՝ քաշեմ դաղեկըտուր թելիկ սըրտիս,
Ի սև սարուկն[15] համբուրեմ զհողն, որ ծածկե զիս...
Ո՜հ, թող մեռնի ծեր Նահապետ, մտնու տապան,
Այլ թող ելնե՛ ի տապանեն նոր Հայաստան։

ՄԱՍԻՍՈՒ ՍԱՐԵՐՆ

Ավագ Մասյաց սարն ելեր, բարձրացեր՝
Ամպերն ի վայր ձայն ահեղ արձրկեր.
«Ինձ մըտիկ արեք հավսար դուք լերունք,
Ես բարձր եմ քանց ձեզ, ճակատս ի աստղունք.
Ես Արարատյանն եմ Ավագ Մասիս,
Ազնիվ քան զամեն լերունք աշխարհիս։
Աստված զիս չափեց, Ադամ նախ տեսավ.
Տասյանն հյուր եկ զիս, Նոյն զիս իջավ.
Հայկն ալ զիս դարձավ փառոք հաղթական,
Զիս Ամասիա կընքեցին ու Արայն.
Տիգրանն ինձ գերի բերավ զԱժդահակ,
Հայոց թըշնամյաց բանտ եմ դըժընդակ.
Արտավազդն ի խոր իմ քարայրս ի ներս
Աշխարհի սպառնա տալ թունդ և ավերս։[1]
Իմ կողես իջուց Տրդատ մեծազոր
Սուրբ էջմիածնա հիմունքն ահավոր։
Զիս բոլոր պատեն անվանք և փառք հին
Քաջաց դյուցազանց Հայոց աշխարհին.
Ես միշտ եմ պարծանք Հայոցըս մեծաց,
Նոքա այլ պարծանք են ինձ անմոռաց։
Լերի՜նք և բարձունք, ահա տեսնք զիս
Ես ձեր թագավորն եմ՝ Ավագ Մասիս։

ՓՈՔՐ ՄԱՍԻՍՆ ԱՍԵՐ

Ես քո հարազատն եմ, Ավագ եղբայր,
Փառաց պարծանացդ հաղորդ հավասար.
Դու բարձր ես, քան զիս, քանց լերունք ամեն
Ըզքեզ չէ կոխել, բայց հրաթև սերովբեն.
Հին են քո պարծանքն հավասար արևու,
Որ ողջունե զքեզ նախ ամեն առտու
Բայց մի՛ շատ գոռար դու ամպերտ ի վայր,
Թե կու ճանաչես զիս քո փոքր եղբայր.
Զըլնի որ լերունքն ու բարձունքն ամեն
Քեզ ի շուրջ հային ու տընազ անեն.
Զըլնի որ ասեն, թե մի՛ այլ պարծիր,
Չի հիմիկ փոխվել է Հայոց երկիր.
Թե փառք, թե պարծանք անցել են գնացել,
Քո բարձրը գըլխետ ի վայր են սահել,
Նըման աղբերացդ այդ ու գետերուդ
Որ կողերտ ի վայր իջնուն գունդագունդ,
Դաշտեր ու ձորեր անցնին և երթան
Ու թափին ի մայր ծովն անդարձական։

ԱՎԱԳ ՄԱՍԻՍՆ ԱՍԵՐ

Կու գընան թափին, կու մընան անանց,
Ալիք կու գընան, ալիք գան ետվանց։
Ավագ Մասիս բարձր, աղբյուրքն անըսպառ
Փառք ու պարծանք այլ ձըգվի դարեդար։

ՓՈՔՐ ՄԱՍԻՍՆ

Ըլնի՞ր քո փառքն այլ նըման գետերուդ,
Որ հետ կու երթան, հետ գան շուտ ու շուտ.
Եմ ես այլ Մասիս, ես այլ սար քաջաց,
Երբեմն էի ե՛ս այլ տեղ պարծանաց.
Շատ փառք ունեինք, հիմիկ ի՞նչ ունինք,
Ավա՜ղ, լուկ² ամոթ, միայն նախատինք.
Ես չեմ այլ փառաց ու բաղդի նըշան,

Այլ մեռելության Հայոց մահարձան.
Գան գընան դառնան ալիք գետերուն,
Ջի՛ դառնար որդվոց՝ պարծանք հայրերուն։
Միթե կու հալե՞ն անցյալ ամառներ
Ձայս մեկ ձրմերանս ահագին սառներ...
Պահ մի կու զարնե արևուն փայլակ,
Դարձյալ կու թողու ցուրտ, դարձյալ սիպտակ։

ԱՎԱԳ ՄԱՍԻՍՆ

Մի՛ այդպես ասեր, Սարուկ,[3] մի՛ այդպես.
Միթե քան զԱվագ դու լա՞վ կու տեսնես.
Ես իրք կու տեսնեմ քանց քեզ առավել,
Երեսեն Հայոց փառքըն չէ կըտրել։

ՓՈՔՐ ՄԱՍԻՍՆ

Բարձրեն կու նայիս, բարձրը կու տեսնես,
Գըլուխդ ի արև՝ զամենք լույս կարծես.
Ցածի՛ր ինձ նըման քիչ մ՝ այլ խոր նայե,
Քո դուրսըն ձյուն, ներսըն պաղուկ քար է.
Հազար գարունք դան թե հազար արև,
Ի ներս չեն մըտնուր, անցնին քո վերև.
Այսպես սառնեղեն իրք մի զՀայք պատեր,
Ցուրտն այլ վախեմ զսիրտն ի քար է փոխեր։

ԱՎԱԳ ՄԱՍԻՍ

Ով խոր կու նայի՝ թող պինդ խոր մըտնու,
Լոկ կեղև տեսնել՝ չէ սուր աչերու.
Դու քիչ մ՝ այլ իջիր, քըշի՛կ մ՝ այլ ցածիր,
Եվ ե՛կ իմ խորունկ ծոցիս մոտեցիր.
Հանց տեսնուս ահեղ կրակներ ու հնոցներ,
Որ վախուդ հալիս, գաս դաշտի ընկեր,
Աչե՛, մեյ մ՝ աչե՛ զայս վիհս ահագին
Որ հատակն անդունդ հասանե երկրին.
Բերանըն ձյունով սառով կու ծածկի,

Ներսըն դրժոխոց քութուկ[4] բորբոքի.
Գիտես թե մարած է զինչ հին կանթեղ,
Բայց թե տամ քըշիկ մի քուքուրտի[5] դեղ՝
Հանկըսկած դաշտերդ ամեն ի ման գա,
Դու այլ հետ լերանց դողաս զինչ տըղա.
Անգուման զերկրիս սիրտն ի վեր բերեմ,
Ըզմուխն ու զմոխիր ի սարերդ հանեմ,
Սև պատեմ զերկիր ու սև զամպերն այլ,
Ծուխ ու բոց անեմ, կարկըտամ փայլ, փայլ.
Թե ուզենամ նոր կանգնեմ ես սարեր,
ՅԱրագած դեսպան ղըրկեմ բարկ քարեր.
Բոցեղեն գետ մ՝ այլ հետ ածեմ վազան,
Վա՜յ որ դեմ կանգնի, լափե՛մ զինչ գազան։
Հանց գիտցի՛ր զԱվագ Մասիսն, ո՞վ եղբայր,
Հանց ցըրտիկ ծոցեր՝ ունին սիրտ հրավառ.
Մ՝ ասեր թե դոքա մեռած են, մարած
Ջանցընիր այն ճըրագն զոր վառեց Աստված։

ՓՈՔՐ ՄԱՍԻՍՆ

Վառել է վառել, բայց մի՛ բարկանար,
Թե բանիկս ասեմ, Ավագ իմ եղբայր.
Այն որ կու վառե, նույն ինքըն մարե,
Կյանք տա ու կառնու, ասաց մարգարե։
Ջըլնի որ Հայոց արևն այլ անցել,
Մեզ արևմըտքի լուսիկն է մնացել։

ԱՎԱԳ ՄԱՍԻՍՆ

Աստված մահ չարար, կասե իմաստուն,
Ինքըն մեռելոց այլ տա հարություն.
Քարեն կելնե կայծ, ու կայծեն՝ կայծակ,
Անտառ կայրե այն, որ կայր մոխրի տակ.
Մրտած արև՝ նոր լուսով գա առտուն,
Մոմիկն այլ մարած՝ օր տա գիշերուն։
Թե ցուրտ թե մարած ասես զՀայաստան՝
Գա ժամ, որ վառի, տա կենաց նըշան։

ՓՈՔՐ ՄԱՍԻՍՆ

Ես կու վախենամ այն սև անիծից,
Որ մեր հայրապետքն են տրվեր կրսկիծ,
Ներսեսք ու Մովսեսք Հայոց սև օրեր
Ասցել են գալիս, Հայոց շատ երեր։

ԱՎԱԳ ՄԱՍԻՍՆ

Ամպք այլ փարատին, մրրրիկն այլ դադրի,
Իսկի անփոփոխ չէ բազդ աշխարհի.
Զոր Աստված կ՝ օրհնե՝ մարդ չանիծաներ,
Զանեծքն առին լոկ ու կառնուն չարեր։
Հայք մոռցան զաստված ու մոռցան դիրար
Ահեղ հովերու եղան դիրուտար.
Երբ հիշեն զաստված, դիրար այլ հիշեն,
Միաբանություն ու սեր մեջ քաշեն,
Թողուն խարդախանքն ու զանձնասեր շահ,
Ընին իրարու օգնող ու վրստահ,
Զանեն չար մեկում՝ ուղեն ըղբարին,
Սիրով համբերեն, հուսով աշխատին.
Այնժամ ասա՛, փոքր եղբայր, ո՞նց թրվի,
Ընի՞ թե Հայոց ճրագիկն այլ վառի։

ՓՈՔՐ ՄԱՍԻՍՆ

Ընի թե այդպես անե ազգն Հայոց՝
Նա կու հավատամ թ՝ յուրյան վառի բոց.
Կու հավատամ երբ սիրտք գան ի բարին,
Ի մեզ այլ դառնա մեր պարծանքն հին։
Այլ ե՞րբ տի ընի որ վառին սրրտեր,
Ե՞րբ տի տեսնունք զայն երջանիկ օրեր։

ԱՎԱԳ ՄԱՍԻՍՆ

Ինձ մրտիկ արեք, լերունք հավասար,
Հանց՝ գիտացիր դու այլ իմ փոքր եղբայր.

Երբ ետ դարերու առաջին անգամ
Ես Ավագ Մասիս ներսուց որոտամ,
Կանչեմ ու շընչեմ արձակեմ ծուխ բոց
Սասանեցընեմ զԱրարատն Հայոց,
Այս ընի նշան Հայոց աշխարհին
Թե գա ժամանակ որ գան փառքն այլ հին.
Բայց միայն սիրով հանդարտ ու խելոք
Ջանք դնեն բարվույն ու չընին անհոգ։

ՓՈՔՐ ՄԱՍԻՍՆ

Կացեք մեզ վրկա[8] լերունք դուք հավասար,
Մեծ խոստմունք երետ[9] Ավագ Մասյաց սար.
Երբ շարժի Ավագ, շընչե ծուխ ու բոց՝
Նշան է բարվո աշխարհին Հայոց։

ԱՎԱԳ ՈՒ ՓՈՔՐ ՄԱՍԻՍՆ

Բայց միայն սիրով, հանդարտ ու խելոք
Ջանք դընեն բարվույն ու չընին անհոգ։

ՆԱՀԱՊԵՏՆ ԱՅԼ ԱՍԱՑ

Շարժի՛ր հա՛ շարժի՛ր, Ավագըդ Մասիս,
Արձան պարծանաց Հայոց աշխարհիս.
Շընչե հա՛ շընչե, ծըխիկ ծիրանի,
Որ քո մանկըտյաց հուսո նշան ընի։
Ահա շարժեցավ Ավագըն Մասիս
Արձան պարծանաց Հայոց աշխարհիս.
Ահա շարժեցան դաշտք Արարատա,
Դուք ալ շարժեցե՛ք, մանկըտիք Հայկա։
Ահա շընչեցավ ծուխըն ծիրանի.
Դուք ալ շընչեցեք, հոգի հայկազնի.
Բայց միայն սիրով, հանդարտ ու խելոք
Ջանք դըրեք բարվույն ու չընիք անհոգ։
Շարժի՛ր, ա՜հ շարժի՛ր դուն ալ Նահապետ,
Մասյաց սարերուն շընչիկն ատ մեկ հետ...

Ահա շարժեցավ ծեր Նահապետն ալ.
Ո՞վ դեպի Մասիս յուր հետ կառնու քայլ։

ՀՐԱԶԴԱՆ

Հրազդա՜ն, գետակդ իմ հայրենի,
Հրազդա՜ն, ջրիկդ իմ անուշիկ,
Ահա թողել զհողն օտարի,
Բաբկենս հասել եմ պանդրխտիկ.
Ա՜յ Հրազդան, ա՜յ ջուրք հայրենիք,
Ա՜յ ափունք, է՞ր կու լայք լռիկ։

Ես ձեր դրացենակն[1] եմ, չէ՞ք ճանչել.
Սիրտս ըզձեզ չէ մոռցել իսկի.
Դուք կարկըշիկդ է՞ր եք մոռցել,
Ծիծղուն երեսդ է՞ր սուգ ունի։
Ա՜յ Հրազդան, ա՜յ ջուրք հայրենիք,
Ա՜յ ափունք, է՞ր կու լայք լռիկ։

Վա՜հ, մեր կանաչ անտառիկս ո՞ւր,
Ո՞ւր տաղվարիկս, ո՞ւր մեր նըշիս,
Հովո՞ւն եղան թե ծովուն կուր.
Ո՞ւր մեր տընակն, ո՞ւր մեր այգիս.
Ա՜յ Հրազդան, ա՜յ ջուրք հայրենիք,
Ա՜յ ափունք, է՞ր կու լայք լռիկ։

Ո՞ւր ես աչիցըս լույս խանտուկ.
Իմ ընկերներն ո՞ւր են, Հրազդան.
Մի՞թե պարսիկի՞ն եղան գերուկ,
Մի՞թե ամենքն ի հո՞ղ մրտան.
Ա՜յ Հրազդան, ա՜յ ջուրք հայրենիք,
Ա՜յ ափունք, է՞ր կու լայք լռիկ։

Ա՜հ, անցուգնաց ելել ամեն.
Ա՜հ, անցուգնաց է Հայաստան.
Ձիս անմեկիկ[2] թողած աստեն՝
Հետ անցնիս գնաս դո՞ւն այլ, Հրազդան...
Անցի՞ր գընա ջրիկդ հայրենի,
Արտսունք հերիք են Բաբկենի։

ՇՈՒՇԱՆՆ ՇԱՎԱՐՇԱՆԱ

Կուսա՞նք հայոց, նոր շուշան
Տեսեք ի դաշտ Շավարշան։
Պայծառ պատկեր կուսանաց
Հայոց պրսակ պարծանաց
Ճակատն ի քող խորոտիկ,
Ի հով տրված խուպոպիք,
Տատրակ տոտամբ[1] մանտրուքայլ
Ման գա ի դաշտ ցողափայլ.
Մեղրը կաթե շրթներուն,
Փայլկըտան աչքն սիրուն։
Կուսանք հայոց, նոր շուշան
Տեսեք ի դաշտ Շավարշան։
Հյուսիսային մեր աստղիկ
Հայաստանյայց գեղեցիկ,
Արևնման հայելի,
Արքայդրստրիկ նազելի,
Սիրասքնունդրն Սանդուխտ,
Որում արև ելքն ու մուտ՝
Փափագեին սրտմաշուկ,
Հա՞րսն է ելեր շնորհաշուք։
Կուսանք հայոց, նոր շուշան,
Տեսեք ի դաշտ Շավարշան։
Քանց զարուսյակ պսպղուն
Ի մեջ մանտրիկ ամպերուն,
Քանց վարդալույս արևակ
Ի խնձորի տերևակ,
Քանց Երասխա նունուֆար
Գրլխիկն ի ցող շարուշար,
Քանց զամենն այլ գեղեցիկ
Նազի Սանդուխտն բամբշիկ[2]։
Կուսանք հայոց, նոր շուշան
Տեսեք ի դաշտ Շավարշան։
Սիպտակ սարերն այնոր տես
Հալին լինին կարմրերես,
Ծառք ու ծաղկունք տան պրպլուկ[3],

Խոսի ամեն պըլպըլուկ.
Նարկիզ՝ աչեր բյուր հանե
Ուր որ Սանդուխտ անցանե.
Այնոր շընչեն հավասար
Ծածկին ծաղկով ձոր ու սար։
Կուսանք հայոց, նոր շուշան
Տեսեք ի դաշտ Շավարշան։

Բարձրապըսակ ճակատներ՝
Հողու հավասար են եկեր.
Ոսկի գոհար հատ ցանած
Զորն են լերին հասուցած,
Եվ մարգըրտե բարկ ավազ,
Ուր որ անցնի հեզանազ
Հայոց օրիորդըն Սանդուխտ՝
Տոտանց հետկին՝ գան ի ուխտ։
Կուսանք հայոց, նոր շուշան
Տեսեք ի դաշտ Շավարշան։

Թագվորորդի կտրիճներ
Ընդ դարպասնին դուրս ինկեր,
Ի Ալանաց մինչ պարսիկ,
Մինչ ի Հռոմ մինչ ի Հընդիկ՝
Բերանաբաց կու նային,
Ճրնեկ տալով փեսային,
Որ զօրիորդն այն հայոց
Յուրըն տանի տուն և ծոց։
Կուսանք հայոց, նոր շուշան
Տեսեք ի դաշտ Շավարշան։

Բայց Սանդըխտո արժանի
Զըկա մին տեղ արքունի.
Այնոր աչացըն կամար՝
Ցած գա երկիրս ու խոնարհ
Երկինքն ասե. իմ գահի
Սանդո՜ւխտ պիտեր Թագուհի.
Ով՝ իմ ծըփանցըս ծիրան՝
Սանդո՜ւխտ պիտեր տայր հրաման։
Կուսանք հայոց, նոր շուշան
Տեսեք ի դաշտ Շավարշան։

Բայց կա մի մեծ քան զերկիր,
Լայն՝ քանց ծովուն ծրփան ծիր,
Եվ քան զերկին բարձր, անհուն,
Պայծառ քանց լույս արևուն,
Կա մին ահեղ թագավոր,
Որում չկա չափ սինոր[5].
Այն և միայն այն պիտի
Փեսա կուսին Սանդրխտի։
Կուսանք հայոց, նոր շուշան
Տեսեք ի դաշտ Շավարշան։

Յուր լույս դարպասն[6] է պատրաստ,
Կարմիր կանաչ առագաստ,
Եվ աստղաղարդ կապուտակ
Տատրակ տոտանցն է հատակ.
Ճապուկ[7] ճորտերն են հրեղեն,
Ուր որ նային՝ կայծ թափեն.
Ինչ որ խոսին՝ երգ է այն,
Խնտում ու սեր ամենայն.
Կուսանք հայոց, նոր շուշան
Տեսեք ի դաշտ Շավարշան։

Ի Սանիրա սուրբ սարեն
Փութա փայլեկրն[8] թաղեն,
Երկնախոսիկ փեսավեր[9]
Օրիորդին տա հրավեր.
«Տերն այն երկնուց և երկրի
Զոր պաշտե քո մեծ քեռի՝
Սիրեց ըզքեզ, սըրբի՛կ կույս.
Ե՛կ հարսնացիր ի Հիսուս»։
Կուսանք հայոց, նոր շուշան
Տեսեք ի դաշտ Շավարշան։

Սանդուխտ ելավ դարպասեն.
Ապշեց հայոց տունն ամեն։
Սանատրուկ հայրն որ լըսեց՝
Ոսկի թաղտեն[10] վայր վազեց.
«Սանդո՛ւխտ, սիրուն իմ դստրիկ,
Ուրանա՞ս դու զքո հայրիկ.

Ուրանա՞ս դուն զԱնահիտ,
Պաշտես զաստվա՞ծն հրեիդ։
Աչացըս լո՞ւյս ոսկեթել,
Դեռ աչքս արտսուք չէր կաթել.
Քեզ համար, դո՞ւստր աննման,
Գետեր աչերս ի վայր գան...
Սանդուխտ, ուզե՞ ինչ կուզես,
Արամազդա՞վ քեզ տամ ես.
Թե Հայաստանս է պըզտիկ՝
Ձենքս ու զորքերս են հերիք.
Թե հրամես[11] դուստր իմ աղվոր,
Հայրիկդ ըլլամ քեզ զինվոր,
Առնում աղեղս ու երթամ
Բոլոր աշխարհս քեզ որսամ.
Ձխաքա՞նն կուզես, թե գկեսար,
Բռնեմ բերեմ քեզ հավսար.
Թե ծովուն մեջն ուզենաս՝
Բյուրեղ կանգնեմ քեզ դարպաս։
Սանդո՞ւխտ, քու հայր, քու գերի.
Լուկ[12] ի հրեեղ կաց հեռի.
Լրսե ինձ, դուստր իմաստուն
Լույս իմ աչացս արևուն,
Օտար հավատք մի՛ պաշտեր,
Քու հոր գլխու սև մ՝ ուզեր.
Սանդո՞ւխտ, դստրիկ իմ սիրուն.
Ողորմե՛ հորդ աչերուն»։
Կույսըն կեցավ լուռ հուշիկ,
Հապա հառչեց անուշիկ.
«Հայր, քանց ըզքեզ սիրելի
Ձրկա ոքիկ մ՝ ինձ երկրի.
Բայց երբ զԱստվածն իմ ճանչցա
Սեր՝ քան զամեն մեծ գըտա։
Պաշտե՛ զաստված քո քեռուն,
Հապա չերթամ ես հեռուն։
«Ամ[13] թե ատես դու զՀիսուս
Որ կյանք բերավ մեր հոգուս,
Թե զիս չուզես քրիստոնյա.

Թե այլ խոսիս զԱնահտա,
Սանդուխտ այլ չէ քո դստրիկ,
Սանատրուկ չէ իմ հայրիկ.
Հիսուս իմ հայր, իմ փեսա,
Այս իմ վերջին խոսք ըլլա»։
Զայս վերջին խոսքն երբ լրսեց
Սանատրուկ՝ դեմքրն ծածկեց.
Փերթ մի խրրթավ ի սրտեն,
Եվ հեռացավ Սանդրխտեն.
Կանչեց նրման առյուծու
Երդվավ լուսնի ու արևու.
Ձեռ ըվկայծակ սև ամպուն
Բերնեն փրչեց բոթ մահուն։
Դողաց, սարսեց Հայաստան.
Սանդուխտ վայեց ի զընդան.
Կպրծրը կոճղիկն ըրավ գահ,
Զարդերն ամեն փայլեն մահ.
Կուսական քողրն սեակ
Սիպտակ ճակտին վայլեր թագ.
Բյուրեղ բազկայն ապրանջան
Գողվատ շըդթայք շրոընջան։
Սուրբ առաքյալն Հայոց լայր,
Կապից կուսին պազիկ տայր.
Երկուսն եկած միաբան
Փրկչին երկինք փառք կու տան.
Զայն Սանդրխտին շարժեր սիրտ,
Հայք թողուին զԱնահիտ.
Քընար քըրմին մընայր մունչ,
Լրսվեր սաղմոս հոգեշունչ։
Կուսա՜նք հայոց, նոր շուշան
Տեսեք ի դաշտ Շավարշան։
Ահա ելեր կույսն հայոց
Փրկչին երթա հարսն ի ծոց.
Ձեռ բարկ արև արշալույս
Բեհեղազարդ նազուկ կույս
Կանգներ պայծառ ի դիմաց
Հայոց հազար բյուր դրաց.

Գետին թընդայր ի հիմանց,
Երկինք շարժեր ի նախանձ։
Կուսա՞նք հայոց, նոր շուշան
Տեսեք ի դաշտ Շավարշան։
Սանատրուկո սև հրաման
Հնոցի ծրխույն գայր նրման,
Կրծեր աշաց բարկ արտսունք,
Լային կուսանք և հարսունք.
Ի մոր գրկին տրդայն լայր,
Մայրըն լալով ետ դառնայր.
Կրտրիճ տրդա ծեր հալվոր,
Լայր ամեն հայ սրդավոր։
Կուսանք հայոց, նոր շուշան
Տեսեք ի դաշտ Շավարշան։
Հմենք կանչեն. «Թագուհի՞,
Ողորմե հայ աշխարհի.
Քո թագավոր հորդ արևուն,
Քո աննրման լուսերուն,
Ապրի՛ր Սանդուխտ, ե՛կ ապրիր,
Մի՛ բերեր մութ, մի՛ մեռնիր.
Սանդուխտ, ամենս քեզ գիրի,
Ողորմե՛ հայ աշխարհի»։
Սանդուխտ երկնուց լրսե լոկ
Եվ լացերուն կա անհոգ։
Լալով զինվորքն առաջ գան,
Զենքերն ի ուս կու դողան։
Շատ լարեցան աղեղունք,
Շատ թափեցան դիակունք.
Բայց չրգրտավ մահ տեղի
Ի գեղեցիկ Սանդրխտի։
Կուսանք հայոց, նոր շուշան
Տեսեք ի դաշտ Շավարշան։
Նրման ծաղկանց կարկտահար
Երբ նա դիտեց զորս հազար
Զիրար զարկած և ընկած
Ու զմահ իրմեն սարսափած,
Շարժեց զճակատըն սիրուն,

Արտասունք ածեց աչերուն,
Եվ հառաչեց առ Հիսուս,
«Տե՛ր իմ, հրաման տուր հոգուս»։
Երիտասարդ մի հանկարծ
Կայծակնաթափ սուր շողաց...
Ուսկի՞ց արդյոք էր եկեր,
Դահի՞ճ, թե տաք սիրո տեր.
Երկի՞նք՝ թե հա՞յրն էր զրկած.—
Ոչ ոք գիտե դայս դիպված։
Սուրբն շողաց ու գարկավ...
Շուշան Սանդուխտ՝ վարդ ընկավ։
Սուրբն շողաց մեկ մի փայլ
Սանդուխտ ծաթեց[14] իրեք այլ.
Կարմիր կաթեր ի կըրծքեն,
Վարդեր բուսան շորք դիեն.
Աչքըն կոկոն մանուշակ,
Ամ՝ ի՞նչ նայվածք անուշակ.
Ափկիցք շուշանք կիսափակ.
Մեջ շրթներուն ի՞նչ կըբակ։
Ի ծայր լերին Սանտարուկ[15]
Հրեղեն կառքեր տեսնե՞ք դուք.
Հոն երկնավոր թագվորն այն,
Հոն Սանդուխտն է փեսայն.
ԶՕրիորդն հայ աշխարհի՝
Նախ քան զամեն վկայուհի
Ընտրեց յուր հարսքն կարմիր
Հանեց թըռուց երկնուց ծիր։
Կուսանք հայոց, նոր շուշան
Տեսեք ի դաշտ Շավարշան։
Թերթեր ճեքմակ ու կարմիր
Ներկեր երկինքն և երկիր.
Ելե՛ք կուսանք, ժողվեցեք.
Վարդն ու շուշան զուգեցեք.
Դըրեք դալար զայն մարմին
Թագեի հետ ի շիրմին։
Սանդո՛ւխտ, հայոց կույս քընքույշ,
Հանգչե՛ ի հոգս այս անուշ։

Կուսանք հայոց քեզ շուշան
Բերեն ի դաշտ Շավարշան։
Ո՜հ, թե քանի՜ երջանիկ
է Հայաստան հայրենիք՝
Որ հանց բերավ բույս կուսան
Ուսկից հազար կույս բուսան։
Երկինք կապվին երկրի հետ.
Քեզ ի՞նչ երգե Նահապետ,
Սանդո՜ւխտ, անմահ թագուհի
Իմ Հայաստան աշխարհի։
Կուսանք հայոց, նոր շուշան
Բերեք ի դաշտ Շավարշան։

ՊԼՊՈՒԼՆ ԱՎԱՐԱՅՐԻ

Ո՞նց գաս իմ լուսնակ, հեզիկ ու հանդարտ
Համասփյուռ լուսավդ ի լեռ, ձոր և արտ,
Եվ ի Նահապետս, որ մըտոք մոլար
Գիշերաժամիկ ժուռ գամ Ավարայր,
Ուր քաջ ու աննըման հարք մեր հայկազունք
Ընկան ղէտ[1] հըսկա, կանգնեցան ղվարթունք.
Միթե գա՞ս սրփռել ոսկերաց սըրբոց
Զյունափայլ ամպեդ ոսկեթել ծածկոց,
Թե ճերմակ ճակտիդ՝ թեպետ և պայծառ,
Քաջացըս արենեն կապե՞ս կարմիր վառ.
Թե լըռիկ մընջիկ ափշի՞ս տակավին
Թե ի՛նչպես ընկավ Վարդանն ահագին,
Մահու սև ըստվերն ի սիրտ թըշնամյաց,
Զհոգին ձգելով երկին առ աստված։
Դու այլ, ո՛վ Տըղմուտ, տրտում ու արյունուտ
Որ լալով ոլրիս ի մեջ շամբերուտ,
Եվ հովիկդ՝ որ գաս ի Մակուա քարեն
Կամ ի ծեր Մասյաց սըրբազան սարեն,
Դու այլ ինձ նըման դողդող և երեր
Թույլ թևոք անցնիս սարեր ու ձորեր,
Անտառեն անտառ, տերևեն տերև

Կոծկոծելով գաս ի դաշտիս վերև,
Զայս մաշած շընչիս վերջին հառաչանք
Զրգել ի հայոց սրբոցն արձագանք։
Ո՜հ դու բարեկամ այրած սրբոտերու,
Խոսնակ[2] գիշերո, հոգյակ վարդերու,
Երգե՛ պըլպուլիկդ երգե ի սարեդ,
Ջանմահ քաջքն հայոց՝ երգե հոգվույս հետ.
Թադեի վանուց ձենիկդ ինձ դիպավ,
Սըրտիկս, որ ի խաչն էր կիպ, թունդ առավ։
Ի խաչին թևեն թըռա ու հասա,
Գրտա զքեզ ի դաշտ քաջին Վարդանա.
Պըլպո՛ւլ, քեզ համար մեր հարքն ասացին
Թե չէ հավ՝ պըլպուլ մեր Ավարայրին,
Եղիշյա հոգյակն է քաղցրազրուցիկ,
Որ զՎարդան ի վարդըն տեսնու կարմրիկ.
Զըմեռն ի անապատ կու գնա կա ի լաց,
Դարունն Արտազ գա ի թուփ վարդենյաց,
Երդել ու կանչել Եղիշեին ձայն՝
Թե պատասխանիկ մ՝ արդյոք տա Վարդան։
Թե կիսահոգի պըլպուլիս նըման
Ձենիկս հասնի ձեզ, որդի՛ք Թորգոմյան,
Որդի՛ք, որոնց հարք քաջք ու առաքինիք
Լըցուցին զդաշտեր, գըրքեր ու ղերկինք,
Թե ի ծով սրտիդ կաթիլ մ՝ արունիկ
Կաթե հայ աղբյուրըն կամ Պահլավիկ,
Թե զփառքն հայրենյաց ձեզ այլ դրեք փառս,
Հետ Նահապետիս ելե՛ք ի Արտազ։

Ա.

Կես գիշերն առել էր գիշերավար,
Լուսնակն ամպի տակ բացիբրփիկ խաղայր.
Մինչ հովըն շըրշկոտ կախ թևոքն անտառ
Օդոց և ծառոց հանգիստ կու կարդայր.
ՋԱվարայրի մութն ու կանաչ ծոցիկ
Ծայրե ծայր ճըղքեր Տրդմուտն հանդարտիկ,
Մետաքսանըման անձայն խատուտիկ

Թավլեցընելով հազար բյուր ալիք։
Ի աստից ու անտից կան երկու բանակք
Իբրև անկբռիվ ընկած մեռունակ.
Երկուցքն միջո բարձրացած լուսնակ
Կու թրվի վահան զորաց պահպանակ.
Ոչ մեկ հընչի ձայն, ոչ մեկ շարժի ղեն.
Կարծես հաղթվեր ամենքն ի քընեն,
Հազիվ հազ ձիանքըն թոթվին դոփեն,
Դողան պահապանքն ի կաշեվրանեն։
Մեկ գունդն է պարսից հազար ու հազար
Որոնց վրա ամպ տարածի խավար.
Մեկ գունդն այլ հայոց է՝ թրվով ցանցառ
Լուսնի լույսով ղենքըն փայլին վառ վառ.
Ոտքերն ուռուցիկ, թևերըն քաջույժ
Զինչ հանչդած բազեք՝ կան թևոք աշխույժ.
Զինչ ծով ահագին, որ ալյոքըն խուժ
Անկբսկած[3] ծեծե զափունքըն վատուժ։
Բայց այնչափ քաջաց քան զամենքըն քաջ
Մեկիկ մի արքուն կա գընդին առաջ,
Թևի տակն առած նիզակ ծայրախաչ
Զեռքն ի ճակտին, ոչ ձախ հայի, ոչ աջ։
Ընդ խորանաձև լուսնին ճառագայթ
Զեռանդուն բանակըն դիտե հանդարտ,
Զինչ մայր գարադի[4], որ գիշերն ընդհատ
Դիտե զքուն տղային կարմրիկ ու զբվարթ.
Ըզվաթսուն հազար դադրած քաջերուն
Սանձրն ձեռք առած՝ վազվան առվրտուն,
Հաղթության անիվրն սահեցնելուն
Հընարք մրտածե ու զհայոց անուն։
Ի բոլոր ազգեն առաջնորդ ընտրած,
Հաջորդ քաջամարտ ըսպարապետաց,
Պատասխանատու ազգին Հայկազանց,
Ոչնոր բաղդրն ինքրն տեսնու կախված։
Հիսուն հաղթանակք շահած քրրտրնքով
Անցնին ի մրտացրն մեկրզմեկով,
Դեմ ինքյան կանգնին յուր փառքրն կարդով.
Սիրտն՝ առնու և տա մեծամեծ թրնդով։

Երկայն նիզակովն հանկարծ վազե դուրս,
Զինչ կրակե վիշապն ի երկնից մրսուրս[5],
Ման գա ու փրչե գընդին հայոց հուր,
Վարդա՜նն այն վառած ի սեր և ի սուր։
Նայի ընդ երկիր, նայի ընդ երկին,
Ջափե, չափչափե զբանակքն երկոքին.
Քաշե զմեկն ի վեր ի ծոց Գրիգորին,
Թափե զմեկն ի անդունդ սանդարամետքն.
Ի մեծ բարկություն կամ ի տարակույս
Ձակունքրն շրրջէ ի այս և այն կույս[6]
Կանչե ի խորոց, թե ո՞վ իմ հոգվույս
Տացե պատասխան հետին հարցվածույս...
Բայց ի՞նչ, բայց ի՞նչ այդ տեսիլ անկասկած
Քաջին Վարդանա ելնե ընդ առաջ.
Ի փոքրիկ բլրակ գեատոյն եղերաց
Հուր բոց վերանա ի ծոց երերաց։
Նայծք անձրևանման շորս դին հավատոր
Բոցեր աջ ու ձախ, մեջքն լույս պայծառ,
Եվ ի մեջ լուսոյն ճերմակ վեհափառ
Մեկ մի երևի տեսօք հույժ անճառ[7].
Ունքերրն քաշեր սուր գամար կապեր
Հնոցի պես կրակտան զույգ ահեղ աչեր,
Ամպի պես լայնած երկայն բաղկրներ,
Կարծես թե հրեշտակ բաղդին է ինչեր։
Ինչեր ի բանակն և ահեղ գրշռոք
Կրշռե զՊարսն ու Հայ, գրրե աստեղոք.
Գառնա ի Պարսիկն հայի արհավրոք,
Դառնա ի Հայն՝ սեր կաթն արտասվոք։
Ի բլուրն ի վեր քաջրն թրուչի Վարդան,
Անվախ, անկասկած ձայնե սիրական.
«Նոր Մովսես, Ներսես, քաջ մեր Մատաթյան,
Ասա՜ զի՞նչ երկինք գրրեն բաղդ վաղվան»։
Այնժամ բոցափայլն երեց Վանանդա
Ձաջն հրեղեն ձրգե ի ճակատ նորա,
Կրնքե, ու զերկինք առջևն բանա,
Ըղբանակն հայոց՝ Ղևոնդ հոն ցույց տա։
Տեսա՜վ, հիացա՜վ Վարդանն ու կանչեց.

«Հայր, իսկի տեսիլդ մեզ չըսրտեց,
Վաղիվ տի կըվինք քաջությամբըս մեծ,
Երկունն հանգչիմք ի դարպասն աստեղց»։
Ասաց և առավ զօրհնություն ծերուն.
Թոթվեց զաջն հրաթափ, փրրթավ[8] ի բըլրուն.
Ճոճ տայր նիզակին, փութայր գայր իսկույն,
Փողեր[9] ու կանգներ ըզգունդ քաջերուն։

Բ

Դեռ չէ արեգակն ըզգլուխըն հանել,
Երկու բանակներն ըզդաշտն են բըռնել.
Ձետ ջուխտակ բերդեր դեմառդեմ կանգնել
Իրար կուզեն գալ՝ փշրիլ ու փշրել։
Նախանձափրփուր դրժոխոց սատան,[10]
ԸզՇապուհ ի ծոցն առած ու զՄասան,
Հոն թափել ուզե օձու պես դաժան
Սև ատելություն երկհարյուր տարվան։
Երկհարյուր տարվան վրեժ ահեղ ու մեծ
Հայաստանն եկել է խնդրել անկեց.
Խոսրով ու Տրդատ, Արտաշեսն այլ գեղ[11]
Հայրենի պարտուց պահանջեն ըզվերջ։
Ի մեկ մի վայրկյան ամենքն են պատրաստ,
Փող կարծեն ըզձայն միմյանց անհանդարտ...
Ահա թռան գացին ղարնվեցան հպարտ,
Ջինչ երկու վիշապք մեծ իրարապատ.
Մեկ շարժումն ահեղ, մեկ ահեղ հոսան
ՁԱրտապն է բըռներ թնդմամբ կայծական.
Ոչ լուկ պատերազմըն թըշնամության,
Այլ զտարերքն ամեն կարծես ավրել գան
Տրոփե ոտնվորն[12] ու դաշտըն թընդա
Հեծելըն զետին մոռցել՝ օդ գրնա.
Օդն առանց հովու զենքերով ծըփա,
Հովիտն հառաչե, երկինքըն զոռա.
Հրդեհ է բըռներ ճարակի երթա,
Դյուցազունքն այրե հողու հավասար տա,
Բոցեղեն ալիք զորացըն ճոճա,

Դեմ այն բրոնությանն ո՞վ կու դիմանա։
Զինչ աշխարհավեր կրակե լափլիզող
Հանկարծ կայծ մ՝ ի վեր ցատկե ի ահ ու գոզ,
Կամ ի դաշտաձև բոցեն գա խանձող
Հանկարծ երևցող ու հանկարծ ծածկող։
Հանց խառըն խըմբեն քաշ մի հեծելվոր
Բարձր երիվարի վըրա կանգնավոր՝
Վեր վեր վաղելով զինուք ճոճավոր
Նետվի թըշնամյաց մեջ քանց գունտ հրավոր.
Պըղինձ գըլխանոցն ու գրեհ երկաթի,
Արևուն շողեն կու փայլփայլկըտի,
Ճերմակ փետուրներն ի սաղավարտի
Կարծես թրոցընեն ըղքաշ զայն մանկտի.[13]
Նայիս սարսափած սըրտիվ ալեկոծ,
Թե ո՞վ այն հանդուգն է քաշաց հայոց,
Արդյոք Արշավի՞ն հաղթող սուր թռչնոց՝
Թե հըսկայաձև խորենն մարտկոց.
Զարտակ ու ղվահան սյահ մի կու տեսնես
Իբր անխոնջ դարբինք վաղեն հնոցն ի ներս.
Մեծամեծ ճայթմունք, տապըլմունք լըսես,
Ըզգեն ու զինվոր փըռված կու գըտնես։
Երթալով երթան ձայնքըն կորանան,
Շեշտակի շաչյունք լըսվին աղեղան,
Ահեղ կոփկոփյունք վահան ընդ վահան,
Նետք նիզակք թափին անձրևի նըման.
Բլրաձև փըղաց ոտքերուն գարգափ[14]
Աշտարակազարդ բըրգոք բերդակապ՝
Դաշտաց ու լեռանց արկանեն սարսափ.
Երկիր ի հիմանց տա դղորդ ու կափկափ։
Այլ քաշաձի Հայն անվախ, համարձակ,
Անճոռնի մարմնոցն ելնե հակառակ.
Կորդուացին կըշռե ձողաչափ նիզակ,
Լեռան պես փըլչի փիղն ու Պարսն իր տակ։
Արձագանգք ամեն ձայն վերացընեն,
Բանակներն ի հետ կրկնեն ու սարսեն,
Շըփոթ և աղմուկ նոր տիրե արդեն.
Պատատոտին գունդք իրար անցնելեն։

Պարսից բանակեն հազարք են փրված,
Ի հայոց բանակեն հարյուր է ընկած.
Զիակոխ ծաղկունքն արյուն թաթաված
Գրրգռեն ըզկատղած եռանդրն զորաց։
Ի Տրզմուտ գետույն եզերքըն պրդտոր,
Ուր արդեն արյուն հեղեղ կապե նոր,
Եռան ու զեռան գունդեր մոտավոր,
Մեկն անցնի, մեկն այլ չրթողու անցվոր։
Բայց քաջ Գարեգին չընտրե չուր ցամաք,
Վարազդատանրման ցատկե զինչ փայլակ,
Զառջի վարկածին գլուխն՝ իբրև գընտակ՝
Զրգե յուր զորաց, որ գան համարձակ
Զետ մրրրկոտ ամպեր՝ Հայք առնուն ձիան,
Լողալով կրովին ի գետույն բերան,
Ծրփան ու ֆրսան, զալիքն առնուն տան,
Զբրով, արյունով հասնին հանդիման.
Ելնեն գինչ քաղցած բահրիկ ծովային,
Անխրտիր դիմեն ում և պատահին,
Շատ զորք զորավարք փրռեն ի գետին,
Հեծյալ հետևակ հետ իրար պառկին։
Մրրմրռան Պարսիկք զինչ ալիք վարած,
Հետ դառնան ի ձախ թև Հայոց քաջաց,
Ընկնին բարկությամբ, տան-առնուն հարված։
Վեր ու վայր թրռչին հոգիք հազարաց։
Հոն առաջադեմն ու քաջ Գարեգին
Հայ զորավարաց առնու պսակ նախկին.
Հազար խոցերով ի զրեհրս սրրտին,
Դեռ չուզեր անխոց թողուլ թշնամին.
Զենքերրն կոտրած, մարմին կիսամեռ
Դեռ հուղարկավոր հետն ընե շատեր։
Ընկած դիականց մեջ՝ խնդրե սուսեր,
Կարծես հետ մահուն ալ կրովիլ ուզեր։
Ա՜հ Գարեգին, մութն իջավ աչվիդ խաժ.
Նա դեռ ձեռք շարժե՝ զսուրն ածել ի քարշ,
Շունչն ի կես վրզին կանչե աղեխարշ,
«Եղբա՛ր, մի՛ թողուք զիս Պարսիցըն գարշ»։
Այն ձայնեն փազեն չոլոստակ կայծակունք

Հավսար Գարեգնի հարալատք սիրունք.
Զետ ի բարձրը բույն արծվիք սուրակունք
Պաշտպանել իջնեն գյուրյանց նոր ձագունք։
Աստի ու անտի կան գինչ երկու հրեշտակ,
Դեմառդեմ վառին այտքրն կարմրորակ
Ռոստոմ Թուխաչվին և ագռավգիսակ,
Վռամիկ վարդահերն ու մորթով ճերմակ։
Մինչդեռ Գարեգին սողա անբարբառ
Ընդ հոգվույն կրռվի մոռնալով զաշխարհ,
Եղբարքրն Թուփեն հոն գինվորս հաղար,
Երդնուն մեռնիլ, քան թե թողուլ զիրար։
Ո՜հ սրրտապատառ վրսեմ տեսարան.
Հաղիվ սուրբ երդմունքն ելին ընդ բերան
Ջուխտ մի նետ՝ երկնից կարծեմ հանկարծ գան,—
Զի չէր Պարսիկն ա՛յնքան պատվո արժան.—
Գան նետերն ու զույգ զարնեն կրտրրճնուն,
Որ երկու ձեռոք կրռվեին ի բուն.
Ջունեին վահան. ի՞նչ պետք քաջերուն՝
Որ միմյանց վերա կուրծք դրրին սիրուն։
Եղբա՜յր... կանչեցին, ճակատ ի ճակատ
Ընկան պատեցին գերրորդն հարալատ.
Հետ բացին երեքն այլ զաչերն հանդարտ,
Երեքն այլ ի հետ փակեցին զրվարթ,
Թև ի թև ու վիզ վրգի պրլլրված
Երեք լոկոն մեկ մանկաղով հրնձած,
Ցկարմրիկ արյունիկրն վարդ տարածած
Անհոգ կու քնանան ի մեջ բանակաց։
Երբ հովն հյուսիսի շրնչե ցուրտբերան՝
Ու կոծկոծյալ հետ ընկնին վարդ շուշան,
Ո՞ր ծաղիկ չուգե փրռվիլ ի մարգն այն՝
Ուր իշխանք ծաղկանց գետնատարած կան։
Ա՜հ. այնժամ հատան քաղցր արևքն հայոց,
Քաղեցան[15] կրակե շրնչեր ջերմածոց...
Վասրն քո ընկան, աշխա՜րհ իմ Հայոց,
Կրտրիճք աննրմանք վեհք հյուսիսայնոց։
Ոչ մեկն ի թիկանց էառ ըզհարված,
Ամենքն ըզՊարսիկն ունին յուրյանց բարձ.

Վարդագույն արյունք սրտերնեն բղխած
Ուժո և սիրտ վրկայք անմոռաց։
Այլ ո՞ւր է Վարդան՝ ախոյանն անհաղթ։—
Զինչ առյուծ ահեղ այծուց դիմամարտ՝
Ի թանձր անտառ վաղած անհանդարտ՝
Հաղարով դրնե զորսերրն տապաստ։[16]
Հանց հետ Արշավրա ու քաջ Հրմայակ
Ի ձախ թև Պարսից նետված համարձակ,
Արձրկեր կոտրեր ցրվեր հասարակ,
Կարկտահար թափեր ըզմեծ զայն բանակ.
Այլ երբ տեսավ զյուրն ըզձախ թևաբեկ,
Մրոընչեց զինչ ծով, ունքեր կանգնեց տեգ,
Փայլակնանման հրրեց ձին հրաշեկ
Քաջքն ի հետ ընկան զինչ հորձանուտ գետք.
Սև ղրեհոք հեծած ի սեն երիվար
Գայր զինչ սաստկորոտ ամպ մրրրկավար.
Սուսերն ահագին զինչ կայծակ շողայր
Քան զայն ահեղ՝ մահն իսկ ոչ երևար։
Զինչ հրդեհ բրոնած անտառի ծայրեն
Զիդպրի՝ մինչ փայտ չրլափե զամեն,
Վառվեցավ ըզհետ գրնդին համորեն
Հարվածներն համրեց Աստված ի վերեն։
Անհուն հետևակք զինչ շոր եղեգունք
Գետնակոխ արար ի ձիուն ոտկունք,
Զիանք ու փրզանք զինչ մայրիք բարձունք
Մեկմեկե առաջ թափին երագունք։
Աջ ու ձախ զարներ փրոեր ու անցներ,
Զանտառ զորքերուն անապատ փոխեր.
Մինչ Պարսիկն ահեն զինչ ընել խորհեր,
Նա Վարդանա սուրրն մահ հրամայեր։
Ի փախ դարձան քաջք մրնացյալ Պարսից.
Առ մեծ զորավարն հաս ձայն բոթալից
Գալրեցավ Մուշկան զինչ օձ թունալից,
Խածատեր զմատներն երդմամբ անիծից։
Փողեր դարձրներ ըզփախուստ զորաց,
Կանչեր Արտաշրա ի վերա փրղաց.
«Փութա՛, գաղաններն ա՞ռ ե՞կ ի հոս դարձ,

Չի Վարդան մարե զարև մեր Արյաց»։
Սարսեց համորեն բանակ պարսկական
Փըղոք հեծելոք գընդոքըն Մատյան,
Թեպետև կոտրած՝ դեռ անթիվ խուժան
Միաբան դիմեն դեպ արին Վարդան։
Երեք քայլ ի հետ, մեկ առաջ գային
Մեկ տային ու տասն հարված առնուին.
Շուրջ բոլորեցան հեռուստ պատեցին...
Մոտեցա՞վ վայրկյանն ահավոր բաղդին։
Երեք պարիսպք դեմ քաջին կանգնել են՝
Հետևակք, հեծյալք և փիղք լեռնեղեն.
Մեկն ի մոտանց գա, մեկայլն հեռվեն
Շողալով անցնին, հրրվին ու հրրեն.
Հետևանց կատղած գազանքն ահագին
Ջանճոռնի քրթերն քընթրոնեցնեին,
Բոմբյունք ու գոռմունք որոտմանց տային
Ըզբերդերն հուսոցըն տատանեին.
Դեմ քաջին կարծես քաղաքք և ամրոց
Ջինված են ելեր, մահ բերեր ի ծոց
Խորին Ասիո ձայնք ժողովրդոց
Միաբան վրընջեն ընդ դյուցազն Հայոց։
Իսկ արին Վարդան աչեց[17] քաջերուն,
Կանգնեցավ ի մեջ գընդիցն երկոցուն,
Ահեղ մի գոռաց, սարեր ձայն ետուն,
Շատ կապարճակիրք կանչեց մոտ ձիուն։
Ջինչ գերանդագեն անիվ շրրջամահ
Ման գայր ու զարներ աստ անդ պահ ընդ պահ,
Ջինչ գունտ արևուն օդուն ճանապարհ
Ջորս բոլոր սրփոեր ու տարածեր ահ։
Կամ դինչ լեռ հրաբուխ ի սև ծոցեն խոր
Ըզսարսափ բնության հանե՝նդ սև որկոր,
Բոցեղեն գետեր վազցընե հորդոր,
Քարինք կարկըտա լընու զդաշտ ու զձոր։
Թե ամպ թե երկինք ճաթին ի վերեն՝
Ինքն ամենեին չըդադրի վարեն,
Մինչ որ բոլոր կրակն հանի անդընդեն,
Անթիվ մահերով հանգչի յուր սրրտեն։

Այսպես աննրմանն Հայոց դլուցականց
Կ՝ առնուր ըզհետին վրեժ իր հին հարանց,
Եվ վրկայեցին հոգիք Հայկազանց,
Թե քաջութենե նա չարար ինչ գանց։
Արդ մինչ չորս բոլորըն մարդով ընկած
Շեղջ-շեղջ ցորենո պես տեսավ հընձած,
Հընձանահարի պես զինքն այլ թաթխած
Մինչ ի ծունկ ձիուն ի արյուն կրտրըճաց,
Հայեցավ երկինք, տեսավ զարեգակն
Որ գափշած դեղնած օրաշուրջ գընտակն
Սահեր Սանատրուկ լերինն ի կրոնակ
Կամկար թևոք գայր ժամըն խավարակ։
Թարթել մի աչաց կեցավ անշրփոթ,
Անկարծելի աչք մ՝ անուշ տրվավ օդ.
Երկայն մի շընչեց հոգի երկնահոտ,
Աստուծո տեսույն սիրտն էառ կարոտ.
«Արշավի՞ր կանչեց, ահա ժամն եհաս.
Դու հայոց և իմ տանս առաջնորդ ըլլաս.
Պատմես Վահանա զայս իմ ետին դաս,
Թե զնախնիքն ու զսուրբ հարքըդ չըմոռնա՞ս»։
Մինչ զայս քաջն ասեր, ընկան ոտքն անդեն
Արին այն Արտակ Պալունյաց ազգեն,
Եվ հրսկայակերպ կորովին Խորեն,
Վարդա՞ն ձայնելով թրռան ի անտեն։
Զրգեց քաջերուն վրա քաջըն Վարդան
Ըզմակուկաձև զիրեն մեծ վահանն,
Ըզսուր, սաղավարտ ու զհամբույր մահվան
Տրվավ առ եղբայրն յուր Համազասպյան։
Եվ իբրև արծվին ի սարից քարանց
Սլացավ ի գընդե քաջացն Հայկազանց,
Մեկիկ նիզակավ ընդ Պարսից գունդն անց.—
Նե՞տ էր որ թրռավ, թե հուր փայլականց...
Հոն, ի մեջ երկուց գընդից զարհուրած,
Ի վերա զորաց և զորավարաց,
Խաչածայր նիզակն ի երկին ուղղած,
Վարդա՞նն Հայոց կա հանգըստատարած...
Սոսկացան, արացան[18] Պարսիկք հապշտապ.

Այք քաջին սրփռեց նոցա սև սարսափ,
Գիշերքն խոնավ իջավ զինչ տարափ...
Լո՜ւռ կացեք... Վարդանն է հոս ի մբրափ...

Գ

Մվ ես դու, որ գաս շեշտ ի Շավարշան,
Թևոք թրռչնորեն, ոտյուք փայլական.
Գաս մոտիս մրտնուս ի դաշտքս մահվան,
Աչ ու ձախ դառնաս կաս իբրև արձան։
Երկրորդ պահ էր այն ահեղ գիշերույն,
Լուկ բարակ մրրմունչ զինչ ծովեղերույն
Լրսվեր կիսամահ զորաց խոցերույն
Ցավոց և մահվան ներդաշնակությունն։
Հանկարծ քող բացավ լուսնակն երկրնքեն,
Եվ սրրտապատառ ըզգունդս համորեն
Տեսավ զինչ պատկեր սնանկարեն.
Հառաչեց ի հոն հասած Եղիշեն։
Եղիշեն՝ մեղու շրրթունք, սրրտի սեր,
Որ ընդ Վարդանա հոգվով էր կապվեր,
Մինչ հասակակից առ Սահակ նրստեր
Եվ զույգ որդեպես ի սրրբույն գրգվեր։
Զարմանա՜ց ձագունք, որ ի մի վանդակ
Միաթև մեծցան ի սնունգ հոգունակ.
Երբ ժիր մանկությանն բացավ դրռնակ,
Մեկն արծիվ թրռավ, մեկայլն աղավնյակ։
Դաշտ, պատերազմ, սուր, գրեհ, ձի, կրակ ու բոց
Էին սիրելիք Վարդանա թևոց,
Անձայն անապատք, խազաղ հովանոց՝
Աղու[19] Եղիշյա մասն էր ընդ գրրոց։
Հավիկն հեզ՝ երբեմն արծվույն թև սլանար
Եվ ընդ գյուցազնին այն գյուցազնանար
Երբեմն այլ արծիվն ըզթևն ուրանար
Զաղավնույն մրնչնիկ լրսեր՝ հեզանար։
Ճրզահյուս նավակ ի քազցր ի հովիկ՝
Մեկն առեր զեզերքն՝ երթայր հանդարտիկ,
Մեկայլն ահեղ նավ կողով պողվատիկ

Մաղրելով խաղայր ի անդունդ և ալիք։
Այլ նավահանգիստ մեկ էր երկոցուն,
Փառաց Հայկազանց սրտերքն սիրուն.
Մեկքն հաղթանակ կանգնել դյուր անուն,
Մեկայլն հաղթողաց տալ անմահություն։
Այսպես երկոքին սոքա սիրելիք
Եղբայրք անմեկին զինչ ավազ ու ալիք.
Մեկքն մրոնչեր, մեկքն կայր լրոիկ,
Այլ սիրով տային իրար համբուրիկ։
Երբ ըղձաչությանն բացած առագաստ
Վարդան հաղթությամբ նավեր ի ճակատ,
Հայոց և Ալանաց վրա հասներ ըղգաստ,
Կանգներ հաղթանակ, քան դտարիքքն շատ,
Նավակն Եղիշյա ի Բյուզանդ, Աթենս,
Եվ Ալեքսանդրիա ուղղեր հեղաթևս,
Բանավոր ծաղկանց մեջ ման դայր թեթևս,
Ի միտք առնույր մեղր իմաստից պեսպես։
Երբ դարձավ ի ուսմանցն ու տեսավ զՎարդան,
Զյուր թողած կոբյունն հիմ՝ առյուծ նման,
Ընծայեց ըմբեղրն ի քաջին բերան,
Դրան երեց եղավ տանն Մամգունյան։
Անբաժ ի քաջեն շրջեր Եղիշե,
Ի դաշտս այլ երթար՝ ուր զենք հրավիրե,
Ի վրանին կարդայր ըզտեր ի երկնե՝
Որ ըզսիրելին հաղթող դարձրնե։
Բայց զառջի գիշերն որ գիտաց Վարդան,
Թե վաղիվն հասնի ժամ փառաց մահվան,
Վախեց գալարել զսիրտքն սիրական,
Խաբեց ու ղրթկեց ի գեղ Շավարշան[20]։
Հանց երկրորդ գիշերն որ ըզդաշտն առավ,
Հոգին Եղիշյա սրտեն դուրս թռավ,
Երբ ի բանակեն դարձվորներ տեսավ՝
Վազեց ի գեղեն ու ի դաշտքն մբտավ։
Մբտավ արյունոտ սահմանս Արտազա,
Վարդա՞ն կանչեց... ձայն չըկայր Վարդանա,
Մահքն պատեցավ ի սրտին վրա,
Եվ սուրբ վարդապետքն լայր զինչ տրդատ։

Լայր ու առաջեր գայր խարխափելով,
Զինչ կույր շոշափեր ոտոք ու ձեռքով;
Մինչև դեղընցած լուսին գրթալով
Ծաղեց գիշերվան պաղ արտասունքով։
Ժամ մի Եղիշե ժուռ եկասվ լրռիկ,
Տեսարանք տեսավ ողորմ ու լալիք,
Պաղեցավ արտասունքն ու արյունն ի սրտիկ,
Պատեց հոգին սև պատկեր սրդով սաստիկ։
Շատ երերագին անցուդարձ արար,
Իբր ի կարկրտե տեսավ դիրուտար
Ըղմեծ բանակացքն մանրած պատառ,
Որոց վերա լայր լուսին դալկահար։
Զինչ որթատերև ու կանաչ գընտակ
Գունագույն ծաղկունք ու հասկ նորհասակ,
Եվ ծառք հինարմատք և նոր բարունակք
Ի իրար անցած և ընկած խառնակ։
Այսպես ի տրխուր դաշտին այն Հրտազ
Խառնափընդորյալ կային առ իրարս
Դրոշք ընդ դրոշակիր, զորք ընդ զորավարս,
Զի ընդ հետևակ, կտրիճք ընդ տրկարս։
Այն խրոխտ մրսեղեն բրլուրն անկառի
Ընկել էր անշարժ զինչ կոճղ անտառի.
Այն հրաշունչ մրբրկոտ վրընջոտ ձին արի
Կարթակոտոր[21] կայր ի տյառնեն հեռի։
Այն քաջ մանկրտիք կայտառ ու զրվարթ,
Որ դեռ առվրտուն փայլեին զինչ վարդ՝
Մայրամած դիմոք, ա՜հ, անկեր են արդ,
Անզուսպ սիրտ է աչքն այն ինչպես հանդարտ։
Այն ջաջուռ [22] բազուկք, այն լանջք կրահազեն,
Այն ճոճան ճակատք ամուր պրդրնձեն,
Որ գային զարնել զքանակն համորեն՝
Հանց փրովեր, որ ոչ ոք զատվին ի գետնեն։
Եվ այն հորդորակ սպառնալից բերան,
Որ փողով ու անփող բյուրոց տայր հրաման,
Կենաց և մահու կարծեր զինքն իշխան,
Զյուր իսկ չրպատմե զորպեսրն մահվան։
Եվ այն հին զենքեր արյունով մրխած

Որ խոստանային դառնալ ի տուն հարց
Նորանոր արյուն լիպելով փայլած,
Ահա կամ փշրեր կամ դերի ընկած։
Եվ այն մոխրաշունչ Պարս կտրբճվորայք,
Որ քանց մութն ըզլույս ատեին ըզՀայք,
Ընդ ոտյուք նոցին անկյալ անբզդայք
Պաղած ու դեղին քան բանտի ծառայք։
Եվ այն, ո՞հ և այն Հայոց նահատակք,
Ո՞վ սուրբ հայրենիք, սո՞ւրբ եկեղեցյակք,
Եվ այնք ընդ գարնան ծաղկանց դեղունակ
Եվ այնք հոն նընջեն քուն անմահունակ։
Ճերմակ ու կարմիր գինչ վարդ ու շուշան,
Ո՞հ, քանի՞ աղվոր են ի Շավարշան
Գրլուխք ի խաչին և ոտք ի ատրուշան՝
Մանկրտիքն Հայոց՝ որ ի քուն մահվան։
Քաջ քաջ կրռվեցան, սուրբ սուրբ մեռանին,
Աչերն ընդ երկինք ու ի տուն հայրենին,
Հիշեն ըզծընողք ըզքաղցր ամուսին,
Մարի լույս աչացն արտսունք սիրային։
Փոխան սիրելյաց ցուրտ հով գիշերույն
Աղապատելով փարի այտերուն,
Պատառոտի աչք դողդող աստղերուն,
Ցողիկ կաթնաբուխ թափի ի ամպերուն։
Մատղաշ հոգիք դեռ գշերթունքն համբուրեն
Ուսկից այնպես շուտ ի դուրս ելանեն,
Պահ մի զվարսագեղ ճակատսըն դիտեն
Եվ ըզմանկությունն երկինք փոխադրեն։
Այլ դու ե՛կ դարձիր, եղնի՛կ Եղիշե,
Թե զհոգիդ սիրես՝ քաղցր արեղ հիշե
Ահա նոսր աղիք սըրտիդ խըշխըշե
Մի՞թե մահն ըզքեզ այլ մեկնից քըշե։
Մի՛ աչեր մի՛ այն թոռմած դեմքերուն,
Մի՛ դրպչիր մի՛ այն ցուրտ մարմիններուն
Ահա զգլուխդ առեր թաթամ[23] ամպերուն,
Զոտկունքդ է թացեր արյուն քաջերուն։
Այլ Եղիշե, քաղցրը սիրտ Եղիշեն,
Իսկի չի դադրի թափառիլ անդեն,

Մեկ մեկ որոնեմ զքաջք Հայոց գընդեն,
Համարեմ զվրկայք զոր երկինք գրրեն։
Բանակն այն անշարժ՝ շարժի յուր սրրտին,
Շրրթունքքն լրռիկք մրտքին մեջ խոսին,
Քաջերն այն ընկած՝ հոգվույն մեջ կանգնին,
Մահ կենդանանա, մեռնի կենդանին։
Ի սիրտքն փափուկ մաղձ քանց մեղր անուշ
Թաղանթե թաղանթ ծավալի քընքույշ,
Ջերկայնուկ թարթիչ աչացքն մեղույշ[24]
Ջորս բոլոր ածե կամացուկ և ուշ։
Ըզթեն ընդ ուսով զարկած զինչ հավիկ,
Կարծես ականջ տա լրռիկ և մընջիկ
Զինչ ձայն կիսամեռքն արձրկեն սրրտիկք
Նեղ հառաչանոք և շընչով ցրրտիկ.
Խաղաղության զինքքն կարծես հրեշտակ,
Կամ թե կուսական փողար ողբերգակ,
Կամ պատգամավոր սիրելյաց գաղտնյակ
Տանիլ զետքի ուխտն առ սիրտ ըսպասյակ.
Եվ ահա տեսնու կուտակ մի մարմին,
Ահեղ զինչ կորյունք, փայլունք քան լուսին,
Ջիրար թևոտած քանց որթ զուռենին,
Թուի Ռոստոմ, վարդ Վռամ ու թանկ Գարեգին.
Աչկունքն նեղիշյա վառին ի այն տես,
Կրակե արտասուք թափե ջրրի պես.
«Պարծեցի՜ր, կանչե, ծերունի՜դ Ներսես,
Ահա քաջորդիքդ ընկած քաջաց պես»։
Բայց ի՞նչ է այդ կապն ի գոտի քաջաց
Ընդ մեջ Ռոստոմա և Վռամկան կապած.
Բա՜բե քաջերուն, բա՜բե[25] սիրելյաց,
Ո՜վ սուրբ հիշատակ, մընա՛ս անմոռաց։
Միաբան ընկերք ի հայրենի տան,
Մեկտեղ կեալ մեռնիլ իրարու երդվան,
Առին զկապն հյուսած սիրուհյաց ընծայն
Ջիրար կապեցին մընալ անբաժան։
Այնու կապով մոտ եկան Գարեգնին,
Անմահ սիրույն զինքն այլ հաղորդ ըրին...
Ո՜վ այշքան սիրով հյուսված կապ անգին,

Ըզքեզ աստեղաց մեջ կախեմ յերկին
Հեռի տասըն քայլ ի քաջացս անկուց,
Վարդատիպ Վռամկան նըման կա մանուկ
Երկաթ ահագին ի կողն յուր փափուկ,
Զաջ ուսովն ի մեջ ծաղկանց կա պառկուկ։
Հանց պայծառ ճերմակ երեսքըն շողան
Որ երկնից ընկած կարծես նոր շուշան,
Անմազ ծընոտք, խաժ աչկունք փայլփըլան
Զմահն ի քուն փոխեր է Գնունին Վահան։
Մոտ ի նա ձեռոքըն կիպ խաչագեն
Կա երիտասարդ զորավար մ՝ անգեն,
Ճակատն երկնագետ ծրծե զցող ամպեն
Ի կեանս և ի մահ ցանկալին Արսեն։
Իսկ մեծահասակ ո՞վ են դյուցազունք,
Որ իբր անտառի եղևնիք բարձունք
Ընկեր ու ծածկեր են հաղար ծաղկունք,
Ջիրենք այլ ծածկեն նետք սուրք գեղաբղունք։
Քրստմնի դողդոջա վառվի եղիշե,
Զահագին վահան Վարդանա դիտե,
Զարտակ և Խորեն ներքև տեսանե
Ահավոր դիմոք՝ զինչ առյուծ քընե։
Հոն սաղավարտյալ Պարս զորավարաց
Տեսնե գըլուխներ ընդ ոտյուք քաջաց,
Հայոց նիզակներ որ դույգ են շամփրած,
Երկու նահատակ գնդին թըշնամյաց։
Հոն մեծ բազմություն զինչ փայտ ի անտառ
Կամ աշնանաթափ տերև հողմավար
Ընկած ու խոկած մոտ ու վերուվար
Պաշարի մարմնովք ու հայի շիվար։
Հանկարծ բըլրաձև դիականց դարեն
Փայլակ մի շողա քան կայն որ ի երկնեն,
Երկայն լույս ցոլա ի գեն խաչագեն,
Մեկ թընդմամբ սըրտի հոն գա եղիշեն...
Երից սեպագրահ Պարս զորավարաց
Վերա տարածված հանգչեր ոմին փաջ,
Ըղձախն էր ածել ի սըրտին դիւռաց,
Աչն ուներ նեղակ մահվամբ ձանձրացած։

Հրեհքըն պըղնձի ծակել են հազար,
Ի ծակուցն ի դուրս շող ծաթե պայծառ
Ծոցին ու ձեռաց միշուկն արյուն վառ
Գընտաձև դիզվեր վարդի հավասար։
Ըլսնագանգուր մաղն ի բաց շըրշե
Ի անսաղավարտ քաջին ճակատե...
Խելաթափ լինի, թընդա Եղիշե
Ըզմե՞ծն յուր Վարդան ի հոն ճանաչե։
Լեզու քաջին լուռ, խոսի ինքն ամեն,
Այտքըն թրռալիր[26] և հոնք կըրընճկեն
Մահվան իսկ կարծես հրաման յուր մահեն
Տա իշխանաբար և ամենք սարսեն։
Ի շրթանցըն մեջ կա ծայր նիզակին
Քառածայր թևոք ոսկեզարդ խաչին,
Ջոր պապն յուր Սահակ ի ժամըն հետին
Հիշատակ երես քաջապանծ թոռին։
Ընդ երես քաջին մահախառն անմահ
Ջամբողջ դիշերույն զերրորդն այն պահ,
Հայի Եղիշեն ի զարմանս և ահ,
Խորին լըռությամբ հագիվ հնչե ա՞հ։
Կըշռե զգլուխ քաջին ձեռոքն երերուն,
Որ գինքն ետ կըշիռ յուր ազգին սիրուն,
Համբուրե զճակատն ուր բաղդն Հայկազուն
Ջանդարձն էր գըրեր ապագա դարուն։
Ընդ լայնադիր լանջքըն հայի ուռած
Քաջ քաջ և վեհ վեհ սըրտից բույն սիրած,
Իբրև պըղընձի ամրոց մի կանգնած՝
Պաշտպանել զորդիք Թորգոմա ցըրված։
Ընդ գեղեցիկ ձեռքն հայի՝ ում հնազանդ
Կայր ամեն հրաման և շատերուն բաղդ,
Ուսկից հաղթանակ և փառք մեծազարդ
Երեսուն տարի ելներ անընդհատ։
Ո՞հ, չէր նա՝ յնպես վեհ երևցած տեսոք,
Երբ հիսուն անդամ դանալով փառոք,
Պրսակս հաղթությանց բերեր սրփռեր լոկ
Հայրենի շիրմաց ու մատրանց[27] վրայոք։
Կամ երբ արծվորին ընդ Կովկաս անցած

Թագվորներ բրոներ բարբարոս ազգաց,
Իշեցներ քրշեր տաներ տայր Արյաց,
Ինքն իբրև որսե գալով եղջերվաց։
Ինչպես հոն վերա քաջացրն հեցուկ
Հետին հաղթանակ Հայոց անանցուկ,
Զինքրն կանգնելով՝ Պարսիկն ընդ ոտյուք,
Ինք զինքրն դիտեր հոգվույն նայեցուք։
«Ո՜հ, ես ի ճակտիդ վրա երդնում, Վարդան,
Կանչեց Եղիշե, որ ձեռքն աստվածյան
Հոն մեծ փոխարեն է գրեր քո մահվան,
Թե բյուր դարք անցնին, դու մընաս, Վարդա՜ն»։
Ասաց Եղիշե. հետ արուսեկին
Փախավ, ծածկեցավ սիրաձայն հոգին...
Պըլպուլն ի թրփեն սովրեցավ Վարդան
Կանչե զբուն գիշերրն՝ Վարդա՜ն, Վարդա՜ն...

Կանչե՛ պըլպուլիկ, կանչե՛ հոգեձայն,
Որ երկնուց ի վայր հայի և Վարդան,
Հիշե զՀայաստան տուն յուր սիրական,
Հայաստան հիշե զյուր Կարմիր Վարդան։

ՎԵՐՋԻՆ ԵՐԳ ՎԻՐԱՎՈՐ ԲԱՄԲՌԱՀԱՐԻՆ

Հետ սևահոն աղեղնավոր կըտրըճաց,
Որ անգուման[1] արունեն զդաշտրս ծաղկած
Ես որ անփորձ անգետ նետի և սրրո
Լուկ շարժեի զսիրտրս կրովի և սիրո,
Եվ ես Փառեն բամբռահար՝
Հայոց քաջացս հավասար
Ընկնիմ ծաղիկ հոգմավարս
Կոտրեր է ձախս. այլ ի՞նչ պիտ ինձ ասպարիկ[2].
Աչիկս է ողջ, աչիկս ուզե զյուր գործիք...
Գնացեք, ճորտեր, անտառն՝ ուստից հովրս գա,
Կարմրիկ բամբոիկս ի կաղմբխին ման կու գա.
Հոն առվրտուն կախեցի,
Ծրբ ըզնիզակն ընտրեցի,

Կանաչ արևս սևցուցի։

Իժիր իժիր[3] դնացեք, դարձե՛ք այ ճորտեր.
Մրշուշ մահուն պաղ պաղ ի աչվիս է նըստեր
Փութա՛, Թորիկ, մեր Շաղկերտու քրմարան,
Ձենե՛ քրմաց, որ պատրաստեն գերեզման.
Ձենե՛. «Փառեն բամբռահար,
Հայոց քաջաց հավասար
Ընկավ ծաղիկ հողմավար»։
Իմ հոր, իմ մոր տապանաց մեջ ղիս դըրեք,
Սրեխայիցս արևուն սև մի՛ բերեք...
Դու միայն, դո՛ւ սրտիս հոգույս կես՝ նըժիկ,
Դու սեի՛ր, դու նըստիր մոտ, լա՛ց անուշիկ.
Մինչև մեծնա մեր Ջավեն,
Աչքեն, ձեռքեն ու սրտեն
Ելնե երկրորդ քեզ Փառեն...
Ար՝ ե՛կ հիմիկ կարմրուկ բամբռիկ իմ սիրուն,
Առջին վերջին խաղ՝ իմ խամրած մատներուն.
Դեռ երգ մ՝ ունիմ, դեռ շունչ մ՝ ունիմ, ունիմ սեր,
Ջամենն հավասար Հայ հայրենյացս եմ տըվեր...
Բամբռի՛կ, Փառեն կու մեռնի,
Ապրի՛ն սեր ու երգ հայրենի,
Բամբռի՛կ, մընա՛մք կենդանի։

ԱՇՈՏ ԵՐԿԱԹ Ի ԾՈՎՈՒՆ ՍԵՎԱՆԱ

Յուրտ ցուրտ ձրմռունք բրդան արձակ հուլերեն,
Սիպտակ կարվանք իջան լերանց կողերեն.
Փըչեցին պինդ քամիներն, հա՛, փըչեցին,
Սառով ձյունով ըզսարն ու զձոր զուգեցին.
Վարդըն քափուր վատեցավ՝,
Ծիծղուն ծաղիկ ծածկեցավ
Եվ Հայաստան սուգ մըտավ։

Սուգ էր պատել մեր գեղեցիկ աշխարհին,
Սրբ դառնաշունչ հովըն փըչեց օտարին.

Երբ հայ իշխանքն քաշվեցան ամուր վայր,
Ավա՜ղ ռամկին, որ մոլորեր վեր ու վայր.
Արև տեսավ՝ դեղնըցավ,
Լուսնակն ու աստղիկ սևացավ,
Եվ Նահապետ ամբնչցավ։

Ո՞վ այն մատնիչք, ո՞վ այն դահիճք, ո՞վ գազան,
Որ առ այլազգ, առ բռնավոր ձայն կուտան.
Այդ ի՞նչ քարե սիրտ, ի՞նչ սառե շըրթունք էր,
Որ հայրենյաց հողուն կարդաց սև օրեր։
Անե՜ծք տըվեք այն բերնին,
Անեծք գըրչին ու ձեռքին,
Որ զՀայաստան մատնեցին...

Ո՞ւր ես Աշոտ. ե՛լ իմ թագվոր, փըղճա՛ զիս,
Սևագունդ զորք գան վերա մեր աշխարհիս.
Ի Բաղդատա գան, Մոսլա գան, Շամա գան,
Խիտ քանց մարախ, սև քան զամպերդ ի Սևան.
Քանց ըզհովերն հասին սուր,
Բոլորեցան ամեն ուր,
Կու շողացնեն նետ ու թուր։

Հա՜ իմ թագվոր, արե՛կ Աշոտ, երևցիր,
Քաշե՛ զերկաթդ, ըրե զայդոնք ցիր ու ցիր...
Դադարեցե՛ք դաշտք ի ղողալեդ թընտալեդ,
Թագվորն Հայոց ելավ, ահա նա ձեր հետ.
Կու գա նըման փայլակին,
Կայծակ թափե ի շորք դին...
Ա՜հ, չլկա նյութ իր կրակին։

Թագվորն եկեր աշտարակաց աչք ածե,
Առյուծաբար ձենե, ոչ ոք չի լըսե...
Ա՜հ, սուրն երկաթ շողա փայլե ի մթթան,
Թողու երթա մըրմըռալով ի Սևան.
Ի քարն ելնու բարձր ամուր,
Զորս դին կապույտ առե ջուր
Սիրտն ի վերա հալած հուր։

Գիշերը չորս դեհ[3] քաշեր թանձրը մթրուր,
Ա՜հ, տրխուր այն երկինքը, երկիրն այն տրխուր,
Ծառեր ժայռեր իրար անցած կու կանչեն,
Կու թվի թե զՀողն Հայաստանի կու քանդեն.
Զար թրշնամին ծովուն մոտ,
Քանց ծովն եվել մրրմրոտ
Կու տպասե լույսն առավոտ։

Ի սև դարձավ կապույտ ծովակն ու ծրփայր,
Հառչեց խորեն ու քարն ի վեր կու փրփրայր,
Ալիք զալին զարկած, փրփուրն ըզփրրփուր
Թագավորին ոտքն ցատքրտեր բյուր ու բյուր.
Նա հայ ազգին արտասուքն էր,
Թագվորին լաց կու հաներ,
Արդյոք իրեն ճար մ՝ ըներ։

Քանց գիշեր մութ պատեց աշկունք թագվորին
Քանց ըզՍևան ծով մեծ փրլավ ի սրրտին,
Հանց որ հիշեց զիր հայրն ու զորն երջանիկ՝
Արյուն վազեց ծոցեն ի ծովն ու ցամքիկ։
Զաչերն ածեց ու ցոլաց
Փայլակն երկնուց կանգ առած
Մեջ ամպերուն պաղ մրնաց։

Շարժեց ըզսև կամարն ահեղ ունքերուն,
Ըզսև գիսակն ի շուրջ սփռեց ուսերուն,
Բացավ հընոց բերանն, հառաչ մ՝ արձրկեց,
Անդունդ ծովին պատռած՝ հառաչ մի կրկնեց։
Հրամե՛ մեզ, քա՜ջ մեր թագվոր,
Ծովս ու ցամաքս հեռավոր
Ջենիդ ծառա ենք բոլոր։

Հանց որ զիր ձայնն ահեղ լրսեց քաջն Աշոտ,
Հանց որ ըզգաց ըզվարկ սրրտին կայծակոտ,
Խընտաց թընտաց հոգին, վազեց կուրծքն ի դուրս,
Ձեռներն երագ ազեզս ուզեն նետս ու թուրս
Կոփեց[4] նիզակն ի քարին։

Հազար կայծեր ցատկեցին,
Հրամեց իր փոքրը գընդին։

«Ձե՛ն առեք, ժի՛ր կացեք, ընկերք իմ սիրուն,
Հավատարիմք ձեր Թագվորին, ձեր հողուն,
Ի հազարաց մեկիկ մնացած դուք իմ հետ,
Դուք շատ եք, ձեզ չբավեն հաղար Թուր ու նետ։
Թող աշխարհաց լուր լինի,
Որ քանի եմք կենդանի,
Հայաստան ո՛չ տի մեռնի»...

Հանց որ գիշերն ըզսև քողերըն ժողվեր
Եվ ծիրանին վամպոց փեշերըն վառեր,
Ելավ ի բարձրը քարին, դեռ կեցավ լուռ,
Լըսեց զորաց ձիոց ալյաց բարկ մըրմուռ.
Սիրտըն Թընտաց ահագին,
Արտասուք ի աչքն եռացին,
Շունչըն մրրրկեր ի շըրթվին։

Իսկ երբ իջավ առավոտուն հովն հանդարտ
Եվ կապուտակ ծովին խառնեց կարմիր վարդ,
Ըզչորս բոլորն առավ պատեց այլազգին
Եռայր ծովուն, եռայր ալիք ցամաքին։
Կատղած զորաց ահեղ խումբ,
Շուրջ կանգնեցավ զինչ սեավ Թումբ,
Նիզակ, աղեղ, պարս ու ռումբ[5]։

«Ո՞ւր ես, կանչեն, Աշո՜տ, Հայոց Շահընշահ,
Ցամքեն ի ծով, ծովեդ փախչել չունիս շահ.
Տես, ո՞նց հազար որսորդ պատե զքո պարեխ,[6]
Մեջ վարմերու[7] տ՝ ինկնիս քան խեղճ մի տառեխ.
Աշոտ, դու ի՞նչ ես վըստահ.
Գիտցի՛ր, այլ չե՛ս Շահընշահ,
Գրողդ հասավ, քեզ չըկա շահ»։

Պըստեց Թագվորն Հայոց, պացխուն[8] մի չերեստ,
Ջյոթանասուն կտրիճքն ի տասն հանեց փեստ,

5 Ղևոնդ Ալիշան

Նիզակավ կոփ տրվին քարին Սևանա,
Քշեցին զՀոռման փայտերն հանդեպ Գեղամա։
Ծովքն ցընծայր, շրոնչայր,
Դիտեր Այլազգն՝ արմրննայր[9],
Հայն աներկյուղ առաջ գայր։

Այնժամ գոռաց, հրամեց թագվոր մեր հայոց,
Յոթանասուն աղեղք թափեն կայծ հուր բոց.
Երագ-երագ դառնան ի շուրջ ծովակին,
Իրար անցած կու հիմարի թշնամին։
Աշոտ հրեղեն գընտի նման
Փետե ի փայտ ցատքըտան
Սիրտ տա քաջացն աննըման։

Շարժին շըշեն փետերըն մոտ ի ցամաք,
Զարնեն փշրեն ըզԲըշր ու զսևըն բանակ.
Կեսն ի ծովին, կեսն ի ցամքին նետահար,
Մեկն ի գետին կարած, մեկայլըն ջրատար.
Դառնան մնացորդք ի փախուստ,
Դիտեն զվրաններն ի հեռուստ,
Վրոազ կու տան ամենուստ։

Կապույտ կանաչ ալիք ծովուն գունատին
Ի արյուն և մաղձ՝ զոր փսխե ժանտ այլազգին.
Զըզվին ձրկունքն իշնուն անդունդըն զով վայր,
Անդընդայինքն ի վեր վազեն ալյաց ծայր։
Անմիտ որսորդքն որսք որսոց
Տարուբերին ծոցե ծոց,
Ողորմ պագեն զափն Հայոց։

Կարմիր արև Գեղամա, ե՛լ սարն ի վեր,
Կրակե կըզակըդ ղըրած շուրջ տար ու բեր.
Սոթից[10] հովիկն ի ծովդ առնու ման պըտույտ,
Ոլոր-ոլոր ուռնուն դոնդողքըդ կապույտ,
Որորելով գլորելով
Ծափ ըղծափի բերելով
Շուրջ գան զՀայոց Թագվորով։

Հրամե՛ թագվոր. նետերդ բացին քեզ ճամբահ,
Ուր որ դիմես՝ դու ես Հայոց Շահընշահ.
Խաղա՛, վազե՛ ի դաշտ ու ի ձոր համարձակ,
Բըշրըն փշրած կորավ գընաց անդարձակ։
Երբ որ մըտար ի ծովս աստ՝
Էիր Աշոտ լուկ երկաթ,
Հիմ՝ որ ելնես՝ կուռ պողվատ։

Հա՛ փայլիր, հա՛ սլացիր երկաթ ու պողվատ,
Հազրով, բյուրով թափե բոցեր անընդհատ.
Շուրջ շողացիր ծայրե ի ծայր հայրենյաց,
Մանրե՛, մաշե զգենք մեր ամեն թըշնամյաց։
Հայոց հողուս դու կյանք տուր,
Երկինք քեզ տա հրաթափ[11] թուր,
Նահապետին՝ սիրտ քանց հուր։

ՀԱՅ ՀԱՆՃԱՐ

Ո՞ւր ես, Հայ հանճար.— անցե՛ր ես, անցեր,
Հին և երկայն դարք այլևայլ բաղդով,
Մեր Հայ հայրենյաց վրայեն սահելով՝
Սև ու սրպիտակ քողերով պատեր
Զաղվորն այն ծածկեր,
Անցե՛ր են, անցեր։

Այն աշխարհ, որ շատ աշխարհաց մայր էր,
Որ սփռեց զազգեր մինչ ի ծայր երկրի,
Արդյամբք իր հողուն, մատամբք ճարտարի՝
Լեցուն գրկերով տաներ ու բերեր,
Զանազան բերքեր,
Անցե՛ր է, անցեր։

Այն որ զառաջին շինվածն է կանգներ,
Սարերըն ծակեր հանց փտտած տախտակ,
Պատերով պատեր ըզծովուն հատակ,

Բերդի տակ, լերան գրլուխ գետ քաշեր,
Զանդունդ կամբրջեր,
Անցե՞ր է, անցեր։

Հայրենյաց պաշտպան՝ ղենքով զենք քըշեր,
Հյուսսի, հարավ դեմ դրներ վահան.
Վազեր արևմուտս, Աթենս հմտական,
Հելլեն հանճարույն դեմ ըզՀայն հաներ,
Անհաղթ հոշակեր,
Անցե՞ր է, անցեր...

Թո՛պ... լըսե՞ք թմբկին... թո՛պ. թնտան սրտեր.
Հայրենյաց է տոն, հայրենյաց համբավ.
Ո՞վ լավք, ո՞վ քաջք, ձեզ վարձք հոշակեցավ.
Արյո՞ւն և քրտի՞նք, ձեզ կապվին թագեր...
Հա՞յք, ո՞ւր արդյունք ձեր.—
Անցե՞ր են, անցեր։

Պարեն պատանիք, ծիծաղին ծերեր,
Կուսանք ամոթխածք վարդերով վառվան,
Պարկեշտ երախտյաց գովեստք բարձրացան.
Առաքինություն, ահա պատիվ ձեր...
Հա՞յք, դո՞ւք լոկ անտեր,
Անցեր են, անցեր...

Անցա՞ն, մարեցա՞ն ուրեմն հայ լուսեր...
Ա՞հ, Հայաստան, ո՞ւր քո փառքն փայլուն.
Ո՞ւր քո ճարտարաց աշխատանքն անհուն.
Ո՞ւր քաջ և գիտուն որդվոցդ արդյունքներ.
Ո՞նց քո բյուր փառքեր
Անցե՞ր են, անցեր...

Անցի՞ք դուք այլ սև սրտիս սև ամպեր,
Անկե՛ք հայ հողուն սև քարին վրրայն...
Ո՞հ, քանի՞ հաղար կանդուն լայն ու երկայն.
Ո՞հ, ո՞նց ցեղուցեղ՝ անձինք հոն եկեր,
Եկեր ու անկեր,
Անցե՞ր են, անցեր։

Ըվսև գիրն հայոց՝ կարդացե՛ք ազգեր,
«Կարկառ[2] հանգրստյան տոհմի տան Հայկա
Համարի՛նդ մեռյալս և ինքն ի քուն կա»
Մեռյալ չե՞ն ուրեմն Հայ հայրենիք մեր.
Հայաստան անկեր,
Բայց ո՞չ է անցեր։

Հա՛յ ազգ, հա՛յ հանճար, քունն է զքեզ բռներ,
Քո՞ւն թանձր և երկայն, բայց ոչ մահ անհույս,
Ո՞վ արթնացրնե զազգն իմ ի նոր լույս,
Ես հազարներ տամ այնոր, տամ բյուրեր,
Որ զաչքն բացներ,
Ու չըլլա՞ր անցեր։

Ո՞վ բանա զՀայկա աշխույժ աչուկներ,
Ո՞հ, ո՞վ կանգնե զքեզ հանճար հայրենի.
Ե՛լ, կանգնե՛ դու զքեզ, զավակ ես երկնի.
Լո՞ւյս ծագե մըթեդ, ե՛լ կանգնի՛ր ի վեր,
Հերիք քընացեր,
Գիշերդ է անցեր...

Կ՝ երդնու Նահապետ, կանչե ձեզ Հայե՞ր,
Հանճարն է մեզ կյանք, ըզնա վառեցեք,
Մեծ պզտիկ՝ այդոր սիրով վառվեցեք...
Ծագե՞, Հայ հանճար, փայլե՞ բյուր բոցեր,
Իմանան ազգեր,
Թե Հայք չե՞ն անցեր։

ԼՈՒՍԸՆԿԱՅՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՅ ՀԱՅՈՑ

Ա՛յ իմ լուսնակ գեղեցիկ, աստվածավառ դու լապտեր
Ջոր առաջնորդ գիշերո դըրավ երկինս ինքըն Տեր.
Կույր մըթության աչք անփակ, սըրտիս այլ դու աչք կու տաս,
Երբ չողշողուն շըղթայով կախված շարժիս իմ վրաս.
Քո թելն՝ երկնից արծաթեն հյուսած, պատրույգդ ալ ոսկի,
Ադամանդե կայծակներ սփռես պաստղերըդ շորս դի.

Եղի մեղրի նման կաթ մի ամանեղ յիս թափած
Կու խաղաղե կըրքերս զինչ ալիք լըճիս հանդարտած։
Ո՜հ, ո՞նց պայծառ էիր դուն կենաց դ երկրորդ դիշերին,
Երբ նոր քաշված Աստուծո ճախարակեն ընդ երկին.
Ո՜հ, ո՞նց փայլուն էր քո լույսն, երբ առաջին այն անգամ,
Գիշերազվարճ պըլպուլիկըն ձըգեց ձայն երկնահամ.
Շունչըն պայծառ քեզ նման հովտե հովիտ կու խաղայր,
Հեղիկ հովով թունդ ելած մաքուր առավակըն հեայր.
Ջըկար ականջ հողեղեն, որ զայն լըսեր ու փառք տայր,
Միայն հրեշտակք լըսեին և շարժեին ըզքեզ վայր.
Եվ դուն լըռիկ չափեցիր զանամպ երկնից կես բոլոր,
Ծով՝ ու ցամքի վարագույր բացիր, ներքև մտար խոր,
Երբ արեգակըն կու գայր հրեղեն ոտոքն հոդս ի վազ,
Ջարշալույսո ցող սփռեր և զառավոտն հրրամազ...
Կացի՛ր արև, ետ կացիր, մ՝ ե՛լներ երկինքըդ կապույտ,
Թող լուսնեկիդ ի ման գալ դեռ ի մեջ թուխ ամպերուդ.
Կա՛ց, կա՛ց, լուսնակ, դու առաջ, լեռնե ի լեռ, սարե սար,
Մեջ ձորերուս խորերուս անցի՛ր հուշիկ հավասար.
Հետ քեզ ունիմ ես գանգատ, քեզ Նահապետն ունի բան,
Սիրտըն երկուս է ճըղքած և ցավերն, ո՜հ, զանսղան.
Պայծառ լուսնակ, մի՛ փախչիր, թե տրտմության լըսես ձայն,
Ցաված սրտի մխիթարանք ես դու կանգնել երկինքն այն.
Ման գաս երկիրն Եդեմա, բայց ոչ ի հինն այն գիշեր
Երբ երջանիկ էր դեռ մարդ, լոկ սեր ու կյանք կու հիշեր,
Ճերմակ ճաճանչդ այնժամ տաք էր ջըրերուն ու ծաղկանց,
Ուր որ կաթեր քու շաղիկ՝ կենդանություն էր անանց...
Դարձի՛ր նայե՛ հիմ՝ ի վայր, նայե ի փեշ սարերուս,
Նայե ի տափ տաճարիս և ի հողրանք գեղերուս.
Ա՜հ, գերեզմանքն են Հայոց, որ ոչ ես են աշխարհի,
Մաշած նըշխարք՝ մեր հարանց՝ թաղված ի խոր խավարի,
Այն Հայկաղունքն անվանի և մարդկության անդրանիկք
Որ զԱդամա տունն իրենց վարձեցին տուն երջանիկ,
Այն մեծամեծ հրսկաներն, որ հրսկայից հաղթեցին,
Լեռնանման կըտրիճներն ի ձորն Հայոց թափեցին,
Հեթանոսաց կուռքերուն հաղթող որդիքն այն Հայկա՝
Ընկան անոնք այլ ի քուն ներքև ժայռերըն Հարքա։
Հայկն, որ ամեն հայու սիրտ պիտի կանգնե դարուց դար,

Հայկն այլ ի քուն է ահեղ, և ո՞վ գիտե զյուր դադար.
Ո՞ր արդյոք սար կամ բլուր ծածկե զհրսկայն այն բարի՝
Որ փառք որդվոցըն տրվավ ու ազատություն աշխարհի։
Ո՞ր լեռն արդյոք է քո բարձ՝ բարձրադրլուխ քաջդ Արամ,
Որ ի Մարաց մինչ Մաժակ վազեցիր տեր հաղթանդամ։
Եվ դու Արայդ գեղեցիկ, ո՞ր դաշտք արդյոք, ո՞ր հովիտ
Կարմիր գանգրովդդ պըլլած ծածկես ըդխոց ճակատիդ.
Եվ որ զահեղն Աժդահակ շամփրած ի ծայր նիզակին
Ի մութ քարայրս քըշեցիր զվիշապալունս սևագին,
Դու ոսկեծամ և իարայաշ Տիգրան, դու ո՞ր կաս քարայր.
Եվ դու ծընունդ ծիրանի երկրի ու երկրի հրեղեն այր,
Վեհատեսիլ դու Վահագն, որ ընդ աստվածքս նըստար,
Ծածկե՞ց ըզքեզ ապառաժ, թե՞ հալեցավ քուն ըզսառ։
Երկհազարյան տանուտերք Հայոց հողուս Հայկազո՞ւնք,
Արդյոք ի խորքս նորին դեռ կեցե՞ր եք իբր հիմունք,
Եվ ոնց որ ողջ ըլլալով զողջ բրոնավորքըն զարկիք,
Այդպես ղմեռյալ բրոնավորսն հողուն ներքև այլ դատի՞ք,
Որ պըղծեցին զսուրբ երկիր մեր հարց Հայոց սեփական,
Կարծեցին ձեր քով նընջել և ի դրժոխս արթընցան։
Դուք այլ պանդուխտ հարազատք, Արշակունիք տընաշեն,
Որ զՀայկազանց հին անունն՝ հրոչակեցիք ի ազգս ամեն,
Ի Կամախա կամարեն խըլված անգութ գերողաց
Եվ ի կտրիճ սիրասեր մանկանց նորեն ազատած,
Գըլուխ գլխի, խաղն ի քուն Ավագ Մասյաց մոտ վըհին.
Արդյոք խորհուրդ ընելով դեռ կու հիշե՞ք ըզվրեժն հին։
Դու այլ, ո՞վ մեծդ հրսկայից և թագվորաց սուրբ Տիրդատ,
Որ զցանկալիս քո թոռած՝ զՆրեզ, Գառնի ու Արտաշատ,
Զահեղ գըլուխդ վերուցիր և հետ մահուդ ահավոր
Մինչ ի հանգիստըն Հոգյաց վանաց առիր քուն մ՝ այլ նոր,
Զեփրատ թոռած՝ զորով վաղ տըվիր երագ ի մի քայլ
Քարածորան Տիգրիսի լըսես խոխոջ այլևայլ,
Արդյոք հերի՞ք քեզ տեղդ այդ, թե դարձյալ շարժ տաս² քարանցս
Եվ ի Սեպուհ կամ Մասիս վազես՝ ըզմահն այլ սանձած,
Եվ դուք կարմիր Վարդանա վարդանըման դուք ընկերք,
Որ Արտազու դաշտերեն մինչ ի Համշենն եք քըներ,
Արդյոք ձեր սուրբ արյան գին՝ աշխարհիդ բաղդն հիշելով՝
Շարժե՞ք դեռ զքաջ բազկընիդ հոգիներուդ կրակով։

Բագրատունի՛ք շինարարք, ի Երազգավորս և Բագարան
Դու փրնտրրե՞ք զդաստակերտ ձեր ու զհետին քրնարան.
Եվ աշտարակրս քաղքիդ՝ ազնիվն Անի այլ ձրգած
Գրլոխ շարժեք և երկիրրս սասանի սարսափած։
Տաճար, դարպաս[3], վանք, խորան՝ սփռին երկիր ավերակ
Շենք ու անշենք գերեզման լինին Հայոց բովանդակ...
Խավար վերա խավարի հագած կանգնի սև գիշեր,
Նահապետիս սիրտն այլ սև. աստվա՞ծ, զմեզս հարց մի՛ հիշեր...
Արդ իմ լուսնակ, փութա՞ ամպերեդ,
Ե՛լ փարատե զմութ Նահապետիս.
Սրփռե՛ ի երկիր դեղձան վարսերեդ,
Հետ քարերուս կապե զայուն սրրտիս։
Հանդարտ ու լուռ է շուրջրս բոլոր,
Երկիրս ի քուն, երկինք կիսարթուն.
Լուսնա՛կ, վառե՛ զկանթեղդ պրլլոր[4]
Ի գերեզմանս իմ հարց Հայկազուն.
Ճերմակ թևոք գրրկով երերուն
Երկրնցու գչահդ ամպերուդ միջեն
Սարից գրլխեն, հետանց[5] ծառերուն,
Արարատ երկնյուղ գագաթեն։
Սարրն ի սարին դիզած տասրն տակ,
Ջյունակույտ սառն ի վրրան հինգ բարդ,
Ու ա՞յլ ի վրրան քո լույս սրպիտակ,
Ու այլ ի վրրադ իմ արտսուք հրազարդ։
Արդյոք հալե՞ն, արդյոք տի մաշե՞ն
Զթանձրր պատանք գերեզմաններուս,
Արդյոք ի խորշն հասնի՞ն քարեղեն՝
Լրվալ զանլաց ոսկերք հայրերուս...
Ա՞հ, ո՞հ... լսե՞ք ոգիք Հայկազանց
Նահապետիս լրսե՞ք հառաչանք...
Լրսեմ լրսեմ ես ըզձայն հարանց,
Ահա շարժին, բացվին գերեզմանք։
Բարե՞վ. հանգի՞ստ ձեզ, հին Հայկազունք,
Որ մշակեցիք զագարակ Նոյա,
Եվ թե ելան ձեր դեմ դյուցազունք,
Ընկան հրնձոց պես ի արտիդ վերա։
Ազգից ծոցեն կանգնած մրրմռալով,

Թագապըսակ ահեղ ճակատներ,
Վարդանք, Վահանք բզվրեժդ առնելով,
Հարին զՍասան, հանգչեցեք դքուն ձեր։
Ո՜վ հայրապետք սուրբք, փառք աշխարհիս,
Որ նընջեցիք ի մատրանց[6] ներքև,
Նայեցեք մեկ մ՚ այլ վերա երկրիս,
Որ աշվընուդ ծագե նոր արև։
Եվ դուք կտրիճ սիրուն զորականք
Կրակաթափ թուրք, մահացան ղաղուկք,
Քաղցր հայրենյաց պարիսպք և պահանգք[7]
Ձեր քիրտն ու արյուն անմահ անմոռցուկք.
Դարձիք ամենքդ առեք հանգիստ քուն,
Նահապետ լա զձեզ, հիշեն սրդիք.
Ահա վրկա լուսնակրս փայլուն,
Դարձի՛ք մրտեք 'ի քուն հանդարտիկ։
Իսկ դուք կայտառ ու կարմիր տրդայք,
Գրավք Գրիգորի, գինվորք Հիսուսի,
Եկեղեցվույս Հայոց գարդ վրկայք,
Ո՜վ կրակե սիրտք՝ հաղթոդք հյուսիսի։
Մոլորահավատ ազգեր սևակրոն
Հրրով, թրրով եկան իմ աշխարհ,
Կ՚ ասեն, վերցվի պատարագ ու պաշտոն[8],
Լուսավորչի լույսն ըլլա՛ իսավար...
Ա՜յ անիծյալ օձք, սի՛րտք գազանի,
Զորնան լեզուդ ու անգութ բազկընիդ
Թե բրոնացայք հողուս հայրենի՝
Հոգիս չ՚ ինկնար ի չար ձեր ժանիդ։
Հայոց հավատս է փրկչին հավատ,
Ի առաքելոց բերած նախընծա,
Լուսավորիչըն տընկեց հաստատ
Ու մեր արյունքս ոռոգեն ըզնա։
Պարսի՛կք ի զուր ատրուշանք վառին,
Ի զուր Հագար այրե զքաղքընիս.
Սուր Սրկյութին և թուր Թաթարին
Ի զուր շողան. ապատ է հոգիս։
Էսպես կանչեն կարմիր կայտառ Հայք,
Դեմ սուրերու կանգնին համարձակ,

Խաղան խնտան ընկնին նոր վրկայք,
Կանգնին փառոք, թրռչին լուսաթագ։
Կարմրածոցիկ հետ[9] հատից նրռանց,
Հետ հողմահար խայծյալ խընձորին,
Նրման սարիցն արյան աղբրրանց՝
Թափին նրշխարք կարմիր կրտորին։
Հողն հայրենի ծրծե զսուրբ արյուն,
Ծոցրն բանա, առնու զյուր որդյակք,
Անմարդաձայն, անծանոթ անկյուն
Կարմիր քրնով նրնջեն նահատակք։
Սրրտի հատոր հա՜ զան սիրելիք,
Հարցունք անեն ձորոց ու լերանց,
Ո՞ւր մեր տրղայքն, ո՜հ, ո՞ւր ծածկեցիք.
Սարեր ու ձորեր, տրվեք մեզ նրշանց[10]...
Սարերրն լուռ, ձորերրն տրխուր,
Հովրն հեալով, թևերուն տա դող,
Կարկրջելով ընդ ժայռս անցնի ջուր,
Տրտմյալ տերևք կաթեն անուշ ցող։
Ո՜վ մայր, ո՜վ հայր, ո՜վ եղբարք և քորք,
Աչք տուք ի երկին, անդ ձեր սիրելին.
Եվ ամեն քայլ որ կոխե զայդ հողք՝
Ծածկե զնրշխար հայ նահատակին։
Սրփռե՜ լուսնակ, սրփռե սուրբ լուսեր
Կարմիր կայտառ Հայոց մանկրտվույն,
Հողրս այս տաճար է, դու այլ լայտեր,
Նահապետն այլ ի սուգ է սիրույն։
Եվ դուք ամեն Հայ սիրտք վրշտահար,
Որ նախ քան զմահ մեռայք ցավերով,
Ջոր հալածանք կամ սուրն անդադար
Եվ կամ դիպվածք բերին չար ժամով։
Որ հանց երազ անցեք աշխարհես.
Պահ մի սիրով լրցված սուրբ ամանք,
Հանկարծ ընկաք կոտրած կուժի պես,
Շուտով խլեցին ըզձեզ գերեզմանք։
Գրլուխք կանգունք զհետ[11] բարձրը սարի,
Մազերդ ի ման ճաճանչից նրման,

Բազկունք ամուր և կուրծքեր արի,
Ոտքեր ծաղկած ցողալից շուշան,
Պայծառ աչկունք ջուխտակ արեգունք,
Որ կաթեիք գութ, սեր ու խընտում.
Քանի՞ շուտով անցան ձեր ճրագունք,
Եվ դադրեցավ սըրտիդ վերվերում։

Ներքև ճակտիս, ներքև այս քարիս
Ցամքած սրտեր տերևի նըման,
Ձեր սիրելյաց շունչն որդոց որդիս
Ահա հասեր՝ հընչե իմ բերան։

Ո՜վ հարք, եղբարք, որդիք Հայ հողուս՝
Անլացք անսուգք և անհիշատակք,
Ձեր սիրելյացն եմ ես արտասուս,
Հին հառաչանք, հայրենի կըրակ։

Սև ավերակք դուք, դուք Սև հողեր,
Թըրով թափած տրհաս հունձք և տունկք,
Ի գազանաց ոտնակոխ ճըղեր,
Ո՜հ, ծաղկեցեք[12] դուք այլ իմ արտունք։

Կարմիր կոկոն գլուխներ, վե՜ր կացեք,
Լուսակաթ աչք մեկիկ մի բացիք,
Մեղրոտ շրթունք, մեկ մի ձեռնեցեք,
Ըսեք թե հաշտ եմք, ու ի քուն դարձիք։

Քամեցեք հարք ըղճակտիդ քըրտինս,
Ըկխարտյաշ մազերդ թոթվեցեք, տըղայք,
Տըվեք այդոց մարք ղհետին ըստինս,
Հալալ արեք և բարյավ երթայք։

Մուրատատուր մեր սուրբքըն վրկա
Հալալ արի ես ալ ձեր հողուն,
Դարձիք ի քուն. լուսնակս այլ վրկա,
Որ անմոռաց եք ի Հայ սիրուն...

Այլ դու լուսնակ ահա կու նվաղիս,
Քաշես ճառանչդ ի ծոցդդ ճերմակ
Ջետ արծրվի ափսե կու թավրիս
Մեջ ամպերուն թուխ ու կապուտակ։

Կա՛ց, մեկ վայրկյան մ՚ալ կա՛ց իմ սիրու

Մինչդեռ ըզծնունդ ակնարկութեանն թերաբում
Իբր ի ծագաց անպարագիծն իւր ալուց՝
Նրկատէր Տէրն՝ ըզմեծ աշխարհս կիսակազմ,
Զեռեալ յուզել խուռրն տարերց՝ վրհական
Հասունանալ գոյից յանձնիւր ի պայման,
Եւ վերացեալ արարչագործն հաճութեամբ
Ոլորտանայր ի ջեռուցիչ սիրոյն ամբ[3].
Արեգական չեւ էր չափեալ ասպարէզ,
Չեւ բընութեան լուսազգեցիկ բացեալ ծոց,
Դու անդրանիկ ընդ բալս աղջից[4] դիզազէզ
Ցարգանդ վրհին վակժոյժ առեալ թաւալոց՝
Երեւեցար, ո՜վ գեղապանծ երկրի սար.
Զորմէ հարեալ բուռն անմահից անհուն պար՝
Որպէս կաւ թուրծ ի հիռ ածեալ լայնարձակ՝
Ըզմեծադիր տարրացուցին զայս գընտակ.
Իբր երիվար մրբրկուտ ի սոյր ջերմանդամ,
Ցականակիտ մրխեալ բիւրեղ կարկաջուն
Եռացուցեալ պատառէ զխորս հեշտական,
Անգուսպ կոչոյ ստուգկանելով[5] հեծելոյն,
Ի խրոխտապանծ դու պարանոցդ ամեհի
Զահեղն առեալ դանդանաւանդ աշխարհի՝
Ի լայնալիճ վրհից ալեացն անդրընդոց
Գաւակագեղ թափեր ղերկիր ջրրակոծ.
Հերձեր բարձեր բարձրացուցեր ի վեր շեշտ
Սոսկավիթխար վիմահասակ նիւս բոլոր,
Եւ ահագին կարկաջանօք վէտս ի վէտ
Անհուն սահանք իբր ապաժոյժք մեծոլոռն
Ընդ բովանդակ անկերպարանդ մարմին
Դընդընչաձայն իջիւք թափեալ ընդ գետին,
Հունքս բացին գետոց ադբերց անարեաց
Վիշապապտոյտ սողսկմամբ յալս ընդերաց։
Դու որ զոտիւք ըզմերս տեսեր նախահայր,
Եւ յուս՝ զերկրորդ բարձեր ըզծեր վերածնող,
Անշուշտ և յա՜յնժամ դու երկրի զրեցար ծայր,
Մէջ անմահից եւ մահացուաց կէտ կոթող,
Մինչ շանթեռանդն յանդընդոց թունդք արդանդիդ
Ընդ ծրխաշունչ փոզս սրկորոյդ քարաքիթ՝

Կարկաչաւէտ ժայթքէին գունդ-գունդ կոհակ,
Յարահոսան դրստերց Բասխայ[6] մայր գայլակ.
Երկինք ըզքեւ զաղուամազ թարմն արկին հիւս
Դալարազուարճ իբրեւ շրղարշ կուսական,
Եւ յանարեւն աւուր՝ ցուցար ոսկեբոյս
Կանաչ դրօշակ սփռեալ խոնաւ ընդ սահման.
Զի՞ հեզիկ սօսք սաղարթագեղք ու եզեւինք
Ի սոյլ հողմոց յերիւրէին նուրբ սըրինգ.
Քանի՞ ամբիծ շուշան ժամուն այն շռաւյր
Եւ մանուշակ պարկեշտ ի սորբս գոփայր։
Իսկ մինչ ի գոգ բարձուն երկնի յեղակաթ
Գրլեալ գլորեալ թափառնաբար օդ կուտակ
Ըզհամօրէն ծրծեալ մաքուր լուսոյն բարձ՝
Իշխող վերնոց կամարաց արփ հերարձակ,
Զարշալուսոյն շուշանափայլն եհերձ ծոց,
Եւ յաշտիճան[7] ծիրանեփառ գիրգ ամպոց
Վարդակարմիր եհատ զփայլակրն գիմաց,
Քեզ՝ Արեգակն այն նոր զնախկին փայլ ցոլաց։
Ըզպետն այստեղց՝ ի գլուխ լերանց արքայիդ,
Ի նորութեան երկնից ու աւուրց տեսեալ պերճ՝
Խուն մեղանչէր արդեօք քաւդեայն անքթիթ,
Կամ Արամազդն ի գիշերի լուսավերջ,
Համատարած հանդարտութեանն ի պահու
Ընդ հեզանազն յառեալ մահկին լուսատու
Ընդ կարակնեալ գբրգանս եղջերց բոցաթեւ,
Ծառոց ծաղկանց ցընցղղկելով ցօղ թեթեւ։
Ո՜հ, ո՞ յարդեացս եւ ինձ խուսել տայր զբաղմանց
Եւ Բիւրակնեան բըլրոց ի ստուերս իջեալ լոկ՝
Սըրբովք ցնորիւք ճեմել հոյլըս ծաղկանց,
Ի խարտիշուկրդ ցայգածին պիշ աւոք,
Փողփողենէջրդ պարող քերբք ոստոստոզ,
Որք զառաջին յօդրս առնէին քայլափոխ՝
Զերկայնս հեղեալ լուսոյ գիսակս համաապիւռ
Մանուածաւալ[8] ի նքնչախառն ի յաղբիւր։
Բաբէ՞, զո՞րս յա՜ինժամ լրսէիք, խա՜զք հոգիտք,
Ըզձից յինէն հրամանաւած ձայնս եւ թրոիչ.
Ո՜չ եւս անդ միտք յերկունս, այլ՝ ծինք խսկաթիոք՝

Ուշ մաղթելով դայեկութիւն առ գերիշ։
Ո՜հ, անդ, Ոգի՛դ, էին ազատ քո վայրքն անդ,
Եւ անթարգման ըղձից՝ ոչ համր էր բերանդ.
Նախանձաւոր քեզ ընդ Մասեաց արձագանգ՝
Յերկնից խորոց՝ ուր տենչք թրուչին, գայր քեզ վանգ։
Ո՜հ, թէ դարուց նախնեաց իմ լեալ էր ղաւակ,
Հաստչին ձեռաց մինչ յայտնագոյն գիծ յերկրի,
Եւ օրհնութեանց շուրջ վեղոյր ցօղ երկնառաք,
Կամ ի կրկնում նորակերտիլն աշխարհի՝
Ում ապաւէն արձանանայր քաջափայլ
Անդրնդայաղթ լեառն իմ՝ զահեղ վրէժ լուծեալ.
Ցոր ոխարացեալ եւ հայէի սիգապանծ
Զհանուրց փրկիչն՝ հովանի գոլ Հայկազանց։

ՔԱՋԱԿՈՐՈՎՆ ՄՈՒՇԵՂ Ի ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ՋԻՐԱՒԱՑ

Ցոլան ցայտեն փառք աստեղն Հայկայ.
Տան Սասանայ հաս օր վրիժուց.
Յարեւմըտից դիմէ Պապ արքայ
Լրծեալ հելլէն ջոկս առիւծուց.
Յանյուշն ի բերդ՝ յուշ տուք Արշակայ,
Վերականգնին վաշտք Վասակայ.
Ի ճերմակ ճարտուկ[1] սլացեալ արծուապէս
Դիմէ սկայաքայլ[2] դիմօք բոցագէս
Քաջակորովըն Մուշեղ
Յառեալ ի Պարս ակն ի շեղ։

Ո՜վ Հայաստան, բաղդ քո յերկին կայ՝
Ագահ բրուանց անձեռընհաս.
Ա՜րկ զէն ըզքեւ, կանգնեա՛ց իբր հրսկայ.
Սասանեցան Տաւրոս Կովկաս.
Մարն եւ Ասուր ի քէն նետահար՝
Զիշխեն շարժել շիրմացրն ըզքար։
Ընթասցուք ի զէն ի մարտ եւ ի յաղթ,
Հայրենեաց հիմունք ամրասցին անխախտ.
Ձայոց հաւատք, Հայոց տուն,
Կացցեն ազատ հաստատուն։

Հրո՜ւք հիւսսի, դարձարուք ի սարս,
Լալով զանկեալդ ի ձէնչ գեղդուր[3].
Մի՛ պայքարիք ընդ վեհազանց պարս,
Մի՛ ոք գրգռէ զԹորգոմայ թուր։
Աւա՜ղ քեզ Լեկ շանթահար Շերգիր՝
Ի Կամսարէն քաշէ յերկիր
Սպանդարատ կրտրեալ զաշացդ հուսկ քրթիթ,
Զամուսինդ այրի եւ որբ ըզմանկտիդ
Եւ դարեւուդ քաղցրը ծայր,
Յանարշալոյսն հանէ մայր։

Շատ եւ քեզ վէրքդ այդ, փախիր սէգ Ուռնայր,
Որ ըզգազիւ սփռես բազուկ.
Քաջակորովն ըզքեզ կրոփէ այր՝
Յանպարտելի զինուն գրդդուկ[4].
Ըզ Մուշեղայ խնդրէիր դու գլուխ,
Տա՛ր Շապհոյ զքոյդ արիւնաբուխ,
Եւ «Ճերմակաձին՝ զայս խոցերս, ասա,
Պարգեւեաց յարեւդ՝ արքայից արքայ.
Թէ ատելի կայ քո ժանտ՝
Ըզնա՝ռ Մուշեղ մատո՛ անդ»։

Տարամերժեալդ ի մէնջ Մերուժան
Զանգութ Շապուհ դիւթեաս ի զուր,
Զուր Մազդեզանց ծրխէ ատրուշան,
Յաճիւն դարձցի վռամականն հուր[5].
Հայր հայրենեացս ի սար Նրպատակ[6]
Ներսէս պարթեւ կայ յօժընդակ.
Ծածանի երկին հաշտարան ըզմեօք,
Զաղեղանց տարափ կուտէ զԹըշնամեօք.
Խաղաց Հայկազն ի Զիրաւ
Պարսիկ բանակն յետս հարաւ։

Կա՛ց, Արծրունիդ դու, կաց ամբարիշտ
Հայոց թագին հետախընդիր,
Յարժան վարձուցդ հի՞մ խուսափես միշտ.
Ահա եհաս քեզ թագադիր.

Սրմբատ ասպետ զայս քեզ ի տրիտուր
Կունտ[7] գնգաթանդ ածէ շամփուր.
Արքանեակ հերոյ, պրսակեաց հերով,
Ի ե՛րթ բազմեաց ի գահ յԱրհմանի ժողով.
Ա՛յս թագ, ա՛յդ գահ մատնըշաց,
Որք դրժեն Հայ հայրենեաց։

Փող հարէք Հայք, յաղթութեանց կարօտ,
Առաքեցէք աւետաւորս.
Ուռովք ուռեաց յեռադոյն նարօտ
Բոլորեցէք ըզվերջաւորս.
Իջցէ արքայ ի բարձր ի դիտէն,
«Առ Արշակ քաջ» Պարսք զոհ եղեն։
Քահանայքդ յերկինս եւ ըսպայք յերկիր
Հընչեցէք զհամբաւ մարտիդ երկնաձիր.
Վառիւ խաչիւ արծուենըշան
Վանեաց վանդեաց[8] զատրուշան։

Կարկաչահոս յակն Արածանի
Ուղղեա՛ սեղան՝ մեծրդ Ներսէս,
Յորմէ վազեաց Տրդատ հոլանի
Կընքեալ յԱստուած ու ի Գրիգորէս.
Կարմիր ճակատ հայակոյտ մանկրտին
Գոյն քաջութեան անդ մըկրտին.
Ծափեն յորձեռանդըն խաղք յԱշտիշատ
Ի Կարապետին վանս ծափ ուիտաշատ.
Վազեն մանկունք թմբկահար
Ընդ Բագրեւանդ ճանապարհ։

Ճողճեալ[9] ճօճի ճերմակն օդապար
Ոտնատորոփ, ճախրասլացիկ,
Փոընչիւն ածէ ի Տիրինկատար,
Սրտահեշտանան ճորտք քաջաձիք.
Գոռայ, Գըրգուռ, մըռընչէ Մամրուտ;
Մեղ մեղրաբուխ խայտայ կրկչուտ
Սուր սլաքաւ սրբէ զքրտունս իւր Մուշեղ

6 Զեռնդ Այիշան

Տարտփս յաղթութեանց կաթեն վարսք շրքեղ.
Ցրցէ զնիզակն իւր արի
Պահպանակ Հայ աշխարհի։

ԵՐԳ ՈՒ ԳՆԱՑՔ ԶՕՐԱՑՆ ՀԱՅՈՑ ԸՆԴ ՎԱՀԱՆԱՅ ՄԱՄԻԿՈՆԵՆՈՅ Ի ՇԱՒԱՐՇԱԿԱՆ ԴԱՇՏԻՆ ՎՐԷԺՔ

Օ՜Ն ԱՆԴՐ ՅԱՌԱՋ

Բա՜մ. փորոտան[1] բարձուստ բոմբիւնք յԱյրարատեան դաշտն
ի վայր.
Արի արանց արիւնք յեռանդն առատանան ի հրապայք[2].
Հրաւէր հայրենեաց հրոչակի՝ նդ հանուր,
Հոգիք Հայկազանց բորբոքին ի հուր.
«Որք երկնաւորի պսակին լք անձկոտ,
Ու որ երկրաւորիս փառաց երկնահորդ,
Հապ՝ օ՜ն, արի արանց մանկունք՝
Հայրենավրէժքդ Հայկազունք,
Հապ՝ օ՜ն, ի զէն գունդագունդ,
Յեռեալ ի պար թունդ ի թունդ՝
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, օ՜ն անդր յառաջ,
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, մի՛ ձախ մի՛ յաջ,
Օ՜ն անդր յառաջ,
Մի՛ ձախ մի յաջ,
Օ՜ն անդր յառաջ,
Յառաջ, յառաջ,
Հապ՝ օ՜ն, յառաջ։

Հայկեան փանդռանց որոտընդոստ դրընչին բարբառք մարտագոռ
Դառնակոուչ անդրաձայնէ Պարսիկ կերկեր ի շեփոր.
Շարժեն հրեշտակք թեւոս լուսափողփոզս
Ճիւաղք ճուճաղաց[3] կայտռեն ի դրժոխս.
Շոինդրն շանթառաք զեթերօք փարի,
Սարսափեն սանդարք[4] ի խօլ խաւարի։
Հապ՝ օ՜ն, արի արանց մանկունք
Հայրենավրէժքդ Հայկազունք,
Հապ՝ օ՜ն, ի զէն գունդագունդ,

Յեռեալ ի պար թունդ ի թունդ՝
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, օ՞ն անդր յառաջ,
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, մի՛ ձախ մի՛ յաջ.
Օ՞ն անդր յառաջ,
Մի՛ ձախ մի յաջ,
Օ՞ն անդր յառաջ,
Յառաջ, յառաջ,
Հապ՝ օ՞ն, յառաջ։

Մամիկոնեան սաւառնեցաւ դրօշուն յայերս[5] գոգ ծալ ի ծալ
Ի ճակատուց ի թշնամեաց՝ սա ոչ գիտաց յուրասուս կալ[6].
Հեծեալ հրանրժոյգ վեհին Վահանայ՝
Վրէժ կանչէ արեան Կարմիր Վարդանայ.
Փոընչեալ բոցաշունչ դափր ի գարշապար
Ռազմամուտ վարգի յանժոյժ երիվար։
Հապ՝ օ՞ն, արի արանց մանկունք՝
Հայրենավրէժքդ Հայկազունք,
Հապ՝ օ՞ն, ի զէն գունդագունդ,
Յեռեալ ի պար թունդ ի թունդ՝
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, օ՞ն անդր յառաջ,
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, մի՛ ձախ մի՛ յաջ,
Օ՞ն անդր յառաջ,
Մի՛ ձախ մի յաջ,
Օ՞ն անդր յառաջ,
Յառաջ, յառաջ,
Հապ՝ օ՞ն, յառաջ։

Ի գուպարել մարտայարդար գարշապարաց[7] Արամայ՝
Գոռան Կորդրիք, մռնչեն Մասիք, հրնչեն սահանք Երասխայ.
Ի դոհ ի դոհ տալ[8] բիւրուցն ոտնատրոփ
Տատանին դաշտակք, յառնէ շռինդն ապշոպ.
Կռուփ առ կռուփ կոփեն կմբայք[9], տէգ առ տէգ,
Դղորդ առնուն տարերք կորովեացն ի վէգ.
Հապ՝ օ՞ն, արի արանց մանկունք՝
Հայրենավրէժքդ Հայկազունք,
Հապ՝ օ՞ն, ի զէն գունդագունդ,

Ցեռեալ ի պար թունդ ի թունդ՝
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, օ՞ն անդր յառաջ,
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, մի՛ ձախ մի՛ յաջ,
Օ՞ն անդր յառաջ,
Մի՛ ձախ մի յաջ,
Օ՞ն անդր յառաջ,
Ցառաջ, յառաջ,
Հապ՝ օ՞ն, յառաջ։

Սրի՛ք ի կռիւ քաջակորովք՝ ընդ կորակոր հրոսն Արեաց.
Հապա՜ համհարզք մեր բիւրայաղթք, ձեզ նոր հանդէսք են փառաց.
Թռի՛ք ի ոգմ ի խազմ, առէ՛ք զէն եւ զարդ,
Երեսնիւք յրսնիւք հարուլ բեւրս հազարս.
Ի սուր ի սուսեր կարշնեղ[10] յաղեղունս
Ըղսեաւ Սասանեանց ջարդել կառափունս.
Հապ՝ օ՞ն, արի արանց մանկունք
Հայրենավրէժքրդ Հայկազունք,
Հապ՝ օ՞ն, ի զէն գունդագունդ,
Ցեռեալ ի պար թունդ ի թունդ՝
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, օ՞ն անդր յառաջ,
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, մի՛ ձախ մի՛ յաջ,
Օ՞ն անդր յառաջ,
Մի՛ ձախ մի յաջ,
Օ՞ն անդր յառաջ,
Ցառաջ, յառաջ,
Հապ՝ օ՞ն, յառաջ։

Մինչև ցե՞րբ ցե՞րբ սուգ ունի զՀայս. հատէ՛ք զարտօսր՝ որբք այրիք,
Հարանց հարսանց եղբարց որդւոց, հանուրց Հայոց վրէժխնդիրք՝
Թինդս առեալ երթամք յասպարէզ քաջաց.
Յուշիկ հընչեն ձայնք արեան սիրելեաց.
Սօսափիւնք յերկնից արհաւիրք յերկրէ
Քաջացս օժընդակ ըզՊարսն հերքեսցէ։
Հապ՝ օ՞ն, արի արանց մանկունք
Հայրենավրէժքրդ Հայկազունք,
Հապ՝ օ՞ն, ի զէն գունդագունդ,

Յեռեալ ի պար թունդ ի թունդ՝
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, օ՞ն անդր յառաջ,
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, մի՛ ձախ մի՛ յաջ,
Օ՞ն անդր յառաջ,
Մի՛ ձախ մի յաջ,
Օ՞ն անդր յառաջ,
Յառաջ, յառաջ,
Հապ՝ օ՞ն, յառաջ։

Օ՞ն անդր ի բաց հայկեան հողոյ հրսկայազանց եւ սրբբոց՝
Ի բա՞ց ջոլիր[11] չբուառական մոխրապաշտիցըն պղծոց.
Դաշտք մեր մերժեսցեն զոսկրոտին անգամ,
Արիւնք վրկայից զճապաղիսն անժամ
Ոտն ընդ դիս սոռնեալ[12] դարձցին ի փախուստ,
Մատնակուրծք ընդ Հայս հայեսցին հեռուստ։
Հապ՝ օ՞ն, արի արանց մանկունք
Հայրենավրէժքդ Հայկազունք,
Հապ՝ օ՞ն, ի զէն գունդագունդ,
Յեռեալ ի պար թունդ ի թունդ՝
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, օ՞ն անդր յառաջ,
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, մի՛ ձախ մի՛ յաջ.
Օ՞ն անդր յառաջ,
Մի՛ ձախ մի յաջ,
Օ՞ն անդր յառաջ,
Յառաջ, յառաջ,
Հապ՝ օ՞ն, յառաջ։

Ա՛ռք աղեղանց[13], բարձր ի թիրախ թռուսջիք. վերջին ձեզ խրախոյս.
Առեալ տարցուք զանթիկնադարձ զայս վարդագոյն դրօշ անխոյս՝
Ի վերայ յիսնից յաղթից Վարդանայ
Պարսկատանջ բազկաւ արւոյն Վահանայ,
Շեշտ ի ծայր շիրմի դաշտին Շաւարշան
Տընկել յաղթանակ անմահ Հայութեան։
Հապ՝ օ՞ն, արի արանց մանկունք
Հայրենավրէժքդ Հայկազունք,
Ի Շաւարշան գունդագունդ,
Յեռեալ ի պար թունդ ի թունդ,

Ի յաղթանակ, օ՜ն անդր յառաջ,
Ի յաղթանակ, մի՛ ձախ մի՛ յաջ,
Օ՜ն անդր յառաջ,
Մի՛ ձախ մի՛ յաջ,
Օ՜ն անդր յառաջ,
Հապ՝ օ՜ն, յառաջ։
Ի յաղթանակ։

Ի ԾՈՎԱԿԷ ԲԵՆԱԿԱՑ ԱՌ ԾՈՎԱԿՆ ԳԵՂԱՄԱՑ

Ա՜յ իմ խաժակրն խաժալանջ, խաժահէր
Կապոյտ յատակ, կապոյտ գրմբեթ լուսայեռ,
Ծով հայրենեաց, ծով Գեղամայ գեղեցիկ,
Զորով փարի սիրտ, աչքս՝ աւա՜ղ, կան տարաձիգ
Ըկցանկալի հայկապատշաճ քոյդ դիմակ
Ի հոմանուշդ՝ այլ ի պանդուխտս ի Բենակ[1]
Նրժդեհաբար սաղապաճեմ ի նախանձ
Ցառեալ դիտեմ, եւ բարբառիմ ի քոյդ խանձ.
Յալեաց յալիս հովոյ ի հով ծուփ ի ծուփ
Միտքս մրրրկեալ՝ ընդ մրկանանց շարժ եւ շուփ,
Վարեալ առ քեզ յիշատակօք հայրենի,
Ի սմա սահել՝ ի քեզ լիւղալ[2] իղձ լինի։
Ո՜վ կապուտակ ծիծաղ ծաւալ խիտ առ խիտ,
Ե՞րբ վայրայած հանգիցէ գլուխ որդեկիդ
Ի պաղպաջուն ճերմականաչ քոյին բարձ,
Անտուստ ըսթափ ի տիրագոյնն առնել դարձ.
Ըզգեղաճօճ դիտել ըստուերս Գեղամայ
Ցարքունազարդ դարեւանդիցըն Գեղայ,
Եւ գվարդասփիւռ արշալերշոց[3] Սիսական՝
Անդիմակայ դաշտիդ հրոսակ սիրական.
Լրսել ըզխիստ ժայռիցն հեզիկ ծնրեղոց վազ
Ըզկայտառ առուանցն ի քեզ հոսանս գեղանազ.
Ըզձիւնաբարձ եւ՛ ըզհրակիր դիտել սարս՝
Քեւ բուծեալս, քեւ շիջեալս, եւ զկողոքն դալարս.
Ցորոց ահեղն հայէր արքայ Տրդատէս
Եւ հովանոց քեռքն[4] կանգնէր քաջագէս։

Սիրեմ եւ ես կալ յաշտարակըս Գառնի,
Դիտել զբանակս ի գլոր յանձուկ կապանի[5].
Սիրեմ լըսել զափամբ զմբնչիւն Մաքենեաց
Զ Սողոմովնին եւ զ Մաշտոցայն հոգեզգեաց.
Սիրեմ ընընել զգեղարդն յԱյրին տիրամուխ,
Ի Վանեվան վարգել ու Աղջոցն ի նըկուղ,
Ի բարձրաճեմըն խոյանալ Հայոց-Թառ,
Եւ թեւախոնջ ի Սեւանայն գալ կարկառ։
Այլ իմ հրաթեւ նըժոյգ արկնալ սահ ընդ ջուրս[6],
Ի Տոսկոլեան ափունս վըճիտ տալ զիս դուրս.
Եւ սրտահեշտ հոտով ծաղկանց կիտրոնի
Խաղաղէ գամ մի զցնորս եւ զկիրս հայրենի։
Սարք եւ բըլուրք, ափունք, երկինք եւ ալիք
Զուգադիմակ զինեւ փարին խաղաղիկ.
Այլ քո տես, քո տարփ, քո յուշ, քո լոկ անուն՝
Զոգիս բաղէ, ա՜յ Գեղամէ հայկաղուն,
Եւ յիսկութեանս այս սիրեմ զքեզ երազել,
Քեւ անունակ, զոր ունիմս արդ վայելել։

ԱՌ ՀԱՐԱՋԱՏՆ ԻՄ, ԾՈՎԱՀՎԵԼՈՎ ԱՄԵՐԻԿԱ

Սիրով Սերոբիդ սիրտըս ձայն առած,
Լուռ միայնության ճրագիկըն վառած՝
Գիշերե գիշեր անծանոթ ճամբա
Մինչև Ամերիկ քո հետ կթրթռա,
Որ թողած սրտիդ հատորն աղուական[1],
Հազար փարսախով կերթաս բացական։
Ո՜հ, ես բարեկա՞մ կոչեմ եթե ոչ
Այն բաղդն, որ կրկին իմ գրկես դողդոջ
Զքեզ հափշտակած Ադրիո խորշեն[2]
Կ՝ անցընեմ ցամքներն ու ծովերն ամեն,
Մինչև այն երկիրն, ուր իմս հակառակ
Աստղեր կու ծագեն, դառնան եղանակք։
Օվկիանոս, ծո՜վ դու մեծ և ահեղ,
Գիտե՞ս որ նման ծովհավին անտեղ
Որ զհոգն ուրացած՝ ի գիրկդ անկայուն

Երթա կու հավտա իր բունն երերուն,
Սրտիկս է ելեր ու ալիքներուդ մեջ
Անդունդն ու ամպերն ժամ ժամ ել և էջ՝
Անձկոտ կրակն վառ նրման փարոսին,
Որ հողմով ծեծված ի նավահանգըստին,
Քո մրբրկաց մեջեն զնավըն կու փնտրէ
Այսպես Սերոբիկըն քենե խնդրե։
Քո տարածության մեջ անբավ անհուն
Ցուր մեկ հատիկ կետն է նավն անձկալվույն...
Բայց ի՞նչ կտեսնամ, ծով, ինչո՞ւ ես մռայլ,
Ինչո՞ւ գույն կուտաս կառնուս այլ և այլ.
Ահեղ մրբրիկներ կելլեն չորք դիաց[3]
Եւ երերագին խեղճ բնության դիմաց
Սև գարշապարով պար բռնած կիջնան,
Իսկույն կու տիրե կատղածն ուրական[4].
Կոհակ կոհակե կվաղեն ի վեր,
Ճերմակ ու կանաչ փրփուրն ամպն հասեր.
Վո՞ւ վո՞ւ կմռնչեն գոչմունք հովերուն,
Թափ կու տա երկինք իր թուխ ամպերուն,
Կ՝ որոտան գոռմունք օդերուն վերև՝
Կարկտախառն ի վայր թափելով անձրև,
Եվ խառնափրնթոր տարերաց ծայրեն
Կու ցատկե կայծակն իր կրակոտ դարեն՝
Գինդ գինդ քաշելով զաղեղն ամպրոպին,
Շանթեր շողալով կարձրկե փրքին.
Ի թարթել մ՝ աչիդ զամպերըն պատռած
Ալեծուփ նավուն գըլուխն երկընցած...
Կեցի՛ր, չար կայծակ, կեցի՛ր, ո՞ւր կիջնաս,
Իմ Սերոբն է հոն, ամպեն կախ մընաս
Կամ թե ծովն ի ներս ըլլաս ցիրուցիր
Ուր շատ գանձ, շատ հույս, շատ լույս մարեցիր։
Գիտեմ, օվկիան, գիտեմ, որ հատակդ
Ունիս անկողին՝ որ մահն է վերմակ.
Վրհերդ ու փոսերդ ոսկրով են փրված,
Բայց իմ Սերոբիս քեզ տեղ չէ տրված.
Չէ՛, չէ՛, հավիտյան չիջնիր ի քո ծոց
Այն հույսըն պայծառ սրտիս ու Հայոց,

Որ գուերն առած ոգին անվեհեր
Բացավ առագաստ՝ հովու տվավ հրավեր,
Ղրկեց սրտին մասն յիս[5], մաս մ՝ իմ առավ
Մինչ ի Հերակլյանս մեկ ուժով թրռավ։
Ծով, նա զքեզ չափեց, դու զինքըն հերիք
Լրե՛ն արդ հովերդ, ամպերն ու ալիք,
Հասնի հանդարտիկ քո ափունքդ հեռու.
Նորեն ծուխ ու բոց լրծած նոր նավու
Հաղթված ալյացդ երևսեն սահուկ,
Ավարով դառնա իմ գիրկս երերուկ.
Զորացաջ կրծքով փրչե մեկ մի շունչ
Դրախտ թոռմած հոգվույս ծաղկի ոսկեփունջ։
Հիմ՝ ասեմ քեզիկ, Ատլանդյանդ անդունդ,
Ուսկից բյուր եղերք դողան սրտաթունդ,
Քո երկայն թևերդ մինչ հոս կհասնին,
Է՜հ, բերնե բերան թող ալիք խոսին.
Ահա ես կիջնամ ի եզր ի ծովիս
Սրտիս բոցն ի գլուխս, գլխիկս ի ալիս,
Տեսնում ի՞նչ լրրիկ ունիս Սերոբեն.
Սրտյոք ձանձրալի դաշտերուդ մեջեն
Միայն իր ուզած ողջությունն առած
Հասա՜վ ցանկալի հանգրստին նավաց.
Դիտե՞ց ի գլխո դրոշազարդ կայմին
Ու ցատկե՞ց նրման մեծ Կոլոմբոսին.
Զայն որ ուղարկեց ծերրն Վոսպորոն
Հանեցի՞ր ցամաք, ըսե՛ ինձ, Հույզոն.
Եվ դու, Կոնտոլա[6], պահեցի՞ր ամբողջ,
Հասուցի՞ր զավանդն անգին՝ քո տիրոջ.
Ելա՞վ, ա՜հ, ելա՞վ, նա, կոխե՞ց արդյոք
Ուր ազատություն կանգնեց ըզնորն Յորք[7].
Բարև սիրելվույս տրվի՞ք արդյոք հոն,
Քաղցր իմ Ֆրանկլին, քաջդ Վաշինկտոն։
Դու հայր Նոր Յորքա Ռունդ — Թուի բարձրագլուխ
Խաժամուժ աշվի ու ծնոտովրն թուխ
Տեսա՞ր զայն կտրիճն, որ թեպետ հնասեր,
Քու նորեկ ափանցդ ի տես էր ելեր։
Դուք քաղցրակարկաչ վրտակք Կանադայի,

Դուք հորդախաղաց առուք Լավրենտայի,
Լուսահայելի Էրեյան դուք լըճեր,
Խոխոջուն սահանք ի քարուտ լեռներ,
Ո՞վ հավերժական կես գիշեր մայրիք,
Որ գաս կարդցողին ու գրողին նմանիք,
Լըսե՞ց ձեր շըշուկն արդյոք Սերոբես,
Ա՜հ, ըսա՞վ սրտեն, հիշե՞ց զանոր կես.
Հետ Սերոբ անվան իմըս Ղևոնդյակ՝
Արտսունք աչքն ի վայր բերա՞վ փայլունակ.
Ա՜հ, գնտին երկու դիեն հեռավոր
Դեմ դեմ թնդացի՞ն երկու սիրտքն հրավոր։
Արդյոք հինավուրց գոգոյին[8] ներքև,
Ուր հովն օրորա ի ճղերն ու տերև,
Մտածմունքե մտածմունք, երազե երազ
Եղբայրդ ի քովիկդ հիմա կտեսնա՞ս
Արմավրա սոսյաց շըքովըն նստած,
Երդվեցընելով մեկտեղ զԱրագած.
Կամ Արտաշատու դրամներուն հին ժանգ
Սրբելով ճակտիդ ցողով քրտնազանգ[9],
Եվ մեջ այսպիսի մտածմանց ընկղմած
Ջիմացա՞ր շուքերն, որ բոլորդ առած,
Մինչև թանձրացավ խավար գիշերուն,
Մինչ զեփյուռ անցավ՝ թողլով զովություն.
Ու հանկարծ ծառեն խոշյունն որ հնչեց,
Երբ հավն արթընցավ ու քընեն ցատկեց,
Վեր տարիր զաչերդ. ձայնդ՝ «Ո՞ւր եմ պոռաց,
Գոգավոր երկինքն ի հետ յուր գոռաց.
Իրա՞վ Հայաստան, Ստամբո՞ւլ, Վենետի՞կ,
Թե քո անտառաց մե՞ջն եմ Ամերիկ»։
Դարձյալ կը լռես, ձայն կու գա մոտիկ...
Ո՜հ, ի՞նչ ըսեմ քեզ, ո՞վ ձայն անուշիկ.
Ո՞ր լեռնեն կիջնաս, ո՞ր կու գաս ծառեն,
Սոխա՞կն է քո տեր, թե՞ հրեշտակ վերեն.
Ողորմուկ գերիք սրտա՞նց կհառաչեն
Թե քույրն և եղբայր վիրար կը կանչեն...
Ահա ջրոց կանաչ եզերքեն բռնած,
Ահա սահանաց շառաչման խառնած

Կ՝ ընդմիջե խաղաղ լռությունն ու գիշեր
Կը հընչեցընե սարեր ու ձորեր,
Ու արձագանքե արձագանք անցած
Կ՝իջնի ան սրտին մեջրն տարածված
Որ զօվկիանոս կտրեց ծայրե ծայր,
Ադ մեկիկ ձայնեն կապվեցավ իսպառ.
Հազիվ կայծ մ՝ աչքեն թռչի դեպ լուսնակ,
Որ դեմրն կանգնած կը ժպտի մինակ.
Հազիվ կդառնա այն նոր աստղերուն,
Որ վրան կցողեն թևով շողշողուն։
Ո՜հ, գիշերն ի բուն, և չէ մեկ՝ այլ բյուր
Կուզես դու թաղվիլ մեջ զմայլմանց մաքուր,
Թե ոչ նախանձոտ դիմացեն արև
Այդ անգին ժամերդ ընե կարճատև...
Բայց ո՞ւր եմ ես, ի՞նչ կխոսիմ... ափսո՜ս,
Որ գիշեր անաստղ զիս կպատե հոս,
Ու բոնի զփետուրս ափես կու խլե,
Թմրության փոշով բոցրս կըմարե.
Ժամ է, որ երթամ գըլուխս բարձն ի վար
Խաչակընքելով ինձ ու քեզ համար,
Հիշատակդ ի սիրտս հոն կանչեմ զաստված,
Տեսնեմ ի՞նչ երազ կա ինձ պատրաստած...

ԱՌ ՆՈՒՅՆ

Երբ երկուց եղբարց հարազատ սրտեր
Հարազատք ասեմ ի արյուն, միտք ու սեր
Յուրյանց միայնիկ ախորժ ժամերով
Դիմացե դիմաց կու կանգնին մտքով,
Ահագնատեսիլ ընդ ծովուն վերև
Սիրտ-հոգի-բերան տալով բյուր բարե,
Իբր հորիզոնի երկու ծայրերեն
Միածանանման վերացյալ մեկեն
Զանհուն օվկիանըն կամարաձև
Կըտրելով՝ փարիլ ազատ թև ի թև
Ժամիկ մը մոռցած դայնքան մթղոններ,

Որ մարմնովս, ավա՜ղ, խտրոց[1] են անկեր,
Երկնից ու ծովուն առագաստին մեջ
Լոկ զիրար տեսնան նոր աչքով անշեջ
Մինչուկ որ հովիկ շարժե զտարր օդուն
Կոտրի գեղեցիկ աղեղն յոթնագույն
Փայլուն պատառներն ամպերն ի վար գան,
Ծածկին մեկն ի այս եզերք մեկն ի այն
Այն երկու սրտիցըն մեջ ի՞նչ պիտի
Որ պինդ կա աղեղն ու գույնն ալ պրնդի։
Երբ կրակե ճակատ կերոններու պես
Խորանին երկու դիաց[2] բոցագէս
Դեմ դեմ խոնարհած իրար կու ծրոին
Ու չիհասնելով մեկմեկու ճակտին՝
Ծոցերնին ճրդքած հրածորան արտսունք
Սեղանին վրա կաթկըթեն փայլունք,
Մինչև ճապաղած ձյունափայլ ու պաղ
Արձանացյալ մնան կըրից պես խաղաղ,
Այն երկու սրտիցըն մեջ ի՞նչ պիտի
Որ մաքուր բոցով ճակտընին մոտի։
Երբ դեմ դեմ սրտի սափորներըն բաց
Դողդոջուն շարժով[3] դեպ իրար ուղղած,
Պահ մի բացխըփիկ ղրսպեն ղկրակըն ջուր
Պահ մ՝ արձակ թողուն գետեր սիրահուր,
Որ վազեն ղեռան ու իրար մոտիկ
Հանկարծ արգելվին անարգելն ալիք,
Այն երկու սրտիցըն մեջ ի՞նչ պիտի,
Որ ջուր սափորնուն իրար խառնըվի։
Ի՞նչ կա գեղեցիկ ներքև արևուն
Քանց ջուխտակ մի սիրտ, որոց նույն արուն,
Նույն փափագ ու միտք թեպետ հեռըվանց
Ի նույն օվկիան կու թափին անանց.
Այլ ի՞նչ պատվական ունիս դու աշխարհ,
Որ այս մեկիկ ջուխտըս կըշռե հավասար։
Քո և իմ սըրտին, սիրուն Ալիշան[4],
Այլ ի՞նչ պիտենա լինել բարենշան։
Ա՜հ, մեկիկ մի դեռ, մեկիկ պիտի այլ,
Քո և իմ Հաստչին անմահ սիրտն հրափայլ։

Նա ինք լինի կապ թե մոտինք իրար,
Նա ինքն անջրպետ թե մընանք օտար։
Աշխարհքիս եզերքն հանց է ասպարեզ,
Որ սերբն չափե շուտ ի թև ու կես.
Զոլորտածավալ երկընուց խորան
Եվ կանհետացոտրն աչաց ովկիան
Ի մի օր չափե արևակին գունտ,
Զանհոպ[5] արևելքն ածե ի արևմուտ
Ո՜հ, թե մեր սրտից աստվածն է արև՝
Ինքն է այցելու և սրտից մեր թև։
Ատլանտյան նրստած դու եկր ի ծովին
Պանդուխտ, կիսակամ հայիս ընդ երկին,
Ես ադրիականս աղտաղտուկ[6] ճահիճ
Ի նույն վեր տանեմ դաշերս ցողալիճ.
Մեկ արևն երկուս է կետ հայվածո
Այսպես երկոցունս հրատ՝ սիրտն աստուծո
Ե՛կ արդ իմ ազնիվ գայն սիրտն ի մեր մեջ
Սեղան ու վրկա կանգնած՝ սերն ի շեղջ,
Երկուց եզերաց տարակաց ծովուց
Դու ի երեկոյան աղոթս, ես՝ առտուց,
Մեկ ձեռն ի ճակտի, մեկ ձեռն ի կրծի,
Սրտերնես այսպիս՝ իմն աղոթք թոչի.
«Ով ամենակալ, ում խելք չհասնի
Ոչ հողույն հանճար, ոչ միտք հրեղինի,
Այլ միայն սրտից հաստվածք սիրաթև
Ջիրենց չափն ի վեր բաբախեն ըկթև.
Նայե՛ այս սրտիցս, որ տեղոք հեռու
Զուգակիր ջանքով մոտ են իրարու.
Մեկիկ քո անմահ ձեռդ է անջրպետ
Այնոր ալ դրրած ճականիս[7] երկնաղետ՝
Մատներուդ մեջեն քընեելով զիրար
Սիրտ առ սիրտ կու տանք, կ՝առնունք լուր հավսար.
Մեկրն խոսքով, մեկրն լուռ կ՝ իմանանք,
Մեկին չենք գտներ հարմար դեպք ու բանք.
Ըզմեկն այս ծովուս կոհակաց նրման
Կու թավլեցրնենք ծածուկ ինքն ինքյան։
Դու, որ նախ քան շունչ ըզձայնրն լրսես,

Բոցրն չարձրկած ըվծուխրն տեսնես,
Լրսե՛ ինչ սրտիցս, ո՞վ տեր, կա մրմունջ,
Հասո՛ւ մեկմեկու նախ քեզ ուղղաշունչ,
Ինչ անդ խառնաձայն կամ քեզ անարժան՝
Թափե, թոթափե, սրբե զայն ամեն.
Ա՛ռ զայս քո տաշած հարազատ սրտիկք
Սիրույդ ի բուրվառ զուգագեղեցիկ
Ծուխրն ծառանա դեպ քեզ բարդուբարդ,
Քան դարշալուսուն ամպեր ցողավարդ.
Կայծկունք, թե ներես՝ թռչին մինչ ի հայս,
Զոր ամեն երկրե նախ ըրիր քեզ կայս.
Չի՛ շեղիր այն նավ, որ խնդրե[8] զբևեռ,
Ուր և գնան՝ քենե չվատին մեր սրտեր։
Իսկ թե չըկամիս բոցերնուս ծավալ,
Թե զՀայաստանյոք չըկա մեզ շուրջ գալ,
Թող սլացիկ ծուխերս չըդադրին ի սպառ
Ցորչափ կյանքս և սեր փարին աստ իրար.
Թե ոչ երկրավոր թողունք հայրենյաց,
Արձան մեր քրտանց, հավերժականաց,
Գոնե թողունք աստ խարըսխնիս կանգուն
Ըզհարազատացս հոն դրոշմած անուն.
Երբ հետին ծրխով մաշած սրտերնես
Թռչին զույգ աստղունք երկավորաց պես,
Եվ անմահ սիրույդ աղբյուրն, ո՞վ աստված,
Զարնեն ըզճաճանչ անվախճան կենաց,
Հոն խրվին, թաղվին, կորսվին թե կուզես,
Միայն չրթողուն զիրար և ըզքեզ»։

ԱՆՈԹԻ ՈՐՍՈՐԴ

Միջոբեի բարձր ու պայծառ կամարեն
Կայծակ թափվեր զինչ ի դարբնի բարկ փրոեն.
Զորա գին այրած, դեղնած էր լայն անապատ,
Տաք-տաք շոգի ելներ հավզեն[1] անընդհատ
Մեջ տեղն անտառ էր թանձրախիտ և ծառուտ
Ինչ փունջ մի մազ ի ճակատ կունտ[2] ու կաշուտ։

Ժամ հանգրստի էր բընության ու անտառին,
Դադրեր էր հով ջրերին, դադրեր հով ծառին.
Ի զով շրջին քրներ ամեն կենդանի,
Բայց անոթի կուշտրն միայն քուն չունի...

Անտառին ծայրեն ժաժելով կու գար
Մեկ երիտասարդ մ՝ հոգնած ու մոլար,
Երեսով կարմիր, ճակատով դեղին,
Մազեր թուխ ու թավ, մորուք սևագին.
Մատներրն մազոտ, երկայն ու խաղուկ,
Աչքրն՝ կես մարած կրրակի խարուկ.
Այտերրն թոռմած զետ[3] կաշի նրոան,
Ծընոտրն կախված, կիսաբաց բերան։
Խուրձ մը նետերու ի շալակն ուներ,
Ձեռաց գավազան լարթափ աղեղն էր.
Որսորդ էր կըտրիճ, այլ ուժե ընկած,
Զորն ի բուն որսիկ զարնել չէր կըրցած.
Տաքն ու հոգնություն և անոթություն
Սիրտրն քաղեին[4] և ույժ ծընկներուն.
Հասավ զինչ հարբած բևեկնույն ներքև,
Մարմրրած աչոք նայեցավ ի արև.
Զրգեց ըզկապարճն ուսեն ի գետին,
Փրովեցավ ընկավ նրման յուր նետին,
Զրգեց, անիծեց զաղեղն անպիտան,
«Քընանամ» ըսավ, կու սպասեր մահվան.
Անշարժ ու դեղնած դեմքին վերևեն
Կանցներ տրտմություն՝ ինչ շուք տերևեն...
Օրհասրակն[5] անցեր, ետինքն[6] էր մոտեր,
Դայրած տարերքն հանկարծ արթընցեր,
Հովն անապատեն հասեր էր անտառ,
Տերևե տերև շարժ ու դող կերթար.
Ի ծառոց ծայրեն փրչեց շունչ զովիկ,
Երիտասարդին դրպավ պաղ հովիկ.
Բացավ նրվաղած աչերն ու թրմրած...
Տեսավ իր նրման մեկ մ՝ հոն մոտ կեցած.
Նրման կերպարանք և նրման հասակ
Բայց փափուկ մարմնով գունովքն ճերմակ.

Մազերքն խարտեշ, լուսերքն կապույտ,
Բոլորն հեզության անուշ երևույթ։
Ձեռքն ի կախ ուներ փայտեղեն պընակ,
Թևին տակ տաքուկ լավաշ ըսպիտակ,
Երիտասարդին շարժելն որ տեսավ,
Կանչեց անուշիկ. «Եղբա՜յր իմ Եսավ»։
Եսավ մարմըրած աչերքն շարժեց,
«Վա՜յ եղբայրս Հակոբ»... կես շընչով կանչեց։
Ձեռք տըվավ, Հակոբ, կըոթնեցավ ծառին,
Պընակըն տեսավ, գույն եկավ դեմքին.
«Բեր տեսնում,— ըսավ,— եղբայր, ի՞նչ ունիս,
Թե զաստված սիրես՝ ապրեցու գերիս.
Զորն ի բուն դարտակ ժուռ եմ ելեր[7] հոս,
Քաղվեր[8] է հոգիս, ու չեմ գրտած որս»։
Եսավ նըստած կու նայեր,
Աչերն աղբյուր վազցըներ
Լացավ Հակոբն ալ սիրուն,
Բայց ձայն մ՝ առավ իր հոգուն։
«Հաց ունիմ տաք և ոսպնաթան,
Ինձ ու հովվիս բավական,
Ձիս ու գհովիվըս զըրկե՞մ,
Հացիկ-թանիկ քե՞զ ձըգեմ։
— Հացիկ-թանիկդ այս անգամ
Տուր ինձ, ինչ կամքդ՝ ես քեզ տամ։
— Հացիկ-թանիկ քեզ ըլլա,
Կեր ու քո սիրտն ուժովնա,
Բայց փոխարեն այս ավուր
Անդրանկությունդ ինձի տուր։
— Ո՜հ, ես մեռնիմ ու կերթամ,
Կարճ են օրերըս, կարճ ժամ.
Անդրանկությունս ի՞նչ պիտի,
Եղբա՜յր, ահա քեզ տըվի»։

Թոթվեց Հակոբ դաշն Եսավա
«Հացիկ-թանիկ թող քեզ ըլլա,
Կե՜ր,— ըսավ,— կե՜ր և ուժովցիր
Եվ անդրանիկ դիս քեզ ճանչցիր»։

Գըրկեց զեղբայրն ու պագ տրվավ,
Հացիկ-Յանիկ թողուց թրռավ։
Ցսավ հոգնած, քաղցած բացավ լայն բերան,
Կերավ լափեց և ուժն եկավ ի վերան։
Ելավ ցատքեց, բայց բան պակսեր ի սրտեն
Անդրանկության շընորհքն ելե՞ր էր իրմեն։
Կուշտն որ լըցվավ, աչքն բացվավ, իմացավ,
Բայց ի՞նչ օգուտ, խոստմունքն իր դեմ կանգնեցավ.
Խոլոռցուց աչքն ու դարձուց հետ Հակոբա,
Ոչ Հակոբ, ոչ անդրանկություն կը դառնա.
«Այսպես, խաբո՞ղ եղբայր,— կանչեց հուսահատ,—
Անդրանկությունս առիր, տալով ոսպի մ՝ հատ»...
Կոտրեց պընակն, զարկավ կապարճն ի շալկին,
Քաշեց զաղեղն, ու ծածկեցավ ի անտառին։

Ո՛վ դու պարծող աղեղ խելաց[9], լեզվիդ նետ[10],
Որ թափառիս գիշեր-ցորեկ որսոց հետ,
Անտառ մացառ շարժես՝ անգութ թափ տալով,
Անցած տեղերդ ավեր դառնան սոսկալով.
Փախչին որսերդ ի քեն ի ձոր՝ և ի սար...
Բայց այն սուր-սուր նետերն որ տաս վեր ու վար՝
Քանի՞ քանի՞ անմեղաց ո՞հ, զեան[11] բերեն,
Քանի՞ որբեր կընեն, քանի՞ բույն կավրեն.
Քանի՞ անձագ մայրեր ճվալով կը թռչին,
Լրսե աստված, ցըրվե նետերդ մեջ օդին։
Հրպարտ արվեստդ ըզքեզ թողու անոթի,
Անդրանկությունդ առնու եղբայրդ հեզհոգի.
Դու դեռ բերանդ ի հով[12], աղեղըդ լարած
Անտառ մացառ շարժես կերթա՞ս թափառած։
Դարձի՛ր, դարձի՛ր որսորդ, աղեղըդ թող տուր,
Գրնա գառնուկ հովվե ի դաշտ ու ի բըլուր.
Խոտն է դալար, առվակն է ղով, օդ պայծառ,
Որսո՛րդ, եկուր ի դաշտ, թո՛ղ զայդ սև անտառ.
Հոս շըքիկ կա, հոս ծործորիկ[13], հոս լերինք,
Թող տուր հա՛յ հո՛ւյ ձայներն, եկ ա՛ռ, հընչե՛ սրինգ։

Գառներն են հեզ, ուլերն հրլու, շունք ըզգաստ,
Հովի՛վ եղեր, ամեն բան հոս քեզ պատրաստ։
Որսո՞րդ, դարձի՛ր անտառեդ, նետրդ Քո՛ զ տուր,
Ա՛ռ ցուպ հովվի ու հին ցավերըն մոռցուր։
Երկինք միշտ հաշտ են, միշտ արևն է պայծառ,
Ա՜հ, սիրտք մարդկան, ինչո՞ւ դուք այդչափ համառ...

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՎ ՈՒՐԻՇ ԱՎԱՆԴՆԵՐՈՒ ՎՐԱ

Ճշմարիտ ազգասիրի մը առջև շատ հարգի բաներ են նաև այն ավանդները, որ, բերնե բերան անցնելով, ինչվան իր օրերը հասած են։ Վասն զի ազգի մը պատմությունը, բնավորությունները, սովորությունները, լեզուն ու լեզվին զանազան փոփոխությունները ոչ միայն գրավոր պատմություններե կիմացվին, հապա նաև ան գրավոր հիշատակարաններեն առաջ՝ անգիր ավանդություններով կհաստատվին։ Անոր համար է, որ ամենայն ազգաց հին ու նոր պատմիչները մասնավոր ջանքով ետևե ելած են հավաքելու ազգային պատմությունները, երգերն ու առակները։ Մեր Խորենացին ալ շատ եռանդուն ջանքով և իմաստուն ընտրությամբ իր պատմությանը մեջ իբրև անգին գանձ հավաքեր ու պահեր է մեզի մեկ քանի հին երգեր ու ավանդություններ, որոնց վսեմ գեղեցկությանը վրա ոչ միայն մենք, այլև օտարները կզմայլին ու կը զարմանան։ Իրավ է, որ շատ անգամ այսպիսի երգերուն ու ավանդություններուն մեջ ճշմարտությունը առասպելներով զարդարած կըլլա, բայց Խորենացիին պես լուսավոր միտք ունեցողը անոր չնայիր, հապա ան առասպելը շինողին վախճանը կհասկնա և անով գոհ կըլլա։ Թող լեզվին աղվորությունը, բանաստեղծական բացատրությունը և ընդհանրապես ազգային հոգի ըսվածը, որն այդպիսի ավանդությանց մեջ խիստ պայծառ կտեսնվի։ Ազգասեր մարդը այնչափ համ կառնե աս ավանդություններեն, որ ոչ միայն հայրենի ժառանգության պես սիրով կընդունի ու կպահե, հապա նաև անոնց

պակութիւններուն աչք կգոցե՝ և ան ոճերը կամ բառերն, որ ականջին խորթ կրնային երևնալ, իրենց բնական ու հարազատ աղվորութիւնմբը ավելի հաճո կըլլան իրեն։ Որչափ որ աս խոսքս ճշմարիտ է, նույնչափ ալ փափագելի բան է, որ մեր ազգայինք ալ ուրիշ բարեկիրթ ազգաց պես վառվեին ազգային ավանդութեանց սիրովը ու ձեռքերնեն եկածին չափ ջանային հավաքել այնպիսի երգեր, անմեղ խաղեր, պատմութիւններ ու առակներ, ետքը ուրիշներուն ալ հաղորդեին, կամ առանձին տպագրութիւնմբ և կամ ազգային օրագիրներեն մեկուն խրկելով։ Մենք աս մեր փափագը ուրիշ ազգասիրի մը բերնեն ալ լսելով և գործադրութեանն ալ օրինակը ուրիշներեն առաջ տալ ուզելով, ահա կդնենք հոս մեկ ազգային երգ մը, որ Վանա ծովուն մեջ խղդված կտրճի մը բերնեն շինված է ան կողմերուն մաքուր լեզվովը։ Այնչափ է աս երգին պարզ և գեղեցիկ բանաստեղծութիւնը, և ազգու ու վառվռուն ոճը, որ կարդալու ատենդ կարծես թե աշխարհարար ըլլալը մոռցընել կուտա քեզի. հայտնի նշան է, որ մտքիդ հետ կխոսի ու սիրտդ կթափանցե։*

Նավով Աղթամարա ելանք,
Տեխ Ավանուց ճանապարհ ինկանք.
Ուստանա դեմ երբ մենք հասանք,
Սև ավուր սև արև տեսանք։
Փուխ ամպեր երկինք պատեցին,
Աստղ լուսնակ մեկտեղ կորսուցին,
Գինդ-գինդ քամիներ փըչեցին,
Ափ ցամաք աչքես խըլեցին։
Գոռաց երկինք, գոռաց գետին,
Խռովեցան ջուր կապուտ ծովին.
Հորս տեխեն կըրկտաց երկին,
Սև սարսափ իջավ իմ սըրտին։
Երկինք կա՝ գետին չերևա,
Գետին կա՝ երկինք չերևա,
Սարի պես ղընդղըներ կուգա,
Խոր անդունդ առջևս կըբանա։
Ծով, դու քոն աստված կըսիրես,
Խեղճ անճարիս գութ մի անես։
Ձիկ քաղցր արևես չըհանես,
Քարեսիրտ մարին չըմատնես։

* «Արշալույս արարատյան», № 151։

Ամա՜ն ծովեր, աՀե՜ղ ծովեր,
Ձիկ մի՛ տանեք պաղի Հովեր.
Ձեզ կաղաչեն իմ արտասուքներ
Եվ սրտիս Հազար բլուր ցավեր։
Ծով գազան ըսկի ողորմ չունի,
Պըլած սրտիկս ձեՀիկ չըսի.
Արուն երակներս կը պաղի,
Սև գիշեր աչքերըս կիջնի։
Գնացեք ասեք իմ ծընողին,
Թող ընստի լա իր սև որդին
Թե Հանես կուր եղավ ծովին,
Թըռավ գնաց արև կըտըրճին[2]։

Առաջին տան մեջ պատմական նախերգանքը շատ գեղեցիկ վերջացած է ետքի տողովը թե՝ «Սև ավուր սև արև տեսանք»։ «Տեխ» բառը «դեՀն» է, այսինքն՝ դի, կողմ, դեպի։ Երկրորդ ու երրորդ տներուն գեղեցկությունը ավելի կերևնա սուղ ու կենդանի ստորագրությանը մեջ, որով կարծես թե ալեկոծությունը աչքովդ կտեսնես, ու քո սրտիդ ալ կիջնա ան «սև սարսափը»։ Չորրորդ տան առջի երկու տողերը որչափ պարզ են, նույնչափ ալ ճշմարիտ ու բնական բանաստեղծություն. ան փոփոխ սարսափը, որ մեյմը՝ վեր նետվելու, մեյմըն ալ վար ընկղմելու ատեն կըզգա խեղճ նավակոծողը, ասկե ավելի կենդանի ստորագրություն չէր կրնար ունենալ։ «Դնդրղներ» ալիքներն են, «սար»՝ լեռ, «ձիկ»՝ զիս։

Ո՜րչափ գեղեցիկ ու բնական է ան աղաչանքն, որ հինգերորդ ու վեցերորդ տներուն մեջ կընե դժբաղդը ծովին, իբր թե խոսք հասկըցող զորավոր մարդու մը ձեռք ընկած ըլլար։ Բայց տեսնելով որ անիկա մտիկ չըներ, անողորմ գազանի կնմանեցնե ծովը և վերջին հուսահատությունը կհայտնե։ Սքանչելի է վերջին տան զգացմունքը և սրտաշարժ սերը, որով բոլոր աշխարհը մոռցածի պես՝ միայն իր ծնողքը կհրավիրե ողբալու ան կյանքին վրա, որ անիկա տվեր է իրեն, ու ծովը անխնա կատաղությամբ ուտելու վրա է։ «Թըռավ գնաց,— կըսե,— արև կըտըրճին», ու կարդացողին միտքն ալ հետը կը թռչի։ Ինչպես ամառ իրիկուն պայծառ արևը մտնելու ատեն միակերպ նայելով կարծես թե կամաց կամաց ծովը կընկղմի, սիրտդ անուշ տխրություն մը կիջնա և աչքդդ ակամա կդարձնես ան վսեմ տեսարանեն։

Ահա այսպիսի բանաստեղծություններն են, որ ազգին անարատ ու սկզբնական հանճարը կհասկցնեն մեզի։ Անարվեստ է

ոտանավորը, բայց կարծես թե անոր համար ալ ավելի բնական է։ Վասն զի բնության ամեն գեղեցկություններն ալ թեպետ համեմատ են ու սիրուն, բայց մեր հաշիվներուն ու չափերուն տակը ամենը չեն իյնար, անոր համար ավելի կզմայլեցընեն զմեզ։

Ռամկական երգը ազգային ոգվույն մեկ ձայնն է, որ շատ հեղ ուրիշ կողմանե մեռած կամ մարած ատենն ալ՝ դեռ այսպիսի երգոց մեջ կենդանի կմնա։ Անոր համար ազգային երգ ալ կըսվի։ Թե որ աս երկու անվանս մեջ տարբերություն կա, աս է, որ ազգային երգը կրնա վսեմ ոճով ու լեզվով ալ գրվիլ, իսկ ռամկականը գրեթե միշտ պարզ և ռամիկ լեզվով կգրվի։ Այսպիսի երգերը շատ անգամ ավելի լավ կիմացընեն ազգին հանճարը, քան թե ծանր գրվածքներ և կը գտնվին անոնց մեջ անանկ սքանչելի զուրցուածք, որ միայն իրենց ռամկական անունին համար հասարակ բան մը կը կարծվին, բայց ճշմարիտը՝ գերագույն գրվածոց կարգը անցնելու են։ Աս գերազանցության մեծ և հայտնի պատճառը աս է, որ ասանկ երգեր կամ զուրցուածներ ի սրտե առաջ եկած են և սիրտը միշտ վարպետ է։ Իրեն վարպետությունը հոս կերևա, որ չէ թե միայն գեղեցիկ և հզոր իմաստներ կընծայե, այլ նաև շատ հեղ ան իմաստներու հարմար ընտիր շարադրություն մը կուտա, և տգետը անանկ լավ քերական կընե, որ իմաստունը կապշի։

Ամեն ազգի մեջ ալ պակաս չեն այսպիսի երգեր. մեր մեջ ալ թերևս կարծածներես ավելի, որոնցմե մեկին վրայոք արդեն խոսեցանք։ Եվ ուշիմ ընթերցողը թե որ մտքով ու սրտով կարդաց, կարծեմ չվախնար ան երգը, որ Վանա ծովակին եզերքը կարապի մը պես երգեց մտերիմը իր մտերմին վրա, մեր Նարեկացվույն և Շնորհալվույն ընտիր տաղերուն կարգը ճանչնալ։ Դենենք հոս ուրիշ մըն ալ, որուն նյութը թեպետ առաջինեն շատ թեթև է, բայց լեզուն ավելի մաքուր և բառերուն ընտրությունը սքանչելի որ կը ցուցընե, թե գրողը սակավագյուտ ընտրողություն մը ունի եղեր, և այս ընտրությունս ոչ միայն բառերուն, այլ և իմաստներուն մեջ ալ կերևնա։ Կը ստեղծե բանաստեղծը կաքավ մը, որ Հայաստանի ընտիր թռչուններեն մեկն է, աս կաքավին բերնեն իր տխուր բաղդը և վիճակը կարծես թե մարգարեաբար կը նկարագրե, կամ թե տեսնելով, որ ուրիշները անտարբեր են իր խեղճությանը, իրեն վրա լացող մը չկա, ինքը իր գերեզմանին վրա նստած կուլա և իր ընկերներուն ալ լաց կը շարժե։

Նըստեալ կայր ու լայր կաքավուկն
Ի վերա բարին, ա՜յ հավեր,
Ու գանկատ կաներ ձագերուն
Թըռչունք, ա՜յ հավեր։
Ի բարձըր լերունք ելա,
Ի բարձըր լերունք ելա,
Ի կանաչ մարգեր նայեցա. ա՜յ հավեր։
Եկին զիս ի վեր առին,
Եկին զիս ի վեր առին
Ահաբեկ սարըն ցըցուցին. ա՜յ հավեր։
Այս իմ կարկըջուն վըզիկս, (կրկնե)
Ականջե ականջ զեներցին. ա՜յ հավեր։
Այս իմ կարմըրուկ արյունս (կրկնե)
Ի գետին ի վար վաթեցին. ա՜յ հավեր։
Այս իմ կարմըրած կըտնուցս (կրկնե)
Կրակին կածըն հասուցին. ա՜յ հավեր։
Այս իմ մանտրուքայլ ոտկունքս (կրկնե)
Ի ծնկացս ի վար կըտրեցին. ա՜յ հավեր[3]։

Գեղեցիկ կերպ մըն է բանաստեղծին սկսվածքը՝ «Նըստեալ կայր ու լայր»։ Գեղեցիկ է նաև կաքվուկին շարունակած ողբը. «ան բարձըր լերունքը և կանաչ մարգերը» պարզ և ընտիր մակդիրներով վսեմություն և փափկություն մը կուտան զուրցվածքին։ Բոլոր երգին մեջ ալ աս փափկությունը և ընտիր բառերը պահված, մեյմեկ բառով մեծ գեղեցկություն կուտան. ինչպես ան «Ահաբեկ սարը», ան «կարկըջուն վըզիկը» որուն ձայնը կարծես թե իր հետին շունչը քեղի ալ կը լսեցնե, և սպանման բացատրությունը, որ «ականջե ականջ զեներցին»։ Թողունք ան «Կարմըրուկ արյունը» և «Կարմըրած կըտնուցը». բայց ան «մանտրուքայլ ոտկունքը» որ «Ի ծնկացըն ի վար կըտրեցին» ան մանտրուքայլ ոտկունքը Անակրեոնի ու Կատուղղոսի փափուկ բառերուն հետ չփոխվիր։ Շատ բնական և գեղեցիկ կերպով կը զրուցե գունդգուն փետուրներով ողորմելի վիճակն ալ և սրտաշարժ բարև մը կուտա իր անցած գնացած վայելչությանը։ Ծտևի նմանությունները թեպետ սրբազան բաներե առած՝ կաքավե մը հեռու են, բայց բռնազբոսած նմանություններ չեն, այլ նաև համեմատ են։ Այսպես ալ գոց կերպով մը ուտվելը կը բացատրե լավաշով պատանվելով և կարմիր գինով թաղվելով։

Կհամարձակիմ ըսելու, թե աս երգս անոնցմե մեկն է, որոնց վրա չկրնար մեկը բան մը ավելցընել կամ պակսեցընել և կրնա

գեղեցիկ օրինակ մը ըլլալ նաև օտար ազգաց, միայն թե հայերենին քաղցրությունը կարելի ըլլա պահվիլ, որ անկարելի է։ Եվ կարծեմ, ավելի վսեմ հայկական լեզվով ալ գրված ըլլար նե՝ նույն աղվորությունը չէր ունենար։ Ասոր համար նորեն կհայտնենք փափագնիս ուսումնասեր և ազգասեր ընթերցողաց, որ այսպիսի ազգային երգերը, որ Հայաստանի այլևայլ գավառներու մեջ կերգեցվին, ժողովեն։ Վասն զի անոնցմե կրնան շատ մարգարիտներ ելլել և թերևս ատենով հայոց գրականության տաճարին մեջը պատվավոր տեղ մը ունենալ։

Ամեն առավոտ և լույս
Գաբրիելն ասեր Ոգույս՝
Արի՛ եկ, ել այս այգույս,
Այս իմ նորատունկ այգույս։
Ինձ չէ պարտ ելնել այգույս,
Գեմ չար փուշ կա պատերուս
Ձեմ կարեր ելնել այգույս,
Այս իմ գեղեցիկ այգույս։
Ուռ եմ տնկեր այս այգույս,
Ջտակն եմ ջրեր այս տնկույս,
Դեռ չեմ կերեր ի պտղույս,
Կասեն՝ արի ել այս այգույս։
Հնձան եմ շիներ այգույս,
Կարաս եմ թաղեր գինույս
Դեռ չեմ խըմեր ի գինույս
Կասեն՝ արի ել այս այգույս։
Վարդ եմ տնկեր այս այգույս,
Կարմիր ու սպիտակ վարդույս
Դեռ չեմ ոստ առեր վարդույս
Կասեն՝ արի ել այս այգույս։
Առին զՈոգիս ի մարմնույս,
Ժամ է որ ելնեմ այգույս,
Այս իմ գեղեցիկ այգույս։
Ուռն է կանաչ այս այգույս,
Որթըն բացվալ է այգույս,
Այս իմ նորաշեն տընկույս,
Պուլպուլըն կանչե այգույս,
Ցողն իջանե ի ամպույս
Ամեն առավոտ և լույս։

Այս երգս զուրցողը կերևնա նորահաս անձ մը, որ կենացը գեղեցիկ օրերուն մեջ երկայն բարակ ցավով դեպի մահը մոտե-

ցած է։ Մահվան մութը արդեն չորս դին բռներ է, սակայն իր մանկական հասակովը դեռ կը մխիթարվի, ու ան մթան մեջ իր նորահաս հույսերուն կոտրտած ճառագայթները տեսնելով, կզվարճանա ու չուզեր մարմնեն բաժնվիլ։ Հայտնի է, որ ցավն ու մահը առջի բերան իրեն ծանր երևցած են, բայց հիվանդության երկայնութենեն՝ տրտմության ուժը կոտրած ըլլալով, մաղձոտությունմը եկեր է սրտին։ Ասով, ան խղճալի վիճակին մեջ ալ հանդարտություն մը կզգա։ Երբեմն-երբեմն բոլորովին ալ կմոռնա ցավը, մանավանդ երբոր հանդարտ գիշեր մը վրայեն անցած ըլլա, որ առտուն արթնցած ատենը կարծե թե գիշերվան ցողին հետ հիվանդությունն ալ թողած պիտի ելլե։ Բայց հանկարծ նորեն կիմանա ցավին շոշորդը, կիմանա, որ խաբված է, մահը չդադրիր դուռը զարնելեն, բայց իր փափուկ սիրտը ան խիստ ձայնն ալ հրեշտակի մը հրավերքի պես կը լսե, ու կսկսի ինքն իրեն գալ ու ըսել. «Ամեն տռավոտ» և այլն։

Առավոտե առավոտ Եղեկիային պես իր մահվան վճիռը կը լսե ու անուշ գանգատ կընե։ Շատ աղեկ կնմանցնե իր հասակը այգվո մը, պարտիզի մը։ Տարիքին ուժը, առողջության երևույթը, դեղերը, ցանկալի հույսերը չորս դին իբրև քարով, փշով, պատով ամրացուցած կերևան, անոր համար կըսե. «Ինձ չէ պարտ ելնել այգույս»։ Իր մանկությունը իր դիմացն է ծաղկած ուռի մը, լեցուն կարասի մը, վարդի ու ծաղկի նման։ Ինչպե՞ս ելլե երթա՝ առանց անոնց պտղեն, գինիեն ու հոտեն վայելելու։

Սակայն մահվան հրավերքը չդադրիր։ Իրավ գեղեցիկ է, կըսե այգիդ, հույսդ շատ է, անցուցած օրերդ երկայն չեն, սակայն քեզի համար վճիռ տրված է. «Արի եկ, ել այս այգույս...»։ Ալ աս կըրկնած ձայնին դեմ կենալ չըլլար։ Խե՜ղճ պատանի. ճարն ու հույսը կհատնի. ահա ան ձայնը, որ առաջ հեռվեն արձագանքի պես կուգար, հիմա բոլոր անձը կթնդացնե։ Ահա Գաբրիել կմոտենա... Անհույս սրտին լեզուն մունջ է, աչքերը լույս չեն տեսներ, արևը կիջնա։ Ա՜հ, կըսե իր ներքին ձայնը, ալ պետք է որ ելլեմ երթամ, թողում իմ գեղեցիկ, իմ նորատունկ, իմ անուշահոտ այգիս։ Ալ ժամս հասեր է, ահա «Առին զհոգիս ի մարմնույս, ժամ է, որ ելնեմ այգույս»։

Կարդացողը կվկայե աս երգին սրտաշարժությանը։ Իմաստին համեմատ զուրցվածքն ալ անուշ է, խայթ չունի, շարադրությունը չհասնիր կաքվուկի երգին, նույնպես շենքն ալ անոր չկըրնար հա-

մեմատիլ։ Ջորրորդին ինչվան յոթներորդ տները նույն մեկ խմաստին կրկնությունն են, որոնց տեղը թե որ մեկ կամ երկու տուն միայն ըլլար, ավելի կտրուկ կըլլար։ Վերջընթեր տունը առաջիններուն հետ այնպես կրնա կապակցիլ, թե ահա այս զվարթ հասակիս մեջ կելլեմ կերթամ աշխարհքես, որ տեսնողները մեռնելես վերջն ալ վրաս պիտի խղճան։ Իսկ վերջին տունը կերևնա թե ետքեն ավելցուցած է, և ավելի այգիեն ելլելեն վերջի վիճակը կցուցընե, անմահության այգվույն սոխակն ու ցողը վայելելով։

Ինչպես քաշվածքը կամ պատկերը կենդանություն կուտա պատմության, այնպես ալ երգը. վասն զի երկուքն ալ բանաստեղծություն են։ Եվ ազգային պատմության աս կերպով կենդանություն տվող պատկերներն ու երգերը որչափ որ հին ըլլան, այնչափ ալ ավելի ախորժելի կըլլան ազգասիրաց։ Ահա աս գիտնալով մենք ալ, օրագրիս մեջ փափագ ցցուցեր էինք ազգային ռամկական երգեր ունենալու, որ հրատարակենք ու մասնավորաց քով գրեթե անծանոթ մնացած թաղված գանձերը՝ կերպով մը հասարակաց վայելելու հարստություն դարձնենք[5]։ Աս մեր փափագին ինքնահոժար բարեսրտությամբ կատարող ու զորավոր գործակիր գտանք աղնիվ և ուսումնական պարոն Գալուստը Շիրմազանյան Վարդանյանց[6], որ քանի մը ազգային երգեր հավաքեր ու մեզի խրկեր է, խոստանալով, որ ուրիշ ալ խրկե հետզհետե։ Մենք հոս, հրապարակավ մեր շնորհակալությունը հայտնելեն ետքը, ահա ան երգերուն մեկը կհրատարակենք և կհուսանք, որ ազգասեր ընթերցողք ալ իրենց գովեստին և շնորհակալությանը արժանավոր համարին զինքը։

Աս երգին շարադրողն է Ստեփան վարդապետ՝ Նախավկայի վանքեն։ Նախավկայի վանքը Հին Ջուղայի Շամբ անունով գեղին քովն է, և երգին շարադրողը՝ Ջուղայեցվոց Ասպահան քշվելուն ժամանակակից ու ինքն ալ ջուղայեցի կերևնա զուրցվածքեն։ Երգին նյութն է ողբ հայոց Պարսկաստան քշվելուն վրա, 1605 թվականին, պարսից Շահաբբաս թագավորին հրամանավը։

Ափսո՜ս քեզ, հայոց խեղճիկ ժողովուրդ,
Ցիրուցան ելաք անմեղ, անխորհուրդ,
Գերի գնամ արք դեպի Խորասան
Քաղցած ու ծարավ, տկլոր թշվառական։

Խարյուր ու խազար ցավի դիմացաք,
Ձեր քաղցրիկ երկրեն ոտ դուրս չընդրաք.
Խիմի ձեր խոր, մոր գերեզման թողաք,
Ցընեն ու ժամը ուրիշին տվաք։
Վախում ամ էնպես մտքերնուցդ ընկնի,
Ինչքան որ ողջ աք՝ մտքերնուդ չընկնի.
Բալի ձեր որդվոց, թոռանց պատմեցեք,
Էնպես խայրենիքն քանդած թողեցիք։
Աչքըս կուրանար, շլինքս կոտրվեր,
Խեղճ Հայաստան, քեզ էսպես չըտեսներ,
Թե մեռած էի, ինձ երանի էր,
Քան թե կենդանի՝ աչքըս բաց տեսներ?։

Երկրորդ տան խոսքերը շատ սրտաշարժ են, ու ամեն մեկ տողը նշանակալի. վասն զի անցյալ նեղությունները, հայրենյաց քաղցրությունը, ծնողաց հիշատակը, շինվածոց ու եկեղեցյաց գեղեցկությունները բոլորը մեկեն միտք կձգե։

Երրորդ տան խոսքերն ալ շատ ազդու և զորավոր են՝ ցավագին ու հուսահատ սրտե բխած։ Իսկ վերջին տունը շատ գեղեցիկ ու բընական ձգած է, որ բանաստեղծը իրեն հայրենյաց խեղճությունը ինքնիրեն մտածելով կողբա, ու կարդացողին սիրտը կշարժե։

Ճշմարիտ է ան խոսքը, որ կըսեն թե ապգի մը մեջ գործածված առակներն ու առակի պես կարճ զուրցվածքները իրեն բարոյականին համառոտությունը սեպելու է։ Ասով կիմացվի, թե որչափ պատվական ավանդներ ու հիշատակներ են այնպիսի խոսքերը և որչափ աշխատանքով կարժե որ հավաքվին ու տպվին։ Հայաստանի մեջ ալ ինչվան հիմա բյուրավոր առակներ կան, որ հայերեն կըգործածվին և մեր հարց ու նախնյաց փորձառությանը արձագանքներ են։ Բայց բուն Հայաստանեն դուրս եղած հայոց շատերը առանդին հիշատակներն ալ կորսնցուցեր են, այնպես որ թեպետ և խոսած լեզունին տաճկերեն ալ չըլլա բոլորովին, ինչպես ոմանցը, բայց ան հայերեն սեպված լեզվին մեջ ալ առակ մը ըսել պետք ըլլա նե՝ մեկեն ի մեկ տաճկերենը կուգա մտքերնին, ու անիկա մեջ կբերեն, իրենց խոսքին հաստատություն կամ զարդարանք տալու համար։ Կերևնա թե այսպիսիները չեն գիտեր, որ տաճկաց լեզվին մեջ գտնված բյուրավոր առակներուն ու խելացի խոսքերուն գոնե մեկ մասը հայերենե թարգմանած են տաճկերեն անոնք, որ իրենց լեզուն տաճկերենին հետ փոխեր են։ Ա՛ռ գիտնալով,

Թեպետև դժվար բան է որոշելը՝ թե արդյոք տաճկաց ո՞ր առակը ատենով հայերեն է եղեր, կամ թե ո՞րը հիմա ալ հայերեն կգործածվի Հայաստանի շատ կողմերը, բայց մեկ կողմանե սիրտ ընելու աշխատելու և հավաքելու է Հայաստանցվոց առակները, մեկ կողմանե ալ ջանալու է, որ մեր լեզվովը խոսելու ատենիս տաճկերեն առակ մըն ալ մտքերնիս գալու ըլլա նէ՝ հայերեն թարգմանենք վայելուչ կերպով մը, թե որ կրնանք, ու այնպես գործածենք։

Աս երկու տեսակ գեղեցիկ աշխատանքներուն ալ մեյմեկ փոքրիկ ճաշակը տալ ուզելով, աս անգամ դնենք հոս քանի մը առածներ ու առակներ, որ մոտերս խրկեց մեզի մեր ուսումնասեր թղթակիցներեն մեկը Հայաստանեն։

Ասել աև առուտուր և ոչ թե առ ու կուլ։
Ծունը շաև միսը չի ուտիլ։
Պըստիկ է, բայց ճըստիկ է։
Քարը քարին քսես՝ կրակ դուրս կգա։
Ով չուստ՝ նա կուշտ։
Պանիր ու հաց, սիրտը բաց։
Բղավաև կատուն մուկ չի բռնիլ։
Խուփը գլորվել ա, կճուճը գտել ա։
Գող, արտումը դող։
Գինի խմողը կարբի, կռիվ գնացողը կմեռնի։

Ազգային և ռամկական երգոց ճաշակներ ընծայելով ատենատեն օրագրիս մեջ, իմացանք, որ ինչպես մեզի, այնպես մերազնյա ազգասիրաց ալ հաճո են, և չենք դադրիր երբեմն-երբեմն հրատարակել նույնպիսի երգերը։ Բայց կուզենք նաև մեր վսեմ հայկական գրաբար լեզվով գրված նախնյաց ընտիր բանաստեղծության կամ երգոց ճաշակն ալ ընծայել, և կհուսանք, որ հասկցող սիրտ ու ականջ ունեցողներուն հաճո պիտի ըլլան աս գրվածները։ Վասն զի ի՞նչ ախորժելի քան բանաստեղծություն ու երգ, կամ ի՞նչ անուշ քան զհայրենիք և ազգային զրույցք։

Աս երկու բանն է, որ մեզի այսչափ հաճո կընե՝ պարզապես ազգային կամ ռամկական ըսված երգերը, որոնք թեպետև զուրկ ըլլան այն վսեմական և գեղեցկաշար լեզվին գեղեցկութենեն, սակայն շատ հեղ քան զայն լեզվով գրվածները ազդու և սիրելի կըլլան։ Վասն զի բանաստեղծությունը և զգացմունքը լեզվին հետ կապված չէ, կամ գեթ այնչափ կապված չէ, հապա զուրցված կերպին, իսկ զգացմունքը ավելի նյութին և անոր կարդացողին

մերձավորությանը հետ։ Անոր համար բանաստեղծությունը կատարյալ է աս հատկություններով, թեև գնչու լեզվով գրված ըլլա, և մեր հրատարակած քանի մը ռամկական երգերը աս դիտմամբ շատ վեր են Շնորհալվույն աննման քերթվածներուն շատեն։ Աննման կըսեմ իր անխայթ քաղցրախոս և հայկաբան ոճույն համար, որով գերազանց է հայոց քերթողաց մեջ, բայց այն վերը հիշված հատկությունները քիչ անգամ կցուցնե։

Անոր հակառակ կան քերթվածներ ալ վսեմական լեզվով գրված, բայց ռամկական երգոց համ կուտան, ըսել է, որ ազգային ոգվո և ակնջի անուշ կուգան։ Այսպես. Նարեկացվույն քանի մը երգերը[8] կարդալով, լեզուն թեպետև շատ բարձր ու հեռու կտեսնենք մերինեն, բայց հոգին մեր ռամկական հոգվույն հարմար և իբր թե մեզի ավելի մոտ, ուստի ավելի ալ կզվարճանանք։ Ասանկ ալ կամ ես առավել՝ թե որ բուն ազգային նյութոցը վրա ըլլա գրվածքը, ըսել է, որ գրվածներն են ազգահոգի կամ բնիկ հայկական բանաստեղծությունք։ Ազգային ոգին ինչ ըլլալը դյուրին է իմանալ կամ բացատրել, բայց Հայոց կամ որևէ ազգի մը հատուկ բանաստեղծությունը ո՞րը ըլլալը և ինչու ան ըլլալը դժվար է բացատրել։ Թե ազգային լեզվով և թե օտար լեզվաց բանաստեղծություններ կարդալով, կրնա իմացվիլ աս բանս։

Հայտնի է, որ բուն ազգային ոգին ազգային նյութոց վրա գրվածքներու մեջ ավելի կերևնա, և մեր հայկական բանաստեղծությունն ալ հոն փնտրելու էր, բայց նախնյացմե առ մեզ խիստ քիչ բան հասեր է ազգային նյութոց վրա։ Անոր տեղ կրոնական ոգին տիրած է նաև մեր քերթվածոց մեջ, որով բուն ազգային հոգվույն հատկությունը այնչափ չէ հայտնվեր այս նյութիս մեջ։ Անոր համար մեր վերջի բանաստեղծից մեջ, այսինքն ԺԴ դարեն վերջը գրված երգոց մեջ, որ զանազան նյութոց վրա գրված են, ավելի կերևնա ազգային ախորժակ, քան թե Շնորհալվույն գրվածներուն պես գրվածոց մեջ։ Միայն թե քաջ բանաստեղծը ազգային նյութե դուրս բաներուն վրա ալ անանկ շնորհք մը կձգե, որ անոնք ալ ազգահոգի և ազգային կըլլան, ինչպես Նարեկացվույն «Սայլիկը», «Ալքն ծով ի ծով ծիծաղախիտը»[9] և այլն։

Ասոնցմով մեր հայկական քնարին ձայները իրեք կերպ պիտի հնչեն։ Մեկը բուն ազգահոգի և հայկական վսեմ կամ պարզ լեզվով գրված։ Մեկալը վսեմական կամ հայկաբան, բայց ոչ ազգահոգի և ոչ բնիկ հայկական։ Երրորդը հայկական ոճով, բայց ար-

տաքին նյութոց վրա։ Առաջին [illegible] է ամեն ազգային նյութի վրա գրված վառվռուն երգեր՝ ասկե երկու հազար վեց հարյուր տարի առաջ երգված «Հատուած գնաց Վարդգէս մանուկն» կամ «Երկնէր երկին» երգերեն մինչև մեր օրերս Ադամ Ազբարին երգերը[10]։ Երկրորդ տեսակն է հայլաբանությամբ կամ զուտ գրաբար գրված զանազան սրբազան և արտաքին նյութոց վրա գրվածներ՝ ծանր և հանդարտ կերպով, ինչպես Շնորհալվույն երգոց շատերը։ Երրորդ տեսակն է, որ թեպետ օտար նյութոց վրա գրված է՝ թե սրբազան և թե արտաքին, բայց վառվռուն հոգվով և խաղուն լեզվով գրված, և իբր թե հայու մտքին ու լեզվին խաղալիք ըրած է նուիրը։ Ահա կերպիս և ընդհանուր մեր բնիկ հայկական կերպին մեկ մասնավորությունն է՝ ընտանեկան, ախորժելի և խաղալու կերպով մը բառերու ձայնարկություններ և մանավանդ բառից և բանից կրկնություններ ընել։ Այսպես են «Երկնէր երկինն» ալ, «Հեծաւ արի արքայն Արտաշէսն» ալ, «Հատուած գնացն» ալ, Մասյաց «Սայլիկն» ալ և այլն։

Որդիք գերութեան իմ ժողովուրդք ծընեալ յերկիր օտար,
Որ ժողովեալ եք աստ,
Մի՛ մոռանայք, մի՛ մոռանայք ըզհայրենին աշխարհ
Ըզհայաստան քարինսն։
Եկայք արտասուօք մեք ընթացուք մընտօք այսօր ի նոյն
Զտօնս ի տեղին տօնել։
Ո՞ւր քո հիշատակ կամ գոհութիւն այս մեծամեծ ձըրիցս
Ո՞վ ժողովուրդ խիստ.
Թող զունայնութիւնդ օտարացեալ ամբարշտեալ գայլոցն
Եւ նորոգեալ դարձեալ,
Ապանիս ընդոգեա զհերետիկոսքն յուխտէ առաքելոցն
Եւ սուրբ քահանայիցն։

Ո՜հ, Հայաստան քարինք։ Ո՜հ, որ այնչափ փառավոր ու տրխուր հիշատակաց հետ՝ ահա սրտատրոյր ու ազգասեր երգողին նըշխարքն ալ կամփոփեք ձեր ցրտիկ ծոցը, արդյոք հետ վեց հարյուր կամ ավելի տարիներու լսելով հոսկից անոր լուած քնարին ձայները, պիտի արձակե՞ք այն կենդանատիպ մոխիրներեն դուրս կայծ մը, որ ձեր ազգին մեռելատիպ կենդանությունը վառե, բորբոքե, անմահացնե։ Ո՜վ մոռացյալ ու անարգյալ «Հայաստան քարինք», արդյոք ձեր վառվռուն աստղերուն տակ կշնչե՞ն անանկ կուրծքեր, որ գան ու արթնցնեն ձեր խուլ ու խորին արձագանքները, կան-

չելով իրենց նմաններուն. «Որդիք գերութեան, մի՛ մոռանայք, մի՛ մոռանայք զՀայրենին աշխարհ, զՀայաստան քարինսն»։ Կամ գոնե պիտի զգա՞ն կարդացող ու լսող սրտերն այս երգուցս կերպ ու կերպ փափուկ ձայները, այն Հայաստան քարերը, այն մեծ Տրդատ արքայն, այն Հնգետասան բյուր Հայաստանյայց ժողովը, որ մեկ շարժմամբ մկրտվելու կնետվին շրջանապտույն Եփրատեսին ծոցը, այն իմ Գրիգորիսը դեռաբույս եղբայրը, այն այսպես կոչեցար ո՞վ Հայաստանը. և այն սրտագին մաղթանքները, որոնցմով կլուե երգը և մեզի անլռելի սրտով դեպի երկինք գոչել կուտա։ Հասա՞ն արդյոք, ո՞վ Հայաստան, այն տարիները, որ այդ քարերեդ քու փլած տաճարիդ կանգնիլը պիտի տեսնենք։ Չէ նե՝ մենք ալ զքեզ կանչելով կանչելով, վերջապես վրանիս ուրիշ բան չպիտի գտնենք բայց եթե քենե թավալեցուցած անտաշ քարինք, ու տրտմագին շնչով երթալով պիտի կանչենք. «Ո՞ւր քո հիշատակ կամ գոհություն, ո՞վ ժողովուրդ խիստ»։

Ահա գովքն ասեմ տեր Ստեփանոսին,
Քաջվոր նստեր նա ի մեջ Սեբաստ քաղաքին.
Եկին սուսերոք զվանքըն պատեցին,
Ջհանդերձըն հանին զնա մերկացուցին։
Մերկ ու բոբիկ ու գլխիբաց զնա չարչարեցին։
Ապայն դեղձան մազերն փունճ-փունճ փետեցին,
Ապայն յուր ջախուջախ բազկընտիքն երկաթ պնդեցին։
Դաշընն եղեալ ըզսուրընն քաշեցին
Ասե. Դուք տվեք զպատասխան այն ծածկագիտին։
Այնժամ սար ու ձոր վա՜յ կանչեց յուր ընպանողին։
Ծուր հորն ասացին կուգա քո որդին,
Արեկ ու սրբե զքրտինքըն ճակտին ւ, երեսին։
Ծուր հարն էր նստեր դեմ ճանապարհին,
Փիտեր թե կուգա կարդալով յուր պարոն որդին։
Ծաղիկ էր քաղքին, մանուշակ երկրին,
Հանցեղ զինչ կու փայլեր այն կարմիր մորուսն երեսին։
Թոռմեցավ ծաղիկ վարդն ի յուր թրփին,
Կարմիր ու ճերմակ երեսվին դարձավ ի դեղին։

Այս Ստեփանոս նահատակին վարքը Հիշատակարանաց մեջ այսպես կպատմվի։ 1387-ին ատենները Լենկթիմուրի դեպի Հայաստան արձրկված ժամանակը Պուրնահատին անունով մեկը ապստամբեցավ Սեբաստիո ամիրապետեն, ու զանիկա սպաննելով՝ ինքը տեղը անցավ։ Բայց զորքը, անոր ըրած բռնությունները

տեսնելով, ծածուկ խորհուրդ ըրին զինքը սպաննելու։ Երբոր ապըստամբության խորհուրդը իմացվեցավ, քանի մը քսուր մարդիկ Սեբաստիո Ստեփանոս եպիսկոպոսին վրա ալ ամբաստանություն ըրին, իբր թե ինքն ալ ապստամբաց կամակից ու խորհրդակից է։ Պուրնահատին աս բանս լսելով, մեկեն բռնեց Ստեփանոսը իր երկու կրոնավոր ընկերներովը ու սկսավ նեղել, որ հավատքնին ուրանան։ Երբոր անոնք մտիկ չըրին, հրամմեց որ գլուխնին կըտրեն։ Դահիճը Ստեփանոսի վզին քանի մը անգամ զարկավ, բայց չկրցավ կտրել։ Սուրբը երկինք նայելով երբոր բարձր ձայնով աղոթք կըներ, ամիրան բարկանալով հրամմեց, որ բերանը պատռեն ու աս սոսկալի տանջանքին մեջ հոգին ավանդեց։ Վերջը հավատացյալք մարմինը ծածուկ գողացան ու պատվով թաղեցին։

Այս սրտաշարժ պատմության վրա շինված է հոս դրված երգերնիս, որ մեր ճանչցած հայկական բանաստեղծությանց մեջ աննմաններեն մեկը կսեպենք և օտարաց հետ ալ բաղդատելու ըլլանք՝ կիմանամք, որ հին զգայուն բանաստեղծական զուրցվածքը ասկե շատ անդին չերթար. եբրայական և արևելյան քնարներուն հոգին խառնած է անոր մեջ և հնության կերպ մը առած։։։ Իրավ է, որ զգացմունքը և սիրտն է վարպետ և ոչ արվեստը։ Լեզուն պարզ և ռամկական ալ ըլլալով շատ տեղ, զուրցվածքը միշտ ազդու և միտքը շատ տեղ սքանչելի։ Կերևնա թե աս հոգեզարդ նահատակին միարան աշակերտներեն մեկը զուրցած ըլլա աս տաղս, որ գիտե եղեր քերթությունն ալ. որուն վկա է շենքն ալ, երկայն և կարճ տողերով հյուսած, որ քիչ կգտնվի մեր բանաստեղծությանց մեջ։

Շատ սքանչելի է իր համառոտությունը. առջի տողն է բոլոր առաջաբանը։ Երկրորդ տողը՝ Ստեփանոսին պատմությունը, որով կիմացնե թե, ինչ մեծարանք ուներ Սեբաստիո մեջ, ու մեկեն կանցնի ողորմելի դիպվածը պատմելու ու կարծես թե տեսցնել կուտա, թե ինչպես «Հանկարծ եկին սուսերոք զվանքն պատեցին»։ Ինչվան կեսը կնկարագրե նահատակին տեսքը, որուն համար հիշատակարանք ալ կըսեն, թե շատ փառատեսիլ էր և զվարթերես. նկարագրությունը արևելյան ոճով և Հայոց եկեղեցական զգացմամբ հյուսած ըլլալը հայտնի կերևնա։

«Դաշըն եդեալ ըզսուրըն քաշեցին». աս տողս և վարի իրեք տողերը դարձյալ ամենը մեյմեկ մասն են պատմության և շատ ազդու ու խոր տպավորություն ընել կուտան Ստեփանոսին ըսած

կարճ խոսքը երկրորդ տողին մեջ՝ «Դուք տըվեք» և այլն, և չորրորդը «Այնժամ սար ու ձոր վա՜յ կանչեց յուր սպանողին»։

Հորը իմաց տալը այնպիսի ներհակական բացատրությամբ նույն գործքով ետևի զգացած ցավին մեծությունը իմացնելու համար է։ Իսկ հորը այն սև չորեքշաբթի առավոտը նստած սպասելը կհիշեցնե Սիսարային մորը հոգով սպասելը իր որդուն, որ պատերազմի գացեր էր. այն պարոնին կարդացած երգն ալ՝ անոր բերելու հաղթանակները։ Իսկ արյունոտ գլուխը՝ Սիսարայի կապույտ երանգները. «Մայրն Սիսարայ հայեցեալ դէտ ակն ունէր ի վանդակապատ պատուհանէն. ընդէր յետնեցան կառք նորա ի գալոյ... և եգել զաղիս նորա։ Կապոյտ երանգոցն Սիսարայ, կապոյտ երանգոցն գոյնագոյն նկարուց, այն էր պարանոցին նորա կապոյտ»։

Հորը սիրտն, որ տրտմությամբ կհալի, արյուն կդառնա ի փորին, հապա մորը կսկիծը ի՞նչ պիտի ըլլար։ Հոս է նկարագրության դժվարությունը, հոս է արվեստը։ Վարպետ պատկերհանի մը համար կպատմեն, թե տխրական պատկեր մը քաշեց, ընտանյաց ամեն մեկ անձին մեյմեկ կերպ, մեկմեկե սաստիկ տրտմության դեմքեր տվավ, բայց երբոր եկավ անոր, որ ամենեն ավելի տըրտում պիտի ըլլար, ճարը հատավ, վրձինը կապվեցավ ու ան անձին երեսը քողապատ նկարեց, նոր վարպետությամբ չիկրցած վարպետությունը ծածկելով։ Իսկ հոս հայկական քնարը, որ չիկըրնար ան սուտ քողը բանեցնել, մորը կիրքը կսաստկացնե խելքը կորսնցնել ու թափառել տալով ինքնիրմե դուրս ելած այն Անվայր վայրին մեջ, որ շատ ավելի զորավոր կիրք և բացատրություն է, քան թե ըսել մարեցավ ընկավ։

Շատ սրտառուչ դիմառնություն է սաղմոսին տարեկուսած մնալը ատենին մեջ, այսինքն եկեղեցվո դասին և գրքերուն հոն կուտելը առանց կարդացվելու, որ կհիշեցնե մարգարեին ըսածը. «Ի մէջ ուռեաց նոցա կախեցաք զկտակարանս մեր... զիա՞րդ երգեսցուք զօրհնութիւնս տեառն յերկիր օտար»։ Վերջաբանն ալ առաջաբանին և պատմության ոճին պես համառոտ։ Երգիչը իր սրտեն անցած սուրը կզարնե ընթերցողին սիրտը առանց կրկնելու և շարժելու, կթողու, որ ցավը ինքն իրեն բանի։ Խորունկ զգացմունքներ շատ հեզ այսպես կարճախոս կըլլան։

Բայց իմ սրտիկն հետ այս քնարիս առած ոլոր,
Հայաստանի ցուրտ սարերուն կանչե բոլոր,

Ե՞րբ զիմ նախնյաց հրեղեն երգերը դուրս տի տայք,
Կամ մանավանդ ե՞րբ տի մտառեք զանոնք, ո՜վ հայք։

ԱՄՍՈՑ ԲՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

ԱՊՐԻԼ. Կտեսնես, կիմանաս, Գրիգորիկ, որ սաստիկ հովերը կդադրին, և անուշ հովեր կուգան, որոնց զեփյուռ կըսենք։ Լեռներուն վրայեն ձյունները կհալին, ու գետերը կիջնան։ Անոր համար շատ գետեր ու հեղեղատներ լեցվելով դաշտերը կկոխեն։

Ան բլուրներն, որ առաջ հեռվանց քարոտ անապատ կերևային, հիմա կանաչով ծածկված կերևան։

Ամեն ծառ կանաչցած կտեսնվի, ամեն տեղ ծաղկներով կըզարդարվի։ Ա՜հ, թե որ սառած եղյամը աս ծաղկներուն վրա իջնա նե՝ ինչպե՞ս վնասակար պիտի ըլլա անոնց։ Ծառերուն ճյուղերը կզարդարվին ծաղկներով, դաշտերը կգեղեցկանան, ինչվան թուփերն ու փշերն ալ կարթննան։ Բոլոր բնության երեսը կզվարթանա, ամեն արարածք գարունը կողջունեն։

Գառնուկները մորերուն քովեն երթալով կցատկոտեն, կովն ու եզը իրենց դանդաղությունը մոռացածի պես կժրանան։

Մանր թռչնիկները մեծ ուրախությամբ անդադար կճլվըլան, կվազվզեն, կճխան։ Այս ամսուս մեջ շա՜տ վարուցան կըլլա և տունկեր կտնկվին։

Առջի օրերը կցանվի կտավը հարմար երկրի մեջ։ Կտնկվին դեղձի ծառ, սալոր, հասմիկ և կծու տունկեր, ինչպես սոխ, սխտոր և այլն։ Պարտեզները զարդարելու ատենն ալ աս է. ելակներուն ավելորդ տերևները պետք է կտրել։

Թե որ հովերը փչելու ըլլան, պետք է ջուր տալ բույսերուն, բայց ծնեբեկին ջուր պետք չէ։

Ջերմանոցներու մեջ ծածկի տակ դրված տունկերը, ինչպես լիմոնը և այլն, աս ամսուս մեջ դուրս կհանեն։ Շերամ որդին հավկիթները կտաքցնեն, որ ձագերը ելլեն, երկիրն ալ անոնց կերակուր կպատրաստե։ Հասմիկի տերևները կծլին, վերջը թթենին ալ կուգա։

Անձրևները երկայն չեն քշեր. ասդիս անձրև եկած ատենը անդին երկինքը կծիծաղի, և անձրևին կաթիլներուն վրա կտարածվի գույնզգույն ծիրանի գոտին։ Մշակը աշխատանքին պտուղը վաստկելու հույսով կուրախանա, քանի որ օդերը կշըտկվին։

ՄԱՅԻՍ. Ե՛լ, Գրիգորիկ, ե՛լ, ասկե վերջը ամոթ է անկողինեն ուշ ելնելը։ Ահա պատուհանը կբանամ. նայե՛, դեռ արևը չէ ծագած, բայց արշալույսը ծիրանի գունով ներկվեր է։ Ինչպե՞ս օրերը երկընցեր են. դեռ ժամը հինգ և կես է։ Տե՛ս ինչպե՞ս հստակ ու պայծառ է օդն ու երկինքը։ Շո՛ւտ ըրե, ելլենք դուրս։

Եկուր դեպի սա գեղեցիկ ծաղկած դաշտը երթանք։ Մայիսը ամիսներուն մեջ ամենեն գեղեցիկն է. դաշտերն ալ ամենեն ավելի աս ամսուս մեջ զվարճալի կերևան։ Ահա տես, արևը կելլե, ճառագայթները լեռներուն ու բարձր ծառերուն գլուխները ոսկեգույն կզարնեն։ Անուշ հովիկը, որ թփերը կօրորե, ծառերուն տերևները կշարժե, կարծես թե կփութա արևուն առջևեն վազելով իմաց տըվող ըլլալ։

Մտիկ ըրե սոխակներուն՝ ծիծառնուկներուն ձայները. ի՞նչ զվարճալի, որչա՞փ փոխփոխ եղանակներ կընեն։ Կարծես թե մեկմեկու բարև կուտան, մեկմեկու պատասխան կուտան և արևուն երևնալը կտոնեն։

Եկուր հիմա սա ցանկերուն շուքին տակը կանաչ ճամբեն երթանք։

Կտեսնե՞ս, Գրիգորիկ, որ հիմա բոլոր աս տունկերը ծաղկեր են, բոլորն ալ իրենց հոտը կբուրեն, ամենուն բուրմունքը մեկտեղ խառնված՝ մարդուս սիրտը կզմայլեցնեն։ Տե՛ս, որչափ տեսակ-տեսակ ծաղկներ կան։ Եկ ամենեն ալ ժողովենք, փունջ մը կապենք։ Ան ծաղկներեն ալ, որ առանձին հոտ չեն տար, դու ժողովե մեկտեղ բեր, կտեսնես թե ի՞նչ անուշ հոտ կուտան։

Սա թուլունը կտեսնե՞ս, որ անդադար կերթա կուգա. հայտնի է, որ հոն տեղը բուն դրեր է։ Եկուր կամաց կամաց երթանք ու խոտերը վեր առնենք նայինք։ Տես տես ի՞նչ սիրուն են. դեռ փետուրնին չէ եկած։ Ա՜հ, խեղճեր, կարծեն թե իրենց կերակուր բերած ենք, կտուցնին կբանան։ Բայց թո՛ղ, թո՛ղ մեկդի քաշվինք, մայրերնին դեպի հոս կթռչի։ Թե որ կասկած առնե, թե մենք դպեր ենք բունին, կրնա բոլորովին երեսե թողուլ, խեղճ ձագերը անոթի կմեռնին...

Նայե հիմա չորս դիդ, Գրիգորիկ, տունկ մը չկա, որ կանաչած չըլլա։ Ան բարձր կաղնին ալ վերեն վար տերևներով զարդարվեր է։ Ծառ ու ծաղիկ, դաշտ ու երկինք, ամեն բան պայծառացած կերևնան։ Բայց տես, թե ամեն մեկ բույսը ինչպե՞ս առանձին

կազմվածք ունի, ի՞նչ զանազան ձևով ճղեր ու տերևներ. ինչվան կանաչ գույներնին ալ մեկմեկե տարբեր է։

Մտնանք հիմա աս պարտեզը։

Նայե, պարտիզպանն ալ ի՞նչ հոգով մաքրեր է, որ անպիտան խոտ մ՚ ալ չկա մեջը։ Թե որ ան ամեն ծլած տունկերը թողուր, հիմա աս արտը բոլորովին խոկած՝ իրար անցած կըլլար և այնչափ ճղերուն վրա հազիվ քիչ մը պտուղ ու ծաղիկ կերևնար։

Նայե, կեռասներն ալ սկսեր են հասուննալ։ Անոնց կարմրիկ գույնը՝ կանաչ տերևներուն գեղեցկություն մը կուտա, ան կանաչն ալ ասոնց կարմրությունը ավելի դուրս կցատքեցնե։ Պարտեզին տերը ահա կուգա. կարծեմ քեզի կեռաս պիտի տա։

Նայե, որ տա նե՝ չափազանց քաղաքավարությամբ չէ չըսես, ոչ ալ աչքածակությամբ ժողովես։ Առնելեդ վերջն ալ պատշաճ շնորհակալությունդ ըրե։

Աս ամիսը, որ բնության մեջ ամենեն գեղեցիկն է, և քաղաքական կենաց մեջ հանդիսավոր, հավատացյալք ալ անոր համեմատ, արժանավոր աղնիվ բնության մը ընծայեր են, որ է աստուծո և մեր մայրը՝ որ իրավցնե աշխարհիս գարունը բերավ։

ՀՈՒՆԻՍ. Տաքը օրե օր կսաստկանա. թեպետ երբեմն երբեմն անձրևները քիչ մը ցուրտ կբերեն, բայց երկայն չդիմանար։ Ամառը, որ աս ամսուս 21-ին պիտի սկսի², շտապելով վրա կհասնի։

Եկուր մտնենք աս դաշտը։ Կտեսնես, որ առաջինին պես ծաղկով զարդարված չէ հիմա։ Ծաղկներուն տեղը հիմա հունտերը թափած են. ցորենը հասունցեր է, հնձելու ժամանակն է։ Աս ցորենին մայիսի ցորեն կըսեն, ինչու, որ շատ տարի մայիսի մեջ կհնձվի։

Տես հնձողները սա ուռենիներուն շարքին տակը, ինչպե՞ս իրենց գերանդիին վրան ծռած կկտրեն։ Անոնց հետեն ալ գեղացի տղաք կտրած ցորենները օրա կկապեն, ոմանք հնձված տեղին մեջ կխաղան, կթավալին։

Վարսակը իր կանաչ գույնը կորուսեր է. հասկերը կդեղնին ու քիչ ատենեն կճերմկին. քիչ ատենեն կսկսին իրենց ճերմակ-ճերմակ գլուխները գետին ծռելով, մշակները հունձքի հրավիրել։ Թե որ գեղացին սպասե, որ փերճեկը ցորենին վրայեն ելլե, ու հասկը լավ մը չորնա, հնձելու ատենը միայն հարդ կհնձե։

Պարտիզպանը աս ամսուս մեջ լուբիային, վարունգին, ձմերուկին, սեխին և ասոնց նմաններուն նեցուկ ու ամրություն կդնե։ Հասմիկին ու պտղատու ծառերուն գետինն ալ կդարմանե։ Շաբաթը

մեկ երկու անգամ պատվաստները աչքե կանցնե, ավելորդ ծիլերը կկտրե, ընտանի ճյուղին վրա օտար ճյուղ չթողուր։

Մեխակին թաղարները շուքի մեջ կառնե, որ արևեն չթոռմին։ Ծաղկելեն վերջը նորեն դուրս կհանե, կտրտած ծաղկներուն ճյուղերն ալ կկտրե, որ նոր ծաղկածները լավ ամրանան։ Մեծ հոգ ունի անպիտան խոտերը խլելու ու պիտանիներին ջուր տալու։

Քու սիրտդ ալ պարտեզ մըն է, Գրիգորիկ, ու պարտիզպանը դուն ես։ Նայե, որ առաքինություն միայն ցանես աճեցնես ու մոլության բույսերը խլես փճացնես։

ՀՈՒԼԻՍ. Ե՛կ, Գրիգորիկ, սա կանաչ շուքին տակը կեցած, դաշտը նայինք։ Ան գերանդավոր մարդիկն որ կտեսնես, հնձողներն են. դիմացնին ընկնող տանողն ալ իրենց տերն է։

Ատ խեղճերեն շատը ուրիշ դաշտերե կուգան, ուր որ իրենց հունձքը լավ առաջ եկած չէ։ Ուրիշի ծառայելով աս տաք արևուն մեջ, իրենց վարձքն ու ապրուստը կառնեն։ Եվ այսպես շրջան ընելով, ավելի տաք երկրներեն դեպի ավելի պաղ կողմերը կերթան, որպեսզի միշտ աշխատանք ունենան՝ նոր-նոր հունձեր գտնելով։

Շատ կողմեր կգտնվին ասանկ հնձողներ, որ հունձերուն հետևեն ճամբորդություն մը ընելով, ինչվան չմնցընեն՝ տուն չեն դառնար։ Բայց երբոր դան իրենց տեղը՝ հոն պետք է ըլլաս, որ տեսնես իրենց զավակացն ու բոլոր ընտանյացը խնդումը։

Խե՜ղճ մարդիկ. երանի՜ իրենց, որ քիչ շահուն վրա ալ անանկ գոհ են, որ ալ ձմեռը կարոտություն քաշելու վախ չունին։ Ասոնք են, որ սեպտեմբեր ամսուն մեջն ալ կերթան լեռները թափած շագանակները ժողովելու, չթափածներն ալ գավազանով կթոթվեն։

Հիմա եկուր մոտենանք անոնց ու լավ մը դիտենք։ Ահա ամենքը մեյմեկ ակոսի մեջ մտած կպատրաստվին հնձելու։ Ոմանք մեկ ձեռքով մանգաղ առած, մեկալ ձեռքով ալ փունջ մը հնձելու խոտեն բռնած, կկտրեն։ Ոմանք ալ երկայն գերանդիներով երկու ձեռքը բռնած կհնձեն։ Կտրածնին ակոսներուն մեջտեղը կդիզեն վրայե վրա։

Ուրիշ աշխատողներն ալ ատ որաներեն մեկտեղ կժողովեն ու կկապեն քանի մը հատը մեկտեղ և աս կբսվի շեղջ կամ գադիշ[3]։ Ամենքն ալ որոշված չափով մը հնձելեն վերջը, միաբան շուքի տակ կբաշվին ու պարզ կերակուր մը առնելով, ուժերնին կհաստատեն։ Նորեն կսկսին աշխատիլ ինչվան կեսօր, ու կեսօրվան կերակուր-

նին առած՝ մեկ մեկ դի կքաշվին, ականջնին ճպռած ձայնին տըված։

Երբոր բոլոր հունձքը կլըմընա, գեղացիները սայլերով կուգան, ու բաց տեղ շինած ծածկի մը տակ կտանին գաղիշները։ Բայց հոն դիզելե առաջ կնային որ լավ չորցած ըլլան. թե չէ՝ հարդը կմգլի ու ցորենը կապականի։ Ասանկ հոն կթողուն տասնհինգ կամ քսան օր մը, որ ցորենը ավելի կպարարտանա, հասկին կամ հարդին մեջ մնացած խոնավությունը ծծելով։

Բայց դու տես, Գրիգորիկ, աս ցորենին համար, որուն ամենքըս կարոտ ենք, խեղճ գեղացիները որչա՜փ կաշխատին։ Հնձելու ատեն արևուն տակը կխաշին, վերջը կալին մեջ ծեծելու ատեն՝ որչա՜փ կքրտնին, գեթ կալը ծեծող եզները ու ձիերը կառավարելու համար։ Ահա այսպես մարդուս կյանքն ալ բոլոր աշխատություն է։ Առանց այս աշխատության պտուղ չկրնար վայելել։

ՕԳՈՍՏՈՍ. Աս ամիսը պտղավետ ամիս է, գեղեցիկ խնձորներով ու տանձերով կզարդարվի։ Նախ կբերե մեզի ծիրան, հետո անուշահամ դեղձեր տեսակ-տեսակ, վերջը կամաց-կամաց կուգան սեխը և ձմերուկը, վարունգը ու լոպիան, դդումը և ասոնց նման զովարար բույսերը։

Դաշտային աշխատությունը աս ամսուս մեջ ալ դեռ չլմընար։

Ամսուս սկիզբները կհնձեն վուշը և կանեփը ու կփտեցնեն։ Վուշը փտելեն վերջը կչորացնեն արևու մեջ ու մեկ գործիքով մը վրայի կեղևները կզատեն մեջի փայեն։ Աս ամսուս՝ ապրիլին ու մայիսին մեջ ցանված սիսեռները, բակլաներն ու լուպիան կծեծեն, կժողվեն։

Պարտիզպանը զանազան աղցաններ կտնկե զգուշությամբ։ Կցանե բարդ հազարը (մարուլ), կզատե նեխուրը (քերեվիզ)[4] ակոսներուն մեջ ու լավ կջրե զանոնք։ Բիբերն ալ տնկելու ատեն կնայի, որ տունկերը մեյմեկ ոտքի չափ մեկմեկե հեռու ըլլան։ Այսպես պետք է, որ մարդս առաջուց հոգա իր ապագան։

Աս ամսուս օրերը պայծառ են, օդերը տաք։ Բայց թե պայծառությունը և թե տաքությունը ամսուս հետ կնվազին, ու տարվույն վերջի զորավոր օրերը կրնան ըսվիլ։

ՍԵՊՏԵՄԲԵՐ. Աս ամսուս մեջ ամառվան տաքը կիջնա, աշունը կհասնի և գիշերն ու ցորեկը հավասար կըլլան։ Մշակները ամսուս սկիզբները կերթան այգիները աչքե անցնելու։ Նշան կդնեն լավ

որթերուն վրա, որ անոնց ճյուղերը տնկեն անշահ որթերուն տեղը։ Անկե վերջը կսկսի այգեկութքի պատրաստությունը, որ ան ալ մեծ հանգես է։

Պարտեզներու մեջ ալ աշխատանքը պակաս չէ. ձմեռվան համար կաղամբ ու աղցաններ կտնկեն. պահելու դդումները կժողվեն ու արևու մեջ կդնեն. գետնախնձորը հողուն տակեն կհանեն. տաք տեղվանք ձմեռվան պտուղները կժողվեն։ Ծաղիկ հոգացողը կտնկե նարգիզը, անեմոնը[5], հասմիկը, հրանունկը, մանուշակը ու մեխակին արմատ ձգած ընձյուղները կզատե։ Հասած հունտերն ալ կժողովե։

Վերջապես, պարապ անցնելու ամիս չկա երկրագործին, ու մեկ ամիս մը պարապ կենա նե, բոլոր տարվույն վնաս կըլլա։ Ասանկ ալ ուսմունքե հանգիստ ըլլողը աս միջոցիս, թե որ բոլոր ատենը պարապ անցնե, միտքը կտկարանա ու վերջը շատ կհոգնի։

ՀՈԿՏԵՄԲԵՐ. Աս ամիսն է այգեկութք ընելու ամիսը, վասն զի խաղողները լավ հասունցած կըլլան, իսկ խաղողին հասնելուն նըշանը՝ ողկույզին կոթին սևնալն է։ Աս ամսուս մեջ կչորցընեն նաև տանձը, խաղողը և սունկը։ Ձմեռվան պտուղները կժողվեն, այսինքն՝ տանձ, խնձոր ու սերկևիլ. ունապ, տխիլ և այլն։

Աս պտուղներուն հասած ժամանակը որոշ իմանալը դժար է։ Վասն զի տարի կըլլա որ շուտ, տարի կըլլա որ ուշ կհասնին, անկե զատ՝ իրենց տեսակն ալ շատ տարբերություն կընե և ինչվան նույն ծառին վրա եղածներեն ալ, ոմանք կանուխ կհասնին, ոմանք ետքը։

Ընկուզին վրայի կանաչ կճեպը հանելեն ետև՝ ողջերը կչորցընեն կպահեն, իսկ որդնոտածները կճզմեն ու եղը կհանեն։ Աս եղը կգործածվի վառելու, ներկերու հետ խառնելու ու փայտերը փայլեցնելու համար։

Ամսուս ետքերը հերկած ու պատրաստած արտերու մեջ կցանվի ցորենը. պարտիզպանը կտնկե մեկ քանի դիմացկուն բույսեր, ծաղիկ պահողը արթուն կկենա՝ աշնանային ծաղկանց հունտերը ժողովելու, չորցնելու ու պահելու, մեխակներու բողբոջները կզատե, կտնկե, հակինթին սոխերը գետնի կամ թաղարի մեջ կտնկե։ Կտնկե նաև կակաչ, վարդ, հաղարճ, հասմիկ և ասոնց նման ծաղկներ։

Քիչ ատենեն քեզի ալ ուսմանց դաշտերը կբացվին։ Հոն ալ առանց ցանելու ու ժողովելու վայելք չըլլար։

ՆՈՅԵՄԲԵՐ. Աս ամսուս մեջ գեղացացության ժամանակը լմընալով՝ ամենքը տներին կդառնան, իրենց բանին, գործքին հետ կըլլան։

Դաշտերն ալ չեն կրնար ասկե ետև զվարճալի երևնալ։ Պտուղները՝ հունձերը անցեր են, ծառերը զարդերնին կորուսեր են, տերևները թափթփած կդեղնին, ճյուղերը մերկացած կշորնան։ Ա՛լ ծիծառները չեն երևնար. առավոտվան դեմ թռչնոց երգերը չեն լսվիր. ճնճղուկներուն ծլվլալը կդադրի. ծառերը կթողուն իրիկվան դեմ ու մարագներու վրա կթառին։

Դաշտերուն վրա ագռավները կկանչեն, օդուն մեջ ճամբորդ կոունկներուն սուր ձայնը կլսվի։ Մեկն ու անձրևը շատ հեղ արևուն լույսը կարգիլեն։

Արևմուտքեն ցուրտ հովեր կփչեն, ինչվան ձյուն ալ կբերեն։ Պարտեզը մնացած ծաղկներն ալ կիմացնեն, թե ձմեռը հասնելու վրա է։ Տնկագործը մեծավ գուրգուրանոք կծածկե պտղատու ծառերը։

Ձիթապտուղը կսկի սևնալ, երբ որ բոլորն ալ սևնա՝ կքաղեն ու եղը կհանեն։ Սերմնացանը կնայի, որ անձրևե եկած ջրերը արուերուն վրա չլճանան, ու ջրի ճամբաները գոցված չըլլան։ Ավելորդ ջրերը դեպի փոսերը կամ առվակները կշտկեն ու կպարպեն։ Աս ջրերը թե որ չպարպեն՝ հունտերը չեն աճիր։ Ասանկ ալ թե որ արտեդ չհանես տգիտությունը և մոլորությունները, ուսմանց պատվական սերմը կփճանա և ատենին ուրախության պատճառ չըլլար քեզի համար։

ԴԵԿՏԵՄԲԵՐ. Ցուրտը քանի կերթա կսաստկանա, օրերը կկարճընան, արևուն երեսը հաղիվ կերևնա ու մեկեն կծածկվի։ Ինչվան ամսուս քսանմեկը այսպես օր օրվան վրա կկարճնա ցորեկը ու գիշերը կերկըննա։

Ձմեռը սկսելուն նշանները բոլոր բնության վրա կերևնան։ Կովերը, եզներն ու ոչխարները ախոռնին փակված են։ Գեղացիներն ալ գիշերները հոն ժողվված՝ տնական գործքերու հետ կըլլան։ Մարդիկ իրենց անասունները կհոգան ու մշակության հարկավոր գործիքները կպատրաստեն։ Կանայք կմանեն, կհյուսեն, կկարեն։

Հովիվը փայտի տաշեղներով ու տերևոտ ճղներով անկողին կպատրաստե անասուններուն։ Այգեպանը տնկելու որթերուն հա-

մար տեղնիը կպատրաստե, գետինը կծածկե այնպիսի կերպով, որ հողը չլեցվի մեջը։

Ուսումնասիրաց ալ զվարճալի ու հարմար ատեն կուտան երկայն գիշերները, իրենց ախորժած ուսմանցը հետ զբաղելու, որով բոլոր գիշերն ալ կարճ կերևնա։ Ուսմանց տված մտավոր զվարճութենեն վեր զվարճություն չկրնար ըլլալ։ Երանի՜ անոր, որ համը առեր է։

ԹԵ ՈՎ Է ՏՂՈՅ ԱՄԵՆԵՆ ՍԻՐԵԼԻ, ԶՈՐԱՎՈՐ ԵՎ ՀԱՐԿԱՎՈՐ ՎԱՐՊԵՏԸ

Շատ խեղճ է ան ժամանակը և շատ ողբալի է ան մարդը, որ կրթության օգուտը չեն ճանչցեր, անով մարդուս ազնիվ բնության հարգն ալ չեն գիտցեր։ Ասոր հակառակ, երջանիկ է ան դարը և երանելի ան մարդը, որ բոլոր սրտանց աս ամենահարկավոր բանին ետևե ելած է։ Մենք կրնանք ուրախանալ մեր դարուն վրա ալ, որ նոր-նոր ջանքով ու հնարքներով կրթությունը ավելի դյուրին և օգտակար ընելու ետևե է, և իրավցնե ամեն տեսակ գործիք կըրթության համար պակաս չէ, ու երթալով կավելնա, ասով վարպետներն՝ ալ ավելի կհորդորվեն։ Բայց ինչե՞ն է, որ շատ հեղ աս ամեն հնարքները բավական չեն ըլլար տղա մը շտկելու և վարպետը բոլոր սրտանց աշխատելեն վերջն ալ՝ տրտմությամբ ու ակամա կհարկադրի, որ հուսահատի։ Աս մեծ ու հարկավոր հարցմունքին պատասխանը տալ ուզելով, կըսենք։

Վասնզի ան տղան առաջ ինչպես որ պետք է, լավ չէ անցած առաջին սիրելի, զորավոր ու հարկավոր վարպետին ձեռքեն, որ է իր ծնողքը և մանավանդ՝ մայրը։ Կտեսնենք, որ փայտե գավազան կլորցնողները գործիք մը ունին մեկմեկ մանր ծակերով և ինչվան որ ամենեն պզտիկեն չանցնի, գավազանը չձևանար։ Բայց քանի որ ան գավազանը դեռ խորդուբորդ է, նախ ամենեն մեծ ծակեն կանցընեն. անով թե առջի ձևը կառնե և թե կդյուրանա մեկալներուն մեջ մտնելը, թե չէ՝ անկարելի է մտցնելը։ Ասանկ ալ տղան, թե որ ծնողացը ձեռքը ան առջի բրտությունը չկորսնցնե, և կըրթության առջի ձևը չառնե, ո՜հ, շատ դժվար է (չըսեմ թե անկարելի) որ բարեկրթության ձևը ետևի եկած վարպետներուն ձեռքովը առնե։

Գերագույն նախախնամության մասնավոր շնորհքը պետք է սեպել, որ տղոց փափուկ և տկար հասակին հարմար՝ անուշ ու երկայնամիտ դաստիարակ մը պատրաստեր է՝ իր մայրը։ Եվ քանի որ բարեպաշտ ծնողք իրենց մեծ շնորհք և զվարճություն կսեպեն բարի զավակաց տեր ըլլալը, իհարկե ամենեն մեծ հոգերնին ալ ան պիտի ըլլա, որ զավկնին լավ կրթեն, որպեսզի իրենց պաշտոնն ալ աստուծո դիտած և մարդկանց փափագած վախճանին հասնի։ Ասով կիմացվի, թե ասանկ բանի մը անհոգ ըլլալն ալ ի՞նչ վտանգավոր բան է։ Իրավ ծանր բան է, որ մեկը գթասիրտ ծնողաց ըսե, թե զավկներուդ ամենեն ավելի թշվառության պատճառը դուք եք. բայց ափսո՞ս, որ չենք կրնար ինքզինքիս խաբել ու չըսել, թե աշխարհքիս վրա այսչափ մարդկանց անկարգ ըլլալուն առջի պատճառը իրենց ծնողքն են։

Քանի որ ծնողի մը ու զավկի մը մեջ ան բնական սերը և քաղցրությունը կա, որ ուրիշ վարպետ մը չկրնար ազդել, հայտնի է, որ ծնողքն է ամենեն սիրելի և զորավոր՝ տղուն վրա իշխողը։ Իրավ ցընե, ո՞վ կա, որ այնպես սրտանց սիրե զինքը տղա մը, կամ պատվե, կամ հավնի ու հնազանդի անոր, ինչպես իր ծնողքը։ Որուն թեպետև ամեն երախտյացը տղուն խելքը չհասնիր, բայց խելացիներեն ավելի կիմանա անոր զորությունը իր վրան և կարծես թե առանց իմանալու ալ գիտե, թե անիկա է իրեն կյանք ու սնունդ տվողը, իրեն մեկ հատիկ բարեկամը և իրեն տղայության մեկ հատիկ հոգացողն ու ապավենը և թե պետք է որ ինքն ալ ասանկ անձի մը ամեն կերպով հլու ըլլա, անոր կամքեն չանցնի, իրեն հոգացողը հոգա։ Աս այսպես ըլլալով, ի՞նչ բաներ կրնա մեկ սիրելի մայր մը իր սիրուն զավկին մատղաշ սիրտը տնկել։ Մի՞թե իր մեկ քաղցր նայվածքը բավական չէ ամեն հորդորանքի տեղ, կամ թե մեկ ընքվիներուն շարժիլը բավական չէ ամեն հանդիմանության տեղ։ Ո՞վ կրնա փափուկ ծաղկի մը արևեն, հովեն, անձրևեն և ուրիշ վտանգներե այնպես լավ պաշտպանել, ինչպես ան բույսը, որ ծներ է զծաղիկը ու երբեմն տերևներովը կպաշտպանե, երբեմն արևուն կդարձնե, երբեմն ցողերը վրան կկաթեցնե։ Քանի որ տղուն բնավորությունը բացված չէ, կրնանք ըսել համարձակ, թե մայրն է անոր խելքը և ոչ միայն մարդիկ, այլ կարծես թե աստված ալ ձեռքը տղեն քաշած՝ անոր ամեն հոգը մորը հանձներ է։ Աս ի՞նչ մեծ իշխանություն է, աս ի՞նչ քաղցր և ինչ զորավոր խնամք է։

բայց ի՞նչ հարկավոր ալ է, որ մարդուս բոլոր վախճանը շատ հեղ անկե կախված է...

Ա՜հ, քանի՜ քանի զավկներ իրենց դժբախտության ատենը, քանի՜ մարդիկ իրենց ետքի վայրկենին մեջ չեն անիծած իրենց ծնողքը, որ մարմնավորին հետ հոգվույն կյանքն ալ չեն տված իրենց։ Քանի՜ ծնողք իրենց զավակաց կրթությանը անհոգ ըլլալնուն համար բոլոր կյանքներնին չեն լացեր և թերևս՝ թե աս կյանքիս մեջ և թե անդին։ Ընդհակառակն, ո՞րչափ խելացի տղաք և առաքինի մարդիկ տեսած ենք, որոնց լավ ըլլալուն ամենեն մեծ պատճառը իրենց ծնողացը լավությունն է։ Ո՞րչափ առաքինիներու վարք կկարդանք, որ իրենց մորը կաթին հետ լավ կրթություն ալ ծծած ըլլալուն՝ երջանիկ եղեր են աշխարհքիս վրա և ավելի երջանիկ անդիի աշխարհը։

Մարդկանց ընկերությունը, աշխարհքիս շինությունը և ինքն իսկ՝ աստված, ծնողքներե կսպասեն ու կպահանջեն ընտիր անձինք գտնելու։

Իրավ է, որ հայր մը կամ մայր մը բավական չէ տղուն կատարյալ դաստիարակություն տալու։ Բայց իր պարտքն է, որ ճամբան բանա, կամ գոնե ճամբան չգոցե ետևիններուն։ Ասոր տարակույս չկա, որ իր տված լավ կրթությունը ետևի եկող վարպետներուն մեծ հաջողության պատճառ պիտի ըլլա, գեշ կրթությունն ալ անոնց ջանքը շատ հեղ անպտուղ պիտի ընե։ Փոսի մը մեջ ձրգված առջի քարը ամենեն վար կմնա. հանես նե ալ՝ ամենեն վերջը կելլե. ասանկ են նաև տղուն սիրտը ձգված բաները։ Արդ՝ ինչ որ ծնողք կուզեն որ ըլլան տղաքնին, ամենեն առաջ ան բանը պետք է մտցնեն անոնց միտքը։ Գիտնան, որ անիկա կզորանա սրտին մեջ՝ թե լավը և թե գեշը։ Աս բանս ամեն ատեն ճանչցված ու ապսպրված է։ «Ինչ բանի մեջ որ կուզե մեկը գերազանց ըլլալ,— կրսե Պլատոն,— պետք է տղայութենե անոր կամ անոր նման բաներուն ետևեն ըլլա ամեն ատեն։ Լավ երկրագործ կամ ճարտարապետ ըլլալ ուզողը՝ պետք է որ խաղալու ատենն ալ ան արվեստներուն բաները ձևացնե, վարպետներուն ալ կինյա, որ անոնց անանկ մանր գործիքներ տան։ Դարձյալ, ինչ բանի մեջ որ ամենեն ավելի վարժիլը հարկավոր է, ան բանին ամենեն առաջ պետք է տղաքը վարժեցնել»։ Իսկ եթե հարցնենք, թե ի՞նչ բան պետք է նախ սորվեցնել, թող ասոր պատասխանն ալ տա նույն փիլիսոփան։ «Բայց չըլլա թե ծուռ իմանաք իմ ըսած կրթությունս... հար-

կավոր դաստիարակությունը ատ արհեստները չեն, հապա կրթությունն ան է, որ պզտիկուց զմարդը առաքինության կդարձնե և լավ քաղաքացի ըլլալու ջանք կուտա և կսովրեցնե արդարությամբ հնազանդիլ և արդարությամբ հրամայել։ Աս միայն է կրթություն ըսածդ։ Իսկ ստակ ավելցնելու, կարողություն ու փառք շատցընելու կրթությունը, կամ ասոնց նման արդարութենե ու խելքե դուրս եղած բաները ռամկական և անարգ բաներ են, կրթության անվանն ալ արժանի չեն»։ Վերջապես կըսե. «Ամենքն ալ կխոստովանին, թե որոնք որ առաջուց լավ կրթվեցան՝ անոնք լավ մարդիկ եղան. անոր համար ամենեին պետք չէ անհոգ ըլլալ աս բանիս։ Վասն զի մարդուս ամեն բաներն պատվականը իր լավությունն է»[2]։

Ուրեմն ամեն բանե առաջ ծնողք պիտի նային, որ բարեպաշտության սկզբունքներ և ետքը ընկերության պարտքեր տպավորեն զավկներուն սիրտը, որպեսզի վերջի վարպետներն ալ հաջողությամբ աճեցնեն զանոնք. ասով աշխարհքս ընտիր քաղաքացիներ ու մարդիկ լավ ընկերներ կունենան։ Մեր խեղճ ազգն ալ կճանչընա, որ իրեն մեկ հատիկ փառքը, պատիվը, հարստությունն ու հաջողությունն է՝ լավ ազգայիններ ունենալ։

ԱՄԵՆԱՀԱՐԿԱՎՈՐ ՈՒՍՄՈՒՆՔ

Որովհետև իմաստության և ուսմանց սերը ազգերնուս մեջ կամաց կամաց կծավալվի, ու նոր նոր հորդորանքներ կգրվին անոնց հետևեն ըլլալու, մեծ պարտք և օգուտ կսեպենք հիշեցնել մեկ ամենահարկավոր ուսման մըն ալ փույթը, որ թե իրեն ազնըվությամբը, թե օգտակարությամբը, թե մշտաձև վախճանավը և թե ամեն մարդու ալ սորվելիք ըլլալովը, ամեն ուսմանց գերազանցն է։ Աս ուսմունքն է առաքինություն։

Թերևս ոմանք զարմանք գալով հարցնեն, թե առաքինությունն ալ ուսմո՞ւնք է։ Այսպիսի հարցմունքը այն գերազանց ուսման քիչ գործածվիլը կցուցնե։ Չէ նե՝ ավելի պետք է զարմանալ Պլուտարքոս իմաստասեր պատմագրին հետ, որ մարդ ամեն արվեստի եռևե կըլլա սորվելու, ինչվան խոհարարությունն ու ձիադարմանությունն ալ կսորվի ու միայն առաքինությունը անուն մը կկարծե և սորվելու անփույթ է. թերևս փայտահատը ավելի հնարքներ սորված է անտառները ջարդելու, քան թե մեկ կրթվող մարդ մը

իր կիրքերը կոտրելու։ Ամենքը առաքինության անունը լսած են, բայց կերևնա թե շատերը կարծեն, որ երևակայության պես տուրք մը պիտի ըլլա, որ ոմանց միայն տրված է։ Թե որ կհավատանք, թե բնական օրինաց լույսը շուտով մեր ընդաբույս կիրքերեն կխափանվի և թե միայն բնական լույսը բավական չէ մարդս իր կատարելությանը հասցնելու, և թե փորձով ալ պետք է կրից հաղթելու վարժիլ և թե աստուծո կամքը կատարելու համար մեզի հնարքներ տրված են, պետք է որ կպրելի ըլլա սորվիլ առաքինությունը. և թե որ սորվիլը կարելի է, սորվեցնելն ալ անկարելի չէ։

Իսկ աս ուսմունքը սորվելու գլխավոր միջոցն է՝ ճանչնալ անոր ազնվությունը, հարկավորությունն ու մեծությունը։ Այս ճանաչմունքը երբոր տիրապես ու կատարյալ ըլլա, մարդուս միտքը կհավանեցնե և հավանմունքը սիրելի կընե առաքինությունը, որով ինքն իրեն ալ կսորվվի։

Առաքինության այս սքանչելի հատկությունները քիչ շատ ամենուն ալ ծանոթ ըլլալով, այսչափս հիշենք հոս։

Թե որ հարկավոր են գիտությունք մարդուս միտքը զարդարելու, առաքինությունը հարկավոր է նույն գիտությունները զարդարելու։ Անոնք ամենն ալ մեկմեկ գեղեցիկ գույներ են, բայց մեկ բան մը կպակսի իրենց, որ է լույս, և առաքինությունն է աս լույսը տվողը։ Առանց անոր, լուսավոր ըսված մտքերն ալ խավար հոգի մը ունին և երկնքին գաղտնիքը հասկացող աստղաբաշխն ալ մութ անդունդի մը քովերը կպտտի։ Թող չկարծե մեկը, թե երբոր հասարակաց ուսման ջանք կքարոզենք, կուզենք ըսել, թե միայն ուսմամբ մարդս մարդ կըլլա. քա՛վ լիցի։ Չէ նե՝ ուզած կըլլայինք մեր կարդացողներուն գեղեցիկ տեսակ մը կանգնել տալ, առանց հաստատուն հիման։ Ուսումնական մարդիկ շատ եղած են՝ Եգիպտացվոց քուրմերեն սկսած ինչվան այսօրվան փիլիսոփա ըսվածները, որ թերևս մեր ազգին մեջ ալ կգտնվին։ Աշխարհքս ասոնց իմաստուն զուրցեր է, ասոնց գրվածքն ալ թերևս մտքերնիս կդրվարճացնե, բայց ինչո՞ւ է, որ սրտերնիս չվառեր դանոնք սիրելու ու իրենց մոտիկնալու։ Վասն զի անոնց առաքինության պակսությունը հավիտենական անդունդ մըն է մեր ու անոնց մեջ։ Աշխարհքիս վրա ալ լավ կերևնա, թե մարդիկ ինչ աչքով նայած են առաքինյաց վրա և ինչ աչքով առաքինություն չունեցող իմաստնոց և մեծագործ մարդկանց վրա։ Ասոնց անունը շատ հեղ իրենց պատմություններովը մոռացության ու ավերակի մեջ թաղված են, իսկ

անոնցը դարեր կանցնին թեթև կերպով։ Ասոնց անունը քաղաքական և ուսումնական պատմությունը բռնադատված է հիշելու շատ անգամ անեծքով, անոնցը՝ թեև քաղաքական բաներու հետ խառնված ալ չըլլան, հոժարությամբ և երախտագիտությամբ կհիշվին։ Կհիշվին Հռոմուլոսի պես, Արտաշեսի պես, Նաբուգոդոնոսորի պես մեծ աշխարհակալներ, բայց մեկուն ալ սիրտը չթնդար անոնց վրա։ Կհիշվի Նումա, Վաղարշակ, Կարլոս Մեծն և այլն, և ամենուն սիրտը կշարժի վրանին, վասն զի ասոնք առաքինի էին։ Այն բազմաթիվ Հռոմա կայսերաց մեջ, որոնց անունը ամոթով թաթխած է, մի՞թե չկային մեծագործ և ուսումնական մարդիկ. կային, ու շատերը իրենց ատենի երևելի ճարտասաններուն, բանաստեղծներուն կարգն էին, շատերն ալ մեծ-մեծ քաջություններ ըրած են։ Բայց հիմա անուններին սոսկում կբերե մարդուս, միայն ախորժելով կհիշվին Տիտոսի պես, Տրայանոսի պես, Ավրելիանոսի պես մարդիկ, վասնզի անոնք առաքինի էին։ Ժամանակն ու անգութ թուրը շատ հաղթական կամարներ ջնջեց, բայց շատ առաքինության հիշատակներե պատկառանքով ետ կեցավ։ Ո՞վ դադրեցուց հյուսիսային լեռներեն գետի պես վազող բարբարոսաց իշխանը Ատտիղոսը[1], որ բոլոր կայսերաց տերությունը դողացուց. միայն քահանայապետի մը առաքինությունը։ Ո՞վ այնչափ իմաստունները ազատեց թագավորին սպառնալիքեն. Դանիելի առաքինությունը։ Երբոր Հայաստան տեսակ-տեսակ կիրքերով ու չարիքներով կորստյան գիրկը կիյնար, ո՞վ բռնեց. Վրթանեսի պես, Ներսեսի պես, Սահակա պես, Ղևոնդի պես, Վարդանա պես անձինք, որ առաքինությունը իրենց զարդ ու զրահ ըրած էին։ Ասոնց անունը միշտ լուսափայլ մնաց, իսկ իրենց ժամանակակից ուրիշ երևելի մարդիկներունը ժանգահար կեցած է։ Թե որ կույր նախանձ մը և բռնություն մըն ալ անոնց պատվական արձանները կոտրտեց, սակայն իրենց արձանեն ավելի հաստատ մնացին մարդկանց մեջ։ «Թող ջարդեն,— կըսեր Դեմետր Փաղերացին Աթենացվոց համար,— թող ջարդեն իմ արձաններս, բայց չեն կրնար կործանել ան առաքինությունը, որուն համար որ անոնք կանգնվեցան»։ Ահա փարավոնին գերեզմանը, իր երկնաչափ բարձրությամբը՝ կանգնողին ցածությունը և իր մեծությամբը անոր ոչնչությունը կցուցնե մեզի։ Իսկ անոր մոտ ցամաք անապատի մը մեջ, ժայռերու մեջ ծածկված ճգնավորի մը անունը, որ և ոչ թիզ մը հիշատակարան թողուց երկրիս վրա, անմահ փառք ունի այսօրվան օրս։ Ան ատենները Ալեքսանդրիո ճե-

մարանը մեծ մեծ իմաստուններով լեցված էր, այսօր ի՞նչ մնաց անոնցմե։ Այն իմաստունները, այն աշխարհակալները սահուն աստղի պես անցեր գնացեր են, միայն առաքինիք արեգական ու լուսնի պես միշտ կմնան։ Անոնց պարծանքն ու առավելությունը իրենց համար՝ շատ շատ հիսուն կամ վաթսուն տարի քաշե, ասոնցը միշտ կմնա, վասն զի անոնցը իրենց վրա ծեփի պես զարնված է, որ մահը շուտով կփշրե, ասոնցը՝ իրենց հոգվույն թելի հետ խառնված կմնա, որչափ որ հոգին կմնա։ «Այլք ի տրամադրութեանց,— կըսե մեր Իմաստասերը Հովհաննես,— ժամանակաւ տրամակայեալ՝ լուծանեն զմիմեանս. իսկ առաքինութիւն հանապազորդ ի մեզ խնդրէ բնականալ»[2]։

Ո՜հ, ան ի՞նչ ցավալի բան պիտի ըլլա, որ մեկը բոլոր կյանքը կամ կենաց մեծ մասը աշխատելով, ըլլա լավ բանասեր մը, լավ նկարիչ մը, ոսկեգործ մը, ճարտասան մը և այլն ու կենաց ծայրը հասած ատենը չգիտնա ուր կոխելը, ամենահարկավոր ուսմունքը սորված չըլլալուն համար։ Ընդհակառակն, ի՞նչ միխիթարական բան է անոր, որ՝ «Ինչպես ծովով ճամբորդները հեռուեն ծաղկանց հոտեն կիմանան, թե ցանկալի ծովեզերքին մոտեցեր են, այնպես ինքն ալ իր առաքինությանցը հոտեն իմանա երկրի ապահով նավահանգիստը»։ Բայց ան հոտը արդեն իր բոլոր կենաց մեջ սըրտեն կզգար ու անով աս աշխարհքիս մեջ ալ երջանիկ էր։ Վասն զի միայն առաքինությունն է զմարդը երջանիկ ընող, թե հոս և թե հոն։ Պինդարոսի գերաթռիչ միտքն ալ վկայեր էր, թե՝ «Մեծ բարիք է փառքը, բայց առաքինությունը ամեն բարյաց մեծն է»։ Իմաստությունը, որ մարդուս երջանկության օգնականն է, շատ հեզ անոր թշվառությանը պատճառ է՝ առաքինության հետ չմիանալուն համար. շատ ուսմունք գիտե, բայց չգիտեր տան կառավարություն, ոչ ուրիշներու բնությանը համբերել, ոչ հասարակաց ոգվով վարվիլ, ոչ ինքզինքը կառավարել։ Որչափ անգամ տեսնված է իմաստնոց ժողով, ուր մեկը իր տրամաբանության եղջյուրները կշարժե, մեկալը իր ճարտասանության ժանիքները կցուցնե, մեկալն ալ իր մատվներուն ճարտարությունը ոգեսպան ճանկերու դարձուցած է։ Ինչպե՞ս կվերջանա ասանկ ժողովքը, ի՞նչ կընեն առանձնության մեջ աս իմաստուն գազանները... Իսկ առաքինիք, թեպետև զուրկ ալ ըլլան զանազան գիտություններե, սակայն գիտեն մեկմեկու համբերել, գիտեն ուրիշի օգնել, գիտեն դժբախտությանց մեջ Անքննելի մեծության կամքը ճանչնալ, գիտեն

իրենց ունեցած պարտքը վճարել առ ընկերս։ Շատ երջանիկ է այն առաքինի հայրը, որ ճակտին քրտինքովը իր մահու դատապարտած ընտանիքը կպահե, քան թե ան իմաստուն Որդին, որ օտար աշխարհքներե կդառնա ուսմունքներ շահած, առաքինութենեն մերկացած։ Շատ ավելի սիրելի ու հաճո է երկրի և երկնից խոնարհ, առաքինի եղբայր մը, որ իրեն տգիտությամբն ալ՝ իր հարցը անմեղ ճամբաները կերթա, քան թե իրեն գիտուն եղբայրները, որ միայն առաքինությունը չգիտնալնին կհայտնեն իրենց թափառական ընթացքովը։ Անոնք խոր ծովերու մեջ նավել ուզելով անշուշտ կկորսվին, ասիկա ծովեզերքն առած՝ կգտնե իր նավահանգիստը։

Առաքինության մեծությանը մեկ մեծ ու հայտնի վկայությունն ալ աս է, որ առաքինի չեղողներն ալ կուզեն անոր շնորհքեն չզրկվիլ ու կեղծավորության դիմակը կառնեն երեսնին։ Անով է, որ աշխարհքիս դիմացը շատ իմաստուններ առաքինի կերևնան, բայց վերջապես խաղք կելլան։

Վերջ տալով խոսքերնուս (որ միայն նյութույն հարկավորութենեն երկնցավ), աս ալ հիշենք, որ թեպետև աս ուսմունքը ամեն հասակի համար է, բայց աս ալ մեկալներուն պես ավելի մանկանց սիրելի է։ Շատ դժվար է, չըսեմ անկարելի, որ հասակը առած մարդ մը ինքը դինքը նոր կըթե առաքինության մեջ, վասն զի, նորեն Պլուտարքոսի խոսքին գալով՝ «Առանց սորվելու անկարելի է առաքինության մեջ կրթվիլ»։

Ճանչնան որեմն դեռահասակ ուսանողք իրենց բաղդը և ամեն բանե ավելի ասոր ետևե ըլլան, որ գիրենք ամեն բանե վեր երջանիկ կրնա ընել։ Աս ուսմանս գրքույկը գրած է իրենց սրտերուն մեջ, իրենց խղճմտանքին վրա։ Գրած է առաքինի անձանց ճակտին ու բերնին վրա, գրած է խելացի ու հոգեշահ գրքերու մեջ, գրած է իրենց վարպետներուն բարի խրատուցը մեջ։ Եվս առավել ուսուցիչք և վարպետք ջանան սորվեցնել աս ամենահարկավոր ուսմունքը անոնց, որ ազգին և աշխարհքիս ակնկալություններն են։ Ամեն բանե առաջ տնկեն ան փափուկ սրտերուն մեջ առաքինության սերմունքը և միշտ խնամեն ու մշակեն, աշակերտության առջի օրեն ինչվան ետքի վայրկյանը։ Դպրատանց ներսը դուրսը գրած ըլլա՝ առաքինությունն է հոս սորվելու ամենահարկավոր ուսմունքը։

ՄԱՆԻՐ ԶՔԵԶ

Մեծ զարմանքի և գովության արժանի են այն հին իմաստունները, որ իրենց վարժարաններուն ու կռատուններուն սրահը և իրենց դասատեղին ճակատը կգրեին՝ ՄԱՆԻՐ ԶՔԵԶ՝, իբրև առաջին և ամենահարկավոր դաս կարդացողաց՝ լավ գիտնալով, որ բուն զմարդս մարդ ընողն է ինքզինքը ճանչնալը։ Եկուր նայե, որ այս ամենամեծ և օգտակար գիտությունը ո՛րչափ հարկավոր է մարդուս նե, այնչափ ալ դժվարին է սորվիլը, ինչպես որ ամեն ատենի մարդիկ վկայեր են։ Բայց որովհետև աս ալ հայտնի է, թե որչափ մեկը ավելի ճանչցեր է ինքզինքը, այնչափ օգուտ տեսեր է, և որչափ որ իրեն անծանոթ է եղեր՝ այնչափ իրմե դուրս ելեր ու վնասվեր է, ամեն մարդ պիտի քաջալերվի ինքնաճանաչության դժվարություններուն հաղթելու։

Աս դժվարություններուն պատճառը մեյմը ան է, որ մեզմե դուրս եղած բաներուն ալ տգետ ենք. մեյմը մեր անձնասիրությունն է, մեյմն ալ անհոգությունը։ Արտաքին գիտությունները մեզի մեյմեկ աչք կուտան՝ մեյմեկ անգամ ավելի խորունկ նայելու մեր վրա, ու զմեզ դրսի արարածոց հետ բաղդատելու, ուստի ով որ տգետ է ուրիշ բաներու մեջ, զարմանք չէ, որ ինքզինքնին ալ լավ չճանչնա։ Անձնասիրությունը մեր թե՛ կիրքը, թե՛ ձիրքը, թե՛ կարծիքը մեզի սիրուն և հաճո երևցնելով թող չի տար, որ անոնց պակասությունը լավ քննենք։ Անոր ներհակ, ուրիշներունը մեզի անախորժ կցուցնե, կամ հպարտ նախանձ մը կբերե, որ չենք ուզեր զմեզ անոնց հետ բաղդատել ու շտկել։ Կարծիքն ալ շատ հեղ հոժարությանց հետ մեկտեղ բռնանալով՝ չուզեր գիտցածեն տարբեր բան գիտնալ. այնչափ որ, երբեմն ինչվան հայտնի ճշմարտություններն ալ անընդունելի կըլլան, և հայտնի մոլորությանց մեջ մնալն ալ հանձ կառնվի։ Իսկ անհոգությունը միանակ ալ բավական է զմարդ ապականելու։ Անիկա է, որ բանավոր մարդը անբան կդարձնե ու անոր պես առանց իրեն բնության ու բարքին վրա մտածել տալու, մեկ կյանքը անփոփոխ ջրի մը պես վազել կուտա կամ նույնաշարժ մեքենայի մը պես շարժիլ, ինչվան որ ինքնիրեն դադրի։ Մարդս, որ պզտիկուց անհոգ ըլլա ինքզինքը քննելու, անկարելի ըսեմ, բայց շատ դժվար է, որ ետքեն խելքը գլուխը ժողվե։

Աս դժվարություններուն շտկե շիտակ առաջը առնելը դյուրին բան չէ, մանավանդ տարիքը առած մարդկանց, բայց աս դիտու-

թենեն ետ կենալն ալ հանձն առնելու չէ։ Անոր համար դյուրին համբա մը սեպելու է ինքզինքը ճանչնալու, բոլոր մարդկության վրա նայիլը կամ մարդուս բնությունը քննելը։ Մարդուս բնությունը քննելու համար լավ խրատ կուտա իմաստուն մը. «Պետք է նայիլ,— կըսե,— անկե վեր և անկե վար եղածին», այսինքն՝ ճանչընալու է մարդուս մեծությունն ալ, ցածությունն ալ։ Վասն զի միայն մեծությունը ճանչնալը՝ չարաչար կհպարտացնե, միայն ցածությունը ճանչնալը՝ կնվաստացնե, ու սիրտը կկոտրե, իսկ երկուքն ալ գիտնալով՝ միջին ճամբան ալ կտեսնե իր վարքը շրջելու և կազատի ինքզինքը չափեն ավելի կամ պակաս ճանչնալու մոլորութենեն։

Մարդուս մեծության մտածությունը առջևնիս մեծ վախճան մը կբանա, որուն համար եղած ենք, և կհորդորե, որ ան վախճանին հարմարինք։ Մարդուս մեծությունը շատ կերպով կերևնա՝ թե հոգվույն կարողությանցը մեջ և թե մարմնույն, որոնց վրա համառոտ հիշատակություն մը ընենք։

Մարդուս մարմնույն սքանչելի կառուցվածքը միայն բավական է խելացի քննողի մը ճանչցնելու, թե աս արարածը մեկալ արարածոց հավասար չէ, հապա գերագույն բան մը պիտի ըլլա՝ գերագույն վախճանի մը համար։ Զգայարանաց փափկությունն ու կատարելությունը, արտաքին վսեմ ու շնորհալի տեսքը, ամենակերպ շարժմանց հաջողությունը, ձեռքին ճարտարությունը, ոտքին վարպետ քայլվածքը, որ միայն գարշապարին ու թաթերուն ծայրերովը կպտրտցնե բոլոր մարմնույն դեղեցիկ շինվածքը, բոլոր չորքոտանիներեն կզատեն զինքը։ Այն բարձր գլուխը, որ շիտակ կանգնած է բոլոր իր բնությանը վրա, կցուցնե իր իշխանությունը, այն աչվները, որ շիտակ նայվածքով երկնքին կեսը կբովանդակեն և այն երեսը, որ սրտին հայելին է, ասոնք ամենն ալ մեզի կվկայեն, թե մենք փղեն ու առյուծեն, կապկեն ու սիրամարգեն շատ վեր ենք։ Թե որ քիչ մը մարդուս ներսն ալ մտնենք, պետք է որ կանչենք Գրիգոր Աստվածաբանի[2] հետ, թե մարդս է համառոտություն տիեզերաց կամ գլուխգործոց աստուծո։

Արտաքին կազմվածքին ամենեն մոտն է իրեն ճարտարությունը, որով ինքզինքը կպահպանե։ Ի՞նչ աստիճանի կատարելություն ունի մարդս աս բանիս մեջ. բեր թե որ կուզես, փղին ահագին մեծությունը և ուղեղը, առյուծին ուժը, վագրին սրտոտությունը, կապկին հաճարությունները, ջրշունին որմնադրությունը և

ընկերական կյանքը, կամ մեղվին ճարտարությունն ու միաբանությունը և ուրիշ որչափ կատարելություններ որ կուզես, ասոնց դիմացը հանենք Փիդիասա պես, Միքելանջելոյի պես, Պղատոնին պես, Խորենացիին պես մարդ մը։ Ո՞ւր կմնան այնչափ բազմության ձիրքերը։ Բայց մենք ինչո՞ւ ասանկ պատկառելի անունները այսպիսի անարգ արարածներու կմոտեցնենք։ Երթանք խեղճ խրճիթե մը, սառնապատ երկրե մը, վայրենի անտառե մը մարդ մը դուրս հանենք, որ մարդկային բնության վերջի սահմանները հասած կսեպվի, և անբանից ամենակատարյալ ժողովարանին մեջ կեցընենք։ Այն տմարդի մարդը թեպետև դժնդակ կերպարանք մըն ալ առած ըլլա, բայց մեկեն կիմացընե, թե ան ցուցանքավոր դեմքին տակը մեծ բան կա։ Ան մարդը, եթե հանկարծ հրացան մը պարպե ան գազանաց առջևը, ո՞րը առանց սարսափելու և ապշելու կրնա տեղը կենալ, հապա թե որ այն մարդը թակարդ մը, որոգայթ մը լարե այն ահագին գազաններուն, ո՞ւր կմնա իրենց բոլոր զորությունը։ Թե որ ջրշունին ու մեղուին վրա քննություն ըլլվի, թե այնպիսի հազարավոր տարիներե ի վեր ի՞նչ նորություն, ի՞նչ դյուրություն ըրեր են իրենց տնակներուն մեջ, անոնք նորության գաղափարն ալ չունին։ Կամ կապկին ու թութակին հարցնես, թե դուք ալ չունի՞ք մեզի սորվեցնելու բան մը, որ միշտ մեզնե կսորվիք, անոնք գիտցածնին ալ չեն ճանչնար։ Մարդս է միայն, որ տերություն կցուցնե ամեն արարածոց վրա և օրենք կուտա անոնց։ Ինքն է տկար անմեղ կենդանյաց հոգացողը, կատաղիներուն դեմ կեցողը և ամենեն ալ իրեն օգուտ հանողը։ Ինքն է, որ հողուն երեսը կփոփոխե, ջրին նոր ճամբաներ կսորվեցնե, օդը իրեն ջաղացքներուն ու նավերուն կծառայեցնե, աննվաճելի կրակը կսանձե ու իրեն ուզածին կծառայեցնե՝ տկար անասնո մը պես։ Բայց իր զարմանալի կատարելությունը ավելի ասով հայտնի կըլլա, որ միայն ինքն է, որ միշտ կառաջադիմե ու ավելի կատարյալ կըլլա, որով հայտնի է, թե միայն ինքն է, որ խելք ու միտք կբանեցնե։

Խելք ու միտք, ասոնք են գլխավոր և եզական ձիրք մեծության մարդո, որով ինչվան երկինք բարձրանալու կարողություն ունի, բավական է, թե լավ գործածե այս կատարելությունը։ Խելքին հետ մեկտեղ մարդուս տրված է խիղճ մտաց կամ խղճմտանք, որ թե հանդարտ վկայությամբը թե դատողական հանդիմանությամբը խմացնե մարդուս իր մեծ վախճանը։ Նույն վախճանին մեկ մեծ ապացույցն ալ մարդուս անհագ փափագն է։ Օվկիանոսին խորքը

չափող ահագին կետ ձուկը հազար տարի կթափառի ան ջրերուն մէջ առանց սրտեն փափագ մը անցնելու, որ նոր տեսարան մը տեսներ, այլ միայն ալյաց հետ թապլտրկելով՝ օր մը ինքն ալ ալիքի մը պես ժայռի մը կզարնվի կիորտակվի կմնա։ Իսկ մարդս միշտ կարոտ՝ ունեցածեն ավելիկ կփափագի, փափագածեն ավելին կուզե սիրտը և թե բոլոր աշխարհք իրեն տաս՝ դեռ ալ ավելին ալ կուզե.

Փոքրիկ ըստեղծուած փոքունց կարօտիմ,
Բայց ես աշխարհաւս իսկ բնաւ ոչ յագիմ,

ըսավ իրավմամբ Ինճիճյան[3] վարդապետը։ Երկրիս վրա մարդ մը և անբան կենդանի մը նույնչափ տեղ կբռնեն. բայց մարդուս միտքը աշխարհքներ կստեղծե, երկինքներ կլեցնե, «Ավերակներու մեջ կթափառի,— կըսե Տրող[4],— բայց անմահության կդիմե»։ Անմահություն, ո՜վ սքանչելի և ամենապայծառ կնիք մարդկության. աս ձայնեն կիմանամ, որ մարդուս ամեն կատարելություններուն պատճառն ու նպատակը աս է եղեր։ Ասոր համար է, որ երկիրս իր սրտին պզտիկ կուգար, այն անհուն սրտին, որ չի քաշեր որ մահվան օրենքը հանկարծ գա ու խոովե իր վայելքը, իր կարգերը։ Հապա կուզե աղատիլ այն բռնական օրինաց ձեռքեն ու ճշմարիտ ազատության գավառը գտնել և հոն իր անչափ սիրտը անչափության մեջ ընկղմել։ Ասոր համար ըսին իմաստունք, թե մարդս աստված մըն է աքսորյալ։ Մեր ներսեն ուրիշ ԵՍ մըն է հոգին, կիմացնե միշտ իրեն մշտամնա բնությունը, ու կհիշեցնե իրեն դիտած մեծ նպատակը, մեծ բանը, իր երջանկությունը, որին միշտ իբրև իր բևեռին կդիմե իր էությունը։

Իրավ, ծաղկներ ու տունկեր օտար երկրի մեջ ցամքեցան մեռան, հունտեր պտուղնին այլափոխեցին, անասուններ պանդխտության մեջ մեռան, թռչնիկը վանդակին մեջ իր հովասուն ծառերուն սիրովը մարեցավ, բայց միայն մարդս իր հայրենյացը մեջն ալ՝ ուրիշ հայրենիք մը կփնտրե։

Տեսնենք հիմա մարդուս բնության մեկալ երեսն ալ։ Մարդս միայն մեկ երեսով էր առաջուց, միայն իր մեծությունը կերևնար, երբոր եղեմա մեջ ծաղկները իր ոտիցը բարձր կբլլային, առյուծը իր կառքը, արծիվը իր հրամանատարը, երկիրս իր խաղաղ սահմանը և երկինք իր երջանկության ձեղունը։ Բայց մեկ ցավալի դիպված մը, որուն ամեն ազգաց հին ավանդությունները կվկա-

յեն, մեկ մեծ դիպված մը մարդուս երանավետ բնությունը այլայլեց։ Ամենաբարձրյալի գթությունը ձեռքը երկընցուցած՝ չթողուց, որ իր պատկերը բոլորովին փոխվի, բայց թող տվավ, որ այլափոխություն կրե։ Եվ այն գեղեցիկ պատկերին վրա սև շուք մը ընկավ մարդուս նվաստությունը՝ թե մարմնով, թե մտքով, թե հոգով։

Մարմնո ցածությունը կամ տկարությունը ամենուն հայտնի է և դժբախտաբար չափեն ավելի հայտնի եղեր է. որով ոմանք զայն միայն կտեսնեն, այսինքն հազար ու մեկ մարմնավոր վիշտեր ու ցավեր, տարերց սպառնալիք, ցուրտեն սառիլ, տաքեն տկարանալ և ինչվան խելքը կորսնցնել, ջրերեն հալածվիլ կամ անոնց ծոցը թաղվիլ, անարգ ու ցած գազաններե իբրև ապստամբ ծառաներե փախչիլ, քրտինքով հողը կակղցնել և շատ հեղ հացը չգտնել, հոգնածությամբ շարչարկված՝ չկարենալ հարկավոր աշխատանք մը ալ անել։ Մեկ խոսքով, սովու, սրածության, կրակի, պատերազմի վտանգներեն գողալ, տեսակ-տեսակ հիվանդություններե փորձվիլ, ամեն գործքի մեջ վտանգներու հանդիպիլ, թշնամյաց պատահիլ, սիրելիներե զրկվիլ և ամեն անկյան մեջ մահը կեցած տեսնել մեյմեկ ղենքով։ Աս և ասոնց նման նեղություններն ալ բավական չսեպելով՝ մեյ մ՝ ալ ինքն իրեն բաներ հնարել, մարմնույն տեսակ տեսակ փափկություններ փնարել, որոնք կամ չգրտնալով տրտմիլ, կամ գտնելով՝ շարաչար վարվիլ և բնության վրա մնացած պատիվն ալ անասնական ցածություն իջեցնել։ Ինչվան երբեմն, որ ըսելու ալ սոսկումն կբերե, անխելք մտածությամբ մը ինքն իր ձեռքով կենաց թելը կտրել և հուսահատությամբ ձգել մարմինն ալ, հոգին ալ այն անդունդը, ուսկից միայն հեռացնել պիտի ջանար մարդ ինքզինքը։

Մտքին նվաստությունը հայտնի է իրեն տգիտությենեն, որով չէ թե միայն հեռու և մեծ բաներու խելք չենք հասցներ, հապա և ոչ ձեռներուս տակի բաները կճանչնանք, ինչպես ըսավ Սողոմոն։ Եվ ինքն, որ ամենաիմաստունն էր, աս ըսավ, հապա անոնք, որ ոչ իմաստության հետևող կըսվին, ի՞նչ պիտի ըլլան։ Անոնք, որ իրենցմե մատ մը դուրս բան չեն գիտեր և իրմե դուրս բան չգիտցողը իր վրա ի՞նչ տեղեկություն կրնա ունենալ։ Տգիտությունը ո՞րչափ չարյաց մեջ կձգե զմարդս, ո՞րչափ կնվաստացնե անոր բնությունը՝ կարծեմ բավական ծանոթ է ամենուն։ Ի՞նչ ըսենք հապա սրտին նվաստությանը, որ ամենեն ավելի ողբալին ու չա-

բյաց առիթն է, ինչպես բազում անգամ վկայված է, թե ամենայն չարիք սրտեն կելնեն։ Անկից է այն ծուլության ու դանդաղության հոգին, որով չենք շարժիր բարին փնտրելու, անկից է վախ ու վըհատություն, որ հոգիներուս թևերը կթուլցնեն, անկից է ցած ու անարգ բաներու ցանկություն, անկից է այն մեկ ուրիշ մարդն ալ, որ մեր մեջը կա և մեր խղճին դեմ ընել կուտա, ինչպես ըսավ Պողոս առաքյալ։ Ո՞ւր թողունք աս ցածությանց հետ մարդուս ամբարտավանությունն ալ, որ չուզեր իր նվաստությունը ճանչնալ կամ խոստովանիլ։ Հապա նախանձը, որ իրեն բարվո պատճառ ըլլալու տեղ ավելի կչարացնե ինքզինքը, խորամանկությունը, խաբեությունը, կեղծավորությունը, վրեժխնդրությունը, կասկածը և այլն, որ անդադար մարդուս սիրտը կվրդովեն և իր սքանչելի վախճանեն ետ կձգեն։ Երբեմն կուզե մարդ դառնալ անոր, բայց մեկ տխուր ու տղայական մոլորությամբ մը իրեն նմաններուն բազմությանը նայելով, իրեն օրենք մը կսեպե մոլությունը։ Ճըշմարտությունը կտեսնե ու հոգվույն թևերը կերկնցնե անոր, բայց սիրտը համառությամբ կամ կանխակալ կարծիքով կամ ունայն հեշտությամբ գինովցած՝ չարության սոսկալի գավաղանովը ինքզինքը երկինց սահմաններեն երկրիս տղմին մեջ կձգե։ Ոտվնեբուն տակը շատ հեղ կտեսնե ի՞նչ փոսեր կան, բայց սուտումուտ պատրվակներով կշանա ծածկել, որ իբր չտեսնելով մեջը կիյնա։ Իրավ չեն դադրիր ներսեն խղճին ձայնը, դրսեն՝ շիտակ ճամբա ցուցնողներունը, բայց ինքը մեկ այլանդակ խլությամբ և կուրությամբ մը, իր մոլար ճամբեն չուզեր դառնար և ինչվան այն վես հոգին, որուն վախճանը երջանկություն և անմահություն էր, ինքն իր ազատությամբը կգրկե անկեց, և նոր վախճան մը կբանա, որուն կրնանք ըսել հավիտենական մեռելություն և թշվառություն։

Մարդս իր մեծությունը և նվաստությունը ճանչնալեն ետև, հետևանքը կրնա ինքնիրեն վրա բերել, այսինքն ջանալ չկորսընցնելու այն մեծության ձիրքերը և պատերազմիլ իր մարմնույն՝ մտքին և սրտին բերած ցածությանցը դեմ, այն ատեն սորված կըլլա աս դասը՝ ԾԱՆԻՐ ԶՔԵԶ։ Զգուշանալ մարմնո նվաստութենեն՝ խոհեմության և չափավորության կանոններով, որով մարմինը հոգվույն հետևող ընե և ոչ աքացող, լավ գիտնալով, որ բարեկարգ մարմինը բարեկարգ հոգվո օգնական է և նշան։ Եվ ինչպես որ թագավորական ազնիվ պատկեր մը ազնիվ շրջանակի մեջ կդնեն, այնպես ալ պիտի ըլլա մարմինն ալ հոգվույն վրա։ Փախ-

չիլ պղերգութենն, որ ամեն շարյաց փոս կփորե, փախչիլ փափկութենե, որ ողջ-ողջ զմարդս կթաղե, փախչիլ մտքին նվաստութենեն, լուսավորելով զայն օգտակար տեղեկությամբ, մանավանդ այնպիսի բաներով, որ ինքզինքը իրեն ճանչցնեն և իր վախճանին կշտկեն, փախչիլ սրտին նվաստութենեն, զսպելով և բանավորության կարգին բերելով անոր կրքերը, որոնց վրա հաստատած է իր բախտը։ Փնտրել, գտնել և հետևիլ այն կանոններուն, և չընմանիլ անոնց, որ մարդկային և ինքնահնար կանոններով նոր ճամբա կուզեն բանալ անօգուտ ջանքով, անոնց նման, որ կուզեն ծովուն հատակը փոխել։ Եվ սակայն ասանկ նոր ճամբաներ, նոր կանոններ հիմակվան ատենս շատ կտարածվին, մեր աղգին մեջ ալ բացված կտեսնվին, որոնց խղճալով մը ըսելու է թե ծանիր զքեզ։

Բայց անոնք կըսեն. մենք լավ կճանչնանք և կուզենք ուրիշներուն ալ ճանչցնել իրենց բնությունը, իրենց ազատությունը, իրենց մտքին ճամբաները. աս ըսելով կաշխատին։ Եվ վերջապես իրենց ճանչնալը կնմանի մեր նախածնողաց ճանաչմանը, որ ունեցան իրենց երանության վերջին վայրկենին մեջ։ Մարդկությունը ճանչընալու իմաստակությունը զորացած է, զգույշ կեցիր չխաբվիս։ Աս իմաստակները մարդուս կարողության և ազատության ծայրերը բռնած, վրան խատուտիկ կեղծավորության հագուստ մը հագուցած, զարմանալի բանի մը պես կցուցնեն իրենց քարոզներուն, իրենց գրվածներուն մեջ, նման խանութներու մեջ դրած պատճուճապատանքի, որ թեթևամիտ տեսողաց համար նմանության օրինակ կըլլան։ Հարցո՛ւր իրենց, տեսնես ի՞նչ խելք կա քովերնին, ի՞նչ բաներ գիտեն մարդուս վրայոք, որ մեր պարզամիտ և պարկեշտ հայրերը չեն գիտեր, ի՞նչ ջանքով ետևե եղեր ու ճանչըցեր են իրենք զիրենք։ Բայց վախեմ թե ասոնց համար ըսած է Ոսկեբերան վարդապետը. «Նայե զգուշացիր շատ բան ճանչնալեն, գուցե ինքզինքդ ալ ճանչնաս»։

Բայց ով որ իր մտքին հավանությենեն անխռով ներքին ձայն մը կլսե, թե ծանիր զքեզ, կրնա ճանչնալ աս նոր ծանոթարարները և զգուշությամբ ճշմարիտ ծանոթություն տվողներուն հետևիլ։ Առնուլ ինքզինքը մեկ բարեկամի մը պես իր դիմացը և ըսել. է՜, մարդ, քու վիճակդ բարձր ու մեծ է, եկուր նայինք, ինչպե՞ս պիտի հասնիս անոր։ Մեկդի դիր սա մարմնույդ մտքիդ հոժարությունները, որոնց խիղճդ չհավնիր, կտրիճ կեցիր աշխարհքիս դեմ,

քննե ատ նոր վարդապետություններն ու օրինակները և անոնց հետևե, որ քու խղճմտանքիդ և մանավանդ առաքինի մարդկանց խղճմտանքին հարմար են և ճշմարտությենե առաջ կուգան։ Եկուր նայինք, դու ի՞նչ բնավորության տեր ես, ի՞նչ խառնվածքի մարդ ես, ի՞նչ պակասություններ ունիս բնությանդ մեջ, ի՞նչ բանի կարոտ ես մարդ ըլլալու և ի՞նչ դեղ պետք է նե՝ առ. ծանի՛ր զքեզ և մարդ եղիր։

Միտքս առակ մը ընկավ, ան ալ զուրցեմ։ Մեծ թագավոր մը իրեն համար ոսկիե թագ մը շինած, կուզեր ազնիվ քարերով զարդարել. գտավ, բայց ավելի պետք էր։ Կային թագին համար ուրիշ պատրաստ քարեր ալ, բայց դժբախտությամբ տղմի մեջ ընկած կեցած էին։ Իմացան աս քարերը իրենց ինչ ազնիվ բաներ ըլլալնին, և ինչ խեղճ վիճակի հասած ըլլալնին և թե դարձյալ կրնան իրենց բնական փառքին հասնիլ։ Սիրտ ըրին, ցատկեցին ջրի մը մեջ, լողացին, մաքրվեցան, գուներնին, լույսերնին առին ու վերացան թագին բոլորն առին, մեծ թագավորին պայծառ թագին վրա փայլփլեցան։

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ ԵՎ ԻՐ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Այն սակավավոր անձանց մեկն է՝ աս վարդապետը, որ թե՛ իրենց անարատ վարքովը, թե՛ ազգին բարերար ըլլալով և թե՛ օտարաց օգտակար, արժանապես մեծ կրսվին երկրիս վրա ալ, երկինքն ալ։ Հայաստանի երկու հազար տարվան հյուսած ուսումնական պսակին ամենեն պայծառ ծաղիկն է։ Մեր ազգին բարեբարաց մեջ այնչափ իրավունք ունի առաջին ըսվելու, որչափ որ անոնց շատին բարիքն հիշեցնողը ինքն է մինչև այսօր։ Հայոց ազգին անհրաժեշտ մեկ պարտքը պետք է ըլլա նաև այնպիսի անձի մը վարքը գիտնալը, որ արժանապես ըսվեցավ հայր եկեղեցվո և հայր դպրությանց, սուրբ և մարգարե, պատմաբան, հնախույզ, գլուխ բանասիրաց, պերճախոս, քերական, քերթողահայր, աշխարհագիր, թարգմանիչ, դպրապետ և այլն, թեպետև իրեն այսչափ մեծամեծ արդյունքը և մեր պարդ ոճը չեն ներեր իրեն արժանի վարք մը, թող թե մեծ գովեստ մը հյուսել հոս։

Չորրորդ դարուն վերջերը (կամ 370-ին) Հայաստանի ընծայվեցավ Մովսես, Տարոն գավառին Խորեն կամ Խորնի ավանը, անոր

համար Խորենացի ըսվեցավ։ Աստված զինքը իր ալգին կրկին պարգև մը ընելու համար կյանքը ինչվան 110 կամ 117 տարի երկընցուց[1]։ Բոլոր ան դարը Մովսես Երկու բանի ետևե եղավ՝ աստվածպաշտության և իմաստության և երկուքին մեջ ալ, կրնանք ըսել, թե հասակին հետ աճեցավ և ան վսեմական զգացմունքներով գրեթե երկիրս ու իր երկրավոր նյութը մոռցած էր։ Բնությամբ փափուկ, մտավոր աշխատանքներով մարմինը տկարցած և այնչափ երկար ապրիլը իր սակավապետ և ժուժկալ կենացը նշանն է։

Ան ատենն, որ աստված նորաստեղծ հայկական տառերով սրբուն Մեսրոպա ջանքը վարձատրեց, հանեց զԽորենացին ալ իր ջանասեր ընկերներովը, որ իրենց ճարտար գրչովը Հայկա ու Արամա լեզուն խոսեցնեն նաև մարդուս աչքերուն։ Կերևնա թե նորահաս երիտասարդ մըն էր Մովսես, ընկերներուն հետ իմաստություն սորվելու խրկված ատենը. միտքը զարդարված վառվռուն աշխուժով, սուր հիշողությամբ, ընտիր ախորժակով, իմաստության սիրով ու նախանձով և «կատարելագոյն յարմարությամբ», ինչպես ինքն ալ կվկայե։ Ժամանակին ագահ, գրքեր խառնելու անխոնջ, շրջան ըրավ, պտրտեցավ Սյունիք, Եդեսիա, Անտիոք, Բյուզանդիոն, Աթենք, Հռոմ, Պաղեստին, Աղեքսանդրիա[2], մեկ խոսքով, ան ատենվան աշխարհիս ամենեն ծաղկած քաղքները, խելացի մեղուի պես քաղցր ծաղկներու վրա իջնալով և ճարտար նկարչի պես զանազան գույներով միտքը զարդարելով։ Երկար ատեն կեցավ Աղեքսանդրիա, որ գրքերու շտեմարան էր, հոն երևելի իմաստասեր մը գտավ, որ իմ նոր Պլատոնս կանվանե։ Ցդիտցվիր, Կյուրեղ Աղեքսանդրիո[3] հայրապե՞տն էր աս Պլատոնը, թե՞ արտաքին իմաստասեր մը, ուսկից շատ բան սորվեցավ։ Հոն թերևս Պապ Աղեքսանդրիացվույն[4] աշխարհագրությունն ալ աչքե անցուց և Պտղոմեոսի[5] գրածին հետ բաղդատելով, շինեց համառոտ աշխարհագրություն մը։ Գրքերե զատ՝ շատ բան ալ իր ընկերներեն և իր ազգային ճամբորդներեն տեղեկացավ, անանկ որ իր դարուն ամենեն հմուտ անձանց մեկն էր աշխարհքիս վրա։

Այսպես կենդանի գրատուն մը դառնալով, «Այնչափ աշխատանքես վերջը,— կըսե ինքն իր բերնովը,— կդառնայի հանգչելու իմ հարցս քով, Սահակա և Մեսրոպա։ Անոնց մեկ քաղցր նայվածքը, մեկ ժպիտը իմ ամեն նեղություններս մոռցնել պիտի տային։ Ո՞ գիտե, ի՞նչ տաք սրտով գիս պիտի գրկեն, ինչպե՞ս պիտի քննեն զմեզ ու զարմանան մեր առաջադիմությանը վրա, ի՞նչ

հայրական աննախանձ սրտով պիտի ցնծան, երբ որ տեսնեն, որ զիրենք ալ անցուցեր եմ... Ես ալ իմ ուրախությանս երգերը կպատրաստեի անոնց առաջին ճխալով երգելու»։ Ափսո՜ս, նման ան որդվույն, որ երկար օտարութենե դարձած՝ ծնողական տունը մտած ատենը հորը դիակը դուրս հանելուն հանդիպի, Մովսես մտավ Հայաստան։ Ո՞ւր են ան ուրախական երգերը, որոնց պատասխանը կարծես թե չերգած պիտի լսե։ Տխուր լռություն չորս դին պատեր էր, կախված երեսներ դիմացն ելան. ցավալի՜ փոփոխություն։ Հյուսիսային Ասիո ամենեն երևելի թագավորությունը՝ Արշակունյաց վեց հարյուր տարվան գահը կործաներ էր, արևելյան եկեղեցվո փառավոր մեկ քահանայապետության ցեղը հարյուր հիսուն տարին վերջը դադրեր էր, Սահակ ու Մեսրոպ, Մովսեսի սրտին մխիթարանքը ու սիրելիները՝ գերեզմանական քարով ծածկվեր էին։ Ալ անկե ետև «Աչվներս արցունքի աղբյուր, շրթունքս ողբոց երգարան դարձան»[6] կրսե։ Աս ցավը, աս սուգը ինչվան իր մահը չկրցավ մոռնալ, վասն զի իր արծվային հոգետես աչքովը լավ կըտեսներ Հայաստանին ըրած կորուստը և ապագա չարիքը, որոն սկիզբը իրոք ալ տեսավ։

Թե որ բազդ ըսածդ կույր չըլլար, մանավանդ՝ թե որ աստուծո կամքը մեր փափագին հետ միանալու ըլլար, Մովսեսի՝ իրեն ուղած Արամա ու Տիգրանա օրերը պետք էին, որ թագավորական ուժին վրա կոթնած՝ Աթենքի դարերը Հայաստան փոխադրե և Հունաստանի նախանձելի նախանձորդ ազգ մը հանե։ Բայց զուրկ մնացինք աս երջանկութենեն։ Պարսից պատերազմը Հայաստանի եկեղեցին ալ, ատյանն ալ, ուսումնարանն ալ պղտորեց։ Վռամշապուհ չկար, որ ազգին արթնցած եռանդուն հանճարները գրկե ու վարձատրե, Սահակ ու Մեսրոպ չկային, որ Մովսեսը իրենց վարժարաններուն գլուխ դնեն։ Երկայն ձմեռներե վերջը խաղաղ ու զվարճալի գարուն մը տիրեր էր քսան տարիի չափ Արշակունյաց մեջ, իսկ հիմա մրրկալից եղանակ մը հասեր էր, ուր ամեն մարդ իր գլխուն ճարը կմտածե, ոչ մեծին նայող կա, ոչ փառավորին։ Պետք եղավ, որ Մովսես ալ հասարակ մարդու ու աննշան վարդապետի մը պես մոռցվի, աչքի տակ չինկնա ու Հոմերոսի պես բեռը կոնակը շալկած, գեղեգեղ, դռնեդուռ պտըտի, ծանր հառաչանքով մը սրբելով ան ճակտին քրտինքը, որ երկրորդ անգամ ծընավ մեզի մեր Հայաստանը. և սակայն շունչը բերանը հասած ատենն ալ մեկ հանգստարան մը չէր գտներ, ինչպես ինքը կվկա-

յե։ Տխուր ու ամոթալի փոխարեն, որ շատ անգամ մարդիկ իրենց մեծամեծ բարերարացը հատուցեր են, ու ցավով սրտի պետք է խոստովանինք, որ մեր հայերն ալ շատ հեզ։ Անոր համար մեր նոր ուսմանց ծնող երանաշնորհ Մխիթար հայրն[6] ալ կըսեր իր աշակերտներուն. «Բարձցուք ըստ Մովսիսի Խորենացւոյ ինքնին զպարկս մեր ի ճանապարհի»։

Տասը տարիի չափ ասանկ անցնելեն վերջը ժամանակը քիչ մը հաշտեցավ։ Խաղաղության հով մը փչեց, արևը սկսավ երևնալ Հայաստանի վրա, թեպետ և միշտ ամպերու մեջեն։ Անծանոթ չմընաց Մովսես. այսպես լույսը վերջապես կհայտնվի, թեև երբեմն շատ ուշ։ Որչափ որ անմխիթար էր Հայաստանի բախտին վրա, այնչափ ուրիշներուն մխիթարության ինքը պատճառ եղավ և սկըսան բան ճանչցողները Սահակ Արծրունվույն հետ վկայել իրեն, թե՝ «Դու մեզի երկրորդ Սահակ ու Մեսրոպ ընծայեցար՝ անոնց առ աստված փոխվելեն ետև»։ Աս վկայությունը երևի դարերն ալ հաստատեցին, միշտ զինքը երկրորդ ուսումնական լուսավորիչ սեպելով։ Եվնկա Կողբացվույն մեռնելեն ետև զինքը Բագրևանդա և Արշարունյաց եպիսկոպոս ըրին։ Շատերը եկան իրեն աշակերտելու, որոնցից գլխավորները կերևան իր պզտիկ եղբայրը Մամբրե, իր քեռորդին Դավիթ Անհաղթ, Ստեփաննոս Սյունեցին, Թեոդորոս և այլն։ Ինքն առաջինն եղավ, որ հայերեն լեզուն քերականական ու ճարտասանական կանոնաց վրա առավ, անոր համար ալ Քերթողահայր ըսվեցավ. ամեն ուսմանց ալ վարդապետ կրնար ըսվիլ, անոր համար կկարծվի, որ ինքն էր սրբուն Սահակա դպրապետ ըսված Մովսեսը, թեպետև աս բանս իր դուրս երթալեն առաջ պիտի ըլլա։ Ինքն էր նաև հայրապետանոցին դատավոր ըսվածը Վարդանանց պատերազմեն առաջ, ինքն էր Կարին քաղքին շինությանը կամ նորոգությանը վերակացուն. թե որ աս իրավ ալ չըլլա, կցուցնե իր մեծ անունը և հարգը։ Ինչվան խոր ծերություն իր բանը և գործն էր հոգևոր և ուսումնական լուսավորությամբ լուսավորել իր ժողովուրդը, շատ բան շարադրեց, ավելի շատ ալ թարգմանեց։ Շատերը իրմե տեղեկություններ կուզեին, ամենուն ալ սիրով կուտար։ Այսպես իր մնացած գրվածներուն մեծ մասը մեկ իշխանի մը կամ աշակերտի մը խնդիրքով գրած է։

Չգիտցվիր, թե ո՞ր տարի զրկվեցավ Հայաստան իր կենդանի փառքեն, իմաստնոց Նեստորեն։ Ե՞րբ ան հոգին դարձավ երկինքը, որուն ազնվագույն պարկեշտերը միայն երկրիս վրա կփնտրեր,

այսինքն է՝ երկնային սերը և իմաստությունը։ Մեր ժամանակագիրները Զենոն կայսեր ատեն՝ 487-ին կդնեն իր մահը։

Իսկ իր հարյուր տարվան մտավոր աշխատանքները ո՞ւր են հիմա։ Բաբե՜, գրատուններ կարդացողին ու գրողին գործքերը մե՞կ հատորի մը մեջ ամփոփված են... Ո՜վ անխնա ժամանակ, որչա՜փ պարտական ես Խորենացվույն և Հայոց դպրությանը։ Ո՜հ, արդյոք պիտի տեսնե՞նք ան երջանիկ տարին, որ իր գրվածներեն նոր բան մը երևան հանելով՝ քու խիստ թանկագին հափշտակություններեդ մեկը ջնջես վրեժխնդիր իմաստության ցանկեն։ Ո՞ր բարերարը արդյոք պիտի ժառանգե այն անհամեմատ փառքը, որ ասանկ գյուտ մը ազգին ծանուցանե։

Բայց քանի որ աս ցավուն ու կսկծելի հուսո մը մեջ ենք, դառնանք գոնե աչք մը տանք ան մեկ քանի մնացորդներուն, որ հազար չորս հարյուր տարվան ժամանակին ալեկոծութենեն ազատած՝ հասան մեզի և զանազան կողմերե մեկտեղ եկած՝ առաջին անգամ 1843-ին բոլոր մատենագրությունը տպվեցավ[8]։ Աս գրվածքներս են. Պիտոյից գիրքը, որ իր Թեոդորոս աշակերտին համար գրեց, ճարտասանական գրվածներ և օրինակներ՝ Թեովն Աղեքսանդրիացի հռետորին հետևելով, շատ բան ալ քովեն շինած, կորսված հույն հեղինակներու վկայություններ ալ կբերե, թեպետև զուրցվածքը և միտքը խրթին, բայց սքանչելի և հստակ դարձվածքներ ունի։ Քերականական գրվածքներու հատվածներ, որոնցմե ոմանք ուրիշ Մովսիսի մը գրվածք կկարծվին։ Հռիփսիմյանց ճամբորդության պատմությունը, որ հայոց պատմության և հին կրոնիցը վրա ալ լույս կուտա։ Հռիփսիմյանց վրա գեղեցիկ և սրտանց գրած ճառ մը, որ իր վերջաբանին մեկ խոսքեն կկարծվի, թե Խորենացվույն առջի գրվածներեն մեկն ըլլա։ Վարդավառի ճառը։ Սուրբ Աստվածածնա ազգատոհմին պատմությունը, որ Պաղեստին եղած ատենը տեղեկացեր էր, և Սուրբ Աստվածածնա հրաշալի պատկերին և անոր ննջմանը վերափոխման պատմությունը։ Աս պատմությունը, Սահակ Արծրունիին գրելով, մարգարեությամբ իրեն կգրե, թե քու ցեղեդ իրեք եղբարք հավատքի համար պիտի բռնվին, մեկը պիտի ուրանա, երկուքը պիտի նահատակվին, ինչպես որ եղավ երեք հարյուր տարիեն ետև։ Նույնպես կգուշակե, թե քու ցեղեդ թագավորություն պիտի ելլե, որ ան ալ ելավ։ Շարականներ։ Աղոթք մը։ Վերոհիշյալ աշխարհագրությունը՝ համառոտ, բայց շատ հմուտ, այնչափ որ Սեն-Մարտեն գաղ-

դիացի հայագետը[9] աս դարուս սկիզբը պնդեց, թե ատիկա Խորենացիեն ետքը գրված է՝ մեջը շատ տեղեկություններ ըլլալուն, որ ետեի դարերու մեջ իմացվեցավ։ Ասոր լավ պատասխան տված է բազմարդյուն Ինճիճյանը[10]։ Հայոց պատմությունը, որ գանձ է անգին։

Իսկ թարգմանածներեն, որ խիստ շատ էին, հիմա և ոչ մեկը հայտնապես իր անունովը կճանչցվի, հապա կարծիքով միայն կըսվի, թե իրն ըլլան Ագեքսանդրի վարքը, Աստվածաշնչի մեկ մասին սրբագրությունը, սրբոց հարց քանի մը գործքեր, թերևս Եվսեբիոսն ալ և այլն։ Ասոնցմե պատ պատմության մեջ շատ երևելի դիպվածներուն վրա կխոստանա զատ գրել, որ անշուշտ գրած ալ կըլլա։ Ասոր մեկ ապացույցն ալ է իր պատմության չորրորդ մասը, որ դժբախտությամբ դեռ մեր ձեռքը չէ հասած, բայց Թովմա Արծրունին Թ դարու մեջ կվկայե թե «Գրեաց զգիրս պատմութեան Հայոց մեծաց հրաշագան յսրինուածով, սկսեալ յԱդամայ մինչև ի Ջենոն կայսր... Որպէս գրեալ աւանդեցաւ մեզ այս ի Չորրորդ գրուագի իսոստաբանութեան պատմութեան Մովսէսի Խորենեցւոյ, վերադարձութեան ի վերայ երեցունց գրուագեալ հատուածին»[11]։

Աս պատմությունը, ինչվան հիմա ճանչցված թե Մովսիսի և թե Հայաստանի ամենեն պատվական գրավոր գործքը ըլլալով՝ թե մեր և թե օտար ազգաց առջև, չենք կրնար հոս լռությամբ անցնիլ, վասնզի անով է, որ Հայաստան իր հին ու կարված գրականության մեկ ճաշակը կառնե։ Անով հազար չորս հարյուր տարվնե ի վեր Հայք իրենց ազգը և փառքը կճանչնան, ան է բոլոր աշխարհիս դիմաց մեր հին ազնվականության վկայագիրը, որ ուրիշ ազգ մը չկրնար հափշտակել կամ ուրանալ, անով կրնա Հայաստան պատմագրության մուսային իմացնել, թե կրնա առանց առասպելաբանության հին պատմություն մը գրվիլ, անով հունաց և հռոմայեցվոց պատմիչները քանի մը տեղ սրբագրել և տեղ-տեղ հնության կամ ընդհանուր պատմության վրա նոր լույս ծագել, որ ուրիշ տեղեն անկարելի է առնելը։

Խորենացվույն պատմության գլխավոր աղբյուրներն են. Ա. Մարիբասա գրած պատմությունը Վաղարշակ թագավորին հրամանով, որ Նինվեի հին դիվաններեն հանեց։ Բ. Քանի մը ազգային և մեհենական պատմիչներ, ինչպես են Ղերուբնաս, Ուղյուպ, Խոռհոբուտ, Բարդածան և այլն։ Գ. օտար պատմիչներ արևելյան և արևմտյան ազգերե։ Դ. Դիվանական գրվածքներ՝ թե՛ թագավորաց

և թե՛ առանձին իշխանաց և Ե. Ավանդություններ, ազգային երգեր, զանազան հիշատակարաններ։

Այսչափ աղբյուրներե հանած պատմությունը կցուցնե, թե Խորենացվույն ջանքն էր ճշմարիտ պատմություն դրել, վասնզի բուն պատմության հոգին ալ ճշմարտությունն է։ Անոր համար, ուր որ ուրիշ պատմիչներեն կտարաձայնի, հայտնի է, որ ավելի ճշմարտանման և հիմա կորսված պատմչաց հետևեր է, որոնց մեկ քանիին անունն՝ ալ կհիշե, և թե որ մեջը առասպելներ ալ կան՝ հոն ինքն ալ կվկայե, թե ասոնք առասպելներ են։ Ոչ երբեք ճշմարտությունը շուքի տակ կթողու, ինչպես կընեն հին հունաց և հռոմայեցվոց պատմիչները, անոր համար գաղղիացի մատենագիր մը կըսե. «Խորենացվույն մեջ չհավատալի բանին ալ հակառակվիլը դժվար է»։ Բայց ափսո՜ս, որ աս բանիս լավ ուշադրություն չընելով, և արևմտյան գաղափարներով նախապաշարված, որ Խորենացին ալ արևելյան թանձր մատենագրաց կարգը դրեր էին, քանի մը հեղինակներ անոր ճշմարտությանը դեմ տարակույսներ հանեցին և վար զարկին, ինչպես Ֆրերե, Վոլնեյ, Վիսկոնտի և այլն, թեպետև շատ տեղ ալ գովելով, անկեց վկայություն կբերեն։ Վոլնեյի հոգվով գրողին, որ իր իմաստությանը վրա չափեն ավելի վստահացած՝ չէ թե միայն Մովսես Խորենացիին պատմությունը, հապա Մովսես մարգարեին գրածն ալ կուրանա, ավելորդ էր պատասխան տալ։ Բայց որովհետև ավելի բարեսերներ ալ նույնպիսի կարծիքներ ունեցեր են և կունենան, համառոտիվ հիշեցնենք որ՝ Ա. Բոլորովին ծուռ է ան կարծիքը, թե Մովսես արևմտյանները թողած արևելյաց կհետևի, որովհետև ինքն իսկ Խորենացին պատմությանը սկիզբը կվկայե, թե ընդհակառակն, ավելի հունաց գրվածներուն հետևած է՝ անոնց ավելի ջանքով գրելու համար։ Ասով հայտնի է՝ Բ. Թե ուր ալ որ քաղդեացվոց կամ պարսից հետևեր է, լավ քննությամբ հետևեր է։ Գ. Խորենացիին հունաց մատենագիրներն ալ մաղած ըլլալը հայտնի է հիշած մատենագիրներեն, որոնցմե ոմանք կորսված ըլլալով, չենք կրնար անոնցմե առած բանին վրա վճիռ տալ։ Ո՞ւր թողունք, որ շատ տեղ տարակուսական բաներու համար շատ վկայություններ մեկտեղ կբերե Խորենացին և կբաղդատե, հայտնի է, որ շատ տեղ ալ լռելյայն կընե աս բաղդատությունը. աս ալ իրավ է, որ Խորենացվույն մեկ խոսքեն շատ բան իմանալու է և խոր քննելու է։ Դ. Ինչ որ վերը ըսինք, քիչ մը եվրոպական նախապաշարմունքն է, որ հունաց և հռոմայեցվոց

պատմիչները չափեն ավելի հարգի սեպած է, կամ թե ըսեմ արեվելյանները չափեն պակաս։ Իսկ Խորենացվույն համար պետք էր մտածել, որ թեպետ արևելցի, այլ ամենևին հունական կրթությամբ և իմաստասիրությամբ վարժած՝ անոնց իմաստուններեն իր լեզվովը միայն տարբեր է, իսկ արևելյան բաներու տեղեկությամբ, գերազանց, ինչպես ինքն Ֆրերե ալ կհարկավորի խոստովանիլ, թե Խորենացին արևելցի ըլլալով՝ արևելյան բաներու ավելի տեղյակ է և պատմության մեջ քանի մը բան կա որ պետք է իրմե լույս առնել, կամ հունաց հետ բաղդատել[12]։ Ե. Ասով չկարծեն եվրոպացիք, թե մենք ալ, ազգասիրական նախապաշարմամբ, Խորենացին անսխալ կճանչնանք. այսպիսի տարակույս աստվածաշունչ գրոց վրա միայն է, որ չունինք։ Հապա Խորենացվույն ջանքին, հմտությանը և սրբությանը վրա նայելով կվկայենք, թե ոչ երբեք կամավ սխալվեր է, կամ առանց քննության դրեր է նաև ան բաները, որոնցմով կտարաձայնի ուրիշներեն։ Թերևս տեղ տեղ իր ընտրությանը մեջ սխալած է, զարմանք չէ և ոչ այնչափ ամոթ, որչափ ղինքը խմբագրել ուզողներուն սխալմունքը։

Խորենացու գլխավոր պակասությունն է իրավցնե՝ ժամանակագրություն չընելը, որ այնպիսի գործքի մը խիստ հարկավոր էր և առանց անոր շփոթություններ կծագին։ Ինքն որ այնպես մտադրությամբ քններ էր Կտեսիասը, Դիոդորոսը, Ափրիկանոսը, Հովսեպոսը, Եվսեբիոսը, Աստվածաշունչը և Աստվածաշնչին վրա գրած մեկնությունները և իր պատմության սկիզբը զանազան համեմատություններ կընե, ինչու պատմության մեջ ալ չխառնեց՝ չգիտցվիր։ Թերևս միտք ուներ գրելու, կամ թե գրած ալ ըլլա ժամանակագրական ցանկ մը բոլոր պատմության ետևեն։

Ճշմարտության հետ ունի Խորենացին ուրիշ հարկավոր և լավ հատկություններ ալ՝ ստույգ հնչմունք արևելյան անվանց, անկողմնասիրություն և արդար դատաստան։ Թերևս իրեն նման պատմագիր մը չկա, որ ազգային հոգին արդարության հետ այնպես լավ միաբանած ըլլա։ Կսիրե ազգը և շատ ալ, բայց ոչ երբեք պախարակելի գործքը առանց հանդիմանության կթողու, ինչպես և ոչ ալ առաքինին առանց գովության։ Այնպիսի դիպվածներու մեջ մեկ վսեմ և ծանր կերպ մը կառնե, որ կարծես թե անդիի աշխարհքին անայլայլությանը մեջ դատողական աթոռի վրա նստած է, բայց դեռ սիրտը հայրենյացը վրա կբաբախե։ Ազգային և հին սովորությանց տեղեկություն կուտա, թեպետև ոչ որչափ կփափագեինք, բայց աս

բանիս մեջ ալ շատերե վար չմնար։ Եվ ինչպես Հոմերոս ամեն ազգաց դաղափարներուն աղբյուր է, այնպես ալ Խորենացին մեր ազգային պատմչաց և հնախոսաց աղբյուրն է եղած։ Իրեն հատուկ է լակոնաբանություն, այսինքն՝ կարճ զուրցվածք, բայց ճարտասանական ուժով, գեղեցիկ դարձվածք, աշխույժ նմանություն մը, ախորժելի ցվարճաբանություն մը, լավ հայկաբանություններ, խելացի իմաստներ և խորհրդածություններ, որոնցմով քանի մը մթությանց և հելլենաբանությանց պակսությունը կլեցնե և այնչափ ավելի ներելի է աս բանիս մեջ, որչափ որ ինքն ալ կխոստովանի, թե ծերության, հիվանդության և զանազան թարգմանությանց դրաղմունքով չկրցավ ուղածին պես կոկել գրածը։ Բայց այնպիսի ստթից մեջ այսչափ գեղեցիկ գրելը կցուցնե իր մտքին սովորականե վեր ուժը և կատարելությունը և չկրնար մեկը այս վկայությունը տալ իրեն, երբոր տեսնե, որ մեկ ժամու մեջ վարպետ նրկարչի պես ուղած գրիչը կշարժե, երբեմն պերճախոս, երբեմն նկարագիր, երբեմն ողբերգակ, երբեմն իմաստասեր, երբեմն սուրբ վարդապետ և մարդարե. և իրեն լայն ճակատին վրա ճառագայթած՝ Երոդոտոսի, Հոմերոսի, Պլատոնի հանճարը և Երեմիայի լույսը։

Արժան է, որ Հայաստան նոր երախտագիտությամբ մը նայի աս մարդուն վրա, որ ճշմարտապես իրեն հայր եղավ և աղատեց իրեն անունը և փառքը ժամանակին զրկանքներեն, ծուռ կարծիքներու ձեռքերեն և արևելյան աննշան ազգաց կարգեն։ Խորենացվույն հետ փառավորվի իր մեկենասն ալ՝ Սահակ Բագրատունին, որ այնպիսի՝ օրհնյալ ձեռքի մը շարժիչ եղավ և անոր գրվածքին գլուխը արժանացավ իրավապես իր անունը և գովեստը կարդալու*։

---

* Խորենացվույն պատմությունը առջի անգամ թարգմանվեցավ լատիներեն 1728-ին, Վիստոն ըսված անգլիացի երկու եղբայրներուն ջանքովը. ասոնք աս պարծանքս ունին, որ արևելքի ամենեն պատվական գրոց մեկը եվրոպական տաճարը մտուցին։ Ասկե տասը տարի մը առաջ էր Վալյան ասպետը գաղղիարեն թարգմանեց ու տպեց Փարիզ և նորեն սրբագրելով կրկին տպեց 1841-ին հոս Վենետիկ։ Հոս տպվեցավ 1841-ին իտալերեն թարգմանությունն ալ ընտիր շարագրությամբ, առաջաբանությամբ և ծանոթագրություններով։ Գաղղիացի թարգմանիչն ալ 1845-ին Փարիզ տպեց ընդարձակ ծանոթություններ Խորենացվույն մեջ հիշված հատուկ անվանց վրա։ 1809-ին, Հովհաննես անունով հայ սարկավագ մը ռուսերեն թարգմանեց Խորենացին ու տպեց ի Պետերբուրգ։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՎԱՐԴԱՊԵՏ

Բնատուր մեծ հանճար՝ կրթությամբ և երկար ուսմամբ կըրկին մեծցած և զորացած, բարակամիտ ըմբռնումն և վարպետ բացատրություն, լեզու և արվեստավոր, բայց հստակ և հայկաբան։ Արտաքին և աստվածային գիտությանց հմտություն, քաջախոհ դատողություն, վսեմ և անգրգիռ ոգի, անխոնջ հետաքննին և սիրող ստուգության, պատկառելի ծանրությանը հետ զվարճախառն ընտանություն, միանգամայն և մեկ զարմանալի խորհրդավոր կերպ մը՝ որով կարծես թե ինքզինքը կքողարկե հասարակ նայվածքներեն,— ասոնք են մեր մեծանուն Հովհաննես Սարկավագ վարդապետին։ Հատուկ բնությունը, բարքը, ձիրքը, որ ախորժելի պարտք մը կդնեն մեր վրա, որ ծանոթություն մը տանք իր վրայոք իրեն համազգայցը։ Վասն դի աս ձիրքերովն է, որ ինքը իր գտնված ժամանակին և դիպվածոցը մեջ զինքը ճանչցողներուն զարմանք բերելեն զատ, իմաստությամբը թողած հիշատակարաններովը անմահ է այսօր ալ և անմահ պիտի մնա միշտ մեր գրականությանը և ընդհանուր իմաստնոց կարգին մեջ և իրեն հավասար անձինք գտնելը միշտ աշխատալի և դժվար գործ պիտի ըլլա մեզի։

Մեր գրականության մեջ հայտնի է բանասիրաց, որ երկու նշանավոր դար ունեցեր ենք, մեկ մը հինգերորդ դարը, որ է թարգմանչաց ոսկեգրիչ ժամանակը, մեկ մ՝ ալ երկոտասաներորդ դարը, ուր մեկ դպրոցեն ելան սուրբն Ներսես Շնորհալի և իր եղբայրը Գրիգոր Վկայասեր, Սարգիս Շնորհալի և Իգնատիոս վարդապետ, և իրենց մերձավորները՝ Ներսես Լամբրոնացի, Գրիգոր Տղա և այլն, որոնք նորոգեցին ոսկեղեն գրիչները և հնազանդ մտաց ծննդոցը վրա նոր ծաղկափթիթ շնորհք մը բերին, այսինքն՝ հրատակագույն բացատրություն մը, որ ավելի հարմար է այս նոր դարերուս։ Սարկավագ վարդապետ ան դպրոցեն չէր, բայց կրնա հայր ըսվիլ անոր, որովհետև քան զայն քիչ մը առաջ նույն շնորհքով փայլեցավ, հանդերձ հին վսեմությամբ և իր վարպետ զուրցվածքովը եղավ եզական և աննման մատենագիր մը։ Մետասաներորդ դարուն կիսեն ինչվան ԺԲ դարուն երեսներորդ տարին քշեց իր կյանքը, ըսել է թե իր խոր ծերության անտենը վերոհիշյալ վարդապետները դեռ երիտասարդ ու միջահասակ էին և գրեթե ինքը գրիչը թողլու ատեն անոնք ձեռք կառնեին։ Ան ատեններս քաղաքական հին Հայաստանն ալ նորոգվելու վրա էր։ Բագրատունյաց

տերությունը նոր վերջացած, Հայոց մեկ մեծ մասը իր բնական աշխարհքեն եկած՝ ուրիշ աշխարհքներ գաղթականներ կհաստատեր։ Ոմանք դեռ իրենց մեծ տերությանը կտորներուն վրա կրովրտելով՝ ան հին աշխարհքին ամուր կողմերը որը ապավինած, որը բռնացած կեցեր էին, աստղաբաշխից կարծած մեծ մոլորակի կտոր մանր մոլորակաց պես։ Ոմանք ալ ասդիեն անդիեն մեկտեղ եկած մեկ ամբողջ ջահ մը վառել կջանային, այսինքն, մեր Ռուբինյան և Պահլավյան իշխանները Կիլիկիո մեջ։ Զասոնք պայծառացնելու համար աստված հանեց Ներսեսներն ու Գրիգորները, իսկ վերին կողմերը մնացած հայոց, որոնց հետին փայլումը հասեր էր, սարգսեց աս լուսատու վարդապետը, և իրմե վերջը իրեն հաւասար մեկը չելավ հոն։

Իր հայրենիքն էր Արցախ աշխարհին Փառիսոս կամ Փառնես[2] գավառը՝ Սյունյաց բնիկ Սիսական գավառին դրացի, որ աս ատենները գատ թագավորություն ունեցավ՝ Սիսականի կամ Փառիսոսո անվամբ և իրեն իշխանները հին հայկազանց սերունդքն էին։ Սարկավագին աշխարհք եկած ատենը ասոնց սակավատև փառքն ալ մարը մտնելու վրա էր։ Իր մանկությանը՝ հայկական վեհապանծ օրերուն տեղը անոնց վարատական գաղթիլը և Սկյութացվոց հարձակմունքները տեսավ։ Ալփալսանին ըրած արյունները դեռ կմխային աչքին առջևը և անանկ տպավորություն մը ըրած է վրան աս բարբարոս ազգին մեր աշխարհքը դալն ու տիրելը, որ ան ատենեն մտրին մեջ նկարված պիտի ըլլան այն պատկերները, որ վերջը գրով ավանդեց հետնոց. երանի՜ թե մեզի ալ հասած ըլլար։ Բայց աս շփոթությունները իրեն դաստիարակությանը և ուսումնասիրությանը արգելք չեղան։ Հայրը արդեն քահանա էր և ինչպես կերևնա՝ այն սրբազան աստիճանը իրենց ցեղին մեջ շատը ունեցեր էին։ Ուստի իր տղան ալ, որ Հովհաննես կրսվեր բնիկ անվամբը, և կերևնա թե շուտով սարկավագ ձեռնադրել տալուն՝ Սարկավագ ըսվեցավ անկե վերջը, ուզեց նույն ճամբան դնել. անոր համար պզտիկուց ղրկեց, որ ուսմունք սորվի։ Ան ատենի երևելի ուսումնարաններն էին վերջին Բագրատունյաց և Վրաց թագավորաց ծաղկեցուցած վանքերը, Հաղբատ, Սանահին և ուրիշ քանի մը անոնց մոտ վանքեր. աս տեղվանքս անցուց Սարկավագ իր անհագ ուսումնասիրությամբ վառված հասակը։ Իր աղնվական բարքը և բնատուր սրամտությունն ալ ջանիցը հավասար. անկատար հասակին մեջ ալ զինքը կատարելոց կարգը անցուցին։ Եվ ինքն իսկ կրնա

վկա սեպվիլ աս բանիս իր խոսքովը, որ գրվածի մը մեջ կըսե. «Ի նախնեաց բարեպաշտից և յիմաստուն ծնողաց բուսեալ, որք սնուցին զիս օրինօք հոգւոյն կենաց առնել քան ըստ բնութեան տածիք խնամս յառ մանկունս. որովք յառաջնումն հասակին դաստիարակեալ՝ յոյս տայի բաջութեան»[3]։

Առջի ուսումնական տարիները անցուց, ինչպես կերևնա՝ անդադար կարդալով և հմտանալով, ետքն ալ դիր անցնելով իր Հասուն մտքին պտուղները, բայց ինչպես որ ընտիր ընթերցվածներու սիրող էր, այնպես ալ իր գրվածքը ընտիր կուզեր։ Անոր համար մեծ ջանք բրած կերևնա գեղեցիկ ոճ մը ստանալու, միանգամայն՝ և բարձր ու վսեմ, վասն զի արժիվ մտքը արժվո՞ն ալ կուզե։ Եվ հիրավի, իր ամեն գրվածքներուն մեջ կերևնա մեկ ճարտար ու սովորականե վեր իմաստասիրական շարադրություն մը, ամենեին իմաստակութենե և արվեստակութենե հեռու, և միանգամայն պարզ և խորամիտ, որ մեկեն կցուցնե, թե այսպիսի գրվածք միայն իրենն է և ոչ ուրիշի։ Շատ լավ կըսե սասոր համար Կիրակոս պատմիչը, թե՝ «Սորա բանք ամենայն իմաստասիրական ոճով է, որպէս զԳրիգորի աստուծաբանի, և ոչ գեղջուկ»[4]։ Աստվածաբանին հետ հիշելու էր մեր Հովհան Իմաստասերն ալ, որուն թերևս միայն հետևող եղավ Սարկավագ և անոր ճարտար ոճը, Շնորհալվույն քաղցրությանը հետ՝ խառնած, կրնա Սարկավագի գրչին գաղափարը սեպվիլ։

Հովհան Իմաստասիրին անունն ալ, մականունն ալ, գրիչն ալ ժառանգեց Սարկավագ, և ամեն պատմիչք և հիշատակողք չեն կրնար անունը տալ, առանց կոչելու Իմաստասեր կամ Մեծ իմաստասեր, Աստվածային իմաստասեր, Գերունակ վարդապետ, Մեծ սոփեստես և այլն։ Այս ետքի զուրցվածես կրնանք իմանալ, որ զուտ իմաստասիրական գրվածքներ ալ ուներ, որոնց հետքը միայն կերևնան հիմա. միանգամայն և ճարտասանական և քերթողական արվեստից հետևեցավ, և հաջողությունը ցըցուց իր շարադրություններովը։ Ինչպես ասոր ալ վկայություն կուտա ինքն իրեն համար քանի մը խոսքով Սարեկի դիմառնական երգուն մեջ, ուր կըսե.

«Որով յաղթեալ մեզ իմաստնոցս և կարծեցեալ բանաստեղծացս».

Եվ դարձյալ Սարեկին քաջ երգեցողությունը գովելով.

«Ասա գաս Ընտիս մերձ առ ինն իբր արուեստիւ ինձ յանգակից,
Բազմաղեաւ երգարանաւ եղանկեսս և կաքաւեսս
Հոմերականն տաղիցըն չափ քն ծանուցեալ լինի բազմաց
Ցոտանաւոր և ցուցական ըստ քերթողացըն տեսակի,
Կամ թէ ևս ավելագոյն որպէս թրւի ինձ գիտողիս»:

Իսկ իր անխոնջ ուսման զբաղելուն համար կըսե Հոն.

«Ուսա ես դեգերմամբ ևս ի բազմաց ամաց ետեղ,
Ամ տքնեցայ զօր ամենայն և ըզգիշերըն բովանդակ,
Առ իմաստըս ցանկութեամբ, նաև սիրովն, որ առ հանճար»[5]:

Վերոհիշյալ պատմիչն ալ կըսե. «Մեծիմաստն գիտութեամբ քան զյոլովս և հանճարեղն յամենայնի և մտահարուստն։ Սա բազում ինչ աշխատասիրեաց ՝ի գիրս՝ յիշատակ բարի թողեալ... վասն զի յոյժ իմաստուն էր այրն և աստուածային շնորհօք զարդարեալ»[4],

Այսպիսի զորավոր միտքը ուսմանց երեսովը չէր բավականանար, հապա խորերը իջնալ կսիրեր։ Անոր համար դժվարություններե չփախչելով, ինքը կանոնք դյուրացնել կջանար ուրիշներու և տարակուսական բաներու մեջ ստուգագույն աղբյուրները քննել կուզեր, ինչպես ասա մեկ դիպվածես ալ կիմացվի։ Շատ ատենն ի վեր էր, որ Սաղմոսաց սուրբ գիրքը, որ քան զամեն դիրք հասարակ էր մեր ազգին մեջ ալ ինչպես այլոց, շարադրության և գրվածքի տարբերություններով շփոթության պատճառ եղեր էր կարդացողաց և հարադատ որն է՝ կուզեին իմանալ։ Ասա բանս Սարկավագին ալ մեծ հոգ եղած էր և՝ շատ օրինակներ քննելեն ետև, փնտրելով գտավ Հաղպատու գրատանը մեջ ամենեն տակը դրած մեկ հին սաղմոս մը, որ թարգմանչաց ձեռքովը գրած էր, կիսամաշ ու բարակ գրերով։ Ան դեղեցիկ հիշատակարանը համբուրելով և աչացը վրա դնելով՝ առավ գնաց, աշխատությամբ անոր օրինակը առավ և ուրիշ շատ ալ օրինակել տվավ ու ցրվեց Հայաստանի ամեն կողմը։ Ասոր նման, բայց ասկե մեծ արդյունքն ալ եղավ հայու տոմարի շտկելը, որը թեպետ Զ դարեն ի վեր ջանացեր և կարգի մը խոթեր էին, բայց շարժական ըլլալովը դեռ շփոթությունները դադրած չէին։ Իրավ, Անանիա Շիրակացի և Անաստաս կաթողիկոս է դարուն մեջ ջանացին ասա բանս շտկելու, բայց կաթողիկոսին մահվամբը փիլիսոփային ջանքը անգործ մնաց։ Իսկ Սարկավագ վարդապետը նորեն աշխատեցավ, տարեկան տո-

ները հաստատուն ըրավ և հայու տոմարը ուրիշ ազգաց տոմարներուն հետ բաղդատելով՝ համեմատություն ըրավ։ Ան կարգավորությունը մերոնք կանվանեն Սարկավագապիր կարգ, բայց ափսո՜ս որ իր գրած կարգն ալ մասամբ միայն կատարվեցավ և որ ցավալին է՝ իր գրած տոմարեն ալ միայն քանի մը կտոր տեսեր ենք մենք, և չենք գիտեր, թե ամբողջը կա՞ և ո՞ւր կգտնվի։

Այսպիսի գրվածներն են, որ իմացուցին, թե կա ազգին մեջ ասանկ ամենահաս և կարող գրիչ մը, անոր համար շատը իրենց տարակույսներուն լուծմունքն իրմե ուզեցին, ինքն ալ աննախանձ և բարեսիրտ ըլլալով՝ լցուց կարոտությունները. այսպես են մեզի հասած քանի մը մանր գրվածքները Հովերու և Երկրաշարժի պատճառին վրա։ Բայց իր ուսումնական ամենեն մեծ արդյունքն ան եղավ, որ ուսմանց նորոդող եղավ և ընտիր ախորժակ մտցնող։ Ինչ որ ԺԵ դարուն մեջ սկսան եվրոպացիք, ինքը մեր ուսանողներուն սկսեր էր, կամ թե իրեն ժամանակակից դպրոցականներուն հետ։ Եվ թեպետ չհասան մեզի այն գրվածքները, բայց հայտնի է, որ ինքը դասատվությամբ ալ ան նոր ոճը բանեցուց, անոր համար ըսվեցավ «Մեծ սոփեստեան Հաղբատայ»։

Սարկավագ վարդապետին մտաց ուժը՝ գիտության, հոգին ալ աստուծո և աստվածայնոց նվիրված էր, ինչպես որ ամեն ասանկ զորավոր և զգոն իմաստասիրաց հատկությունն է։ Եվ իրեն գրվածքներն ալ կվկայեն, որ աստվածային բաներու մեջ խորամուխ էր, միանգամայն և մեծ հեղինակությամբ վառված, ճշմարտության և վարուց ուղղության բերելու գուրիշները, բայց առանց կովասեր վիճման և բռնադատության, այլ անհակառակ և խելացի հավանողական խոսքով և գրով։ Այս հոգին և այս մեծ հանճարն էր, որ զինքը Հաղբատու վանաց առաջնորդ ըրին։ Ան պաշտոնն ալ, ինչպես իր պատճառով ուրիշներուն՝ ասանկ ալ իրեն, շատ օգտակար եղավ միտքը ավելի բարձր ասմտածականները ոչ միայն իր սրտին զովացմանը համար գրեց, հապա նաև անոնց, որոնց հոգը իր սիրտն էր առել։ Անոր համար ըստ զանազան հասակի և կրից հոգվո շարադրեց՝ տղոց համար անոնց հասակին հարմար շնորհքները խնդրելով և մեղավոր ու ալեկոծ համար ուրիշ կերպ, վառած սրտի համար ուրիշ և այլն։ Համբակները իմաստության սիրուն հորդորելու համար գրեց իմաստության հորդորներ, որոնց մնացորդները հասան մեզի. քահանայից՝ իրենց ահավոր պաշտոնը արժանավորապես պաշտելու համար քահանայության վրա ըն-

տիր ճառ մը գրեց խոհական վարդապետությամբ. սրբոց և մանավանդ մեր եկեղեցվո հարց հիշատակը նորոգելու համար իրենց արդվոցը սրտին մեջ՝ գեղեցիկ ներբողներ Լուսավորչա և անոր թոռանցը վրա, եկեղեցական պաշտոնն ալ զարդարեց ընտիր երգերով։ Այսպիսի ջանքն անկարելի էր որ անպտուղ մնար. իրեն արժանի աշակերտներ ունեցավ, բայց ժամանակը՝ որ վարպետին գործը չխնայեց, աշակերտներունն ալ բոլորովին մուսացության մեջ թողուց։ Բայց ինչպես որ առաջ ըսինք, աստվածային բաներու մեջ ծանրությամբը՝ մարդկանց քաղցր ընտանությունը չմոռցավ, հապա գիտեր զիջանել մարդկանց և կենակցիլ քաղցրաբանությամբ, ինչպես որ Զվարթատես ալ կանվանեն զինքը։ Զվարթությունը ոչ միայն երեսին, այլև լեզվին և արթուն մտացը վրա կը փայլեր, որով շատ օգուտ բերավ իր վանքին ալ, իր մոտ գտնըված աղգայնոց ալ, վասնզի շատ իշխաններու և բռնավորներու սիրտը կառներ աս ձիրքերովը, նման իր պատվակից Հովհաննես Իմաստասերին. և Դավիթ վրաց թագավորը այնչափ լավ ճանչցեր էր աս մեծ մարդուս հարկը, որ շատ հեղ հետը կուգնվեր և զլուխ ծռելով օրհնությունը կխնդրեր։ Սարկավագ ալ, մեծություն չծախելու համար Դավիթ մարգարեին խոսքը հարմարցնելով կըսեր. «Գտի ըզԴաւիթ ծառայ իմ, և իւղով սրբով իմով օծի զնա. ձեռն իմ ընկալցի ըզնա և բազուկ իմ զօրացուսցէ զնա»[4]։

Ժամանակին խնդիրները և Հունաց հետ վիճմունքը ստիպեցին մեր Սարկավագը, որ աստվածաբանական գրվածքներ հանե։ Ասոնց ոմն ալ, թեպետ երբեմն Սարկավագին է, այլ երբեմն ալ շատ հեռու է անկեց և ասանկ գրվածոց մեջ օտար ձեռք խառնվիլը նոր բան չըլլալով նաև մեր աղգին մեջ, չենք կրնար աստիճանի հասցնելու. լավ ճանչցավ մարդուս սրտին ճամբաները և անանկ թափանցող եղավ, որ հոգետասության ձիրք ունեցած կկարծվի։ Քաղցրությունը իրեն գործիք էր ըրած սիրտ շահելու, բայց ոչ երբեք անով թեթևության մը իջավ։ Վսեմությունը իրեն խոսքին հավանեցուցիչն էր, սքանչելի վարքը և օրինակը՝ անխոս և բռնադատիչ քարոզ, տկարաց և կարոտից համար՝ գրվածքները միշտ հիշեցուցիչ և արթնցնող։ Տեղին հարմար խստությունն ու անաչառությունն ալ՝ վարդապետական պաշտոնին համեմատ և անոր պատիվը ավելցնող, քան թե ահարկու ընող։ Կպատմեն, թե իր պաշտոնին անարժան քահանա մը, շատ անգամ խրատվելով, բայց իր անկարգ վարքեն հետ չկենալուն՝ Սարկավագ վարդապետը զինքը

պատարագն արգիլեց։ Անօրենը ոչ վարդապետին քաղցրությունը և ոչ սատար, և ոչ էլ ժողովրդյան արհամարհանքը (որ ծաղրելով Զոմզոմա կկանչեին իրեն) բանի տեղ դրավ, հապա զայն որ իր անարժանությանը արգիլը կրլլար սուրբ խորհուրդը մատուցանելու, ուզեց անոր սուրբ նախանձավորությանը զոհ ընել. վասընզի ճշմարտությունը ծանր կուգա ծառայ բդեղներու։ Օր մը ճամբան հանդիպելով իր վարպետին, ամպամակարար հարձակվեցավ՝ այն մեծ և պատկառելի գլխուն վրա ձեռը վերցնելով, իսկ վարդապետը իր անիծով և քաղցր ծանրությամբը ըսավ.— Սիրելի որդյակ, ինչո՞ւ կուգես չարչրել քու վարպետդ,— Պատասխանեց լիրը,— ինչման հիմա Զոմզոմա էի, հիմա սիրելի՝ դարձար ինչո՞ւ դուն ալ գիս սպանեցիր. գրկելով եկեղեցին։ Վարդապետը տեսնելով, որ խրատը բավական չէր բլլար անոր պարտքը ճանչցնելու, ուզեց առտուծո թողուլ պատասանը։ Տարավ դանիկա եկեղեցին և ծանուցումն բրավ, թե աս եղբարս հանցանքը զրպարտություն սնգելով, կնեբենք և կաշառենք բանապրանքե, իսկ աներևսը այն չարի հասեր էր. որ հանդգնեցավ նույն օրը պատարագ մատուցանելու։ Բայց առտուծո բարկությունը վրան հասնելով՝ դիվահարածի պես ընկավ, ինչման որ նույն հոգևոր վարդապետը աղոթքով թե անոր առողջությունը պարգևեց և թե խելքը գլուխը բերավ։

Իր հոգեսիրությանը համար բավեցավ «Այր տեսող ն լի հոգւով», և իր սքանչելի մտածականներն ալ նույնը կցուցնեն։ Եվ ինչպես կերենա, աս Սարկավագին ընծայել բոլոր գրվածքը, ինչվան որ ստուգագույն օրինակներ չունենանք ձեռվնիս։ Հոս հիշենք ինչվան հիմա անոր՝ մեզի ծանոթ եղած գրավոր աշխատությունները, որոնք ամենն ալ ընտիր գրվածոց կարգն են։

Ա. Սուրբ Լուսավորչաց վրա ներբողական ճառ մը, որ բավական է Սարկավագ վարդապետին ոճը և ճարտարությունը իմացընելու, լեզուն իմաստներով և կարճ խոսքերով՝ ինչպես իրեն եզական ձիրքն է։ Լուսավորչա վրա գրված ճառերուն մեջ ասիկա ամենեն կարճն է, բայց ամենեն ալ գերազանց։ Աս ճառիս սկիզբն է. «Զնահատակի սրբոցն տօնէ եկեղեցի» և այլն։

Բ. Գ. Դ. Սրբոյն Սահակա, Մեսրովպա և Մեծին Ներսեսի վրա ալ ճառեր գրած է, կավանդեն, բայց դեռ չենք տեսած. և թեպետ կան մեկ երկու ընտիր գրվածքներ աստոց վրա, որ Սարկավագին կընծայվին, այլ իր ոճեն հեռի են։

Ե. ՎԱՍՆ ՄԱՍԱՆՑ ՊԱՏՈՒՈՅ ԵՒ ՊԱՏԿԵՐԱՑ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ. արժանի իմաստասեր անունը գրված, թե խելքը և թե ոճը և վսեմ զուրցվածքը։ Ասոր մեջ կցուցընէ թէ ինչ աստիճան պատիվ տալու է պատկերաց, և սկիզբն է. «Յանտեղիսն ճարտարագոյնք և հանճարեղք յանբանութիւնս» և այլն։

Զ. ՎԱՍՆ ՇԱՐԺՄԱՆ ԵՐԿՐԻ. համառոտ գրված ժը կամ գրվածի մը կտոր, ուր հովերը երկրիս տակի սասանությանց պատճառ կը-դարձե և քանի մը բնական երևույթներու վրա կխոսի։

Է. ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏՈՄԱՐԻ ԵՎ ՅԱՂԱԳՍ ԱՆԿԻՒՆԱՒՈՐ ԹՈՒՈՅ, որուն ինչպես հիշեցինք, միայն քանի մը հատվածը ունինք[8]։

Ը. ԲԱՆ ԽՐԱՏՈՒ. իմաստասիրության վրա վարդապետություն մըն է, մեկ երեսիկ մը բան, բայց պզտիկության մեջն ալ այնչափ ընտիր, որչափ են պզտիկ գոհարները։

Թ. ԱՂՕԹԱԳԻՐՔ, զանազան վերնագրերով. մենք քսան հատ մը ճանչցեր ենք, ամենն ալ ընտիր, վսեմ, սրտաշարժ, որ և ամեն մեր նախնի աղոթագրքերեն գերազանց և կերպով մը Նարեկացիեն ավելի բնական և կատարյալ, թեպետ Նարեկն ալ անհավասարելի է իր կարգին մեջ։

Ժ. ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՆՔ, քսան կամ քսանուհինգ գլուխ բան, որոնց մեջ միայն, ինչպես վերը ըսինք, ավելի հասարակ զուրցվածք կամ անհարազատ ոչ կերևնա։

ԺԱ. Սրբոց Ղևոնդյանց վրա համբարձիին շարականը՝ ՊԱՏՇԱՌԱՑԻՐ, որուն ամեն բանասերք ծանոթ պիտի ըլլան։

ԺԲ. Անշուշտ իր ամեն գործքերուն մեջ գլուխգործոց սեպվելու է իր ՊԱՏՄՈՒԹԻՒՆՔ, որ հիմա կորսվածներուն կարգն է մեզի, բայց Վարդան, Կիրակոս, Մխիթար Այրիվանեցի, Սամուել Անեցի կհիշեն զայն և կվկայեն անոր ընտիր, հմուտ և սքանչելի գրվածքին։ Աս ետքի պատմագրիս երախտագետ պետք է ըլլանք, որ իր ժամանակագրական պատմությանը մեջ երկու իրեք հատված կբերե աս ցանկալի պատմութենեն, որ որչափ ուրախության պատճառ է մեզի, գոնե ան մեկ թղթի պատառիկը ունենալնուս և անով ամբողջ գրքին վսեմությունը և աղնվությունը ճանչնալնուս, այնչափ ալ ցավ կուտա անոր կորստյան վրա։ Վասնզի այն հատվածները, նման վերոգրյալ գրվածոց վսեմության, անխաբելի փաստ մը կրնան ըլլալ, թե այն պատմությունը մեր գրականության ընտիր գրվածքներեն մեկն էր, և իր տեսակին մեջ թերևս ամենեն ընտիրը։ Աս պատմությունը կերևնա թե երկու գլխավոր մաս էր, մեկ

մը ընդհանուր Սկյութական ազգաց ծագմանը և արշավանացը վրա, որ ԺԱ դարեն սկսան գալ Հայաստան, Սելճուգյանց և Տուրքիլյանց վրա, Ալփալսանին և անոր նախորդացը գործքերը։ Մեկ մ՚ալ Ալփալսանի որդվույն, Մելիքշահին գործքերը, որուն մահվամբը կդադարեցնե Սարկավագ իր պատմությունը[9]։ Չկրնար մեկը անոր ճաշակը առնելեն վերջը մեզի հետ չփափագիլ ամբողջ պատմությունը տեսնելու և հորդորելու աղաչելու ուրիշ բանասերներն ալ, որ ուր որ գրոց ծանոթություն ունին քննեն, և թե հաջողի մեկը գտնելու և մեզի փափագողաց ալ հաղորդելու, մեր երախտագիտությունը բոլոր ազգին երախտագիտությանը հավասար սեպե։ Նույնպես, թե որ ուրիշ գրվածք ալ գտնվի նույն հեղինակին, որ անշուշտ ենք թե պիտի ըլլա զանազան կողմեր, և ահա աս բանիս վկա ըլլա Սարկավագին։

ԺԳ. Վերջին գրվածքը կարճ ու իմաստալից բանաստեղծություն մըն է սարեկին վրա։ Ասիկա ոտանավոր գրվածք մըն է և բոլորովին նոր գաղափար մը կընծայե մեր ազգին հին գրվածքներուն մեջ։ Աս երգը Մարղվանի ազգային դպրոցին մեջ հին աղոթագրքի մը մեջ գրած էր Սարկավագին ուրիշ գործքերուն հետ մեկտեղ, որ դպրոցին մեծերը հաճեցան անցած տարիները մեզի համար օրինակել տալու։

Աս բանաստեղծության վրա շատ խորհրդածություններ կընայինք ընել՝ հարգը ավելի ճանչցնելու մտքով, միանգամայն քանի մը պակասություններն ալ ցուցնելով, բայց ընթերցողաց ախորժակին և ընտրությանը ձգելով բոլորովին աս աշխատությունը, հոս չենք կրնար չհիշել, որ աս քերթվածն ալ շենքին ու չափերուն կողմանե մեկ նոր ապացույց մըն է Վիրգիլիոսի «Մշակականացը» թարգմանչին կարծյացը, այսինքն թե՝ աս տեսակ ոտանավորն է մեր բուն ազգային չափը և անիկա ալ պետք է ծաղկեցընել, նաև իբրև ավելի ազգու և դաշնակավոր։ Աս թարգմանության տպագրությունն ալ օրերս լմընցած ըլլալով, ընթերցասերք անոր ընդարձակ առաջաբանին մեջ տեղն ի տեղը կրնան տեսնել աս բանիս հիմունքն ու զանազան ապացույցները[10]։

Սարկավագ վարդապետին մեր ճանչցած այսչափ ուսումնական հիշատակները թեպետև գեղեցիկ, այլ իրեն ընդարձակ և սուր մտքին նայելով՝ դեռ քիչ են, անոր համար հիշելով նորին իսկ հեղինակին իրեր, որ նույն երգին մեջ կհայտնե՝

մեծ հույս ունինք, որ ժամանակը ուրիշ գրվածքներն ալ հայտնե։ Ասենցմե դուրս, ժամերգության մեջ համառոտ մաղթանք մը կա «Յիշեա տէր» վերնագրով, որ Սարկավագ վարդապետին անունով կհիշվի, բայց ասիկա իրմե քանի մը դար առաջ հիշված աղոթք է. ըսել է թե ան աղոթքը սարկավագի դուրցելու աղոթք է, կամ թե ուրիշ Սարկավագ անունով մեկը շիներ է։ Վասնզի Սարկավագ մականունով ուրիշ մարդիկ ալ կհիշվին մեր մեջ և անոնց մեկն է անշուշտ՝ Հաղարծնու վանքին առաջնորդն ալ, որուն արձանագրությունները կան նույն եկեղեցվույն մեջ։

Իսկ մեր Սարկավագին մեկ միայն սխրալի և սգալի արձանագրությունը կգտնվի Հայոց և Վրաց սահմաններուն վրա, Լոռի քաղքեն օրով հեռու, Հաղբատա վանքը, աստվածածնա եկեղեցվույն գեղեցիկ զանգակատանը ստորին քով, անմահական քարի մը վրա, այսպես գրված. «Արձանս այս՝ սեմական է սոփեստոսի սարկավագին»։ Այն արձանին ներքեր կհանգչի յոթ հարյուր տանութ տարվընե ի վեր աս մեծ իմաստասիրին աննման գլուխն ու ձեռքը, իրեն զարմանալի և խորհրդավոր անձին հարմար աս եզական և խորհրդավոր տապանագիրն ալ ունենալով, որ թերևս ինքն իրեն համար շինած ըլլա։

Սակայն ո՞վ հանճար, ո՞րչափ մեծ և զարմանալի է քու զորությունդ, որ այն մեծ ու սրբազան քնարանին մեջ, ուր ահավոր և սրտաշարժ քուն մը կքաշեն թագավորներ՝ Աբաս և Կորիկե, վայելչազարդ դշխույք Մարիամ, Թամար, Ռուսուդան, Բաւրինա, իշխանք և զորավանք, ինչպես Քուրդ Հասան, Սեադա և այլն, եպիսկոպոս և վարդապետք ինչպես Հովհաննես Ծործորեցի, Դավիթ Քոբայրեցի, Թորոս, Գեորգ և այլն, ասոնք ամենքը զանց ընել տալով՝ յոթը դարեն վերջը մեր միտքը կհափշտակես և միայն Սարկավագի արձանին վրա նոր արձանի մը պես կկանգնես և այնչափ թագավորաց, թագուհյաց, իշխանաց, եպիսկոպոսաց, վարդապետաց պերճ գերեզմանները միշտ գերեզման թողլով, միայն իմաստասեր վարդապետին գերեզմանը տաճարի պես պատվել կուտաս։ Արդ դու, որ ոչ միայն քու իմաստուններդ կսիրես, այլև զիմաստունները պատվողն ալ չես արհամարհեր, ընդունե՝ թե որ բոլորովին անարժան չես սեպեր, աս ետքի տողերս ալ, որ քու բարեկամիդ արձանին նայելով՝ գրեր է անոր զարմացողներեն մեկը։

Էնդ սեմականդ անմահութեան ոչ ընդ մահու յառեալ արձան,
Սընխրանալ տուն Հայկազին, նախանձարկու քա հանուրց գով.
Ոտնառնեալ խուժիցըն հենք՝ յինքեանց դատող նարեն յաջորդ
Զոր պաշտէն սիրահամբոյր հսկող հանճար յաներևոյթս
Անդ ըզբանըն զիսկական աթենախառնըն դիտելով
Ի յանհասից շնորհաց պրճնեալ զիմաստնարանդ երկնապարիկ.
Ոյմ թե բնութիւն մոռացամիտ ժխտեաց անդրի արժանուդ,
Դարք կացեն կամարակապ և ժամանակն իցէ տաճար։

ՇԱՏՈԲՐԻԱՆ

Այս տարի հուլիսի 4-ին վախճանեցավ Շատոբրիան գաղղիացին, որ բոլոր Եվրոպայի ու նաև բոլոր աշխարհիս գիտուններին ծանոթ էր և ամենուն առջևն ալ իրավամբ մեծ պատիվ ուներ։ Ծնած էր 1769-ին[1] և իր ութսունամյա հասակին պատմությունը գրեթե բովանդակ հյուսված է Գաղղիո քաղաքական ու մտքենադրական պատմությանը հետ։ Իր վառվռուն ու ճարտասան գրվածքներովն ու խոսվածքներովը, վսեմ իմաստներովը, անկեղծ արդարասիրությամբը, անընկճելի ու աներկյուղ աստվածապաշտությամբը Գաղղիո թագավորությանը սյուն և ամրություն եղավ տասնըվեց տարի։ Անկեց առաջ Նապոլեոնի պես թագավորին անտեղի ուշահանջանացը դեմ այնպես վարվեցավ, որ Նապոլեոն կպատկառեր ու նաև կվախնար իրմե։

Ազնվական ծնողաց որդի ըլլալով՝ իր վիճակին համեմատ լավ կրթություն առեր էր պզտիկուց, անով քսան տարվան հպիվ եղեր էր, երբոր սկսավ քանի մը բանաստեղծական գրվածքներով անուն հանել[2]։ Գաղղիո մեծ խռովության ատենը, 1789-ին, թողուց ելավ հայրենիքեն[3] ու դեպի Ամերիկա ճամբորդություն մը ըրավ։ Հոն, Նիագարա գետին ջրվեժը տեսնելուն գնացած ատենը, երբոր սանդուխով մը վար իջնալու վրա էր, սանդուխը կոտրեցավ ու ինքը ընկավ, մեկ թևը կոտրեցավ և թեպետ շուտով բժշկվեցավ, բայց այնպիսի մահվան վտանգեն անկարծելի կերպով ազատիլը աղեկ սանձ մը եղավ իր երիտասարդական համարձակություններուն։

Հայրենյացը և ազգին սիրույն համար 1792-ին դարձավ Գաղղիա, բայց հարկ եղավ, որ քիչ ատենեն նորեն փախչի երթա Անգղիա[4]։ Ան ճամբորդությանը մեջ այնչափ աղքտացավ, որ ինչվան հաց մուրալու կարոտ եղավ։ Սրտին արիությունը չէր թողուր իրեն, որ հուսահատի, բայց իրեն մեծ դժբախտությունն ան էր,

որ խեղճությանը ատեն կրոնի մխիթարություններեն ալ զուրկ էր։ Վասնզի երիտասարդական տաքությամբ ինչվան ան ատենները նույն դարուն սուտ փիլիսոփայից մոլորություններովը տոգորված ու կես մը անհավատի պես էր։ Բայց 1798-ին, երբ որ լսեց թե իր բարեպաշտ մայրը մեռնելու ատեն ցավագին սրտով խնդրեր է աստուծմե, որ իր պանդուխտ որդվույն դարձ տա, զղջումի եկավ, վարքը փոխեց, ու անկեց ետքը ինչվան մահը հավատո և եկեղեցվո պաշտպան ու ախոյան եղավ իր գրվածքներովն ու վարքովը այնպիսի ժամանակ, որ գրեթե բոլոր Գաղղիո մեջ անհավատությունը տիրած էր։

Դարձավ Շատոբրիան Գաղղիա 1800-ին, շատ իմաստուն ու գրագետ մարդկանց հետ բարեկամացավ և իր գրվածներովը՝ որոնց գլխավորներն էին «Ոգի քրիստոնեության», «Ռընե», «Աթալա»[5] և այլն, շատ մեծ անուն հանեց ոչ միայն Գաղղիա, այլև Անգղիո մեջ։

Շատոբրիանին թե քաղաքական և թե մատենագրական պատմությունը ամբողջ մեծահատոր գրքի մը նյութ է, ևս առավել երկայն կըլլա իր բազմաթիվ գրվածներուն հիշատակությունը։ Առայժմ մենք գոհ ըլլանք այսչափս ըսելով, թե Շատոբրիան իր նոր ու գեղեցիկ ոճովը սեպվեցավ հայր այժմու մատենագրության Գաղղիացվոց, գեթ ինչվան աս վերջի տարիներս։ Իսկ քաղաքական կարծյաց կողմանե Բուրբոնյան ցեղի թագավորներուն իրավանցը պաշտպան ու անոնց կուսակից էր։ Անոր համար քանի որ ան ցեղը թագավորութենեն զրկվեցավ, ինքն ալ ամեն տեսակ մեծամեծ պաշտոններեն հրաժարած ու մեկդի քաշված հանգիստ կապրեր, ամենուն պատկառելի և ամենուն սիրելի։

ԱԶԳԻՆ ՀԱՏՈՒԿ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Իրավամբ զրուցված է, թե բարերարությունն մեծագին է, բայց հարմար ատեն կամ կերպով եղածն՝ կրկին կամ անգին բարերարություն է։ Այսպես և դաստիարակությունն, որ ժողովրդյան ամենեն մեծ և հարկավոր բարիքն է, այն ատեն ավելի մեծ օգուտ կրնե, երբ ընդունողին պիտոյիցն պատշաճ և բնավորությանն հարմար կերպով կտրվի։ Դաստիարակության վախճանն ամեն ազգի համար ալ նույն է, բայց վախճանին հասնելու միջոցներն

կրնան տարբեր ըլլալ և պետք է որ ըլլա, վասն զի ամեն ազգ նույն մարմին և նույն արյունն ունի, բայց ոչ նույն խառնվածք և նույն բնավորություն։ Եվ ինչպես բնական ախորժակք զանազան են մարդկանց մեջ, զանազան են նաև բարոյականք, և ինչպես որ ըստ ախորժակաց կզանազանենք բնական կենաց սնունդն, այնպես ալ զանազանելու է բարոյական կենաց սնունդն, որ է դաստիարակություն կամ կրթություն։ Մի՞թե հացին նյութն ալյուր ու ջուր և աղ չէ, բայց որչա՞փ տեսակ շաղված հաց կա զանազան քմաց համար։ Այսպես դաստիարակության նյութն ալ միշտ ուղիղ բարոյականն պիտի ըլլա, բայց կանոնքն զանազան ըստ ընդունակության կրթվողաց։ Թե որ այսպես չըլլա՝ կամ քիչ օգուտ կրնե դաստիարակությունն կամ ոչինչ, կրնա նաև վնաս ընել. ինչպես որ նույն դեղն զանազան հիվանդաց, նաև նույն հիվանդությունն ունեցողաց՝ բայց զանազան բնավորության և կազմվածքի տեր եղողաց տալու ըլլանք, կրնա զմեկն առողջացնել, մեկուն ամենևին օգուտ չընել, զմեկալն ալ ավելի հիվանդացնել։ Այս բանիս չգիտելն է շատ անգամ դաստիարակության անպտուղ ըլլալն և չտարածվիլն։

Երկայն ատենե կրթության սով քաշած ազգ մը, իրավ է որ առջի բերան որեէ սիրտ բռնելու բանով գոհ պիտի ըլլա, բայց առջի ոգևպահիկն առնելեն վերջն՝ պետք է իր բնության հարմար սնունդն փնտրե։ Մեր ազգն ալ, թեպետ և շատ տեղ դեռ առաջին կրթությանն ալ կարոտ է, բայց շատ տեղ ալ խել մը տարի դպրոցներով կրթության ճաշակն առած՝ կրնա հիմա իրեն բուն հատուկ դաստիարակությունն փնտրել, որպեսզի լավ օգուտ գտնե։ Այս բանիս պետք է մտադրություն և հոգ ընեն որոնք որ ազգերնիս կրթելու փափագն կամ հոգն կամ պաշտոնն հանձն առած են. ընդհանուր կրթությամբ զմարդս անբաններեն որոշելեն ետև, պետք է զազգն ալ ուրիշ ազգերե որոշել։ Այս զանազանությունս պետք չէր ընել և պետք չէ ընել, բայց այն ատեն միայն՝ երբ ամեն ազգ նորեն Բաբելոնի աշտարակեն առջի վիճակն մտնեն։ Իսկ քանի որ լեզու, կրոնք, քաղաքական կառավարություն, հայրենի ախորժակ, նախապաշարմունք, առանձին սովորությունք ընտանեկան կենաց, մասնավոր հարմարությունք մտաց և ձեռաց, և մասնավոր պակասությունք բարոյականք զհայն հռոմեն կզատեն, զթուրքն հրեեն, կամ զանգղիացին գաղղիացիեն, զիտալացին գերմանացիեն, պետք

է ուրեմն առանձին կամ ազգահատուկ կրթություն տալ հայուն և առանձին հռոմին, այսպես և մեկալնոնց։

Բայց կարելի է մեկն ըսե, թե այս կերպով ոչ երբեք մարդկային կրթության և կատարելության միություն կըլլա և միշտ զանազանություն ոգվո ընել է։ Մենք կըսենք թե այդպես չէ, հապա բոլորովին հակառակն. միօրինակ կրթությունն զանազանիչ կսեպենք, զանազան կրթությունները՝ միացուցիչ։ Վերի հիշած դեղերուն օրինակն որ կմտածենք, մտքերնիս կպառկի այս բանիս. կընդունինք թե ամենուն վախճանն միևնույն պիտի ըլլա, բայց ճամբաներն և ընթացքն տարբեր։ Երբոր զանազան մետաղներ ուզենք հալեցնել նույնչափ ժամանակի մեջ, ի՞նչ կընենք. մետաղաց կարծրության և խտության համեմատ՝ զանազան չափով կրակ կուտանք, շուտ տաքցողին և լուծվողին քիչ, ուշ տաքցողին շատ. այսպես մեծ ու պզտիկ մեքենաներ ալ մեկեն որ շարժել ուզենանք, պետք է մեծին ավելի ուժ հասցնենք։ Երուսաղեմ գնացողներուն մի՞թե մեկ սիրտ, մեկ ուխտ չէ։ Բայց ճամբանին՝ մեկուն ծով և մեկուն ցամաք, ծովուն նավերն ալ զանազան զորությամբ և զանազան ընթացքով կշարժին, ցամաքեն գնացողք ալ զանազան դրաստ կգործածեն երկրին համեմատ։ Անապատեն անցնողը ձին կթողու, ուղտի վրա կհեծնի։ քարոտ տեղվանք ջորին և ավելի պզտիկ կենդանի մը ավելի հարմար կսեպե, կա որ իր բնական քայլարաններովն իր ոտոքրն կչափե ուխտին կտրած ճամբան։ Եվ սակայն ամենքն ալ նույն վախճանին կհասնին։

Արդ կմնա մեզի ալ քննել, թե ազգերնիս բարոյական վախճանին հասցնելու համար ո՞ր ճամբան պետք է բռնենք։ Այս դժվարին խնդրույս դյուրին լուծմունքն կերևնա այս, որ նայինք մեկ մը մեր չորս դին ինչպիսի երկրի վրա պիտի ճամբա ընենք, մեկ մ՝ ալ (և աս է գլխավորն) նայինք մեր բնավորությանն։ Մեր չորս դին առողքն են՝ քաղաքական վիճակն, որուն տակն որ ընկած ենք, որ ամենայն տեղ նույն չէ, ազգերնուս ցրվելուն պատճառավ։ Մեր դրացի կամ բնակակից ազգերն ալ են, որոնց հետ նույն քաղաքական օրինաց հպատակ ենք, ու տեղվույն հարմար պետք եղած նկատմունքները պիտի ընենք, բայց ասոր վրա խոսիլը կթողունք յուրաքանչյուր տեղի բնակչաց զգուշավոր ու կենցաղագետ խոհեմությանը։ Իսկ մեր բնավորությունին ճանչնալու համար՝ պետք է դիտել թե հիմակվան վիճակի և թե պատմության ժամանակներուն հայոց բարքը, խառնվածքն, ընդհանուր մտավոր զորությանց

չափն և բերմունքն, իր բնիկ կատարելություններն, մասնավոր պակասություններն կամ մոլություններն, իր առջի հաջողություններեն վրան մնացած տպավորությունն, իր երկայն թշվառություններեն ստացած չարիքն, իր զանազան ատեն ունեցած կրթության վիճակն, և առաջ կամ ետք մնալուն պատճառներն։ Ասոնք քննելով խել մը բնավորություն երևան կելլան ազգերնուս վրա, թե լավ և թե գեշ։ Ան ատեն դաստիարակին կմնա որ լավ ձիրքերն աճեցընե և հաստատե, վատ բնավորություններն ցուցնե թե որչափ վնասակար եղած են ազգերնուս և մարդկության և խլել ջանա, իսկ վարպետությունն հոս պիտի ըլլա, որ իր խրատներն և կրթությունն հարմարեցնե իրեն ճանչցած հայու սրտին, մտքին և ակնջին։

Այս բանս որ լավ դիտվի և բարեսեր հոգվով կատարվի, կըրնանք մեծ հույս ունենալ, որը ազգերնիս կրթվի անշուշտ, կրթվի լավ և կրթվի շուտ։ Գիտենք, որ կրթության մեծ հնարքն է օրինակն. արդ այս կերպս ղկրթությունն օրինակի վրա առնելու պա՛տ է։ Երբ որ դաստիարակն ազգին լավ հատկություններն կճանչցնե, դոլի և հետևելու ճամբան կցուցնե, զգայուն աշակերտն դժվար է որ չհետևի, վասն զի լավությունն, որ սովորաբար դյուրին չերևնալուն համար հետևող չունենար, հոս ազգային պարծանաց ալ նրվական հպարտություն մը օգնական գտնելով, կդյուրանա։ Նույնպես ալ, երբ ազգին ընդհանուր սեպված պակասություն կամ մոլություն մը ցուցվի և ցավելով առաջ բերվին անոր մեղի տված չարիքն և թե որչափ անով ուրիշ ազգերե ետ եմք մնացեր, նույն սիրտն, որ առաջ ակնիվ հպարտությամբ մը կբարձրանար, հիմա ալ ակնիվ ամոթով մը կցածնա, կքաշվի և կհորդորվի այն նախատինքն վերցնելու իրմեն կամ ազգեն։

Ահ օգտիս համար է, որ կփափագինք, կազդենք, կաղաչենք ազգին հատուկ դաստիարակության փույթ ունենալու և նույն վախճանին համար մենք ալ ասնյութիս վրա քանի մը մտածություններս կհրատարակենք և չենք տարակուսիր, որ մեր պատվական ընթերցողք արդեն ճանչցած ըլլալով որ զմեզ շարժողն ազգերնուս սերն է, բնավ ազգասիրության պակասություն չեն սեպեր, երբոր ստիպվինք երբեմն ազգերնուս պակասությանց վրա ալ ցավով խոսելու և բնավ չկարծեն, թե խոսքերնիս մասնավորի համար գրուցված ըլլան։

Որովհետև դեռ ազգերնուս մեջ կրթությունն լավ ծավալած չէ

և իհարկե լավ կրթողներն ալ շատ չեն, թերևս ոմանց լավ երևնա օտարազգյաց ձեռքն հանձնել իրենց ու մեր ազգին հույսն ու հաջորդներն։ Այս բանիս մեկի անպատշաճ երևնալն ցուցնելեն առաջ, պետք է զանազանենք դաստիարակությունն գիտութենեն։ Գիտությունն, ինչպես լեզուներ, բնաբանություն, մեքենականություն և այլն, զմարդ կրթյալ չեն ըներ։ Կրթությունն է շտկություն ընդհանուր և առանձին մարդկային բնության կրից և մտաց, որուն կհետևի մտաց զարդացմունքն ալ, որ կըլլա պեսպես գիտությամբը։ Գիտության համար չենք հակառակիր, թե օտարաց մեջ կրնանք գտնել մեկի լավ վարպետներ, բայց թե այն օտարքն կարող ըլլան լավ դաստիարակել զմերայինս առվել քան զմերայինս, մեկի ընդունելի չերևնար։

Ո՞վ կընդունի, որ գաղղիացին ըզռուսն կրթե, ռուսն՝ զգերմանացին, գերմանացին՝ զիտալացին, իտալացին՝ զգաղղիացին կամ զանգղիացին։ Ոչ ոք խելացի չընդունիր և չընդունելուն գլխավոր պատճառն, ինչ որ ըսեն, աս է, որ ամեն ազգ զանազան բնավորություն և ազգային ոգի մը ունի և ինչպես զանազան լեզու ունեցողք զանազան բացատրություն ունին, դրեթե այսպես ալ զանազան կերպ ունին ըմբռնման և մտածման։ Ասով է այն արևելքի և արևմուտքի մեծ զանազանությունն, ասով յուրաքանչյուր ազգայ թե կրթյալ և թե անկիրթ իրարմե տարբեր ախորժակներն, սովորություններն, բարքերն։ Եվ ինչպես մտածմունքին տարբեր է, այսպես ալ՝ մտածմունքն հաղորդելու և ըմբռնելու կերպն, թող զսերն, որ նմանյաց մեջ ավելի կաղդե. քանի որ այս զանազանությունս կա, օտարի կրթությունն կամ քիչ կամ ոչինչ կհաջողի, կամ կրթվողն իր ազգային ոգին կկորսնցնե։ Իսկ արդ՝ թե որ այն վերոհիշյալ ազգերն, որ մեջերնին ավելի նման են իրարու, քան թե մեկի, չեն կրնար մեկմեկու կրթիչ ըլլալ, ինչպես կրնան հայկազանց կրթող ըլլալ։ Մի՞թե մեր ազգին խորանշան կերպարանաց զանազանության չափ՝ չկա մեր և անոնց ոգվույն մեջ ալ զանազանություն մը, մի՞թե հայերն, ամեն բան կորսնցնելով, իրենց ազգային ոգին ալ բոլորովին կորուսեր են, որն որ անկարելի է կորսնցնել, քանի որ կա ազգային լեզու, ազգային ավանդություն, ազգային ծես և արևելյան զգացմունք մը։

Պիտի ըսեն, թե այն հիշված ազգերն կիրթ ազգեր ըլլալով, մեկմեկու կարոտ չեն, մենք անկիրթ ենք, անոր համար կուզենք անոնցմե կրթիչ առնուլ։ Թող այս ալ ըսեն, թե հապա այն ազգերն

ինչպե՞ս կրթվեցան, իրենք զիրե՞նք կրթեցին, թե կարգավ մեկն զմեկալն կրթեց, կամ թե մեկ մը ելավ ու գնաց զամենքն կրթեց։ Նայինք. ո՞ր բարերար ազգն էր, որ ելավ բոլոր Եվրոպան կրթեց և ինչո՞ւ մեկեն չկրթեց. վասնզի դիտենք, որ իտալացի մը, գաղղիացի մը, անգղիացի մը, գերմանացի մը, ռուս մը նույն ատեն կրթված չեն։ Իսկ եթե մեկն զմեկալն կրթեց, ցուցնեն, թե ինչ զարմանալի կարգավ եղավ այս բանս, կարելի է մենք ալ իմանանք մեր ազգին կարգն։ Իսկ չէ՝ թե որ այն ազգերն իրենք զիրենք կրթեր են մեջերնեն ելած խելացիներու ձեռքով կամ համորեն չանքով և ուրիշներեն լույս ու օրինակ առնելով։ Կարծեմ շատ ավելի դյուրին է, որ հիմա կարենան իրենք զիրենք կրթել հայերն ալ, որոնց մեջ կրթությունն չորս հազար տարվեն առաջ մտած է, և ոչ երբեք բոլոր ազգով բարբարոսության վիճակ ունեցեր են, քան թե այն եվրոպական ազգերն, որոնցմե բաց իտալացվոց, ամենեն հին կրթության սկիզբն ունեցողն ալ հազար չորս հարյուր տարի չկըրնար համրել, շատերն ասոր կես թիվն ալ։

Զմոռանանք վերի ըրած զանազանությունները, թե այլ է կըրթություն և այլ գիտություն։ Ամեն տեղ տղոց դաստիարակ մը և դպրատան ուղղիչ մը կպահանջվի, որ տգետ չըլլա, բայց ոչ երբեք անկե կպահանջվի, որ գիտնա այն ուսմունքներն, որն որ առանձին վարժապետք կսորվեցնեն։ Եվ գրեթե միշտ երևելի և բարեկարգ դպրոցաց անվանի ուղղիչներ գովվեր են իրենց բարեկիրթ և աչքաբաց ըլլալուն համար, այլ խիստ քիչ կա, որ գիտուն ըլլալնուն համար։ Թե որ մեր մեջ ալ խել մը ատենե վեր գիտուն մարդիկ պակսեր են, ե՞րբ պակսեր են աչքաբաց, ճարպիկ, հանճարեղ ու զգաստ մարդիկ, որ թե արևելք թե արևմուտք զանազան տերությանց անանկ ծառայություններ ըրեր են, և կրնեն, անանկ գործարանաց և ընկերանոցաց վերակացու եղեր են, անանկ մեծ գործքեր առաջ տարեր են, որոնց խիստ շատ անգամ միայն իրենք հարմար գտնվեր են, թե իրենց պես հպատակ ազգաց մեջեն և թե իրենց իշխողաց մեջ ալ։ Թե որ իրենց շահուն հարմար հայերն ասանկ վարպետություններ ցցուցեր են մեծ գովությամբ, հիմա իրենց զավկներն ալ կրթելն այն շահերեն վար կսեպեն։ Հայերն (պարծենալու համար չէ նե՝ արդարության համար ըսենք), անոնք որ շատ դարերե վեր բոլոր արևելքի մեջ գրեթե առաջին բարեկիրթ և ճարտար ազգն ըլլալեն զատ, շատ եվրոպացվոց ալ մեծամեծ

ճարտարությանց համար բացեր են, հիմա պիտի՞ չկարենան իրենց տղոց կրթության վրա աչք ունենալ և օտար ձեռքերու թողուլ։

Ձենք ըսեր, որ ամեն ազգային ալ վերադասելի է քան զօտարն, հապա կհավատանք, որ բնությամբ զգաստ մարդ մը իր կես գիտությամբն ալ միշտ առավել է, քան զշատգետ օտարն կրթության հոգուն մեջ, վասնզի ունի անհամեմատ գիտություն մը ազգային ոգվո և սիրո, որն որ անկարելի է որ օտար մը ունենա։ Շատ մեծ և անսովոր նախախնամություն մը պիտի ըլլա, որ գտնվի օտար մը, որ բոլոր ջանք ու հոգն դնե զհայերն կրթելու։ Եվ սակայն թե որ գտնվի ալ, մի՞թե այն մարդն ավելի ջանք պիտի չընե, որ նախ ինքն կրթվի հայակրթության մեջ, երկայն քննությամբ ճանչնա մեր բնավորությունն, զննե մեր երակներն և զմեզ իրեն չհարմարցուցած՝ զինքն մեզի հարմարցընե։ Իսկ արդ ո՞րն է դյուրին՝ անոր զմեզ ճանչնա՞լն ու մեզի հարմարիլն, թե խոհական և ազգասեր հայու մը անոր կրթության կերպերն առնուլն, անոնց լավ դպրոցաց ոճն դիտելն և ըստ այնմ ինքն ալ իր ազգին դպրոցին զնույնն հարմարցնելն։ Ե՞րբ տեսեր ենք, որ եվրոպացի մը հայու կերպ առած ըլլա, բայց շատ, շատ հայեր տեսեր ենք, որ անոր կերպերն կատարյալ ընդօրինակեր է։ Ե՞րբ տեսեր ենք այն բարակ մարդիկներեն մեկն, որ հետ երկար տարիներու վարժմանց ալ կարենա հայու հայերեն մը խոսիլ, բայց շատ հայ կճանչնանք, որ իրենց հաստությամբն ալ քանի մը տարվան մեջ անոնց նման լեզուն ալ խոսեր են և գիրք ալ շարադրեր են։ Արդ՝ թե որ մերոնք այս հարմարությունս ունին, նախ պետք է հուսալ, որ շուտով կրնան առնուլ լավ կրթության կերպերն և մտցնել իրենց մեջ, երկրորդ, վախնալ որ չլլա թե օտարաց կրթել տալով իրենց տղաքն՝ այն օտարներուն բնություններն ու բարքն առնուն և իրենց ազգությունին ավրել տան։ Օգտակար կրթությունն պետք է առնուլ պատվաստի պես մեր բնության վրա, չէ թե մեր բնությունն անոր վրա պատվաստել. ինչպես կըսեր մեկն, որ կովեն ալ պատվաստ կընդունիմ, բայց հանձն չեմ առնուր երակներուս մեջ առյուծի արյունն ալ։ Ուրեմն ազգերնուս հատուկ կրթություն տվողն ըլլա ազգային, օտարներն մեզի կերպեր ցուցընեն. անոնք մեզի լույս տան, բայց հայու ձեռքն ըլլա ջահակիրն. դժվարին ալյաց մեջ մեզի ծովացույց ըլլան, բայց նավապետն մեզնե ըլլա։

Գանք օրինակի և մեզմե առնունք օրինակն ալ։ Ազգերնուս մասնավոր կրթությունն առջի անգամ սկսած է ասկե 1550 տարի

առաջ, ի ձեռն մեր հոգվոց և մտաց անմահ Լուսավորչին և իրեն գործակից մեծ Տրդատին[1]։ Այն ատեն ազգերնիս շատ ավելի անկիրթ և նախապաշարյալ էր թանձր սովորությամբք և խոր խավարի մեջ. անհրաժարելի պետք էր, որ դրսեն մարդ բերվի զայն կրթելու կամ մերոնցմե դուրս ղրկելու։ Նայինք ինչ ըրին մեր Լուսավորիչքն։ Նախ՝ թեպետև գիտեին հունաց առավելություններն և ասոնցմե ալ վարպետներ[2] առին, բայց ավելի ասորիներեն բերին, ինչու որ, ազգերնուս բնությունն ավելի նման էր ասոնց։ Երկրորդ, ոչ այնչափ դուրս ղրկեցին հայ մանկտին, որչափ դրսեն վարպետ բերին և ներքին կրթության ինքնին Գրիգոր և Տրդատ Լուսավորիչք հոգ կընեին դպրոցներուն այցելությամբ, ինչպես կիմանանք Ագաթանգեղոսեն, որ՝ ականատես էր։ Երրորդ, ամենեն առաջ քրմերուն տղաքն սկսան կրթել, որոնք հայոց ոգվույն գրեթե ավանդապահքն էին, և զանոնք եկեղեցական պաշտոնի ալ հասցնելով. հոգաբարձու դրին մնացածներուն կրթության։ Եվ աս բանս լավ կհայտնեն իրենց թղթովն, որ գրեցին քանի մը եպիսկոպոսներու հրավիրելով զանոնք գալ ի Հայաստան, «Զի դեռ մանկունք երկրիս ի դպրոց են և ոչ ոք ի նոցանէ բաւականս քահանայութեան». ըսել է, որ առջի տարիներին գրվեցավ աս թուղթս։ Եվ ահա մտքերնին դրեր էին, որ մեկ մ՝ որ այն տղաքն կարող ընեն վարպետության, ալ դրսեն շատ կարոտություն պիտի չունենային։ Ասոնց նման ըրավ երկրորդ Լուսավորիչ մ՝ ալ, մեծն Ներսես Հայրապետն, Հայաստանի մեջ հաղարավոր դպրոցներ բացավ իր ազգն կրթելու ավելի իր եպիսկոպոսաց ձեռքով քան թե օտարաց։ Պետք է խոստովանինք, որ թե Գրիգորի և թե Ներսիսի ջանքն հաջողապես առաջ չգնաց, բայց ինչո՞ւ։ Մեկ մ՝ որ երկուքին ալ մեռնելեն կամ քաշվելեն վերջն՝ Հայաստան քաղաքական խռովությանց և ոտքի տակ ընկավ, ամեն բան տակն ու վրա եղավ, նախարարներն անհոգ, վրանին ալ դեռ կռապաշտության շոշորդ կար, մեկ մ՝ ալ, որ ազգային գիր չկար, որն որ ազգային կրթության զարգացնող ջուրն կրնանք ըսել։ Այս պակասությունս լեցնելու սահմաններ էր աստված զՍահակ և զՄեսրոպ։

Այս երրորդ լուսավորիչքս հայոց գիրն հնարելով, լեցվին իր բնական ճամբան, մեզի ալ հայոց կրթությանն ցրցուցին. հայոց ընտիր տղաքներն ղրկեցին երևելի քաղքներ գիտություն սորվելու, բայց նախ իրենք տվին անոնց մարդկային և ազգային կրթություն։ Քանի որ պզտիկ էին՝ ինքն հայոց ուսուցչապետն Մեսրոպ տարավ

զանոնք Մելիտինե[3], երբոր անոնցմե զատվելու եղավ, տեղն թողուց Ղևոնդ երեցն, որ արդեն տարվոր էր. մեկալ թարգմանիչքն ալ, որ վերջն գացին զանազան կողմեր, ամենքն ալ նախ Հայաստանին մեջ կրթված և չափահաս անձինք էին։ Ասոնք դառնալեն վերջն իրենք պիտի ըլլային հայոց դաստիարակներ և վարժապետներ, մեղվի պես ամեն ծաղկե ժողովելով Հայաստանի փեթակն պիտի լնուին ու հայու մեղր պիտի տային հունական, ասորական, քաղդեական ծաղկներե։ Մեծ և անմիտիթար դժբախտություն, որ իրենց ալ նույնն պատահեցավ, ինչ որ Գրիգորի և Ներսիսի և սակայն բանն այնպես ետք չմնաց։ Վոսամշապուհ չկար, բայց գտնըվեցան մեկ Սահակ Բագրատունի մը, մեկ Վահան Ամատունի մը, մեկ Մամիկոնյան մը, և ուրիշներ ալ, որ ձեռք դրին թարգմանչաց։ Անոնք ալ դպրոց բացին, իրենք եղան վարպետ, և ահա այն ատենն էր որ, կրսեն հետագա պատմիչք, սկսան անոնք բազմացնել դասդաս ճարտասաններ, քերթողներ, պատմիչներ, և ինչ որ երկայն ատեն մեծ մեծ օտար իմաստուններ չէին կրցած ընել, իրենք ըրին։ Մեկալներն չէ թե միայն այս հաջողություններս չունեցան, հապա երբեմն արգելք ալ կըլլային հայոց առաջադիմության ինչպես Գլակա վանքին մեջ, որ ամենեն հին և երևելի վանքն էր հայոց՝ Զենոբ Ասորին ըլլալով առաջին վերակացու, հետևիններն ալ ասորի էին, և թեպետև Սահակ ու Մեսրոպ երկնքեն ալ գիր իջուցին, բայց անոնք հաճառյալ՝ ասորերենը չթողուցին, ինչվան որ հարյուր տարիեն ալ ավելի ետքը Թոդիկ հայ առաջնորդն անոնց դպրությունն ալ, գիրենք ալ հալածեց այն տեղեն[4]։ Այսպես է շատ հեղ օտարաց հիշատակն. կուդան այդիդ մշակելու, կամաց-կամաց իրենք կըլլան տեր, ուզածնին կյանեն, քեզի ալ իրենց ուզածն կկերցնեն։ Մեր թարգմանիչներեն առաջ երկու հաղար տարվան միջոց, հայերն երևելի հանճարավոր մարդիկ ունեցեր են և թերևս այն թարգմանիչներեն ալ վեր, որոնցմե ոմանք արձանի ալ արժանի եղեր են Հռոմմա և Բյուզանդիոնի մեջ։ Բայց ո՞ւր են այսօրվան օրս իրենց փառքն, իրենց գործքերն, իրենց անուններն ալ, որոնցմե հաղիվ մեկ երկուքին լսեր ենք այն օտարներեն, որոնց որ այն ատեն պարծանք եղեր էին մեր հայրեն, իսկ այսօր ոչ անոնց պարծանք են և ոչ մեզի, վասնզի չենք ճանչնար և մեզի օգուտ՝ մ՝ ալ չեն բրած։ Այսպես ալ ետևի դարերուն մեջ ինչվան մեր ատեններն, եղեր են հայոց մեջ շատ հմուտ բժիշկներ, թարգմաններ, դեսպաններ թե հարևելս և թե հարևմուտս։ Ո՞ւր են անոնց անուններն Հա-

յաստանի մեջ, անոնցմե ոմանք կրթյալ օտարաց մեջ չէին սորված, և սակայն ի՞նչ օգուտ ըրին իրենց ազգին։ Ավելի վերադասելի չե՞ն հիմակվան ազգային կրթության փույթ ունեցող վարժապետներն, որ թեպետև անոնցմե շատ պակաս են կատարելությամբ, բայց շատ ալ ավելի օգուտ կընեն զանազան ազգային դպրոցաց մեջ, իրենց ազգային հոգվովն։

Հուսանք, որ իմացան բարեսերը, թե մեր միտքն օտարներե խորթիլ չէ, հապա անոնց չթողուլ մեր զավակաց, մեր հույսերուն կրթությունն, իսկ անոնցմե ուսմանց վարպետ առնուլ, կամ մեր տղաքն անոնց քով զրկել՝ կընդունինք ալ, կհորդորինք ալ։ Միայն թե այն ատենն ալ, թե որ ուսանողքն դեռ համբակ են, կփափագինք, որ ազգային ձեռքի տակն ըլլան, և այս բանիս օրինակ կուտան այսօրս մեզի նոր կրթվող ազգերն ալ, հույնք, օսմանյանք, եգիպտացիք և եվրոպացվոց մեջ վերջի կրթված ազգերն։

ՄՈՎՍԵՍ ՔԵՐԹՈՂԱՀԱՅՐ ՀԱՅՈՑ

Արդյոք քանի՞ և քանի՞ անգամ ազգային դպրություն սիրող սիրտք, Հայկական քնարի մը ձայն լսելով, չեն հառաչած մեղի հետ, թե ո՞ւր են հայկազանց երգերը, ուր են հայ Հոմերոսները։ Հնացյալ ժամանակին անհուն և անհայտ ծոցուն մեջ այս հառաչանքներն հնչեր, ծավալվեր, կորեր են։ Նախնի ժամանակներուն դյուցազնական հեթանոսական երգերը կրկնելեն գրեթե բոլորովին հուսահատած, Հայկական քնարը կդատնա քրիստոնեության նորոգած դարերուն վրա և անկեց կկանչե իր նոր թելերուն վսեմական, բարձրաբարբառ ձայնը։ Շատ հեղ կ՚անդիպին պեսպես և դեղեցիկ ձայներ, բայց այն փնտրած մեծին երգերը դեռ չփարեցան իր աղեղանցն վրա։ Գիտե մեկ հայ և սրբազան Հոմերոս մը, որ հունաց հին Հոմերոսին պես՝ իր հայ ազգին մտաց և աշխուժից ներշնչողն է։ Հայաստանի հնացյալ ավերակաց և հիմնահարկ մեհենաց վրա կեցած՝ կկանչե մեկ Մովսես մը Հայաստանի տխրաղդյաց եկեղեցյաց և մթացյալ վանորեից։ Մեկ Մովսես մը, որ հրեից Մովսեսի նման, իր ազգին ընդհանուր և ամենաարվեստ վարդապետն է, ինքն ըլլալով պատմահարց ակնաղբյուր, ինքն բանաստեղծության վարիչ, ինքն ճարտասանության օրինակատու, ինքն աշխարհագրաց նախաշավիղ, ինքն քերականաց առաջնորդ, ինքն թարգմանչաց գահագլուխ, ինքն եկեղեցական եղանակաց երաժշտապետ,

ինքն բանասիրաց մեջ ամենահմուտ, ինքն մեր վարդապետաց վարդապետն, ինքն հնագետ նաև մարգարե, և այս ամեն անուններեն վեր հատուկ կոչմամբ ինքն Քերթողահայր Հայոց։

Քերթող կըսվին մեր քերականք և ավելի տաղաչափ բանաստեղծք։ Խորենացին գիտենք, որ հին քերականություն գրեր է, կամ բացատրեր է, բայց զնույնն իրեն աշակերտակիցքն ալ՝ Մամբրե, Դավիթ, Ստեփաննոս և այլք գրեր են։ Միայն անոր համար չկարծըվիր, որ Քերթողահայր ըսվի, հապա ավելի բանաստեղծական կամ երգահան գրվածոց համար, և թե այս մտքով այս անվանն արժանավոր է, վկա ըլլան մեզի իր ծանոթ սքանչելի շարականներն, որոնց չափական շենքն ալ, իմաստն ալ, եղանակներն ալ կցուցնեն, թե շատ գերազանց ոգի և ճաշակ ունի եղեր մեր Խորենացին։ Սակայն միայն ասոնց համար ալ չենք կարծեր, որ Քերթող ըսվի, ինչու որ այս երգերես կերևի, թե ծերության և վերջի ատեններն երգած է։ Իսկ Քերթող անվան սկիզբն կվկայե, որ այն ատեն առած ըլլա, երբ որ իր ընկերներն իրենց փառավոր մականուններն առեր են, երբոր նոր Աթենքեն դարձած, մանավանդ թե դեռ հոն իսկ, իր եղբայրը Մամբրե վերծանող կըսվեր, Դավիթը՝ Անհաղթ, Ղազարը՝ պատմագիր և Ճարտասան, Աբրահամը՝ հռետոր, բացի Աթենացի և Բյուզանդացի ըսվելեն, այսպես ալ մեկալնոնք մեյմեկ գովանի անվամբ ըստ յուրաքանչյուր առավելության, որ վերջն Հայաստանի մեջ ավելի պայծառացուցին։ Ըստ այսմ, և Խորենացին ալ քերթողության անվան արժանի գործք մը երևցուցած պիտի ըլլա, որուն համար Քերթող և վերջը Քերթողահայր ըսվի։

Բանաստեղծական ոտանավոր գրվածքներ ունենալուն ստույգ հավաստիքն ունինք իրեն պատմության Գ. գրոց ցանկին՝ վերջը, որ ողբեն ալ վերջը կդրե. «Տաղք չափաւ յինքն և 'ի Սահակ Բագրատունի»։ Որչա՞փ փափագելի է աս տաղս, այնչափ ալ սրտերնուս մեծ զրկումն, որ վերնագիրն ունենանք և բուն գրվածքը չգտնենք։ Այս է միայն մեր գիտցածը, բայց հայկական քնարն անտարակույս իրավամբ դեռ շատ երգեր և չափական տաղեր ալ կհուսա իր Մովսիսեն, թեպետ մե՞ղք, որ դարերե ի վեր բաղդը չէ օգնած հուսոյն, թեպետև ինքը դեռ հուսահատած չէ, բայց ցավն ալ պզտի չէ։ Այս ցավույն սուտ մխիթարություն, մանավանդ թե ալ ավելի ցավի պատճառ մը կգտնե մեզմե առաջիններուն ցավն ալ Խորենացիեն զրկվելնուն պատճառավ. միայն մենք չենք եղած իրեն

կարոտ, ինչվան իր կենդանության ատենեն ալ իրեն կարոտողք կան եղեր։ Երբոր սուրբ Սահակա և Մեսրոպա մեռնելեն վերջն Հայաստան դարձեր է Խորենացին, ուզեր է անոնց բռնած ճամբովն և իր «Ամենիմաստ արուեստովն և կատարելագոյն յարմարութեամբն», ինչպես ինքն իսկ կվկայե, Հայոց մեջ ծավալել իր զանազան գիտություններն և գեղեցիկ կարգերով զարդարել զՀայաստան։ Բայց տեսնելով մեկ կողմեն աշխարհքին ավերումնքը և պարսից հալածանքը, մեկալ կողմեն նախարարաց անհոգությունն ու թշնամությունը, մեկ կողմեն եկեղեցականաց և կրոնավորաց պաղությունն և ուսումնատեչությունը, մեկալ կողմեն անոնց թանձր ու ծրդած ախորժակները, բողոքեր է, թե՝ «Ո՞վ այսուհետև զմերս յարգեսցէ զուսումն, ո՞վ ուրախասցի ընդ յառաջադիմութիւնս, մասամբ ինչ յաղթահարեալ. ո՞վ զմեզ սփոփեսցէ գովելով։ ...Ո՞վ ոք ի ձէնջ թոչակս յաղագս մեր. ո՞վ ոք վարդապետացն մաղթանս. ո՞վ ոք բան յօժարեցուցող կամ յորդորական. ո՞վ ոք երթալս մեր բեռնաբարձս. ո՞վ ոք ի գալն մերում հանգիստ կամ տուն կամ օթանոց մեզ պատրաստեաց»[2]։ Ասոնք սրտեն ըսելով և անմահ գրչով գրելով այն աղդու ողբերն որ կկարդանք իր պատմության Բ. և Գ. գրոց վերջի գլուխներուն մեջ, սև աչք մը տալով Հայաստանին սև երեսին, ծածկեր է ինքզինքը։ Եվ թեպետ իր ընկերակիցներն ալ ջանացեր են կամ իրեն նմանիլ, կամ զինքն իրենց նմանցնել, բայց երկուքն ալ չեն կրցած։ Իրենք մնացեր են հայոց մեջ ծանոթ, իմացնելու համար թե ինչպիսի՞ անձե զուրկ մնացինք և իրենք իսկ շատ տարի փափագեր են տեսնելու իրենց պանծալի աշակերտակիցը, բայց զո՞ւր ջանք։ Գյուտ կաթողիկոսն ալ, որ իր հին դասընկերն էր և անոր համբավն լսած, շատ փնտրելտվեր է, բայց չէ գտած։ Այս կերպով պատժեր է Մովսես Քերթողահայր մեր ապերախտ հայրերն, իր ողբախառն բարկությանը մեջ Իսրաելի նման հանդիմանելով զանոնք. «Արք Արամեանք, մինչև յե՞րբ եք ծանրասիրտք... քանզի զենէք զենումն անօրէնութեան և զյուսացեալն ի Տեր՝ արհամարհեցէք»։

Քանի որ այս ղրկմանս ցավը սրտերնուս վրա տպավորված է՝ դիպված մը պատմենք, ուսկից հուսամ, որ մխիթարվինք ալ. աս դիպվածս Գյուտա ատեն կպատահի և թե գրով, թե բերնով ավանդված է։

Գյուտ՝ նախնի և հիմակվան ընտիր հայրապետաց սովորությամբ իր վիճակին եկեղեցիներուն այցելություն ընելու ատեն,

անգամ մ՝ ալ Վաղարշապատու մեկ գեղ մը կիջնա, որ ոմանք Օշականն է կըսեն, էջմիածնա մոտ և անոր եկեղեցվույն ալ այցելություն ընելեն ետև, տեղացոց գլխավորը զինքը կընդունի և հարկինք[3] մը կընե մեծ պատվով, անոր հետ եղած եկեղեցականաց և իշխանաց ալ մեկտեղ։ Հարկինքին ատեն բազմություն մարդկան հոն կդիպվին զանազան կողմերե և պատվո համար կսկսին ամենքը մեյմեկ երգ, մեյմեկ գովեստ երգել կաթողիկոսին առջև գալով, որ անոր ալ շատ հաճո կանցնի։ Այն բազմության մեջ աղքատ ծեր մ՝ ալ ծանր ու լուռ կեցած՝ հանդեսը կդիտե եղեր։ Ուրիշ մեկ մ՝ ալ, որ շատ անգամ զայն ծերը տեսեր ու գիտե եղեր, որ ան գեղեն է և ձայն ալ ունի, ծերուկ, կսե, դուն ալ բան մը չերգե՞ս մեր կաթողիկոսը պատվելու։ Նա խպնելով ետ կքաշվի, ես տգետ պանդուխտ ծեր մ՝ եմ, ըսելով, բայց մեկալը սիրտ տալով ու անոր ճերմակ կախված մորուքը շոյշոյելով առաջ կքաշե կաթուղիկոսին առջև ու կստիպե, որ բան մը երգե։ Մեկ մ՝ ալ ի՞նչ կտեսնես, հանկարծ ծերը կփոխվի, նոր մարդ մը կըլլա, նույն ծերն՝ բայց նոր դեմք մը, նոր ձայն, կարծես թե Մովսես մարգարեին ճառագայթավետ լույսը վրան կիջնա, գետնակոր գլուխը կվերցնե, կուրծքը կտնկե, երեսները կարմիր կվառին, աչվները կրակի պես կփայլփայլին, շրթունքները վարժ նվագարանի մը պես կշարժին և ծերացած ծոցեն երիտասարդ ձայն մը կլսվի նման հնացած քնարի եղանակի, որ հնալովը միայն ավելի անուշություն առած ըլլա։ Այն ձայնը, ամենուն ապշած, լռած, անշշունջ ժողովին մեջ այսպես կերգե, երաժշտական ներդաշնակությամբ խաղալով, ոլորելով.

Ո՜վ արքայակերպ տեր քահանայապետ սուրբ
Եւ հովիւ բարի,
Որ յերկնայինսըն ընդմանեալ հրեշտակատեսիլ
Երրգեմգեմրք քեզ զերգս, քեզ զերգս, երգեմք քեզ
զերգս, երգրգեմրք քեզ զերգս։

Եւ ի շրթանց քոց բրդխեալ ջուր կենդանի
Երանգ-երանգ ներբրներբական ծաղկօք.
Երրգեմգեմրք քեզ զերգս (և այլն)։

Վասն որոց և զքառիցն ավետարանին գետք,
Զանուշն և զօգտակարն,
Արբուցանելով ըզպասքումրն ծարաւեաց
Երրգեմգեմրք քեզ երգս (և այլն)։

Կլոռ ծերն ու անշարժ կկենար, բայց դեռ երկայն ատեն լսողներն ալ անշարժ կմնան, կարծելով թե դեռ անիկա կդեղդեղի իր «Երբգեմգեմբք քեզ ղերգս» վարպետ երգն, որ զմայլած մըտքերնուն ու ականջներուն մէջ դեռ կթրթռա, ինչվան որ ծերուն մոտ կեղած երիտասարդ մը, որուն վրա որ այն երգին ատեն ամենեն ավելի այլայլություն մը կերևնա, ալ չդիմանալով առաջ կվազե կաթողիկոսին և անորն ալ և ամենուն ալ լռությունն ու զարմացմունքն ավելի մեծ դարմանքով մը ու լռությամբ մը կկտրե, կանչելով. «Ո՜վ սուրբ հայրապետ, սա է ի ձենջ կորուսյալն ծերացյալ աշաֆերտն Սահակա և Մեսրոպա, Աթենացին Մովսես»։ Կաթուղիկոսին գրեթե խելքն գլխեն գացած, կես թմրած կես արթնցած, տեսածին չհավատալով, բայց լսածին հավնելով; երկայն ու խոր քնե ելլողի մը պես կհառաչե. «Ո՜վ ավետական ձայնս, ո՜ տայր ինձ տեսանել զնա»։

Երիտասարդն արցունքները գետի պես բխելով, սիրտը տակն ու վրա ու գրեթե շունչը կտրած, հազիվ կրնա նորեն կանչել. «Արդարությամբ ասեմ, սա է ծերացյալն Մովսես»։ Այն ծերն է եղեր մեր անգին, ինքավ, անմահ Խորենացին, որ զինքն այն աղքատ կերպով՝ ծածկած՝ մոտիկ երեսուն տարի լռությամբ քաշված էջմիածնա Շողակաթի մեծահիշատակ վանեմական և սրբազան շուքերուն մեջ, և իր ամենասիրելի քեռվույն ու վարդապետին, սրբոյն Մեսրոպա գերեղմանին սրտաշարժ լռությանց քով, կաշխատի եղեր մեր ազգը փառավորելու իրեն փառքով. այն երիտասարդն ալ իր խորհրդասահ աշակերտն է եղեր։ Այս ծանոթությունս վերջը Մովսեսի ցուցած դեմքը, Գյուտա Թոչին ու իր աննման աշակերտակցին հետ պլլվիլն, այն երկու մեկմեկե վսեմ ծերերուն իրարու գուրգուրալը, բազմության հանդիսականաց ուրախությունն ու լացը, չորս դին ձայն երդելը, Դավիթ Անհաղթին ու իր դասընկերաց մեկ քանիին հոն հասնիլը, շատ իշխանաց և ժողովրդյան հոն վազել գալը, հազար ու մեկ հարցմունքները, հազար ու մեկ ուսումնական խնդիրներն և հանձնարարություններն, որ կընեն Խորենացվույն. և կաթուղիկոսին հոն զինքը Բագրևանդա արքեպիսկոպոս ձեռնադրելն և այսպես Հայաստանի իր հաղթական գանձը դտնելն, ինչպե՞ս պատմե գրիչ*։

* Վերոդրյալ երկու տող ավանդություն մը կկարծե, թե մեր Քերթողահայրն երբեք ըլլա իր սքանչելի և հրեշտականվազ ծննդյան ճրագալուցին հարցը, «Որ դասուց երկնաւորաց»։ Բայց հավանական է մեր դրած երգն, որուն իմաստն ալ կցուցնեն թե շատ փարելա և անուշ եղանակ պիտի ունենա. շինքն ալ նման է այն հին մեղեդեաց, որոնց ոճն հայտնապես կցուցնեն թե Թարգմանչաց դարեն

ԱԶԳԻՆ ՊԱԿՍՈՒԹՅԱՆՑ ԿԱՄ ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅԱՆՑ ՎՐԱ

Որովհետև ամեն մարդու պարտքն է իր ազգը սիրել, պաշտպանել, հոգալ և աս պարտքս առանց ճանաչողության չըլլար կամ լավ չըլլար, պետք է արդարությամբ ճանչնանք մենք ալ մեր ազգին չափն։ Սրբենք մտաց աչվնիս, որ չըլլա թե տգիտությամբ և վատությամբ մթնցած՝ չտեսնե անոր գեղեցիկ ձիրքերն ալ, կամ չըլլա, որ շլացությամբ, որ է չափազանց տեսություն, տեսածներնուս կերպարանքն այլայլե և սևն ալ ճերմակ տեսնենք։ Աս երկու տեսակ նայողներն ալ կրնան գտնվիլ ազգերնուս մեջ։ Ոմանք Հայու՝ ազգը ցած, անարգ, սինլքոր, կոշտ, սև բան մը կսեպեն, ոմանք ալ տեսակ մը հպարտ և համառ ազգասիրությամբ չեն ուզեր, որ մեկ կերպով մը ազգին գիպչվի, ազգին վրա արատ մը գրվի, իբրև թե ազգը սիրելը անոր պակսություններն ալ պաշտել ըսել է, մեկեն ազգը պաշտպանենք ըսելով՝ անոր պակսություններն ալ կը՝պաշտպանեն, առանց իմանալու կամ իմանալով։

Ազգին պակսությունը պարտկել՝ խելացություն է, բայց պակսությունը չճանչնալ՝ մեծ անխելքություն։ Ազգը միշտ վար դարնել, անդադար պակսություններն հիշել, ողբալ արհամարհել, ասոնք մարդուն սիրտը կկոտրեն, կթուլացնեն, կհուսահատեցնեն, կկատղեցնեն։ Միշտ գովելն և գովելի ցուցնելն ալ՝ սիրտը կուռեցրնեն, միտքը կկուրացնեն, սնապարծ ազգասեր մը կրնեն, օդու մեջ պարող մը, որ հաստատություն չունի, ու խելացին փուֆ մը ըսե, վար կիյնա։

Ազգ մը արթնցնելու վեր վերցնելու ատեն իրավ է, որ առջի բերան սիրտ տալու, հուսո և գովության ձայներ պետք է տալ, ինչպես որ եղավ ալ մեր ազգին, և մենք ալ՝ երբեմն աս ձայներս տվինք և մեծ մխիթարությամբ իմացանք, որ ազգերնուս մեջ կենդանություն կա, վասնզի գովեստ ըսելը և ուրախանալն և քիչ մը պարծիլն ալ՝ նշան է սրտին կենդանությանը. թե որ աս նշանս չըլլար, պետք էր հուսահատիլ մեր ազգեն։ Բայց որովհետև գովելով միայն կրթություն չըլլար, ինչպես տղա մը՝ անանկ ալ նոր կրթվող ազգ մը պետք է իմանա իրեն տիրող պակսությունները, որ ըստ այնմ զգուշանա ու շտկե զինքը. բոլոր ճարտարությունը հոս է, թե ինչպես, ինչ կերպով իմացնելու է։ Շատ կսխալին անոնք, որ ազգը կուզեն շարժել հանդիմանող, կծու ձայնով, կկարծեն, թե փոսը ընկած էշ մը կվերցնեն հրելով, մշտելով, կանչվռտելով,

հայհոյելով, այս բանս շարժելու տեղ ավելի կշլատե, կկոտրե ուժը, արդեն հիվանդ մարմինը ավելի կվատուժցնե։ Նույնպես ասոր հակառակ, չափազանց փայփայելն շողոքորթերն ալ՝ կրնա շարաշար գիրություն մը բերել հիվանդ սրտին, որ նույնպես վնասակար է անոր։ Ուրեմն չափավոր գովնստ մը, մանավանդ առջի բերան, կրնա լավ օծանելիք մը ըլլալ վիրաց, ոչ շատ ճզմելով, ոչ շատ շոյելով։

Հիմա տեսնենք երկու հակառակ կարծյաց կամ նայվածքին պատճառներուն։ Անոնք, որ ազգը իրրև կատարյալ կամ առավելյալ կցուցնեն, կարծեմ ուրիշ մեծ պատճառ չունին, բայց եթե իրենց և իրենցմե առջիններուն կարծիքը, համառ ազգասիրությամբ մը, որ է տարածյալ ինքնահավանություն մը, խոշոր և հոգնակի եսություն մը, և ահա այս կարծիքն է, պետք է հոս խոստովանինք, ազգերնուս գլխավոր պակասություններեն մեկը, որ ուրիշ տեղ կքննենք[1]։ Ազգասիրությունն շատ լավ բան է, բայց ճշմարտությենե դուրս չելլելն ամենեն լաւն է և ազգասիրությենե ալ դուրս չէ. «Ազգին վրա փոշի մը չնստեցնել ուզելն՝ ազգը քարկոծելու վտանգի մեջ ձգել է» կըսե Խիկարը։ Թե որ մենք հայ ըլլալնուս համար հայու ազգն զարմանալի կատարյալ, գեղեցիկ սովորությամբք զարդարյալ պետք է տեսնենք, ամեն ազգեր ալ պետք է այնպես տեսնեն իրենցը։ Իսկ թե որ մենք գիտենք, թե անոնց մեջ պակասություններ կան, անոնցմե իմանանք, որ մեր ազգի մեջ ալ կան։

Ո՞րն են մեր պարծանաց աղբյուրներն. քաղաքական զորությո՞ւն, խելացի քաղաքավարությո՞ւն, գիտությանց զարգացմո՞ւնք, երևելի գործոց համբավ ու փա՞ռք։ Դժբախտաբար ասոնցմե խիստ քիչերը կտեսնենք հիմա։ Իսկ թե որ անցածներուն վրա է պարծելիքնիս, պետք է անցյալը ներկայեն զանազանենք, ու ըսենք թե ունեինք, թե չէ ունինք։ Ու երբոր հիշենք, թե մեր պապերուն քով կարասով լեցուն ստակ կար, հիշենք ալ, որ մեր քսակը պարապ է։ Երբ որ անոնց սամույրները հիշենք, նայինք թե մեր ուսերն ալ կտաքնա՞ն։ Երբ որ անոնց վայլած դահամունքն[2] և գուսանաց ձայներն հիշենք՝ նայինք թե մեր փորն ու ականջն ալ կկշտանա՞։ Թե որ ասոնք մեզի հիմա օգուտ մը չունին, և ոչ ալ իրենց մեծությունը, հարստությունը, խելքը գիտությունը, սրբությունը օգուտ մը կրնան բերել, ինչվան որ մենք ալ ջանք չընենք մեր քրտինքովը զանոնք վաստկելու։ Դրախտին՝ Հայաստանի մեջ ծաղկիլը,

զմեզ չկրնար ազատել հիմակվան փուշերեն, որ լեցուն է ճամբընուս վրա, տապանին՝ իր նավահանգիստը մեր Այրարատ լեռանը վրա գտնելն, չէ կրցած զմեզ բարբարական չընել. թերևս ամեն ազգե ալ եվել։ Մեր աննման դյուցազունք և քաջերն և երևելի մարդիկը չեն կրնան մեր գերության և խեղճության վիճակը մեղի մոռցնել, մեր՝ լուսավորչա որդիք ըլլալը, չկրնար մեր միտքը չբերել, թե հրեայք ալ Աբրահամու որդիք էին։ Եվ թե ամեն ազգի ալ մեկ լուսավորիչ մը տրվեր է, որ ջանան անոր լույսը առնելու և իրեն նմանելու, չէ թե անով պարծելու։ Ասանկ պարծողաց համար կըսե Խիկարը թե՝ «Բերաններին լեցուն է, բայց փորերնին միշտ պարապ»։ Նախնիք այն ատեն պարծանք են մեզի, երբ մենք ալ իրենց նման կըլլանք, ինչպես որ մեզի նախատինք ալ չեն ըլլար անոնք, թե որ մենք անոնցմե լավ ըլլանք։ Մեր ինչ ըլլալը մեզնե կախված է, անոնց պարծանքն ու փառքը մեկ լույս մըն է մեր ճամբուն վրա, բայց մենք պետք է աչվնիս բանանք ու ոտվնիս շարժենք, չէ նե՝ «Ոչ ճամբան գիտնալն կարավանը իր իշխանին կհասցնե, ոչ նավահանգիստը ճանչնալն զնավը կմոտեցնե» կըսե Խիկարը։

Թե որ մեր աստվածատուր բնական ձիրքերն են մեր պարծանաց պատճառ, ասոնք իրավ են և շնորհակալ պետք է ըլլանք, որ հայու ազգին տրված է շատ կարողություն, ուսկից շատերը պակաս կերևնան, բայց շնորհակալ ըլլալու տեղ չըլլա որ անխելքությամբ հպարտանանք և ավելի ամոթալի ըլլանք, վասնզի բան ունենալը պարծելի չէ, հապա բանեցնելն և օգտակար ընելը։ «Մենք շատ զենքեր ունինք,— կըսեր մեկը,— սնտուկով սուր ունինք, պատերնես հրացաններ կախված են»։ «Եվ անշուշտ պատին վրա ու սնտուկներին մեջ կենալնուն համար է,— ըսավ լսող մը,— որ ճանճ մ՝ ալ չես հալածած»։ Թե որ կուզենք հավտացնել, մանավանդ թե հավտալ թե ունինք, պետք է գործածելով ցուցնենք, չէ նե՝ կամ չունենալու, կամ ագահության, կամ չարության, կամ անհոգության նշան կուտանք և հիրավի, այս պակասություններուն մեկը պիտի ըլլա մեր վրան։ Հա՜ այս ուրեմն ցուցնենք նախ մեր ձիրքերը, մեր առավելությունները ու վերջը սկսինք (թե որ կվայլե) մեր քովինները դատել։ Վասնզի աս ալ մեկ պակասություն մըն է մեր կարծեցյալ ազգասիրաց, որ չեն կրնար հայու ազգը գովել կամ պաշտպանել, ինչվան որ կամ հոռոմը, կամ ասորին և կամ հրեայն վար չզարնեն. «Այսպես կընեն տղաք,— կըսե Խի-

կարը,— պատչ վրա ելլելու ատեն. ընկերներին կպատկեցնեն, որ վրան ելլեն»։ Անիրավությամբ և անխելքությամբ խաղնած է այս հնարքը, վասնզի նախ՝ որ ուրիշի պակասությունը մեզի առավելություն մը չտար, և երկրորդ՝ շատ անգամ, չըսեմ միշտ, սխալ իդատեն աս բանիս մեջ։ Հայը գովելու կամ պաշտպանելու ատեն հոռոմ մը, կամ հրեա մը, ասորի մը, դիմացնին լու մը կերևնա, բայց որչա՞փ տարբեր պիտի երևնային անոնք, թե որ իրենք ալ այն ազգերեն առաջ եկած ըլլային։ Արդյոք որչա՞փ այն ատեն հոռոմությունը բարձր պիտի երևնար, քան հայությունը։ Թե որ հասակդ չափել կուզես, կանգնիր վրադ դիր, քովինիդ վրա մի դներ, իսկ թե որ երկուքնուդ հասակն ալ կուզես չափել, երկուքին ալ մեկ կանոնն բանեցուր։

Թե որ հայու ազգը լավ հատկություններ ունի, ուրիշ ազգեր ալ ունին, թե որ անոնք պակասություններ ունին, հայն ալ ունի։ Վասնզի ազգ ըսածդ պարտեզի մը կնմանի, որ անկարելի է թե գեղ և անօգուտ խոտ ալ չբուսցնե. բանը սա է, թե որ պարտեզ ավելի մոլախոտած կըլլա։ Հայտնի է. որն որ ավելի անհոգ, անմըշակ թողված ըլլա։ Այնպիսվույն թե հողը լավ ըլլա, բայց դարմանող ձեռք չըլլալուն համար կրնա բոլորովին անպիտան խոտերով լեցվիլ և օգտակար բույսերն ծածկվիլ և խղդվիլ. շուրանակյալ կրթությունն է, որ դաղգերն ավելի կծաղկեցնե, քան թե անխնամ թողնված բնական ձիրք։ Ունեցե՞ր ենք արդյոք, կամ ունի՞նք մենք ալ աս շարունակյալ կրթությունը... Ուրեմն լռությամբ և արդար ցավով խոստովանինք, թե մեր մեջ ալ շատ պակասություններ կա, շատ հետ մնացեր ենք։ Թե որ պակասության անունը մեղի սիզգալի է, ավելի կզվելի ըլլա անոր հետևանքը։ Ջանանք ճանչնալ ու խլել աս գեղ խոտերն, ան ատեն առանց քարոզելու ալ լավ կերևնանք։

Արդար և ճշմարիտ ազգասիրաց թողլով աս բանս քննելն ու խորհրդածելը, դառնանք մեկ մ՝ ալ անոնց, որ առջիններուն պես առանց իրավանց գազգը բոլորովին վար կդարնեն, կարհամարհեն, ոչնչացնել կուզեն։ Աս բանիս ստույգ պատճառը իրենց ազգասեր չըլլալն է. թե որ քիչ մը սեր ունենային, շատ մը աչք կունենային։ Ջասնք պետք է խրկել, որ նախ ազգասիրության դաս մը լսեն, վերջը բերեն իրենց պատճառները։ Մեծամեծ տերությանց և ծաղկած ազգաց վրա զմայլած՝ հայոց ազգն ալ ա՞զգ է կըսեն. արևելյան խաժամուժներեն մեկն է։ Իհարկե աս ըսողն ալ հայու

ազգեն մեկն է. թե որ ինքը զարմանալի կերպով ստվնիվ, բարակ բուսեր է այն հաստ ազգեն, ցուցնե թող մեզի իր առանձնաշնորհությունը, չէ՝ թե որ հանձն կառնու ըսել թե ինքն ալ հաստ է, ազգն ալ հաստ է, պետք է հանձն առնու հաստերուն մեջ ամենեն հաստ ինքն ըլլալուն պատիվն ալ, որ այնպես վատությամբ գինքը ալ իր ազգն ալ կուզե խայտառակել։ Իսկ թե որ ինքը կրթված, գիտություն սորված ըլլալուն համար զազգը անարգելի տգիտության և անկրթության մեջ կտեսնե, գիտնա, որ մեկ կողմեն քիչ մը պակաս մնացեր է իր գիտությունն և կրթությունը, այսինքն՝ ազգասիրության և մարդավարության կողմեն։ Վասնզի խելացի և գիտուն մարդը կդատե իր ազգն, բայց չդատապարտեր, անոր վերքերը կտեսնե գոցելու համար, չէ թե արևուն ցուցնելու համար. գիտե, որ ամեն ծաղկած ու փառավոր ազգեր, որ կտեսնե ու կզարմանա, ատեն մը հայու ազգեն խեղճ են եղեր և մեջերնեն խելացիները չէ թե ազգերնին ատելով, ուրանալով ու մեջեն ելնելով, հապա սիրելով, ջանալով ու ամեն կերպ զոհ ընելով՝ մարդ են ըրեր ու աս աստիճան փառավորության հասուցեր են։

Թե որ ազգը պակասավոր ըլլալուն համար կանարգե, պետք է իրեն ուրիշ աշխարհք մը փնտրե, վասնզի այս աշխարհիս ամեն ազգերն ալ պակասավոր են։ Իսկ թե որ իր ազգը շատ պակասավոր է, պետք է ավելի ցավիլ, ինչպես ծանր հիվանդի մը վրա, չէ թե անարգել թողուլ երթալ։ Իսկ թե որ իսիստ ընդհանուր կտեսնե այս պակությունս՝ ինքն ալ պլըշկտված պիտի ելլա, պետք է որ ցավակից ըլլա հասարակաց, ինչպես ուրիշներն ալ իրեն ցավակից կըլլան։ Ազգին պակությունները պետք է ատել, բայց զազգը պետք է սիրել և այնչափ ավելի, որչափ որ պակություն տեսնենք։ Հիվանդներուն ալ այսպես չե՞ն ըներ։ Որչափ ավելի է ցավը, այնչափ ավելի հոգ կընենք, այնչափ ավելի սրտերնիս կշարժի, վրանին կգուրգուրանք, դեղ դեղի վրա, բժիշկ բժշկի վրա կհասցնենք, բովերնին չենք զատվիր. այսպես ալ մեր ազգին վրա աչք տանք։ Եվ մխիթարությամբ ալ տանք այս աչքը, վասնզի բնական հիվանդությունք շատ հեղ անբուժելի կըլլան, մեր ամեն ջանքը փուլ կհանեն, բայց բարոյականք՝ ինչպես մեր ազգինը, ոչ երբեք անհուսալի են, որչափ ջանք ըլլա, այնքան ավելի և շուտ կբժշկվի։

Թե որ քաղաքական խոնարհ վիճակնուս համար է աս անարգ համարմունքը, պետք է գիտնալ, որ բաղդին անիվը մեր ձեռքը չէ, միայն թե ջանքով կրնանք քիչ մը շարժել։ Աշտարակին ամենեն

աղվոր քարը ամենեն բարձրը չէ, հապա այն, որ իր տեղը լավ հարմար կեցեր է։

Թե որ բնական անկարող անհաջող ազգ մը սեպվելուն համար է հայոց անարգությունը, ասիկա զորավոր պատճառ կըլլար, միայն թե որ իրավ ըլլար, վասնզի առ բանիս դեմ մեր վկայութենեն ավելի ճշմարիտ և աղդու է օտարաց վկայությունը, որ զհայոց ազգը շատ արևելյան ազգերե վեր կդնեն, մանավանդ անոնցմե, որ մեզի պես անտեր են։ Մեր ազգին պատմությունն և ինչվան հիմա աս վիճակին մեջ մնալն ալ կցուցնեն, որ մտավոր ուժ ունեցող ազգ մը եղած պիտի ըլլա, որ այսչափ դիմացեր է։ Թե որ հին աղնվականություն չունինք կըսեն, բանան սրբազան և արտաքին պատմությանց առջի թղթերն, և կտեսնեն, որ մեր ազգին պես փառավոր ծագումն ոչ ոք ունեցեր է և կրնա հավիտյան ունենալ։ Իսկ թե որ այն ծագման համեմատ պայծառ հաջորդություն չենք ունեցած, կըսեն, ասոր մեջ ալ կսխալին։ Հիշեն այն անաշառ և արդար ազգասեր Խորենացին, որ գազգը հանդիմանելուն ատենն ալ կխոստովանի. «Զի թէպէտ և եմք այժմու (կամ՝ ածու) փոքր և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ և զօրութեամբ տկար... սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս և արժանի գրոց յիշատակի»[3]։ Հիշեն, որ միայն այս ազգը ամեն հին ազգաց մեջեն կրցեր է իրավամբ առնուլ և անջինջ պահել քառասունչորս երկայն դարերե անցնելով[4] հսկայի և քաջի նախանձելի անունները, ՀԱՅ և ԱՐՄԵՆ կոչվելով իրմե և օտարներեն։

Ամենա ուրեմն և պակունքը խածնե այն ցուրտ բերանը, որ օդը պղծելով կհամարձակի ըսելու, թե կցավիմ հայ ծնած ըլլալուս։ Այդ ցավը չէ իրեն, հապա իր ազգակցացը պետք է՝ ասանկ ազգակից մը ունենալուն համար։ Բայց ես հավանած եմ, թե այն զրուցողը խոսքին ուժը չհասկցած կզրուցե, չէ նե՝ խենթերու թագավոր պետք է դնել զանիկա։ Ազգին պակսությունը չէ՝ անձին անշահությունն է, որ զրուցել կուտա այնպիսի խոսք։ Թե որ լավ մարդ է՝ իր ազգին մեջ ավելի պիտանի և փառավոր կրնա ըլլալ, քան օտարաց մեջ, մանավանդ ազգերնուս հիմակվան վիճակին մեջ, որուն մթության մեջ ինքը աստղի մը պես ավելի կրնա փայլիլ, քան արեվի մը պես ուրիշ լուսավորյալ ազգաց ցորեկվան մեջ։ Չե՞ն եղեր աս ետքիս ատենները ալ, կամ թե չկա՞ն ազգերնուս մեջ անանկ մարդիկ, որ չէ թե Ասիո մեջ, հապա Եվրոպայի ծաղկյալ ազգաց

մեջն ալ գովությամբ և փառոք կհիշվին ու ազգին պարծանք մը կըլլան։ Ո՞վ կարդիլե զայնպիսին, որ ինքն ալ թե որ այնչափ մեծ խելք ունի, անոնցմե մեկը ըլլա, կամ թե վարպետ գրիչ ունի, մատենագիտությամբ անուն ու համբավ ընե իրեն ալ, ազգին ալ։ Իսկ թե որ ուրիշ ազգաց լուսովը ինքը ծածկել կուզե իր գեղությունը, ան ալ փուչ ջանք է։ Թե որ անոնց փառքովը ինքն ալ բան մը երևնալ կուզե, իրավցնե կերևնա իշամեղու մը։ Խելացի մարդը չնայիր օրոցքին վրա, ուսկից ընծայվեր, է, հապա դեպի գերեզման, որն որ ինքն իր արդյամբքը պիտի պատրաստե։

Արդ թե որ անիրավ է այսպես արհամարհել մեր ազգը, կամ անպատճառ մեծցնել, խելացի մարդուն կվայելե, որ արդար աչքով նայի անոր վրա և սիրե, և այս սիրույն համար ճանչնա անոր կատարելություններն ալ, պակասություններն ալ։ Առանց հարկի չբանա այն վերքերն, որ պետք է բժշկել. հարկ որ ըլլա՝ զգուշությամբ դպչի, դողդղուն ձեռքով, արտասվոտ աչքով, տաք շնչով. արդարությունը միայն բանա զայն, կարեկցությունը պատե, իմաստությունը դարմանե, սերը անհետ ընե սպիներն ալ։

ԱԶԳԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ազգին վրա քիչ կամ չափեն շատ համարմունք ունենալուն՝ ազգասիրության դեմ ըլլալը ցուցնելեն ետքը[1], կուզենք խոսք մ՝ ալ ըսել, թե ինչ է աս ազգասիրությունը, որն որ այսչափ կհիշվի մեր ազգային օրագրաց մեջ ալ, և բերնե բերան անցնելով քանի մը տարիե ի վեր, մոգական կամ ալքիմիական բառ մը դառնալ կսկսի. շատ տեղերե ալ նույն ձայնը ելլելով, երբեմն լսողին գըլխուն շփոթություն ալ բերելու պատճառ կըլլա։ «Թմբուկը անդադար զարնելը,— կըսե Խիկար,— զմարդս անդադար կհոգնեցնե, մոտեն զարնելը՝ կխլացնե, իսկ գլխուն զարնելը՝ կճաթեցնե»։ Բայց զմեզ վախցնողը ավելի իր մեկալ խոսքն է. «Սովորաբար մարդիկ այն բանին վրա շատ կիսոսին, որ չկա կամ չունին»։ Ազգասիրություն լսելով, ազգասիրություն ըսելով, ոմանք կկարծեն թե ազգասեր եղան, լըմնցավ, ոմանք ալ իմանալով, որ բան մը չեղան, կկարծեն թե ազգասիրություն ըսածդ Անգլիո . ստերլին ոսկիին կնմանի, որ ոչ երբեք ձեռվնին պիտի անցնի. վասնզի անունը կա և ինքը չկա։

Չենք ուզեր մենք ալ թմբուկ մը զարնել ազգասիրության, ինչպես որ կրնա պահանջել այս մեծ անունը. մեզի բավական կսեպենք մանկանց փողիկը, քիչ մը մեր ընկերները կաքավեցնելու չափ, ինչպես որ ունինք մեր ողբերն ալ՝ քիչ մը կոծեցնելու չափ։ Միայն թե չըլլայինք այն խեղճ մանկանց պես, որ իրավամբ գանգատեցան ընկերներուն թե՝ «Փողս հարաք ձեզ և ոչ կաքաւեցեք, ողբացաք և ոչ կոծեցարուք». կամ այն սարեկին նման, որուն համար ազգային երգ մը կզրուցեն.

«Սարեակն ի տօն Որաւէր կարդայր,
Ինքըն զարնէր, ինքըն խաղայր»։

Ազգասիրությունը երկու բառ է, երկու բան է, կեսը կավ, կեսը կրակ։ Մենք չենք ուզեր հոս կրակը կայծակեցնել, կթողունք զայն ուրիշներու, բավական է որ զուրիշները տաքցնելու տեղ անխոհեմությամբ իրենք իրենց ձեռքը չայրեն. մենք կուզենք քիչ մը այն կավը քննել, լմել, կակղցնել։

Ազգն է այս կավը. ազգն է միություն այնքան մարդկանց, որ մեկ նահապետե մը առաջ եկած են, մեկ հայրենի լեզու ունին, նման բնավորություն ունին և շատ հեղ՝ նույն կրոնք, նույն օրենք, նույն վիճակ։ Ասոնց պարտքն է, որ սիրեն մեկզմեկ, կամ բոլոր զանոնք, որ ազգ բառով կիմացվին. այս է ազգասիրությունը։ Մարդկային բնությունենս մեզի կսորվեցնե՝ մարդասեր ըլլալ, սիրել մեր ազգայինները, քան զուրիշ ազգեր։ Սուտ է այն փիլիսոփայն, որ ազգասիրությունը մարդասիրության դեմ կկարծե, որ հայրենիքը հերձված կսեպե երկրես, և կըսե. բոլոր երկիրս ալ հայրենիք է լավ մարդու, ինչպես թուչունին՝ բոլոր երկինքն և ձկան՝ բոլոր ծովը։ Այդպիսին չէ վերուցած մեկ մը աչքը տեսնելու թուչունը, որ թեպես բոլոր երկինքը կթափառի, սակայն ունի բունիկ մը, ուր իր ամենեն սիրելի բաները կդնե, ուսկից չկրնար բաժընվիլ, որուն մեջ դինքը ավելի ընդարձակ կգտնե, քան բոլոր օդուն անհուն տարածությանը մեջ։ Կետն ալ, որ ահագին օվկիանոսին ալիքը կեռացնե, ծովեկերք մը խորունկ փոս մը ունի, ուր միայն կգտնե իր երջանկության նավահանգիստը։ Շատ տեսակ փիլիսոփայություն կա զանազան անվամբ, վերի ըսվածքը Շնական ըսված փիլիսոփայութենե առաջ կուգա, թե որ այն մտքով առնվի։ Իր ազգը չսիրողը հավիտյան մարդասեր չըլլար։ Թե որ կրակը մոտիները չտաքցներ, հեռվինները ինչպե՞ս կտաքցնե։

Մարդասիրությունը ընդհանուր պատվեր է, ազգասիրությունը մասնավոր պատվեր է։ Մարդասիրությունը կսորվեցնե զամեն մարդիկ սիրել, վասնզի մեզի նման են, ազգասիրությունը զաղգայինները ավելի սիրել կսորվեցնե, վասնզի ավելի նման են մեզի։ Ուրեմն մարդասիրությունը ավելի կհաստատե ազգասիրությունը, քան թե կվերցնե։ Ինչվան որ ծնողքնիս չսիրենք, չենք կրնար ազգականներս ալ սիրել, անկե ալ սերը կանցնի խնամիներու և դրացիներու, այսպես աստիճան և կարգ կա մեր սրտին բերմանը։ Մեր ընտանիքը և բոլոր մարդկությունը սիրելու մեջ ալ մեկ աստիճան մը կա, որ է ազգը։ Ուրեմն թե որ մարդասիրությունը պարտք է, ևս առավել և մոտիկ պարտք է ազգասիրությունը։

Մարդասիրության պարտքը դնողը մեր փիլիսոփաները չեն, բնությունն է։ Ազգասիրության պարտքն ալ իրմեն կուգա։ Քանի որ մարդիկ այրարատյան երկիրներուն երջանիկ սահմանովը կրովանդակեին, աշխարհիս վրա ազգասիրության անունը պետք չէր ըլլար։ Բայց երբ որ Բաբելոնի դաշտերն իջան, աստված հոն լեզունին խառնակելով, գրեթե իր ձեռքն բաժանեց անոնք և կամաց-կամաց զանազան բնավորության և կերպարանաց տեր ըրավ։ Նույն ատենեն ի վեր՝ տնկեց զանոնց սրտին մեջ ազգասիրությունը, որպեսզի մարդիկ զանազան դաս բաժնված՝ կարենան ավելի դյուրին կերպով մեկզմեկ հոգալ, քան թե մեկ մեծ խումբ մը ըլլալով։ Կրնա ըսել մեկը, թե մարդիկ բոլոր մեկ ազգ մեկ լեզու ալ ըլլային՝ կրնար ըլլալ, որ զանազան գավառ բաժնվեին, ինչպես զանազան վիճակք մեկ տերության մը։ Այսպես ալ որ ըլլար՝ անկարելի էր առանց ազգասիրության զմարդիկ կառավարել։ Վասնզի այն ատեն զանազան գավառք զանազան ազգեր պիտի ձևացներին մեկմեկ դանազանությամբ, ինչ որ հիմա ալ կերևնա բազմագավառ տերությանց մեջ, որոնց լեզուն ալ նույն և նման ըլլալով՝ ուրիշ աննմանություն մը մեկմեկու դեմ կզրգռե շատ անգամ. թող որ լեզվաց միությունը հանդերձ միությամբ բնավորությանց, կամ մեկ տերություն մը կուզե, որ անկարելի է երկրիս ընդարձակությանը համար, կամ մշտնջենավոր պատերազմ՝ զանազան տերությանց սահմաններուն համար։ Բնությունը այս բաներուս հետևանքները վերցնել ուզելով, ամեն ազգի սահման չափեց իր բնիկ լեզվին տարածությունը, և թե որ դժբախտությամբ այն տարածությենեն դուրս ելլե՝ իր ազգությանը նշան և կապ դարձյալ նույն լեզուն տվավ, որ ուր ալ իր ձայնակիցը տեսնե, հիշե իր պարտքը։

Թե որ կա մեկը, որ աս բանիս տարակուսի, թե որ կա մեկը, որ ազգ ի՞նչ է, ազգասիրությունն ի՞նչ է, կըսե, զրկեցեք զայն հեռու քաղաք մը, օտար ժողովրդոց մեջ, ուր ոչ մեկը զինքը չճանչնա, ոչ ինքն զմեկը։ Օր մը երթա մեկ հասարակաց ընկերանոց մը, ուր շատ ազգե մարդիկ տեսնե, որ իրենց ազգակցաց հետ կխոսին, առանց իրեն երեսը նայելու։ Մեկ մ՝ ալ հանկարծ անծանոթ մարդ մը գոնեն մտնե՝ որուն կերպարանքը իր վրա քիչ մը ազդեցություն ընե, մեկմեկու մոտենան ինքնաշարժ պատահմամբ մը, և հարցընեն, ինչ ազգե ըլլալնին և գրեթե մեկտեղ ըսեն թե ես ալ հայ եմ և աս քաղքիս մեջ ուրիշ հայ չկա։ Ան ատեն կիմանա այն ազգասիրության անհավատը, թե ի՞նչ ըսել է եղեր ազգ, ի՞նչ ազգասիրություն։ Իսկ թե որ չիմացավ, կրնանք ըսել, թե մարդկութենե դուրս ելեր է այնպիսին։

Այս նախատինքը կրնա մեզի ալ դպչիլ, թե որ շատ խոսինք աս նյութիս վրա, վասնզի հոր մը որդեսիրության և տղու մը ծնողասիրության իրատ տալեն մեծ նախատինք մը կրնա ըլլալ։ Ըսել է թե բնական և աստվածային օրինաց առաջին և գորավոր պարտքեն պակսած են. ասանկ պարտքե մը պակսած սեպել է մեր ազգը, թե որ ասոր նման պարզ խոսքեր շատ գրուցենք. օտար ազգ մը լսելու ըլլա, իրավ որ կգայթակղի մեր վրա, կարծեմ մենք ալ շատ ամոթով կմնանք։ Բայց որովհետև մենք ալ մեկ անգամ կուզենք գրուցել, եկեք ըսենք կամացուկ մը աս երկու խոսքս ալ։

Կարելի է որ մեկուն ամենեին հոգը չըլլա ազգասեր չըսվելուն համար, կամ իրեն բերնովն ալ ազգը արհամարհած ըլլա. այնպիսին չէ իմացած, որ շատ ամոթալի սխալմունք ըրեր է։ Ազգը չսիրելը, իր ծնողքը չսիրելեն վար չմնար. ծնողքը չսիրողին ի՞նչ կըսենք։ Ի՞նչ կըսենք նգև անոր, որ ծնողքը չսիրելուն պատճառ բերե անոնց աղքատությունը կամ խեղճությունը կամ հիվանդությունը. մարդ չէ, գազան է կրսենք։ Իր ազգը չսիրողը, իր ազգը չպատվողն ալ՝ ազգի, տմարդի բան մըն է։ Հարստություն, փառք, առողջություն, գիտություն, ասոնք չեն մեր ծնողքը մեզի սիրելի ընող, հապա այն կյանքն է, որ մեզի տվեր են, այն շարունակությունն է, որ մեր աչի հորեն իրենցմով մեզի անցեր, մեզմե ալ մեզմե վերջիններուն պիտի անցնի։ Մեր ծնողքն է մեզի կյանք տվողը. իրեն կյանք տվողն ալ մեր ազգեն է. մեր ազգն է մեր հայրերուն հայրը. մեր ազգն է զմեզ մեզի տվողը. մեր ազգն է մեզի աշխարհիս մեջ ամենեն սիրելի անձինքը տվողը՝ հայր մը,

մայր մը, եղբայրնե՛ր ու քույրեր. մեր ազգն է մեզի տվող այն անձնասիրությունը, ուսկից զորավոր կիրք և վայելմունք չունինք և թե որ լավ գործածենք՝ չկա քան զայն մեծ հնարք մը լավ և փառավոր ըլլալու. մեր ազգն է մեզի մարդկությունն մեջ պատիվ մը տվող, ազնվականություն մը տվող. որ թե որ մեկը ծուսած խելքով ուրանա իր ազգը՝ ուրիշ բան չվաստակելեն զատ, կմանե՛ն դրժբախտ զավակաց կարգը, որոնք ծնողքնին չեն ճանչնար և մարդկանց անարգանք կսեպվին։ Ասիկա է ազգատյացին դանելիքը, թե փնտրե և թե չփնտրե։

Ուրեմն թե որ անիրավ է իր ազգը չսիրողն, ավելի անիրավ կրլլա հայ մը, թե որ ազգը հայ ըլլալուն համար չսիրեր։ Թե որ սամոյեդ մը, չինկյանե մը, քամչատացի մը ազգերնին նախատեին, թերևս քիչ մը իրավունք կրնային գտնել, բայց մեկ հայ մը, որ իր ազգը նախատե. թե կուզենք արդարացնել, պետք է ըսենք, որ ամենատգետ է, կամ ամենախենթ է, թե չէ՝ ըրածը յոթը դժոխքի հայհոյություն պետք է սեպել։ «Ծնողքը անիծողին լեղուն կկտրեին,— կըսե Խիկար,— զանգը անիծողին լեղուն արմատեն խլելու է, վասնզի իր ծնողացը ծնողքն ալ կանիծե». մենք ավելցնենք, թե հայ ազգը անիծողին՝ քիչ մ՝ ալ խոր իջնալու է, վասնզի հայությամբ ամենուն նախածնողն ալ կանիծե։ Թե որ ազգաց մեջ հայ ազգին ինչ ըլլալը կուզես իմանալ, առջեր բեր հիմակվան քու զարգացած երեսի ազգերդ կամ տերությունները, դիր թե անոնցմե մեկն ալ հայու ազգեն է, վերջը առ ան ամեն ազգաց հին պատմությունները ու սկսե ծայրեն կարդալ ինչ որ անոնց վրա կամ անոնց երկիրը անցեր է սկզբանե ի վեր։ Մեկ մ՝ ալ հայոց ազգին և երկրին պատմությունն ալ կարդա մտադրությամբ. մեկեն կիմանաս, որ առաջ տգայահասակներու վարք կկարդաս եղեր, ետքը հարկեոր ծերերու մը վարք կկարդաս, որուն գլխեն շատ մեծ, շատ փառավոր բաներ անցեր են, ժամանակին մեջ քիչ մը վեր ելլ, քիչ մ՝ ալ, ու մեկալ ազգերը մեկմեկե ետև աչքեդ կծածկվին՝ քաղքի մը մեկմեկե ցած շենքերու պես, ինչվան ալ բան չերևնար։ Իսկ հայոց ազգը դեռ իր Արարատ լեռանը պես գլխուդ վերև կեցեր է. ելի՛ր, բարձրացի՛ր քու օդապարիկ մտոքդ, ան դեռ կեցած է. ելիր ա՛լ ավելի, բայց գրեթե չես հասնիր անոր արեգակնաձև գագաթանը։ Հիմա խփե գրքերդ, ու առանց նայելու հիմակվան նորելուկ ազգերուն փառավորությանը վրա, ըսե ինձի. թե որ դուն անազգի ըլլայիր, ո՞ր ազգեն կուզեիր ըլլալ, կամ թե երկրորդ

հայրենիք մը փնտրեիր, ո՞րը կընտրեիր. չեմ տարակուսիր որ Հայաստանին ազգը կուզեիր։ Ինչո՞ւ. իր տերութեանը, իր վիճակի՞ն համար. չէ՛, վասնզի ուրիշներն ալ նույնը ունեցեր են՝ ավելի կամ պակաս։ Հապա ինչո՞ւ. վասնզի անոր մեջ կտեսնես անանկ հին պարծանք, անանկ հին աղնվականություն, անանկ դիպվածներ, որոնց դիմաց տերություն և ուրիշ անցավոր փառք ոչինչ կերեվնա, որ բախտին խաղալիք տուրքն է, այսօր կուտա, վաղը կառնու։ Ուրեմն թողնենք բախտին հրապույրքը և կտեսնենք, որ հայոց ազգին վրա անոնք վերցնելեն վերջն ալ՝ կմնան անանկ պանծալի նշաններ, որոնք ամեն բախտե վեր են և հավիտյան ամեն ազգաց ալ նախանձելի կրնան ըլլալ։ Ան ատեն կտեսնենք, որ հայոց ազգը մարդկության բարգմաճյուղ ծառին վրա միջին ճյուղն է, որուն ծայրը վար քաշած կապվեր է և չորս դիեն ուրիշ ճղեր բարձրացեր են. բայց մեկ մը կապը քակելուդ պես՝ իր ծայրը ամեն ճղերու ծայրեն ալ բարձր կելլե։

Այս խոսքերս թերևս չափազանցություն երևնան։ Այնպես կըլլային, թե որ ուրիշ ազգի մը համար գրուցեինք. չափազանցություն են անոր, որ ընդհանուր պատմություն կարդալով չէ կրցած զարմանալ հայու և հրեի երկրին և՝ ազգին վրա եղած զարմանալի նախախնամությանը. չափազանցություն են միայն հիմակվանը գիտցող և հինը չգիտցողի մը, չափազանցություն են չազգասիրի մը։ Իսկ ազգասեր հայու մը համար մեծ ճշմարտության պտի հայտնություն մըն են։

Թե որ բավականապես իմացվեցավ, թե ի՞նչ և ինչո՞ւ է ազգասիրությունը, պետք չէ երկայն խոսիլ թե ի՞նչ պարտք ունինք ազգին, ինչպես պիտի անոր սիրենք։ Ամեն սեր իր օրենքն ալ հետը ունի։ Արևելյան գրոց մեջ կպատմվի, թե այն կողմեն երկրի մը հարուստ և իմաստուն և բարեպաշտ իշխան մը տասներկու զավակ ուներ, անոնցմե անդրանիկը քովը պահեց, մեկալներնց բաժնեց իրենց ժառանգությունը և ղրկեց։ Անոնք ալ ելան, հեռու տեղվանք գնացին և զանազան վիճակի տեր մարդիկ եղան։ Շատ տարիեն վերջը իր ծերության գավազանը, իր հույսը, իր անդրանիկը մեռավ։ Մեկալ տղաքն ալ քովը չըլլալուն, ծառաները աս ծերուն գլուխը ելան, իշխանութենեն ձգեցին, ծերն ալ տրտմութենեն, տղուն ցավեն, աղքատութենեն հագիվ կրցավ ուրիշ քաղաք մը քաշվիլ, որ ինքզինքը ծածկե։ Բայց ան աստիճանի մեծ էր ամոթն ու ցավը, որ խելքն ալ կորսնցնելու պես եղավ, վրան ծանր հի-

վանդութիւն մը ալ եկաւ, իշխանի անկիւն մը ընկաւ, որուն տեսը բարի մարդ ըլլալով և ճանչնալով դեմքեն, որ աս ծերունին աղնվական եղած պիտի ըլլա, հոդ կտաներ վրան։ Օր մը մեծ կարավան մը եկաւ այն քաղաքը, զանազան ազգերե ժողովված, որոնցմե շատը եկան այն իշխանը իջան, ուր որ ծերը պառկեր էր։ Անոնցմե մեկ իշխանավոր մը պանդոկապետին ըսաւ, թե ես աս մոտի քաղքեն եմ և կուգեմ, որ աս օրվան հասած քարավանիս մեջ եղող իմ քաղքցիներուս հոս ժողովես, որ իրենց ընթրիք մը տամ. ըսաւ ու գնաց։ Իրիկվան դեմ դարձաւ իշխանը ու տեսաւ, որ տասը հոգի գտնվեր էին իր քաղքեն, զանազան վիճակի տեր մարդիկ, որոնց հարցուց ինչ ըլլալնին և իմացաւ, որ մեկ երկուքը իրեն պես իշխանավոր են, մեկը իրենց կրոնին քահանա է եղեր, մեկը բժիշկ, մեկը կարդացող, մեկը արվեստավոր, երկուքը վաճառական, մեկալ երկուքն ալ աղքատ բանվորներ, բայց լավ բնավորությամբ։ Երբոր հարցուց, թե ինչո՞ւ կերթաք ձեր քաղաքը, ամենքն ալ մեկ բերան ըսին, թե հայրերնիս տեսնելու։ Զարմանքով հարցուց, թե ո՞վ են ձեր հայրերը. ամենքն ալ մեկ բերան նույն անունը զրուցեցին։ Հարցնողին ալ, զրուցողներուն ալ գրեթե գույներնին կտրվեցաւ, սկսան կանչել, թե ուրեմն մե՞նք ենք ան տասնմեկ եղբարքն, որ ասկե քսանհինգ տարի առաջ մեր հորմեն բաժնվեցանք և ահա ասանկ զանազան վիճակի հասեր ենք։ Երթանք ուրեմն տեսնելու մեր ծեր հայրը, և մեծ եղբայրնիս, որոնցմե ատենե ի վեր է որ լուր մը չենք առած։ Պանդոկապետն, որ անոնց հորը անունը լսեց, իմացաւ, որ ան ծերուն տղաքն են, լռեցուց զանոնք և կամաց-կամաց իմացուց, որ այն անունով ծեր հիվանդ մը կա իր իշխանին մեջ, բայց չուզեր, որ իր անունը իմացվի։ Անոնք անհամբերությամբ կստիպեին, որ ցուցնե իրենց այն ծերը, և ինչ մեծ զարմանք, ինչ մեծ կսկիծ եղաւ, երբ որ տեսան իրենց իշխանավոր ծերունի հայրը այն խեղճ վիճակին մեջ։ Բայց շուտով իմանալով, որ այն հիվանդությունը և այն մտքի կորսնցնելը տրտմության սաստկութենեն է, չէ թե բուն խելքի և կազմվածքի ավերմունք, հույս առին գինքը կանգնեցնելու։ Ամենքը թեպետև զանազան խելքի և զանազան վիճակի մարդիկ եղեր էին, բայց մեկ սիրով, մեկ հոգով ձեռք զարկին հորերնուն օգնելու։ Բայց թե յուրաքանչյուրը ինչ ըրաւ, կամ ձեռքեն ինչեր եկաւ հորը ափրուն, ալ ձեզի կթողում մտածելը, կըսե պատմիչը ու կլռե։

Մենք ալ մեր լսողներուն թողլով աս խեղճացած ծեր հորը հետ՝ մեր ազգին վրա մտածելն ալ, օգնելն ալ, կլռենք հիմա, քանի մը խոսք ալ թողլով ըսելու երբոր աս մտածմունքեն կարթընանա։

Ազգասիրության ինչ ըլալը իմանալեն ետև իմանանք թե ինչո՞ւ մեր ազգին մեջ պակսեր է աս անման առաքինությունը։ Ասոր առաջին պատճառն էր ազգասիրության ինչ ըլլալը չգիտնալն, որն որ ասկե առաջ ջանացինք ճանչցնել։ Աս չճանչնալուն պատճառն ալ տգիտութենեն կուգա, որ մարդուս ամեն հարկավոր պարտքերն, ամենեն մոտ գիտելիքներն ալ կմոռցնե։ Լավ դաստիարակությունը կիմացնե մարդուս, որ ինքը միայն իրեն համար կամ միայն իր ընտանյացը համար չէ երկրիս վրա. ավելի մեծ ընտանիք մ՝ ալ ունի, որ է ազգը։

Երկրորդ պատճառ՝ մեկ անիրավ վհատություն մը, հուսահատություն մը, արհամարհանք մը։ Ազգը խեղճության մեջ տեսնելով, ոմանք կկարծեն թե այն խեղճությունը ազգին բնությանը հետ կպած է, կամ թե հայը միշտ այնպես պիտի ըլլա, կամ թե մեր բաղդին անիվը միայն մենք խորտակեր ենք մեր ձեռքով, առանց արտաքին բռնության ալ և թե խոր տղմի մեջ ընկղմված է՝ ուսկից հանել չըլլար։ Ուր որ հուսո տեղ կա, հոն ամեն բան կգըտնըվի։ Իսկ հուսո համար հին բարոյախոսք կըսեն, թե աշխարհիս վրայեն ամեն առաքինություն վերանալուն պես եղան նե, առաքինության ամանին մեջ միայն հույսը մնաց։ Ուրեմն թե որ ազգերնուս վրա մեկ լավ բան մ՝ ալ կտեսնես, գիտցիր որ ան երկրորդն է, անկեց առաջ կա հույսը։

Երրորդ պատճառը կրնանք մուսամբ, գոնե հիմակվան ատենիս համար, բաղդին տալ, որ է հեռավորությունը մեր հայրենյաց երկրեն և մեր ցրվիլը ղանազան երկիրներու մեջ. աս հեռավորությունն է, որ հայրենյաց սերն ալ կհեռացնե սրտեն։ Մեր հայրերը, որ շատ ավելի թշվառությանց մեջ ընկան, մեզնե ավելի ազգասեր էին, վասնզի իրենց հայրենյաց մեջ էին։ Հայրենյաց քարինքը ավելի տաք են, քան Բաբելոնի փոները։ Երկիրը ինքն իրեն կպատմեր անոնց իրենցմե առաջիններուն գործքերը։ Այն հողը կկոխեին, ուր որ իրենց նախնիքն ալ կոխեր և վերջը ծածկվեր էին, այն հովանիներուն տակ կաշխատեր երկրագործը, որն որ իր սիրելի նախորդներուն ալ եղած էր, այն եկեղեցյաց մեջ կաղոթեին, որ իրենց մեծ հայրերուն բարեպաշտությունը կանգներ էր, և այն

գերեզմաններուն մեջ. կքնանային, որն որ իրենց նահապետները փորեր էին։ Բայց այս դժբախտությունս զմեզ չպիտի անհույս ընե. մեր սերը չկրնար մարել, թե որ մենք չուզենք։ Հայրենյաց հիշատակն ավելի զորավոր է, քան զօտար երկրին ներկայությունը։ Բաբելոնի ուռիներն ալ կրնան Երուսաղեմա քնարներն հնչեցնել, Եփրատա ալիքներն ալ կրնան զՀորդանան հիշեցնել։

Ուրեմն չորրորդ պատճառ՝ հիշատակաց մոռացությունն է։ Թե որ նյութական երկիրը, քարերը, լեռները, գետերը, շենքերը մեզի չեն հիշեցներ մեր ազգը, թող հիշեցնեն զայն իրեն պատմությունը, ազգային հանդեսներ կամ տոներ, ազգային երգեր, երևելի մարդկանց և սրբոց տարեդարձի ներբողներ, անոնց պատկերները, արձանները և մեդալները։ Եվ մանավանդ հիշեցնե մեզի մեր նախնիքը՝ անոնց հայկական լեզուն, որ հինգերորդ պատճառն է, վասընզի գրեթե ասկե զորավոր հորդոր չկա ազգասիրության։ Ուր որ լեզուն մնացեր է՝ դեռ ազգասիրություն ալ կա հոն, ուր որ բոլորովին լեզվակորուսյս են եղեր՝ հոն նաև ազգասիրությունը բոլորովին կորածի պես է։ Լեզուն բնական բան մը կերևնա, բայց զորությունը գերբնական կամ բարոյական է. մեր մտածության հետ խառնված է գրուցածնիս։ Անկարելի է, որ մեկ գաղղիացի մը, մեկ ռուս մը, մեկ պարսիկ մը, մեկ մոնղոլ մը նույն բանը նույն և նման կերպով մտածեն ու բացատրեն։ Թե որ մեկը իր ազգին լեզուն չգիտնա ու օտար լեզու մը իր ծնողացմե առած բաներեցնե, կրնանք ըսել թե այն լեզվին տերը եղող ազգին նման գաղափարներ կունենա քան թե իր ազգին, անոր համար ալ անտարբեր կամ պաղ կըլլա իր ազգին վրա. այս անտարբերությունը ինմանի խլին ականջին, որ քնարին ձայնը և կատվին մլավելը հավասար կրնա սեպել։ Լեզուն կորսնցնելե ետև մանավանդ անոր հանդեպ անհոգ ըլլալեն ետև մեկալ ազգային սովորությունք և հիշատակք և նշանք շուտով կկորսվին, ուրեմն ազգասիրության մեծ և խիստ մեծ օգուտ կրնե ազգին լեզուն։ Դրացի ազգեր ունինք, որ մեր վիճակին ալ հաղորդ են, հոռոմները ու հրեաները։ Ասոնց վրա, թեպետ շատ ավելի անկիրթ են, բայց ավելի ազգասիրություն կա։ Անկեց է այն սրտտությունը, այն հպարտությունը (որն ունի իր գովելի մասն ալ), որ ունի հոռոմը և այն ընկերասիրությունը և իրարու օգնելը, որ ունի հրեան։ Վասնզի մեկը կհիշի իր հին պարծանքները, իր հարցը լեզուն կխոսի և այն լեզվով կերգե, այլազգիներն խոսելուն ատեն ալ իր ծոմոկած լեզուն վկա է, թե իրեն բնիկ է այն

խոսածը։ Մեկալն ալ չկրնար մոռանալ թե մեկ հոր երանելի մը որդիք են, և աննման վիճակ մը ունեցեր են ատենոք և ասով սիրտը տաք է իր նմաններուն վրա և հույս մը ունի։

Մենք ալ ասոնց չափ մեր նախնիքը, մեր դյուցազունքը, մեր իմաստունքը, մեր սուրբերը, մեր հին եկեղեցիները ու գերեզմանները հիշելու ըլլայինք, շատ ավելի ազգասեր և սրտոտ կըլլայինք։ Ըլլանք պարծենկոտ, բայց չմոռանանք մեր պարծանքները. շատ չմեծացնենք, բայց չպզտկենենք ալ, վասնզի շատ քրտինքով և արյունով վաստկեցան մեր նախնիքը. ո՜հ, անիրավ չըլլանք անոնց հանդեպ։ Ապերախտութենե մեծ մեղք ու գարշելի մոլություն չկրնար ըլլալ։ Ըլլանք կովող, չըլլանք վիճաբան, բայց կրակ դառնանք, երբոր մեկը մեր նախնիքը, մեր ազգությունը կնախատեն։ Ըլլանք ոխակալ, չըլլանք թշնամի, բայց այսպիսի հայհոյություն ցուրտ ականջով չլսենք։ Մարդուս առաջին պատվական բանը կյանքն է, երկրորդը իր պատիվը, ուրեմն պաշտպանելու է մեր պատիվը։ Մեր նախնիքը հիմա կյանք չունին, բայց միշտ պատիվ ունին, ուրեմն պետք է պաշտպաննենք մեր նախնյաց պատիվը, թե չէ՝ շատ մեծ պարտքի տակ կմնանք։ Առնունք օտարներեն դեղեցիկ սովորություններ, բայց առանց պատճառի մերինները չթողունք։ Ուրուրան մը կա նե՝ շտկենք, չէ թե ջնջենք։ Այն բանն, որ մեր մեջ իրավախոհ ըլլալով կրնանք լմնցնել, չհանենք օտարներու ատյան, մեկզմեկ խայտառակելու համար։ Ըլլանք մարդասեր, բայց չփակչինք շողոքորթի կամ հանգստակի պես ազգի մը հետ ու առնունք անցնինք անոր բրածը չրածը գրուցելու, խենթությունները ալ խելոքությանցը հետ պաշտելու։

Վեցերորդ պատճառ մ՝ ալ հետևեր է երրորդ պատճառեն. հայրենիքը կորսնցնելով գրեթե հայրենակցությունն ալ կորսնցուցեր է ազգերնիս, և ուրիշ կերպ հայրենակցություն մը մտեր է, որուն ավելի համշիրակցություն կրնանք ըսել. հայրենասիրության տեղ ալ գավառասիրություն։ Ինչպես մեջերնին գավառական լեզուներ մտեր են հայկականին տեղ, ասանկ ալ գավառական բան մը մտեր է, որ սեր ըսելու ալ արժանի չէ, վասնզի շատ ծիծաղելի, անարգ և վնասակար բան է։ Ջեմ ըիտեր յուրաքանչյուր խումբ իր երկիրը գովելու կամ պաշտպանելու համար, թե՞ իր գավառակիցներին կողմ ելլելու, թե՝ ինչպես ավելի կերևնա, մեկայնոնց հակառակելու համար. տեսակ տեսակ զանազանություններ մտեր են, մեկ մը դրսեցի, մեկ մը ներսեցի, մեկ մը պոլսեցի, մեկ մը կեսարացի

կամ գաղատացի, մեկ մը քաղքցի, մեկ մը հայաստանցի, մեկ մը հաստ, մեկ մը բարակ, մեկ մը վարի աշխարհեն, մեկ մ՝ ալ չեմ գիտեր, թերևս լուսնի աշխարհեն։ Ավելի ծաղրելին՝ ալ կուզե՞ս։ Մեկ մը ԷՍՆԱՖ, մեկ մը ՍԱՒՍԱՖ, և ասոնց նման կերպ կերպ զանազանություններ, որ շատ հեղ տուներնիս փլցուցեր են, կրնան հիմերնիս ալ փորել։ Ամեն ազգի մեջ ալ ասոնց նման զանազանություններ կրնան գտնվիլ, թե որ ուզեն զանազանել, բայց ասանկ վնասակար հետևանքներե շատ հեռու կփախչին, որոնց իրը վնաս, ընելը՝ անմտություն։ Մեր ազգին սկիզբը ոչ ի Պոլիս եղեր է, ոչ Գաղատիա, ոչ Կաֆա, ոչ Կալկաթա, ամենքս ալ մեկմեկե առաջ հետև Հայաստանեն եկած ենք և հիմա ուր ալ որ ենք, պանդուխտ ենք։ Վերցնենք ուրեմն աս գավառական զանազանությունները, որ բարակ առուներ կնմանին, շատերը տղմի մեջեն երթալով և բուն աղբյուրը փնտրենք ու միանանք մեր ազգակցության սիրուվը, իմանանք որ ասոնք են մեր մեջ առակ եղած ու նզովված անմիաբանությունը սնուցանող։

Յոթներորդ և ծանր պատճառ՝ հավատքի կողմանե տարաձայնություններն և հակառակություններն են, որոնց ազգասիրության տված մեծ վնասը ամենուն հայտնի է մեր մեջ պատահած ցավալի և անվայել դիպվածներեն։ Կրոնքը ամեն բարոյական կրքե ավելի մարդուս բնության խորը թափանցած ըլլալով, հոգվույն հետ խառնած, անկե շարժած սիրտը սաստկությամբ կշարժի, թե բարվույն մեջ թե չարին, մանավանդ մեր ազգը, որ ի բնե կրոնասեր կամ կրոնապաշտ ազգ է՝ շատ սաստիկ ունի աս կիրքն ալ։ Այն գովելի կրոնասիրության հետ, ամենաշգովելի համառություն մ՝ ալ ունենալով՝ տգիտությունն ալ վրան եկած, խոսք խոսքի հետ չկարենալով համեմատել ու արդար դատել, շատ հեղ կռիվներու, ատելությանց և մեծամեծ չարյաց պատճառ եղած է։ Վերջապես ազգերնիս հրեից թագավորության պես երկու բաժնված է վերեն վար։ Մեկ մասը Հուդայի, մնացածը Իսրայելին։ Հիմա փոխանակ զգուշությամբ և իրաղաղությամբ աս բաժանմունքը միացնելու, թե որ բոնությամբ մեկմեկու քաշվի, ի՞նչ կըլլա. Աքիա Սիլոնացվույն վերարկուին պես տասներկու կտոր ալ չըլլա՞ր։ Ամենեն բարձր գիտությունը աստվածաբանությունն է, մեր մեջ այբը բենեն չղատողն ալ աստվածաբանություն կուզե ընել, տասը տեսակ տգիտության դրոշ բացող վարդապետն ալ կկարծե թե կրոնագիտության դրոշակիրը ինքն է։ Կրոնքի մեջ ամենքը կհավաշտակեն աստուծո

դատաստանը, ամենքը կուզեն դատել և դատապարտել, փոխանակ որ պետք էր ամենքը իրենց աստիճանին վրա կենային, մեկը քարոզեր, մեկը աղոթեր, մեկը սիրով խոսեր, մեկալը լռեր, ամենքն ալ լսեին, քննեին, սիրեին։

Մեզի ընկած սերը մենք միշտ ցուցնենք, փափագինք և ջանանք, որ ամենքս ալ միակրոն ըլլանք ուղղությամբ, բայց քանի որ դեռ փափագնիս չէ հաջողած՝ նախ մեջերնես ատելությունը վերցնենք, անով փափագնիս ալ կրնա կատարվիլ։ Ընդհակառակը, քանի որ ատելությունը կա՝ թող չի տար ճանչնալու ղեշմարտությունը, շիտակը ծուռ կերևցնե, ծուռը շիտակ, տգեղը վայելուչ, վայելուչը՝ տգեղ, որով ոչ կրոնական ամենափափագելի միությունը կըլլա և ոչ քաղաքական անխտիր ընկերակցություն, որով ազգասիրությունը միշտ ետք կմնա։

Ուրեորդ պատճառ այն սիալ կարծիքն է, որ կսեպե թե ամեն մարդ ալ ազգին օգուտ չկրնար ընել, որով ազգասեր չըլլար։ Ազգին օգուտը միայն ստրկով չըլլար, ասկի զատ ազգասիրության ամեն հարկավոր հանգամանքներն ալ կրնան ունենալ ամեն ազգայինք, վասնզի մարդկային բնության մեջ է անոնց սկիզբը, ստրկին հանքերուն մեջ չէ։ Եվ սակայն ազգասիրությունը ստրկով չի գնվիր. այրին իր երկու լումայիկովը ավելի ողորմած եղավ, քան ոսկի տվող մեծատունը։ Ազգասեր է հարուստը, որ ամբողջ դպրատուն մը կկանգնե, բայց ես ավելի ազգասեր կըսեմ այն խեղճ կնկանը, այն այրի մորը, որ աստված գիտե ի՞նչ զրկմունքներ ընելով, կճարե իր տղուն կրթության վարձքը և այն դպրատունը կդնե։ Այս կինը իր դասին մեջ ավելի վեհանձն է, քան թե այն մեկալը իր դասին մեջ խելացի, վասնզի իր ավելորդ ստրկին մեծ մասը, որն որ ուրիշ դասակիցները իրենց կամ իրենց որդվոցը ընդունայն հաճույքը կծախսեն, ինքը ողորմություն տվեր է աղքատաց։ Շատ գովելի է ասոր առատաձեռնությունը, բայց աղքատի մը ուրիշ աղքատի ողորմություն տալը դյուցազնական է։ Ուրեմն միայն հարուստներուն չթողունք ազգին օգնելը, մենք ա՛լ ավելին կրնանք ընել, թե որ ազգը ավելի կսիրենք։ Մենք աղքատքս, մեր ծոցուն մեջտեն կհանենք կուտանք տաք-տաք, անոնք շատ հեղ հեռու պաղ քսակներեն կհանեն։ Թե որ հարուստին թողունք ազգը հոգալը, ինքն ալ իրմե հարուստին կթողու, ձկները միշտ իրենցմե մեծ եղբորունն կդրկեն։ Որչափ քիչվոր ըլլան ազգին բարերարները, այնչափ քիչ կըլլան ազգին ալ, անոնց ըրածին ալ պաշտպա-

նություն ընողները, իսկ երբոր ամենքը մեկեն մեկ բան մը կանգնեն, ամենքն ալ անոր պաշտպան կկենան, ամենքն ալ անոր հաջողելը կմտածեն, ամենքն ալ վրեժխնդիր կելլան, թշնամին չկրնար դյուրավ մոտենալ։

Բայց այս ամեն բաներեն վեր՝ ճշմարիտ ազգասեր ըլլալու համար պետք է լավ մարդ ըլլալ։ Առանց ասոր, թե որ ազգասեր մը կտեսնեք, իմացեք որ սուտ է, կեղծավոր է, հացկատակ է։ Անկարգ մարդը, զեղխը, կռվողը, խաբողը, ընտանիքը չհոգացողը, սուտը իրավեն չզատողը, ազգասեր չէ՛ և չէ՛, թեպետև ազգասիրություն ալ քարոզե, ծախե, կանչե։ Այս է վճիռ իմաստուն բարոյախոսաց։ Ասոր ալ փոխադարձ, ճշմարիտ ազգասերը անկարելի է, որ լավ մարդ չըլլա, վասնզի ազգասիրությունը կպահանջե ամեն մարդկային պարտքեր։

Ազգասիրությունը ունի մեծ զորություն մ՝ ալ, որ չեն կրնար տալ ուրիշ կրքեր, նաև լավերեն շատը, այսինքն է՝ մեծասրտություն մը, կամ աղնվասրտություն մը։ Ասկե պատվական բան չունի մարդկային բնությունը, վասնզի սրտի մեծությունը մարդկային բնության մեծություն կամ բարձրությունն է։ Ազգասիրությամբ անարգագույն վիճակի մարդ՝ թագավորներե ավելի մեծասիրտ և մեծախորհուրդ կելլա։ Այս սիրտն է, որ ՄԵԾ ՄԱՐԴ կշինե, այս սիրտն է, որ իբր թե երկրորդ անդամ կծնանի զմարդիկ, մեկը ազնվական կշինե թեև հետին ռամիկ, մեկալը թեև արքայազն՝ ցածության մեջ կմնա, այս սիրտն է աղբյուր մը առաքինական գործոց և մտածությանց, առանց ասոր գրեթե երևելի գործք մը չէ շինված, արժանավոր արձան մը չէ կանգնված, գեղեցիկ հանճար մը չէ տաքցած։ Այս սիրտն է, որ ընծայեց հունաց և հռոմայեցվոց հռչակված դյուցազունները, այս սիրտն է, որ մեք ազգեն ալ հաներ է անոնց հավասար դյուցազունք, թեպետև մեր պատմիչքը չեն բանեցուցած հունաց և հռոմայեցվոց պարծենկոտ ու պաճուճյալ գրիչները, որով մեր մեջ ավելի ճշմարտություն, անոնց մեջ ավելի երևակայություն կգտնվի։ Այս սիրտն է, որ ինչվան սպարտացի բիրտ կնիկներուն ալ այն վսեմական խոսքերն ըսել և այն արիական գործքերն ընել տվավ, որոնց վրա ինչվան հիմա իմաստունք ալ կզարմանան։ Նույն սիրտը հայոց ընտանի սպասուհիներուն, փափկասուն տիկնանց ալ տվավ այն բարակ դյուցազնական կրքերը, ինչպես Եղիշե կնկարագրե, որ ոչ միայն իմաստնոց, ոչ միայն դյուցազանց, այլև սրբազանից զարմանալի

են։ Այս սիրտն է մարդուս ամենեն ցանկալի, ամենեն մեծ, ամենեն հարուստ և անկորուստ ստացվածքը. երանի ունեցողին, որ թեև բանտի մեջ նստի, սիրտը՝ զինքը դատապարտողներեն բարձր կպտտի։ Այս սիրտն է, որ շատ հեղ վտանգները արհամարհեց, դժվարությունը չտեսավ, մահվան վրա ծիծաղեցավ։ Այս սիրտն է, որ մեռավ ու դեռ կապրի, Աբելի արյանը նման դեռ իր ազգասիրությամբը, իր քաջությամբը կիլոսի երկրիս վրա։ Առե՛ք հայկական վիպասանություն մը, առե՛ք մեր Մակաբեին, մեր Վարդանա պատմությունը ու ըսեք, ինչե՞ր չի խոսիր Վարդան, դեռ ողջ չէ՞։ Կարդացեք ձեր հայրենի հիշատակարանները ու ձեռվնիդ սրտերնուդ զարկելով ըսեք, դեռ չե՞ն խոսիր Հայկ, Արամ, Արա, Տիգրան, Վահե, Վահաններ, Աշոտներ, Սմբատներ, Գուրգեններ, Գեորգներ, Սահակներ, Ներսեսներ. Տիգրանուհի մը, Խոսրովիդուխտ մը, Սոփի մը, Մարիամ մը, Այծեմնիկ մը և այլն։ Ուրեմն չէ՛, չի՛ մեռնիր այն սիրտը, այն սիրտն է, որ անմահ կմնա։ Ժամանակը միշտ իրեն հետ կդտնե։ զայն, մարդիկ միշտ կտեսնեն զայն, պատմությունը միշտ կհիշե զայն, բարոյականը միշտ օրինակ կուտա զայն, զգայուն մարդն ալ միշտ կդարմանա, միշտ կնախանձի, միշտ կփափագի անոր նմանելու։ Այս սիրտն է, որ առաքինությամբ ալ ուժովցած, վեր թռչելու ատեն մեծագույն թևեր կառնու և երկնքին ալ բարձրագույն սահմանները կելլե. երբ սրաշվի արծվու պես այն բարձրութենեն ալ դեռ կտեսնե երկրիս վրա իր բույնը, իր հիշատակները, որոնք իր մեռնելեն վերջն ալ չեն դադրիր շարունակելու իրեն ազգասիրությունը։

ԱԶԳԱՅԻՆ ԳԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ ՄԸ, ՈՐ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԱՐԳԻԼԵ

Ազգի մը հետամնացությունը, այսինքն կրթութենե հետ մնալը, կամ իր անճարակ տկարամիտ բնությանը համար սլիտի ըլլա, կամ դրսի արդելքով մը։ Մեր ազգին՝ ի բնե անկարող, անճարակ չըլլալը առաջ ցուցցեր ենք, ուրեմն ուրիշ պատճառ կուգա իր ետք մնալը։ Այս պատճառը քաղաքական անտեր վիճակեն, կամ հարստություն չունենալենն չէ, ինչպես ոմանք կկարծեն, կամ գոնե այնչափ անկէց չէ, որչափ կկարծվի։ Վասնզի հիմա փորձով կտեսնանք, որ քանի մը տարիե վեր ազգերնիս կծաղկի, ոչ քա-

ղաքական վիճակը փոխելով և ոչ ալ ավելի հարստանալով, թերևս ավելի ալ աղքատ ըլլալով քան թե առաջ։ Կմնա որ իրմե ունենա ներքին պատճառ մը, որ իր կարողությունը իր ճարտասանությունը արգիլե, և իր հոգելից եռանդը դարձնե ուրիշ բանի մը վրա, վասընզի արթուն հոգին և թևավոր միտքը անգործ չեն նստիր։ Տաղանդավոր ազգ մը, ինչպես մերը, եթե քաղաքական և բանական զարգացման անհոգ է՝ պետք է որ իր մտաց և ջանքին ուրիշ զբաղմունք մը գտած ըլլա։

Ո՞րն է մեր ազգին գլխավոր հոգ ու զբաղմունք եղածը։ «Ահա ակամայ ճառագրեմ» ես ալ Եղիշե վարդապետին հետ իմ ազգիս հարվածը, և իրեն հետ իմ սիրտս ալ «Դառնայ յարտասուս... և եթէ ի վերայ միոյ ազգի այսպէս, ո՞րչափ ևս առաւել ի վերայ ողջոյն ազգի միոջ»[1]։ Թողլով ուրիշ թանձրագույն հոգերը, ինձի կերևնա թե մեր ազգին գլխավոր հոգ եղածն է մեկ չափազանց շահասիրություն մը, հանդերձ կծծիությամբ և դյուրակեցության սեր. իր ուժը ծախած է շահու համար, շահը՝ դյուրակեցության համար։ Ասոնցմով քաղաքականությունը և բանականությունը ծաղկեցնել չէ կրցած, վասնզի անոնց միջոցը, որ են ստակ և եռանդն սրտի, ուրիշ բաներու ծախեր է։

Բոլոր աշխարհք գիտե, որ հայոց ազգը մասնավոր սեր և հաջողություն ունի վաճառականության. այլ մը մեջ, որ վաճառականությունը ծաղկած է՝ անկե շատ բան կրնա հուսացվիլ։ Վասնզի, «Մշակությունը կսնուցանե ազգերությունները,— կըսե իմաստուն մը,— վաճառականությունը կզարգացնե»։ Մեր Ագաթանգեղոսն ալ կըսե վաճառականաց համար. «Նաև զաղքատս մեծացուցանեն փոքր ինչ յարգանօք, և զաշխարհ պսակեն նոր և չքնաղ գիւտիւք. նոքա և զփափաղելի մարդկան զպէտս պատրաստեն»[2]։ Անոր համար վաճառականությունը ամեն ազգաց փափագելի է, մեր ազգն ալ իրավունք ունի փափագիլուն և պարծանք ունի հաջողելուն։ Բայց ուս ալ քննելու է, թե վաճառականությամբ՝ ազգ իր տերությունը կորսնցնելեն վերջն ալ, և թերևս ալ ավելի՝ ծաղկեցուցեր է, ի՞նչ օգուտ բերեր է իրեն, ի՞նչ նոր ու չքնաղ գյուտեր գտեր է։ Վաճառականությունը մայր բարգավաճանաց կըսվի, մեզի ի՞նչ բանի մայր եղեր է։ Ո՜հ, դժբախտությամբ՝ ամուլ կամ սակավածին գտնվեր է Հայաստանի մեջ ուս մայրը ազնվական ծնունդներու ու իր հասարակ թանձր հետևանքներովը բազմածին։ Հայոց տերությունը բոլորովին վերցվելեն վերջը կես հազար տարի է հա-

յոց վաճառականության սերությունը միշտ բանուկ մնացեր է։ Վաճառականության արդասյոք այնչափ դարերու մեջ քաղաքակրթությունը և բանականության զարգացումը որչափ առաջ գացեր է, ոսկեգլուխ և արծաթաբազուկ վաճառականությունը որչափ առաջ քալցուցեր է հայությունը մարդկության ճամբուն մեջ...

Ինչո՞ւ աս հարցմանս զվարթ պատասխան մը չկա։ Վասնզի վաճառականության քաղցր աղբեր քով շահասիրության լեղիահամ աղբյուրն ալ վազելով, խառնվեր ջուրը դառնացուցեր է, անարգ շահասիրություն մը տիրեր է ձեռաց և մտաց։ Ստակը մտավոր զվարճության, իմաստության և գիտության հրավիրակ ըլլալու տեղ, կամ նոր ստակ քաշելու, կամ անցավոր վայելմանց գործի եղեր է, աղնվական բաներե ձեռքը քաշած կծկեր է, կծծություն եղեր է։ Այս օրվան օրս ալ, որ գիտությունք քիչ մը ճանչցվեցան մեջերնիս և ծաղկիլ սկսան, դեռ շահասիրությունը չե՞նք տեսնար, որ անոնց հետ կկռվի։ Շահասիրությունը չէ՞, որ տղոց կրթության մեջ ալ իրեն հարմար ուսմունքները կպատվիրե, ան չէ՞, որ ամեն բանե վեր վաճառականության վերաբերյալ բաները սորվիլ կհորդորե, ան չէ՞, որ այնչափ օգտակար և խելք տվող ուսմունքները թողլով, մեծասիրտ և հայրենասեր ընող ազգային դպրությունը թողլով՝ կերթա օտար լեզուներու հետևե կըլլա և անանկ լեզուներու, որոնց բնական արժեքը շատ չնչին է, բայց առուտուրի բանուկ է։

Իրավ է, որ մարդուս ամենեն պատվական բանը կյանքն է, և շահը հարկավոր է կյանքը պահելու համար։ Բայց գիտնալու է, որ լավ ապրիլը, այսինքն մարդավայել կյանքը ավելի հարկավոր է, քան դյուրությամբ ապրիլը։ Թե որ աս բանս լավ ճանչցվեր՝ չէինք լսեր այն ծաղրելի և դատապարտելի զրույցը, թե քերականությունը հաց չբերեր, գիրն ու գրիչը փոր չեն կշտացներ... Ասանկ սկզբունք ունեցող ծնողաց տղաքը ի՞նչ պիտի փնտրեն. իհարկե իրենց համար աշխարհքիս մեջ ամենեն վայելուչ բանը հացը պիտի ըլլա։ Ամեն ջանքերնին ան պիտի ըլլա, որ ստակ շահին, որպեսզի հաց ուտեն, գիտությունը մեկդի թողլու է, մեկեն ձեռագործի կամ վաճառականության ետևե ըլլալու է, որպեսզի հաց ուտեն։ Հաց ուտելու համար աշխարհ եկանք, մարդկանց դպրոց ախոռներն պիտի ըլլան և դասատու խոզերն պիտի առնունք։ Հաց ուտելով որչա՞փ պիտի ապրիս, շատ շատ ութսուն տարի. իսկ հացի տեղ իմաստություն շահելով՝ հավիտենականություն մը կապրիս։

Իրենց կենաց նպատակ հացը դնողներեն շատ քիչերը իրենց բնության երջանիկ վախճանին. կհասնին, բայց որոնք որ իմաստությունը իրենց վախճան են դրեր, անոնք խելքով աս կյանքես վերջն ալ երջանիկ կըլլան։

Թե որ քերականությունը հաց չբերեր, հապա հացն ալ քերականություն կբերե՞, աշխարհագիտություն կբերե՞, բնագիտություն կբերե՞, աստղագիտություն կբերե՞։ Հասարակ ձեռնարվեստ մը միտքը կպայծառացնե՞, քաղաքականություն կսորվեցնե՞, աշխարհքիս մեջ եղած-չեղածը կճանչցնե՞։ Վաճառականությունը՝ օրենք, փիլիսոփայություն, բարոյական, դպրություն կսովորեցընե՞։ Քսակ քսակին քով սնտուկին մեջ դնելը կսորվեցնե՞ մարդուս առ ինքն, առ հայրենիս, առ մարդիկ ունեցած պարտքերը։ Ընդհակառակն, ուսմունքներն չե՞ն, որ շահու ալ նոր և մաքուր ճամբա կբանան, քերականությունը չէ՞ որ շատին հաց գտնելու պատճառ եղեր է, խելքը չէ՞, որ արդար կերպով և հաջողությամբ վաստրկցնել կուտա, իմաստություն չէ՞ որ վաճառականության ճամբաներն ալ կընդարձակե, կդյուրացնե, և ծռությունը կվերցնե։ Բարոյագիտությունը չէ՞, որ ստրկին գեշ հետևանքները կտրել կսորվեցնե։ Մեկ խոսքով, մեկ գիտություն մը ավելի սորվիլը, քիչ մ՚ալ ավելի զմարդս անբաններեն կպատե և բնությանը կմոտեցնե։ Մեկ պատառ մը ավելի հացը, մեկ փափկության զվարճություն մը քիչ մը ավելի զմարդս անբանի կմոտեցնե, մեկ ավելի ստակ մը որ կրնար մարդկության օգուտ մը ընել և փուճ կմնա կամ կդախվի՝ մեկ անարգանք է մարդկության։ Ատենոք, երբ որ տգիտությունը ամոթ կսեպվեր հունաց մեջ, մեր ըսած իմաստության համար ագահ ու զվարճությանց համար շռայլ մարդուն մեկը շատ մտածելն ետքը կամք կընե վերջապես դոհ մը ընել, ու իր զավակը ուսման տալ։ Կերթա կհարցնե իմաստասիրի մը, թե ի՞նչ տարեկան վարձք կուզե տղուն ուսմունք սորվեցնելու։ Իմաստասերը կըսե անոր ինչ որ սովորականն էր, բայց ան, որ միտքը դրեր էր, թե փափկության ու զվարճության բաները միայն կրնան ծանրագին ըլլալ, երբ որ լսեց տարեկան վարժապետին վարձքը՝ վեր վեր ընկավ ու կանչեց. այդչափ վարձքով ես թեատրոնը նստարան մը կրնամ վարձելու, որ տղաս բոլոր տարին երթա զվարճանա։ Իմացավ իմաստասերը թե ինչ կերպ մարդու հետ կխոսի և որովհետև ան ատենը թեատրոնի նստարանները քարե էին, դարձավ ըսավ մարդուն. աղեկ է, գնա ըսածդ ըրե ու տղադ թեատրոն խավրե, որ

երթա ու քեզի պես քարը քարի վրա նստի։ Որչա՞փ արդյոք ասանկ քարե մարդիկներ կրնան գտնվիլ հիմա ալ՝ որոնց ոսկին ու արծաթը իրենց քովը շատ ավելի հարգի ըլլա։

Այս բաներս միայն հարուստներուն համար չկարծվի, որովհետև քիչ են այն աստիճանի աղքատները, որ չկարենան գոնե կրթության սկզբունք մը առնել տալ իրենց տղոցը։ Թե որ աղքատը գիտնար երբեմն հարկավոր երևցածեն ալ զինքը զրկել, թե որ չափավոր սեպվածը՝ հիրավի զինքը չափավորել և թե որ հարուստը՝ իրեն ավելորդեն կարոտին մասն հանել, մեր ազգն ալ հիմակվան վիճակին մեջ կրնար բոլորովին դաստիարակություն առնուլ։ Բավական է թե ճանչնար որ կրթութենե պատվական բան չկա աշխարհիս վրա, վասնզի ինքն է մարդկություն, թե որ ճանչնար, որ անոթությամբ ապրելեն շատ գեշ է տգիտությամբ ապրիլը։ Տգետը արդեն մեռած է մտոք, անոթին դեռ կապրի։ Մարդ մը կուշտ կամ փափկակյաց ապրելուն համար չէ գովված, բայց իմաստության հետևե ընկնող և անոթությամբ ապրողները միշտ գովելի են եղեր. առաջիններուն համար նախանձ և անեծք կարդացվեր է, ետքիններուս համար օրհնանք և զարմանք։

Ո՞ւր են հիմա այն պորտաբույծ, կարճամիտ նախարարները, որ անշուշտ ավելի հանգիստ ապրելու համար՝ իրենց գլխին փառքը, նախանձելի Արշակունյաց թագավորություն մը հանձն առին կործանել և մոխրապաշտից հնազանդիլ։ Թերևս անոնցմե ոմանք փափագածներուն պես դյուրությամբ ապրեցան ալ, բայց այս հազար չորս հարյուր տարի է ամենքը անոնց թուք ու մուր կուտան։ Իսկ ասոնց ներհակ՝ քանի մը տառապյալ անձինք ալ կային ան ատենը, թեպետև ալևորած, կարոտության համար ոտքով ճամբա կընեին, մեղուի պես իրենց քաղցր իմաստության բեռները իրենց կռնակը շալկած էին և պանդուխտի պես իրենց հայրենի Հայաստանին դաշտերուն մեջեն կանցնեին, ու երբոր հոգնած, քրտնած, իրիկունը տեղ մը հասնեին, այն մեր շահը ուսմունքե վեր դնող և անձնդյուրությունը քան զիմաստություն ընտրող նախազգիները, անոնց հանգչելու տեղ մ՝ ալ չէին տար և ոչ դանկ մը գիտության կամ գիտնոց համար։ «Ո՞վ ոք ի ձէնջ թոշակս յաղագս մեր, ո՞վ ոք վարդապետացն մաղթանս... ո՞վ ոք յերթալս մեր բեռնաբարձս, ո՞վ ոք ի գալն մերում հանգիստ, ո՞վ ոք տուն կամ օթանոց մեզ պատրաստեաց»[3]։ Կլսե՞ք Խորենացվույն բողոքը։ Եվ ահա այսօրվան օրս ինքն է և իր նման ընկերներն, որ ազգերնուս ամենեն մեծ

պարծանքներն են, բոլոր աշխարհիս դիմաց ալ փառավոր են, երկնից ալ գովելի են։ Թե . որ Խորենացին ալ ոմանց պես միամիտ գտնվելով հավատար, որ քերականությունը հաց չբերեր, այսօրվան օրս աշխարհքիս մեկ մեծ մասը մութ պիտի մնար իր պայծառ Պատմութենեն զրկվելով։ Թե որ անիկա իր փորը կշտացնել մտածեր, քանի՞ քանի՞ ազգային և եվրոպական մտքեր անոթի պիտի մնային այնչափ ծանոթություններե, որ իր գրքերեն կառնունք։ Եղիշե, լեռները պտտելով, մարմինը մարախի պես չորցած, Ղազարը իր հայրենական ստացվածքն ալ Վաղարշապատու ուսումնարանին համար ծախսելով, հազար ու մեկ նեղություն քաշելով և հալածվելով, թողուցին մեզի այն պատմաբանությունները, որ հունաց ամենեն ընտիր ոճով գրած պատմություններուն կհամեմատվին։ Անդին դաս մը մարդիկ, որոնց վիճակը կհարկադրեր անոնց նման ըլլալու, բայց անշուշտ պզտիկուցմե հացի, քան թե քերականության դաս լսած ըլլալնուն՝ ասոնց վրա կծիծաղեին, մեզի Աթենքեն ու Բյուզանդիոնեն նոր վարպետներ կուգան ըսելով և սակայն այն նոր վարպետներն ինչվան այս օրս ալ վարպետ են հայկական դպրության, իսկ այն ծաղր ընողներն այբի կտոր մ՝ ալ չեն թողուցած մեզի։

Մեկ երկու օրինակ ալ բերենք, որ իմացվի թե իմաստությունը փափկութենեն ցանկալի է, թե աղքատն ալ ուղելու ըլլա՝ հնարք կգտնե բան սորվելու. կհուսանք, որ բարեսեր ընթերցողք կներեն խոսքերնուս երկայնությանը, վասնզի այսօր կուզենք լմնցնել և վերցնել մեր մեջեն սա քերականության և հացին դատաստանը։ Եկե՛ք պատանիք, եկե՛ք ծնողք պատանյաց, որ վաճառական ըլլալ, վաճառական ընել կփափագիք։ Այս փափագս նույնպես զորավոր էր ազգերնուս մեջ ան ատենն ալ, որ Հայաստանեն Հունաստան թե՛ շահասիրության, թե՛ իմաստասիրության ճամբաներն բաց էին։ Շատերը իժիր կերթային առջինեն, որ շահին հարստանան, գնացին, եկան, շահեցան, ապրեցան, մեռան, մեզի չոր անուն մ՝ ալ չթողուցին։ Անոնց հետ մեկտեղ պատանի մ՝ ալ ելավ խոր Հայաստանեն, բայց իմաստասիրության ճամբան բռնեց Աթենք հասավ։ Բայց ինչպես որ գիտենք, քերականությունը հաց չբերեր, ինքն ալ հացի կարոտ էր։ Բանի տեղ չդրավ պատանին, հացի տեղ գիրք գնեց ունեցած ստրկովը, մտավ Աթենք, բայց աղքատությունը զինքը չթողուց։ Ինքն ալ աղքատության հետ կովեցավ, անոթության հետ կովեցավ, խելքն ու միտքը ավելի բարակցուց, անուն հանեց,

սիրելի եղավ, ճեմարանին դուռը բացվեցավ իրեն։ Բայց այն սոսկալի աղքատությունը կպեր էր հետը, քերականությունը դեռ հաց չէր տար, պատանին ոգեպահիկով միայն կապրեր։ Ան ալ բավական չէ, պետք էր կոկ զգեստ մ՝ ալ ունենա, որ կարենա ճեմարան մտնել, հիմա ի՞նչ ընե աղքատ տղայն։ Կգտնե իրեն նման աղքատ և ուսումնասեր տղա մ՝ ալ, գլուխ գլխու կուտան, երկուքը մեկ զգեստ մը կշինեն, օր մը մեկը կհագնի կերթա ճեմարան, խելք կսորվի, ընկերը անկողնի մեջ կամ սենյակը փակված կմնա, մեկալ օրը ընկերը կհագնի կերթա ճեմարան խելք սորվելու, ինքը փակված կմնա գիրք կարդալով։ Ասանկով քերականություն ալ կսորվին, ճարտասանություն ալ, իմաստասիրություն ալ, որով թե՛ հաց կվաստկեն և թե՛ զգեստ։ Եվ ան Հայաստանեն եկած աղքատ, անհաց պատանին գիտե՞ք ինչ կըլլա։ Երբոր Աթենքի ճեմարանին ճարտասանության վարպետը կմեռնի, ամեն աշխարհքե նվիրակ կուգա, որ Բրոերեսիոս նստի աթոռը. այս էր պատանվույն անունը։ Բրոերեսիոս կըլլա առաջին ճարտասան աշխարհի իր ատենը, Գրիգոր Աստվածաբանի պես աշկերտ մը կունենա, ամեն իմաստուններ բարեկամ կունենա, Կոստանդ կայսեր հացակից կըլլա, Հուլիանոս կայսր իրեն շողոքորթ կըլլա, որ Բրոերեսիոս հաճի իրեն վրա գովեստ գրել, Հռոմ, համբավը լսելով, իրեն արձան կկանգնե, քրիստոնյայք իրեն հավատակցությանը համար, հեթանոսք իրեն անհամեմատ հանճարույն համար զինքը հավասար կպատվեն։ Հունաստանին մեջ հայը շատցնելու համար Բրոերեսիոս աղերս մը կուտա, մեկեն ցորենին մաքսը կվերցվի։ Տեսնա՞ք ինչ զորություն ունին եղեր քերականությունը և գիտությունը։ Թե որ մեր փափուկ և նազուկ պատանիներեն ոմանք մազերնին յուզելու և զգեստնին կոկելու համար ծախսած ստակնին մեկ բերեին, նոր գիտություն մը կրնային սորվիլ, կամ պշտի գրատուն մը ստանալ։

Ի՞նչ ըսենք հապա փափուկ տիկնայց, գթասիրտ մարց, որ զավկընուն կրթության համար ստակ չեն գտներ, բայց իրենց դյուրակեցության և զարդերուն համար միշտ բան մը կգտնեն, վասնզի ասիկա իրենց պարտք կսեպեն, առաջինը՝ չէ։ Մտիկ ընեն անոնք ալ Վիդոյին մորը ըրածը։ Ասիկա ալ Պրոերեսիոսեն քիչ մը վերջ է։ Մայրը մանկամարդ որբևայրի մնաց, էրկընեն քիչ բան ժառանգելով, բայց բնութենե շատ հարուստ ժառանգեր էր կանանց ցանկալի եղած շնորհքները, որով շատերը երկրորդ հարսանյաց կհրավիրեին զինքը. բայց անիկա իր առջի պշտին կրթությունը վեր

դրավ, քան իրեն փափկությունը։ Լսեր է եղեր Աթենքին անունը և իմաստությունը, կելլե մեծ Հայաստանեն, կառնու իր մեկ հատիկը, երկայն և տաժանելի ճամբա կտրելով կհասնի Աթենք, կներկայացնե տղան Լիբանիոս իմաստակին, որ Բրոերեսիոսեն վերջը առջին պերճախոս կսեպվեր և Ոսկեբերանի վարպետն էր, և կուզե որ իր առջին սկսանի Լիդո հռոմերենի առաջին դասը, որուն կրթությանը համար բերնին ապրուստը, գլխին հագուստը կտրեր էր։ Կզարմանա կմնա Լիբանիոս և իր մեկ բարեկամին կգրե աս բաներս և մորմեն վար չմնալու համար՝ մեծ հոգ կտանի տղուն վրա, որ կըլլա ուսումնասեր, ճարտասան, առաքինի և կտրիճ մարդ մը, զինվորի պես կյանք անցնելով և փիլիսոփայի պես կենակցելով, իր վարպետին ալ մեծ բարեկամը կըլլա և մեզի տարակույս կթողու, թե իր իմաստությանը վրա չէ նե մորը իմաստասիրությանը վրա ավելի զարմանք։

Այս օրինակներուս պես կհավատանք, որ զանազան ատեն ելած են ազգերնես կրթասեր և իմաստասեր անձինք, բայց տրրտությամբ ավելի հայտնի կտեսնենք Խորենացվույն հետ «Զանիմաստասէր բարս առաջնոցն մերոց... զ՝ առ յիմաստսն ազամարութիւն և զանկատարութիւն ոգւոյն բանականի»[5]։ Չէ թե անկարող ըլլալնուն համար, հապա խելվնին փափկությամբ ապրելու տված ըլլալնուն, ավելի ժողովել ուզելնուն, քան թե սփռել օգտակար գործքերով և շինությամբք։ Այս բանիս փորձը աչքով ալ կտեսնենք։ Գիտենք, որ մեր հին թագավորները Ասիո երկրորդական թագավորներեն էին, երբեմն առաջին կարգի ալ, միշտ բավական ուժ և շատ հարստություն ունեցեր են, և սակայն մեծագործ բաներ չեն շինած, ինչպես կտեսնանք Եգիպտոս, Հունաստան, Բաբելոն, Պարսկաստան և ուրիշ տեղվանք։ Իրավ Հայաստան շատ տակնուվրա եղեր է, բայց ճարտարությունը կրնար բռնությանց ալ հաղթել, ինչպես որ հաղթեր է ուրիշ աշխարհքներու մեջ, ինչպես նաև Հայաստանին մեջ կեցած է Շամիրամակերտը, ինչպես կան քանի մը մնացուրդք մեր Տիգրանյան և Տրդատյան մեծ թագավորաց ալ, ինչպես կան շատ մը եկեղեցիներ, որ բարեպաշտության հոգին կանգնեց։ Իսկ մեր թագավորներուն և իշխաններուն շատը ի՞նչ հիշատակարան թողուցին. ամուր-ամուր բերդեր՝ իրենց գանձերը պահելու, խոր գուբեր՝ ստացվածքնին ծածկելու. շահասիրության նշան մը, և ոչ առատաձեռնության։ Քսենոփոն մեծ պատմիչը և զորավարը, որ ասկե երկու հազար երկու հարյուր հի-

սուն տարի առաջ Հայաստանեն անցավ, աչքովը տեսավ աս հայոց պահարանները և կհիշե։ Նույնը ուրիշ գրվածի մեջ, թեպետև պատմությունը հյուսվածո է, կպատմե թե երբ որ Երվանդ Սակավակյացը Մարաց պատերազմին հաղթվեցավ, ամենքն ալ թողուցին փախան ունեցածնին լեռներու ու ամրոցներու մեջ պահելու, փոխանակ որ պետք էր միաբան գային թագավորը ու երկիրնին պաշտպանելու։

Մեր նախարարներուն շատ անգամ անմիաբանության, թագավորեն զատվելուն պատճառը աս շահասիրությունը և դյուրակեցությունն էր, մեր աշխարհքին այնչափ ոտնակոխ ըլլալուն մեկ պատճառն ալ աս է։ Արշակունյաց տերությունը ինչպես վերջացավ՝ հիշեցինք։ Բագրատունյացը ավելի հայտնի է. մեկ իշխանի մը, մեկ անարժան երիցու մը ագահությունն՝ Հայաստանի թագը կորսընցուց։ Հին հայոց մնացորդներն ալ երկու հուդայամիտ անձինք երեսուն թուման ստրկի համար Շահաբբասին մատնեցին։ Ագահության և կաշառակրծության հետ, շահասիրության և ընչասիրության ոգին այնպես տիրեց, որ վերը հիշած իմաստության ցանկալի գանձը գրեթե անհիշատակ մնաց շատ դարեր, մեր նախնյաց քրտինքով թրջած գրքերը ինչվան վանքերու մեջ ալ փտեցան։ Ձեռագիր մը կարդալը մոգություն դարձավ և թե որ հազար չորս հարյուր տարիեն վերջը ազգային հեղինակի մը գործ առաջին անգամ տպագրությամբ ի լույս ընծայեցավ և երկու միլիոն հայոց իմաց տրվեցավ, շատ հեղ երկու հարյուր հոգի փափագող չգտավ։

Ավելի ցավալին և ամոթալին կուզե՞ք լսել։ Գիտեմ, որ չեք ուզեր, ինչպես ես ալ ըսել չեմ ուզեր, սակայն հիշենք զգուշության համար։ Չէ թե միայն գրքին և դպրոցին երեսը տեսնել չուզողներ եղան և կան, հապա նաև ուրիշներն ալ արգիլող, նախանձը կամ այլ անարգ պատճառ մը առած՝ ինչվան գիրքը ձեռքեն խլել և առատության կանգնած ուսումնարանը կծծությամբ գոցել ջանացող, փափագելով որ իմաստության համար ծախվածը կամ շնչին զվարճության մը համար ծախվեր, կամ սնտուկին մեջ իրան ժանգոտերես եղբարցը քով մնար։

Այսպիսի հոգվով, ձեռքը ստակով գոց, Հայաստան քանի՞ դարեր անցուցեր է և ի՞նչ վայլեր է. ինքը չէ՞ որ ինքզինքը միշտ խեղճ և թշվառ անվաներ է։ Հիրավի խեղճ է այն, որ կրնա վայլել և չվայլեր, աղքատ եմ կըսե։ Հիրավի աղքատ է, որ օգտակարեն կզրկե զինքը. ասոր համար՝ Լամբրոնացվույն մեծ սիրտն ալ այրած՝

իր ատենվան հայերու համար բաղդատելով եվրոպացվոց գաղթականներուն հետ, կըսե, որ անոնք միշտ կուտան ողորմություն և չեն աղքատանար։ «Եւ դու հանապազօր ուժդութեամբդ՝ մնաս և այնպէս աղքատ. տե՛ս և որպէս ես տեսի բազում անգամ, զի նոքա ուր և բնակեն՝ ունին զփարթամութիւն. և մեք ընդ ամենայն աշխարհս սեփական ունիմք ընդ ստրկութեանս և զաղքատութիւնս»[6]։ Եվ երանի՜ թե աղքատություն ըլար և ոչ ագահություն, որ հայր է չարյաց և ամեն բարի փափաղանաց ատեցող և չսիրող, թանձր մտածմունքներ և փափագներ միայն սնուցող։

Բայց թողլով սա սև հիշատակները, թե որ մեկ մ՝ ալ դառնանք տեսնելու թե առատաձեռնությունը և մանավանդ անշահասիրությունը ո՞րչափ զորավոր միջոց է ազգին առաջադիմության, մեծության, ուսմանց զարգացման, նույնիսկ մեր ազգեն կգտնենք փառավոր օրինակներ։ Կգտնենք Տիգրան մը Հայկազնյան, որ նախ ճարտարությամբ տեսությունը հարստացուց, վերջը հարստությունը խոհեմությամբ բաժանելով իր ժողովրդյանը, արվեստները ծաղկեցուց, քաղաքականությունը ան աստիճանի պառաջ տարավ, որ ամենքը բարեկյաց և մեյմեկ դյուցազուն դարձան, կըսե պատմիչը։ Կգտնենք Տրդատ մը, որ արքունի գանձերով Լուսավորչա ճամբաները դյուրացուց և քիչ ատենի մեջ ուսմանց վարժարանները անթիվ ըրավ։ Կգտնենք Վռամշապուհ մը, որ քանի մը գանձ ծախելով. վաստկեցավ մեկ հայկական թարգմանություն մը, որ անմահ պսակ է իրեն հավիտյան։ Կգտնենք Աշոտ Ա, որ առատաձեռնությամբ իշխաններուն սիրելի ըլլալով՝ չորս հարյուր տարվընե ի վեր հայոց կորսված թագը կանգնեց իր Բագրատունի ճակատին վրա։ Նույնպես կտեսնենք Ռուբինյան թագավորներն ալ, որ առատաձեռնությամբ կանգնեցին և պահեցին տերությունին։ Մանավանդ Լևոն Բ, որ ամենեն մեծ և զորավոր և առաջին պսակավոր եղավ, ամենեն ալ առատաձեռն գտնվեցավ, չէ միայն համազգյացը, այլև օտարաց, անոր համար ամենուն սիրելի էր և անունը կայսերաց և քահանայապետաց քով կհիշվեր։ Ավելի զարմանք. Պապա պես գարշելի թագավորն ալ տանելի եղավ նախարարներուն, որոնք չդիմացան Արտաշիսի, ինչու որ Պապ «Յոյժ անընչասիրաբար ցուցանէր զիւր ախորժական և առատաբար կեայր»[7]։ Երվանդ բռնավորությամբ թագավորեց, մեր նախարարները բռնավոր չէին սիրեր և սակայն ասոր հետ հաշտ կեցան, վասնզի Երվանդ առատաձեռն և շինող մարդ էր։

Ասոց նման օրինակներ ալ ունինք, բայց ասոնք ընդհանուր ազգին ոգին չեն։ Մեր մեջեն ալ ելած են մեծասիրտ և առատաձեռն մարդիկ, որ բոլոր աշխարհիս օրինակ կրնան ըլլալ, բայց գեշը այն է, որ իրենց ազգին մեջ հետևող կամ զարմացող չունենալնուն համար, ազգին սովորութենեն վեր բաներ սեպված են։ Այս բանս վարպետ կերպով մը կհիշեցընե մեզի Ասողիկ, երբոր կըսե Հայկազն Լևոն կայսեր համար, թե էր «Առատաձեռն ի տուրս և ի բաշխել, որ որպէս զՀոռոմ ոիշդ, վի չէ սովորութիւն Հոռոմոց առատ լինել, և ոչ իւրեանց լեզուն ասի առատ. այլ նա որդի հայոց էր (Վասլի)»։ Այս խոսքը լսելով հոռոմատեաց մը կուռի և կկարծե, որ իրեն պես կամ իրմե ավելի պակասավոր մը գտնալով, իր երեսը կճերմկի։ Բայց մտիկ ընե, վարպետ պատմիչը ինչպես կվերջացնե խոսքը. կըսե. «Եւ առաւել քան զՀայ առատատուր» էր Լևոն[8]։

Բայց ես ավելի մեծ և փառավոր կերպով կուզեմ խոսքս վերջացնել և շատ երջանիկ կսեպեմ մեր օրերը, որ ազգերնուս ծաղկիլը կտեսնա անշահասիրությամբ ազգասեր անձանց, որոնք հիրավի վեհագույն գտնվելով քան զիրենց առաջինները և ժամանակակիցներեն շատը, ազգին կարոտությունը իրենց փափկութենեն վեր դրին, և փոխանակ իրենց քանի մը զավակաց բավական ժառանգությունը ավելի շատցնելու, հարյուրավոր զավակներ ունեցան իրենց կանգնած դպրոցներուն մեջ։ Փոխանակ քանի մը անձանց փուճ և սուտ երջանկության մը պատճառ ըլլալու, ճշմարիտ երջանկության պատճառ եղան շատերու։ Փոխանակ կովո, նախանձու, մատնության, ղեղխության առիթ արծաթը իրենց կարճ օրերուն ծախելու կամ սնտուկին տակ թողլու, այն շահեցուցին դըպրոցներով, թոշակավոր վարպետներով, ընկերություններով, տպել տված գրքերով, գործարաններով և այլն։ Ասոնց օրինակը կհուսանք, որ ուրիշներուն ալ վարշամակով ծրարածը բանալ տա և ազգին նոր դյուրություն մը պարգևե։ Կհուսանք որ, անոնց օրինակով իրենցմե պզտիկներն ալ սորվին, թե ստակը ինչ բանի է պետք եղեր գործածել և ամենքն փափագին ամեն բանե առաջ կրթության համար ծախսել, չքավորներն ալ կրթության փափագով վազեն բարերարաց բացած դռներուն։ Իսկ այն վսեմախոհ և ազնվամիտ բարերարները և ազգասերները անտարակույս ըլլան, որ իրենց անունը իրենց նախնի թագավորներեն ալ վեր պիտի գրվի, իրենց երախտիքը սրտե սիրտ իջնալով դարե դար պիտի անցնի։

ՇԻԼԼԵՐ

Հանճարեղ մարդիկ ամեն ատեն գովվեր և իրենց զարմացողները ունեցեր են աշխարհիս վրա։ Բայց հանճարը անմահացնող և հաստատուն և անկապուտ փառք մը տվողը՝ անոր լավ կերպով գործածության եղանակը եղած է, որով ոչ միայն մարդուս զարմանքը, այլ նաև անոնց իրավացի գովեստն ու մեծարանքը ընդուներ են այնպիսի հանճարո տեր եղող մարդիկը, ավելի անոր համար, որ իրենց վախճանը լավ ճանչնալով՝ հեռու եղեր են այն բազմապատիկ կրքերեն, որոնք ոչ երբեք գովելի եղեր են։ Հանճարեղ մարդիկ իրավ է, որ շատ երևցեր են աշխարհիս վրա, բայց այս երկու կատարելությունս մեկտեղ ունեցողք՝ սակավավորք։ Եվ այն քիչվորներուն մեկը՝ կրնանք սեպել արժանապես նաև Շիլլեր գերմանացի մեծանուն քերթողը, որուն վարքը և իրեն գրվածոցն ալ մեկ ճաշակը ուզեցինք ընծայել բանասիրաց։

Ֆրեդերիկոս Շիլլեր ծնավ Վյուրտեմբերգի իշխանության Մարբախ քաղաքը, համի 1759, նոյեմբեր ամսույն տասին, աննշան ծնողաց զավակ։ Հայրը զինվորական վիրաբույժ մըն էր, իսկ մայրը՝ ընտիր ախորժակ և մասնավոր բանաստեղծության սեր ունեցող ըլլալով, ջանացավ, որ իր որդվույն սրտին մեջ այն ազատական արվեստին սերը մտցնե։ Ուստի տղա հասակեն ձեռքը տվավ քանի մը գերմանացի բանաստեղծից գրվածները, նույնպես ալ սուրբ գրոց քերթողաբան ընտիր հատվածները։ Տղայության ատենները ծնողքը գյուղաքաղաք մը քաշվեցան՝ ավելի հանգիստ կյանք անցնելու փափագով։ Հոն բնության զարմանալի և ակնապարար տեսարանները և ընտանյաց սերը Շիլլերի հանճարը այն ատենն սկսան արթնցնել և թեպետ ծնողքը արվեստ կամ ձեռագործ մը գտնելոք հետևե էին իրենց որդվույն, ինքը ավելի իր հանճարույն և ախորժակին հետևեն կերթար, քան անոնց փութույն և ջանիցը։ Դեռ ինը տարվան էր Շիլլեր, և մեկ թատրոնական տեսարանի մը ներկա գտնվելով՝ այնպես աշխույժը վառեցավ, որ տուն դարձած-չդարձած, սկսավ զարմանալի հաջողակությամբ մը նույնպիսի քերթվածներ շարադրել։ Ծնողքն ալ թեպետ կարոտ, բայց իրենց որդվույն արագամտությունը տեսնելով՝ քաջալերական ձեռնտվությամբ անոր հանդերձյալ բառացը գլխավոր պատճառներեն մեկը եղան։

Ան ատենները Վյուրտեմբերգի Կաթոլոս դուքսը ուսանց ճե-

մարան մը բացած ըլլալով, Շիլլերն ալ հոն ուսմունքի դրաւ, որ նախ իրաւագիտութեան և ետքն ալ բժշկականութեան հետևե եղաւ։ Բայց անոնց մէջ հարատևել չկրնալը զարմանք չէր այնպիսի գործունեայ և վաւրոուն հանճարոտ տեր եղող պատանվո մը համար։ Ան ատենն էր, որ «Խռովահոյզք» կամ «Խաղաղամբոխք»[2] ըսված նոխազերգութեամբը թե իր և թե բովանդակ ընդհանուր ընկերութեան վիճակը ստորագրել ուզեց, շատերը անով ընդդեմ տերութեան և հին սովորութեանց գրգռելով։ Այն քերթվածը 1781-ին Մանհէյմ քաղաքին մէջ տպագրել տվաւ, ու հետևյալ տարին տեսարաններու մէջ սկսան ձևացնել, և ունկնդրացը վրա այնչափ մեծ ազդեցութիւն ունեցաւ, որ շատ գերմանացի երիտասարդք ընկերական կյանքե զզվիլ մը իմանալով, ելան անտառները գնացին բնակելու, առանձնական կյանքին անդորր խաղաղութիւնը վայելելու համար։ Գաղղիո հասարակապետութիւնն ալ 1792-ին այն քերթվածին համար քաղաքակցութեան պատիվը ընծայեց հեղինակին, բայց Գերմանիո տերութիւնները խստիվ արգիլեցին անոր ընթերցումը։

Շիլլեր Վյուրտեմբերգի Կարոլոս դքսին ձեռքեն ազատելու համար Շտուտգարտ քաղաքեն ելաւ և իր մեկ բարեկամին ծախքովը Մանհէյմ գնաց, հուսալով, թե հոն թատրոնական քերթվածներ գրելու հետևե ըլլալով՝ կարենա իր ապրուստը ճարել։ Բայց ընդունայն ակնկալութիւն մը եղաւ այն բանը և գրեթե կարոտ եղաւ ուրիշի ձեռք բանալով, ապրուստը մուրալու։ Վերջը վերջը աղնվական տիկնոջ մը գութը շարժելով՝ առանձին բնակարան մը տվաւ անոր, ուր միայնության մեջ մտածելու և գրելու հետևե էր Շիլլեր։ 1785-ին, Մանհէյմ քաղաքին թատերգակ քերթողներեն մեկը ընտրվեցաւ ինքն ալ, բավական մեծ թոշակով և այն քաղքին մեջ առջի անգամ ձևացնել տվաւ իր «Դավակցութիւն Ֆիեսկոյի» և «Շփոթութիւն և սեր»[3] ըսված նոխազերգութիւնները, որոնցմով մեծ անուն ստացաւ, մանավանդ վերջինին համար։ Անկե ետքը «Թալիա» անունով մատենագրական քննաբանության գիրք մը հրատարակել սկսաւ, բայց դերասանաց կարգե դուրս պահանջմունքներին չկարենալով դիմանալ Շիլլեր, Սաքսոնիո գլխավոր քաղաքին մոտերը եղած զվարճալի տեղվանքը քաշվեցաւ[4], ու հոն քանի մը քնարերգակ քերթութիւններ ու «Դոն Կարլոս» թատերգությունը շարադրեց։ 1787-ին Վայմար անցաւ, որ գերմանական հանճարոյն բարգավաճանաց կեդրոնը սեպված էր և Վայմարի դուքսը, որ Գյոթեի մեկենասն էր, Շիլլերի վրա ալ մեծ սեր ու համարում

ցուցուց և ծնա քաղաքին համալսարանին պատմության դասասաց կարգեց զինքը։ Բայց անիկա ուսումնական հետազոտությանց շատ հետևե իյնալով՝ իր առողջությունը կորսնցուց ու ծանր հիվանդությամբ մը անկողին ընկավ։ Այն մեծանուն հանճարույն կարոտությունը և կրած վիշտերը ուշ ատեն Գերմանիո իշխանազանց սիրտը արթնցուցին, ուստի չորս կողմեն հրավիրակներ և պատվասիրական ձեռնտվություններ ղրկվեցան իրեն։ Արդեն հիվանդությանց ուժը կոտրեր էր և անոնց առատամիտ քաջալերությամբը ավելի ղորացավ Շիլլեր։ Անկե ետքն է, որ սկսավ Գուլիլեմոս Հումբոլդ և Գյոթե անվանի գրագիտաց հետ բարեկամանալ և թեպետ Գյոթեի սկզբունքները իրեն ունեցածներեն տարբեր էին, բայց անով ալ մեկ մեկու անմահանալու պատճառ եղան[5]։ Շիլլեր, ինչպես վերն ալ հիշեցինք, ընկերության ներհակություն մը և մարդատյաց բնավորություն ստացեր էր, որոնց սերմունքը իր «Խռովահույզք» նոխազերգությանը մեջ սփռեր էր։ Բայց ետքը այն կարծյաց վտանգավոր ստությունը տեսնելով, անկե վերջը ջանացավ քաղաքականության արվեստը ծաղկելուն ղորավոր միջոց մը ձեռք առնուլ։ Այն աղնիվ սկզբունքը Կանտ[6] գերմանացի խորաղնին փիլիսոփային իմաստասիրական և պատմական գրվածոց ընթերցմամբը ունեցեր էր և անոնցմով ճանչցավ մարդուս բնությունը և կրքերուն ուժն ու ազդեցությունը։ Այն ղարմանալի հեղափոխությենեն ետքը գրիչը ձեռք առավ Շիլլեր և շատ օգտակար ու շահավետ գրքեր գրեց, ինչպես նաև քնարերգակ և պարերգակ քերթվածներ, Եվրիպիդեա և Վիրգիլիոսի գրվածոցը ազատ թարգմանություններ, իմաստասիրական ընտրանի գրվածներ՝ «Մարիամ Ստյուարտ», «Յովհաննա Դ՝ Արք», «Գուլիլեմոս Թել» և ուրիշ շատ անվանի նոխազերգակ քերթություններ։ Միտքը ուրիշ շատ բաներ ալ դրած էր գրելու, բայց հանկարծահաս մահը թե իրեն դիտավորությունները և թե բանասիրաց իրավացի ակնկալությունն ու բաղձանքը խափանեց, այն մեծանուն քերթողին կյանքը վերցնելով իր քառասունհինգ տարվան հասակին մեջ, համի 1805 թ. մայիսի 9-ին։ Ինքն իսկ Գյոթե անմխիթար ողբաց իր աղնիվ բարեկամը և հայրենյաց ու բոլոր աշխարհի պարծանքը։

Քանի մը խոսք ալ Շիլլերի թատերգակ քերթությանցը վրա ըսենք։ Անոնց ամենուն մեջ ալ բարոյական և կրթական ընտիր իմաստներ լեցուն են, անոր համար ալ է, որ աշխարհաքաղաքացի ըսված սակավավոր մարդիկներեն կրնա սեպվիլ, և իրեն գրքերը

ամեն կրթյալ ազգաց մեջ փառք ու մեծարանք գտեր են։ Վսեմ մտածմանցը հետ ազնվական կերպ մըն ալ ունի բացատրելու և քերթողաց գրեթե շատ բանի մեջ՝ նմանողության միակ գաղափարը կրնա սեպվիլ։ Ինքը արվեստը արվեստին ծառայեցնելու տեղ, որ հետևակ բանասիրաց սովորական ու անխորշելի թերությունն է, հանճարույն հնաղանդ ու անոր զուգընթաց ծառա մը ըրավ արվեստը և անով անմահացավ։ Մարդուս ինչպես ըլլալը նկարագրելու տեղ, մարդս ինչպես արժան է որ ըլլար՝ այն բանը լավ կերպով նկարեց։ Հիմակվան եվրոպացի ազգաց թատրոնական քերթությանցը ճաշակը առնող ազգայինք հարկավ իմացած պիտի ըլլան, թե ինչ գլխավոր հիման վրա հաստատված՝ և գրեթե անով միայն կդառնան։ Շիլլեր այս բանիս մեջ ալ շատերուն օրինակ կրնա ըլլալ և հորդորիչ, որ մարդս իր աստվածադիր բարձրութենեն վար չխոնարհեցնեն, ու անարժան կրից բոլորովին ծառա չցուցնեն, վասնզի իր դյուցազունքը առաքինության սիրողք են և հետևողք, մարդկության և աշխարհի օգուտը կմտածեն։ Մեկ խոսքով, քաղաքական կրթության նպաստավոր մեծ քերթող մը եղավ Շիլլեր։

Վերջի տարիներս Լեհաստանցի հայկազուն երևելի բանասեղծ մը Մինասյան անունով, Շիլլերի ամեն գործքերը գերմաներենե լեհերենի փոխեր է դեղեցիկ թարգմանությամբ[7]։

Մենք ալ ազգայնոց Շիլլերի հանճարույն ճաշակ մը տալու համար իրեն գեղեցիկ քնարերգակ բանաստեղծություններեն մեկը կդնենք գալ ամսուն թերթին մեջ՝ գերմանացի բնագրեն հայերեն թարգմանած[8]։

ՀՐԱՀԱՆԳ, ԶԲՈՍԱՆՔ ԵՎ ՍՓՈՓԱՆՔ ՀԱՍԱՐԱԿԱՑ

Անցյալ գարնան մեջ էր, օր մը, զզված Բաբելոնի նման քաղքե մը, աղգասիրության և ազգատեցության, լուսո և խավարի աղմուկներեն, կանգնման և կործանման անորոշ ջանքերեն ձանձրացած և տեսակ-տեսակ փորձերուն անհաջողութենեն տրտմած՝ ելա սկսա դեպի ծովեզերք երթալ, դարիվեր տեղ մը, մաքուր և հանդարտ օդ ծծելու[1]։ Բայց թեպետ աչվներիս առաջ, միտքս դեռ հետև կնայեր. դեռ թողած քաղքիս հիշատակներովն լցված էի։ Ինչպես հոտավոր տեղ մը կեցողը՝ չուզելով ալ դեռ իր հետը կտանի տեղվույն հոտը, այնպես ես ալ, տեղվույն կրքերը։ Եվ ինչպե՞ս

կարելի էր ասանկ չըլլալ, երբոր այն կրքերն արդեն իմ սրտիս մեջն ալ տեղիք ունեին։ Բայց այս ալ ստույգ է, որ քանի որ առաջ կերթայի, մտածմունքս կսկսեր անօսրանալ, սիրտս թեթևնալ և բաց օդուն ներգործությունը իմանալ, ինչվան որ հասա ծովահայաց բարձրավանդակին վրա և լայն ծառի մը տակ փռվեցա։ Պահ մը ծովը, պահ մը ցամաքը դիտելով, թմրություն մը առավ զիս։ Եվ երբոր նորեն արթնցա, արևը տասը կանգուն շարժած տեսա։

Գլխուս ջղերն ուժովցած, բայց հին ունակությամբ պաշարված՝ դարձյալ սկսա հին խնդրոց վրա մտածել և ինքնիրենս խոսիլ և հառաչել։ «Ես ազգասիրությամբ և ուսումնասիրությամբ վառված եմ,— կըսեի,— աստուծո փառք՝ նաև համեստ կյանք մը անցուցած։ Բայց ինչ ջանք որ ըրի ազգիս կամ իմ օգտիս համար, գրեթե պարապն ելան։ Չկրցա գտնել անանկ հրահանգ մը (ուսմունք մը), որ հասարակաց օգտակար և դյուրին ըլլա։ Աշխատելեն ձանձրացած՝ սկսա զբոսանք մը (զվարճություն մը) փնտրել և չգտա հանգիստ և օգտակար բան մը։ Սիրտս դեռ պարապ է, կիմանամ, որ ասիկա սփոփանք մը (մխիթարություն մը) կուզե, և այս շփոթած ժամանակիս և տեղվույս մեջ չեմ կարող գտնելու, մանավանդ որ զուրիշներն ալ ինձի պես կարոտ կտեսնեմ։ Կարելի՞ բան է արդյոք գտնել անանկ հրահանգ մը, անանկ զբոսանք մը, անանկ սփոփանք մը, որ ժամանակիս պարագայից մեջ դեղ մը, դարման մը ըլլա սրտիս և նմանյացս»։

Այսպես ըսելով, երբոր գլուխս անդին դարձուցի, տեսա, որ իմ նստած ծառես հինգ քայլ հեռու, ուրիշ ծառի մը տակ մեկ ծերունի մը նստեր է, զոր առաջ տեսած չէի։ Եվ որովհետև աչվնիս իրարու հանդիպեցան, պետք եղավ, որ բարև տամ, ան ալ ժպտելով մը բարևս առավ։ Երեսը նայեցա՝ զվարթ կուսմիր երես մը, լայն ճակատ՝ ճերմակ մազերով շրջանակած, աչվներն վառվռուն, կայտառ և հանդարտ։ Կարծես թե մեր քաղաքին մարդկանցմե չէ, բայց ճակտին վրա քանի մը խոր գծեր կար, ուսկից կերևար, որ ժամանակն անցնելու ատենը քանի մը փորձանաց հունտեր ալ ձգեր է այն երկայն ակոսներուն մեջ, թեպետև հանդարտությունը հիմա կծածկեր զանոնք։ Իր բարևն ու ժպիտը և ասանկ պատկառելի կերպարանք մը՝ զիս քաշեցին քովը տարին։ Հարցուցի իմացա, որ ինքն իմ գալես առաջ ալ հոն է եղեր, բայց ես իմ մտածմանցս մեջ բռնված՝ զինքը չեմ տեսած և ինքնիրենս խոսած ատենս քանի մը բան լսեր է ծերը, և անոր համար կժպտեր։ Իսկ ես

ասկե համարձակություն առած՝ շիտկե շիտակ բացի մտածմունքս և պատմեցի, և խնդրեցի, որ ինքն եթե իր երկայն կենաց փորձառությամբն գիտե դարման մը իմ պիտոյիցս՝ չպլանա ինձմե։

Ծերը մտադրությամբ խոսքերս լսելեն ետև «Դու քեզի և ազգիդ համար օգտակար և ամենուն ալ դյուրահաս հրահանգ, զբոսանք և սփոփանք կփնտրես,— ըսավ,— ես ալ երբեմն նույնպես փնտրելով՝ ահա գտեր եմ դայս»...

Այս ըսելով, ձեռքը վեր վար և շորս դի պտտցուց և լռեց պահ մը. միայն երբեմն-երբեմն ասդիս անդին կնայեր։ Ես ալ զարմացած, պաղած լռեցի, և չէի համարձակեր այս ըրածին մեկնությունը հարցնել, ինչվան, որ ինքն ծերն լռությունը լուծելով, հարցուց թե՝ «Ինչպե՞ս կգտնես այս հրահանգս, այս զբոսանքս, այս սփոփանքս»։

— Թողություն ըրե,— ըսի,— ես հոս բան չեմ տեսներ, չեմ իմանար։

— Ինչպե՞ս,— ըսավ ծերը տաք կերպով մը,— դու բան չե՞ս տեսներ, բան չե՞ս իմանար, չե՞ս տեսներ այս ընդարձակ և ամենապատում բնության գիրքը, որ ամեն ուսմանց և կրթությանց սկիզբն է, և ամենուն համար ալ բաց և դյուրին կարդալի է։ Չե՞ս տեսներ այս մեծ զբոսարանը, ուր ամեն տեսակ դիտելու և զվարճանալու բան կա։ Չե՞ս իմանար այս մեծ սփոփարանը, ուր ամեն սրտացավի դեղ կա։

Այս խոսքերս անանկ ազդողությամբ մը զրուցեց ծերն, որ մեծ հույս մը առի փնտրածս գտնելու.

— Այո՛, ստույգ այդպես պիտի ըլլա,— ըսի,— բայց ես դեռ անվարժ եմ, չեմ գիտեր ինչպես կարելի է իմ փնտրածներս գտնել այդ բնութենեն, որ զմեզ կպատե միշտ։ Կաղաչեմ սովրեցրու՝ ի՞նչ է այս բնության զորությունը, ի՞նչ չափ է և ինչպե՞ս պետք է օգտվիլ։

Այն ատեն ծերունին շտկվեցավ, ավելի ծանր և վայելուչ կերպ մը առնելով, սկսավ անանկ տիրական և ախորժ ձայնով մը ըսել, որ ավելի սրտով, քան թե ականջով կլսեի։

— Բնությունն է ինչ որ կտեսնես, և ինչ որ տեսածեդ կզգաս։ Դու ալ, բնությունն ալ ստեղծված եք արարչեն, որ ձեր մեջ զարմանալի կապ մը դրեր է։ Այս ահեղ ընդարձակ բնությունն, որ տեսած և չտեսած տիեզերքդ կբովանդակե, կետ մ՝ է ստեղծողին առջև, մարդս ալ կետ մ՝ է բնության մեջ, բայց

բնության տիրող կետն է. «Կացուցեր զմարդ ի վերա ամենայն ձեռակերտաց քոց. զամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա», վկայեց աստվածատես և խոր բնագնին մարգարեն Դավիթ։ Բնության տեր է մարդս, բայց ոչ բռնավոր։ Մեկ մասին իշխանաբար կհրամայե՝ իրեն պիտոյիցը ծառայեցնելու, մեկալ մասին մտոք կիշխե, անոնց օրենքները քննելով կամ վրանին զվարճանալով։ Երկրիս վրա բուսած թուփը ککտրե, կվառե իրեն տաքության և լուսո տեղ, երկնքի երեսի անհաս աստղը նշան կդնե իր ճամբորդությանցը և հեռացած տանը վրա, որուն ներքև իր կարոտ ընտանիքն իրեն կսպասեն, և պատուհանեն նույն տաք աստղը կդիտեն հաղարավոր մղոններով հեռու։ Բնությունը մարդուս ամեն կարոտությունը լեցնելու համար է, բայց որովհետև մարդս ինքն իր բնության մեջ դժգոհություն իմացավ կամ հնարեց, իրեն համար բնության օրենքներն ալ այլայլեցան։ Կիրք և տգիտություն այնպես ապականեցին մարդուն բնությունը, որ արտաքին բնության ուժը՝ զվարճությունը, օգուտները, սկսան տկար կերպով ազդել իրեն։ Այնչափ, որ հիմա շատ հեղ դասոնք իմանալու համար կստիպվիմք մտաց բաղադրյալ ջանից դիմել և անոր անհաստատ կամ խակ դույներովը խառնել և երբեմն խառնակել պաղ և դեղեցիկ բնությունը։ Բայց ի՞նչ շահ. այնչափ շատ են այս կրից և տգիտության հիվանդներն, որ գրեթե առանց այսպիսի հնարքի մը չեն կարող բնությունը ճանչնալ, օգտվիլ և զվարճանալ։ Ուրեմն այսպիսյաց համար պետք է քիչ մը բանաստեղծության ուժը խառնել ի ծանոթություն բնության, բայց չափով և զգուշությամբ, վասն զի ատիկա չէ դեղը, հապա դեղի հետ խառնած անուշ նյութը, որով տկարք և տղայք կհոժարին դեղը խմելու։ Հիմակվան բուն դեղն է գիտությունն։

Բնությունն առերևույթ բան մը չէ, հապա իսկ է, խոր է, այս իսկության, այս խորության մեջ թափանցողը գիտությունն է։ Բանաստեղծությունը միայն արտաքին քողը կվերցնե, բայց երբոր մեկտեղ միանան ասոնք, բնությունն իմանալի և զվարճալի կըլլա։ Ասոր համար իմաստուն մարդը իր սենեկին մեջ ալ կրնա բնության վրա մտածել և զվարճանալ, իսկ տխմարն ինչվան որ աչքն առնող երևույթ մը չտեսնե, չի կրնար զվարճանալ, շուտով ալ կկորսնցնե զվարճությունը։

Բայց բնությունը տիրապես ճանչնալու և վայելելու համար բավական չէ անոր ըստ ինքյան ինչ ըլլալը գիտնալն, հապա ճան-

չընալու է անոր մեզի հետ ունեցած առնչությունները կամ կապերն ալ։ Երբոր միտքը այսպես ետևե կըլլա բնության, իրեն ուղած հրահանգն և զբոսանքը կգտնե, որով և կզորանա և կսկսի իր արարչադիր տերությունը ձեռք բերել բնության վրա, բնության տարածությունը յուր մեջ բովանդակել և անով բնության տերն ալ բազմեցնել սրտին մեջ։ Այն ատեն տարակույս չկա՝ որ ոչ միայն զբոսանք, և հրահանգ, այլև սփոփանք կգտնե ի բնության և ամեն կարոտը հոն կառնու։

Իմաստնոց մեջ ամենեն երևելիներեն մեկն և ամենեն ճարտարախոսն՝ Կիկերոն աղեկ հասկնալով կսեր. «Չկա ուսմանց մեջ զվարճալի մաս մը, քան զայն, որ մեզի զննել կուտա բնության ընդարձակությունը և անով մեծոգիություն մը սովրեցնելով՝ մրտքերնիս մթութենե դուրս կհանե»[2]։ Այս մեծ մարդս իր ըսածին փորձն ալ ստուգապես ցըցուց։ Իր մեծ հանճարովը, ճարտասան լեզվովն և փառասեր ոգվովն անհուն հարստություն դիզեր էր, անոնցով Իտալիո ամեն գեղեցիկ կողմերը ագարակներ գներ էր, ուր կերթար զվարճանալու և մտածելու։ Եվ երբոր դարձյալ կամ հարկը կամ փառքը զինքը ձգեր Հռովմա ատյանները, նաև հոն զամենքը իր լեզվին գերի ըրած ատենն ալ, «Ա՜հ, ե՞րբ պիտի ըլլա,— կհառաչեր,— որ Իտալիո աչուկներն, իմ սիրուն գյուղիկներս տեսնեմ»։ Cur ocellos Italiae, villulas meas non video?։ Այս հառաչանքներեն ետև հազար ինն հարյուր տարի անցեր են, և այսօրվան օրս ճամբորդ չկա, որ Հռոմ երթա ու այց չելլա Կիկերոնի ամենեն անվանի ագարակին, Տուսկուլոնի, որ հիմա Ֆրասկատի ավանին սահմանն է։ Հոն ճարտարության կանգնած զբոսարանքն հողու հավասար են, հողեն ալ ցած անցեր են, քանի մը սյանց և քարանց կտոր կա դուրս թողած։ Ես ալ անցած եմ այն տեղեն։ Կիկերոնի անունն ալ չէր մնացած իր զվարճարանին նշխարացը վրա։ Բայց դեռ տեղվույն մաքուր օդը, կապույտ երկինքը, կանաչ երկիրը, առույգ զվարթությունը և Կիկերոնի հասակակից ծաղկըներուն թոռներն, հառաչել կուտան անանկ տեղվանքե բաժնվողին։

Չէ երևցած բարձր միտք մը, խոր սիրտ մը, որ այս բնության անզգա ըլլա, և շատ երևելի մարդիկ, թե որ ընդհանուր բնության վրա չէ՝ գոնե անոր առարկայից ոմանց վրա մասնավոր զմայլմունք մը, սեր մը, մտածմունք մը ձգեր են, և ոմանք ինչվան մոլության տարրեր են այն զգացմունքը։ Գրեթե ամեն փիլիսոփայից դրությանց սկիզբը բնության վարկածներն են, ամեն բանաս-

տեղից առած և տված ոգին բնութենեն է, ամենեն ախորժելի գրքեր՝ բնության նկարագիրներն են։ Անոր համար չէ՞, որ այնպես ստեպ և զվարճությամբ կկարդացվին Ռոպենսոններ, Պող և Վիրգինիաներ, Եղիսաբեթներ, Ադալաներ և այլն[3]։ Մարդկային կենաց դիպվածք և փորձանք՝ բնության պես-պես տեսարանաց հետ խառնված, մեր կորուսած և հիմիկու վիճակը իրարու հետ խառնելով մը, զմեզ կհափշտակեն։ Անոնց մեջ հիշված կենաց դեպքերն թե որ չորս պատերու մեջ հանդիպեին, չէին կարդացվեր, նոր և սրտառուչ դիպվածներ չէին ըլլար և այն գրքերը չէին ալ կրնար գրվիլ։ Որով ըսել է, թե բնությունն է, որ մարդուս կենաց դեպքերն ալ կսփոփե, կբարեխառնի, և իրմե վեր ուժե մը եկած փորձանքներն ալ՝ իր անուշ տխրության զարդերովը պատած, մեզի սրտառուչ կընե։ Չէ թե միայն բարձր և կիրթ միտք կզգան և կզվարճանան ասոնցմով, հապա նաև անկիրթք և տգետք։ Ըսել է, որ բնությունն ասոնց վրա ալ կազդե ուժով. բնությունն ամենուն համար ալ դյուրին գիտություն մ՝ է. բնությունը ամենեն առջի կըրթող և հրահանգողն է, ամեն գիտությանց այբուբենն է, ամեն դրժվարությանց դյուրացնողն է։ Ո՞վ կա, որ արևուն ելլալու և մտելու ատեն նայի պարզ երկնքի մը վրա և չզվարճանա։ Ո՞վ մեկ վազուկ ջրո մը մոտ, քարի եղերք նստած, լուռ ախորժանոք երկայն ատեն չնայի։ Ո՞վ հանկարծ ծովուն կապույտ ընդարձակությունը տեսնա և սիրտը անոր ալիքներուն հետ չելլա լիշնա։ Ո՞վ գարնանային նորաբույս նորածաղիկ դաշտի մը մեջ հանդարտ և հին վայելք մը չզգա...

Երջանի՜կ զգացումն և ախորժանք և պատճառ խաղաղության և բարյաց մարդկան։ Թե որ հանկարծ այսպիսի ազդեցություն մը վերնար երկրես, մարդիկ ոչ միայն բարբարոս, հապա մեկմեկ գազան պիտի դառնային։ Այո՜, անասուն պիտի դառնային, որովհետև զաստված ճանչնալու մեծ ջահն պիտի խավարեր աշխարհքես, որ է ինքն բնություն։ Վասն զի ինչպես իմաստուն առաքյալը կվկայե, աստուծո էությունը և զորություններն ի սկզբանե մարդկան՝ այս զգալի արարածներովս կճանչցվին և կվկայվին։ Եվ թեպետ «յանցեալ ազգսն,— նույն ինքն կըսե,— թոյլ ետ աստուած ամենայն հեթանոսաց գնալ ի ճանապարհս իւրեանց, սակայն ոչ եթէ առանց վկայութեան զինքն եթող»։ Եվ ի՞նչ են այս վկայությունները. «Բարերարութեամբն տալ յերկնից ձեզ անձրեւս և ժամանակս պտղաբերս», այսինքն՝ է բնության բերքեր, զորոնք ոչ

միայն նյութական վայելք պատրաստեց հաստիչն, հապա նաև գինքն իմացնելու գործիք. որով իմացմամբ մարդիկ իրենց սկիզբն ալ, իրենց վախճանն ալ կիմանան։ Այս արարածներն էին, որ ամենեն աստվածապաշտ և բարերար մարդիկը կազմեցին. ինչպես են Ենովս մը, Աբրահամ մը, Հոր մը, Դավիթ մը և այլն։ Այս ետքի երկուքին գրքերն ինչվան այսօր դիմացնիս է և անդադար կկարդացվին և կտեսնենք, թե ինչպես բնության առարկայք կպտրտցրեն կհանեն մարդուս միտքը հասարակաց ստեղծողին և երկրես վեր զվարճություններ զգալ կու տան սրտի։ «Երկինք պատմեն զփառս աստուծոյ և զարարածս ձեռաց նորա պատմէ ի հաստատութիւն» կկանչե պարզ և արդար հովվյակ մը, և նայելով, նայելով չկշտանար, դարձյալ կըսե. «Տեսից զերկինս զգործս մատանց քոց, զլուսին և զաստեղս, զորս դու հաստատեցեր»։ Եվ իր հովվության անզբաղ ժամերուն մեջ անդադար դիտելով զբնությունն և մըտածելով անոր վրա, այնչափ միտքը կբարձրացնե, սիրտը կազնվացնե, որ աստվածատես և աստծո սիրելի մարդը կըլլա և կվկայվի աստուծմե ալ և անանկ հիշատակ մը կթողու երկրիս վրա, անանկ երգարան մը՝ սաղմոսը, որ երեք հազար տարիե ի վեր, մարդկանց՝ աստուծո հետ զրուցատրության ամենեն սիրուն և հզոր ճամբան և միջոցն եղած է և պիտի ըլլա միշտ։

«Ոչ ոք բնության առանձնության մեջեն՝ անաստված կդառնա» ըսավ Շատոբրիան։ Սպանիացի հեղինակ մ՝ ալ կըսե. «Միայնություն, զվարճալի տեսարանք և պայծառ օդ՝ զանբեղմնավոր միտքն ալ գեղեցկախոս հեղինակ կընեն»։ Բնության անխոս վարդապետությունն է, որ ամեն ազգաց մեջ արդարասեր միտքեր կըրթեր և իմաստնացուցեր է, և անոնց ձեռքով իրենց ազգերն ալ կըրթեր է. անոնք ինչ որ բնության վրա դիտած են, զայն նկարագրելով իրենց տխմար ընկերներուն՝ հաջողեր են քաղաքականության և կրթության բերելու զանոնք։ Այսպես եղած են հունաց մեջ Ամփիոնք, Եղովպոսք, հնդկաց և արաբացվոց մեջ՝ Լոքմանք և Պիտբայիք, հայոց մեջ՝ Մեսրոպք և Գոշք, որոնք իրենց ազգին կրթության հարմարագույն վարժարան և վարժելիք՝ բնության բացավայր տաճարը սեպած են։ Մեր ազգին ամենեն հին իմաստասեր և ճարտարաբան և սրբազան անձը՝ Հայկազնն Անուշավան, որ Աբրահամ նահապետին ժամանակակից է, բացօթյա տեղ, լայնատերև հողմաշարժ սոսիներու ներքև առավ իր կրթությունը և նվիրակությունը, անոր համար Սոս ալ անվանեցավ։ Եվ մեր լուսավոր դպրու-

Թյանց առաջին վարդապետն՝ Մեսրովբ, իր զարմանալի աշակերտներն Աթենք, Աղեքսանդրիա և Բյուզանդիոն խավրելեն առաջ, բնության բացավայր վարժարանին մեջ նախակրթեց, մտքերնին պարզեց, զորացուց և պես-պես գիտության և դպրության հարմար ամաններ ըրավ. «Մեսրովպայ կացեալ յանապատ և ի հովանաւոր տեղիսն, որ Շատգոմքն անվանին, բովանդակեաց զվարդապետութիւնս առաջին առելոց խմբիցն... թողեալ վերակացուս յիւրոց աշակերտաց ի նմին տեղւոջ»։ Այսպես, երբոր ուտիացվոց ու աղվանից երկիրն ալ գնաց՝ անոնց ալ վարդապետ ըլլալու, հոն ալ իր աշակերտներովն «Բնակէին ի ճախճախուտ և ի լօռաբոյս մայրիսն». նույնպես երբ նույն աշակերտներն դարձան ի Երուսաղեմ, դարձյալ «Ի մայրոլորտ յովտի պուրակին (Զրաղու) բնակէին» և Արցախու «Անտառաւէտ և խորախոխոմ» տեղվանքը[4]։ Այսպես մեր իսկ թարգմանիչք ալ երբոր դարձան ի Հայս ի հունաց, իրենց վարդապետարան ընտրեցին այնպիսի միայնության և բնության աղատ տեղվանքը, ինչպես ինչվան հիմա կվկայեն Հայաստանի մեջ թարգմանչաձոր ըսված տեղվանք։ Եվ ինքնին վարդապետաց վարդապետն Մեսրովբ հայերեն այբուբենը չկրցավ սովրիլ քաղքներու և լսարաններու մեջ, հապա բաց տեղ լերան մը գլուխ. «Ի լեառն Բալուայ ի յերկնապարզ և յաշխարհաստեղծ աջոյն գրեցաւ մեզ դպրութիւն ուսման»։ Հավատարիմ և զգոն վարդապետ, ինչպիսի տեղ որ ինքն սորվեցավ, այնպիսի տեղ իր աշակերտներուն ալ սովրեցուց և այն անապատ ու հովանավոր տեղվանքն չէ թե վարժապետի մը պես, կըսե իր ձեռնասուն ու արենակից աշակերտը Մովսես, հապա առաքելաբար իբրև հոգի կփչեր իր գիտությունը։

Այսպիսի տեղվանք կսիրե, կամ սիրել կցուցնե նույն ինքն աստվածային հոգին իմաստության, որ բնությունը դեռ նոր ձևանալուն պես՝ վաղեց իր հավիտենական աթոռեն և անկերպարան անդունդներուն վրա թևերը տարածած անդադար կերթար և կուգար, ինչվան, որ ձևացուց կազմեց այս տիեզերքս և նույն բնության առանձնության մեջ կրթեց իր ընտրյալ նահապետներն ու մարգարեները։ Եվ երբոր իր սիրելի Դավիթ աշակերտը հարկ սեպեց խորանալացվոց օէգտին համար, անոնց թագավորական պալատը բնակեցնել, դարձյալ իրեն հետ բնության մեջ կսիրեր խոսիլ «Ի լսել քո զձայն շարժման ծայրից տանձեացն՝ ելցէ աստուած առաջի քո»։ Այսպես իր զարմանալի խորհուրդները հայտնեց Աբրահամու՝ գիշերվան աստղերուն մեջեն, Հովքա՝ Արարիո լայն

անապատներուն մեջ, Մովսիսի՝ լերանց, թփերու և արոտներու մեջ, Եղիայի՝ Քորեբ լերան հողմախաղաց քարայրներուն մեջ, Ամովսա՝ թթենիներու տակ, Երեմիայի, Եզեկիելի և այլոց՝ Եփրատ և Քովբար գետերուն եզերքը և այլն, և այլն։

Եվ ամենեն զարմանալի և անհակառակ ճշմարտություն՝ երբոր ինքնին նորոգողն մեր բնության, մարդկորեն վարդապետ մ՝ ալ ձևացավ, ո՞ւր ընտրեց իր վարդապետարանը, ուսկի՞ց էին իր օրինակները։ Բարեկամ, դու ավետարանը կկարդա՞ս։ Բա՛ց անոր առաջին գրողը, Մատթեի ավետարանը և տես քու ստեղծիչդ և վարդապետդ, որ քեզի նմաններուն դաս տալու՝ շատ հեղ լերանց գլուխ կելլա, երբեմն ծովեզերք կնստի, երբեմն անապատ տեղեր կքաշվի և բերած օրինակներին մեծ մասը բնության տեսարաններեն են։ Միայն այդ հիշյալ պզտի գրքին մեջ թերևս հարյուրին ավելի ատանկ օրինակներ կան՝ արեգական և աստեղաց, արևելքի և արևմտից, անձրևու, հովերու, փայլակներու, դաշտերու, այգիներու, թզենիներու, թթենիներու, հոտից և հովվաց, արծվյաց և աղավնյաց, ձկանց և օձից, ագռավուց և ճնճղկանց, հողմաշարժ եղեգան և հունձերու, վայրենի շուշանին և մանանեխի հատի, անվարթ թռչուններու, որջավոր աղվեսներու, թխսամայր հավերու և այլն։ Այսպիսի սրբազան և պատկառելի օրինակ մը ունենալով՝ մի՛ տարակուսիր, որ բարուց կրթության և մտաց սրության մեծ և դյուրին միջոց է բնությունը և վարդապետության մեջ՝ բնական ոճով գրվածքները։

Նայե՛ սա տղուն դաշտին մեջ։ Քանի՞ հեղ տան մեջ իր դայեկին կսրդողեր, կուլար. հիմա հոս խոտերուն մեջ ինչպե՞ս կուրախանա, կցատկոտե, գոհ, հանդարտ և երջանիկ է։ Ի՞նչ զորավոր է բնության մայրենի ուժն, որ ասանկ մանր և տգետ մարդու մը սրտին ալ կազդե։ Հապա այդ մանուկը, որ ձանձրությամբ և նեղությամբ վարպետի չոր-չոր դասերն լսելով՝ շատ հեղ փախուստ կփնտրե և կդժվարի իր հասակին դալարը ցամաք ուսմանց մատնել՝ թե որ Մեսրովպա նման խոհեմ վարժապետը հանե ղինքն ալ հովանավոր բացավայր մը և հոն դաս ըսե, ի՞նչպես դյուրավ կը տպավորին այն բնաբարբ մտաց վրա որեէ չորս պատի մեջ դժար երևցած դասերը, հոն չորս ժամու մեջ սորվիլ չկրցածը հոս այնչափ ատենի մեջ կսորվի, որուն երկինն ալ անմեղ խաղով կրնա անցնել։ Իսկ այս կատանիդ, որ ա՛լ խաղալեն, ցատկելեն համ չառնուր, բայց դեռ կախորժի թափառիլ դաշտերու մեջ, բլուրներու

վրա ելլալ, տեղյաց դժվարությանց հետ կռվիլ, նեղուցներու և ափափաներու մեջեն անցնիլ, երբեմն ալ ունեցածեն ավելի հասակ ունողի պես, ծանր կբալե, նորարծած կրից անորոշ ձայնեբուն միտք դնելով։ Ո՞ւր արդյոք այնպես ախորժելով և օգտակար կերպով կրնա լսել զգոն բարոյախոսին խրատները, քան թե այն բնության ճեմարաններուն մեջ, ուր զանազան տեսարանք և առարկայք՝ ինքնին կթելադրեն վարպետին ալ, աշակերտին ալ...։ Բայց մի՛ կարծեր, թե այս խոսքերս տղաքը դպրոցներեն դուրս վազել տալու և վարպետներն ալ հուսահատեցնելու համար է, հապա՝ գիտնան վարժապետք և ազգային կրթության հողացողք, որ այսպիսի դաստիարակության փույթ ունենալ և ըստ կարելվույն ստեպ հանել համբակները բաց օդու և երանի՜ թե կարենային նաև անանկ տեղվանք հաստատել իրենց վարժարանները։ Այսպիսի կրթությամբ նախ՝ մանկանց մարմինը առողջագույն կելլա. «Առողջ հոգվո համար ալ՝ առողջ մարմին պետք է». կրքերնին հանդարտ կելլա. քաղաքական դիպաց և հրապուրանաց և պատերու ազդած ձանձրությունեներեն ազատ կմնան. արտաքին անմեղ և զվարճալի տեսարանք և զբոսանք՝ չեն թողուր օտար և դառն-դառն զբոսանքներ փնտրելու։ Մեկ խոսքով, տղոց բարքը ավելի անմեղ, միտքերնին տվելի ընդարձակ, կազմվածքնին ավելի ուժով և ապագա ուսմանց և արվեստից ավելի ընդունակ կելլան, նաև հարմարագույն և կարողագույն փորձանաց ալ տանելու։ Չէ միայն աշակերտաց, այլև վարժապետաց իսկ՝ ի՜նչ ավելի ախորժելի է, քան թե երբեմն իրենց ձանձրալի աշխատանքներեն ետև ժամ մը բնության մեջ հանգչելու։ Արվեստավորի և մշակի մը ալ, բոլոր օրվան հոգնութենեն ետև, անուշ չէ՞ բաց տեղ մը նստիլ և քրտինքը սրբել։ Նաև իմաստնոց ամենեն անուշ զբոսանքը բնության արձակ տեղյաց մեջ պտըտիլն է։ Այն առանձին պտտիլներուն պտուղներն են շատ օգտակար գյուտեր, որ մեզի այսօր այսչափ դյուրություններ կու տան. այն բնության մեջ մտածմանց և շրջագայությանց ատեն շատ գեղեցիկ իմաստասիրական և բանաստեղծական գրքեր, որ զմեզ կը զվարճացնեն. այն ժամերուն արդասիք են շատ պիտանի խորհուրդներ, որով ազգք և տերություններ երջանկացեր են։

Արդյոք ո՞րչափ չարիք և կիրք պակաս պիտի ելլային աշխարհքես, թե որ մեկը ստիպեր թիվ մը քաղքիս մեջ ապականության վարժած կամ հակամետ մարդիկ օրը քանի մը ժամ բնության տեսարանաց մեջ պտըտիլ և վարժապետ մը ալ՝ թանձրամբ-

տաց բացատրեր տեսած բաներնուն իսկությունը։ Կամ՝ որչա՞փ ավելի չարիք և բռնություն պիտի ըլլային, թե որ այս գեղեցիկ բնությունս իր աներևույթ և կակուղ սանձը չդներ այն անգութ սրտերուն վրա։ Ո՞ր արյունարբու բռնավոր՝ բնության գեղեցիկ և ահավոր տեսարանաց առջև երբեմն կանգ չէ առած, կամ սիրտը թուլնալով կամ վախնալով, կամ միտքը բարոյական սկզբունք մը բերելով։ Երբոր կրքերն այնպես թանձրանան, որ խրատի ձայն չհասնի սրտին կամ շողոքորթություն և վախ կապեն ուրիշներուն բերանը, միայն բնությունն է, որ իր անուշ ձայնը կլսեցնե ամենայն դառն ականջաց և սրտից ալ։

Կտեսնե՞ս սա ահեղ ընդարձակ ծովը, կտեսնե՞ս այդ գոռոզ, ուռած ալիքներն, ինչպե՞ս ուժով իրար քշելով կուգան դեպի ցամաք։ Այս տկար ավազը ի՞նչ պիտի ըլլա այն օվկիանու բարբարոս գունդերուն դեմ. պիտի հաղթե անոնց։ Մարդս գիծ մ՝ ալ ետք չկրնար քշել այդ ալիքները, բայց ավազը միշտ կմերժե զանոնք, գրեթե ողջ-ողջ ծծելով մը։ Բարձրյալի մատեն գծված սահմանը կա հոն, ուսկից անդին չանցնիր ծովը... Բայց ի՞նչ է այդ մարդկանց բազմությունը ծովուն եզերքը։ Սկանդինավիո հզոր աշխարհակալ թագավորն Քանուդա հոն է։ Հետը՝ բազմություն զորաց, բազմություն ծառայից, որ հրամաններուն կսպասեն, բազմություն շողոքորթաց, որ զինքը գրեթե ամենակալ կանվանեն։ Թագավորը կախորժի ձայնեն, բայց ծովուն վրա նայելով՝ կճանչնա անոր ստությունը։ Կհրամայե, որ կանգնեն իր թաղավորական գահը ավազին եզերքը և կբազմի փառոր։ Քովինները կես մը իրավ ու կես մը սուտ վախով կ՝ ինկնան իրեն երկրպագություն ընելու, «Կեցցե՞ թագավոր մեր հավիտյան» կանչելով։ Բայց դեռ իրենց գովեստը չկտրած՝ ահա ծովուն սովորական ընթացիկները՝ ճերմակ ցցունքներ դրած սպառազիններու նման բարձրացած կուգան, և մինչդեռ թագավորին շողոքորթներն կուզեին ըսել, թե ծովն ալ իր ալիքները երկրպագության կղրկե, իսկ ինքն ալ, հպարտությամբ մը «Ե՞տք կեցիք» կկանչեր անոնց, ահա բնության անզուսպ որդիքը, այն անարգել ալիքները, մեկ զարնվածքով մը թագավորն ալ, իր գահն ալ գետին կփռեն իր երեսպաշտից վրա և իրենք ամենուն վրայեն թավալելով, կանցնին կդառնան։ Քանուդա աղի թուք մը թքնելով՝ «Հիմա տեսա՞ք,— կըսե հպատակներուն,— որ թույլ ալյաց ալ չկրցա հրամանս անցնել»։ Այս օրինակս բա-

վական կըլլա շատ զորավորաց և բռնավորաց ճանչցնելու իրենց բնության չափը և իրենցմե մեծեն պատկառելու[5]։

Հին աշխարհակալներեն շատերը, որոնք ջրի պես մարդկան արյուն կթափեին, ինչպես Շամիրամ, Նաբուգոդոնոսոր և այլք, իրենց կատաղության աղեկ դեղ և սանձ մը գտեր էին բնության բռնությանը՝ պարտեզներ և անտառներ տնկելով և հոն իրենց քանի մը ժամ անցնելովը՝ տանց և ազգաց կենաց կխնայեին։ Դիոկղետիանոս, որ անգթությամբ և մաղձով դառնացած հրեշ մը դարձեր էր և բյուրավոր քրիստոնեից արյուն թափել տվավ, բոլոր Հռովմա ինքնակալության մեջ սրտին հանգիստ մը չգտնելով, թողուց տերությունը և քաշվեցավ Դաղմատիո եղերքը Սալոն քաղաքը. հոն սկսավ պարտիզպանություն ընել և «Միայն այն ատեն,— կըսե ժամանակակից պատմիչ մը,— Դիոկղետիանոս սկսավ երջանիկ ապրիլ»։ Երանի՜ թե քիչ մը կանուխ մտածած ըլլար այս բանս։ Շատ ատեն չէ՝ Միքայել Հաու անունով անգգամ անգղիացի մը իր հայրենիքեն աքսորվեցավ Օվկիանիո կղզիներուն մեկուն մեջ։ Հոն ալ-ավազակություն ընելով՝ նորեն արդարության ձեռքն ընկավ։ Այս մարդուս քովեն ելած բաներուն մեջ գտան իր գրատետրը, որուն մեջ նշանակած էր, թե ինչ հնարքով բույսեր և հունտեր ժողովել կմտածե եղեր և պարտեզ տնկել։ Զարմացան քննողք, թե անանկ քարասիրտ անձն ալ այսպիսի մտածություն ունի եղեր...

Հապա մեր իսկ ազգին մեջ առաջին բռնավոր հափշտակող թագավորն Երվանդ, ինչո՞վ իր բռնությունը կկակղեցներ։ Այնպես ահեղ և դաժան մարդ էր, կըսեին ժամանակին բանասերքը, որ առուն քունեն նոր ելած՝ որուն վրա որ կնայեր՝ կճաթեցներ. անոր համար ծառաները դիմացը մեծ-մեծ քարեր կդնեին, որ բարկությունը անոնց վրա ինկնա և իրենք ազատին։ Դիոկղետիանոսեն ավելի խելացի ըլլալով, իր բռնության ապաստանարանը շինելեն ետև զբոսարաններ ալ շինեց՝ անտառներ և պարտեզներ տնկելով և անոնց մեջ պտտած ատենը իր բռնավոր ոգին կըհաշտեցներ։ Իսկ իրմե առաջ Հայոց վրա օրինավոր իշխող, բայց օտարաց վրա անիրավ իշխող Արտաշես Պարթև՝ ավելի խոր և զարմանալի վկայություն մը թողուցած է կըսեն, բնության ազդությանը՝ ամենեն բուռն և անգութ սրտերու վրա ալ։ Հայաստանի ընդարձակ սահմաններն իրեն հպարտ և փառասեր սրտին շատ նեղ գալով, զՊարսից ալ տիրեց, անով ալ գոհ չեղավ. արևելքի տեր

անվանվեցավ, ուզեց արևմտից ալ տիրել։ Հրաման հանեց, որ պահ մը երկրագործն Հայաստան՝ սպառազեն զինվոր ըլլա և գա իր ետևեն. հրաման տվավ, որ Միհրդատ Պոնտացին իրեն ճամբա բանա։ Եփրատ գետեն անցավ ի Փոքր Ասիա և ձեռքը տարածած ատեն տեսավ ծովը և ըսավ. «Ոչ միայն ցամաքի, այլ պետք է ծովուն ալ տիրենք»։ Հրաման տվավ ու ալիքները նավերով ծածկվեցան. վիրը տնկած ահագին վիշապի մը պես ելալ ծովը խմելու, ցամաքը կլլելու։ Երբոր զորացը քալելու հրաման կուտար, կարծես թե սև ամպ մը երկրիս երեսեն կսահեր շուտ-շուտ, ինքն ալ կայծակի պես մը սև ամպեն կփայլփլար։ Երբեմն հսկարտ միտքը կուզեր իմանալ, թե քանի՞ բյուր մարդիկ իր ձայնովը կշարժեին՝ իրենց նման բյուրավորներ գերի ընելու. համբանքի չէին դար։ Կպատվիրեր, որ ամեն զինվոր անցած տեղը քար մը ձգե և ահա զուրան դաշտը երկայնանիստ բլրոց պար մը կձևանար, որուն վրա աչքը պտտցուցած ատեն երբեմն ալ խիզեը դարնելով կիմանար, որ ինքն ալ, անոնք ալ մարդ են և քիչ տարիե ետև անոնցմե մեկն ալ ողջ պիտի չմնա, մահուն ալ ոտքը դամեն ալ պիտի կոխեն։ Այն ատեն կհառաչեր ու կըսեր. «Ավա՜ղ փառացս անցավորիս։ Արդարև ավա՜ղ, որ ուրիշ փառաց հույս չունենալով, դարձյալ սիրտը կխստանար, անհուսությունը կգրգռեր զփառասիրությունն և պոկունքները խածնելով, աչվիները կրակ դարձած, գլուխը շարժելով, ոտվները զարնելով և ձեռքով սպառնալով «Հառա՜ջ» կըկանչեր զորացը։ Եվ ինչպես ժամանակակից պատմիչք մեծաբանելով կըսեն՝ «Ծովուն վրա ցամաքի պես կքալեր նավով ծածկած, ցամաքի վրա ծովու ճամբա կբանար. արև ատեն զորաց նետաձգությամբը ստվեր և գիշեր կբերեր. գետերուն բարձրացրած ջրերը զորքերուն խմել տալով կցամաքեցներ. իր վրանին տակեն հրաման տալով՝ պարիսպներ կփլցներ և մինակ անունը լսեցնելով քաղքներ կառնուր»։ Բայց ինչվան ե՞րբ այս հաջողությունս, ինչվան ե՞րբ այս անօգուտ աշխարհակալությունը։

Հունաստանն ալ նվաճեցավ, կարգը Հռովմա եկավ, բայց բաղդը Արտաշիսի ժամը հնչեր էր... Հայ ազգը հանիրավի օտարի արյուն թափելու համար եղած չէ։ Զզվեցավ այն անգութ փառքեն, զզվեցավ օտար հողե, հիշեց իր հայրենի հողն և ջուրն և տեսնելով, որ բռնավորի մը ձեռք ուրիշի բռնավոր ըլլալու գործիք մը եղած է, քաշեց բարկության ատեն սուրը իր թագավորին դեմ, և իջավ հարվածը Արտաշիսի սրտին, երբոր անիկա Աթենքի հրա-

շակերտ տաճարաց մեջ կպտտցներ հաղթող աչվները։ Լույսը խավարեցավ, ծածկվեցավ իր անհուն բանակը, ծածկվեցավ իր տիրած և տիրելու երկիրները, փառքը սրտին վրայեն շուքի պես անցավ։ Իսկ այն սահուն վայրկենին մեջ արդյոք սրտին ողջ մասեն ի՞նչ բանի վրա կհաներ իր վերջի հառաչանքը. միայն բնության սիրույն վրա, վասն զի իր աշխարհակալությանց մեջ երբեմն միջոց գտնելով՝ վայելել էր բնության բարիքը իր հայրենյաց մեջ։ Այս հիշատակն էր, որ իր հիշողության վերջին վայրկենին եկավ սրտին վրա և կանչեց. «Ահ, մեկ մ՝ ալ ես պիտի չտեսնե՞մ իմ հայրենյացս մեջ տանիքներուն ծուխը, ծխած ու ելած շենքերու դաշտերու վրա իջած։ Ալ պիտի չտեսնե՞մ գարնանային նավասարդին առավոտը, ալ պիտի չտեսնե՞մ եղնիկներուն ցատքտելը և եղջերուներուն վազվզելը։ Ես ալ պիտի չլսե՞մ որսորդական փողերուն ձայնը և թմբուկներուն դոփյունը»։ Եվ այս ըսելու ատեն իր շունչն ալ այն ծխաբաններուն ծուխին պես ցնդեցավ, արհամարհելով երկրիս փառքը, այլ ոչ զբոսությունն[6]։

Այս մեծ և զարմանալի օրինակը բավական ըլլա ի հաստատություն առակին, որ կըսե. «Բնութիւն կակղէ դբոնութիւն» և թե՝ բնությունը ոչ միայն զորավոր, այլև հաճո զբոսանք մ՝է, և հարուստ զբոսարան ամենայն վիճակի և ամենայն հասակի, միանգամայն և անմեղ զբոսարան մը և լի ամենայն զվարճությամբ և զմայլմամբ։ Ոսկեղեն վարդ մը կարկեհանե կոկոններով և մարգարտե ցողերով կրնան քանի մը վայրկյան զվարճացնել աչքը, բայց միշտ զվարճացուցիչ և հափշտակիչ են աչաց և մտաց դաշտին մեջի բացված պարզ ու հասարակ վարդն ալ, պատի մը ճեղքե դուրս ելած կարմիր կոկոն մը, սարի մը գլուխ սփռած ճերմակ ու դեղին ծաղկներ, բարձրեն սահած պզտիկ ջրիկ մ՝ալ, սև ագարակներ, դեղին հունձերու արտեր, կամ կանաչ գոգաձև հովիտներ, որ գրեթե ամեն տեղ կրնան տեսնվիլ, առանց փնտրելու բնության-ավելի աչք ձգող և զարմանալի դիրքերը։ Օրվան մեջ մեկ հանդարտ ժամ մը՝ բարձրահայաց բլրի մը վրա կամ վազուկ ու շարժուն ջրի մը քով անցուցած, ասկե ավելի անուշ զբոսանք կրնա՞ ըլլալ զգայուն սրտի։ Կը պատմեն Սուրբ գիրք, թե Քաղեբ ծեր զորապետն երբոր իր մեկ հատիկ դուստրը Աքսա, հարս տվավ Գոդոնիելի հարուստ օժիտներով, իր կտրիճ փեսային, որ մեծ հաղթությենե մը դարձեր էր, իր նոր հաղթանակը և մրցանակը վայելելու հարմար ուրիշ օժիտ չուզեց, բայց միայն ագարակ մը, ուր ըլլան բլուրներ

և վազուկ ջրեր։ Քաղեր ալ տվավ «ըստ սրտի նորա զբօսանս բարձանց և զբօսանս ջրոց». առանց ասոնց՝ պակաս կսեպեին իրենց վայելմունքը։

Նույն ինքն Սողոմոն, որ թերևս մարդկանց մեջ ամենեն երջանիկը կրնա ըսվիլ, թե մտքով և թե զբոսանաց հարստությամբ, իր իմաստության և զվարճությանց մեծ նշանակը ցրցուց բնության վրա իրեք հազարեն ավելի բան գրելով և բնության ու բուսոց նկարագիրներ։ Բայց ամենեն ավելի այս բնության զվարճությունը ցրցուց, երբ որ այլաբանյալ սիրո ճամբան, որ բարոյական բնության ամենեն զորավոր կիրքն է, ամենեին զվարթ ցուցընելու համար՝ լեռներու և դաշտերու մեջ գծեց. «Ահաւասիկ սա եկն վազս առեալ ի վերայ լերանց, խայտացեալ ի վերայ բլրոց»։ Եվ նույնիսկ երկնահաղորդ սիրոյն ավետիք և հրավեր՝ բնության տեսարանքը գտավ. «Ահա ձմեռն էանց, անձրեք անցին և գնացյալ մեկնեցան. ծաղիկք երևեցան յերկրի մերում. ժամանակ եհաս յատանելոյ. ձայն տատրակի լսելի եղև յերկրի մերում. թզենի արձակեաց զբողբոջ իւր. որթք մեր ծաղկեալք ետուն զհոտս իւրեանց... ելցուք յագարակս, ագցուք ի շէնս և ի պարտէզս, կանխեսցուք յայգիս»։ Մեր բնության արարիչն ալ, մեր նախածնողքն երջանիկ ստեղծելով, իրենց ամենեն ավելի հարմար և զբոսալի տեղ և գործ՝ պարտեզ մը գտավ. «Տնկեաց աստուած զդրախտն... և եդ զնոսա գործել և պահել» տեղվույն գեղեցկությունը։ Շատ գեղեցիկ և զդայուն փիլիսոփայությամբ կըսե մեր ճարտար և մեծ պատմչաց մեկը, Սյունյաց մետրոպոլիտն Ստեփաննոս, թե՝ «է բաղձալի ի կենցաղս՝ ոչ այլ ինչ, բայց միայն սեպհական ժառանգութիւն առն՝ յորում ծնեալ և մնեալ լինի և վայելել խորհիցի, որպէս զստինս մօր և զգուութ հօր, այնպես քաղցր թուեցեալ լինի ի միտս ժառանգորդին. վասն որոյ միշտ կարօտի շրջիլ տեսանել զբօսնուլ խընդամտել ի վերայ նորայ»[7]։ Եվ գրեթե գովություն մը կսեպե այս բանս Բաբիկ Սյունյաց իշխանին (Վասակ ուրացողին հորը), որ իր հայրենի ժառանգությանը տիրելով, ելեր էր անոր զուարճալի տեղերը պտտելու և որս ընելու։

Բայց ինչե՞ն է, բարեկամ, որ այս բնության զբոսանքը լսելով, դուն քու բնությանդ մեջ ուրախության հետ տրտմություն մ՚ալ կզգաս։ Ինչե՞ն է, որ երբեմն ուրախության և զբոսանաց փափագն ալ մարած կերևա սրտիդ մեջ։

...Բնությունը անդեղջ է. այսինքն է՝ իր բարիքն և զվարճությու-

ետ չզլանար։ Բայց մեր ներքին բնության խռովությունն է, որ արտաքնոյն հետ ունեցած ներդաշնակությունն իս ավրեց։ Սակայն դարձյալ մեր ավրված, շփոթված քնարը դաշնակելու համար՝ պետք է բնության լարերուն ձայնովը շտկել։ Բնությունը առաջ մարդուս համար իբրև առողջի առողջությունը միշտ պահելու օշարակ էր, հիմա իբրև հիվանդի առողջարար ըմպելիք մ՝ է, եթե զմարդս միշտ զվարթության մեջ պահողը չէ, գոնե ամենեն զորավոր և պատրաստ սփոփանքն ալ ինքն է։ Ո՜հ, բաղձալի բան է, արդարև բաղձալի մեր վերը հիշյալ պատմիչին ըսածը. «Սեպհական ժառանգութիւն առն՝ յորում ծնեալ և սնեալ լինի, և վայելել, շրջիլ, տեսանել, զբոսնուլ, խնդամտիլ». ցանկալի բան է դեռ այս երանաբուրկ կենաց մեջ Սուրբ գրոց տված օրհնությամբ մարդուս «նստիլ ընդ որթովք իւրովք». շատ անուշ բան է՝ նաև օրվան երկար և դառն աշխատանքեն վերջը ընտանյաց հետ բնության գեղեցիկ տեսարանի մը մեջ կամ դիմաց, հոգնություն առնուլ։ Սակայն ի՞նչ ընե այն թշվառն, որ չունի ոչ միայն սեպհական որթերու և թզենյաց շուք, այլև հայրենյաց հովանիքներեն զրկված է։ Ի՞նչ ընե այն, որ հարկավ կամ բռնությամբ ստիպված է պանդխտության... Թող երթա դիմե նա ալ բնության գիրկը, որ մոր պես ամենուն և ամեն տեղ բացված է։ Ոչ միայն օտարաց բռնադատությամբ, այլ շատոնք իրենց կամոքն հեռացած են ի հայրենյաց կամ անոր թշվառությանց չդիմանալով, կամ ուրիշ պատճառավ։ Տխրությամբ կհեռանան, արցունքով ճամբանին կոտոգեն, որտերնուն վրա վերք մը, բերաններուն վրա հառաչանք մը կամիայն բնությունն է, որ պանդխտության մեջ ալ զիրենք կսփոփե։ Հետին կտրճությամբ սրտի՝ կհաղթեն սէրը, իրենց հայրենյաց և ընտանյաց տեսքին, բայց առանց բնության տեսքին չեն կրնար իրենք իրենց ահեղ կտրճությանը դիմանալ։ Մեր ամենեն զորավոր և զարմանալի թագավորը Տրդատ՝ իր խոր ծերության ատեն տեսնելով ազգին ներկա և մանավանդ մոտակա թշվառությունը, խոր տրտմությամբ մը դարձուց ահեղ աչվները իր փառաց ասպարեզներեն, և վերջի օրերը լեռներու վրա, բնության մեջ կպատրաստվեր գերազույն պսակին։ Հայրենյաց օգտին պարտքը դարձյալ իջուց զինքը լեռներեն և թեպետ անկե ետև միայն երկնից կուլեր ապրել, բայց գեռ իննսուն տարվան որսի ելավ իշխաններուն հետ, որս ըլլալու այն երկրին և այն մարդկանց սիրույն, որոնց համար վաթսուն տարի աշխատեր էր սրով ու սիրով։ Իրմե

վերջը իրեն համեմատ անձ մը կհիշե Հայաստան՝ իր Կարմիր Վարդանը[8]. որ երբ իշխանակից նախարարաց հորդորանոք իր հայրենիքը ազատելու համար միաբանեցավ առ երեսս ուրացության սուրբ հավատքին, բավական չսեպելով իր հրապարակավ դարձն ու զղջումը, թողուց իր մեծ անունն ալ, իր փառքն ալ, քաշվեցավ Հայաստանի ամենեն անծանոթ կողմը և լերանց ու քարայրից մեջ սաղմոսներով և երգերով իր մեծ ու ընդարձակ սիրտը կհանգչեցներ։

Քանի՞-քանի՞ խոցված սրտեր այսպիսի միայնությանց մեջ իրենց կյանքը գտած են և միայն հոն և ոչ ուրիշ տեղ։ Քանինե՞ր իրենց հայրենյաց, ընտանյաց և սիրելյաց սերն ու կարոտն մեկ ձեռնատունկ ծառով մը, կամ պարտեզ մը հոգալով, կամ բնության տեսարանները դիտելով, առած կապրին։ Դանտե Իտալացվոց առաջին բանաստեղծն և քաջ քաղաքագետ իր ծաղկած և սիրուն Ֆիորենցիա հայրենիքեն քշված և երկար ատեն կարոտը քաշելով, երբ որ հրավերք ընդունեցավ նորեն դառնալու, բայց անանկ պայմանով որ իր հայրենյացը պատիվ չէր սեպեր, թեպետ և կհալեր Ֆիորենցիայի փափագով, բայց մերժեց, չառավ հանձն մտնել իր սիրո սահմաններն և ըսավ. «Մի՞թե ամեն տեղ ինձի համար արևը չի ծագեր. մի՞թե հոս ալ չկա ինձի բաց և պայծառ օդ մը և բնության սփոփանք»[9]։

Երջանիկ թշվառք (վասն զի չեմ գիտեր ուրիշ ինչ ըսել այսպիսյաց), որ իրենց զրկմանց և աքսորանաց մեջ ալ կրնան վայելել զբնություն, որով և սփոփանք գտնել։ Սիպերիո սառնամանիքն ալ ունին իրենց սրտաշարժ տեսարաններն, որով դեռ մարդ կապրի, կզբոսնու և կսփոփի այնչափ ցրտության մեջ ալ։ Դեռ երնեկ անոնց ալ, որ իրենց արգելարանին մեջ ալ գոնե անարգել պատուհան մը ունին, ուսկից թե որ նախանձոտ երկիրս ալ չէ՝ գոնե աննախանձ և ազատ երկինքը կտեսնեն և բնության օդային և լուսավոր տեսարանները։ Երանի՞ ան մարդուն, որ պատուհան մը ունի, ուսկից անպատ անպարիսպ բնական հորիզոն մը կտեսնե՝ թե՛ ցամաքի, թե՛ ծովու. գուցե իր թշվառության մեջ ալ զինքը թշվառացնողներեն ավելի ընդարձակ և գեղեցիկ տեսարան մը կվայլե։ Այն տեսարանը կամաց-կամաց իր կորուստներուն տույժը կվճարե և վերքերուն սպեղանիք կըլլա։ Ատենոք սպանիացի ասպետ մը ելեր վանք մը գացեր էր պտտելու, տեսնելու։ Եկավ արգելական ծերու մը սենյակ, որ գրեթե բանտ կնմաներ

և շատ բանտե ավելի անմխիթար, վասն զի պատուհանին դիմաց պատ մը բարձրացած էր, որ ամեն տեսարան կխափաներ։ Զարմացավ մնաց երիտասարդն, երբոր իմացավ, որ ծերը շատ տարի այն խուցեն դուրս ելած չէ, ուրիշ տեսարան տեսած չէ և հարցուց, թե ինչպե՞ս կրնա ապրիլ այնպես անմխիթար, առանց բան մը տեսնելու։ Այն ատեն ծերը ցցուց, որ դիմացի պատին վրա լայն ճեղք մը կար, այն ճեղքեն երկինք ափ մը կերևար և արևը ամեն օր այն ափ մը երկնքին վրայեն վայրկյան մը կանցներ։ Գիշերն ալ քանի մը աստղ կցոլացներ այն կտորին վրա և երբեմն լուսնին բարերար ճառագայթ մը (որ միշտ մենասիրաց սփոփանքն են) ինչվան այն ճեղքեն ալ կանցներ և ծերուն փակյալ խցին ալ այցելության կուգար։ Այն ափ մը երկինքն, այն դողդոջուն և դեղնած ճառագայթն էր ծերուն ոչ միայն երկրավոր սփոփանքն, հապա նաև ուժ տվողն՝ ուրիշ ամեն զրկմունք հանձն առնելու, երկնավոր զբոսանաց հույսով։ Երնե՞կ ուրեմն ափ մը աղատ երկնքի տեսքը և այցարար ճառագայթ մ՝ ալ վայլողներուն։ Ափսո՞ս անոնց միայն, որ այն ափեն և այն լուսո թրթռմունքեն ալ զրկված են և անե՞ծք մարդկային կրից և անգթության, որ իրենց նմանիքը կզրկեն բնության տեսարանքներե և կդատապարտեն ի մթություն։

Աստվածային ահեղ արդարությունն անգամ ամենեն հետին պատուհաս սահմանեց գխավարն արտաքին. բայց միայն անզեղջից պատուհաս հանդերձյալ։ Ո՞վ մարդիկ, դուք մի՛ զրկեք մեկզմեկ երկրիս վրա անոր գեղեցիկ լուսեն, որ իր առաջին և վերջին բարիքն ալ է. անոր համար ծնողը ի լույս կբանա աչվները, մեռնողն ալ կգոցե զաչվները ի լուսո։ Նմանեցե՛ք ձեր արդար և անաչառ տիրոջը և հոր՝ որ «Զարեգակն իւր ծագե ի վերա չարեաց և բարեաց և ածէ անձրև ի վերայ արդարոց եւ մեղաւորաց»։ Խնայեցե՛ք ձեր նմանին, խնայեցե՛ք ձեր սրտակցին, և մի՛ զրկեք զայն բոլորովին արտաքին բնութենեն, որ չըլլա թե իր ներքին բնության օրենքն՝ իր մարդկությունն ալ մոռնա։ Թողե՛ք թշվառին իր աղատ պատուհանիկը, թողե՛ք իր լուսամուտը, իր սփոփանքը...

Իսկ դու, բարեկամ, որ ինչվան հիմա այս երկար խոսքերուս լռիկ կլսես, դու ինչե՞ն տխրած ես, չեմ հարցներ։ Բայց եթե տրտմությանդ սփոփանք կփնտրես և ուրիշ կերպով չես գըտներ, ե՛լ բնության մեջ. «Թէ կամիցիս սթափել,— կըսե Ոսկեբերանը,— Թէ կամիցիս սթափել՝ երթ ի բուրաստանս ուրեք, ուր աղբիւրք բղխիցեն և վտակք գետոց խաղայցեն, և ի ծովալիճս, և

միտ դիր ծաղկոցացն և լսիցես զգեղեցիկ երգս ճպռանցն»։ Զայս իրատես կուտա տրտմելոց այն անձն, որ վարդապետ արտասվաց կրսվեր։ Ե՛լ ով ցաված սիրտ, ե՛լ ով խոց ու վիրավոր, ե՛լ ու պտտե մեկ մը բնության մեջ. ի՞նչ ցավ ունիս, որուն դեղը հոս չգտնվի։ Բե՛ր ցցուր այդ սիրտդ սա երեկոյան արևուն, որ իր օրվան ճամբորդութենեն վերջը ահա կարմիր ալյաց մեջ կծածկվի. տե՛ս, անկե զվարթ և հանդարտ ի՞նչ կա։ Ահա ծածկվեցավ ջրոց և բլրոց մեջ, բայց վաղը դարձյալ կուգա զբնդ միսիթարելու։ Տես երեկոյան թռչնիկը, որ գա իր ծառին մեջ պահվտած իր չափերեն վեր ձայն մը ձգած՝ հովիտ ու ձոր կխոսեցնե։ Հարցուր մեկ մը անոր, հարցուր մանավանդ քու սրտիդ, ի՞նչ կերգե, ի՞նչ կրսե այն բնության միայնությանց մեջ։ Կտեսնա՞ս ոտքիդ քով խոնարհած փակված մանուշակը, որուն հազիվ բարակ հոտը կզգաս, որո՞ւն համար այս գիշերվան ցողիկս կծծե, և որուն համար ամեն առտու կբանա իր կապույտ աչվները լուսո դեմ։ Տես դա խատուտիկ ու բարձրացողուն ծաղիկը, որուն նայիլ հրամմեց մեզի իր և մեր ստեղծողն. «Հայեցարո՞ւք ի շուշանն վայրենի»։ Ո՞վ արդյոք ատոր նման հարուստ հագված է, արդյոք մեծն այն և ամենահարուստ Սողոմո՞ն, որ պարծենալով մը կրսեր. «Ելե՛ք հայեցարուք ի Սողոմոն, ի պսակն՝ որով պսակեաց զնա մայր իւր յաւուր փեսայութեան իւրոյ և յաւուր ուրախութեան սրտի իւրոյ»։ Տե՛ս այդ պսակը և այդ զարդերը և երբոր աչքդ այն մեծ թագավորին փառոքն ու սարոքն շլանա, դարձուր ու նայե «Ի շուշանն վայրենի». ո՞վ ավելի գեղեցիկ է. բնություն կփութա պատասխան տալու. «Ասեմ ձեզ, զի և ոչ Սողոմոն յամենայն ի փառսն իւրում զգեցաւ իբրև զմի ի նոցանէ»։ Հարցուր դու ալ բնության. ինչո՞ւ այդ վայրենի ծաղիկդ, «որ այսօր է և վաղիւ ի հնոց արկանի», ինչո՞ւ այդչափ գեղեցկություն տված ես։ Որպեսզի իմանաս, ով թերահավատ, որ եթե աստված այդ վայրի առօրյա խոտիդ այդչափ զարդ կուտա, որչա՞փ բան պատրաստած է քու սրտիդ, որ հավիտյան պիտի մնա։ Հիմա քու արցունքներդ գիշերվան ցողեն առաջ՝ կինկնան այդ ծաղկին վրա, բայց սրբե՛ ու վեր նայե. ի՞նչ են այդ փայլուն թավշի նման գիշերվան վարագուրին վրա բանված բյուրավոր գոհարներն։ Ա՜հ, ի՞նչ են այն անթիվ աստղերն և ո՞ւր կերթան այդ անհատնում երկնքին մեջ, դեռ չհոգնեցան այդչափ ճամբե։ Չէ՛, վասն զի քու կոտրած սրտիդ սպեղանիք մ՝ ալ պիտի կաթեն իրենց շողերովը։

Հապա այդ լուսնակն, որ բոլոր լուսավորաց սահմանը թողած, քեզի մոտեցած, արծաթե ճառագայթները չորս դին սփռած է, սրտիդ վրա խաղաղություն մը չի՞ ծագեր։ Տես դա ընդարձակ ծովուն երեսը, որուն եզերքը չեն երևար, ի՞նչ է այդ անդադար շարժումը, ի՞նչ է այդ հովը, որ չի դատվիր անկե, ի՞նչ են այդ ալիքներն, երբեմն խռոված և երբեմն խաղաղած։ Եղա՞ծ է սիրտ, որ զգա ու երբեք չխռովի, կամ եղա՞ծ է խռովություն, որ երբեք չդադրի։ Տե՛ս սա ծովափունքս, ինչպե՞ս հանդարտ, կես քուն կես արթուն կերերան, ինչպե՞ս լուսնին լույսը վրանին ոսկեթել զգեստի մը պես տարածված և ծալ-ծալ կշարժի. այս գեղեցիկ լուսափայլ պատկերիս մեջ, դու քո փափագածներդ չե՞ս տեսներ։

Բայց այդ պայծառ սահմանեն անդին ի՞նչ է այդ սևությունը ծովուն վրա, ծանծաղե՞ն է, թե ամպեն է, որ լույսը ծածկեր և մթնցուցեր է։ Ո՜հ, այդ սևությունդ չէ՞ որ քու ներկայիդ ալ պատկերն է, քու կորուստներդ, քու չգտածներդ, քու ցավերդ հիշեցնելով... Մահ, բռնություն, նախանձ, տգիտություն և տմարդություն, ասոնք չե՞ն, որ քու սիրելիներդ, քու հույսերդ, քու դալար զորությունները հափշտակեցին։ Մի՛ վհատիր, ելիր կայնե, տե՛ս անդին, ավելի անդին, այն ծովուն սև սահմանեն անդին ի՞նչ կտեսնես։ Ահա դարձյալ լուսավոր սահման մը, ուսկից անդին ա՛լ սահման չերևար։ Ծովուն և երկնքի ծայրերը իրարու կպած են, լուսնին լույսը ձորի պես մեջերնին դիզված, ու կընկղմի քու աչքիդ լույսն ալ...

Բարեկամ, այդ հեռավոր, լուսալիր սահմանը, ուսկից անդին ալ մթություն չկա, ի՞նչ կըսե ատիկա քու սրտիդ։ Այդ չէ՞ քու ապագայիդ նմանօրինակ պատկերը, այդ քու հանդերձյալդ չէ՞, որ հետ անցյալ ուրախությանց և ներկա փորձանաց՝ քեզի դարձյալ խոստացած է։ Անկորուստ գյուտ մը, քու ամեն ունեցած և փափագած բարյացդ, որոնց համար հիմա այդ վշտացյալ սիրտդ կնեռվի ու կնեռվի»...

Ով ընթերցող, ինչվան հոս լսեցի ես բնության ձայնը։ Ականջքս լռեցին և դեռ ձայն մը սրտիս մեջ կխոսեր. խոր էր սիրտս ծովուն պես, խաղաղ էր վրան ծաթած լուսույն պես։ Գլուխս դեպի ծոցս խոնարհած էր, աչվներս թաշկինակով բռնված էին, և երբոր նորեն բացի (չեմ գիտեր քանի պահելե հետև), ահա քովս ոչ ծեր կար և ոչ ծով, այլ միայն այս թղթյա ծովակս, քանի մը

արտասվաց կաթիլներով ուռած։ Զորոնք կամաց-կամաց կցամ-քեցներ բնության մտածմունքը, խոստանալով ինձի և նմանյաց՝ օգտակար և անձեռն պատրաստ Հրահանգ մը, Զբոսանք մը և Սփոփանք մը։

ԱԶԳԱԽՆԱՄ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Մարդկորեն մտածելով՝ ներկայաբար հավիտենականության մեջ ամենեն զարմանալի և նշանավոր իրողություն և հեղափոխությունն է մարկան երկրիս վրա տնտեսությունն կամ քաղաքավարությունն։ Չկա քիչ շատ բարգավաճ քաղաք մը, որում գլխավոր ասուլիսն կամ լրագրաց զրույցն, ազգաց կամ իշխանաց կառավարության վրայոք չըլլա։ Եթե պատմության ընթացքը քիչ մը բարձրեն քննելով դիտեմք, չեմք կրնար չտեսնել մարդկությունը իբրև անսահման ծովու վրա տատանյալ, փնտրելով հաստատուն կետ մը։ Երկիրս ինքնին իբրև համաշխարհական նավափայտ մը դիմե հավիտենական օթևանի, զոր ոմանք տգիտաբար նույնիսկ երկրին վրա կարծեն, որպես թե նավահանգիստն այլ ի ծայր նավուն կպած ըլլար։ Անշուշտ դյուրավ կուհասներ այս նավափայտը իր նպատակին, եթե վրայի եղողքն միաբան ըլլային և ղեկավարքն միշտ նկատեին զնշանս Անոր, որ տվավ «Ել ի ծովու ճանապարհ, և ի մէջ ալեաց շաւիղ զգուշաւոր» Բայց ինչպես առանձինն մարդ իր արարչադիր օրենքը թողուց, այսպես և մարդիկ իրենց համար սահմանյալ ընկերական օրենքները։ Կիրք մրրկեցին զծով կենցաղական, երկնից նշանքն մթնեցան, միաբան նավափայտն զարնվելով պեսպես դժվարությանց և հակառակությանց կոտրտեցավ, և ինչքան հիմա մեկ մեկ կտորի վրա ապավինյալ ազգք և լեզուք առանձնաբար ճամբա կընեն, երբեմն բոլորովին զատ, երբեմն դեռ քովե քով։ Ոմանք փութան առաջ, ոմանք տընտրնան հետամնաց. ոմանք հակառակին իրարու և վնասեն, ոմանք նախանձընդդեմ հառաջեն. ոմանք այլ կամ միշտ ուրիշներե նեղվելով և կամ իրենց անհոգությամբն ոչ միայն հետ մնան այլև ալեկոծին, տագնապին և ծովակուլ ըլլան, ինչպես այն ազգերն, որոց անվանքն կան այսօր և ինքյանք չկան ի միջի։ Հիրավի օտարներն անոնց վնաս հասուցեր են, այլ ավելի վնասողներն իրենք են եղած իրենց թույլ կամ ծուռ ղեկավարությամբն և ոչ

այնչափ ուրիշներն իրենց հակառակած են, որչափ իրենք այն վերին տեսչությանն, որ ինչպես յուրաքանչյուր մարդու՝ առավել ևս ամբողջ ազգի մը կեալը և մնալը կամի և պահե, ցորչափ ազգն ալ իր կամացն գործակից ըլլա, ապա թե ոչ, կրնա իրավամբ ըսել անոր «Կորուստ քո ի քէն է»։

Եթե մարդիկ իրենց դիտմամբք քաղաքավարին երկրի, վերին տեսչությունն այլ իր կանուխ և հաստատուն դիտմունքն ունի յուրաքանչյուր ազգաց վրա, զորս հավանեցավ իրարմե բաժնելու և «յորժամ բաժանեաց զազգս ամենայն, որպէս սփռեաց զորդիսն Ադամայ, կացոյց սահմանս ազգաց ըստ թուոյ որդւոց Աստուծոյ»։ Եվ նույն ինքն հավիտենական ափանց վրա զանազան իրարու մոտ կետեր ուղղե զանոնք, զոմանս շուտ, զոմանս ուշ հասցընելով և ինչպես առանձին մարդկան ոմանց վրա մասնավոր խնամք մը ցուցած է, այսպես և ազգաց ոմանց։ Ո՞վ չի գիտեր հրեից ազգին վրա եղած առանձնաշնորհությունն։ Բայց եթե յուրաքանչյուր ազգ գոնե իր պատմությունը մանր քննե, կրնա ոչ սակավ առանձնաշնորհ դիպվածներ նշմարել, որոնց մեջ մարդկային քաղաքավարութենե վեր ուղղիչ մատ մի կերևա։ Մեր ազգին պատմական կենաց վրա ի՞նչ խնամք չեն երևար, թերևս ավելի քան ուրիշ ազգաց, հետ հրեից։

Եթե չեմք ուզեր ըլլալ անշնորհք, անտեսք և անհոգք, պետք է ճանչնամք և խոստովանիմք, որ ազգախնամ տեսչությունն մեր ազգին վրա այլ շատ հայտնապես և առանձնաշնորհությամբ երևած է։ Աշխարհածանոթ և առակի պես հայտնի է, թե մարդո առաջին բնակությունն ի վերա երկրի և երկրորդն այլ հետ ջրհեղեղին եղան այն երկրին մեջ, որ ապա կոչվեցավ Հայաստան[1]. հետ խառնակության լեզվաց և բաժանման ազգաց ըլլալով ժառանգություն Հաբեթյանն Հայկա և հայրենիք զավակաց նորա Հայոց։ Ի սկզբանե մարդկության մինչև երեք հազար տարի, մինչև ցընտրությունն Աբրահամու, նախախնամության դիտած կետն ի երկրի կելևի Հայաստան։ Ամենայն ազգք անկից կու ճանաչեն իրենց հին ծագումը, մանավանդ հյուսիսային և արևմտյան եռանդուն ազգինք, իսկ հարավայնոց և արևելյայց այլ սահմանագլուխքն մոտենան և գրեթե սկսանին ի սահմանաց Հայաստանի։ Հետ բաժանման ազգաց և լեզվաց, մարդախնամ տեսչությունն ըլլալով ազգախնամ, մինչև երկու հազար տարի հրեից վրա հայտնապես արքուն աչք կերևա, ուրիշ ազգաց վրա իբրև ի քոն, իսկ հայոց

վրա՝ հսկուն։ Այն երկհազարյան դարուն մեջ (Աբրահամա մինչև ի Մակաբեացիս և Արամա ցԱրշակունիս) Հայք պատմության մեջ մեծ գործ կամ նշան մը չեն թողուր, այլ բավական բազմությամբ, զորությամբ և հարստությամբ աճեն, զարգանան, ծանոթանան և Ասիո տիեզերակալ պետությանց օգնական ըլլան։ Քրիստոսե առաջ Թ դարուն վերջերը Հրեից թագավորությանց հարվածներն կու սկսին, հարվածողքն ալ (հին Ասորեստանյայք) կու պատուհասին. նույն ատեն հայք առաջին անգամ կանգնին ի կարգ թագավորությանց Ասիու։ Իսրաելացվոց տասն ցեղից թագավորությունն կու վերջանա և մասն մի գերյաց ի հայս վարին, դարձյալ գերիչք պատուհասին (Սենեքերիմ) և հայք ինքնիշխան ազատ տերություն մի կըլլան, իբրև ութսուն տարի։ Հուդայի թագավորությունն ալ կու վերջանա, հայոց թագավորությունն նոր պայծառություն մը կառնու Հրաշեի և Նաբուգոդոնոսորա բարեկամությամբն և հետո Տիգրանա և Կյուրոսի, մինչ Հրեայք բոլորովին ի գերության են։ Երբ ազատին և դառնան ի Երուսաղեմ և սկսին նորոգել իրենց հիշատակները, Հայք նորեն Պարսից իշխանության տակ ընկան, թեև առանձին թագավոր ունենալով։ Երբ Հրեայք բոլորովին ազատություն և իշխանություն կորսունցնեն հետ Մակաբեացվոց, հայք, որ նույնպես իրենց իշխանությունը կորուսեր էին, կուսկըսին կանգնիլ։ Աբրահամու սառայածին որդիքն անտես կումնան, քետուրածին որդիք կու սկսին գալ ի տեսություն, անոնցմե ծագի նույն ատեն Արշակունի թագավորությունն ի հայս, ծանոթ և պատկառելի կըլլա շրջակա ազգաց, և մինչև Հռովմայեցվոց, որ ամենայն ազգաց տիրելով, զհայս ալ ստիպեն ի հարկատվություն։ Բայց հազիվ դաշինքը կնքված, ամենախնամ տեսչությունն նոր և հրաշալի և ամենամեծ փոփոխություն մը կընե. մարդկան քաղաքավարության օրենքը փոխե և օրինակն այլ ընծայե իր իսկ մարդանալովն և դեռ իր տնօրենությունը չի կատարած՝ հայ թագավոր մը դաշնակից կըլլա ամենաթագավորին հետ։ Որ և եսկատարման տնօրենությանց և ամենահաղթ դարձին ի երկինս նորահրաշ ազդախնամ կամ հայրախնամ տեսչությամբ տնտեսե զազգ մեր, քրիստոնեական կրոնից կանուխ և հաստատուն ծավալմամբ, որո համար իր առաքելոց և աշակերտաց խումբեն կու ղրկե ի Հայս, ավելի թվով քան այլ աշխարհս. որ և առաջին թագավոր քրիստոնյա, առաջին թագուհի և վկայուհի ընծայե ի հայոց։ Թեպետև քրիստոնեություն երեք դար կովի և հալածի ի հեթանոսու-

թենե, ինչպես ուրիշ տեղվանք, այսպես և ի Հայս, այլ քան զբազումս ավելի վկայուք և հետևողք պարծի հոն։ Եվ դարձյալ մեծահրաշ տեսչությամբ և զորությամբ առաջ քան զայլս՝ զՀայաստան աշխարհ բոլորովին քրիստոնյա կընե, քիչ ժամանակի քիչ օրվան մեջ վեց հարյուր գավառ մկրտության ցողերով լվալով և իբրև քսանից երեսուն միլիոն մարդ վերածնանելով ի հոգի սուրբ։ Տեսչությունն առաջ քան զերևցնել առ ինքնակալն հռովմայեցվոց զլուսավոր խաչն, երևցուց առ հսկա արքայն հայոց զլուսավորչին աջն։ Տրդատ, որ հետևեցավ Դիոկղետիանոսի ի հալածել զեկեղեցի, հետևցուց իրեն զբարեկամն յուր Կոստանդիանոս ի հանգուցանել զեկեղեցի և զմնացյալ հալածիչս Մաքսիմինոս և Լիկիանես՝ հալածեց, վռնտեց վերուց ի արևելից։ Տրդատա և Գրիգորի գործակցության երեսնամյակն մեծ մտադրության արժանի է։ Բոլոր աշխարհի մեջ փառավոր դար մ՝ է, բոլոր եկեղեցվո հաղթանակ և պարծանք մ՝ է, իսկ Հայության և հայախնամ տեսչության՝ բարձրագույն կետ։ Անկե հետև հազարամյան դարուկես (1330—1830), երբ քրիստոնեությունն հաղթանակած թագավորե ի աշխարհի ազատությամբ եկեղեցվո, ազգախնամ տեսչությունն կամփոփե իր մասնավոր ճառագայթները մեզմե, բայց ոչ բոլորովին։ Հայությունն կը նվազի և նվազյալ է մինչև ցայսօր զանազան պատահարոք և պատուհասոք, բայց ամենայն մեծ վտանգի ատեն այլ փայլեն ճառագայթք ինչ տեսչության և ամպերու տակեն, բայց թափանցիկ ամպերու, կերևի աջն հայախնամ, որո ամենեն մեծ նշան այս է, որ Հայաստան գրեթե ամենայն աշխարհե ավելի հալածանաց և ավերմանց ենթակա ըլլալով՝ անկորուստ պահե զքրիստոնեություն, զլեզու և գրեթե զմիագլխություն եկեղեցական, որք ի բազմավտանգ ժամանակս իրեն մեծ զորություն եղան և մեծագույն բարվո առիթ ժողոված են, եթե գիտնա զանոնք ուղղել և հարմարել և ընդունելի ընել օրինաց ժամանակի։

Հիմա, եթե ուզեմք շուտ-շուտ աչք մը տալ այս միջոցիս զանազան եղանակաց, կու տեսնեմք նախ դար մը թուլության Արշակունի թագավորաց (345—428) և անկարգ գնացից. այլ նույն ատեն արիական և իմաստուն արքնություն Պահլավունյաց, այսինքն Լուսավորչի ցեղին և հաջորդացն կաթուղիկոսաց, որք արդարև հայրաբար խնամեն զազգն և պահեն ի պատվի։ Եվ երբ իրենց հաջորդությունն այլ դադրի (440), որով հետ թագավորական հեղինակության Լուսավորչին այլ կերպ մը վերցվի և մեր ազգն՝ Պար-

սից ամենայն խորամանկությանց և զրադաշտական կրոնից սպառնալյաց մատնվի, տեսչությունն մտավոր ուժ կուտա հայոց, գյուտով գրոց և թարգմանությամբ, որով դյուրանա ժողովրդյան սորվիլ և հաստատիլ իր հավատոց մեջ և առաջնորդաց՝ պաշտպանել զնա ընդդեմ մոլորեցուցչաց. քաղաքական կորստյամբ թշվառագույն դարն, դպրությամբ նշանագույն կըլլա քան զայլս։ Երկու դար քշե (440—650) Պարսից կեղակարծ տիրությունն, որոց բոլորովին անկասկած մնալու հնարքն էր սերտ միաբանությունն հայոց ընդ Բյուզանդացիս, ինչպես ի ժամանակս Տրդատա և ոմանց ի հաջորդացն։ Բայց Հայք զզվյալ անոնցմե՝ Վարդանյան պատերազմին ատեն օգնություն չգտնելուն համար[2] և նույն ժամանակ եղած չորրորդ տիեզերական ժողովքին մեջ ալ չի գտնվելով, փույթ չեն ըներ և եկեղեցականս միաբանիլ ընդ Հունաց, որով մնան մինչև հիմա ի նորանշան միայնության ընդ մնացորդաց արևելյան ազգաց ոմանց։ Եվ ստիպվին երկու աշխարհակալ պետությանց մեջ տատանիլ, երբեմն մեկուն, երբեմն այլ մեկայլին մոտենալով և ոչ քիչ անգամ այլ դեռ իրենց հարց նիզակավ օտար բռնությանց դեմ դնելով։ Կրոնական միությունն և պնդությունն դեռ պահե զիրենք կարծր նիզակի մը պես, որ եթե քիչ մ՝ այլ ճոճուն ըլլար՝ ավելի լավ և փառոք պահեր ցայսօր և ասկե հետև այլ։ Գրեթե նույն ոգվով, նույն քաջությամբ, նույն խորագիտությամբ և նույն համառությամբ կանցնե Հայաստան արաբական բռնության երկդարյան եղանակն ալ (650—860), որի ատեն հայ հին ազնվականության գրեթե կիսեն ավելին ջնջի կորսվի, բայց եկեղեցին հաստատությամբ հավատոց և բազմաթիվ վկաներով անսասան մնա. շատ հեղ արտաքին զինուք այլ պաշտպանի իր քաջաց մնացորդներեն, մանավանդ ի ցեղե Մամիկոնեից և Բագրատունյաց։ Այս ետքի ցեղս գրեթե սեփականե ազգին հաղարապետությունն կամ երեսփոխանությունն առաջի խալիփայից յ՝ Թ. դարու և անոնց բռնության տկարանալու ատեն՝ ինքն զորանա փառոք և իշխանությամբ և ի վարձ հավատարմության առ ազգն և առ եկեղեցին հասնի թագավորական աթոռոս դար և կես (886—1042)։ Իր հետ ուրիշ ցեղեր այլ (Արծրունիք, Սյունիք, Վանանդացիք և այլն), որոց բազմագլխությունն ազգային միաբան ուժը նվազեցնե, բայց ուրիշ կողմանե ավելի կու տարածե ուժ և ծաղկումն, արվեստ և դպրություն ի զանազան իշխանանիստ քաղաքս և մեծավիճակ վանորայս։ Մինչև ի կես ԺԱ դարու և քիչ մ՝ այլ ավելի, դեռ Հա-

յաստան ի նախնի կերպարանքը, թեև այլայլյալ, պահե, անկե հետև հարձակմամբ սկյութական ազգաց, Թուրքաց և թաթարաց, գրեթե բոլորովին այլափոխի։ Օտարք կուբնակին և բազմանան ի մեջ, իր բնիկքն օտարանան ի այլ աշխարհս, ոմանք հայրենի հողուն քաղցրությունը կամ օրենքը անջինջ պահելով սրտերնուն մեջ մնան հոն, ընդ բռնությամբ նորեկաց, ոմանք ազգային ազատությունը վերադասելով քան զայն՝ կես դաշնադրությամբ և ավելի բռնաբարությամբ դիմեն արևմուտս և Տորոսի ամուր լերանց մեջ ապահովեն իրենց նախնյաց գավազանները, լեզուն, և Լուսավորչա աթոռն այլ. և երեք դար, հին հայոց սահմանածայրը՝ Կիլիկիո մեջ, Ռուբինյան տերություն մը կանգուն պահե հայ ազգությունը։

Միջին դարու պատմության մեջ նշանագույն դիպաց մեկն ըլլալով և պատճառ մեծ ծանոթության և հարաբերության հայոց և բուն արևմտյան տերությանց և Հռովմա երկիշխան պետության հետ։ Լատին և գաղղիացի լեզուք և սովորությունք մտնեն ի հայս, հայք դեսպանությամբ, ուխտագնացությամբ, վաճառականությամբ հաճախեն ի նշանավոր քաղաքս Իտալիո և ի թագավորանիստ տեղիս Եվրոպիո, մանավանդ խաչակիր զինվորությանց ատեն։ Լատին վարդապետաց մուտքն ի Մեծ և ի Փոքր Հայս և միաբանողաց անվանյալ կրոնական կարգք նոր դար մը բանան հայոց եկեղեցվույն, որո արգասիքն մնա այնուհետև մինչև ցայժմ, թեև ոչ սակավ հակառակությունք ծագին այն պատճառավ։ Այս կարծյաց և տեսությանց երկպառակությունն, եվրոպական տերությանց առտնին զբաղանքն, անօգնական և միայնակ թողուն զթագավորն Կիլիկիո և հետին հայկական գավազանն այլ կոտրի ի վերջս ԺԴ դարու, որի ժամանակ Մեծ Հայք այլ, արդեն նվազած թաթարաց բռնաբանությամբ, Լենկթիմուրի ասպատակությամբքն բոլորովին անշքանան և դարձյալ նոր գաղթականք թողլով զբնիկ երկիրն՝ անցնին ի Եվրոպա։ Որոց սերունդք մնան մինչև հիմա ի Ռուսաստան, Լեհաստան, Մաճարստան և Դանուբյան գավառաց մեջ, ուր հանդարտությամբ ծաղկելով և հարստանալով, կրնան իրենց ազգակցաց և մանավանդ եկեղեցական աթոռույն օգնել, նաև ԺԵ և ԺԶ դարուց մեջ, որք մեր պատմության մեջ ամենեն աննշան, մութին և լուռն են։ Միայն նոր վկայից նահատակությունն ի Քուրդ, Թուրքմեն և Պարսիկ բռնավորաց՝ անշեջ պահե կրոնական կրակը։ Ասոր ցնցմունք և նորություն մ՝ այլ տան ի կես ԺԵ դարու մեկ մի Փլորենտյան ժողովույն մեջ միաբանությունն կաթուղիկոսին

Սոս, մեկ մ՝ այլ կաթուղիկոսութեան երկու բաժանիլն և գլխավոր աթոռ ըլլալն էջմիածնի։ Սակայն երկուքն այլ մեծ կամ հայտնի հետևանք մը չեն ունենար ազգին անհաստատ և բաժանյալ քաղաքական վիճակին համար, որ ի վերջ ԺԶ դարու և ի սկիզբն ԺԷ-ին, ավելի կանոնավոր կերպ մը կառնու Հայաստանի երկու ձևացյալ տերութեանց (օսմանյան և պարսից) մեջ բաժնվելովն, որք ինքնագլուխ բռնավորաց մանր իշխանութիւնները վերցնեն։ Անոնց հետ Հայք ալ բոլորովին իրենց քաղաքական ինքնագլխութիւնը կորուսած ատենին, նոր այցելութիւն մը կունենա մտավոր, ուսմանց և կրոնական կարգաց նորութիւն մը կըլլա ի զանազան կողմանս և վանորայս։ Եվ առաջ քան զայլ, արևելյայս հայք հնարին զտպագրութիւն գրոց, որոց օգուտները տեսնային ի Եվրոպա՝ վաճառականութեամբ հոն գալով, կամ բնակելով[3]։ Հին Ջուղա շահաստանին ավերն և փոխադրությունն ի Նորն Ջուղա Սպահանու, և ընդ Վենետկո անընդհատ առևտրությունն այս գեղեցիկ արվեստին հաջողությունը կդյուրացնեն և գրեթե ամեն եվրոպական վաճառատեղ քաղաքներ մեկմեկ հայ տպագրատուն կանգնի, ուսկից ապա և ի բուն հայոց սահմաններն այլ բերվի ի Կոստանդնուպոլիս, ի Նոր Ջուղա, ի Էջմիածին, ի Երուսաղեմ և այլն։ Նույն ատեն Լատին վարդապետք և նոր միանձունք դարձյալ սկսին հաճախել ի Հայս և հայք կրնան ընդհանրական եկեղեցվո սերտ միաբան ըլլալով ի հավատս՝ պահել իրենց ազգային լեզուն, ծեսն և օրենքներն։ Այս բանս ավելի հաստատ և պայծառ կուհոչակե ԺԸ դարուն սկիզբը Սեբաստացի քաջահմուտ վարդապետ մը, Մխիթար, միաբանակեցաց ընկերությամբը, զոր հաստատե ազգին հինդ հարյուր տարվնե վեր ծանոթ, դաշնակից և վաճառակից Վենետկո սահմանաց մեջ։ Ճշմարտություն կրոնական, կրթություն բանական կամ ուսմունք և ոգի ազգային, այս ընկերության նպատակն կուճանչվին, պատվին, պտղաբերեն[4]։ Նոր հարգ և ծանոթություն մ՝ այլ կունենան հայք առ Եվրոպացիս և ամենայն միտք աննախանձ վկայե, որ ազգախնամ տեսչության մեծ այցելություն մ՝ է այդ և նոր կապ ու խառնուրդ մը համաշխարհական դպրության ընդ հայկականին, որո օգնական կըլլան այս դարուս մեջ բացված ազգային վարժարանք, տպագրատունք, օրագիրք ևս՝ եթե քիչ բանակուիվ և ավելի մտաշահ ծանոթություններ հրատարակեն։

Դարուս երկրորդ քառորդին մեջ հանդիպած քաղաքական հեղափոխությունք ի արևելս ամենեն ավելի հայ ազգին վրա ներ-

գործած են (ի բաց առյալ ազատ տերությունն հունաց)։ Ռուսաց պատերազմներովն ընդ Պարսս և Օսմանյանս՝ Հայաստանի կեան հետ վեց և յոթն դարուց, կանգնի ի ձեռս քրիստոնյա իշխանության, ազգն նոր իշխող մ՝ այլ կունենա, իր կրոնական գլուխն այլ անոր հպատակի։ Մինչև ցայն ժամ իր արտաքին իրավասության ներքև եղող, այլ դավանությամբ տարբերյալ մասն ազգին, բոլորովին կու բաժնվի և զատ աթոռ կունենա և զատ երեսփոխան քաղաքական, որմե, որպես ամենայն բաժանմամբ, ազգին ընդհանրության ուժն կու նվազի, այլ մասունքն ավելի կրնան զորանալ ազատ և անարգել զարգացմամբ։ Օսմանյան պետության նոր օրինադրությունն կարթունցնե ժողովրդոց և հասարակաց իրավունքն և փոխե ստրկաբար ծառայությունը ի ազնվական հպատակություն։ Այս զգացումն խառնվելով քսան տարվան ուսմանց մտավարժության հետ, կիմացունեն, որ ազգային ոգին զարգացյալ՝ չի կրնար երեխայի պես խանձարրապատ մնալ, բայց դեռ ոչ այլ իր հսկայաձև նախնյաց մեծ-մեծ զգեստները հագնիլ և ոչ այլ վրան առնուլ ամենայն նորաձևություն հիմիկու ազգաց...

Աճումն հայտնի է, հասակին համեմատ զգեստն հարմարցընել, այս է մեծ խնդիրն, որ դարուս կիսեն ետքը ինչվան հիմա ազգիս երկու բաժանյալ մասերն այլ իրենց մեջ շարժե և շփոթե, ամենուն ծանոթ են որպիսի դիպվածներով։ Ժամանակին ընդհանուր քաղաքական ներկա շարժումն այլ, պատերազմունք և փոփոխությունք պետությանց, քիչ շատ ազդեցություն կրնեն այդ մեր ազգային շարժման կամ տատանման, որ դեռ ի հուզման է։

Ծանրակշիռ եղանակի մը մեջ կամ սկիզբն եմք, որ ոմանց շատ վտանգավոր կերևի, իբրև թե ազգին ուժն կամ ճարն հատեր է, իր կեցուցիչ, հառաջեցուցիչ մեքենայն խորտակեր է. չունի իր ողջության անդամներն...

Ո՞ւր է ազգախնամ տեսչությունն։ Հետ քառասուն և չորս դարուց մի՞թե սպառեցավ հայության լապտերին լուսավառ նյութն։ Եթե այդպես է, քար ի գլուխ կապած երթանք ժամանակին անդարձ անդնդոց մեջ գահավիժինք, նման այն ազգաց, որ երբեմն մեր աշխարհին չորս կողմերն անուն և տերություն ունեին, և այսօր չկան անձամբ, այլ միայն չոր քարերով։

Բայց մեր աշխարհն դեռ իր անվամբն կոչի և կա, և իր ժողովուրդն ցրված՝ բայց դեռ ազգ է, թվով, լեզվով, ծիսիվ և զգացմամբ. ուրեմն ազգախնամ տեսչությունն հսկե անոր վրա։ Մի՞թե

տատանյալ և կոծյալ ծովուն ալյաց վրա այլ շատ հեղ չի՞ ծագեր արեգակն, և անոնց շփոթած՝ փրփուրներն անգամ մարգարտանման գեղեցկացներ և դարձյալ միատարր բյուրեղի նման հավասարեցներ։ Գիշերն իսկ լուսին նշան է խաղաղության մրրկաց և հեռավոր միայնակ աստղիկ մ՝ այլ, հույս ապագա հանդարտության։ Եվ եթե երկինք երկիր այլ մթնացած չերևան, մագնիսոտ ասեղիկ մի այն ընդհանուր կուրության և կորստյան մեջ՝ իր ցուրտ ծոցեն կրնա անկշռելի կրակով մը, զորությամբ մը փնտրել գտնել իր դիտած կետը, իր զարմանալի սիրելին...

Ո՜վ տատանյալք, կանգ առեք պահ մը եղած տեղերնիդ, ծանոթարար լույս մը կծագե հանդարտյալ միտքն. նախ ինքզինքը ճանչնա մարդ, ապա՝ զընկերս։ Ճանչնա՛նք զմեզ և մեզի պատշաճյալ տեղը և գործը հանձն առնունք, ճանչնա՛նք զիրար և յուրաքանչյուրին պատշաճյալ տեղը և գործը տանք։ Նավն կու սկսի շիտակիլ, ճամբան կորոշվի, նավահանգիստն ճանաչվի, ազգախընամ տեսչությունն պայծառանա, հայությունն ապահովի իր հավիտենական ընթացից և նպատակին մեջ։ Հասարակաց հանդարտություն և համբերություն և յուրաքանչյուրոց՝ մտադրություն իրենց հատուկ վիճակին պարտուց և պատշաճից. ոչ գիրար խափանել և ոչ չափեն վեր նետվիլ։ Ամենայն առաջընթացություն նախկին հետամնացությունը ունի, պետք է մեկիկ-մեկիկ այն քայլերը ընել. ոչ արտորանքն փութեցնե, այլ՝ շրջահայաց զգուշությունն։ Այս զգուշություն և ջանքս միայն կրնա գործակից ըլլալ հայրախընամ վերին տեսչության և իր ծածկյալ բարիքները հայտնել ի վաելս ազգիս և ի զարմանս օտարաց։ Իսկ անզգուշությունն կրնա այլ ավելի ծածկել և ուշացնել և ինչվան խափանել ցանկալի հայտնություն մ՝ այլ, հետ այնքան հայտնությանց կամ խնամոց, որք կատարվեր են հինգ հազար տարի նահապետյալ ազգի մը քաղաքական տնտեսության զանազան եղանակաց մեջ։ Դեռ հսկե հին հայրախնամ տեսչությունն, այլ իր գիտմունքն սուրբ և բարձր է։ Միայն ազնվական դիտմամբ և ջանյուք կրնա ազգն արդյունավորիլ նոր այցելության և ապահովել ընթացքը առ կետն երջանիկ։

ՆՇՄԱՐՔ ԵՎ ՆՇԽԱՐՔ Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ

Իմ ազգակցաց շատերուն նման մեր հին Հայրենի երկրեն շատ հեռու, օտար ափանց վրա ծնած (թեպետև գեղեցիկ ծովածի-

ծաղ ափանց Վոսփորոնի)[1], երկար տարիներ փափագեի այց ելլելու կամ ուխտի երթալու աշխարհ մեր Հայաստան և ականատես ըլլալու հարանց ու պապանց հիշատակարանց, շինից և շիրմաց։ Անցան այն շատ տարիներն, անցան շատ բաներ գլխես և սրտես և դեռ հոն կմնար հին փափագս, նման այն տերևին, որ թեև իր դալարությունը կորուսեր, թոռմեր, խամրեր է, բայց բարերար ջրի մը մեջ ձգվելով, նորեն չափավոր դալարություն մը կառնու, գուցե խնկանման հոտ և համ մ՝ ալ ունենա։ Ռուսաց և Օսմանյան դաշնակցաց պատերազմեն վերջն էր, երբ անգամ մ՝ ալ բնության նորոգող եղանակն հասավ, նորեն զգացի ես ալ զգարուն, բայց այս անգամ այն ալ զգացի, որ ես այսուհետև հասակիս գարնան վերջերն եմ։ Գուցե տվողն կենաց պարգևե ինձի շատ գարուններ ալ տեսնել, բայց կյանքն որչափ ալ երկար ըլլա, մեկ գարուն միայն ունի, և որչափ ալ վառի սրտի կրակարանն՝ գոնե դրսի պատյանն երթալով կպաղի, կտկարանա։ Թեթև տարիներու տեղ կուգան ծանրերն և ուսոց վրա նստած՝ դժվարաշարժ կընեն զմարդ և որչափ ալ ասդիս անդին նայի՝ ավելի դեպի վար կհակեն գլուխը։ Գուցե ինձի ալ նստելու տարիներ դեռ ըլլան, բայց պտտելու՝ շատ չեն կրնար ըլլալ։

Բավական մտածելե ետև ելա ի գործ։ Առի ցուպս, մախաղս և խնայության քսակիկս, քանի մը գիրք, աշխարհացույց մը լուսանբկար գործիք մ՝ ալ, որպեսզի պտտելու տեղերես քանի մը հիշատակ ալ բերեմ և ընծայեմ բարեկամաց և հայրենասիրաց։ Զգտնելով օգնական և ընկեր մը՝ ստիպվեցա.ինքնիրմովս բավականանալ և չուշանալ հրաբերան և մոխրամատն հայրենասիրաց դոներու քով։ Ըսի փութամ, երթամ տեսնելու զհայրենիս, թեպետ և ոչ զընդարձակություն Հայաստան աշխարհի, գոնեա մեկ մաս մը, և գամ ըսեմ, թե տեսա և տեսածիս, կամ հեռուեն և մոտեն նշմարածիս նշխարքն ալ ցուցնեմ։ Արդյոք մինչև ո՞ւր պիտի կարենամ երթալ, մինչև ո՞ւր տանիլ իմ հետևողս (ընթերցողս), ո՞ր սահմանի վրա պիտ կարենամ ցցել ցուպս...

Ի՞նչ պետք է հիմա գիտնալ կամ վարանիլ։ Աստված է առաջնորդ ամեն ճամբու, կարճ կամ երկայն՝ ինքը գիտե վախճանը, ուր որ կետը դրած է, այն է մեր անծանոթ նպատակն, կետե կետ ամբողջ ընթացք մ՝ է։ Բավական սեպեմ նաև, եթե կոխեմ հայկական հողը և շնչեմ անոր հովանավոր բարձանց ու բլրոց օդը, քալեմ նախահարց քալած ծաղկածին ձորակներուն և տվարածական տափերուն վրա, ըմպեմ պայծառ առվաց և գետոց վտակներեն, զովանամ

Եփրատա ականակիտ աղբերաց մեջ, տեսնեմ Ճորոխի և Արածանվո կամարակերպ, փրփրահոսան ալիքը, լսեմ Եփրատա քարավազ կարկաջասահանությունը, բբբեմ Մասյաց երկնածրար գագաթան, Արագածա ծծմբածոր ծայրերուն, հայելանամ Սևանա և Փառավանա ապակեփայլ լճերուն վրա, պրպտեմ պատառյալ և մամռապատ պարսպաց մեջ, թավալեցնեմ քանի մը հիշատակաց քարեր, նկատեմ մայրաքաղաքաց հատակը, հանդիպիմ քանի մը հսկայակերպ հողվերանքի, լամ քանի մ՝ անմոռանալի անձանց մոռացյալ գերեզմանաց վրա, ցավիմ Շիրակա դաշտին կիսավեր եկեղեցյայ վրա, ողբամ սգավոր սրբությանց վրա, հառաչեմ Դվինի և Անվո ավերակաց վրա, խորհիմ և տխրիմ ի վերա անցյալ ցեղից, փառաց և ժամանակաց հայության...

Թափութափ երկթե թևերուն տալով, սկսավ շարժիլ շոգիաքայլ նավն։ Քանի մը ժամ չանցած՝ անցանք այն աստվածանկար ծովու բացվածքեն, որ Եվրոպայի և Ասիո մեծահամբույր շրթանց մեջ անսպառ կենդանության շունչի պես կխաղա, այն անանման Վոսփորոնեն, որ կրկին սիրելի էր ինձի, հայրենյաց տեղ հայրենիք ըլլալով և իր ափանց վրա գիս ընդունելով, ի լույս կենաց. իմ օրորանս ալ այն ալեծաղիկ եզերաց վրա օրորված է։ Մտանք ի Սեավ ծովս Հույնք երբեմն հյուրընկալ, երբեմն հյուրատյաց սեպելով զայն, մեկ մ՝ Ասքսենոս մեկ մ՝ Եվքսինիոս կոչեր են, կըսեն, բայց ես ավելի ախորժեցի լսել անոնց, որ կըսեին, թե մեր ազգահոր պապուն անվամբ կոչված ըլլա, որ կ՝ ըսվեր Ասքանազ, իբր Ասքանազյան ծով։ Վասն զի այս հաբեթածին նահապետս նախ մեր հայրենյացը մեջ բնակեր է, հետո այս ծովուն հարավային եզերքները սփռեր է իր սերունդը և անկից ալ անդին անցեր է արևմուտս, ըստ ոմանց մինչև Գերմանացվոց աշխարհը։ Մենք այս կողմը թողլով՝ կթռչեինք ալյաց երեսեն դեպի մեկալ կողմը, ուսկից լույս կու գա. ասեն մը արևուն լուսուն հետ իմաստության լույսն ալ անկե կուգար արևմուտս, մեր աշխարհն ալ արևելքի վերջի դոներեն էր դեպ այն կողմը, ուր կերթար արևն և երբեմն սեփական անվամբ Արևելյան տուն կըսվեր։ Փոքր Ասիա, որուն եզերքները հիմա նավես կտեսնեմ, երկու ծովուց մեջ (Ասքանազյան և Միջերկրական) կամուրջ մը կնմանի, միջասահման Ասիո և Եվրոպիո, ուր հազարավոր տարիներե ալ առաջ դրակից և դիմակից էին այն երկու ազգերն, որ հիմա ալ այս երկրիս շատ ազգաց կամ ժողովրդոց մեջ առաջինն ըսվելու արդյունքն ունին, հույնք և հայք։ Անոնց նախահայրն Յավան, մեր նախա-

հոր Թորգոմա հորեղբայրն էր։ Պետք չէ զլանանք իրենց երիցության պատիվը, չմոռանանք ալ մերձավոր խնամութիւնը։

Նավուն աջակողմը նստած՝ երբեմն պարզ աչքով, երբեմն հեռադիտակով և ավելի շատ ալ մտատեսութիւնամբ կդիտեմ Փոքր Ասիոյ հյուսիսային եզերքները, կամ այս Սեավ ու Պոնտոս ծովուս հարավային ափունքը, որ շուտ-շուտ կսահին, կփախչին, իբրև թե դու զմեզ քննելու համար չես եկած, ըսելով, փութա՛ քու նպատակիդ։ Եվ ահա անցանք Դափնուսիա և Աքերուսիա սարավանդից դիմացեն (որք հիմա կըսվին Քեֆքեն ատասը և Պապա պուռու), որոց միջոցեն ի ծով կթափի արևմտյան Փոքր Ասիոյ առաջին գետն, Սանգարիս (Զեքարիա-սու), Գաղատիոյ կողմերեն իջնելով և մեկմեկու հետևանց՝ կերևան-կանցնին ուրիշ հրվանդաններ, Կարամբիս, (Քերեմփե), Ստեփանե (Ստեֆանիա), և Սյուրիա (Ինճե-բուռուն), որուն ցամաքը շատ առաջ երկնցած է ի ծով, դեպի հյուսիս։ Եթե այսօր արևելյան կողմը պատես, կտանի խաղաղ գոգ մը կամ պզտի ծովածոց մը, Ագ-լիման կոչված, ուր շատ հին ատեն շինվեցավ մեր ազգին արևմտյան անվանակոչութիւնամբ ավան մը՝ ԱՐՄԵՆԵ, որ թեպետ պզտիկ և բանուկ տեղ չէր, բայց պարապորդ մարդ մը ուզեց շենցընել և պարսպով ալ պատեց։ Ամենքը զարմացան ըրածին և առակ եղավ հունաց մեջ ըսելն.

Որ այլ ինչ գործ ոչ ունի,
Անէ պարիսպ Արմենի։*

Այս Արմենյան ավանիս մեջ հինգ օր հանգչեցավ Քսենոփոն, չորս հարյուր տարի Քրիստոսե առաջ, երբ իր մնացյալ գնդովը հայոց լեռներեն անցնելով, կդառնար իր հայրենիքը։ Ասկն շատ հեռու և Տրապիզոնեն ալ ոնդին, կա ուրիշ Արմենե ավան մը, ուր ավելի հայության նշաններ ալ կրնանք գտնել, եթե հանդիպինք։

Արմենեի ծովածոցին դիմաց և մոտ կա լեզվաձև բոլորյալ ցամաքակղզյակ մը (Պոզ-թեփե), որուն վրա կանգնած է Սինոպ հին քաղաքն հունաց Պափլագոնիո, երեք կողմե ծովը դիտելով։ Իր ամենեն նշանավոր հիշատակն է Դիոգինես Շնական փիլիսոփայն, եթե սրահանճար, սրալեզու, բայց և աղտոտ, անամոթ և արհամարհոտ մարդ մ՝ ալ, փիլիսոփա կրնա ըսվիլ. գոնե երջանիկ էր ուրիշներու կարոտ ըլլալ չուզելով, ինչվան Ալեքսանդր ինքնա-

* Օգդիս Է՛րզոն ուտեն ի՛խեն
Արմե՛նին Լդի՛խիսեն։

կալին շուքն ալ իրեն ծանր եկավ։ Միհրդատ՝ մեր միջին Տիգրանա քեռայրն, իրեն արքունի քաղաքաց մեկն ըրավ զՍինոպ, որ անկե առաջ և վերջն ալ շատ ծաղկեցավ շենքերով և վաճառականությամբ և գրեթե Բյուզանդիոնի և Տրապիզոնի մեջ ծովուն իշխան էր։ Հիմա հնության նշխարքներն անգամ չեն երևիր, բայց միշտ կմնան հրաշալի տեսքն և դիրք բնության։ Այս քաղքես էր սուրբ պարտիզպանն Փոկաս, պաշտպան ալեկոծելոց և քրիստոսական միամտության փիլիսոփա մը, անհամեմատ գերագույն քան զԴիոգենես և քանի մը Դիոգենես։

Սինոպեն հիսուն մղոնի չափ անդին՝ ծովեզերյա շենքերեն ավելի նշանավոր բան մ՝ է ԱՀՅՈՒՍ (Դզել-ըրմագ) գետույն թափվածքն ի ծով։ Այս գետս Փոքր Ասիո գետոց մեծագույնն է, իր աղբերակունքն Փոքր ու Մեծ Հայոց միջասահման կրնան ըսվիլ։ Քրիստոսի թվականեն երկու հազար տարի առաջ ասոր ափունքն սկսան հայերեն լեզու լսել, երբ Արամ նահապետ մեր, նվաճելով իրեն հովիտները, իր Մաժակ կողմնակալին ձեռքով շինել տվավ քաղաք մը, որ անոր անունն առավ, հետո կոչվեցավ, ինչպես հիմա ալ՝ Կեսարիա։ Թե այս գետս, թե ԻՌԻՍ (Եէլիշ-ըրմագ), որուն բերանն այլ Սամսունեն քիչ մը անդին կինկնա, թե Թերմոդոն (Թերմե) և թե Ճորոխ իսկ, որ Սև ծովուն հարավային կողմը թափող գետոց գլխավորքն են, ամենքն ալ արևելքեն դեպ արևմուտք կվազեն նախ, և մեծ գոգ կամ աղեղ մը ձևացնելով, նորեն դեպ արևելք կդառնան, և հետո, դեպի հյուսիս կերթան ի ծով. կերևի թե խիստ մեծ և ուժով երկարական ցնցմամբ և ձևացմամբ մը այս դիրքս առեր են։ Իրս երկու թև ունի, արևելագույնն ԳԱՅԼ կըսվի և հովտին գլուխն ինչվան հիմա ԳԵԼ-ԳՅՈՒԴ կըսվի ի այլազգաց, որ է Գայլ-գետ ըստ մեզ, և է բնիկ գավառ կամ երկիր Փոքր Հայոց, արտաքո Ա, Բ և Գ հայոց։ Առանց երկիրները տեսնելու, զանոնք դալարացնող և գիրացնող գետոց հավելվածները տեսնելով, և իբրև մեր հայրենի սահմանաց առաջընթաց նվիրակներ ողջունելով, անցանք շատ հրվանդաններու առջևե, Ենոյեա (Յունե), Պոլեմոնիոնի (Ցածա), Յասոնի (Յասոն), Վոոնա (Վունա Պուռնու), և այլն, թողուցինք զԿեռասոս (Քիրեսոն), Տրիպոլիս (Թիրեպոլի), Ոփիոս (Օֆ), Ռիզոս (Ռիզե) և հասանք ի մայրաքաղաքն Պոնտոսի, ի Տրապիզոն, ուր ծովուն հրաժարական բարև տալով ելանք ի ցամաք, ասիական միանգամայն և հայկական հողն ալ ողջունելու։

Տրապիզոնի քաղաքական, աշխարհագրական և առևտրական

դիրքն և դեպքն և մերազգայց հոն գաղթականությունն ալ գրեթե ամենուն ծանոթ են։ Թեպետ կարժեր, որ ալ ավելի ծանոթ և հրուչակավոր ըլլար հիմա այնպիսի քաղաք մը, որ Սև ծովուն ափանց վրա ատենոք առաջին քաղաք և միշտ ալ առաջինեն քիչ հետև գտված է։ Բյուզանդիոնի հակառակորդ և անոր հավասար, թե աշխարհագրական լայնության աստիճանավ, թե հեռավորությամբ Սեավ ծովուն անկյունեն (արևելքեն, ինչպես Կոստանդնուպոլիս արևմուտքեն) և թե զանազան ժողովրդոց և լեզվաց բնակարան կամ իշևան ըլլալովն ի հին ժամանակաց, ինչպես Խաղտիք, Պոնտացիք, Հայք, Եգերք, Հույնք և այլն, որով հայտնի ալ չէր թե ո՞ր ազգին բնիկ քաղաք էր։ Հին աշխարհագրաց տեղագրության նայելով, Մակրոնք կամ Մակրունիք ըսված ցեղին սեփական կեղևի, բայց հույնք Սինոպեն գաղթական ղրկելով շիներ, շինցուցեր ու տիրեր են անոր երկար ատեն, ինչպես որ հռոմայեցվոց տիրապետութենեն վերջն ալ նորեն հունաց ձեռքն անցավ և ատեն մը կայսերանիստ ալ եղավ, և հետ Կոստանդնուպոլսի առման, ընկավ ի ձեռս Օսմանյանց։ Բայց առաջ քան զաշխարհակալություն հռովմայեցվոց և զզօրանալ Պոնտոսի թագավորաց, գուցե և առաջ քան զԱրշակունյաց թագավորություն, ատեն մը հայկական ձեռք ալ հասած էր ի Տրապիզոն։ Ստրաբոն աշխարհագիրն կըսե հայտնապես, թե Փոքր Հայոց նախարարքն մինչև ի Տրապիզոն և ի Փառնակիա (Կիրեսուն) կտիրեին։ Երբ Վաղարշակ Հայկազանց տերությունը նորոգեց և սահմաններն ընդարձակեց, Սեավ ծովու արևելյան հարավային ափանց ալ առանձին կողմնակալ մը դրավ, Հայկազն Տորք հսկայն Պասքամյան։ Թեպետև աթոռն ի Տրապիզոն ըլլալն հայտնի կամ հավանական չէ, ես կարծեմ թե ավելի արևելակողմն էր, Պորդանիս կամ Պրյուդանիս (Ֆորդունա) գետույն բերնին քով, ուր որ ինչվան հիմա ԱՐՏԱՇԻՆ հայանուն ավանն կա, անոր քով ալ ԱՐՄԵՆԵ ավանն էր, հիմա Օճա գեղն։ Այս գետակիս ձորահովտին մեջ ալ կան ուրիշ հայանուն տեղիք և վտակք։ Ասոր եզերքը տեսավ Արրիանոս աշխարհագիր, Բ. դարուն սկիզբը, Անգիալեա թագավորին արքունիքը[3]։ Միթե սա չէ՞ր դաստակերտ նույն ինքն Տորքա, որ Անգեղյա կսվեր ըստ պատմության խորենացվո, «վասն առաւել ժահադիմութեանն»։ Եվ կպատմվեր ալ անոր համար, թե «Յեզերս ծովուն Պոնտոսի դիպեալ նաւաց թշնամեաց՝ դիմէ ի վերայ. և ի խաղալն նոցա ի խորն՝ իբրև ասպարէզս ութ, և սա ոչ ժամանեաց նոցա. առնու ասեն վէմս բըլ-

բանեալ և ձգէ զկնի. և ի սաստիկ պատառմանէ ջուրցն՝ ընկղմին նաւք ոչ սակաւք. և ամբարձումն ալեացն, որ ի պատառմանէ ջուրցն՝ վարէ զմնացեալ նաւսն բազում մղոնս։ Ո՞հ, կարի է առասպելս, այլև առասպելեաց առասպել։ Նման մյուս առասպելին, որ կար Տորքա համար. «Բուռն հարկեալ զորձաքար վիմաց ձևոք... և ճեղքել ըստ կամաց... և քերել եղընգամբք իւրովք արծուիս և այլս այսպիսիս»[4]։

Այդուհանդերձ այս առասպելները զվարճության համար քիչ մ՝ ալ առաջ տանի՞նք և Տորքա նետած քարերն ալ փնտրե՞նք Պոնտոսի ալյաց մեջ. գոնե Գյունեի և Բաթումի բնակիչքն կավանդեն, թե իրենց ափունքեն ոչ շատ հեռու, ծովուն խորերը, մեծ քարաժայռի կտոր մը կա, վրան ձկանց պատկերներ գծված (քերյալ), որուն՝ ամեն տարի օր մը մոտ կուգան ձկունք, բոլորտիքը կպատին թափորապես և կանցնին կերթան։ Եթե պարզամիտ տեղացիք խորենացի կարդալու ըլլային, անշուշտ Անգեղյա Տորքա անվամբ պիտի կոչեին այն ձկնապաշտյալ, ձկնաքանդակ ծովասույզ քարաժայռ։ Բայց եթե իմ հայրենասեր հետեղոս չի հավնիր այս քարաժեռիս, ուրիշ մ՝ ալ նշանենք, գուցե պակաս առասպելյալ և ոչ պակաս ախորժելի և առաջինին ժամանակակից, վասն զի նույն Տորքը իշխանաշնող Վաղարշակա որդին և հաջորդն, Արշակն է ասոր հեղինակն ալ։ Ասիկա երբեմն «պատերազմելով ընդ Պոնտացւոց և նշանակ եթող յեզր ծովուն մեծի՝ զնիզակն իւր բոլորատէգ, որ էր արեամբ զեռնոց մխեալ. ձգեալ ի հետևակուց՝ խորագոյնս նստոյց յերկանաքար արձանին, զոր կանգնեաց ի ծովեզրն։ Զայս արձան՝ բազում ամանակս պատուեցին Պոնտացիք, որպէս զառ ի յաստուածոց գործ։ Իսկ ի գոռալն Արտաշիսի (որդւոյն Արշակայ) միւսանգամ ընդ Պոնտացիս, ընկեցեալ ասեն զարձանն ի ծով»։

Գուցե այս առասպելյաց վրա չզարմանալով, իմ վրաս զարմանա ընթերցողն թե ինչպես փութալով ասիական և հայկական հողը կոխելու, դեռ կտնտնամ ծովուն եզերքը։ Ա՜հ, ծովուն ծոցիքը շատ ծալլուն պլլուն են, և ով որ անոր ծոցը ծնած է, չի կրնար դյուրավ բաժնվիլ անկե, մանավանդ երբ առաջին անգամ և երկար ատենի համար պետք ըլլա հեռանալու ծովե, հրաժեշտն ալ երկար կքաշե։ Տրապիզոն, եթե երբեմն հայկական ձեռաց տակ ալ եղած ըլլա, բնիկ հայկական կալված չսեպելով և չախորժելով ալ քաղաքական կամ ուրիշ տեսչության խնդիրներ և ձայներ լրտեսելու, հոն կեցած քիչ օրերուս մեկ մասը ծովեզերքը անցուցի՝

անոր զարմանալի ձայները լսելու, որ ոչ մեկ ազգի լեզվին կնմանին, բայց ամենուն ալ հասկանալի են. ամենուն, որք սիրտ ունին լսող, քան թե ականջ։ Ասկե հետև ցամաքի մեջ պիտի որոնեի նախնյացս հիշատակները, հիմա հոս այս անկայուն, աննիշ, աննշխար ալյաց վրա ալ փափագեցա հայկական նիշ մը տեսնել, որչափ ալ դժվար կարծվեր տեսնելն։ Եվ ահա տեսա, որ մեր քիչ մ՝ առաջ հիշյալ թագավորաց ետքինն, Արտաշես, իր հորմեն ավելի կը հրամմեր այս ծովերուս և կհանձներ իր փեսային, Միհրդատա, «զկողմնակալութիւն հիւսիսային լերանցն և Պոնտոս ծովու» և հետո, «նուաճեալ զցամաքս միջոցաց ծովուն երկոցունց (Պոնտոսի և Կաղբից), լնու զովկիանոսս (Միջերկրական ծով) բազմութեամբ նաւաց, ծառայեցուցանել կամելով զբոլոր արևմուտս»։ Այնքան անտառներ տաշելով շատացուցեր էր նավերը, որ «յԵլլեսպոնտոս և ի Թրակէ, զտարերացն փոխեաց զբնութիւն. ծովագնաց ընդ երկիր բերեալ լիներ և ընդ ծով՝ հետևակելով. Թեսալացւոյն սպառնալով և համբաւն հիացուցանէր զՀելլենականն. կործանեաց զվակեդեմոնացիս, փախուցց զՓոկէացիս. Լովկիացիքս անձնատուրք եղեն. Բիւզանդացիք մասն են ի կալմածոյ նորա. առ հասարակ նմա Ելլադա մատուցանէր զահն»[5]։

Այս մեկ հատիկ հայոց թագավորն է, որ սև հոնքերը շարժեց, ճոճացուց Սև ու Ճերմակ ծովերու վրա, ցամաքասուն ազգը հանկարծ ծովակալ ըրավ, բայց «աւա՜ղ փառացն անցաւորի» ինչպես պատմիչն կկանչե, վասն զի ինքն հազիվ թե ծովակալ, իսկույն ծովակուլ եղավ, վասն զի «ոչ դիտեմ յորպիսի ազգմանէ, ահագին իմն ազմուկ լեալ շփոթից, բազմութեան զօրացն զմիմիանս կոտորեալ. իսկ Արտաշէս փախուցեալ՝ մեռանի, որպէս ասեն; յիւրոց զօրաց» և մեռանի ոչ ի ցամաքին, այլ ի ծովու սահմանին, ի ծայր արևմտից իշխանութեան, զոր ԾԱՌԱՅԷՑՈՒՑԱՆԵԼ ԿԱՄԷՐ, Հունաստանի հրաշակերտ Աթենական ափանց դիմաց, անոր և Եվբիու երկայնաձիգ կղզվույն միջոց, փոքրիկ կղզեկի՛ մը վրա։ Հոն, այն զարմանալի ջրոց անդնդապատույտ հորձանաց մեջ, ուր որ կբսեն, թե իրմե երկու հարյուր տարի առաջ, խմաստասիրաց իմաստնագույնն Արիստոտել, այն ջրերուն վաղվաղծքին պատճառը փնտրելով և չդտնելով, ինքզինքը մեջը նետած ըլլա, «Ծո՜վ, ես չկրցա զքեզ ըմբռնել, դո՛ւ զիս բռնե»։ Բախտավոր կըլլար Արտաշես, եթե միայն ծովուն հետ կռվելով հաղթվեր և ալիքներեն կլլվեր։ Հայկական նավատորմիղն հոն կոտորվեցավ, բայց ո՞ւր արդյոք դարձան

մնացորդքն։ Կէրեի, թէ նորէն մտան ի Մարմարա և անցնելով ի Բյուզանդիոնէ և ի Թրակյան նեղուցին, Եկան ելան հոս, ուր հիմա ես եմ, կամ առջի ցուցած տեղը, Սիթենոս և Վիծեի միջոց, Պորդանիս (գուցե՝ Վարդան) գետուն բերանը։ Գուցե նույն ինքն Արտաշիսի անվամբ, վերոհիշյալ ավանին քով, ուսկից դար ի վեր ելած երկիրն ալ՝ հիմակվան Համշինու կողմերն, գուցե այս նահաշինությանց նյութ և տեղի տալուն համար է, որ ՆԱԻԵԱՑ ԵՐԿԻՐ կոչված է ատեն մը, ինչպես ի գիրս հանդիպած եմ, և գուցե ասոր համար ալ այլազգիք նույն կողմի լեռներուն ՁԵՆԿԵԼԻՍՏԱՆ կըսեն։ Եվ թերևս այն հայկական իշխանության ատեններեն մնացած է այդ կողմի գետակներուն մեկուն անունն ալ, ԱՍՊԵՏ (որ թվի Գալորոդա՛մոսն հունաց), և (հետին գուցե մ՝ ալ), այդ Ասպետ անունն ալ եկած ըլլա Անգեղյա նահապետին թոռնեն, զոր այսպես կոչե պատմիչ մը։

Հիմա, առաջ քան զերեսս ի ցամաք դարձնել, նայինք վերջի անգամ մ՝ այլ այն համատարած ծիծղուն ու ծփուն երեսաց վրա, որ երբեմն սիրո հայելի, երբեմն մահու վիհ կդառնան։ այն ծածկված գծին վրա, զոր ես երեք օրվան մեջ կրակով կտրեցի, ի Բյուզանդիոնե մինչև ի Տրապիզոն, և զոր Արտաշես՝ Կովկասու և Կողքիսո մայրիներովը ծածկեց, քանի մը տարի այդ երկու մեծ քաղաքաց ալ տեր ըլլալով, չորս հարյուր տարի առաջ քան զԿոստանդիանոս։ Այդ մշտապատառ և մշտակարկատ միջոցին վրա, բարակ գիծ մ՝ այլ կա մեզի հետաքննելի, զոր ոչ այնքան առատպելն, որքան սերն հյուսած է։ Կպատմե մեր ԺԵ դարու վարդապետաց մեկն՝ Հակոբ, որ հավանորեն գիտնական Ղրիմեցին է, իր և Տրապիզոնի վերջին կայսերաց ատեն հանդիպած դեպք մը, զոր աշխույժ երիտասարդ բանաստեղծ մը կրնար հուշակել Լեանդրի տարաբախտ դեպքեն ավելի։ Կայսեր առջև ի Տրապիզոն դովեցին հայ պատանի մը, թե զարմանալի, աննման լուղակ է, ծովուն ոչ ընդարձակութեննեն կվախե, ոչ խորութեննեն։ Երկու թևերովը կրնա Տրապիզոնեն ինչվան Կոստանդնուպոլիս երթալ, եթե արժանավոր պետք մ՝ ըլլա։ «Եթե կարենա այն ճամբան լողալով ընել և դառնալ,— ըսավ կայսրը,— ինձի փեսա կընեմ այդ պատանիդ»։ Իսկույն Սև ծովուն ալիքն մարգարտաշար դիպակ դարձան պատանվույն առջև. նետվեցավ ջրերուն մեջ։ Կայսրն հրաման տվավ, որ ջիշերները անոր առջևեն նավով լույս տանին, որ ճամբան չըկորուսանե։ Սիրո լույսն ավելի վառ և պայծառ էր։ Ճղքեց ա-

լիքները, լողաց, գնաց «հազար միլ, հազար աւուր ճանապարհ» կըսե պատմիչն և ետ դարձավ նույնպես։ Բայց ո՞վ չար և վատ նախանձ, հակառակորդ սիրու։ Կայսրն գաղտուկ պատվիրեր էր, որ եթե իր և շատերուն կարծիքեն վեր հաջողությամբ պատանին պատռե անդունդները և «թե դառնա, նա՝ զնաւն ի բալաղօզն տուք։ որ մեռանի»։ Այսպես ըրին վատ հրամայողին վատթար հպատակքն, այն նորահրաշ ծովահաղթը հորձանաց մոլեգին շրջաններուն և կույր ճամբաներուն մատնեցին, թուլցուցին թևերն ու շաչուռ ջիլերը։ Եվ մինչդեռ հետ «հազար միլ, հազար աւուր ճանապարհի» Պոնտոսի ալյաց կանաչ կնյուններով մազերը պսակած պատանին Պոսիդոնեն ավելի ուժով մը պիտի ցատկեր ի ցամաք՝ կայսեր և անոր ձեռքը բռնելու, նույն հետին սև ու կապույտ կոհակներուն վրա, նույն կնյուններուն մեջ սպիտակ ծրարի մը պես տարածված մնաց, խաղալիք անհոգ ալիքներու և ավելի անհոգ մատնիչներու, գուցե և ևս ավելի անհոգ մեկու մ՝ ալ, որ հարս պիտի ըլլար։ Վասն զի պատմությունն, ոչ ասոր համար երբվա դիպվածը կպատմե և ոչ մեր պատանվույն համար՝ Պալինուրա վերջին բախտը*։ Նախանձողն իր որսը թողուց գնաց, Սեավ ծով քանիներո՞ւ արև չէ սևցուցած. ո՞վ պիտի հիշե մեր քաջալուղակ պատանին, որու անունն ալ չհասավ մեզի։ Սակայն նավազն անանախանձ է, նավաստիք, իրենց համարվեստը չեն մոռնար։ Միայն անոնք եղան, որ Տրապիզոնի ծովափանց վրա նստած, ողբացին և երգեցին այս հայ ծովային նահատակն. «Եւ նաւորդք,— կըսե հիշատակագիրն,— երգ ի բերան առեալ՝ ողբան զնա, Արմեն, Արմեն գոչեն, վա՜յ և եղո՜ւկ, ասեն»։ Եթե այդ երգդ Հոմերոսի և Վիրգիլյա արվեստը չուներ, չեմ տարակուսիր, որ ավելի ալ սրտառուչ էր։ Եվ գուցե իմ հոս, այս ետքի լսած ծովերու և հովերու խորհրդավոր փսփսուքին մեջն ալ՝ այնպիսի երգոց մը հեռավոր և վերջին արձագանքն ըլլան, ուսկից ահա կես հոժար և կես տրտում կհեռանամ կերթամ, ապահովություն մաղթելով ճամբորդաց, թե ծովու ալյաց վրա, թե ցամաքի...

---

* Պալինուր ըստ Վիրգիլիոսի, ենեաս նավուն նավապետն էր և մթան ու ժրրիկի ատեն ընկավ մեռավ ի ծովու։ Մարմինն քանի մ՝ օր ալյաց մեջ ծփալեն հետո, ի ցամաք ձգվեցավ և անթաղ մնաց, մինչև որ Ենեաս՝ դժոխոց այցելության իջած ատեն, լսեց Պալինուրա ողբը և թաղել տվավ։ Այն ատեն հեթանոսք կկարծեին, որ որոնց մարմիններն անթաղ մնան, հոգիներն ալ թափառական և վշտագին կմնան։

Գոնտոսի մայրաքաղաքեն կերթանք Հայաստանի հիմիկու մայրաքաղաքը, Տրապիզոնեն ի Էրզիրում։ Ետքինս, թեև բուն Հայոց թագավորանիստ քաղաք եղած չէ, բայց գոնե կես Հայաստանի մայրաքաղաք սեպված է, հազար չորս հարյուր հիսուն տարիե ի վեր, երբեմն հունաց (Բյուզանդիո) իշխանության բաժին եղած Հայաստանի, հետո Արաբացվոց, հիմա ալ օսմանյանց և դարերե ի վեր Հայաստանի ամենեն մարդաշատ քաղաքն է. քաղաքական, զինվորական և առևտրական տնտեսությամբ ալ առաջին քաղաքն ըլլալով, օտար չէ մայրաքաղաք ըսելս։ Տրապիզոնեն մինչև մեր քաղաքը միջոցն շիտակ գծով, հարյուր մղոնի չափ է, որ եթե դուրան երկիր մ՝ ըլլար՝ երկաթուղին կրնար զմեզ մեկ օրվան մեջ տանիլ բերել ասկից հոն և անկից հոս։ Հիմա միայն երթալու կամ գալու համար հինգ վեց օր պետք կըլլա կամ ավելի, ըստ եղանակի տարվույն և ընտրված ճամբուն, վասնզի երկու երեք կողմե ճամբա կա, թեև ամենն ալ անհարթ, անոր համար հիմա ձեռք դարնված է շտկելու դյուրին ճամբան և փափագելու է, որ դարձյալ չխափանվի։ Սովորական բանած երեք ճամբաներեն ամենեն դյուրին, բայց և ամենեն երկայնն, ամենեն ալ արևմտագույնն է. Կյումուշխանեի վրայով կտանի ի Բաբերդ, անկե ի Կարին։ Ամենեն կարճ, բայց ամենեն դժվարին և ձմեռ ատեն անգնալին է ամենեն արևելյանն, որ լերանց տափերուն վրա ունեցած արոտներուն համար ՉԱՅՂԸԼԱՐ կըսվի, իսկ միջինն թե՛ դյուրությամբ, թե՛ երկայնությամբ միջակ է։ Բայց այս ալ գրեթե անանցանելի է ի ձմռան և առջինին հետ կմիանա ի Բաբերդ։ Իմ բռնած ճամբաս այս միջինն էր։

Տրապիզոնեն ինչվան առաջին լերանց անցքը քսանից քսանհինգ մղոնի չափ է, ճամբան հիմա բավականին աղեկ շտկված, ՏԵԿԻՐՄԵՆ ՏԵՐԵՍԻ գետուն ձախ կամ արևմտյան կողմեն կերթա։ Հին ատեն այս Տրապիզոնի գետս Գիքսիդ կամ Գյուքսիդես կըսվեր, գուցե Տոսախուտ նշանակելով։ Ասոր մեկ (արևելյան) ճյուղին ծայրը հույնք Ս. ԳԵՈՐԳԱ վանք մ՝ ունին, երկու ճղերուն միջոց է ԽՈՇՈՂԼԱՆ գետն, ուր երիտասարդ կտրիճ մը, կըսեն, կտիրեր սուլթան Մեհմեդի՝ այս կողմերս եկած ատեն, որ իր ձեռքով սպանեց կտրիճը, հետո զղջալով, այսպես անվանեց տեղը։ Գետս միջին ճյուղն կըսվի ՄԵՅՐԵՄԱՆԵ, վասն զի անոր աղբերակաց քով, բարձրը և դժվարելանելի լերան մը վրա շինված է Տիրամոր վանք մը հունաց, ՍՈՒՄԵԼԱ կոչված, ուր Սինա լերան վանքին պես՝ միան-

ձունքն սանդղոք և չվանոք կախված կելլեն կիջեն, և որ արծվի բույնի մը պես քարալերան գագաթը դրված՝ բարձրեն կդիտե ղծով և գցամաք, բայց ալ ավելի խորագույն դիտեր է տերության փոփոխությունը։ Տրապիզոնի կայսերության վերցվիլը տեսավ, ինքն անշարժ մնաց. աշխարհակալ սուլթանն, կըսվի, թե ասոր հրաշագործ Տիրամոր պատկերին երկու հատ դերանաձև մոմ խավրեր է, և եկեղեցվույն դմբեթները կապարով սյուտեր է։

Այս Մեյրեմանե վտակն կիսառնվի արևելյան կողմեն եկած վտակին, որ Մաշուգա կըսվի։ Երկուքին անկյան միջոցն է ՃԵՎԻՋԼԻԿ գյուղավանն և ըստ հունաց ՔԱՐԻՏԻԱ,— գեղեցիկ դիրք և բուսաբերություն, ոչ միայն ընկուզենիք, այլև ինչվան և թզենիք կգտնվին, իսկ վայրի և ընտանի ծաղիկք՝ անբավ։ Ասկե քիչ մը վարով է քարաշեն հնդամատ կամուրջ մը, ուսկից ճամբան երկու կբաժնվի, մեկն արևմուտք ի Կյումուշիանե կտանի, մյուսն, որ իմ բռնածս է, դեպի արևելք, դար-վեր կհանե։ Ընկուզուտեն չորս ժամ և Սումելայեն երկու ժամ հեռանալով, լեռներու մեջ կելլենք, ուր իբրև հինգ հազար հինգ հարյուր հիսուն ոտք ծովուն երեսեն ի վեր, կհասնինք ԳԱՐԱԳԱՓԱՆ կամ ԿԵՊԱՆ գյուղը լերանց կիրճին մեջ, զոր կնշանակե գեղին անունն ալ, որ է ԿԱՊԱՆ ըստ Հայոց, ինչպես որ մերայինք կանվանեն լերանց նեղուցքը և շատոնց այսպես ըսված ըլլալն կվկայվի Տրապիզոնի կայսերաց և ՃԵՆՈՎԱՅԵՆՈՑ դաշնագրության մը մեջ, համին 1314, որում ԳԱՊԱՆՈԻՄ (Cabanum) կանվանի Կապանն, Ընկուզյաց կամուրջն ալ՝ Pons Carini (թե որ չուզենք Կարնո կամուրջ անվանել)։ Կայսրն կխոստանար պաշտպանելու ճենովացվոց վաճառաբեր կարավանաց. այն ատենեն և ավելի առաջուց ալ՝ Հնդկաց և Պարսից վաճառքն այս և ուրիշ լերանց գագաթներեն կելլեին, կիջնեին ի Կարին և ի Տրապիզոն կհանգչեին ժամանակ մը. Կարին վաճառուց մեծ փնդուկ մ՝ էր, Տրապիզոն՝ Կարնո նավահանգիստ կրնա ըսվիլ։

Սև Կապանեն դուրս կամ վեր ելնելուդ՝ նոր աշխարհ մը կըտեսնես, որ շատ հաճո չէ աչաց, թեև ձյունապատ չըլլան բարձունքն՝ աղեկ եղանակի մեջ, սակայն միշտ չոր ու տկլոր են։ Ծառերն կնվաղին, ժայռերն կբազմանան, ժամերով ճամբա կըլլվի գեղ մը չերեվար, հազիվ տեղ տեղ առանձնակ տուներ կամ հյուղեր՝ բարձրավանդակի մը վրա տնկված, բույնի կամ դիտարանի նման, որ արդարև կհիշեցնեն հին, երկու հազարամյա աշխարհագրաց նկարագիրն այս կողմերուս ցեղ մը բնակաց, որք ՄՈՍՅՈԻՆԵԿՔ

կրսվեին, գուցե ՄԻԱՅՈՒՆԻՔ, վասն զի կրսեն, թե սյան պես նեղ աշտարակաձև տուներ ունեին և մեկմեկե շատ հեռու։ Հասնինք ուրիշ Կապանի մը, որ առաջինեն շատ ավելի բարձր է, գրեթե ինն հազար մետր ծովուն երեսեն վեր, ԽՈՒԼԱՌ ըսված լերանց մեջ, ՔՈՒԼԱՊԱՏ—ՊՈՂԱՋ կոչված ի Թուրքաց. լեռներն ալ Խաղտահայոց լեռներն են և անջրպետք հայոց և Պոնտոսի ջրերուն։ Այստեղս արժանի է հայոց բարձր սահմանաքար մը կամ դուռ մը սեպել և հիրավի բնապատում աշխարհագիրն Պլինիոս, ԽԱՂՏԱՀԱՅՈՑ ՊԱՀԱԿ կամ ԿԱՊԱՆ կոչե։ Pylae կամ Fauces Armenochalybes։ Հայաստան աշխարհաքաղաքը շինող ճարտարապետն, Տերն, այսպիսի դռներ ալ հագուցեր էր անոնց լեռնապարսպաց և այսպես ճանչցեր էին բնիկք և օտարք, ինչպես որ տեսանք այս Հյուսիսային արևմտյան դրան անկյունը, այսպես ալ Հայաստանի արևմտյան հարավակողմը կար ծանոթ ՀԱՅՈՑ ՊԱՀԱԿՆ կամ ԴՈՒՌՆ, Armeniae Pylae, Կերկեն գալեի քով, Եփրատա և Տորոսի անձուկներուն մեջ։ Հարավակողմը կային քանի մը Դրունք կամ Պահակք, զոր Բյուզանդական հույնք ՔԵԼԻԶՈՒՐԱ (փականք) կոչեին և անկե ոմանք մերայինք ալ ԿԼԵՍՈՒՐ կամ ԼԵՍՈՒՐՔ անվանեցին, ինչպես ԿԼԵՍՈՒՐՔ ԱՂՁՆՅԱՑ և ԿԼԵՍՈՒՐՔՆ ՋԵՐՄԱՁՈՐՈ որ և ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ԴՐՈՒՆՔ, որ կամ զատ, կամ նույնիսկ Բաղիշու և Ռահվայի ճամբան էր, որ հիմա սովորական բանածն է այս կողմեն։ Ա՛լ ավելի արևելք երթալով, Հայոց և Ատրպատականի միջոց՝ Ջարասպ լերանց անցքը կա, քովն ալ ՀԱՅՔ անունով գեղ մը։ Իսկ հայոց բուն արևելյան կողմը մասնավոր դրան պետք չուներ, վասն զի քիչ մը հեռուն Կասպից ծովը կպատի։ Ասոր եզերքն է Հայաստանի հյուսիսային արևելյան կողմը, Կովկասա և ուրիշ լերանց ամենեն հռչակավոր ՊԱՀԱԿՆ կամ ԴՈՒՌՆ, որ զանազան անվամբ կկոչվի, Ճորա, Հունաց, Դարբանտա, Երկաթի, Աղվանից և այլն։ Բուն Հայոց սահմաններն ինչվան հոս չէին հասներ, բայց մեր հզոր թագավորներուն ձեռքն հասան։ Նաև Վարդանանք, այս Դրանս տիրելով, իրենցմե արքայազարմ իշխանի մը պահպանության հանձնեցին, իսկ Հեթում պատմիչ ինչվան հոս կհասուցանե Հայոց սահմանները։ Այս աշխարհածանոթ Կովկասյան լերանց պարսպաց մեջ (վասն զի պարսպի պես երկայնաշար ձգված են Սեավ և Կասպից ծովուց միջոց), քանի մ՝ ուրիշ դռներ կամ Կապաններ կամ անցքեր ալ կան, բայց մեկ հատն է ամենեն նշանավորն, ԴՈՒՌՆ ԱԼԱՆԱՑ, որ հիմա ալ ՏԱՐԻ—ԱԼԱՆ կրսվի նույն նշանակությամբ

և Հայաստանի Հյուսիսային Դուռն կրնա ըսվիլ և ատեն մը, հիրավի ինչվան հոս ալ հասած է Տրդատա իշխանության սահմանն։ Իսկ իր հայրն Խոսրով, ոչ միայն Ճորա պահակեն անդին արշավեր էր իր հորը մահվան վրեժն առնելու, այլև բոներ էր այն դուռը իրրև սեփական իրեն, ինչպես որ Ագաթանգեղոս կիմացնե. «Սկսանէր Խոսրով... բանալ զդրունս Ալանաց և զիւրոյ Պահակին, հանել զգօրս հոնաց, ասպատակ դնել ի կողմանս Պարսից»[6]։ Այսպիսի դոներ ունող և ուզած ատեն փակող և բացող տանուտեր մը հարկավ հզոր և հարուստ պետք էր ըլլար, Մեծ ոմն, տնվորքն ալ կրոնային խաղաղ և երջանիկ ապրիլ։

Խաղտահայոց դոնեն անցնելով, վերջին բարև մ՝ ալ տվի ծովուն, զոր այսպիսի բարձրութենե մը կնշմարեի միայն արևու ճառագայթներով փայլած հայելվո կտորի մը պես և դարձա դեպ արևելյան հարավ, ուր նոր տեսակ ծով մը, մանավանդ թե ալիք՝ ըսկրսան երևալ։ Ոչ ընդարձակություն դաշտաց, ինչպես որ բարձր լեռնե նայող մը սովորաբար կտեսնե ցամաքի վրա, այլ մրրկած և փրփրած ծովու մ՝ երես։ Սև ու ճերմակ ալիքներու նման լերանց կոհակներ, լերկ ու մերկ, որ տիտանական զգացմունք մը կուտան տեսնողին, մանավանդ եթե ամառն հասած չըլլա. դեռ շատ լերանց և լեռնադաշտից վրա ձյունն տարածված է. կանաչ պատ մը կամ ոյուն մը բնավ չերևիր, այսինքն ոչ անտառ և ոչ ծառ։ Ասիկա մեր աշխարհին հիմկու մեծ բնական պակասությունն է, զոր ամեն ճամբորդք կհիշեն և էրդիրումեն մինչև ի Դավրեժ, երկրին մեկ ծայրեն մեկալ ծայրը ծառ մը չտեսանք, կրսեն և սուտ ալ չէ այն կարավանի ճամբուն վրա, մանավանդ եթե ձմեռն ըլլա։ Բայց իհարկե աղեկ եղանակին կտեսնեն դաշտաց և լեռնատափից սքանչելի կանաչությունն ալ, հարուստ արոտներով, վայրի ծաղկամբք և թփովք, որովք ի սկզբանե հռչակված էր Հայաստան իբրև ողեկ և ընդարձակ տեղվանք ունեցող ոչխար և պախրե և ձիան արածելու. ինչվան հիմա ալ այնպես է։ Կտեսնեն անշուշտ և կվայելեն ալ երկրին՝ առատ և համեղ բանջարեղեններն և ընդեղենները, նաև անուշակ և ընտիր պտուղները, որ քիչ մը ցած դաշտաց և հովտաց մեջ առաջ կուգան, նաև Վանա հինգ հազար ոտք բարձր ծովադաշտին եզերքը, իսկ ցորեն և ուրիշ արմտիք ինչվան վեց հազար ոտք բարձրության վրա կգտնեն, լեռնային բույսեր և ծաղիկներ նաև տասը հազար ոտք բարձրութենե ի վեր ալ։ Կրնան տեսնել նաև ոչ քիչ անտառներ Բասենի ԱՆՓԱՅՏ դաշտեն ջիչ հեռու, Սողանլու լերանց

երեսը, Բաղիշու և Մոկաց միջոցը ընդարձակ կաղնեստան, որո համար «Փայտի աշխարհ» կոչված էին այն կողմերը։ Մեր աշխարհին հյուսիսային մասին՝ Գուգարաց աշխարհին մեջ կան շատ անտառներ ու մշտադալար ծառեր. արևելյան կողմը անվանի էին և են Արցախի Մայրիքն, անկից դեպի հարավ ոլորելով՝ Սյունյաց երկրին և անկե Երասխ գետով բաժնված երկրին արդի անուններն՝ ԳԱՐԱՊԱՂ և ԳԱՐԱՏԱՂ, վկա են ծառոց և անտառաց, թողունք ուրիշ կողմերը։

Եվ եթե մեկն, Հայաստանի գետնին ընդհանուր բարձրությանը նայելով (երկու հազար հինգ հարյուր ոտքեն ինչվան վեց հազար) չհավատա այսչափ ծառ ու փայտ բերելուն ալ՝ կրնանք նակ հիշեցնել իրեն, որ հին ատեն ավելի շատ էին հոն անտառք, բայց անհոգությամբ կտրվելով և նոր չտնկվելով՝ պակասած են և ոմանց հետքն կերևին մինչև այսօր, և տեղ տեղ հին և ահեղ ծառեր ալ կան. վկա ըլլա Ուրտապարի հրապարակին սոսին, որ երկրիս ծանուցյալ ստվարագույն ծառոց մեկն է։ Այս խոսքերնուս զարտուղությունն ալ վերջացնելով, ճամբա ելլենք։

Արևմտյան (Կյումուշխանայի) ճամբան թողլով, դարձա ի արևելք։ Երկուքին միջոց լեռ մը կա ԿՈՐՈՄ կամ ԿՐՈՄ անվամբ, ասոր վրայեն ալ պետք եղավ անցնիլ, որ գրեթե ինը հազար ոտք (ութ հազար ինն հարյուր քառասուն) բարձր է, և արևմտյան ստորոտը համանուն գյուղը կա, իմ ճամբես դուրս և արժանի հետաքննության։ Վասն զի բնակիչքն հատուկ բարք և կրոնք մ՝ ունին, կես-կես, դրսեն մահմեդական, ներսեն քրիստոնյա և իբր վատ ազգ կամ ժողովուրդ մը, ԿՐՈՒՄՅԻ, կամ ԿՐՈԷՄԼՈՒ կանվանին ի Տրապիզոն։ Լեզունին հունարեն է, արվեստով շատերն որմնագիր են և կբնակին Կյումուշխանեի գեղերուն, նաև քաղքին մեջ ալ։ Երբ 1856 թվականին կրոնից ազատություն հրատարակեցավ, շատերն համարձակ քրիստոնյա երևցան[7] և պաշտպանություն գտան հունաց եպիսկոպոսեն և Եվրոպացի հյուպատոսներեն։ Գուցե ավելի ևս հետաքննության արժանի է ուրիշ ժողովուրդ կամ ցեղ մ՝ ալ, որ այս կողմերուս հին անվամբը մինչև հիմա ԽԱՀՏ կկոչվի և անծանոթ չէ Տրապիզոնացվոց, բայց կարծեմ ոչ ոք քննած է ազգագրական և լեզվաբանական տեսությամբք։ Ինձի երևցածն այս է, որ ասոնք են բնիկ սերունդք կամ մնացորդք Խաղտյաց հին ազգին, որուն հետ խառնյալ և խնամացյալ հայք ըսվեցան Հայախաղտիք կամ Խաղտահայք։ Հին հույն և լատին հեղինակք քիչ անդամ Խալտ կամ

Քալդեի (Քաղդեացիք) կըսեն ասոնց, այլ ավելի հաճախ ԽԱԼՅՈՒՐ կամ ԱԼՅՈՒՐ, զոր ինչվան Հոմերոս իսկ կհիշե, ապրին հետ արվեստըն ալ իմանալով, որ է բովագործք, պղնձագործք, երկաթագործք և զնույն կճշմարտե իրենց հիմկու բնությունն ալ այս կողմերս, դեպի Կյումուշխանե և ի Բաբերդ։ Այս նաքի հիշյալ տեղս Խողայաց գլխավոր կենտրոն սեպվեցավ մեր պատմության ծանոթ տաճարները և Բյուզանդացվոց կայսերության առջի դարերուն։ Բաբերդ, ավելի հին ատեն Սպեր աշխարհին կամ գավառին մասն եղած կթվի, հետո առանձին գավառ մ՝ եղած և հայոց աշխարհաց հետ միացած, որով խաղտիք երբեմն բնիկ Մեծ Հայոց մասն կանգվին, երբեմն դրակնից և վիճակակից աշխարհ մը, նման Փոքր Հայոց։ Ահա այս (Բաբերդու) երկիրն է, որ կմտնենք հիմա, Պոնտոսի և հայոց ջուրերը զատող լեռներեն իջնելով, արդեն Ճորոխի օժանդակ գետակներուն հեռագույն և առաջին վտակ մը, թողնված Պղնձահանքի մը (ՄԱՏԵՆ—ԽԱՆ), և քարաշեն կամուրջին (ԹԱՇ—ՔՈՓՐՈՒ) քովեն անցնելով կերթա, կտանի, կմտցնե դեպ մեր բնիկ աշխարհը։

Մեր կամ բնիկ հայախաղտյաց սահմանին վրա առջին հանդիպած շենքն է պզտի գյուղիկ մը ՎՉԵՈՒՆԻԿ, որ կարծես թե իր անվան համեմատ այս Փոքր և Մեծ Հայոց, Կողքիսի և Պոնտոսի լեռանց միջոց երկնցած երկրին վրին վրան է, հինգ հազար ութ հարյուր տասներեք ոտք բարձր ծովուն երեսեն։ Այն վտակն, որ ասոր քովեն կանցնի կերթա ի Բալահոռ, անոր անվամբ կկոչվի. հարավային կողմեն կուգա ԼՈՐԻ կամ ՍԱՄԱՆ—ՍՈՒ վտակն, երկուքին միջեն Մասատ, որ անոնցմե մեծ է և իրարու խառնվելով կանցնեն Ճորոխ գետը, որ մեր աշխարհին չորս մեծ գետերեն վերջը, մեծագույնն է ուրիշ գետերեն։ Միայն այս Բաբերդու և Սպերու գավառներն ու Հայոց աշխարհը կոտոգե ի Հայս և կդառնա ի հյուսիս, Կողքյաց կամ Եգերաց աշխարհը կիջնե ու անոնց բնիկ գեղը (Աճարա) առնելով, կթափվի ի Սև ծով, Կյունեի և Պաթումի միջոց։ Կկարծվի թե, Սուրբ գրոց հիշյալ ՓԻՍՈՆ գետն ալ այս է, որ կպատեր զերկիրն Խավիլատա կամ Եվիլատա և հիրավի Ճորոխ կպատե նախ՝ Խաղտյաց երկիրը, վերջը ուղղակի ի հյուսիս կընթանա։

Վգեոնիկեն անցանք ի ԽԱՂՏԱԿ, անկե ի Բալահոռ, թողլով ուրիշ իջևաններ և Ղավուխ սրածայր լեռը, ուսկից կանցնին ոմանք Կյումուշխանե կամ Գարահիսար (Շապխանե) երթալու համար. 1829-ին, Ռուսաց հռչակավոր Պասկեվիչ զորապետն ինքնին ձիով

ելավ այս լերան վրան, օսմանյանց բանակը դիտելու Բալահոռի դիրքն (5020 ոտք ծովուն երեսեն վեր), Բաբերդու դաշտին բերանը, ուրիշ մերձակա գեղերեն ավելի բազմամարդությունն և ալ ավելի բնակարաններու հետքեր, կիմացընեն, որ հին ատեն նշանավոր տեղ մ՝ եղած պիտի ըլլա, գոնե Միհրդատա և Լուկուլլոսի պատերազմաց ատեն։ Շատ տարի չէ, որ պզտի դպրոցիկ մը հաստատած են հոս մերազգիք, իրենց եկեղեցվույն քով, բայց բնակչաց մեծ մասն այլազգիք են, որք երկու դար առաջ գրեթե բնավ չկային հոս, բոլորն ալ Հայազգի էին։ 1694-ին, հոս դիշեր մ՝ անցուց ՃԵՄԵԼԼԻ իտալացի երևելի ուղևորն և հոն դտավ Հայագետ քարոզիչը՝ Հակոբ Վիլլոտ, որ ժողովրդյան քրիստոնեական վարդապետություն կըներ և դյուրավ սովրեցնելու համար բարեպաշտիկ խաղ մը մնարեր էր, որով աշակերտքն ալ բազմաթիվ կրլլային, մեծ ու պզտիկ։

Բալահոռեն ինչվան ի Բաբերդ, հինգ ժամու ճամբա է, այս միջոցս կան շատ Հայանուն գեղեր, որոնք պատմական նշանակություններ ալ պետք է ունեցած ըլլան, ինչպես ՕՉՏԵՂ, ուսկից էր գիտնական վարդապետն Սրապիոն ԺԶ դարուն վերջը, որ առաջնորդ եղավ մոտավոր ՎԱՀԱՆԱՀԵՆ կամ ՎԱՆՇԵՆ վանքին, ուսկից հեռու չէ Ս. ԼՈՒՍԱՎՈՐՉԻ վանքն ալ, որուն պատերուն վրա օձի նմանություններ կգտնեն բնակիչք տեղվույն և անկեց գեղին անունն ալ ԳՈՒՉԻ, ուսկից էր Վարդան Հովնանյան, դիտուն սրբեպիսկոպոս Լեհաստանի, ի վերջ ԺԷ դարու և այլն։ Ասոնցմե ավելի նշանավոր է Բաբերդեն երկու ժամ հեռի Հյուսիսակողմը ՎԱՐՉՈՒՇԱՆ ավանն, գուցե Վարաղավան կոչված հին ատեն. անունն, պարսպաց մնացորդքն, ավերակ եկեղեցյաց հետքերն, որոց թիվը քանչորսի կհասնեն տեղացիք. թեև հիմա միայն երեքն որոշ կերևին, կիմացընեն, որ նշանավոր տեղ մը, քաղաք մ՝ էր հին ատեն։ Բայց պատմության մեջ չեմ հիշեր, իսկ կիսավեր եկեղեցյաց մեկուն մեջ, սյան մը վրա թվական մը կա հինգ հարյուր տարիե հին, «ՉՁԹ (1340), ի բարեխաւս Ֆրանկին», որ ֆրանկ անունով մեկու մը հիշատակ խաչ մը քանդակված կնշանակե. իր երկու հազար տանց տեղ, ինչպես որ կավանդեն թե ուներ, հիմա հազիվ քսան տուն կա։ Բայց այն եկեղեցյաց մնացորդներուն մանր քանդակներն, կիսակործան գմբեթներն. վայելուչ ձևերն և մանավանդ պատերուն գունաներկ պատկերներն. բավականեն ավելի կիմացնեն տեղվույն հարստությունն և բարգավաճանքը. փոքրիկ Անի մը կրնանք բսել.

գուցե Գենուացոց վաճառականությամբ ալ ծաղկած։ Ասկե հարյուր հիսուն տարի առաջ, լատին քարոզիչ մը (Հ. Մոնիե), այսպես կը-գրե, այս տեղես անցնելով (1711 թ.) «A juger de ce lieu par les masures de deux grandes églises ornées de masaigues et par les autres restes d'un grand mausolée, il est à croire qu, il etait ocurefois plutôt une ville quune village»: Կերևի թե պզտիկ գմբեթավոր եկեղեցին է mausolée (շիրիմ) կոչածը։ Ամեն տեսնող ճամբորդք հիացեր են այս շենքերուս վրա, որոց մեկն ալ եղած է անշուշտ վերոհիշյալ լատին քարոզչեն առաջ երանելի տեր Կոմիտաս նահատակին եղբայրն, Երեմիա Ջելեպի. «Տեսաք այօք... (կրսե)ի Բաբերդու գաւառն կամարակապ եկեղեցիք, յորինեալ պատկերօք, զորս ի նկատելդ՝ կարծէ ոք թե վարդապետն նոր է նկարեալ զպատկերսն. և սուտ չասեմ թէ պակաս լինի արհեստ նկարին քան զյունաց նկարեալս. հիացուցանէր զմեզ և լացուցանէր զտեսողս. հինգ դրամբք եկեղեցի և հինգ խորանաւ և ութսուն փէնչէրիւ. յորոց միջի հօտք դաւրից (ոչխարաց) պառկէին»։ Միայն այս տեղս չէ, որ տավարները տավաղած տեսանք և լացինք։ Այսպես էր Անին ալ և ուրիշ հին քաղաքատեղիք, մայրաքաղաքք հայոց։ Հոն ալ լացինք, կուլանք և պիտի լանք, և մինչև ցե՞րբ... կրա՞նք արդյոք վայրկյան մը մխիթարվիլ, տեսնելով այսպիսի ավերակաց նշխարիկ մը, պատկերիկ մը, ստվերիկ մը...

ԲԱԲԵՐԴ. Պոնտոսի և հայոց մայրաքաղաքաց միջոց և գրեթե հավասար հեռու երկուքեն, ամենեն մեծ շենքն է Բաբերդ քաղաքն, զոր կրնամք մայրաքաղաք Խաղտեաց, գոնե Խաղտահայոց անվանել, որովհետև ի միջին դարս մեր այսպես սեպված է։ Իսկ ավելի հին ատեն, կարծեմ, որ մեր բնիկ Սպերաց աշխարհին մասն էր սա և մեկ հին մերազգի Բայ կամ Բաբ անուն նահապետե մը շինված ամուր բերդ, ԲԱՅԱԲԵՐԴ կոչված այն ատեն, հետո սղելով՝ Բայբերդ և այլազգյաց՝ Բայբուրդ։ Վասնզի Բագրատունիք, որ առաջ քան զքրիստոնեական ժամանակս և հետո ալ՝ նախ Սպերս կողմերը ժառանգություն առած էին, Բաբերդն ալ անոր մեջ

---

* «Եթե զատելու լինենք այս վայրի մասին, ելնելով խճանկարներով զարդարված երկու հսկայական եկեղեցիների շինություններից և խոշոր դամբարանի մնացորդների առկայությունից, ապա կարող ենք մակաբերել, որ նախկինում այստեղ գոյություն է ունեցել ոչ թե գյուղ, այլ քաղաք»։

կրովանդակեին։ Ա. դարուն վերջերն, Սմբատ այրաքաջն ասոր ա-մուր բերդին մեջ ապահովցուց իր երկու դստերքը՝ Սմբատանույշ Սմբատուհի, երբ Երվանդա դեմ պատերազմելու գնաց և պաշտպանելու զԱրտաշես Բ, իր սանիկը։ Քաղաքը հինգ հաղար ոտքեն ավելի բարձր է ծովու երեսեն. Ճորոխ գետույն այն արևմտագույն ափանց վրա, ուսկից սաստիկ վազքով կդառնա ի արևելք և մեծավ շառաչմամբ զառ ի վայր կընթանա կամ կթափվի, ատոր համար Տելի ՃՈՐՈԻԽ կանվանեն Թուրքք։ Այս հայոց արևմտյան հյուսիսային ծայրի առաջին քաղաքն Փարիզեն երկու և կես ժամ առաջ կտեսնե զարևածագ։ Քաղքին հետևեն, հյուսիսակողմը բարձր լեռ մը կա, վրան կերևին մնացորդք հին բերդի։ Արդյոք ա՞յս էր Սմբատա դստերաց ապաստանարանը, ուսկից հանեց զիրենք Երվանդ և քշեց ուրիշ բերդ մը, թե՞ արդյոք Հուստինիանոս կայսեր նորոգած բերդն է։ Բայց հիմա քաղաքին բուն բերդն անոր արևելյան կողմի քաղաքալերին վրա է, որ ի կես ԺԱ դարում դեմ դրավ Տուղրիլ՝ Սուլթանին ասպատակաց, վասնզի հոն դտվեցան այն ՔՏԵՆ ՀՈՒՅՆ և ՓՈՒԱՆԿ ղորք ալ, ինչպես կըսե մեր ժամանակակից պատմիչն Լաստիվերտցի, բայց քիչ ատենեն նորեն եկան և տիրեցին Թուրքք։ Այս ցեղին տիրապետության նշաններն ալ կան բերդին վրա, Գլըճարսլանի անվամբ արձանագրություն մը, առյուծի և ընձու քանդակք դրան վրա, թեև հունական կամ բյուզանդական նշաններ ալ կերևեին, որք ավելի տլ շատ էին 1829-ի պատերազմներեն առաջ։ Ռուսք ոչ միայն ավրշտրկեցին այս տեղս ալ, այլև միջեն հնության հիշատակները վերցուցին, որոց մեջ, ռամիկն կըսե, թե կար նաև արծաթե որորան մը։ Բերդին մեջեն ինչվան Ճորոխի ափը, քարուկտոր ճամբա կա ջուր հանելու համար և երկու մեծ ջրամբարաց մեջ լեցնելու։ Հայաստանի շատ քարաբերդերն ալ ունին այս ջրամբարները և ճամբաները, զոր ՃԼԱՄԲՈՒԼԱ կանվանեն ոմանք ռամկորեն։

Բերդին մեջ հին եկեղեցվո ավերակ մը կա ըսին, զոր չտեսա և ոչ ալ ՈՒԼՈՒՃԱՄԻ մզկիթը, որ ատենոք քաղքին գլխավոր եկեղեցին էր։ Հիմա Հայոց ձեռք չորս եկեղեցի կա, որ շատ մեծ և պայծառ չեն և ոչ ալ շատ հին. գրոց մեջ ԺԷ դարուն սկիզբները կհիշվին Սուրբ Աստվածածին և Հրեշտակապետ եկեղեցիք։ Քաղքին արևելակողմը, բարձր դրից վրա է քրիստոնեից գերեզմանոցը, ուր տեսա ՊՁՁ (1437) թվականը։ Ոմանք ըսին թե ԺԲ թվականավ քարեր ալ կան, որպես թե Քրիստոսի հինգ հարյուր վաթսուներեք

թվին գրված, ինձ այնպես կերևի, թե անոնց առջի հարյուրանիշ թիվն ավրված և տեսված չէ։ Իմ գիտցած հայտնի և ստույգ հնագույն հայ թվականն է Բագրեվանդա Ուշքիլիսե մեծ եկեղեցվույնը, ՉԳ, որ է վեց հարյուր երեսունչորս Քրիստոսի թվականն, թեև անկե հին շենքեր ալ կան ի Հայս, կրնան գերեզմաններ ալ ըլլալ, նույնպես և ավելի հին։

Տաճկաց գերեզմանոցին մեջ ալ կան աղեկ շինվածներ, ինչպես են նաև անոնց երկու ուխտատեղի եղած շիրիմքն քաղքին արևմտակողմը։ Քաղքին կենդանական շինվածոց մեջ նշանավոր է Բեհեզնոցն, կամ Կերպասանոց (Պեզեստեն), չորս գմբեթով, բայց մթին է, մեջն ալ մաքուր չէ։ Գլխավոր վաճառքն կրնան ըսվիլ արմտիք և ոչխար, այս ետքինս այնչափ անվանի սեպված էր, մինչև թուրքաց մեջ առակ ելավ, «Ծրզընճանըն պեզի, Քեմախըն թուզու, Պայպուրթուն գուզու»*, բայց ոմանք ալ «գրզը» կըսեն, խնդիրը շատ կփոխվի։ Բաբերդու բնակիչքն ութ հազար տուն կսեպվին, որոց մեկ հարյուրն է մերազգյաց։

Բաբերդեն Կարին երթալու երկու ճամբա կա. գոնե քաղքեն շատ մը հեռանալեն հետև ճամբան երկու կբաժանվի, միշտ դար վեր ելլելով Ճորոխի վազվածքին դեմ, որ իր աղբերականց և Բաբերդի մեջտեղվանքը կընդունի հարավակողմեն վտակ մը։ Սա իր բխած լերան անվամբ ԿՈՓ (Քոփ-դաղ) կըսվի, աս ջրերուն խառնըվածքին մոտ է Մատեն-Քյոյ, կամ Ջալվար Մատենի (ըստ ոմանց՝ ՀԱԼՎԱ) մեծ Պղնձահանք մը, ուր հինգ հարյուր հոգի կաշխատեին և տարին քսան կամ քսանհինգ հազար օգգա կհանեին և չիզտված օգգան տասնհինգ դահեկան մը կուժեր։ Փորած գուբերը ինչվան հազար չորս հարյուր ոտք խոր են, բայց հիմա երեսի վրա թողված են, ջրով լեցվելուն համար, նույնպես ալ այնպես թողված են ասոր քովի հանքային ցրտաղբյուրներն։ Պղնձահանքեն քանի մը ժամ հեռու, կմնա դեպ արևելք ՄԱՍԱՏ գեղը, որո անվամբ կկոչվի Ճորոխի առաջքը և անցած ձորահովիտն ալ՝ ՄԱՍԱՏ—ՏԵՐԵՍԻ։ Հարկ է, որ հին ատեն բազմաշեն տեղ մ՝ եղած ըլլա Մասատ, ուր ես չգացի, Կոփա ճամբան բռնած ըլլալով, որու վրա կան իրարմե ոչ շատ հեռու ԱՎԵՐԱԿ և ՓՇԱՎԵՐԱԿ գեղերը, որոնց անվանք հի-

---

* «Ծրզնկայի կերպասը, Գամախի թուզը, Բայբուրդի ընկույզը»։ «Գուզու» (ընկույզ) բառը «գրզը» (աղջիկներ) կարգալու դեպքում, ստացվում է վրաերաց բառախաղ «Բայբուրդի աղջիկները» (ծան. կազմողի)։

բավի փուշի պես կխայթեն միտքը, բայց և հին հիշատակաց հույս կուտան և անցյալ շինության։

ԿՈՓ գեղն համանուն լերան հյուսիսային ստորոտն է։ Այս լեռնեն, որ մոտ տասը հազար ոտք բարձր է, ամառ ատեն կանցնին սրտոտ ճամբորդք, քովը, արևելակողմը, ավելի բարձր լեռ մը կա, գուցե տասներկու հազար ոտք և ավելի և գրեթե միշտ ձյունապատ ըլլալուն համար ԱԳ—ՏԱՂ կըսվի։ Ասոր արևելյան կողմն է ԽՈՇԱԲԲՈՒՆԱՐ լեռն, ուսկից սովորաբար կանցնի կարավանն Կարնո, թեև այս լեռնանցքն ալ ութ հազար երեք հարյուր քսան ոտք բարձր է ծովուն երեսեն և անոր անվամբ կկոչվի բոլոր այս լերանց շարքն ալ, իր ստորոտն եղած գեղն ալ, որ հարկավ կարավանաց իջևանատեղի պիտի ըլլա։ Այս լեռներս արևմուտքեն ինչվան Փոքր Հայոց խորերը կերթան, արևելքեն՝ Վրաստանի սահմանները և կբաժնեն Ճորոխի և Կուրա ջուրերը, Եփրատա և Երասխա ջուրերեն։ Ասոնց ստորոտեն կսկսի բուն Մեծ Հայոց սահմանն։ Կոփա հարավային երեսն կնայի Կարնո դաշտին վրա, Եփրատա առաջին կայտառ ու պայծառ վտակները կսկսին եռալ։

Կոփա գագաթեն չորս դի նայելով, շատ զգալի և զարմանալի կերպով մը կերևի ընդարձակ և ահեղ լեռնածով մը։ Առջի բերան՝ խառնակույտ մը լերանց սև և սպիտակ գլուխներու, բայց ջիլ մ՝ ալ դիտելով, կորոշվին չորս գոտիք լերանց, որոց մեկն նույնիսկ մեր կոխածն է՝ Կոփա կամ Խոշարբունարի պարն, զոր Խաղտահայոց լերինք կոչելու է. հին հույնք կթվի թե ՍԿԻԴԻՍԻՍ կանվանեին զաս։ Երկրորդ պարն մեր անցածն է, այսինքն Սեավ ծովու ամենեն մոտի լեռնագոտին, զոր և բնիկ Պոնտական լերինք կոչելու է, իսկ մեկալ երկուքն առջևնիս է մեր աշխարհին սեփական։ Մեկն Կարնո դաշտին հարավային եզերքեն կտարածվի դեպի արևելք և արևմուտք, բաժնելով զԵփրատ Երասխա և Արածանվո (Մուրատ-սու) և Այրարատյան լերանց հետ կխառնվի, անոր համար բուն հայկական լերինք կոչվելու է։ Իսկ մյուսն կամ չորրորդ լեռնագոտին, որ և ամենեն հարավայինն, Եփրատը Տիգրիսեն կբաժնե և Տորոսի թեն է, կրնա Տավրահայոց լերինք ըսվիլ։ Հայկական լերանց երկու կողմը ինչվան մեկալ մերձավոր լեռնագոտիները՝ Հայաստանի անվանի բարձրավանդակն է համետաձև բարձրացյալ, ընդ մեջ Պոնտոսի դարափանց և Միջագետաց անապատաձև դաշտերուն։

Կոփեն իջնելով Կարնո քաղաքը երթալու համար, այլևայլ գիծ

կրնա բռնվիլ։ Մենք առաջ ՍԱՓԴՈՐԱՆ ըսված գեղը Հանդիպեցանք, անկե լերանց նեղվածքի մեջ խոտորելով, հասանք տեղվույն հարմար անվամբ կոչված ԲՈՒՆԱԿԱՊԱՆ գեղը, զոր գուցե պետք էր անվանել Կարնո պահակ։ Բայց նախնիք կերևի, թե դեռ ավելի խաղտյաց սահմանն կտեսնեին հոս, որովհետև անկե քիչ մը հեռու, Սև ջուրի (Եփրատա) մոտ երկու գեղերն, որ հիմա Մեծ և Փոքր ԳԱՂՏԱՌԻՃ կըսվին, կանվանեին ԽԱՂՏՈ—ԱՌԻՃ, որ ըսել է խաղտյաց գյուղ, և անշուշտ կուզեին իմացնել, թե այն է առաջին գյուղ խաղտյաց արևելյան սահմանին վրա։ Պզտիկ Գաղտառիճեն մոտ է Եփրատա անդրանկաց կամ առաջին երկու վտակաց խառնուրդին և կամուրջի մը։

Այս վտակաց մեկն դաշտին արևմուտքեն կուգա և ՍԱՐՋԱՄ գեղին անվամբ կկոչվի։ Հռովմայեցիք զասիկա կարծեին բուն ազբիրակն Եփրատա, սակայն ըստ մեր նախնյաց, ստուգիվ մյուս՝ արևելյանն է, որ ԾԱՂԿԻ գյուղին քովեն կբխե (զարմանալի պատահմամբ մը Եփրատա զուգակիցն, Մուրատ կամ Արածանի գետն ալ նույնպես ԾԱՂԿԻ գյուղի և լերան մը քով կբխե ի Բագրևանդ)։ Կարնո այս արևելյան գետաղբյուրն բուն Սև ջուր կըսվի հիմա, հին ատեն կարծես ՎԸՏՈՒԱԿՆ կոչվեր, Սարչամա ջրույն հետ միանալեն հետև, անզանազան Սև ջուր (Գարասու) կըսվի, ինչվան որ Կարինեն ելլե Դերջան իշնե և անկե Երզնկայի կողմերը երթա, ուր կսկսի Եփրատ (Ֆրադ) կոչվիլ։ Երկու Ծաղկեոց ծոցերեն ծընած ջուխտակն Եփրատ և Մուրատ, դեպի արևմուտք դիմելով և հայոց քանի մ' աշխարհներ իրենց անկյան մեջ գրկելով, Կապանս (Քեպան—մատենի) քով իրարու կխառնվին և անկե հետև Եփրատա անունն կպահվի, ինչվան որ Մեծ և Փոքր Հայոց աշխարհները իրարմե կտրելով, զԱսորիս ալ ի Միջագետաց, ապա Ասորեստանի և Բաբելոնի մեջ Տիգրիսի հանդիպելով և անոր խառնվելով, լայն և հորդ գետ մը կըլլա, Շադ-իլ-Արապ, և այս անվամբ կհասնի ինչվան Հնդկային օվկիանոսի անկյունածայրը, այսինքն Պարսկային ծոցը։ Կարնո դաշտին ծայրեն և ութ հազար աստիճան բարձր լեռնաղբյուրեն բխած գլուխը բոլոր անձամբը այն հեռավոր ծովուն ավանդելով, հետ լսելու նախ հայոց և ապա զանազան ասիական հին ազգաց լեզուները, որոց հին և նոր բաղդիցն ալ վկա է։ Այս տեսութեամբ կարծեմ չեմ սխալիր, եթե աշխարհիս ամենեն նշանավոր, միանգամայն ամենեն հին գետն ալ կոչեմ զսա, նաև սրբազնագույն գետոց՝ առաջ քան զՀորդանան, առաջին և վերջին

գետ կրոնական աշխարհի։ Վասնզի առաջին սուրբ գրոց մեջ, Եդեմա չորս գետերուն հիշատակության ատեն, մեկալներուն համար պետք կըլլա նշաններ տալ, ասոր համար առանց նշանի և սահմանի, որպես թե գետոց ծանոթագույնն կամ թագավորն ըլլար կըսվի, «Եվ գետն չորրորդ Եփրատէս»։ Իսկ ամենեն վերջին Ս. Գրոց մեջ, որ միանգամայն և մարդկային ցեղին պատմության վերջին էջն է, հետ ամենայն տեղյաց և անվանց, անցից և հոսանաց, անգամ մ'ալ կերևի Եփրատ, միայն Եփրատ և միայն այն ատեն աներևույթ կըլլա, երբ այս բոլոր երկրիս կերպարանափոխ ընողն, արևելքի ամենիշխան թագավորն կերևի և կուգա։ Եվ կուգա նույնիսկ Եփրատա լռած, գադրած ալիքներուն ցամքած ճամբեն «Գետոյն մեծի Եփրատայ ցամաքեցան ջուրք նորա, զի պատրաստեսցի ճանապարհ թագաւորի ելից՝ արևու»։ Նախնիք, Կարնո գավառը կամ աշխարհը ԿԱՏԱՐ ԵՐԿՐԻ, երկրիս ծայրը կամ գլուխ կկոչեին։ Սուրբ գիրք ահա կցուցնեն, որ այն կատարեն բխած ջուրն աշխարհիս բոլոր ընթացքը օրինակելով, անոր վերջին կատարն ալ պիտի ըսվի, կամ թե այն գետուն երկու ծայրից մեջ խորհրդաբար պիտի բովանդակվի մարդկության երկրավոր վիճակն և ժամանակն...

Անշուշտ, ով բախտ ունեցեր է այս Կարնո եփրատաբուխ լեռանց վրա ելլել և անոնց ծործորներեն իջած աղբյուրները տեսնել, քանի մը ժամ Շեղջիկ, Տումլի, Պար և Սաղկի լեռանց ծաղկամարգ տափերուն վրա հանգչիլ, և քիչ մը անցյալն ու ապագայն մտածել, անշուշտ այնպիսին պիտի ներե իմ հոն ըրած և հոս հայտնած այս և ասոր նման մտածությանս, զոր ընդհատելով, իջնենք հիմա ի դաշտն Կարնո։

Մեր աշխարհին ամենեն նշանավոր դաշտաց և գավառաց մեկն է ըսել Կարնո համար՝ ստույգ և ծանոթ բան մ' է, մանավանդ որ հիմա գրեթե մեր ամեն ուրիշ դաշտագավառներեն ավելի շենն է և կարժեր մասնավոր քննությանց, թե պատմական, թե բնական դրիցն համար, զոր ես հարևանցի հիշելով կամ նշմարելով կթողում ավելի գիտություն և ժամանակ ունողներուն։ Դաշտագավառ կոչեցի, վասնզի այնչափ էր Կարնո սահմանն, որչափ դաշտին, զոր կրնայի և դաշտ անվանել, վասնզի գրեթե ամեն կողմեն լեռներով շրջապատված կես կլոր դաշտի մը կնմանի, արևելյան հյուսիսեն դեպի արևմտյան հարավ տարածված, երեսունհինգ կամ քառասուն մղոն երկայնությամբ, իսկ լայնքն հյուսիսեն ի հարավ

քսան մղոն միջին չափով։ Արևմտյան հարավային կողմն նեղ է և անկե դուրս կելլե Սև ջուրն, անիկա է Կարնո դուռն ի արևմտից, զոր կբանա նախահիշյալ ԲՈՆԱԿԱՊԱՆՆ, որ անշուշտ նույն նշանակությամբ կոչված ԿՂԵՍՈՒՐՆ է, ընդ մեջ Խաղտոռուիճռ և Կարնո, զոր Վասիլ կայսր տվեր էր Դավթի՝ Տայոց կյուրապալատին։

Այս կողմեն սկսյալ դեպի հյուսիս երթալով և շուրջ դառնալով, Կարնո դաշտին շրթունքը ձևացնող լեռներեն մեկ քանին հիշեմ։ Նախ՝ Խոշաբունարը, որուն արևելյան թևերը դաշտիս հյուսիսային լերինքն են. այս հյուսիսային արևմտյան ծայրն Սարկամա աղբերականց կողմեն պզտիկ դաշտ մը կձևանա և ԴԱՇՏԻՔ (Օվաճրք) կանվանվի և քանի մը դեղով առանձնական վիճակ մը կսեպվի. այս միջոցիս է ՄԵՂՎԱՔԱՐ կամ ՄԵՂՐԱՔԱՐ լեռը, այսպես կոչված՝ լերան երեսը մեղվաց բազմության բույն ըլլալուն համար, ուսկից երբեմն մեղրն վտակի պես կկաթե։ Դաշտկա արևելյան կողմն կկանգնի ՇԵՂՋԻԿ լեռն, որ և ԴԵՋ, իր դիզաձև կամ շեղջաձև ըլլալուն համար, որ և կհայտնե հին հրաբուխի բաժակ մ՝ ըլլալ, որ հիմա հրո և ջրո տեղ՝ ծաղկով կծածկվի լավ եղանակին, սառով և քարով կերևի ուրիշ ատեն։ Ասկե անդին, դաշտին բուն հյուսիսակողմը կտարածվին ԽԱՉԱՓԱՅՏՈՒ ԼԵՐԻՆՔ, այսպես անվանելով ըստ ավանդության Սուրբ խաչը այն կողմերը պահված ըլլալու, երբ Հերակլ կայսրն զայն ազատելով Պարսից գերութենեն, կխավրեր ի Կոստանդնուպոլիս։ Դետինը պահած տեղեն բխած է կբսեն ԽԱՉԱՓԱՅՏ աղբյուրը, որ կխառնվի ծաղկի լեռնեն իջած աղբեր հետ և կծնանի ղեփրատ. այս ետքի հիշած լերան և Շեղջկա միջոց են ԻՇԱՀԼԸ, դուցե ԸՇԸԳԼԸ, և անվանի Տումլի լեռն, որ նույնպես կրնա դիսյակ ըսվիլ նորածին Եփրատա և շատ աղբերացը համար, որոց մեջ կարծեմ ջերմուկք ալ կան։ Ծաղկի լերան մոտ է դաշտի հյուսիսային արևելյան անկյունը, ՊԱՐ լեռը, որու կռնակեն կբխե Թորթումա գետն և կերթա ի Ճորոխ և ի Սեավ ծով։ Դառնալով արևելք, հիշեմ ՉՈՊԱՆՏԵՐԻ լեռը, ԵԼԼԱՆԼԸԳ (Օձուտ) համանուն ավերակ գյուղին քով, ուսկից հեռու չէ և Լուսավորչի անվամբ ավերակ վանք մ՝ ալ, հարավային կողմեն ալ հեռու չէ ավանի Կարմիր վանքն, Հռիփսիմյանց քարայրերով, ՔՈԹԱՆԼԱՐ, ՔՅՈՇԿ-ԴԱՂ, ԱՂՋԸ-ԱՋԸԳ, որ դարձյալ հրաբխային բաժակ կըհիշեցնե, Արդուքահանդազի և այլն։ Քաղքեն քիչ հեռու, նույն արևելյան կողմը կան քովե քով լեռնակներ՝ Կոչկոչան, Կլորգունտ կամ Հողեբլուր, Կայծակի ձոր, Ս. Նշան, Թոփտաղի, որ հազիվ

կես ժամով հեռի է քաղքեն, ինչպես նաև անվանի ՏԵՎԵՊՈՅՈՒՆ լեռը, որ Կարնո արևելյան դուռն կրնա ըսվիլ, վասնզի անկե կանցնի ճամբան Բասեն և արևելք երթալու և գրեթե զուգահեռական գծի վրա է արևմտյան դրան՝ Բոնակապանի հետ։ Քաղաքը դաշտին արևելյան հարավային անկյունն ըլլալով՝ ասկե հետև հարավային կսեպվին լերինքն ՇՈՂԱՎԱՐ, որ երկայն թևեր կտարածեն, ՓԱՎԱՆԹՈՔԵՆ, իբրև թե շատ սեպացյալ կամ զառ ի վեր ըլլալով, երբ անկե կանցնին գրաստք՝ համետնին կթափվի, բայց հեռվեն լեռն ինքնին համետաձև կերևի երկու գագաթներով, զոր կարծեմ, թե մեր նախնիք նմանեցնելով կոչեին ԱՅԾՈՒ-ՊՏԿՈՒՆՔ։ Անկեց անդին ուրիշ լեռան մ՝ ալ այլազգիք նման անուն մը տված են, ԵԿԵՐԼԻ, իսկ երկուքին միջոցն կա ՀՅՈՒՆՔՅԱՐ-ԴԱՂ, իսկ անոնցմե անդին ՏՈՒՋԿԻ լեռն համանուն գյուղին մոտ, որ գուցե Մանանաղի գավառին սահմանաց մոտ ըլլալով, անոր աղերեն ալ մասն ուներ։ Ասկեց անդին, դաշտին արևմտյան հարավային կողմի լեռներն ինչվան ի Բոնակապան և Խոշաբբունար, չեմ հիշեր հանվանե։ Այս լեռներն հարկավ երկրաբանական շատ գիտելիքներ ունին, մանավանդ որ արդեն հայտնի կցուցնեն հրաբխից նշաններ, զոր և կհաստատեն ստեպ գետնաժաժք, որոնց ահեղ նշաններն ալ դեռ աներևույթ չէ քաղքին երեսեն։ Քանի մը գիտնական Եվրոպացիք ըսին, թե լեռանց կազմությունն նաև հանքաց նշաններ կուտա, գուցե Արծաթի գեղին անունն ալ անկե ըլլա, բայց կանոնավոր քննություն մ՝ եղած չէ կարծեմ, և ոչ ալ փնտրված է հանքածուխն, որ տեղ տեղ նշան տված է։ Այսչափով ալ հայտնի է, որ Պղատոնային (հրաբխի) զորությունք շատ աշխատեր և ներգործեր են Կարնո դաշտին վրա, Պիսիդոնի (ջրային) զորությունն ալ անգործ չէ եղած հոս։

Դաշտին արևելյան ծայրեն մինչև ի արևմտյանն Սև ջուրն գետն կկիսե՝ ի հյուսիս և ի հարավ բաժնելով, նախ դեպի հարավ իջնալով կլայնա, կտարածվի գետե ավելի, լճե պակաս։ Երկայնաձև ճահիճ կամ ջրշեղջ մը կձևացնե, որ հին ատեն կըսվեր ԾՈՎ Կարնո, նաև ՇԱՄԲ, ինչպես հիմա ալ կըսվի ի այլազգյաց ՍԱՋԼԸԳ, մեջ բուսած անբավ եղեգանց համար, որ և ավելի անբավ ջրային թռչնոց բույն և բնակարան են։ Եվ ինչպես կվկայե մեր հին Խորենացին, ինչվան հիմա ալ այն թռչնոց հավկիթներն Կարնո գեղացվոց առատ կերակուր մը կըլլան, անով՝ տեղացիք ձեռք չեն զարներ թռչնոց, բայց եվրոպացիք ավելի անխնա են և

երբեմն հրացաններին կուղղեն անոնց վրա։ Սակայն զանոնք պակսեցնելու համար թերևս ամբողջ զորագունդ մ՝ ալ չիբավե՝ այնչափ շատ են այդ ջրային և ցամաքային, մեծ ու պզտիկ, մաշկոտն, լայնաթաթ, բոլորկտուց, տափակակտուց, բարձրաճին, մերկաճին, գունագուն հավերն, որոնցմե երկու հազար տեսակ մը համրեց ինձի անգղիացի բնագետ մը։ Կարնո՞ ամենեն նշանավոր կերպարանաց մեկն է այս շամբ՝ իր հավերովն, աննշան չէ և ջրոց առատությունն, գրեթե ամեն մեծ տուն իր աղբյուրն ունի. նշանավոր են և Ջերմուկքն (Իլիճայի, Արծաթի և այլն)։ Յուրտ աղբյուրք հանքայինք, ինչպես խաչափայտին ՍՈՈՒԴ ՋԵՐՄՈՒԿ բսված, ԱՅՂԸՌ ԳՅՈՂԻՆ և այլն, աղի ջրերն և ԱՂՏԵՐՆ, որ զանազան կողմ կերևին։ Իսկ բուսաբերությամբ՝ անանկ երկիր մը, որ գրեթե վեց հազար ոտք բարձր է ծովուն երեսեն և որ գոնե տարվույն երրորդ մասն ձյունապատ կմնա, ուր ցուրտն հառաջակորեն ինչվան քսանհինգ աստիճան Ռեոմյուրի կիջնե, պետք է որ աղքատ ըլլա, հովանավոր և պտղատու ծառք չըլլան, արմտիք ալ նվազ պիտի ըլլային ուրիշ բարձրավանդակաց հետ բաղդատելով։ Բայց իր աշխարհագրական աստիճանին շնորհքովը (40 աստիճան լայնություն) բավական տաք ամառ մը կունենա քիչ ամսուց մեջ չափավոր ցորեն և դարի հասցնելու, իսկ բանջարեղեն առատ և ընտիր, մանավանդ բողկաձև և կոճաձև տակ ունող բույսեր։ Անշուշտ ավելի բազմատեսակ և զանազան են վայրենի բույսք և ծաղկունք, որոց վրա երգ մը հանած է դաշտիս միջոցներն եղած Սալաձոր գյուղին բնիկ Դավիթ անվամբ Սարկավագ մը[8], երկու դար մ՝ առաջ, հարյուրի չափ կհիշե և շատն ալ հայերեն անուններով, բայց ավելի շատն ալ թողած է, ինչպես ինքնին կրսե.

Եմ Դավիթն եմ, շատ դատեցա,
գլուխն առնեմ ծաղկներուն,
Սակավ ծաղկունքն եմ ես գովեր, բազում մընաց
վարպետներուն։

Հիշածներեն ոմանք, զոր ես չիկրցա ստուգել, են Բարք, Խաժուակ, Պուտ, Պտուակ, Ծափ, Ծափծակ, Ծափկոտրուկ, Հոռոմ ծաղիկ, Ցինկ, Առուեղ, Մամխոպոպ, Լծափ, Կաթնուկ (դեղին), Ծիլ, Ծլուա, Ծիլծափ, Ծարուրիկ, Թուրթ (թորթ), Մեղրիկ, Բարձվենիկ, Լեզուակ, Շրուան, Մրուան, Սինձ, Խոլորձ, Երիցուկ, Ճաշկի ծաղիկ, Ջամբյուղ ծաղիկ, Կոընկուկ, Խալիճ, Լալազար, Հազրե-

վարդ, Շարշաթուրիկ և այլն, և այլն։ Մաղկունք և թռչունք. ասոնցմե գեղեցիկ հրավիրակ կրնա՞նք գտնել ի Կարին կանչելու զբնասեր և զբանասեր։

Կարնո դաշտագավառն իր համանուն աշխարհին կամ նահանգին մեջ առաջինն էր։ Այս աշխարհս հայոց կրսվեր նաև ԲԱՐՁՐ Հայք, երկրին բարձրությանն համար, որուն բարձրագույն մասն ալ դարձյալ այս գավառս է։ Մեր ազգային հին պատմության մեջ զարմանալի բան մ՝ է, որ Կարնո և իր տերանց կամ տոհմից վրա հիշատակ չկա։ Ե դարեն կսկսի իր պայծառությունն, երբ Փոքր Թեոդոս կայսր շինել տվավ ասոր բերդաքաղաքը, որ իր անվամբ կոչեցավ, բայց հետո սովորական եղավ Կարնո քաղաք ըսվիլն, ինչպես ետքը և հիմա Էրզիրում կոչվիլն։ Այն շինությամբն այս տեղս եղավ Հունաց կայսերության ամուր մարտկոց մը ընդդեմ Պարսից, հետո Արաբացվոց և Թուրքաց, ինչպես վերջն ալ և ինչվան հիմա նույնպես կսեպվի։ Բերդաքաղաքեն հետ հարկ էր որ բոլոր գավառն ալ նոր շինություն և աճումն առնու, և հարյուրավոր գեղեր և մանավանդ ավաններ ըլլային հոն, որոնցմե հիմա հարյուր քսանեն ավելի գեղ կա և կեսն դեռ հին հայկական անուններին պահած են, մանավանդ հյուսիսային կամ Սև ջրո աջ կողմինները և հարկ է, որ հին ավանդություններ և հիշատակարանաց նշխարներ ունենան, թեև դրսանց չեն երևիր մեծ շենք կամ ավերակք։ Սակայն անկարելի ալ է, որ ոչնչացյալ ըլլան գոնե այն հազարավոր եկեղեցյաց զանգվածքն, որոնցմե կըսվեր, թե ութ հարյուր հատ միայն մեկ քաղաքավանի մը մեջ կամ գոնե իր սահմանին մեջ կային ԺԱ դարուն կիսուն։ Այս տեղս կկոչվեր ԱՐԾՆ և անշուշտ հիմակվան ԳԱՐԱՐՋ գեղն և անոր արևմտակողմն եղած ՎԱՂԱՎԵՐ գեղն կծածկեն այն սգալի նշխարները, գուցե Թեզսար բլուրն ալ, որ Գարարղա վրա կնայի, բան մը գիտնա։ Ասոնց դիրքն կերևի, որ Արծն գրեթե դաշտին կենտրոնը կանգնած էր, հարյուրավոր գեղերուն մեջ և ամրության հոգը թողլով Կարնո քաղաքին, ինքն հարստության հնարքը և վայելքն առեր էր։ Անվո պայծառության ժամանակակից, անոր նախանձորդ մ՝ էր շինությամբք և ճոխությամբք, անկեց ալ ավելի վաճառաշահ և հղփացյալ, գուցե և քան զբազումս, եթե ոչ դամեն քաղաքս հայոց ժամանակին։ Այնպես որ, իր մոտ բնակիչ պատմիչն Արիստակես (որուն բուն հայրենի ԼԱՍՏԻՎԵՐՏ գեղն գուցե ՎԱՂԱՎԵՐԻ կամ ԱՂԱՎԵՐԻ քով եղած ըլլա), ականատես Արծնո փառքին և հաբ-

վածքին, մեծ խոսքով մը, զծով ու զցամաք հարկատու կրնե անոր մեծութեանը. «Ծով և ցամաք երկնէր և առատանայր, կրել ի սմա զզօրութիւն իւր... եւ իբրեւ ակն մի պատուական լուսագեղ պայծառութեամբ փայլէր ի մէջ ամենայն քաղաքաց. ամենեին գեղեցիկ, բոլորովին զարդարուն»[9]։ Վաճառականներն այնչափ հարուստ էին, որ թագավորաց և իշխանաց կօգնեին փոխ և ընծա տալով, Դարարզ ալ ատենոք հայ Ռոտշիլտներ ունեցեր է։ Քաղաքական տեբերը հոգացողներն, եկեղեցիներն ալ լավ կհոգային, «Եկեղեցեաց շինողք և զարդարիչք» կանվանվին։ Քորեպիսկոպոս մը կնստեր ի Ուրծն, որուն տունեն ութ հարյուր լուծ եզանց կելլեր և քաղքին ավերման ատեն քառասուն ուղտաբեռն գանձ վերուցին թուրքք, որոց սրուն տակ ընկան հոն հարյուր հիսուն վիճակավոր քահանայք միայն։ Այս ազգին աղեղնավորքն հերարձակ էին, որ Պահլա և Պուխարայի մոտ անապատներեն ասպատակելով Տուղլուփ կամ Տուղրիլ սուլթանին հետևեն, եկան հոս համի հազար քառասունեններին և Կարնո քաղաքին ամրութենեն վախնալով, վաղեցին Ուրծնի վրա, որ հաղիվ հողե պատվարներ ուներ, շենքերուն մեջ ալ կային փայտակերտք։ Թեպետև բնակիչքն՝ երեք հարյուր հազար, շատ կռվեցան, դեմ կեցան, բայց հուր և սուր ասպատակացն հաղթեցին, այնքան բազմության բնակչաց կեսն ջարդվեցավ։ Ահավո՜ր կոտորած, արժանի Ջինկիզխանի և Լենկթիմուրի հետևողաց Տուղրիլի և Ալփարսլանա, և այնքան մեծ ու հարուստ բազմաշեն քաղաքն ավերվելով, այրվելով, հիմն ի վեր ընկավ, ծածկվեցավ, և դեռ կծածկե իր սգալի կմախքը ութ հարյուր տարվան սև քողով և սև հողով, որոց տակ անշուշտ դեռ անջնջելի գեղեցկության և պայծառության մը նշաններ պահած է, և իր անցյալ կենաց դիպվածները՝ զոր ամենեին կլռե պատմությունն, միայն այս ողբալի կատարածը հիշելով։ Որպես թե մորմոքեցուցիչ մոգությամբ մը հանկարծ այս ծովանման դաշտիս մեջ հանած ըլլա այս մեծամեծ քաղաքը, «նման իմն նորահարսն կնոջ, գեղոյն վայելչութեամբ եւ զարդարուն պայծառութեամբ, ցանկալի գոլ ամենեցուն», ինչպես կրսե պատմիչն և հանկարծահաս հարվածով մ՝ ալ այսպես խրոնճալի կերպով փճացուցած ըլլար զնույն, վրան քաշելով մոռացության պատանքը, որո պատովածքեն այսքան հիշատակ մը կտեսնեմ։ Իսկ ուրիշ զգալի հիշատակարան կամ արձան մ՝ ալ չտեսա հոն, բայց միայն մեկ բնակարանաց և դերեզմանաց վրա լուռ հսկող մը, խաչարձան մը, այն ալ հեռացած ճամբուն վրա և

երես ի վար ընկած, զոր Հովհաննես ոմն ազնվական Զորտվանեկի որդի կանգներ էր քաղքին ավերածեն քառասուն կամ հիսուն տարի մ՝ առաջ։ Չէ՞ր արժեր արդյոք Թեղսարի ճակատն ալ խաչարձան մը կանգնել ի հիշատակ բյուրավոր կոտորելոցն և թաղելոց Արծնի սև ավերակաց և հողաբլրոց տակ։ Շենք և շնորհք շուտով անհետվուլթ եղան ի Արծնե, բայց ատենոք հոն մեծ տեղ մը, քաղաք մ՝ ըլլալն շուրացան հետագայք և տիրողք, վասնզի էրզիրումեն առաջ Գարարդը (իբր Գարավարգ) Կարնո գաշտին գլխավոր շինանիստ կնշանվեր օսմանյան դիվանաց մեջ, և դեռ հիմա ալ Կարնո բազմամարդ գեղերեն մեկն է։

Կարնո քաղաքը չհասած, արևմուտքեն եկող կարավանն վերջի իջևանը կընե ի ԻԼԻՃԱ գեղը, որ թե այս բանիս համար, թե իր ջերմրկանցն համար, գավառին ամենեն մեծ և նշանավոր գեղն կրսեպվի. ժամ մը հեռու է Գարարդա հարավակողմեն, Սև ջրին ալ հարավային կամ ձախ կողմն է, քաղքեն երեք ժամ հեռի է դեպ հյուսիսային արևմուտք։ Անշուշտ իր տաք ջրերուն համար առած է այդ անունն, որ մեր ԵՂԿ և ԼՈԳ բառերուն ալ համաձայն և համանիշ կուգա։ Մերայինք ԿԼԻՃԱ ալ կրսեն, և բանասերք ոմանք կարծեն, թե հունաց և հռովմայեցվոց ծանոթն է ԵԼԻԳԻԱ անվամբ, ուր Տրայանոս կայսեր հանդիպեցավ մեր Արտաշես Բ թագավորն։ Խորենացին կրսե միայն, թե Տրայանոս, Պարսից դեմ ի արևելս երթալու ատեն, «ասա աճապարեալ Արտաշէս (որ դպրեցուցեր էր Հռովմայեցվոց հարկ տալը) մեծապէս ընծայիւք իջանէ ընդ առաջ նորա. զմեղանս ի յանձն առեալ՝ հանդերձ հարկօք անցելոց ամացն, լինի առաջի նորա և թողութիւն ի նմանէ գտեալ՝ գառնայ յաշխարհս հայոց»[10]։ Իսկ հույն և հռովմայեցի պատմիչք Արտաշիսի տեղ Պարթամասիր կանվանեն հայոց թագավորը և Եվիգիա ըսված տեղը Եփրատա քով, հանդիպած առ Տրայանոս, ուսկից նախ՝ ներումն խնդրեց հարկերուն համար և կայսեր ձեռքով նորեն թագավոր պսակվիլ։ Երբոր հռովմայեցիք տհաճություն մը ցուցին կամ Արտաշես-Պարթամասիր (գուցե՝ Վարդանասար) այնպես կարծեց, ինքն ալ քաջահանդուգն համարձակությամբ մրտավ Տիրայանու վրանը և իմացուց, որ ինքը գերիի կամ հաղթվածի մը պես չէր եկած կայսեր ոտքը, այլ հաստատելու իր նախորդաց դաշնագրությունը, կատարելու պարտքը և ընդունելու պատիվը։ Տրայիանոս ալ ավելի խրոխտաբար մերժեց զնա, ըսելով, թե Հայաստան Հռովմայեցվոց մարզ մ՝ եղած է, որու որ

ուղենք, անոր կուտանք թագը։ Սակայն անշուշտ մտածելով, որ եթե իր հետևեն թշնամի կամ դժգոհ աշխարհք մը թողու՝ Պարսից վրա երթալու ատենը շատ կդժվարանա իր գործը, գոհացուց թագավորը և հայերը, պայման դնելով, որ խաղաղությամբ կենան տեղերնին և ինքն անցավ գնաց ընդդեմ Պարթևաց։ Ոչ շատ տարի վերջը (համի 162) հոս, նույն Ելիգիայի քով, Վալաշ կամ Վոլոդիս Պարթևաց թագավորն, մեր Տիգրան Գ թագավորին ժամանակակից և գուցե նիզակակից, զարկավ կոտրեց Հոովմեացվոց բանակը, հանդերձ անոնց Սևերոս սպարապետավն։ Ուրեմն ոչ միայն վաճառական կարավաններ, հապա նաև շատ զինվորական բանակներ անցեր և դադրեր են Իլիճայի քով և իր տաք ջրերուն գոլորշիաց հետ՝ ծխեր են շատ արյուններ ալ։

Ուրիշներեն զատ՝ Սուլթան Մուրատ Դ-ն ալ իր մեծ բանակավն հոս դադրեցավ գիշեր մը, համին 1635 (հուլիսի 2), իրմե առաջ և վերջն ալ շատ հեղ օսմանյանք ասոր մոտ մեծ բանակներ դրած են, ինչպես համի 1554, 1578, 1585 և այլն։ Ջերմուկին օգուտը և գործածությունը շատ հին ատեններե ճանչցված ըլլալն անտարակույս է, բայց առջի անգամ բաղանյաց շենք շինելն հոն՝ Կարնո քաղքին շինող Անատոլ զորավարին կընծայվի, որ ցև ի վերայ ջերմն բղխեալ աղբերացն յակս ի վիմատաշ քարանց շինեաց» ըստ Խորենացվույն։ Անատոլի դաստակերտ կարծվեցավ և Իլիճայի մոտ Սև ջրո վրա կամուրջն, Շամբին արևմտյան ծայրը, նույնիսկ Շամբին մեջն ալ երբեմն կերևին սալահատակ ճամբու հետք, գուցե ավելի հին ատեն շինված։ Անատոլի շինած վիմատաշ հարկերն և անկե վերջը շինված ութանկյունի գմբեթն և նույնաձև կճափայլ ավազանն ալ ավրված են. հիմա երկու են ավազաններն կավային կրաքարե շինված, մեկն արանց, մյուսն կանանց սեփականած։ Առջինն մեծագույն, քսան ոտք տրամագծով, եղերքներն չորս ու կես ոտք խոր, մեջտեղն վեց ոտք, տաքությունն ինչվան երեսուն Բեոմյուրի։ Ջուրն ծծմբային և ժանտահոտ չէ, այլ երկաթահամ և քիչ լեղի, որով շատ հաճոյարար և հանգստարար, և շատ առողջարար կսեպվի, անոր համար նաև հեռու վիճակներե խուռն բազմություն կդիմե այս հայկական Կարլսբադին, մանավանդ ամառը, և վրաններով չորս դին կբանակին։ Անցյալ դարուն սկիզբներն մեծ ծաժե մը կործանեցավ Իլիճա իր բաղանյոքն, անկե քանի մը տարի առաջ էր (1701), երբ մեծանուն Դուրնըֆոր բուսաբան ուղևորն հոս գիշեր մ՝ անցուց (14 հունիսի), և տեսավ բաղանյաց ութան-

կյունի գագաթը, բաց գմբեթն և ութակողմն ավազանը, երկու աղբերաց ջրույն համար ալ կվկայե, որ մարդու մեջքի հաստությունն ունին, ջրույն և լոգացողաց համար ալ կրսե. «Cette eau est douce et d'une chaleur supportable. Dieu sait comme les Turcs y courent! Ils viennent d'Erzeron s'y baigner, et la moitié de notre caravane ne laissa pas échapper une si belle occasion*».

Կարնո դաշտը՝ թե իր երկրին վերիվայրությամբը, թե ընդարձակության մեջ ցրված շենքերուն տեսվածքով, բարձր տեղե մը նայողին՝ ծովու կերպարանք մը կընծայե, որուն ալյաց վրա շարված են մակուկաձև գեղերն և իբրև անքույթ խորշի մը մեջ։ Հարավային արևելյան լերանց անկյունը քաշված է մեծազանգված նավն՝ Կարնո նավաքաղաքն, որուն բարձրածայր կայմն կամ կանթեղակիր աշտարակն է ԹԵՓՍԻ-ՄԻՆԱՐԵՆ, որ և շատ ժամերով հեռվեն կերևի, վասնզի արդեն քաղքին դիրքն բարձր է, բերդն և միջնաբերդն աստիճանաբար ավելի բարձր են։ Այս նտքինիս մեկ կողմեն ալ վեր կբարձրանա այն աշտարակն իր հատուկ հարյուր ոտք բարձրությամբն, ձևը բոլորակ, երկու չափ (մետր) տրամագծավ, ներսեն քարուկիր, դրսեն կանաչ աղյուսներով պատած, բռած ու փայլուն, գլուխն տախտակամած ափսեաձև, անոր համար ալ ԹԵՓՍԻ կոչված, շրթունքը կարմիր աղյուսներու շարքով բարձրաքանդակ կամ դուրս ցրցած արձանագրություն մը ձևացուցած է արաբացի լեզվավ, քյուֆի տառերով, Աբդուլ Գասիմ տոհմե Մուզաֆֆեր բեկ անվամբ կուսակալի մը, ԺԲ դարու մեջ։ Գագաթը իրեք ու կես դար է, կծածանի օսմանյան լուսնանիշ դրոշը։ Այս օդակտուր բարձրացյալ կայմաշտարակը տեսնողն, իհարկե Կարնո ծովադաշտեն կդիմե անոր նավաքաղաքը, որ արդեն գրեթե վեց հազար ոտք բարձր է Պոնտոսի երեսեն, հարյուր ոտքի մը չափ պակաս քան զանվանի լեռնանցքն Մոն-Սենի, և քառասուն, քան զՍեմբլոնին և նույնչափ բարձր քան Սփլյուկեն, որ Ջվիցերիի և Իտալիո միջի անցքն է։ Այսպիսի բարձր դրիցն համար, իհարկե, Պետերբուրգի պես ալ ցուրտ կըզգա Էրզիռում,** մինչ իր աշ-

* «Այդ ջուրը քաղցր է և ունի տանելի ջերմություն։ Աստված միայն գիտե, թե թուրքերը ինչպես էին վազում այդտեղ, լողանալու, գալով անգամ Էրզերումից, իսկ մեր քարավանի կեսը, հասկանալի է, որ այդ հիանալի առիթը ձեռքից բաց չթողեց։ (Ծան. կազմողի)։

** 1855—56-ի ձմեռն, ինչվան զսանկութ Բեռմյուրի հասավ ցուրտն

խարհագրական դրիցն նկատմամբ պետք էր ոչ միայն քան զԿոստանդնուպոլիս և զՏրապիզոն տաք ըլլալ, այլև ավելի քան զՀռոմմ և զՆապոլի, վասնզի ասոնցմե ալ ավելի հարավագույն կամ երկրիս հասարակածին մոտ է։ Ուրեմն երկար և սաստիկ ձմեռ մ՝ ունի, բայց շոր և պայծառ օդով, սքանչելի բարեխառնությամբ գարուն և ամառ մը, որ կանաչով, ծաղկներով, արմտյոք և բանջարեղինոք զարդարեն, կվայելցընեն և սիսերիական ամայությունը իտալական դրախտ մը կդարձնեն։ Մոտենանք անվախ. և ահա մեկ բարձր կայմաշտարակին տեղ, կսկսին հարյուրավորք երևան գալ և ծովագոգի մը ծոց խռնված նավերու կերպարանք կառնու տեղին։ Եթե մոտիկ ջաղացքներուն բաղմությունը, անիվներուն այլանդակ դղորդմունքն և դարձվածքն, և ի պաշտպանություն քաղաքին՝ հողաբլրոց վրա կանգնած տասնյակ և ավելի մարտկոցներ ու բաղխոցներն (ԹԱԲԻԱ) ալ նկատես, հանդերձ բերդերուն կրկին պարիսպներովը, քաղքին երկին խրամներովը, տասներկու դռնաձև կամուրջներուն ձգվածովը (Ճեպիռ գափուլար), արդարև մեծադիր, հիացուցիչ, տարօրինակ, նշանակերպ տեսարան մը կելլե հոն, զոր դյուրին չէ զանց ընել, թողուլ դառնալ։

Արդյոք ո՞րչափ հին դարերե ընտրված է այս տեղս Կարնո քաղաքին, գավառին, աշխարհին և բոլոր արևմտյան հայոց գլուխ ըլլալու, չեմ գիտեր, բայց ասկե հազար շորս հարյուր քառասուն տարի մ՝ առաջ կայսրն հունաց ընտրեց այն տեղը, իրեն բաժին ընկած Հայաստանի մայր և ամուր քաղաքն ընելու։ Անշուշտ Անատոլիա շինած ԹԵՈԴՈՍՈՒՊՈԼԻՍ հիմակվան բերդաքաղաքն է, բոլոր շենքին արևմտյան հարավային կողմը՝ երկայն քառանկյունի ձևով և երկու կարգ պարսպով, որոնց միջոցն ՀԻՍԱՐ-ՊԻՉԵՆ կըսվի։ Այս պարիսպներս, որ յոթանասուներկու աշտարակներով կկանգնին, ինչպես Բյուզանդացվոց շինած բերդաքաղաքներեն շատն, իրավ շատ անգամ ծեծվեր, քակվեր նորոգվեր են, բայց դեռ նախնական շինվածին մասն և ձևն ունին, որուն գլխավոր նշանն էր դրսվանց նավացռուկի նման ժայռերով կամ քարերով ցցված ըլլալն, որպեսզի թշնամյաց դյուրավ մոտենալի և բռնելի չըլլա, ինչպես որ քաղքին հիմերն ալ ներսեն դեպի դուրս փորաձև մը բարձրացուցին, որ չկարենան նաղամփորք դյուրավ հիմքը գըտնել և քանդել։ Արևելյան և արևմտյան երեսներուն աշտարակներն բոլորաձև շինվեցան, հյուսիսային և հարավային կողմանցն՝ գոգաձև և ժայռաձև և ահա թե ասոնց և թե պարսպաց ցցված ցը-

ռուկներուն համար այն ատեն ալ նավաքաղաքի նմանութիւնամբ և կոչմամբ ճանչցված էր քաղաքն Կարնո։ Բերդաքաղաքին արևելեան հարավային անկիւնն է ՄԻՋՆԱԲԵՐԴՆ (Իչ-գալե), բարձր դիրքի վրա, ավելի բարձրագոյն պարիսպներով, որոց հարավակողմը կանգնած էր բարձրագոյն աշտարակն ԹԵՈԴՈՐՈՍ անվամբ, հանուն կայսերն, որո տեղ հիմա վերոհիշյալ Թեփսի մինարեն է, և որո խարիսխն կցուցընե հին շինութիւնը։ Բերդաքաղաքեն չորս դին կպատե խոր խրամ, անկե դուրս կտարածվին արվարձաններն, որ դրսվանց քաղքին հնգակողմն երևույթ կուտան և երկու երեք ժամ կտևե շրջապատելն։ Բայց ասոնց չորս դին ալ խրամներ կան, որոնք վերոհիշյալ ՃԵՊԻՒԴԱՓՈՒ կամուրջներով ներս կտանին, անկեց ալ ներս անցնելու համար ուրիշ կամուրջներ և չորս դռներ կգտնես, ուր կհրավիրեմ հետևողս ներս մտնելու և պտտելու ու դիտելու, ինչ որ ինձմե առաջ շատերն նկատեր ու նկարագրեր են, իբրև մնացյալ նշանավոր շենք այս՝ հիմա նվազյալ, բայց միշտ մեծ քաղաքին։

Իհարկե, դիտելի բաներեն պիտի ըլլան ՉԻՖՏԵ-ՄԻՆԱՐԵՆ, Թեփսիին մոտ, իր ջուխտակ գեղեցիկ սյոնանման շերտաձև կիսկատար աշտարակներովն, կարմիր, կանաչ, կապույտ, սև աղյուսներով, քյուֆի գրով և պարսիկ լեզվով հին արձանագրութիւնամբ մը, գրված համին Քրիստոսի ինը հարյուր վաթսուն երկու։ Աշտարակաց միջոց բարձրակամար և բազմաքանդակ դուռն, իրրև երեսուն ոտք բարձր, կարդացողաց երկկարգ քառասյուն սենյակներն և անոնց ծայրն եղած տաճարաձև ԻՄԱՐԵԹ սենյակն կամ շիրիմն, որուն սքանչելի մանր քանդակներն քակեր տարեր են ռուսք, քաղաքն առած ատենին, համի 1829։ ՈՒԼՈՒՃԱՄԻ մեծ մզկիթն և մեծ շինվածքն՝ հիսուն չափ երկայնութիւնամբ և քառասուն լայնութիւնամբ, յոթն կարգ սյուներով, քսանութ կամարասյանց վրա, որոնց վրա կամբառնար մեծ գմբեթ մը, իսկ հիմա տախտակով պատած է. ի սկզբան ինչ բանի համար շինված էր այս տեղս, ես չիմացաւ։ ՉԻՆԻԼԻ-ՄԻՆԱՐԵ՝ Երկնկայի դրան մոտ և անոր քով քարաշեն Մուղրո-սերա կամ ՄՈՂՐՈՎ տեղն, բազմաքանդակ դուռով մը, որուն համար ոմանք ըսին, թե Մուղրո անվամբ Եզիդիի մը պալատ էր. որ իսլամը հանձն առած ըլլալով, սպանեցավ իրեններեն։

ԹՈՓՀԱՆԵ, մեծ քառակուսի շենք մը, որ անշուշտ հին եկեղեցի մ՝ էր, ինչպես նաև մզկիթներեն շատն, որ բերդաքաղաքին մեջ երեսուն հատ կան, իսկ բոլոր քաղքին մեջ ատենոք երկու հար-

յուր հատ կհամրվեին։ Շեն եկեղեցիք հիմա քիչ և նորաշեն են, մեկ-մեկ հատ հայոց, մատուռ մը հունաց, եկեղեցի մը լատինացի կնգրղավոր կրոնավորաց։ Ասոնցմե վերջը դիտելիք են վաճառանոցքն, կտավանոցք, կարավանատունք և իջևանք, քառասունի չափ բաղնիքներ, բազմաթիվ աղբյուրներ, գմբեթավոր շիրիմներ, գործարանք զինուց, մորթեղինաց, ձիու կազմածոց, պղնձե ամաններու և այլն։ Պարսպաց վրա կերևին տեղ-տեղ մնացորդք հույն և հայ արձանագրությանց, քանդակք և խաչվեմք, բայց քիչ։ Պետք չէ մոռանալ քանի մ' ուխտատեղիներ ալ, որոց գլխավորն է Սահակա և Հովսեփա հանգստարանն Ուլուջամիին մոտ և անոնց նահատակի աղբյուրն, որ ԱԲՈՒ-ՍԱԽ կանվանեն մահմեդականք, իբենց մեկ տանը մեջ ըլլալով, Դավրիժու դրան մոտ, Սուրբ Թորոս, Սուրբ Մինաս, և Քառասուն մանկունք և այլն. հայոց եկեղեցվույն հին Սուրբ Աստվածածին մատրան քով ալ կա Գևորգ նահատակին գերեզմանն։ Այս մատրան քով էր, կըսեն, հին եկեղեցին, ուր Եղբ կաթողիկոս Կարնո ժողովքն ըրավ, համին վեց հարյուր երեսուն երկու, Հերակլ կայսեր հրամանավ[1]։ Մահմեդականաց պատված գերեզմաններեն երեսուն հատ մը կան բերդին մեջ կոնաձև դրմբեթներով, քաղքեն դուրս ալ արևելյան դրան դիմաց՝ ԿՅՈՒՄՅՈՒՇԼՈՒ ԳՅՈՒՄԲԵԹ ըսվածներն, որոնց մեջ շատ գեղեցիկ էր մեկ մը տասնհինգ ոտք բարձր, ութանկյունի, փայլուն քարերով, չորս կամարավոր դռներով, բայց մեջը դատարկ և անխնամ թողված (հոս անցողաբար պետք է զգուշացնեմ պտտողը՝ քաղքին մեծամեծ շանց բազմութենեն, որք, մանավանդ գիշերը, շատ ահարկու են, կեսօրն ալ ականջ կխլացնեն հաչմունքով)։ Քաղքին երեսեն և միջեն պակաս զարմանալի չեմ կարծեր, գուցե և շատ ավելի՝ իր ներքին հատակն, որովհետև արտաքինն շատ մաքուր չէ և փողոցներն ալ բավական լայն չեն, իսկ ներքին հատակ ըսելով կիմանամ գետնին տակը, ուր հին քաղքին շինողք, անոր ամրության և պիտույից համար ճամբաներ շինած էին թե ջուր բերելու, ինչպես որ կվկայեն աղբյուրներն ալ ինչվան հիմա, թե խոտ բերելու Շամբեն և թե զորաց ելումբտի համար։ Գուցե այս շինվածոց մասնակից էին Կյումուշլու գմբեթից քով եղած ՍՂԼԱՆ ՎԵՐԱՆ բլրին մեջ փորվածքն և բավղաձև փողոցներն, որո քով կար հին մեծ շինվածք մ' ալ, որուն դռները իրենց հռովմեական արձվյաց քանդակներովը, թուցին Ռուսաց արձիվներն մինչև Ֆինլանդիո ծուվածոցը։ Այս նոր արձվյաց ավերածեն հետի Կարնո քաղաքն շատ նվազեցավ

շինությամբ և բնակությամբ։ Այն պատերազմեն առաջ քսան հազար տուն մահմեդական կար, երեք հազար հինգ հարյուր տուն հայ, ատենոք ինչվան քառասուն հազար տուն բնակիչ կհիշվի, հիմա այն տուներուն թվով են բնակիչքն կամ քիչ ավելի. ըստ ոմանց յոթանասուն հազարի կելլեն բոլոր բնակիչքն, որոցմե մեր ազգայնոց թիվն հինգ հազարի չափ ըլլա։ Քսան տուն մ՝ ալ ԲՈՇԱ կա, որք թեև մեկալ անծանոթ բոշայից ցեղակից կերևան, բայց բարեկիրթ են և քրիստոնյա և հայոց սովորությանց և լեզվին հետևողք։

Քաղքիս պատմական անցքերն և դիպվածներն, որոց վրա չէի կրնար չմտածել, կթողում ուզողին կամացը քննել և խորհրդածել։ Բնական դիպվածոց մեջ նոր հանդիպածն (1859 թ.) մեծ ժաժն է, որ մասամբ կերպարանափոխ ըրավ քաղաքը, քաղաքականաց մեջ՝ անկե քիչ առաջ նորեն Ռուսաց հետ պատերազմի վախով ավելցուցած նոր ամրություններն։ Իսկ հիմա, Սև ծովու ճամբուն շինությունն և Էրզիռումի՝ նորեն Օսմանյան մեծ կողմնակալության մը գլխավոր քաղաք անվանիլն, կհուսացնե նոր ույժ և շարժում մը տալ Կարնո քաղքին, որ տասնչորս կամ տասնհինգ դարե վեր, առաջակողմյան Ասիո շարժմանց կենտրոններեն մեկն եղած է, թե պատերազմական, թե քաղաքական և թե վաճառականական և թե ճանապարհական հաջողությանց նկատմամբ, անոր համար ալ ոչ միայն մեծ մթերանոց է վաճառաց, ամուր զորանիստ, այլև աթոռ եվրոպական տերությանց երեսփոխաններու։

Ամեն տարի արևմուտքեն՝ Եվրոպայի վաճառքներով, արևելքեն՝ հնդկաց և պարսից վաճառքներով, յուրաքանչյուրը գոնե հարյուր միլիոն ֆրանկի գնով, քարավաններ կուգան, կկենան, կանցնին Կարինեն, քիչ մը հոն մաս թողլով և մաս մ՝ ալ անոր հայթայթած կամ մեր աշխարհեն ժողոված վաճառքներն առնելով, որոնց գլխավորներեն վերը հիշյալ ձեռագործներեն զատ, են երկրի բերքն և նախ՝ ոչխարաց և արջառուց հոտերն։ Տարվե տարի հարյուր հազար թանձրադմակ և պարարտ ոչխար կելլեն Կարնո վիճակեն, ղրկվելու ի Փոքր Ասիա, նաև ապխտած և աղած միսն Էրզիռումի անվանի վաճառքներեն մեկն է, ինչպես նաև անոնց մորթն և մուշտակն, զոր ավելի դեպի Վրաստան կխավրե, իսկ կաշին և անով շինված կարմիր կոշիկները, զենքեր և զգեստեղեններ՝ իր շրջակա գավառներուն։ Եվրոպայեն ընդունած լաթեղենները, ինչպես նաև Բիզեի կտավը, կխավրե ինչվան ի Մուսուլ և ի Պաղտատ, գրգ-

թոր և չոր պտուղ (ինչպես նուշ), ինչվան ի Կոստանդնուպոլիս։ Մեր աշխարհին զանազան կողմերն ալ իրենց քիչ շատ բերքովը հարկատու են Կարնու։ Տայոց գավառքն կընծայեն իրեն թարմ պըտուղներ, նույնպես Երզնկա ալ՝ հանդերձ խաղողով և լուբիայով։ Մուշ կմատակարարե երկու փափկության նյութ, դինի և ծխաբույս, Բաղեշ՝ գղթոր և դեղին մոմ, մեղր աղնիվ, չոր պտուղներ, բուրդ և ստև, Խարբերդ՝ աղնիվ գինի և այծու ստև, Գյումրի՝ ասբ, բամբակ, գոմշու կաշի, Ամիդ՝ նուշ, գղթոր, այծենի, կտավ, մեսաքսեղեն։ Հեռվանց՝ Հալեպ կխավրե խառուտիկ կտավներ, Մուսուլ՝ ասբ, Բաղդադ՝ արմավ, մորթ, մարգարիտ, Պարսկաստան՝ շերամ, մետաքս, գղթոր, քրքում, բամբակ, շալ, թոմպեքի, ափիոն և այլն և այլն։

Անշուշտ, զարգացուցիչ կամ զարթուցիչ ձեռանց ցնցմամբ և ուղղությամբ կրնա Կարնո քաղաքն շատ ավելի բարձրանալ, հարըստանալ և առաջադիմել ի քաղաքականության, և կատարել այն պարտքը կամ հույսը, զոր վերին տեսչությունն թողուց իրեն, երբ մի առ մի ջնջեց իր առջևեն զԱրտաշատ, Դվին, Արծն, Անի, Ջուղա, որոց միայն ավերակներն կմնան վկա իրենց անցյալ մեծության, իսկ Կարին, որ անոնց ոմանց կանգնիլը և ամենուն ալ ինկնալը տեսավ՝ դեռ կանգուն է և մայրաքաղաքության պատիվը կպահե հազար չորս հարյուր հիսուն տարիե։

Կարնո Դավրիժու դռնեն ելա, դեպ արևելք ճամբա բռնեցի՝ երթալ ի Շիրակ։ Հայտնի է, որ անոր բաղմաթիվ շինից և ավերակաց մեջ, ավերակաց թագուհին՝ Անի, պետք էր ըլլալ իմ հայրենահուշ ուխտատեղյացս գլխավոր մեկ կենտրոնն։ Հասարակաց ճամբան կանցնի ՏԵՎԵՊՈՅՈՒՆ լեռնեն, որ ԳԱՐԿԱՊԱՋԱՐ լերանց երեք մղոնաչափ երկայն շարքին վրա է, և անցատեղին Կարնո քաղաքեն հազիվ վեցից յոթ հարյուր ոտք բարձր է։ Գարնան, արդարև գարնանային գունագույն զգեստով զարդարված, կխայտան լեռնատափք և լեռնալանջք, անշուշտ Սալաձորեցի սարկավագին հիշած ծաղկներեն շատն չորս դին կծիծաղեին, երբ ակամա անգթությամբ ալ կոխելով վրանեն և քովերեն կանցնեինք։ Վերջին անգամ մը դառնալով ի արևմուտք և Կարնո ծովադաշտին ու նավաքարդաքին բաղդաշունչ հով մաղթելով, դարձա ուրիշ և ավելի ընդարձակածավալ դաշտի մը, ուր անմիջապես կիջեցներ լեռնանցքն, ըլլալով բաժանիչ թե այն դաշտացն և թե անոնց ջրերուն ու գետերուն։ Կարինեն կիջնային ք ի Բասեն, Եփրատա հովիտեն փ հո-

վիտն Երասխա։ Նեղ և երկայն լեռանց պատվար մը, իբրև բարակ պատ մը երկուց սենեկաց, կբաժնե այս երկու միափոր քերց և դայեկամարց ծաղկածին տարածոցները։ Նույն ինքն երկուքին անջրպետ, նույն ինքն երկուքին ալ առաջին սննդատու աղբյուրն է, վասնզի մեկ կողմը Եփրատա ակունքն են, որ դեպի արևմուտս կերթա ոռոգել, մեկալ կողմն՝ Երասխա, որ կվազե ի արևելս, Հայաստանի բնիկ դայակն և արբուցիչն ըլլալու։

Հիմակվան աշխարհագիրք կարծեն, որ Պինկյոլ լեռներեն եկած համանուն գետակն, որ Քյոփրու-քյոյի (Վաղարշավանի) քով կխառնվի Բասենո ջրույն հետ՝ Երասխա առաջքն կամ ակնաղբյուրն ըլլա, սակայն մեր հին աշխարհագիրք կվկայեն, որ Երասխ ի Բասենո կբխե։ Ուրեմն ոչ նա, այլ այս ջուրս, որ Կարնո և Բասենո անջրպետ լեռներեն կբխե և հաղիվ քանի մը մղոն հեռի է Եփրատա ակունքեն, սույն ինքն է Երասխա աղբերակն։ Իբրև թե երկուքին գլուխն այլ նույն բարձի վրա դրված, բայց դանդաղ կողմե, մինչդեռ Երասխ աչվները կբանա արևուն ծիածանի ճառագայթներուն և դեպ անոնց վազվզելով գրեթե շիտակ ճամբով, միշտ դեպի արևելս կփութա և շուտով կհասնի իր և հասարակաց գետոց պառավ մոր ծոցը, ի ծովն (Կասպից), իր համշիրակ և համանման հուշկապարիկ քույրն Եփրատ, ստիպված հակառակ կողմն ելլելու իջնելու, բայց իբրև կարոտ նույն արևուն ծագման կողմին, հետ արևմուտս և ի հարավ թափառելու երկար ատեն և երկար միջոցներ, վերջապես ինքն ալ կդառնա ի արևելս, և, հեռավոր աշխարհաց ծայրեր հասնելով, Արաբաց և Պարսից՝ Հընդկային օվկիանոսու առաջադեմ ծոց մը կգտնե և հոն կհանգչի։ Որչա՞փ մոտիկ էին իրարու այն երկու քերց բյուրեղափայլ գլուխքն, բնության ծոցեն արթնցած ատենին, և որքա՞ն հեռու իրարմե իրենց ծովավեժ գարշապարքն։ Եթե Երասխ իր ծաղկենկար բարձեն փունջ մը փրցներ և դոնդողներուն վրայեն խաղալով, խնտալով սահեցներ, հասցներ իր վերջին ծայրը, երկու օրվան մեջ, նույն բանը ընելու համար Եփրատա՝ շաբաթ մը ժամանակի չէր բավեր...

Գետերն երկրիս կենդանատու երակներն են, կաթն և արյուն միանգամայն և դարձյալ՝ առաջին ճանապարհք և ինքնին իսկ քայլուկ ճանապարհք մարդկան։ Աշխարհավարության մեջ ալ կարևոր տեղ կբռնեն, գուցե ավելի քան գլերինս։ Շատ դիտմամբք դեղեցիկ և խոր մտածությանց առիթ կրնան ըլլալ մտաց, մանավանդ եթե

մեկն ինձի պես դանդաղ քայլերով ճամբան ընե գետեզերքե մը, և ես առավել՝ եթե ըլլա գետն այն Երասխա պես գետ մը, որ սեփականագույն Հայաստանի հովիտն և դայակն է։ Անոր համար սիրելի էր ինձի դեգերիլ այս ԱՂԲԵՐԱԿԱՆՑ ԴԱՇՏԱԿԻՍ մեջ, վասնզի այսպես կանվանվեր հին ատեն այս տեղս, ուսկից կանցնիմ և Երասխա բխած բուն աղբերականց տեղն այլ՝ ԱՐԾԱԹԱՂԲԵՐՔ։ Օրհնեա՜լ ըլլան այն մեր հին հայկազն նահապետին շրթունքն, որ այսպիսի արժանավոր և գեղեցիկ անվամբ կնքեցին Երասխա աղբերակունքը։ Երջանի՜կ դարեր, որ այսպիսի անուններ կապդեին երկրիս ազատաճեմ անդրանկաց, երանի՜ անոնց, որ այսպիսի արծաթաբուղխ աղբերականց քով արծաթահյուս կամ ոսկեթել օրերով կյանք անցուցին։ Արդարև, թե անվամբ, թե դրյուք, Եդեմա և երջանկության տեղվույն կետերեն մեկն էր այս տեղս այլ, զոր նախախնամությունն պարգևեց մեր հարց և հայրենյաց։ Ո՜ւր էր թե թըշնամին երջանկության այնպես շուտով հալածվեր այն տեղերեն, ինչպես Հալարավուխտն այն զորավար Պարսից, որ հավատարիմ հայոց և քաջին Վահանա Մամիկոնենի հետամուտ ըլլալով՝ օր մ՝ եկավ, բանակեցավ այս արծաթափայլ Աղբերականց դաշտիս մեջ և ահա իսկույն հոն դեսպան հասավ իրեն իր թագավորեն (Պերոզե), որ շուտով հետ դառնա, գա ի Պարսկաստան, և ելավ գնաց անդարձ...

Աղբերականց դաշտակս, Բասենո ընդարձակ դաշտին և դաշտագավառաց սկիզբն է, ինչպես իր երկու ջուխտակ գեղերն՝ ՏՈՒ մեծ և փոքր, Բասենո գլուխ էին և հին ատեն կըսվեին ԴՈՒ և ՈՐԴՈՐՈՒ, Որդունյաց ցեղին նահապետին և Բասենո եպիսկոպոսի մը աթոռ ըլլալով։ Կարինեն ինչվան ի Սողանլու լեռներ, և անկե անդին ինչվան ի Շիրակ գավառ կտարածվի Բասեն, Երասխա հետ ցածնալով։ Հին և անհիշատակ ժամանակներ՝ հովանորեն ԲԱՍ անվամբ նահապետ մը իր ցեղով կտիրեր այս բարեբեր տարածության վրա, որ հետո Արարատա նահանգին կամ աշխարհին մասն ըլլալով, անոր գավառաց երկուքն եղան։ Այսինքն մեր քաղաքական կամ աշխարհագրական բաժանմանց համեմատելով՝ գավառի մը համար շատ ընդարձակ էր, երկու գավառի բաժնվեցավ, միայն չափով և օրենքով, առանց բնական բաժանարար մ՝ ունենալու, լեռ կամ գետ։ Մեկն, արևմտյանն ՎԵՐԻՆ ըսվեցավ, դրիցը բարձրության համար, մյուսն՝ արևելյանն, ՍՏՈՐԻՆ, կերևի թե այս ետքինիս վերակացուն կամ իշխողն էր, որ հին ատեն կըսվեր Բասենո դա-

տավոր։ Վերինն Բասեն, թեև զառ ի վայր հակյալ՝ բայց անզգալի և բոլորովին դուրան է, ստորինն ավելի ալեձև, մանր բլուրներով և տափերով։ Սողանլու լեռներեն անդին եղած դաշտն ալ, իրև շարունակություն մը Բասենո, կըսվեր ԱՆՓԱՑՏ ԲԱՍԵԱՆ, հետո Վունդ անվամբ Բուլղար մը հոն բնակելով՝ Վանանդ ըսվեցավ Վանանդա դաշտն ալ կխառնվի Շիրակա դաշտին հետ և այսպես անհուն տարածություն մը կձևանա Երասխա հովտին, զոր միայն հիշյալ Սողանլու անտառախիտ լեռներն կկտրեն, անոր փայտ մատակարարելու համար, միանգամայն և ինչպես քիչ մ՝ առաջ ըսի՝ Բասենո և Վանանդա սահմանահատ են։

Երկրին տափակությանն համար շատ տեղ ջրոց ճահիճներ կան ի Բասեն։ Այս տեղս ավելի Պոսիդոնի, քան Պղուտոնի վիճակ կրնա ըսվիլ, թեև այս ետքինիս նշաններ ալ կան՝ ատենոք, ավելի կամ պակաս եղած են այս ջրերս, և ըստ այնմ, բնակությունն ալ ավելի կամ պակաս եղած է։ Հիմա երկու հարյուրի չափ դեղ կհամարվի երկու մասին միանգամայն, երեք մասն Վերինին մեջ, երկուքն՝ Վարինին, գլխավոր շենքն Վերին Բասենի մեջն է, ՀԱՍԱՆԳԱԼԵ բերդաքաղաքն (իբրև 39 աստիճան և 58 րոպե լայնության աստիճանի տակ), Կարնո քաղաքեն յոթն ժամ հեռու։ Ժե դարուն մեջ Պարսից իշխող Ուզուն Հասան կամ Հասան-Բեկ թագավորն համարվի շինող կամ նորոգող Հասանգալեի, թեպետ ոմանք շատ ավելի հին կարծեն, ի Հուստինիանոս և ի Թեոդորոս կայսերաց շինյալ, և հետո ի Գրիգորե Մագիստրոսե[12] կամ իր ազգական Հասան անուն իշխանե մը և ըստ ոմանց ի Ճենովացվոց։ Ով ալ ըլլա շինողն, այս կողմերուս պահպանությանն համար ամրոց մը հաստատեր է զայն և կրցածին չափ ալ ամրացուցեր, նախնյաց հիշած Սիրանյաց հրաբխային լերին արևմտյան թևի վրա, հինգ հազար հարյուր քառասուն ոտք բարձր ծովուն երեսեն, ուսկից հազար յոթ հարյուր ոտք ավելի բարձր է լերան գագաթն, որ հյուսիսեն քաղաքին վրա նայելով՝ շատ ապահով չըներ զայն ի թշնամյաց, թեև բավական ամուր է բերդն, երկու կարգ պարիսպներով և աշտարակներով, քառակուսի իմն ձևով, իբրև երեք հարյուր քսան չափ երկայն և հարյուրեն ավելի լայն. քաղաքն բերդին հարավային արևմտյան կողմն է և առանձին պարիսպ ունենալով, Հասանգալե եռապարիսպ կըսվի։ Բայց այս պարիսպներս խարխլած են, խրամներն ալ ավրված և ցամքած, բացի արևելյան կողմեն ուր դեռ ջուր կա, բայց այն ալ ի վնաս քաղաքին, վասնզի ամառը կապտկանե զոր

և կրնար վնասակար ըլլալ, եթե այն գեշ ջրերուն քով լավ և առողջարար ջուրք ալ չըլլային, այսինքն՝ Ջերմուկք։ Արևելյան և արևմտյան կողմերը մեկ մեկ մեծ դուռ ունին պարիսպքն։ Ռուսք, 1829-ին, անաշխատ առին այս բերդս, վասնզի օսմանյանք թողեր էին, և նորեն անոնց ձեռք թողլու ատեննին՝ ավրշտրկեցին։ Այն ատեն հինգ հարյուր տուներն ավելի բնակիչ ուներ Հասանգալե, հիմա երեք հարյուրեն ավելի, մեծ մասն մահմեդական, որ մզկիթ մը ունին բարձրագիր և փայլուն մնիրայով։ Ժամանակ ունեցող հետախույզն կրնա գոնե քանի մը հին հիշատակներ գտնել կամ նըշանակելու բաներ, ինչպես այն քարաժայռը, որ բերդին մեկ կողմը կախվածի պես կեցած է և փորած քարայր մ՝ ունի, որուն պատերուն և ձեղուններուն մեջ ցցած են եղջյուրներ, զոր ոմանք կարծեցին կոապաշտից ատեն մնացորդ զոհագործությանց, մեծամեծ քարերու կույտք ի արևմտից և ի հարավից բերդին,— ջրամբարք լերան գլուխը և ՀԱՍԱՆՏԻՏԵ ուխտատեղին,— քարակտուր և գետնափոր ճամբայն, որ կիջեցնե ի գետեղրն։

Ես ասոնց ամենն ալ չտեսա, և ոչ իսկ ԲԱՍԵՆՈ ՎԱՆՔՆ, որ Միրանյաց լերին արևելակողմը շինված է ի Գրիգորե Մագիստրոսե, որո գերեզմանն ալ կրսվի հոն, փաքրիկ, այլ ամրաշեն և գրմբեթավոր եկեղեցվույն դրան քով, որուն շենքեն ավելի զմայլեցուցիչ է դիրքն՝ նայելով ծովանման հարթածավալ դաշտին վրա, ուր Մուրց գետ (Բինգյոլ-սու) կխառնվի Երասխա հետ (Բասենու կամ Հասան-գալեի ջուր) Քյոփրու-քյոյին քով և ուրիշ վտակներ ալ՝ անոնց։ Ջորս դին հեռուեն պարսպաձև լեռներ, դիմացը՝ Ստորին Բասեն, դար ու փոս ձևով, իսկ մոտերը գուր ու շիտակ գետին մը, որ դալարության ատեն հիրավի կանաչ ծովու կերպարանք կընծայե, որուն համեմատ չեն երևնար ցրվյալ կեղերն։

Նորընծա Երասխ գետն, Հասանգալեի հարավակողմը պատելով, կանցնի, վրան քառակամար հին քարաշեն կամուրջ մը կա, որուն հնությունն հիմա փայտով կարկտված է։ Անկեց անցնելով և կես փարսախ մը դեպի արևմուտք դառնալով հարավախառն՝ կերևան և կլսվին անվանի Ջերմրկաց ցայտքն, շոգին և հոտերն։ Ջանազան աղբյուրներ են, ավելի կամ պակաս տաքությամբ, ամենեն տաքն է երեսուներկու աստիճան Ռեոմյուրի, իսկ տեսակք ջրույն են այլևայլ՝ աղային, ծծմբային, բորակուտ, կպրահամ և երկաթահամ, ոմանք ինչվան գետուն միջեն ալ կբխեն, պղպջալով և ցատքտելով։ Կարնո Իլիճեի ջերմկաց պես ասոնք ալ կգործածվին

բաղանյաց, մանավանդ իրեքն, որոց երկուքն գմբեթավոր ծածկի տակ առնվեցան։ Մեկը մեծ է և քարաշեն, իննանկյունի ավտզանով, իբր երեսուն ոտք տրամագծով և հարյուր ութսուն մետր շրջապատով և տասը մետր խորությամբ, գեղեցիկ գմբեթով, զոր ոմանք հռովմայեցի կամ բյուզանդացի շինված կսեպեն, ոմանք ալ կըսեն, թե Իսմայիլ անվամբ Կարնո մաքսապետ մը շինած է, ոմանք ալ Էրզրումի Զիգթե Մինարեին շինության ժամանակակից կսեպեն։ Մեր միջնադարյան բժշկապետք ՀԱՄԱՍՓՅՈՒՌ կամ ՀԱՄԱՍՊՐԱՄ[13] հրաշալի ծաղկան վրա խոսելու ատեն, կհիշեն Բասենո ջերմուկներն ի գյուղն Դարոյնք, այս անվամբ ուրիշ տեղիք ալ կան ի Հայս, բայց կերևի թե այն ատեն Հասանգալայի տեղն այս գյուղս էր։ (Միայն պետք է հիշեմ, որ Բասենո մեջ ուրիշ տեղվանք ալ կան Ջերմուկք, ինչպես Քյոփրու-քյոյին քով, Ջվին գյուղին քով և ասոր հարավակողմը բնիկ Ջերմուկ անվամբ գեղ մ՝ ալ կա)։ Հավանորեն մեր Հիպոկրատաց հոս հիշած լեռն այլ Միրանյաց լեռն է, որուն համար կըսեն թե են «Վէմք երեք և գտանի (Համասփյուռ ծաղիկն) ի մէջ վիմացն, իսկ նրանք երեք վիմացն՝ այս են. մին չորեքկուսի է, և միւսն եղան և տափակ, և այլ տես. և զմինն յայլ լերին տես... զոր անուանեն ԱՅԳՈՐԴ»։ Այս Այգորդ անվամբ գեղ մը ծանոթ է Բասենո գլուխը, Դուա մոտ, գեղ մ՝ ալ կհիշե բժշկարանն ԽՆՁՈՐԲԵՐԴ անվամբ, ուր նույնպես կգտնվեր այն հրաշալի ամենաբույժ ծաղիկն, որո գերագույն զորությունն ալ էր միտք բանալ։ Բայց որովհետև Անանիա Շիրակացվո պես մեկ մը (ինչպես կավանդեն մեր բժիշկքն) այս ծաղիկս փորձելով միտքը չարաչար բացեր էր, ես վախցա փնտրելու այն երկդիմի, բաղմագույնի և տասներկուանձյուղ ծաղիկը և հեռացա...

Հասանգալայի և իր ծիրանյաց լերին շրջ կողմի ստորոտքն ալ նշանավոր տեղվանք կան, ամենն ալ մոտիկ քաղաքին։ Արևմուտքեն, հիշյալ Ջերմուկքն, հյուսիսեն Սուրբ Հովհաննես վանքը, որ առաջ ԱԿՍԻԳՈՄՄ կըսվեր, հարավեն՝ ԱՎԱՐ գեղը, ուր բանակեր էր Շապուհ Միհրանյան Պարսից զորավարն, համի 488, Վահանա դեմ գալով, երբ լսեց իր Պերոզ թագավորին մահը և դարձավ ի Պարսկաստան։ Իսկ արևելքեն ավելի նշանավոր, միանգամայն և ահավոր տեղ է ՈԿՈՄԻ (կամ ԱԻԿՈՄԻ) գյուղն, որ այս կողմերուս գլխավոր շենքն եղած կերևի. գոնե շատ բարգավաճ քաղաքավան մ՝ էր առաջին կես ԺԱ դարու։ Երբ նախ Վասիլ կայսրն եկավ (համի 1021) և ի վրեժ արհամարհանաց վրաց թագավորին,

որ տիրացեր էր այս երկրիս, ավրեց «Հրով, սրով և գերութեամբ», նույնպես անոր շրջակա գեղեր և ագարակներ ալ,* հետո, երեսուն-հինգ տարի վերջը (1056), եկան Թուրքաց ասպատակքն և Արծինի մեջ ըրածնին հոս ալ կրկնեցին։ Աստվածահայտնության տոնին գիշերը հանկարծ վրա հասնելով, բոլոր բնակիչքը «որ երեսուն հազար հոգի էին, սրակոտոր ըրին, մեկ մրրկե զարնված պարտիզի մը պես անապատացյալ թողուցին այն մարդաշատ և ընչավետ ավանը», ինչպես կանվանե ժամանակակից հեղինակն[14], և ավարը բեռցուցած տարին։ Երեսունհինգ տարի առաջ ավրված տեղվո մը նորեն երեսուն հազար բնակչոք լեցվիլն կցուցնե, որ հիրավի բանուկ և հարուստ տեղ մ' է եղեր, բայց Արծին պես ալ ամրություն չունի եղեր։ Անշուշտ չկար այն ատեն Հասանգալայի բերդն, ապա թե ոչ կհիշեր պատմիչն։

Երկու փարսախ կամ երկու ժամ քաղքեն հեռու, Մուրց և Բասեն ջուր միանալով, կգործեն ղԵրասխ, ասոնց միության վրա ձգված է Արևելքի հռչակավոր կամրջոց մեկն, ոչ այնքան մեծագործությամբը, որքան հիշատակավ, և է Հովվակամուրջն՝ ՉՈՊԱՆ-ՔՅՈՓՐՈՒՍԻ, համարելով թե աղքատ կարծված հարուստ հովիվ մը շինած ըլլա զայն։ Կամուրջին մեկ գլուխն գրեթե Հըմնար լերին կողեն կելլե, մեկալը՝ դաշտին վրա կկանգնի, յոթն լայնաբաց և սրամեջ ու իրարու անհավասար կամարներով, յոթ հարյուր մետր երկայն և իբրև երեսուն աստիճան լայն, բոլոր ճերմակ ու գորշագույն քարերով, որոց ոմանց վրա գծաձև քանդակներ կերևան։ Կամարաց գլուխները վեցանկյունի տնակներու նման շինված են, մեկուն վրա ալ պզտի սենյակ մը կա ցրամբ և պատուհանիվ, իբրև բնակարան պահպանի, կամուրջին երկու կողմն ալ պսակ կամ պատվար կա, երեք աստիճան բարձրությամբ, որ հիմա խանգարյալ է։ Այսպես, կամարաց մեկն ալ փլեր էր երկրաշարժեն, իբր երեսուն տարիով առաջ, զոր Կարնո Հաֆըզ փաշան նորոգել տվավ Վաղարշավանի մեծամեծ տաշած քարերով, բայց տասներեք տարի հետև նորեն փլավ, այն ատեն փայտով կարկատեցին։ Իսկ վերջի Ռուսաց և Օսմանյանց պատերազմին ատեն, ետքիններս մասամբ փլուցին կամուրջը՝ թշնամյաց անցքը խափանելու համար և հետո հարկ եղավ վեր ի վերո նորոգել։

---

* Արիստակես Լաստիվերցի, «Պատմութիւն վասն անցիցն անցելոց ի յայլազգեան ազգաց, որք շուրջ զմեզ են»։ Գլուխ Բ, Վենետիկ, 1844 թ.։

Այս վիճակին մեջ ալ պահելով իր հնության շնորհքը, դեռ արժանի է զննության Հովվակամուրջն Երասխա, որ կայսերաց կապած կամուրջները կոտրտելով, զասիկա պահեր է երկար դարե ի վեր, անծանոթ թողլով շինողին անունը և ժամանակը։ Արևմտյան կողմ, երկու արձանագրի հետք կերևան, բայց դեռ կարդացված կամ ըստուգված չեն. ոմանք ինչվան Դարեհի Վշտասպյա մեր հայկակն Տիգրանին ժամանակակցին կընծայեն ասոր շինությունը, ոմանք ալ մեր Վաղարշ թագավորին, ի սկիզբն Գ դարու և հետո նորոգյալ ի Արաբացվոց կամ ի Թուրքաց։ Գետույն ձախ կողմեն երկնցած բլրի մը տափակ սարին վրա, նոճիներով շրջապատված շիրիմ մը կա, կըսեն թե հոն կհանգչի շինող կամրջին։ Ստո՞ւյգ է թե ոչ՝ չեմ գիտեր, բայց արժանի էր այնպիսի նկարագեղ տեղվո և հոյակապ մահարձանի այն ճարտարն, որ կրցավ այսպիսի քարաշղթա սանձով մը նվաճել զկամրջընկեցն Երասխ, որ իբր չկարենալով դեռ իր պատանեկան բազուկներովը այսքան ամրությունը ցնցել, քիչ մը խոտորեր է անոր ներքևեն, այլ ոչ ազատեր բոլորովին։

Այս մեծ կամուրջս իհարկե կպահանջեր քովը մեծ շենք մ՝ ալ բնակության և ունի քանի մը բոպե հեռու, հյուսիսային արևմտյան կողմը իր անվամբ գեղը, ՔՅՈՓՐՈԻ-ՔՅՈՅ, հիմա երեսուն տունով, որոց շատն մեր ազգայնոց են։ Այս հիմա աննշան գյուղին քով կա ուրիշ նշանավոր շենք կամ ավերակ մ՝ ալ, ընդարձակ քարաշեն կարավանատեղի կամ քառակուսի փակ մը, հարյուր քսան աստիճան երկայն, յոթանասուն աստիճան լայն, կիսով չափ թաղված ի հող։ Երկու կարգ ութ-ութ գեղեցիկ քանդակազարդ սյուներով, իրեք սրանկյուն կամարակապ սրահի բաժնված, իբր երեսուն աստիճան բարձրությամբ, պատերն շատ թանձր են, իբրև վեց ոտնաչափ, քարուկրով շինված և ոտնաչափ մեծությամբ տաշած քարերով պատած, չորս անկյունները և երկու երկայն կողմերուն գեպի արևելք և արևմուտք, մեջտեղը՝ կան կես աշտարակաձևք, դուռը հարավակողմն է, որուն առջին բակ մ՝ է, երկու դին մեկ-մեկ քառակուսի սենյակ, իբր քսաներկու աստիճան, պատուհան չունի, ձեղունն ալ ընկած է, պատերն ալ ավրշտրկած, կես մը հնությամբ, կես մ՝ ալ բռնությամբ, քարերը ուրիշ նոր շենքերու ի գործ ածվելով, տեղն ալ ամայի թողնված։ Առաջուց կարավանաց իջևան էր, դրբաստները պատերուն տակ կկապեին, մարդիկ երկու սյունաշարից մեջ կկենային։ Ո՞վ և ի՞նչ բանի համար շիներ էր այս տեղս. մերազգիք կկարծեն, թե մասն է ՎԱՂԱՐՇԱՎԱՆԻ, այսինքն այն ավա-

նին, զոր շինեց իբր համի հարյուր իննսուն վեց Վաղարշակ թագավորն մեր, Տրդատա պապն, ի հիշատակ իր ծննդյանը, վասնզի ձմեռ ատեն մայրն ի Այրարատ երթալով՝ հոս ծնավ զնա։ Մինչև ի ԺԱ դար կհիշվի Վաղարշավան իբրև մեծ շեն տեղ մը, անկե հետև զոնե ես չեմ հիշեր ի պատմության. զուցե Արծնին և Ակոմա ավերիչ ձեռքն Վաղարշավանո՞ւ ալ զպատն։ Իսկ այս քաղաքավանս, որ շինված էր «ի գաւառին Բասենոյ, ի տեղւոջ, ուր խառնին Մուրց և Երասխ». հիմակվան խառնըրդոց տեղեն քիչ մը հեռու է և զուցե ըլլա արևելակողմը Հաղան մեծ գյուղին քով, վասնզի կավանդեն բնակիչքն (վաթսուն տուն հայազգի), թե ատենոր մեծ քաղաք մ՝ եղած ըլլա հոն։ Իսկ կամրջագյուղն և իր քովի իջևանատեղին շատ հավանորեն ԲՈԼՈՐԱՊԱՀԱԿ կոչված տեղն է, որ համար է դարու պատմիչ մը ղնույն կրսե, զոր ինչ Խորենացին վասն Վաղարշավանի, ուր «Մուրց եւ Երասխ իրատնին»* և կպատմե թե հոն (համին 578), Պարսից մեծ զորավարն Տամ Խոսրով (Տեն-Խոսրու) պատերազմեցավ և հաղթեց հունաց։ Զարմանալի է, որ անկե յոթ հարյուր տարի վերջը (համին 1335), այս անունս զրեթե անփոփոխ, իտալացի վաճառականի մը գրչի տակ կկարդացվի Polorbecche գրած, որ կարծես կերպով մը կհավաստե տեղացյաց ավանդությունն, թե ճենովացոց շինած կարավանատունց մեկն է։ Այս ալ անտարակույս ստույգ է, որ այն տեղն ալ մեր Բուրինյանց Այաս նավահանգստեն ի Դավրեժ գնացող եկող կարավանաց իջևաններուն մեկն էր։ Ինչվան այս դարուս սկիզբները ճամբորդ գաղղիացի մ՝ ալ Bagaktun կանվանե այս տեղս, որ է ՊԱՀԱԿՏՈՒՆ։ Վերի անվան հետ զույգ ըլլալով կնշանակե, որ այստեղս ի վաղուց պահպանության համար սահմանված տեղ մ՝ եղած է, զուցե Վաղարշա օրերեն և այլ առաջ, անցուդարձի մեծ կենդրոն մ՝ եղած է։ Միով բանիվ, Հովվակամուրջն, Վաղարշավան և Բոլորապահակ, հետաքննության արժանի տեղվանք կամ մեկ մեծ տեղ մ՝ են։

Բնաքնին պետք չէ դանց առնե ասկեց կես ժամի չափ դեպի հյուսիս խոտորելու և հրաբխային գետնի մը վերա լավայի, տուփի և չեչաքարաց մեջ դիտելու հանքային աղբյուրներ լեղի և տապահամ, որք նեղ ծործորով եկած աւակի մը մեջ կթափին։ Շատ համբավյալ են այս ջուրերս իբրև առողջարար, անոր համար խու-

* Մովսես Խորենացի, «Պատմութիւն հայոց», գիրք երկրորդ, գլ։

որն բազմություն կուգա և ամանք ի ուխտավորաց, զուլխպուն չորեր կկախեն ջերմկաց եզերք բուսած վայրի վարդենյաց վրա։ Քիչ հեռու ավելի սաստկահոս աղբյուր մը կա ճերմակ և եկի գրս, որ երկաթի համ չունի և քսան մետր տրամագծով ավազանի մը մեջ լեցվելով, կելլա կիսափվի հիշյալ առվակին մեջ։ Ջուրը թեև լեղվահամ է, այլ ախորժելի կուգա կենդանյաց, շորս գին գետինը շատ բարեբեր է, և երկրացիկ ժամակաց կճեղներով ծածկված։ Բուցն ավելի հետաքննելի ըլլան հնասիրին և Հայրենասիրին Բոյոբաղակին հին բնակչաց հանգստարանքն, խոյաձև, ձիաձև գերեզմանքն հայոց, որոց վրա քանդակագարդ խաչեր կատարածեն իրենց սուրբ հովանին ի մեջ անուշահոտ վայրի ծաղիկաց և գետնանոպաղ ճակնգեղաց...

Ո՜հ, ինչ անուշ կուգար՝ նաև հետ ցամբկան, այն խայտաձևաց մեջ բուսած և քաղված ծաղիկն ու ծաղիկն։

Հովվակամուրջն Եռաբխա. Բասենո երկու մասերուն միացնող շատ հեռու չէ և Վերին Սասունին դեպի Սասունի կիսկնցեն շատով, եթե չուզե մեկն ճամբն դուրս և հեռու մնացյալ տեղերու ալ այց երթալ։ Բասենո բնադրավայրն և երասխա աղբնակաց ծործորներու և ձորակներու մեջ իմաքեն պիտի ըլլան ոչ սակավ հին և նշանակաւոր տեղվանք, որոնցմե մեկ-երկուքն գիտ ալ Համբաս շեղեցին։ Ամենեն գլխավորն էր ԱՂՈՒՆԻ կամ ԱՎՆԻԿԱ-ԲԻՐԻՆ, որուն համբավն ալ կամուրջին պես հռչակված և տարածված է այս կողմերս և ա՛լ շատ հեռու։ Կոչվեր է ազգի զարմանալի շինվածքն և գրեցն համար՝ զարմանալի շինող եամ ծագում մ՝ ալ ունեցած պիտի ըլլա, զոր ոչ մեկն հիմա ուշադիր տա այլազգական անունն հիմանալու։ Բերն քաղաք եամ երիտասարդաց բերդ, այլն հին Հայկական անունն որ Տիգրանակերտ և Հայոցաղաք զարձնեն գոված է մեն և հիմա մնացեր է Խորվատ բերդ անվամբ։ Ամենա անամանուն, հանդուգնություն պատեր է անոր գրեցեր քաղաքն և վախ փախ-փորակ հայերով աւարեր և պանիներ ան ամարտներ Հնոյեան, բնակիչ և բուսական դրու ա՛ն և զարմանալի գրքանք։ Շատ տասնամյակներ են ցնմին մեր հայրենաց հարար ու մեկ հիշատակարան մեջ։ Բուլ աշխարհաց Կարմ. Ցիլարատա և Տոլոբերան սահմանագիծի մոտ Խաչեն հարավային խորտոր։ Բիսեյրն իրար Սո ոգի Ցիլարատ, փաստաց մեկան նորա գլուխ շատ մը ցուրտն դրոց մեջ կամրանա հրաբին քար գոյություն մ՝ ալ բազալտյան հրաբանոց ապառաժ քարերով, որ

ատորոտն է Ավնիկ գեղը, իբր վաթսուն տնով. բնակիչքն մահմեդական, բայց հայու արյան նշան ունին։ Գեղին հյուսիսային կողմեն կբարձրանա կարմրագույն լեռնաբլուրն, վեց հարյուր մետր շեպ և շիտակ, հարավային երեսը բոլորովին տաշած պատի պես կերևի։ Հյուսիսայինը՝ կարգ կարգ պարսպով պատած, արևմուտքեն ուրիշ բլուրներ կկպչին, բայց շատ ցած ըլլալով՝ այս կողմեն ալ սեպուհ և զատած կերևա, իսկ արևելքեն, դժվարակոխ ժայռեր և կոշկոռներ ձգված են ուրիշ բլուրներու միջոց, որոց վրայեն կամ միջեն միայն, կարելի է դժոխանման ճամբա մը բանալ, Ավնիկա մոտենալու համար։ Հյուսիսային կողմն ալ, վարեն կիպ բլուր մը կա, բայց վերի դին զատված է, իբրև թե ճղքված ըլլար մեծ լեռնաբլրեն և իր գլխեն հոս հասնելու համար դար ի վեր դիվական կամուրջ մը պետք էր ձգել և այնպես ալ եղած է, կրսեն ատենոք և դեռ շենքի կամ գերանաց մնացորդաց նմանություն կիրևի հոն։ Քարալերան գագաթն, ուրիշ շատ հրաբխի բաժակաց նման, իրեք պատռված ունի, կամ իրեք ժայռեր ցցված քառասուն-հիսուն ոտք բարձրությամբ։ Ո՞վ կրնա այս արծվախաղաց, ամպախաղաց կետերուն միջոց բույն կամ տուն դնել և ինչպիսի՞ բնակության. ապահովությա՞ն համար, թե՞ հանդգնության և մեծագործության նշանակ։ Որն որ ըլլա, անշուշտ սովորական հանճար կամ հասարակ մարդ մը չէր Ավնիկա բերդին կանգնողն։

Կամ նորահնար արվեստ մը գիտեր այնպիսի տեղ շենք շինելու, կամ հոն ելնելու նորասքանչ կերպ մը, ոտք մը, թև մը, հրամազ, բոցամորուս, ծիաշունչ Վահագնի պես մեկ մը պետք էր ըլլալ, որ ծիրանի ծովերե և ամպերե վազելով՝ ծիրանենկար, եղեգնաշար թևերով, կարենար հոս ելնել և բերդ մը կանգնել։ Այս բանս շատ ավելի հավատալի է, քան թե այն նկարագիրն, զոր մեր նախնի վիպասանք կընծայեին Վահագնի, նաև հավանական իսկ կարծվի, վասնզի մեր քաղաքաշեն նախնյաց մեջ կդասվի «Վահանիկն կամ Վահագն, որ զՈՒնիկ շինեաց», ինչպես գրված է առ համառոտ աշխարհագիրս մեր և է անշուշտ Ավնիկս այս։

Քարալերին այն մասն, որ վերոհիշյալ հյուսիսակողմն եղած քարաբլրին գագաթան կհավասարի, պարսպով պատած է, բայց հիմա կիսակործան թողած։ Զորս դին անանկ դար վար վախուտ է, որ հազիվ քանի մը ոտք դնելու կետ կա հարավային կողմը։ Ասկե վեր դարձեալ տեղ մը կա, բայց ան ալ դար վար և ժայռերով ցցված, որոց միջոցը պատ քաշած է, տեղ մ՝ ալ ժայռերու մեջ գահաձև գոգ

մը կտրված-բացված է բնակության համար, թեպետև պատի նշան չերևար։ Քովը ջրամբար մը փորած է, մեկ դին ալ խոռոչ մը կա, ուսկից կըսեն թե կամարակապ քարակտուր համբա բացած է։ Ասկե վերն է այն եռաժայռ գագաթն, որոց միջոց ալ կերևին քիչ մը պատի մնացորդք, այլ շենքի շնորհք չկա։ Միջին կամ հյուսիսային ժայռին տակը փորված է բնակության համար, նույնպես արևելյան և արևմտյան ժայռից վրա ալ գտնված շիտակ սեղկեր, այս (արևմտյան) հատվածին քով ալ կա փորված ջրամբար մը, անկե վեր քարայրի պես փորված մը։ Ասոր քով, չգիտեմ բնությո՞ւն թե դյութությունն բուսուցեր է վայրի վարդենի մը, որ այս ամայությանն մեջ փոխանակ ղվարթության տալու, կարմանք և սոսկում մը կպատճառե, վասնզի հմայությանց առիթ մ՝ ալ եղած է։ Ապշեցա մնացի, երբ անոր կարճուկ ճղերուն վրա կախված տեսա հնոտի և ցնցոտի զգեստուց պատառներ, զոր նանրահավատ ուխտավորք և շատն հիվանդ ուխտավորք, կախեր էին՝ բժշկության գտնելու հույսով։ Ո՞ գիտե, թերևս ոմանք ի դարձին, կյանքերն ալ կորուսանելով այն հիրավի դժոխելանելի քարերուն մեջ, ուր ելնելու և քալելու համար կարգե դուրս ույժ մը, հարկ մը կամ հավատք մը պետք է, քալելն ալ ոտքի տեղ՝ շատ անգամ ձեռքով և ճանկերով իմանալու է, օգնական առնելով գավազաններ և չվաններ։ Բուսական ցեղեն միայն այն հանդուգն վարդենին չէր սեսածս, այլ գահավեժ սորերու և դարերու վրա իրենց տեղ դտած էին սեսպտուղ ծորենին, արծաթտերև, կարճուկ ղղեարենին և ավելի վարի աստիճանի բույսեր, հայկական տղրրկախոտն, տերևփուկն (Centaurea Colcitrapa), Մեղրածուծն կամ խորտակ ծոթրինն (Marrubium), Հինգտերևուկն, Շահոգրամն, հայկական քոսքսուկն (Scabiosa), սանդրաձև հասկով ընդեղեն մը, առվույտը և ուրիշ ասոնց նման ու անանման բույսեր։ Քիչ ժամանակի և դժվարությամբ շարժված տեղի մը մեջ դժվար էր շատ բան փնտրել, մանավանդ որ Ավնիկ ալ բբոնությենե ազատ մնացած չէր։ Շենքերն բոլորովին կործանած, քարի մը վրա միայն տաճիկ գրության մը մնացորդ տեսա ասատուծո անունով, ավելի բան մը չկարնալով որոշել։ Բնության շրչակա տեսարանն ալ շատ ընդարձակ չէր կեցած տեղերես, վասնզի մոտը լեռներ կան, որոնցմե արևելյան կողմն եղած մեկն ալ Ավներկա լեռ անվանեցին գյուղի բնակիչքն, հարավային կողմն ալ ՄԵՐՔԵՇԵՅԻ (?) կանվանեին լեռ մը, որ կարմիր ու ճերմակ կճանման քարերով կփայլփլար։

Այսպիսի կերպարանքով և դիրքով բերդ մը, չեմ տարակուսիր, որ շատ հին պատմություն և դիպվածներ պիտի ունենա և հազարավոր տարիներ շեն ու նշանավոր կանգնած պիտի ըլլա, շատ բռնավորներու վախճան անվախճ մնացած և վերջապես նորահնար աչքերիչ գործիքներով կամ բնության մեծ ցնցմամբ մը կործանված։ Մեր պատմությանց մեջ առաջին անգամ Ավնիկա անունն կհիշվի Սուրբ Լուսավորչի մարմնույն գյուտովը. գտնողն, Գագիկ Ճգնավոր Դ դարուն վերջերը կամ ի Ե-ին, այս գեղեն էր հայրենյոք, թեպետ ոմանք ալ Կթնի կանվանեն անոր գեղը։ Շատ հավանական է, որ Հայոց և Պարսից տերությունները վերցվելեն հետև Արաբացիք, թեև դժվարությամբ, տիրած ըլլան Ավնիկա և Ժ դարուն սկիզբը թողած հանեաց կայսերաց, երբ ասենք, արևմտյան հայոց նորեն տիրել սկսան։ Հաջորդ դարուն կիսուն, երբ Թուրքաց ասպատակն ելավ, ավերեց զՈրկոմի և զԱրծն, ասոր ալ մոտեցավ։ Իրմե առաջ հոն փոքր ապավիներ էին բազմություն մարդկան շրջակա վիճակաց, իրենց ըռզակներովը, զորոնք տեսավ հեռվանց ավերածուն Տուղրիլ, բայց «ոչինչ փոյթ արար,— կըսե ժամանակակից պատմիչն,— քանզի ի հայելոյն միայն՝ ծանոթ զայն առնե», այսինքն՝ մեկ նայելով իմացավ, որ իրեն համար Կարնո բերդին պես և այլ ավելի անառիկ տեղ մ՝ էր Ավնիկ, և թողուց գնաց։ Դար դարի և տեարք տերերու հաջորդեցին հոս ալ։ ԺԳ դարուն մեջ, որ թաթարաց տերությունն առհասարակ կտարածեր, ԺԴ-ին մեջ սկսավ տկարանալ, այս դարուս վերջերը Հայաստանի մեծ մասին տիրեցին երկու թուրքմեն ցեղապետք, իրենց զրոշներուն նշաններովը կոչված Ագ-Կոյունլու և Կարա-Կոյունլու։ Այս ետքինիս ցեղապետին, Կարա-Մեհմեդի որդվոց մեկն՝ Մսբր կամ Միսիր անվամբ, կտիրեր Ավնիկա, կամ այս բերդիս ապավիներ էր՝ իրեն ցեղեն և իրմե առաջիններեն զորավոր աշխարհակալ և աշխարհավեր Լենկթիմուրի արշավանաց ատեն, որ առջի անգամ ի արևմուտք երթալուն, Տուղրիլի պես նայեցավ բերդին վրա և չորս դին ավրշտրկելով անցավ, գնաց, իսկ երկրորդ անգամուն, 1395-ին ամառը, եկավ անդառնալի կամքով կամ բերդը նվաճելու կամ անոր տերը։ Նախ՝ թղթով հրավեր ղրկեց Մսիրա, որ առանց պատերազմի գա հնազանդի և էրը նա պատասխան չտվավ՝ իր թոռներեն մեկը (Միրզա Մեհեմմեդ Սուլթան) խավրեց վրան, հետո ինքն ալ Ալաշկերտեն ելավ, Քյոսա դաղ լեռնեն անցավ և Ավնիկա ստորոտը մոտենալուն՝ մեկեն թմբկաց և տավղաց դոփմամբ հրամայեց հարձակիլ։ Գյուղավանն,

որ պարսպով պատված էր, շուտով առնվեցավ և քակվեցավ, Մսիր բերդը քաշվեցավ՝ լերան ամեն դյուրակոխ կողմերը ամրացնելով պատերով, քարերով և դռներով։ Լենկթիմուրի զորքն, վահանին գլխներուն վրա առած, աշխատությամբ ելան ինչվան բերդին պատերուն և դրան քով, մեքենաներ կանգնեցին պատերը ծեծելու և նետաձիգ ըլլալու բերդին պահապաններուն։ Մսիր լավ գիտեր Լենկթիմուրի ուժն և համառությունը, որու դեմ բան չէր դիմանար, սակայն այնպիսի անառիկ բերդ մ՝ ալ շուտով թողուլը շատ ծանր էր իրեն։ Աղաչավոր խավրեց, որ հավանի աշխարհակալն ընդունել իր հնազանդությունը, բայց ներե իրեն չգալուն, որ սոսկ վախեն էր։ Լենկթիմուր պատվեց Մսիրա նվիրակները և ընծաներով դարձուց, իմացնելով, որ հարկ է Մսիրա իջնել և իրեն գալը։ Սա դժվարեցավ և հանդգնությամբ պատվիրեց իր Թուրքմենաց, որ քար ու նետ թափեն թաթարաց վրա։ Երկրորդ օրը Երզնկացի իշխողն՝ Թահարդան, որ Լենկթիմուրի նիզակակից էր, հարմար դիրք մը գտնելով, ելավ ձայն տվավ Մսիրա և հորդորեց անօգուտ քաջությունը թողուլ և շուտով գալ հնազանդիլ, որպեսզի անվտանգ ապրի։ Մսիր տագնապած՝ նորեն աղաչավոր խավրեց խանին իր երախա որդին և իր խնամի զորավար մը Սաղրլմիշ անուն, գեղեցիկ հայկական ձիեր ընծա խավրելով, բայց խանն իմանալով անոր հողդողդ միտքը, Սաղրլմիշը կապել տվավ։ Նույն դիշերը զորքերն ավելի բազմությամբ հարձակեցան, դրեթե ինչվան լերան գլուխը ելան, այն կամավոր տեղվույն քով, զոր հիշեցի։ Բերդին նետ մը ընկավ բանակին մեջ թղթով մը, որ կիմացներ, թե բերդապահք մեծ վստահություն ունին Սաղրլմիշի վրա, եթե նա ետ չդառնար՝ հուսահատելով անձնատուր կըլլան։ Լենկթիմուր բերել տվավ Մսիրա տղայն, որ վեց տարվան էր, բայց իր դայակներեն խրատված՝ անանկ լալով, աղաչանքով խոսեցավ, որ բռնավորն գթալով, իր թառանցը նման զգեստներ հագուց անոր, վիզն ալ ոսկի մանյակ մը դրավ և նորեն թուղթ գրել տալով, դարձուց Մսիրա, որպեսզի շուշանա բերդեն իջնելու։ Թուրքմենք տեսնելով տղայն և լսելով Լենկթիմուրա պատգամը, սկսան գանգտիլ Մսիրա դեմ, որ այս անգամ ալ չդիջանելով՝ դեսպանները պատվով դարձուց, բայց հետ չկեցավ պատերազմե։ Լենկթիմուր պատվիրեց, որ մեքենաները մոտեցնեն և քարե ռումբերը թափեն պատերուն վրա, որով քանի մը տուն կործանեցին, շատ մարդ ալ նետահար ըրին, բայց իրենք ալ շատ վնասվեցան պաշարողաց քարաձգությենեն։ Մսիր այս անգամ

ավելի հուսակտուր, իր մայրը աղաչավոր խավրեց, որ եկավ ընկավ խանին ոտքերը և լալով իմացուց, որ որդվույն բրածն ոչ այնքան հանդգնութենե էր, որքան վախեն և շփոթութենեն և ներումն կբինդրեր։ Լենկթիմուր իր սովորականեն ավելի երկայնամտություն ցուցնելով՝ խոստացավ ներելու, եթե շուտով դա Մսիր և մորը պատվո զգեստ հագցնել ուավ, նույնպես իր երկու տիկնայքն ալ (Սերայի-Մյուլք խանում և Թուման-աղա խանում) ծանրագին բազեստներ պարգևեցին ու ճամբեցին զնա, որ եկավ, խրատեց զորդին, խոնարհելու իրմե զորավորին։ Սակայն նա բանավորին համբերությունը տկարություն սեպելով, կամ բոլորովին հուսահատելով, այս անգամ ալ չուզեց տեղեն շարժիլ։ Այն ատեն Լենկթիմուր պատվիրեց իր մեկ թոռանը (Օսման աղա), որ ՄելՃՈՒՐ մը շինել տա, այս մելՃուր ըսվածն ձեռագործ բլուր մ՝ է։ Օրերով ճամբա հեռու երթալով զորքերն, ուր որ ծառ գտան ջարկեցին բերին, Ամենկա ստորոտը դիզեցին և վրան քար ու տիղմ խառնած կթափեին, այսպես վրայե վրա դիզելով ու թափելով։ Քիչ օրվան մեջ բարձրացուցին արվեստական բլուրը բնական քարաբլրեն ի վեր, դունդ մը զորաց վրան ելավ և սկսավ կարկտի պես քար թափել Ամենկա բերդին վրա և աղատման ճարը կտրել։ Արդեն բերդին ջուրն ալ պակսեր էր, Մսիր պահապաններեն և զինվորներեն դատ մարդ չիմացուց հոն, մեկալ մարդիկը վոնտեց։ Հուլիս ամսու վերջի օրն էր, եղանակին տաքությունն պատերազմին սաստկությանը հետ խառնված, մահու չափ կտագնապեր պաշարվածները։ Մսիր երկայն ատեն հուսահատ համառությամբ դիմացավ, բայց տեսնելով, որ քարե կարկուտն չի դադրիր այլ ամեն բան կկործանե, իր տեղակալը աղաչավոր խավրեց Միրզա Մեհեմմեդ սուլթանին, որ բարեխոս ըլլա ատ պապն։ Սա՝ այս անգամ ալ հանձն առավ ներելու, եթե Մսիր չուշանա իրեն գալու։ Բայց երբ նա նորեն համառեցավ կամ թե հիմարեցավ, թաթարք դիշերանց նեղ ու անկոխ ճամբաներե ելնելով, հասան ինչվան միջնաբերդին դրսի կամարակապ պարիսպներուն և մեկ քանիին վրան ելնելով շատ դժվարությամբ՝ հասան ինչվան բերդին վերջի պատերուն և սկսան մրճով և նդսվ դարնել ու խարխարել ու հեծաններ դնել, որ վրանին չփլչին։ Երբ զայտ տեսան պաշարողքն՝ բոլորովին հուսահատեցան, զենքերնին թողուցին, ոմանք ալ սկսան իրենք զիրենք ժայռերեն վար անդունդներու մեջ նետել։ Վերջապես Մսիր ալ տեսավ, որ ալ դեմ կենալու ճար չկար, նորեն մայրը և որդին խավրեց, որ խանին ոտքն ընկ-

նալով գթություն խնդրեն։ Մոր մը և որդիկի մը լացն և խնդրությունն բոնավորին սիրտը շարժեցին. խոստացավ չնորհելու Մարիամ կյանքը, եթե ինքնին գա խնդրելու գնույնն։ Նա դեռ այն օրն ալ իր կանգուն մնացած քարերուն մեջ կնցած՝ կմտածեր թե արդյոք լավ չէ՞ անոնց տակ ընկնիլ, քան թե կաղ բռնավորի մը ոտից տակ։ սակայն տեսնելով որ հավատարիմ ծառաներն անդամ դինքը կթողնին, թողուց ինքն ալ իր հուսո բույնը։ Երկրորդ օրը, ծագումորի կիսուն, Մարիամ վիզը դաստակ մը ձգած և մերկ ոտկուր մը բռնած, իջավ նախ Միրզա Մեհեմմեթ Սուլթանին տարն ընկավ և անոր պաշտպանությանը ապավինելով, եկավ անմատուր բլրյուս առ Լենկթիմուր։ Սա ալ կարգե դուրս գթություն մը ցուցնելով, չնորհեց կյանքը և պատվիրեց, որ տարվի ի Սուլթանին և անկից ի Սարրզանտ։ Ավնրկա մնացյալ շենքերը չավրեց Լենկթիմուր, միայն մարտկոցները և զենքերը վերուց. մնցր գոված գանձերը և կարասիքը բաժնեց անոր առման ատեն ադեկ աշխատողաց, իսկ Մարիամ մարդիկներեն ադեկ աշխատողաց վարձք՝ հարյուր հոգի ժայռերեն վար գահավիժեց. իբրև թե առանց այդպիսի մարդպատի մը սիրան չէր հանդչեր։ Ինչ որ հոն կեցավ, հանդչաներ և խնդալներ կատարեց։ Վանքի արդեն մելիմանաց բալրամի տիրն էին, վեցերորդ օրը Ամիրա բերդը հանձնեց Աբրամիշ Էմիրին և իջավ վար։ Հալիսի 4-ին էր։ Երբ հասավ հոս, գրուսոսի 21-ին հեռացավ, ասել է, որ հիսուն օրի չափ ելևէջմուր մը ուշացնող բերդն շատ ամուր բերդ է եղեր և արհամարհ Ամիրի անառիկ բաժեր է։

Շատ տարի չերը Երբ Ելևէջմուր Սամանչանց սուլթանին վրա գնորատ և ուսանի խանդելով պատերազմի կոչաներ ի Բոլոզեցա։ Եայլա ինչպես ամբ մը նեռավ իր հին այրատանաց հիշատակով։ Էր և մեծատուն աշխատանց պատատվելու իր վերջի տարին ալ 1411։ Հոլատի անունով մեկն էր Ամերիկա վերակացուն։ Իր մահվանեն էտյր շատ անցավ։ Մարիա Սեյրա հարս հալալություն, բնակություն Էրեն տիրեցին իրենց ժառանգ իրենց ամբողջություն և նոսն ապատոիչ։ Բայց մ եղավ բերդն Ամերիկա։ Եվ երբ հարյուր տարու ավելի դեռը 1555 ին տարին Սուլեյման Գարանք Խանմաղ շահին ուսմ պատերազմի ելերքաց։ Ամերիկայեն Հալատանի ուսուցիչ Հիլատակերը մը կրակ տվնացնակ։ Հետ ի Հեռուստյուն գոյանալն մինչև ի բերդն Ամերիկաց։ Բոլոր այն ատեն ալրուցան Ելևէջմուրեն խնայված գարմանքներն և անոնք հետ պատմություն մեր։ Բնական ապատարն, կամ ես չեմ

գիտեր, բայց բնության և հնության մեջ դեռ կեցած է իր զարմանալի և ահարկու կերպարանքը, որո վրա Լենկթիմուրի ըրած վնասն գուցե ըլլա միայն իբրև մեկ սպի մը հսկայազոր մարտիկի մը մարմնո վրա, ի մեջ շատ սպեաց, զոր անկե առաջ և վերջը ընդունած է, ինչվան որ անհրաժեշտ մահացու հարված մը զինքն ալ անկենդան թողած ըլլա՝ գոնե երկար ատեն... Վասնզի մեռյալ բերդերն երբեմն հարություն կառնուն և նոր բերդապահք հին բերդապահաց գերեզմանները կպսակեն, անոնց քով բուսած անպակաս և անջինջ ծալիկներով...

Ավնըկա սահմանեն չհեռացած, ուրիշ հայրենի նշխարք և նշմարք մ՝ ալ քննելու է անոր արևմտակողմյան հովիտներուն մեկուն մեջ, զոր ԻՇ վտակը կոռոգե։ Ասոր անվամբ ձևացյալ ԻՇԽՈՒ կամ ԻՇԽՍ անուն գյուղ մը կա հայոց, իբր Երեսուն տնով, բայց հին և բազմատուն տեղվո մը ավերակաց մեջ միայնացյալ, կամ մարդաշատ քաղաքի մը ՆԵԽԱՐ մոռացյալ. գուցե Ոկոմյա նման տեղ մը, կամ Արծինն, որոց կյանքն իրենց մահվան պատճառով միայն կհիշվին։ Այս տեղիս գլխավոր հիշատակարանն և իբրև քարոզակն անցյալ շինության և կենդանության՝ աշտարակ մ՝ է, բարձր ու բոլորշի, աշտարակ մը պահապանի պես մինակ կեցած ավերակաց և ամայության մեջ, հիսուն մետր բարձրությամբ և ինը մետր տրամագծով, տաշած ու շիտակ շարած քարերով, վայելուչ հայկական կամ սառակինյան քանդակներով, որ թեև ավերված են, բայց դեռ ոչ քայքայված։ Միայն աշտարակին ծայրերը կոտրտած են, որով ոմանք կարծեն, թե շատ ավելի բարձր եղած ըլլար։ Պատուտակաձև սանդուղ մը միջեն ինչվան վեր կհանե, խարիսխը կամ վարի կողմին ձևը կարծել կուտա, թե զանգակատուն էր. այսպես կավանդեն և բնակիչքն։ Քանի մը քարընկեց հեռու, կա հին և վայելուչ փոքր եկեղեցվո մը ավերակ, իբր Երեսուն մետր երկայնությամբ և կիսեն ավելի լայնությամբ։ Պատերուն թանձրությունը դիտողին սիրտն՝ կվկայե, թե բոնությամբ քակվեր է և ոչ հնությամբ, չորս դին ալ կան գեղացոց և մեր նախնյաց գերեզմանքն, կենդանակերպ մահարձանոք։ Քանի մը քարընկեց ալ հեռուն, քարաժայռի մը մեջ փորված խաչաձև սենյակ մը կա՝ բնակություն՞ն, թաղմա՞ն թե՞ պաշտաման տեղ...

Կարելի է Լենկթիմուրա զորքն Ավնըկա պաշարման ատեն ավրած ըլլան այս տեղս։ Պատմությունն կլռե Իշխուի անունն և դեպքերը, բայց ինձի անտարակույս կերևի, որ սա ինքն է ասկե

հազար հինգ հարյուր տարի առաջ հիշված ՈՍԽԱ գյուղն կամ ՈՍԽԱ ՏԵՂԻՔՆ, ուր Դ դարուն կիսեն վերջը հայք և պարսք իրարու հետ քանի մը հեղ կռվեցան, ըստ Բուզանդա (որ չէ հավանելի)։ Պարսից թագավորքն Ներսեհ և հետո Շապուհ, անձամբ եկեր էին կռվի և հաղթված փախան։

Ինձմե ավելի ժամանակ ունեցողին կթողում Ոսխա և Ավներկա միջոց և մոտ եղած ԹԱՎՍ կամ ԹԱՎՈՆՑ գյուղն ալ քննել, ՀԱՐՍ-ՆԵՔԱՐՆ ալ, և եթե ասոր անունեն հրապուրյալ՝ հարսին մը հիշատակարան փնտրե և չգտնե, պատնա մեր նախ հիշյալ Յաղան գյուղը։ Բնակիչքն իրենց գերեզմանաց մեջ կցուցնեն Ավներկա թագվորի մը դեղեցիկ դստեր գերեզման մը, անոնց հարցընե ասոր դիպվածը։

Անցնինք նորեն ի Հովվի կամուրջեն և երթանք ի արևելք, քիչ մը դեպի հյուսիս դառնալով, Սողանլու լեռները ելլելու իջնելու և ի Վանանդ մտնելու։ Առաջին հանդիպած գեղս ճամբուն վրա է, ԳԱՐԱ-ՋՈՒԽԱ, երկրորդ կեցած տեղս ԽՈՐԱՍԱՆ ավանն է՝ վեց ժամ կամուրջեն հեռի, Ստորին Բասենո գյուղերուն պատվավորն, հարյուր տուն բնակչով, փայտաշեն մզկիթավ։ Այս երկուքին միջոց դեպի հարավ կինկնա ՍԱՀՔՈՐԻ կամ ՍԱՀՔՈՐԱ գեղն, երբեմն ավան և գուցե ավելի մեծ և շեն տեղի, հիմա ամայացյալ։ Ռուսաց 1829-ի պատերազմին ատեն, քառասուն տուն հայ բնակիչ ուներ և ավելի շատ մահմեդական։ ԺԱ դարուն սկիզբն, Վասիլ Բ. կայսրն հունաց, ասոր քով բանակեցավ ամսև մ՝ ավելի, «խոր փոսիս պատնեշ արարեալ շուրջ զբանակաւն», վրաց Գեորգի թագավորին դեմ գացած ատեն։ Շարունակելով ճամբանիս միշտ դեպի հյուսիսային արևելք՝ լերանց սահմանը կմտնենք։ Զախ կողմեն Տայոց աշխարհին լեռներն են և Շորոխի հովիտն, աջ կողմեն Սողանլուի թևերը կտարածվին։ Ասոնցմե Ագպապա կոչված լեռնեն կիջնե վտակ մը և ԽԱՆ գյուղին քովեն անցնելով, անոր անվամբ կկոչվի և կուգա կթափվի ի Երասխ։ Իր եզերքեն շատ հեռու չէ, իբր հինգ մղոն ի Խորասանա Ջերմուկ գյուղն, որ կհայտնե տաք ջրերու աղբյուրներ ունենալ։

Ասկե ալ նույնչափ հեռու է ՉԻՎԼՈ գեղն՝ լերան մը ստորոտ և համանուն բերդին ավերակքն լերան գլուխը, որուն վրա կնայի նույն լերին բարձրագույն մեկ գագաթն ալ։ 1829-ի պատերազմին ատեն հոս բանակած էր օսմանյանց սպարապետն, բայց երբ չկրցավ ռուսերը թշել Խանա ձորահովտաց մեջ, ինքն ալ ետ դարձ-

վեցավ. ռուսք տիրեցին Զվինա (Հունիսի 19-ին)։ Թուրքք բերդին տակ ական գործեր էին, որ հանկարծ ճայթելով մեծ մասը փլուց, բայց Պասկևիչ սպարապետն Ռուսաց, որ այն տեղը բռներ էր, քիչ մ՝ առաջ հեռացեր էր զորքերովը, որով քիչ մարդու վնաս հասավ։ Ռուսաց հեռանալեն հետև Օսմանյանք նորեն ուզեցին նորոգել բերդը, բայց անկատար մնաց։ 1855-ի պատերազմին ատենն ալ Անգլիացիք օգնականք օսմանյանց քննեցին այս տեղս և վկայեցին շատ ամուր և հարմար ըլլալը, նաև հրձիգ ռմբաց դեմ դնելու։ Հին ատեն ալ այս բանս աղեկ ճանչցված պիտի ըլլա՝ գոնե Հուստինիանոս կայսեր ատեն, որ Բասենոն քաղաքին դաշտային դրիցը չհավնելով, կըսեն, ԾՈՒՄԻՆԱ բերդը շինել տվավ և ամրացնել և իր անվամբը Հուստինիանուպոլիս կոչել։ Արդ՝ ինձի կերևի, թե այն Ծումինա ըսվածն է հիմիկու Զիվինն, բայց հնությանց մնացված մը կամ դրված մը ինձի չըսին ավելի մոտեն տեսողք։

Զիվինեն չորս հինգ ժամ հեռու է դեպի հյուսիսային արևելք ուրիշ նմանաձայն բերդ մ՝ ալ ՋԱՂԻՆ-ԳԱԼԵ, որ և Քյոր-Օղլուի բերդ կըսվի. մոտն ալ նույն անվամբ լեռ մը կա։ Ուրիշ մոտ տեղվանք ալ աս (Քյոր-Օղլու) անվամբ բերդեր և լեռներ կլսվին, ի հիշատակ հռչակավոր դյուցազնացյալ ավազակի մը, որո վրա շատ երգեր և վիպասանություններ հյուսված են։ Այս ավերակ բերդին քովեն անցնող համանուն վտակին (Զաղին-սու) գլուխը, Սողանլուի ստորոտքը ԳԱՅՐՆԼԸ դեղն է։ Ասոր քով, 1829-ին (19 հունիսի) Ռուսաց հետ զարնվեցան օսմանյանք, որք լեռներուն ճամբաները բռներ և Միլլիդյուզ ըսված գեղին քով կիրճերու մեջ բանակեր էին։ Պասկևիչ սպարապետն Ռուսաց՝ անկարծելի ճամբաներ բռնելով, ուր հազար ոտք բարձր լերանց գագաթեն իջավ օսմանյանց բանակին հետևը, ասոնց սպարապետն Սալիհ փաշա մեկ կողմեն, մեկալ կողմեն Հաղգի փաշա փութալով՝ զարկին Ռուսաց բանակին երկու թևերը, ուժերնին հոն թափելով, անոր համար Պասկևիչ ալ իր վերջապահ գնդով անոնց բանակին միջին վրա հարձակեցավ, կոտրեց և լերանց կիրճերուն ու ձորերուն մեջ ցրվեց, մնացյալներն ալ շփոթելով քշեց ի Հասանգալե, ինքն հաջողությամբ մտավ ի Զիվին։ Երկրորդ օրը (20 հունիսի) դարձավ Հաղգի փաշային վրա ի Միլլիդյուզ, որ լսելով սպարապետին փախուստը, քիչ մը դեմ դնելեն հետև՝ անձնատուր եղավ, ինչպես քիչ օր վերջ ալ նույն ինքն Սալիհ փաշա, Կարնո քաղաքին դռները բացավ Պասկևիչա, թշնամությունը և պատերազմը վերջացնելու։ Այս առիթովս, մեծ

բազմություն մը մերազգյաց՝ իրենց հարց տուն տեղ և գերեզման-ները թողլով, գաղթեցան գնացին Ռուսաց բաժինը, Մեսխաց, Վրաց և արևելյան հայոց կողմերը։ Այս Սողանլու լերանց, որ հին ատեն ՄԵՍՐԱՆՑ լերինք կըսվեին, անվանի պատերազմներուն մեջ էր Ռուսաց հետ՝ իրենց մեծահռչակ բանաստեղծն Պուշկին, տեղվանքը և դիպվածքը դիտելու և իր մտավոր կրակները բորբոքելու համար եկած։ Բայց եթե զորականք մասնավոր խնամքով չպղուշանային իրեն, հանդգնությանը զոհ պիտի ըլլար հոն, և գուցե Մոսկով Քյոր-Օղլու մ՝ ալ պիտի ավելնար զրուցաց մեջ։

Այս անտառախիտ լերանց ստորոտը հասնելով՝ չուղեցի ճամբաս շտկել դեպի ՄՆԺԿԵՐՏ մեծ ավանն Ստորին Բասենո, որ անշուշտ Մաժան անվամբ մեկու մը դաստակերտ է, գուցե քրմապետին որդվո, Արտաշիսի Բ-ի և Թերևս այս վերոհիշյալ Բասենո, քաղաքն, որ մինչև Ռուսաց պատերազմին ժամանակը բազմաբանակ էր, հինգ հարյուր տուն ուներ, հիմա կան նշմարք հաղիվ քանի մը տասնյակք տանց. եթե ոչ ավանին մեջ, գոնե իր ավերակ լեռնաբերդին վրա գտվին հնության նշխարք։ Մտանք անտառային բավիղներու մեջ և օրերով թափառեցանք։ Այս տեղս Հայաստանի սովորական կերպարանքեն կտարբերի, նշանավոր բան մ՝ է. գրեթե հարյուր փարսախ քառակուսի տարածությամբ, Կարնո, Տայոց, Գուգարաց և Այրարատ աշխարհաց միջոց, սևականաշ բանակի մը պես կանգնած և ինչվան ինն հազար ոտք բարձրություն։ Սոճիք և եղևինք ճապաղ ճյուղերով հորիզոնը բռնած են, գետինն ընդարձակ լեռնատափ մը կրնա ըսվիլ կամ անտառալեռն, որ արևուն ճառագայթից դեմ անթափանց վահան մը կրնար ըլլալ, եթե ծառերը կանոնավոր արվեստիվ կտրվեին։ Ընդհակառակն, անտառադարմանության խնամք չըլլալով՝ օրե օր ծառերը կպակսին, «Մայրաբուսակ լերինք Մեծրաց» վարսաթափ, ամայի, ճաղատ կմնան, փայտերն կցրվին չորս կողմի գավառները ոչ միայն կրակի ու հասարակ շենքերու համար, այլև դեմառդեմ բերդերու՝ երկու տերությանց։ Գյումրիի բերդին նյութը մեծավ մասամբ ասկե գընեցին ռուսք, վաթսուն հազար ռուպլի տալով, պատերազմաց պատճառավ ալ շատ ջարդ եղած է ծառերուն։ Մերկացյալ գետինն շատ տեղ ճախնային և իոնավ է, այս խոնավությենեն առաջ կուգան այն բյուրավոր կարմիր սոխավոր ծաղկունքն, որոց համար կըսվի թե Սողանլու անվանած են լերինքն։ Թե ջրերուն քով, թե ծառերուն վրա շատ տեսակ վայրի թռչնոց և հավուց ձայներ լսեցի, պզտի

երամներ տեսա, չորքոտանյաց չհանդիպեցա, այլ կես չորքոտանի, կես երկոտանի, թավամաղ, բրդոտ, անճոռնի, այլանդակ կենդանի մը (արջ) տեսնելով՝ վախցա և փութացա անտառներեն դուրս ելլելու, ՍԱՐԸ-ԳԱՄԸՇ և ԴԵԼԻ-ՄՈՒՍԱ գեղերեն անցնելով, իչա Վանանդա դաշտը։

Այս դաշտս ալ՝ ինչպես առաջ ըսի, Բասենո և Շիրակա դաշտաց կցորդ է և ինքնին Անփայտ Բասեն կըսվեր ի սկզբան, ինչվան որ «յետոյ վասն հատուածին Վրընդուր Բուլկարաց Վրընդայ բնակելոյ ի տեղիսն՝ յանուն նորա անուանեցաւ ՎԱՆԱՆԴ»[14]։ Սողանլու լեռներն արևմուտքեն և հյուսիսեն կպատեն զսա, հարավեն՝ Երասխաձորի բարձր եզերքն, իսկ ի արևելից՝ հաղիվ նշմարված բլուրներ կզատեն ի Շիրակա, բայց ավելի դրական քան թե բնական սահման մը կա Վանանդա և Շիրակա մեջ, ինչպես և ի մեջ երկու Բասենների։ Բայց այն բլուրներն, կամ երկրին քիչ մը ուռեցքն ալ կբաժնեն երկու դետոց ջրերը, երկուքն ալ Երասխա օժանդակ։ Մեկն ի արևելս Ախուրյան, որ գՇիրակ կոռոգե, մյուսն ալ ի արևմուտս Վանանդ ոռոգողն, որ Կարսա գետ կըսվի հիմա (Կարս-չայը), և ի հնումն կըսվեր ՄԵՍԱԳԵՏ, և կիջնե Սողանլուի Տիքմե և Քյորողլու լեռներեն և ժողովելով ուրիշ շրջակա լերանց վտակներ ալ, հարավային արևմտյան կողմեն դեպի հյուսիսային արևելք կերթա և Կարս քաղաքեն անդին կընդունի Հյուսիսո ծովակեն (Զըլդր-գյոլ) ելած առուն և անով Ջարիշատա վիճակը բաժնելով դառնա ի արևելք, կմտնե ի Շիրակ, կխառնվի ասոր Ախուրյան դետուն հետ և անոր հետ Երասխ կթափվի։ Վանանդ ալեձև դաշտային է, տեղ տեղ ճահիճներ ունի, բոլոր դետինն հինգ հազար ոտք բարձր է ծովու երեսեն, անոր համար քիչ պակաս քան զԿարին՝ երկար և սաստիկ ձմեռ ունի, անոր նման ալ գեղեցիկ դարուն, զով ամառն և բարեբերից աշունն։ Վասնզի թեև պտուղ չունի, այլ արմտիք շատ և պարարտ, անոր համար մեր նախնիք անվանած են զնա արգավանդ հացավետ, խոտավետ, օգն ալ հստակ և առողջասուն է, բացի քանի մը ջրամած կողմերեն։

Հին բնակիչքն Վանանդա, բուլղարաց հետ խառնվելով, ասկե իբրև երկու հազար տարի առաջ, անոնց խոտորնակ բարքն ալ առին, կըսեն մեր պատմիչք Ե և Թ դարուց։ Երկիրն ընդարձակությանն համար Բասենո պես երկու մաս բաժնված էր, մեկն բուն Վանանդ, մեկալն ՓՈՔՐ ՎԱՆԱՆԴ կամ Փոքրակ Վանանդա, որ զուցե հիմա Ջարիշատ ըսված վիճակն ըլլա, կամ Թուրքաց ԹԱԽԴԻՆ ըսածն, Կար-

սա արևմտյան հարավային կողմն. երկու մասերն ալ առանձին իշխան ունեին, Ա և Բ ըսված։ Ժ դարուն մեջ (համի 961), Վանանդ առանձին թագավորություն ալ ունեցավ՝ ի ցեղե Բագրատունյաց, որ հարյուր տարի տևեց, մինչև երրորդ և հետին թագավորն Գագիկ, Սելջուկյան Թուրքաց վախեն՝ հունաց թողուց երկիրը և անոնցմե առավ Ծամբնդավ բերդը։ Ռուսաց (1828-ի) պատերազմեն առաջ, Վանանդ հարյուր տասը գեղ ուներ, Զարիշատ ալ՝ հիսունչորս։ Այս երկուքեն զատ Ղարսա գավառին կամ կուսակալության վիճակք են նաև Կաղզման, Կեչուան կամ Խուճվան և Շորագյալ։

. Բոլոր այս վիճակաց և շինից գավառիս թագավորն է Կարս բերդաքաղաքն, որ ամրությամբն հռչակված է ի արևելք և օսմանյանց ամրագույն բերդն է մեր աշխարհին մեջ։ Հին շինության ժամանակն և հեղինակն հայտնի չէ, թվի թե Կարբ անուն ցեղի մը գլխավորե շինված է, թեև վիրք ԿԱՐԻՍ ՔԱՂԱԿԻ անվանելով։ Դրան քաղաք կթարգմանեն։ Ով ալ ըլլա շինողն՝ շատ փորձ և բաղդավոր աչք ունի եղեր, վասնզի աղեկ կշռած և ընտրած է տեղը, ի բնե իսկ ամուր։ Մեծագետույն արմրնկան մեջ երեք կողմեն պատված, իբր հինգ հազար վեց հարյուր ոտք բարձր ծովու երեսեն, գետույն եղերքն ալ հատակեն շատ բարձր և զառ ի վայր ըլլալով՝ չեն թողուր մոտենալ քաղքին, իսկ չորրորդ (արևելյան) կողմեն պարիսպներով և մարտկոցներով ամրացած է, նույնպես մոտի բլուրներն ալ բերդիկներով ամրացյալ են։ Երկայնաձև քառակուսի է բերդաքաղաքն, իբրև հազար բնաչափ երկայն, կիսով չափ լայն, երկու պարիսպ ունի՝ հնգե վեց ոտք թանձրությամբ և տասնհինգ մետր բարձրությամբ, հրաբխյա քարերով շինված, քառակուսի աշտարակներով պատսպարած, որոց տասնյոթ հատն են հարավակողմեն, ինն հատ արևմուտքեն, յուրաքանչյուրն ալ տաս բթաչափ լայնությամբ։ Անկյուններուն և դրանց քով կանգնած են մեծագույն աշտարակներ, որոնց վրա կերևան մեր նախնի իշխողաց արձանագրությունքն և խաչարձանք, բայց ես ԺԲ դարե հին արձանագիր չտեսա։ Քաղքին արևմտյան հյուսիսային անկյունը բռնած է միջնաբերդն, բարձր և անկոխելի քարաժայռի վրա, որ առանց հրանոթի ռմբաձգության անառիկ է, մանավանդ որ չորս կողմն ալ ուրիշ անկոխելի ժայռեր և գետոցն անդունդներ կան, որոց վրա երեք ամուր քարաշեն կամուրջք ձգված են և մեկն հին է։ Քաղքին հեռուն ալ ուրիշ կամուրջներ կան և մեկն ալ շինեց վերջի (1854—55) պատերազմին ատեն անգլիացի զորավար մը (Lake)։ Բերդին հարավային և արևելյան կողմը լայն

խրամ մը կպատի, մեկ կողմն ալ բոլորակ աշտարակի նման շինված մը կա, որ գերեզմանի տեղ կկարծվի։ Երեք կողմե քաղաքն արվարձաններ ունի. ՕՐԹԱ-ՔԱՓՈՒ, ի հարավ, ՊԵՅՐԱՆ ՓԱՇԱ՝ արևելքեն, ՍՈՒ-ԳԱԲՈՒ արևմուտքեն, գետույն անդիի կողմը. այս ետքինս է հայոց թաղ։

Վերջի պատերազմեն շատ վնասվեցան Կարսա շենքերն, որոց գլխավորք սեպվեին միջնաբերդին մեջ մզկիթն, զինվորանոցն, վառոդարանն, ծածկված ճլամբուլայն (ջրամբար)՝ երեք հարյուր քարուկտոր սանդղաց աստիճաններով մինչև ի գետն և բերդապահին բնակարանն։ Ռուսաց՝ առաջին անգամ առնելեն առաջ, տասնյոթ թաղ կբաժնվեր Կարս, ամենն ալ մեկ-մեկ մզկիթ ունեին, ութ հարյուր հիսուն տուն կար, հարյուր քսանվեց խանութ, երկու բաղնիք, մեկ եկեղեցի հայոց, մեկ կարավանատուն։ Հարավային և արևելյան արվարձանաց մեջ ալ տասնմեկ թաղ կար թուրքաց և թաթարաց՝ իրենց մզկիթներով, մեկ եկեղեցի, չորս կարավանատուն, չորս հարյուր երեսուն խանութ, ութ հարյուր տուն, իսկ հայոց թաղն ուներ վեց հարյուր տուն, երկու բաղնիք, շատ գործարաններ, ներկարաններ, աղորիք, ջուլհակք և այլն։ Տուներն ընդհանրապես հողաշեն են, քառակուսի և կրկնահարկ։

Ամենեն նշանավոր շենքն է գլխավոր մզկիթն, որ էր հայոց մայր եկեղեցին, հիմնված համին ինն հարյուր երեսուն, Ա Աբաս թագավորեն և ավարտած ինն հարյուր քառասուներկուսին, որուն ձևն ալ, նյութն ալ արդեն շինության ժամանակակիցք շատ գոված են, ինչպես կըսե մեկն. «Վիմարդեան արձանօք որձաքար պողովատաշ վիմօք, բոլորապէս գմբեթաւորեալ, պայծառ զարդիւք, երկնանման խորան»*։ Հիրավի վայելուչ և անսովոր ձև մ՚ունի, դրսեն ութանկյունի բոլորակ, ներսեն քառաթև, գմբեթն բարձր և սրածայր՝ ութ կողմերեն կվերանա առանց սյան, տասներկու երես բաժնված, որոց վրա ներսեն տասներկու առաքելոց պատկերքն նկարած են, անոր համար Առաքելոց եկեղեցի ալ կոչված է։ Այս եկեղեցվույս համար է, որ Ափխազաց թագավորն Բեր կամ Թեդաս (Թեոդորոս) նախատանոք դեսպան խավրեց առ Աբաս, որ նավակատիքը լընե, ինչվան որ ինքն ալ գա իրեն ծիսովը օրհնել տա։ Սա ալ հարձրկելով Բերա-զորաց վրա, որ Կուր գետույն եզերքը բանակեր էին, վանեց, վոնդեց և թագավորնին բռնելով բերավ, ցուցնել

* Ստեփաննոս Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885 թ. էջ 172։

տվավ իր շինած եկեղեցվույն վայելչութիւնը,— Լավ տես,— ըսավ,— վասնզի մեկ մ՝ ալ չպիտի տեսնես,— և աչքերը խավարցընելով՝ գլխույն գինը առավ ու արձրկեց։ Այս եկեղեցիս զատ երկու երեք հատ ալ Հայտնի հին եկեղեցիներ կան ի մզկիթ փոխված, քանի մ՝ ալ ուրիշ հին շենքեր բոլորովին ավրվելու մոտ, մզկիթի մը մեջ ալ նահատակի գերեզման մը կցուցնեն։ Իսկ հիմակվան հայոց եկեղեցին արվարձանին մեջ է, բարձր տեղ մը։

Դար մը Բագրատունի թագավորաց աթոռ եղող քաղաքն պետք էր որ Անվո պես շատ ձեռակերտ հիշատակարաններ ունենար, բայց իր վիճակն ավելի պատերազմական եղավ։ Կրնա ըսվիլ, թե իբրև սպառազինյալ ծնավ Կարս և այնպես մնաց հազար տարի ու կմնա մինչև այսօր, շատ պատերազմներե անցնելով։ Նախ՝ Ա Աշոտ եղբայրն, Աբաս, Թ դարուն վերջերն ամրացուց զԿարս և ինքնագլուխ թագավոր նստավ։ Իր եղբորորդին՝ նահատակն Սմբատ Ա, հոս ապահովեց իր արքունիքը և տիկնայքը Ափշինի արշավանաց ատեն, բայց երբ սա պաշարմամբ նեղեց բերդը, բերդապահն անձնատուր եղավ, Ափշին հափշտակեց զանձերը, տիկնայքը վաճառեց Սմբատա։ Ասոր որդին, Աբաս Ա, նորեն ամրացուց և թագավորեց ի Կարս, նույնպես իր որդին ալ՝ Մուշեղ, հոս թագավորեց, մինչև անոր երեց եղբայրն, Աշոտ Ողորմած, Բագրատունյաց բուն աթոռը դրավ ի Անի։ Հետ (քսաներորս տարվո) Մուշեղա, թագավորեց իր որդին՝ Աբաս Բ, քառասունհինգ տարի, ասոր ալ հաջորդեց որդին Գագիկ, երեսունհինգ տարի, որ Անի քաղքին հունաց ձեռքը մատնվելեն վերջը քսան տարի ալ նստավ հոս, սակայն նոր և ավելի զորավոր թշնամյաց ձեռքեն աղատ չիմնաց։ Սելչուկ թուրքաց ասպատակքն, համին հազար հիսուներեք, հանկարծորեն հարձրկեցան Կարսա վրա, իրենց չար սովորութիւամբ աստվածահայտնութիւյան տոնից օրերը և անպատրաստ դտնելով՝ կողոպտեցին քաղաքը, որ հարստութիւամբ լցված էր, «Ի ծովէ եւ ի ցամաքէ ամբարեալ», շենքերը այրեցին, մնացյալ բնակիչը ջարդեցին, վասընզի մեկ մասը միջնաբերդը փախավ և ազատեցավ։ Տուղրիլ Սուլթան՝ ավարին համն առած, նորեն ասպատակ խավրեց Կարսա վրա, Արսուրան զորավարին առաջնորդութիւամբ. այս անգամ Գագիկ անպատրաստ չէր։ Դեմ խավրեց իր զորքերը, որ մեծ ջարդ ըրին թշնամյաց մեջ, բայց հանդգնորեն ներս նետվելով՝ երեսուն հոգի իրենց ազնվականներեն սպանվեցան, մեկն ալ Թաթուլ անուն, «այր հզոր և պատերազմասէր» բռնվեցավ. բերին Սուլթանին առջև։

Զարմացավ սա կտրճին կերպարանաց և անվախությանը վրա և խոստացավ անվնաս արձկելու, եթե իր զորավարին խոցված որդին բժշկվելու ըլլար. «Թէ իմ է զարկածն,— ըսավ Թաթուլ,— չէ կենաց, թէ այլում է, զայն ոչ գիտեմ» (Եթե իմ ձեռքես զարնված է Արսուրա որդին, անկարելի է որ ապրի, իսկ եթե ուրիշ մ՝ է զարկողն, այն չեմ գիտեր)։ Ըսածն ստուգվեցավ, երիտասարդն մեռավ։ Թաթուլ ի մահ մատնեցավ, բայց Տուղրիլ անոր աջ բազուկը կըտրելով, խավրեց մխիթարանք Արսուրանա, «Թէ ի վատ բազկէ չէ մեռեալ քո որդին»։ Արժանի՜ գովեստ արժանավոր քաջին։

Տուղրիլա հաջորդն Էլփ-Արսլան առավ զԱնի, կարգն եկավ Կարսա։ Դեսպան խավրեց Գագկա, որ անձնատուր ըլլա։ Գիտեր սա, որ կարելի չէ երկար ատեն այն ահեղ աղեղնավորաց դեմ կենալ և Թաթլո անվրեպ բազուկներն միշտ չեն բուսնիր, ճարտարությամբ բռնավորին միրտը որսաց, պալատական ներքնատունը նստավ սգազգեստ՝ դեսպանին եկած ատեն, կարծեցնելով, որ Տուղրիլի մահվան վրա է սուգն։ Հավատաց, գթացավ Արսլան և խաղաղությամբ եկավ ի Կարս։ Գագիկ մեծ հանդիսիվ ընդունեցավ զնա և կերակրեց բոլոր բանակովը, մեկ անգամուն ինչվան հարյուր հազար դահեկան ոսկի ծախս ընելով և հետ դարձուց աշխարհավերը։ Բայց չուզելով որ անգամ մ՝ ալ փորձանքի ընկնի, հունաց վաճառեց իր քաղաքն ալ, գավառն ալ և փոխարեն առավ Կապադովկիո մեջ երկիր մը։ Քսան տարի վերջը, հազար ութսունչորսին, հույնք ալ վրաց ծախեցին զԿարս, անոնցմե առին Թուրքք և պահեցին մինչև ԺԳ դարուն սկիզբը, որում (1208-ին) Զաքարե և Իվանե առին զԿարս, վրաց և հայոց զորոք։ Բայց երեսուն տարի վերջը, 1239-ին, թաթարք Անին առնելեն հետև եկան ի Կարս և թեպետ դաշնադրությամբ առին, բայց կողոպտեցին հանդերձ արյունահեղությամբ։ Տասնհինգ տարի վերջը հոս կնստեր իրենց մեծ զորավարն Բաչի-Նուին, երբ Ա Հեթում թագավորն Կիլիկիո եկավ իրեն այցելության ի Թաթարստան երթալու ատեն։ Թաթարաց և Թուրքաց ձեռքը մնաց Կարս անավեր՝ իր ամրությամբը նաև Լենկթիմուրի ատեն (1394), որ պաշարմամբ չկրցավ առնուլ, այլ պայմանավ անձնատուր ըրավ անոր բերդապահը (Ֆիրուզպախթ)։ Անկե հետև, ԺԵ դարուն մեջ, Թուրքաց և Վրաց կովո կետ մ՝ եղավ Կարս, ինչպես ետևի դարերուն մեջ ալ՝ Օսմանյանց և Պարսից։ Ասոնք շատ անգամ պաշարեցին, նաև իրենց մեծ և հաղթող թագավորաց ատեն, ինչպես Շահ-Աբբաս (1603), Թահմազ-Ղուլի (1735), բայց

չկրցան առնուլ և ոչ ալ ռուսք 1807-ին։ Բայց 1828-ի պատերազմին ատեն Պասկևիչ երեք օր պաշարելով և արևելյան հարավային կողմը տկար գտնելով ու անկե հարձակելով, ստիպեց զօսմանյանս անձնատուր ըլլալու (23 հունիսի), և երբ քանի մ՝ ամիս ետքը Ադրիանուպոլսո դաշնադրությամբ նորեն օսմանյանց թողուցին զԿարս, կըսեն թե Պասկևիչ լացած ըլլա։ Բայց ռուսք ելլելու ատեննին, ոչ միայն շատ բան վերուցին քաղքեն, այլև ամրությանց մեկ մասը քակեցին։ Անոր համար վերջին նոր պատերազմին ատեն (1854—1855 թթ.) անգլիացի փաշայն Ուիլյամս նորեն ամրացուց, չորս կողմն ալ մարտկոցներ կանգնեց, որով վեց ամիս դիմացավ Ռուսաց շատ անգամ հարձակմանցը, որք անգամ մը յոթ հազար մարդ կորուսին անոր պարսպաց տակ և վերջապես սովով նեղելով առին (28 նոյեմբեր)։ Եվ երբ նորեն թողուցին օսմանյանց (7 օգոստոսի, 1856 թ.), ամրոցները ավրշտրկեցին, թուրքաց արձանագիր քարերը քակեցին, Կարսա հակառակորդ Գյումրի բերդին հագուցին, գետինը փորելու ատեն ալ հողե ման մը դտան, վրաց Ռուսուդան թագուհվո պղնձի դրամներով։ Այս թագուհվույս ատեն (ԺԳ դար) պարըսպաց նորոգվելուն վկա է ինչվան հիմա աշտարակի մը վրա մընացած հայերեն արձանագիրն. «Շնորհիւն Աստուծոյ և ողորմութեամբ թագաւորին մերոյ Ռուսուդանայ, մեք, Կարսուց քրիստոնեայքս, մեծ և փոքր, շինեցաք զբրջներս ի յիշատակ մեզ և պատրոնին մերոյ»։

Կարս Կարնո և անով բոլոր փոքր Ասիո պատվար և դուռ կըրնա ըսվիլ օսմանյանց արևելյան հյուսիսային սահմաններուն, ամրությամբ հիմա առաջին քաղաքն է իրենց վիճակված Հայաստանին և մեր հին աշխարհին մեջ ամենեն առողջ և ուժով մնացյալ տեղն կրնա ըսվիլ։ Միանգամայն և մեկ հատիկ ողջ մնացած հայոց թագավորանիստ քաղաքաց մեջ, որոց շատն բոլորովին ավերակ են, ոմանք կիսավերակ կամ սնշուք գյուղ մը դարձած։ Քաղաքական վարչությամբ և առևտրի կողմանե ալ մեր աշխարհին գոնե երկրորդ կարգի քաղաքաց մեջ նախաղասներեն է։ Վրաստանի և Ռուսաց բաժնին մոտ ըլլալով՝ ավելի շատ զանազան ազգաց կերպարանք կերևան ի Կարս, քան ի Կարին. Կովկասային ժողովրդոց դրացի և իշևան եղած է շատ դարերե ի վեր, Պարսկաստանի վաճառականաց ալ գործակից։ Միով բանիվ՝ շատ կերպ տեսությամբ, թե բնական, թե քաղաքական, թե պատերազմական, թե հայրե-

նասիրական,— մեր աշխարհին ամենեն նշանավոր շինից մեկն է Կարս, արքայաշուք քաղաքն Վանանդա։

Այս գավառիս շեն և անշեն գեղերեն շուտով անցա՝ Շիրակա հռչակավոր շեն ու անշենը դիտելու փափագելով, բայց նախ հոս փափագելով փնտռեցի և չգտա այն ԻՋԵՎԱՆԻՑ ԳՅՈՒՂՆ Վանանդա, որ արժանի էր ամենայն հայրենասեր հայ մարդու ուխտատեղի մ՝ ըլլալու, վասնզի հայրենիք է սքանչելի և աննման անձի մը, որում մեծապես միացյալ էին սրբություն, գիտություն, խոհեմություն, արիություն և հայրենասիրություն, և որ դժվարագույն դարու և դիպաց մեջ՝ մեր աշխարհին եկեղեցական և զինվորական դասուն միանգամայն հոգի և առաջնորդ եղավ. այն է՝ երեցն Ղևոնդ, որ թեև սոսկ քահանա մ՝ էր, բայց եպիսկոպոսունք և կաթողիկոսն ալ իրեն խորհրդով և հոգվով կշարժեին։ Անոր համար իրենց նահատակակից խումբն ալ ասոր անվամբ Ղևոնդյանք կկոչվի և Վարդանանց զուգակից կհռչակվի և կտոնվի ի եկեղեցվո և ի հայրենյաց։ Հիմա այս կողմերս, Իջևանից անունը լսելով, կարծեցի որ Ղարսա մեկ վիճակին գլխավոր ավանն որ ԿԵՋԵՎԱՆ կկոչվի ի Թուրքաց, նույն իմ փնտրածս ըլլա, սակայն ճամբաս հոս չդարձավ, որ ծերունյաց հարցնեմ՝ կարծիքս ուղղելու. կհանձնեմ իմ հետևողացս, այս գերագույն հայրենասիրին հայրենիքը երևան հանելու։

Օսմանյան Հայաստանի ամրագույն քաղաքեն հեռանալով դեպի արևելք, քանի մը գեղերե անցա, ինչպես ԳԱՀՃԱ-ՕՂԼԻ, ուր մեծ ջրի ավազան մը կա, ՄՇԿՈՒ և այլն և քիչ մը բլրաձև բարձրացյալ դիրքեր անցնելով իմացա, որ հիմա ՇԻՐԱԿ դաշտին և գավառին մեջն եմ եղեր։ Հայաստանի երկու հարյուր, կամ ըստ ոմանց վեց հարյուր քսան գավառաց մեջ գուցե հազիվ երկու կամ երեք հատ գտվին հավասար կամ մոտիկ Շիրակա՝ աղգային հիշատակոք լի, կամ թե հիշատակաց վկաներովը, որք են հիմա կանգուն, կիսականգուն, ավեր և կիսավեր և բնավեր շենք։ Դեռ շատ շեն և ամայի գեղերու քով, անոնց ծեր պահապանի պես կանգնած կամ հանդչած են եկեղեցիք, տաճարք, մատրունք, քառակուսի, բոլորակ, գմբեթավոր, սաքաշեն։ Քիչերն դեռ երկինք կբարձրացնեն իրենց բազմաղարյան ձյուներե, բուքերե անցած գլուխները, շատերն՝ իրենց ամուր և հաստահիմն կողերուն վրա միայն կոթնած՝ կարծես թե մահվան և անմահության կռիվ կընեն ժամանակին դեմ, ոմանք ինչվան հազար երեք հարյուր տարիե ի վեր։ Իրավ շատ ընդարձակ է Շիրակա դաշտն, հարավեն մինչև Երասխ գետ, արևելքեն մինչև

Արագած լեռ տարածված, սակայն կերևի թե դեռ երբեմն իրեն շենքերուն համար նեղ եղած է։ Այնքան բազմաթիվ են եղեր բնակիչքն, այս ալ նախապես իր բազմաբերութեանն համար, որով հռչակված է չորս հազար տարիե ի վեր։ Վասնզի ըստ ավանդութեան նախնյաց մերոց Հայկա թոռնորդին Շարա, թե շատակեր և թե շատզավակ, ասկե համար երկիր մը չգտավ իրեն բնակութեան, որ թեև բարձրութեանն համեմատ ցուրտ և սակավապտուղ է, բայց առատ և ընտիր ցորեն մ՝ ունի, որ երկրին բոլոր բնակիչքը սնուցանելեն զատ կբավե շատերու ալ։ Ամենուն հայտնի է մեր հին հայկաշանց ատենեն կրկնված առակն շատակեր հյուրերու համար, «Թէ քո՝ Շարայի որկորն է, մեր՝ Շիրակայ ամբարքն չեն»։

Շիրակա չորս կողմը նայած ատենդ՝ բնութեան մեկ հսկայն մեկեն դիմացդ կկանգնի ահեղ կերպարանոք և մեծութեամբ,— ԱՐԱԳԱԾ լեռն, որ Հայաստանի չափյալ լերանց մեջ բարձրադույնն է, հետ Մասյաց, տասներկու հազար վեց հարյուր ոտք և գուցե քան զՄասիս լայնագույն, ընդարձակ կողերով և ստորոտյուք. ուստեղ շատ առվակներ կիջնան կերթան դեպի հյուսիս, ի Այրարատյան դաշտագավառը։ Լերան գլուխն ալ ճղքրոտած, բրգաձև ապառաժներովը կիմացնե, թե որչափ աշխատանք տվեր է երկրին՝ անոր ծոցեն դուրս ելնելու և որչափ աշխատանք կրեր է իր ծոցի հրաբուխներեն, որ ո՞վ գիտե քանի՞ դարեր բորբոքելով, որոտալով բոցեզեն հեզեղներ փսխելով, իր երիտասարդութիւնը անցուցեր է և հիմա ծերացյալ և դադարյալ. ծծմբածոր արտաշունչներով կու լա իր անցյալ եռանդուն հասակը։ Երբեմն վառ և հետո մարած լապտերի մը պես միշտ կանգուն կեցած բազմաբյուր մարդկան ցեղից գիտարանն եղած է և հիմա լուռ վկա մ է։

Շարայի անվամբ (որ ստուգիվ պետք է Շիրա բլլալ) Շիրակ բսված և անոր սերնդյամբք բնակված այս դավառս՝ Այրարատա մոտ և դրացի, անշուշտ անոր ալ վիճակակից, արքունական ապրվական երկիր մ՝ էր, անոր համար հին դարուց մեջ չեն հիշվիր Շիրակացիք իբրև առանձին նահապետություն կամ տոհմ մը։ Դ գաղուն սկիզբները Մեծն Տրդատ, երբ իր և Լուսավորչի Արշակունի ցեղին մեկ պայազատն՝ Կարենյան Կամսարն, փախչելով Սասանյանց թագավորեն իրեն ապավինեցավ, տվավ անոր այս գավառս ի ժառանգություն և հետ անոր մահվան, որովայն՝ Արշավիր պարգևեց ոչ միայն երկիրը, այլև անոր մեջ ցեղատեր կամ նահապետ

մ՝ անվանիլն, կոչելով զայն Կամսարական։ Բայց ավելի ևս անոր անվամբն ԱՐՇԱՐՈՒՆԻՔ (և ռամկաբար՝ Աշորնիք) ըսվեցավ երկիրն, սակայն հին անունն ալ պահվելով, Ե—Է դարուց մեջ անոր տյարքն կըսվեին Տեր-Շիրակա և Արշարունյաց, իսկ աղգավ՝ Կամսարական կամ Արշարունի կոչվեին։ Ջորս հարյուր տարվա չափ հայոց իշխանաց կամ նախարարաց մեջ ամենեն պատվավոր և բարձրագահներեն էին Շիրակա տյարքն, վասնզի Արշակունյաց կամ Թագավորաց ցեղակիցք կճանչվեին և երբ թագավորություն և քահանայապետություն վերցվեցավ ի Պահլավունյաց, այս ցեղս իբրև անոնց շարունակություն մը ավելի պատվեցավ։ Հայտնի են ի պատմության գործք Արշավիրի, քաջին Սպանդարատի և իր քաջ որդվույն Գաղավոնի, Վարդանա փեսա և սիրելի Արշավիրի, անոր որդվոցը Ներսեհի և Հրահատա՝ սրտակից և նիվակակից բարեկամացն Վահանա Մամիկոնեի, որոց քաջությունն և իրարու վրա ունեցած սերն, անմահանալի հիշատակ թողուցին։ Ասոնց պայազատքն մեծ պատիվ գտան ի կայսերաց հունաց, ՊԱՏՐԻԿ և ԱՊԻՀՅՈՒՊԱՏ կոչվելով և երբեմն բոլոր Հունական Հայաստանի վերատեսուչ կամ կողմնակալ կարդեցան, ինչպես իրենց նախնին Գաղավոնն ալ փոխանակ թագավորի, դրվեր էր ԿՈՄՍ պատվանվամբ, երբ արևելյան մասին վրա դեռ հայ թագավորք կային։ Մինչև Ը դարու սկիզբները կհիշվին Կամսարական տյարք Շիրակա, որոց մեջ հետին երևելի եղողն է Ներսես ապիհյուպատը պատրիկ՝ անվանի քաջությամբ, խոհեմությամբ, որուն ընծայեց Գրիգոր Արշարունյաց քորեպիսկոպոսն անոր խնդրանոք գրած Ընթերցվածոց մեկնությունը։ Ասոր դուստրն Շուշան, համի յոթ հարյուր հնդին վկայական մահվամբ կատարեցավ ամիրապետաց արքունիքը՝ տարի մ՝ առաջ գերի քշված ըլլալով հոն, Արաբացվոց կրակեն ապատած աղնվականաց որդվոց հետ։ Իր եղբայրն Գագիկ նոր հեզեցի մը շիներ և նավակատիքը կատարելու վրա էր, երբ լսեց քրոջը վախճանը՝ երկու, հիշատակը մեկտեղ կատարեց։ Ը դարուն վերջերը Բագրատունի իշխանք գնեցին ի Կամսարականաց Շիրակա և Արշարունյաց երկրները (վասնզի առանձին գավառ մը սեպվեցավ ԱՐՇԱՐՈՒՆԻՔ, որ Երասխա նեղվածք եզերքներուն վրա տարածված ըլլալուն համար Երասխաձոր ալ կըսվի)։ Բագրատունիք ավելի շենցուցին զՇիրակ, իրենց ոստանը, այսինքն իշխանանիստ բնակարանը փոխադրելով հոս և հաստատելով ի Շիրակավան կամ ի Երազգավորս և հետո ի Անի բերդաքաղաք, որ

Ժ դարուն մեջ ոչ միայն Շիրակա, այլև բոլոր Հայաստանի առաջին քաղաքն եղավ, նույնպես ալ մնաց քիչ շատ փառոք ԺԱ—ԺԴ դարուց մեջ։ Բայց ի կես ԺԱ դարու, բուն Բագրատունյաց և հայոց ձեռքեն ելավ՝ վաճառվելով հունաց, որոց քիչ ատենեն խլեցին Թուրքք Սելջուկյանք և Շետտատյան տոհմի մը հանձնեցին։ Ասոնցմե հափշտակեցին վերք ի վերջ ԺԲ դարու, ի ձեռն երկայնաբազուկ և քաջաբազուկ իշխանացն հայոց Զաքարեի և Իվանեի, ասոնց որդվոց կալվածք էր Անի, երբ տիրեցին Բաթարք, իսկ ասոնց տիրապետության ատեն, ԺԴ դարուն մեջ նվաղեցան, ավրվեցան, վերցվեցան թե Անիի և թե բոլոր Շիրակա շուքն և փառքն։ Եվ հետագա դարուց դեպքն և պատերազմներն Թուրքմենից, Թաթարաց, պարսից, Թուրքաց և ռուսաց՝ մինչև մեր օրերս, նույն ավերքը շարունակեցին, միայն քանի մը շինությամբ մխիթարելով այնքան անմխիթար ավերածները, որք մեծ մասամբ մ՝ ալ անհետ, աննիշ կըլլան...

Վասնզի ինչպես Վանանդա, այսպես ալ Շիրակա մեջ շատ անգամ պատերազմն իր արհավիրքը սփռած է և դեռ վերջին Ղրիմու ըսված պատերազմաց տարիները, հոս ալ կատարվեցան այն արյունալից գործերը, զոր ստեպ պատահելուն համար, իբրև սովորություն եղած է առանց ամչնալու պատմել, սակայն գոնե ժամանակակից մը պետք չէ առանց ցավոց հիշե։ Իսկ ականատես մը այն պատերազմի դաշտերուն, եթե սիրտ ունի՝ չի կրնար առանց սոսկման և բոլորովին ցամաք աչքով նայելու անոնց վրա, մինչդեռ ինքնին քանի մը պծգալի նշանք հոն եղած մարդակոտորության, կպահանջեն այս գթո հարկը։ Եվ ահա այսպիսի տեսարան մը բացվեցավ ինձի Շիրակա առաջին սահմանաց վրա, Քյուրուկդերե գեղեն անցնելուս ատեն, ուր 1854-ին, օգոստոս ամսուն վեցին, գրեթե ութսուն հազար զինվոր մարդիկ, կես Թուրք, կես ռուսք, իրարու դեմ ճակատեցան, կռվեցան, զարկին-ընկան, և հաղթող սեպվեցան ռուսք, որոց մեծ զորապետն էր հայազգին Բերուսով, որ հետ վեց հարյուր վաթսունվեց ամաց, Զաքարեի և Իվանեի հաղթանակները արթնցնել կարծեցավ։ Գուցե ընթերցողքս հիշեն դեռ նույն օրերը լրագրաց պարագլուխ Լոնդոնի «Թայմզ» լրագրին մեջ կարդացածնին։ Անոր թղթակցաց մեկն կամավ երկեր էր տեսնելու և տեղեկություն տալու դիպվածներուն և այսպես կգրեր առջի իրիկվանե. «Հանդարտ գիշեր մ՝ էր, երկնքին երեսը ամպ չկար, լուսինն պայծառ ու հեզասահ, Սալվադոր Ռոզային նկարներեն մեկուն նման։ Սահմանին մեկալ կողմը Թուրքաց ճերմակ ու կա-

նաչ վրաններուն երկայն և լայնասփյուռ շարից միջեն կերևային հոս-հոն զատված դալարաբույս բլրակներ, դեպի Կարսի դաշտակողմը, որոց մեկուն ստորոտը կերևա օսմանյան բանակին մեկ մասն։ Ալ ավելի հեռուն, աղոտ աղոտ կանգուն կերևան Գյումրիի բերդին ճերմակ աշտարակներն՝ համապայծառ լուսին լույսովը, իսկ անոնցմե ալ անդին, Վրաստանի ձյունապատ լեռանց խրոխտ գագաթունքն կբարձրանան անմթար երկնից պարզության մեջ։ Ամենեին առանց ջանալու վարպետ և գեղեցիկ նկարագրություն մ՝ ընելու, կրնամ ճշմարտությամբ ըսել, որ խիստ քիչ անգամ տեսեր եմ ասոր նման սքանչելի լուսնկայի մեջ շրջանկար տեսլարան մը, որուն խաղաղական մակերևույթն քիչ ատենեն վերիվար պիտի ըլլար, պիտի մթըններ՝ պատերազմի մահասփյուռ որոտմամբ»։

Հիրավի, նույնիսկ կես գիշերուն, օսմանյանց սպարապետն՝ Զարիֆ փաշա քշեց բանակը ռուսաց վրա, որ ՀԱՅԻՎԵԼԻ գեղին քով բանակեր էին։ Առավոտանց հարձակեցան օսմանյանք և հաջողությամբ հետո քշեցին զՄոսկովս, բայց երբ ասոնք սկսան մեծամեծ հրետներով ռումբ թափել, հետ քաշվեցան օսմանյանք և թեպետ Խուրշիդ և Թահիր փաշայք շատ քաջությամբ դեմ կեցան և հինգ ժամ կռվեցան, բայց իրենց հեծելագունդն հետ քաշված ըլլալով, բոլոր բանակն ալ դարձավ ի Կարս, քանի մը հազար մեռած և վիրավոր թողլով, քանի մը հազար ալ գերի. Ռուսաց կողմեն ալ գրեթե նույնչափ մարդ ընկավ։ Բեհբուդով քիչ մը մերձակա սահմանները այրելով և ավրելով հետ դարձավ, չհամարձակելով որևէ պատճառավ Ղարսա վրա հարձակվելու։ Ահա այս քիչ տարի առաջ խռովյալ դաշտերեն կանցնեի, ուր այն օր հարյուր քառասուն որոտացունդ հրետք պատերազմին տագնապները կպատմեին, իսկ հիմա միջօրեի խաղաղության և լռության մեջ միայն ամառային մորեխաց ճռճռալն կլսվեր. քանիպատի՜կ սրտառուչ և ազդու, քան այնքան որոտմունքն և բախմունք...

Այս ձայներով դրաղած՝ քանի մը ժամեն հասա Ախուրյան (Արփա-չայ) գետույն եզերքը, որ զդաշտն Շիրակա կընդմիջե և անով նաև սահմանարաժին կըլլա հոս Օսմանյանց և Ռուսաց ինքնակալությանց։ Այն շարժուն սահմանին եզերքը նստած հոգնությունն առնելու, հետ այլևայլ մտածությանց, կարգն եկավ որոշելու, թե անցնի՞մ արդյոք զայն, թե դեռ թափառիմ արդեն գտված կողմս։

ԵՂԵՎՆՈՒ ՆԵՐՔՈ

(Խորհրդածություն մենավոր բեռության մեջ)

Ա

Ողջո՞ւյն առ ձեզ, խաղաղավետ վայրեր, մտախոհ հոգիների լռիկ հանգրվան և բորբոքված սրտերի սփոփարան։

Ողջո՞ւյն առ ձեզ, անմարդաձայն ամայություններ, որտեղ չկա մարդկային աղմուկը, և որտեղ ոչ ոք չի կարող խոովել մարդուն, բացի մարդուց։

Ողջո՞ւյն առ քեզ, գեղեցիկ բնություն, որին իր ապատ կամքի ցանկությամբ այնքան կատարյալ ստեղծեց արարչապետը. գեղեցկություն, որը չեղավ մարդկային արվեստի միջամտությամբ, որը կարող էր միայն պղծել կամ կողոպտել քո այն պարզամտություն քողը, որն ի սկզբանե առ այսօր քեզ վրա գցված լինելու հետևանքով՝ դու կաս ու մնում ես միշտ թարմաշունչ, միշտ վայելուչ։

Ողջո՞ւյն նաև քեզ, ով հրեշտակ կամ պահապան այս անդորր վայրերի... Մի՛ վրդովիր, եթե աղմկահույզ մի սիրտ և հոգսերով լի մի հոգի եկել է հանգիստ որոնելու քո ապահով հարկի ներքո։ Ոչ թե մի ուրիշի էլ խոովելու, այլ իմ անձը խաղաղեցնելու համար եմ եկել։ Սիրտ ունեմ վիրավոր, որը կամենում եմ բժշկել բնության սպեղանիով։ Առտնին և արտաքին տարօրինակ դեպքերից և իրադարձություններից մտային գալարումներով երկար տանջվելուց հետո, եկա-հասա այս մենարանը հանդիստ ու դադար գտնելու, գեթ մի ակնթարթ երկնքի անհաս խորության մեջ խորասուզվելու համար, որպեսզի կարողանամ անց կացնել հոգուս ունայն վարանումների հոգսը[1]։

Թե տան և թե քաղաքի մեջ, ոչ միայն հուզված ծփում են սրտերը, այլ, ինչպես ալիքն է կատաղաբար բախվում ալիքին՝ խորտակում և խորտակվում են[2]։ Եվ եթե նորից են համախմբվում, ապա նորից են հարձակվում իրար վրա, ոգեկոչելով նույն կռիվը և նույն պայքարը։ Իսկ այսպիսի միայնության մեջ, բնության խորունկ ծոցում, սիրտը միայն իր բաբախումն է լսում, ապա հանգարտվելով, փրփրած կաթիլի նման ինքն իրեն լուծվում է իր իսկ գոյացությունն ունեցող տարրի մեջ։

Ո՜հ, ամայության մեջ որքան թեթև է շունչը, որքան ազատ և անուշ է օդը, որքան լայնատարած և հանգստավետ են այս վայ-

ները։ Ինչպե՞ս է, որ ես էլ այսքան թեթևացած՝ կարծես թե ավելի շատ ճախրում եմ թևերով, քան թե քայլում եմ ոտքերով, որպեսզի շուտ հեռանամ քաղաքային շինությունների ստվերներից անգամ, աստվածադիր բնությանը մերձենալու համար։

Հովիտները հաջորդում են հովիտներին և բլուրները՝ բլուրներին։ Մի համայնապատկեր ծածկում է մյուս համայնապատկերին ու նորից է բանում, հորիզոնը ծածկում ու բանում է մյուս հորիզոնին։ Այնտեղ, որտեղ չկա ոչ հոգնություն, ոչ չարչարանք, ես այնտեղ եմ սիրում լիասիրտ տենչանքով հանգիստ առնել իմ խոլական արշավից։ Եվ կանգ առնելով ոտներիս տակ տարածված լեռնապարերի այս բարձրադույն կետում, որը վիթխարի գահավորակի նման դրված է հազարավոր բլուրներից բարձր, դիտելով նույնիսկ մինչև օվկիանոսների զարմանահրաշ անվերջությունները, ես այստեղից ահա կարողանում եմ նկատել հավիտենականության անդունդի գրեթե բովանդակ լայնատարած բացվածքը, ինչպես կարելի է նկատել ադամանդի շողշողուն ակը արեգակի շողերի ներքո։

Եվ բլուրի գագաթին դտնվող իմ այս գեղեցիկ գահավորակի համար ասես որպես հովանոց, ավելի քան երկու հարյուր տարի է, թերևս, որ վեր է խոյանում այս մենավոր եղևնին, դաշարագեղ ու հաստատուն, սաղարթախիտ ու երիտասարդ, բոլոր ծառերից հեռու և բոլոր եղևնիներից մեկուսի։ Եվ ինձնից առաջ քանի՞ հոգի և ինչպիսի՞ մարդիկ են արդյոք նստել նրա հովանու ներքո, համարձակորեն բացահայտել իրենց խոհերն ու մտքի կրքերը, դրա համար իրենք միայն լինելով իրենց սրտի գաղտնիքների միակ վկան ու խորհրդակիցը։ Ինձ չի թվում, որ այս բարձրավանդակի վրա նա պատահաբար է աճել. այլ ինչ-որ մեկի մասնավոր խնամքով նա տնկվել և խնամվել է այս բլրի կատարին, որպես հովանի այն գբլխի համար, որն այդտեղ պատսպարվելով, հետևում է մարդկային մտքի հարափոփոխ ընթացքին և արարիչի մշտակայուն խորհուրդներին։

Այն հեռավոր ծովերի ու հովիտների զանազան տեսարանները, մեկը մյուսին հաջորդելով, կարծես թե կսմենում են շեղել իմ մտքի ուշադրությունը և չգիտեմ, նրանց մեծությունից ու տեսարանների բազմաքանակությունից տարվա՞ծ, թե՞ ինձ շրջապատող մերձավորների ազդեցությունից գրավված՝ տեսողությունս աղոտանում է և լսողությունս սաստիկ զորանում։ Քանզի արևմուտքից

փչող քամին խառնվում է բուռն ու կատաղի հարավային քամուն, լցնելով երկնքի և երկրի միջև ընկած տարածքը։ Տեսարանն այլափոխվում է, և ամեն ինչ ասես լեզու է առնում։ Բոլոր տունկերը տատանվում են, բոլոր խոտերն ու շյուղերը հեծեծում են և քշվում անընպատակ։ Թվում է, թե բլուրները ցածրանում են, իսկ դաշտերը՝ բարձրանում։ Եվ սա, այս եղևնու ծառը ահագնաձայն շաչում է և ճռնչում, տատանվում է և տառապում, շառաչում է և տաղնապում։ Կարծես թե նպատակով է դրված քամու կատաղության դեմ, որպեսզի դեպի իրեն ձգի օդի հորդահոս հոսանքները և ինչպես գյուղական մի հողմաղաց կամ մի հսկա մեքենայի անիվ, իր ճյուղերով ու կողերով անընդհատ պտտվում է։ Մերթ ցածրանում է գլխիս կպնելու աստիճան, և մերթ բարձրանալով մինչև երկինք, ասես ծափ տալով ու գթություն հայցելով, նա բոլորովին չի ընկճվում քամու ոռնոցներից և ահեղ աղաղակներից. կարծես թե դեռ ինքը ինչ որ պահանջներ ունի բնությունից, կամ ինքն է հանդիսանում այս լուռ վայրերի պատգամախոսը։ Այնքան է ինձ վրա ուժեղանում հողմակոծվող եղևնու վայնասունի ու վայունի ազդեցությունը, որ միտքս ինձ ակամայից փոխադրում է անծանոթ և երևակայական վայրեր։ Լցվում եմ տխրալի և անուշ տենչանքներով, որի մեջ կամաց-կամաց խորասուզվելով, զարմանում եմ ու մնում և ընդհանրապես՝ չեմ կարողանում պարզել այն, ինչ զգում եմ։ Երբեմն կարծես թե խլանում եմ, սակայն լսում եմ ամեն ինչ, երբեմն էլ կարծում եմ թե հստակորեն տեսնում եմ, սակայն սխալվում եմ։ Եվ ինչպես արևը, որի երեսով սահում են ամպերի պատառները՝ ես էլ մերթ խավարում եմ և մերթ լուսավորվում։ Ստեպ-ստեպ ծոցիս մեջ սիրտս հեկեկում է, խռովք է ապրում և խաղաղվում է, դողում է ու սիրում...

Ի՞նչ ունես, ի՞նչ կա, ով ծառ հուզումնակոծ, դու էլ մի տունկ՝ տունկերի մեջ, միշտ հինավուրց ու միշտ դալար։ Ինչո՞ւ համար մեն մենակ ու առանձնացած, կառչել ես այս մենավոր բարձունքին, բարբարոս հողմի կամքին խաղալիք ու անձնատուր եղած, հողմի, որը մտնելով ճյուղերիդ ու ոստերիդ մեջ, ինչպես մի հսկա երգեհոնի եղեգնյա փողից, այս անսահման դատարկության մեջ ասես մի նվագարան է հնչեցնում։ Անարվեստ եղանակը ամենաարվեստ է, ինքնաբուխ երաժշտությունը անթարգմանելի է, անբացատրելի զմայլումը՝ սրտառուչ է։ Գուցե դու, եղևնիդ իմ, իջեա-

նատեղի ես հանդիսանում վերևից առաքված պատգամավորին՝ մեզ լսեցնելու համար երկնային թագավորի հրամանները, ինչպես մի ժամանակ ամենայն հստակությամբ լսվում էր նրա ձայնը, այս անմարդաբնակ տարածությունների մեջ, երբ դեռ պաշտամունքի համար չէին կանգնեցված պարսպափակ ու քարաշեն տաճարները։ Եվ երբ դեռ լսվում էր Բեթելի մեջ խորհրդավոր մի ձայն, որը թևածելով տանձենիների և թավուտ անտառների վրայով, մերթ հորդոր էր կարդում այն իմաստուն մանուկ հովվին՝ աստծու թշնամիների դեմ պատերազմի ելնելու համար և մերթ սրտի ու հոգու մարգարեական վերացումների կոչ էր անում։ Ո՞վ ձայն աղատասուն, որ, արհամարհելով ամեն պատվար ու շինություն, ընթանում էիր դեպի ազատ տարածությունները՝ անդունդի խավարչտին խոռոչներից դուրս ժայթքած հրեշի նման, որոտում էիր գետերի և աղբյուրների ջրերի վրա, մռնչում էիր անծայրածավալ ծովերի փրփրադեզ ալիքների վրա, բախվում էիր կանաչների թիկունքին, փշրում էիր Լիբանանի մատղաշ ու դալար մայրիների տունկերը, ցնցում էիր անապատները իրենց կարծրակուռ լեռներով հանդերձ։ Նույն բանը նաև այստեղ է թվում ինձ, ո՞վ ձայն ինքնաբուխ, այս ամայի բնության մեջ, արձակված խորանկատ արարչի կողմից որպես կյանքի և մահվան պատգամախոսություն, այսինքն՝ «Ձայն բարբառո յանապատի»։ Ու միշտ սուրալով երկնքի ու երկրի միջև, դու հավիտենական մահերգի նման այս համաշխարհային դերեզմանոցի վրա մշտամռունչ գոչում ես. «Ամենայն մարմին խոտ է», և ինչպես ծաղիկն ու վայրենի խոտը, այդ էլ է փութով անցնելու, առանց իսկ թեթևակի հետք թողնելու ու միայն «Բան տեառն մնա հավիտյան»։

Արդ՝ տեղի ամայությունն ինձ համար կարծես ամայագույն է դառնում։ Բացի այս երերուն ճյուղերից, խոտերից ու շյուղերից, ուրիշ ոչինչ այստեղ չի շարժվում ու չի խաղում։ Եվ մեկ էլ ծովն է՝ հեռվում տարածված, իր փրփրադեզ, սպիտակ ելևէջումներով գնում ու գալիս դեպի աջ ու ձախ և հորդում է, ինքն իրենից դուրս դալով։ Լուսատուի ծագելու հետևանքով ամպերի ծվենները ցրվում են։ Երկնային կապույտի պարզությունը կամարաձև խորանում է, ասես այն մի ընդարձակ ձեղուն լինի ծովի և ցամաքի վրա. այնտեղ բնակվելով, մարդիկ նավարկում են աշխարհից աշխարհ և, մեկ առ մեկ իրար լքելով, աստիճանաբար անցնում են։

Ազգերի և դարերի հիշատակները, ինչպես խորտակված նավակի բեկորները, մի որոշ ժամանակ ալիքների վրա ծփծփալուց

հետո, դիակնացած մնում են ավազների մեջ... Ո՞վ հողմերի անարգել հոսանքներ, ո՞վ ժամանակների անիմաստելի օրենքներ։ Այսպե՞ս եք առ ոչնչի հանգեցնում մարդկության բոլոր աշխատանքներն այս երկրի վրա, որը նրանք համարում էին իրենց մտքի զորության և իրենց բազուկների ուժի ու սրտի տենչանքների միակ ասպարեզը...

Սրտի, որը մշտապես նորանոր հագուրդներ ու հաճույքներ է հնարում, սրտի, որը երբեք չի գոհանում ունեցածով, սրտի, որը մահվանից քստմնելով, ջանում է անմահության խոյանքներ առնել, անգամ եթե ընկղմված լինի աշխարհիս վաղանցուկ վայելքների մեջ։

Բ

Վա՜հ, ո՞ւր են, որտե՞ղ գնացին, ի՞նչ եղան այնքան զանազան լեզուներով խոսող մարդկանց անթիվ ցեղերը, որոնք տարածված էին երկրի երեսին, և որոնց կարծես թե հաճախակի տեսնում եմ աչքիս առաջ՝ խմբված, կուտակված, դաս առ դաս, խումբ առ խումբ, շարք առ շարք, ինչպես Հյուսիսային ծովի սառցածածկ խութերի և ապառաժների մեջ ճովողող թռչունների երամներ, կամ ինչպես մորեխի բանակներ Միջագետքի դաշտերի մեջ։ Եվ հաջորդ ակնթարթին, այդ բոլորին առհասարակ, տեսնում եմ արդեն ընկած ու կործանված հողով ու անապատային ավազով ծածկվելուց առավել՝ թաղված մոռացության ցուրտ ծածկոցի տակ։ Ո՜հ, որքան անբավ է մարդկային բույսը, որը երեք չորս անգամ ցանվում և հնձվում է մեկ դար կազմող հարյուր տարիների մեջ և այսպիսով՝ իրար վրա են դիզվել յոթանասուն դարեր, սկսած առաջին մորից մինչև այսօր։ Ա՜հ, մարդկային ցեղի որքան հասակներ են դիտապաստ ընկնում հնձողի ոտքերը և ինչպես գերանդահար խոտի մի փոքրիկ շալակ, ադամային այդ ամբողջ սերունդը իրենց քոսոտ թիկունքին բարձած՝ ժամանակն ու մահը, այդ երկու անխոնջ դիակակիրները, դեռ տանում են առանց հոգնելու։ Նրանք փնտրում են, նկատում ու մկրատում և երբեք չի մաշվում ծածուկ ուղիներից տանողի կրունկները, չի բթանում բնավ կյանքը կտրող դանակը և չի վերադառնում այն, ինչը քշում է ժամանակը և մահը տանում։

Ավա՜ղ նորատիթիթ կյանքերի այն բազմությանը, որոնք արագ կերպով մարում են, ինչպես օդի հոսանքի մեջ դրված ճրագները։

Վաղանցուկ անձինք, որոնցից շատերն այնպիսիք են, որ նրանց նույնիսկ մանուկ չի կարելի կոչել՝ այնքան շուտ անցան նրանք արգանդի խավարից դեպի գերեզմանի խավարը։ Անթիվ են սակավակյացները ու շատ քիչ են երկարակյացները։ Շատ քչերն են, որոնք հոգնած և տարիների բեռով ծանրացած հասնում են կյանքի նավահանգիստը։ Իսկ այդ դեպքում, ինչի՞ համար է ծնվողների այդպիսի բազմությունը, եթե նրանք չէին ապրելու։ Ի՞նչ բերեցին նրանք այս երկիրը, կամ վերցրեցին ու տարան այս երկրից։ Բայց իմ ի՞նչ գործն է իմանալ մանուկ երեխայի առժամանակյա գալուստը ու անհապաղ մեկնելը աշխարհից, երբ ինձ համար դեռ անհայտ է մնում երկրի վրա ապրողների կյանքի բովանդակ փաստերը։

Հազարամյա նախահայրեր, ասացեք ինձ, դուք ի՞նչ արեցիք այս երկրի վրա, առաջին դարերի ժամանակներից սկսած։ Մի՞թե նրա վրա սոսկ ակոսներ քաշել աշխատեցիք, ձեր աղքատիկ օրապահիկը անհագուրդ կերպով վաստակելու համար ու ձեր կանանցից ու երեխաներից տարիներով սպասված մի բուռ հունձի տակ կքված՝ կրեցիք այն, խոցոտված փշերով ու տատասկներով։ Արդյո՞ք այդ ամենն արեցիք՝ հարթեցնելու և փափկացնելու համար երկրիս երեսն ու ծոցը, պատրաստելու համար հողագործության և շինարարության գործիքներ, նվաճելու կենդանիներին, որպեսզի նրանք օգնեն ձեզ և կերակուր լինեն, հալածելու համար վնասակար գազանների և թռչունների բանակները և ընտելացնելու համար օգտակարները։ Ուրեմն դրանո՞վ զբաղվեցիք ձեր կյանքի բոլոր ժամանակներում, երկար դարեր շարունակ և չկարողացաք որևէ երևելի հիշատակ թողնել ձեր ապագա թոռներին, և ոչ իսկ ձեր մարմնի զառամած ոսկորները՝ մի բան, որը փղերը, արջերը և ուրիշ գազաններ կարողացան մեզ հասցնել հազարավոր դարերի խորքերից մինչև մեր դարը, քարերի ծերպերի կամ երկրի խորխորատների մեջ։ Բայց եթե մարդկության նախահայրերից մնացած ավերակ կմախքներն անգամ մեզ գային-հասնեին, ի՞նչ սփոփանք պիտի զգայինք մենք նրանցից, եթե ոչ իմանալ հավաստիաբար, թե ապրել են բազում մարդիկ, որոնք ոչինչ չեն թողել մեզ, բացի իրենց անցնելը։ Չէ՞ որ երկրիս ամբողջ արևմտյան կիսագունդը, բևեռից բևեռ ձգված օվկիանոսի անսահմանության մեջ, ինչպես Կիկլոպների անհայտ մի կղզին,[3] կամ Ատլանտիդա կոչված այն կասկածահարույց աշխարհը, որը երգվեց գեղեցկախոս իմաստասերի կողմից,[4] մի աշխարհ, որը բազում հետազոտողներ փնտրում են

ու չեն գտնում, գտնում են և չեն կարողանում հավաստել,— շուրջ չորս հարյուր տարի առաջ էր, ինչ հայտնի դարձավ մեր արևելյան կիսագնդին և կոչվեց Նոր աշխարհ։ Չնայած որ, այն հավասարապես հին էր և մերինի նման հազարավոր տարիներ բնակեցված էր մարդկային անթիվ ցեղերով, որովայն և շտեմարան լինելով նրանց համար։

Նոր աշխարհի վրա քիչ-շատ դեռ կան մնացած հնության հիշատակներ, ինչպես Մեքսիկացիներինն ու Պերուացիներինը, որոնց վրա հնագետները տեսնում են Լիբիայի Նեղոսական ժողովուրդների ձեռակերտներին հար և նման օրինակներ։ Եվ ո՞վ գիտե արդյոք այդ ազգերի՝ այդքան հազար դարերով անցյալ պատմությունները... Անտեղի՞ ուրեմն անցան-գնացին այդքան տարբեր լեզուներով խոսող ամերիկյան ժողովուրդները, ինչպես լեռների և ձորերի մեջ աճած այն բույսերը, որոնց չի հասնում մարդու ձեռքը, և որոնք անգամ ճարակ չեն դառնում երեների համար, և որտեղ նրանք աճում են առանձին և առանձին էլ խոնարհվում են դեպի բնության անխոով գիրկը։

Բայց մի՞թե պետք է զարմանալ Ամերիկայի ամայության վրա, երբ ծանոթ կարծված այս աշխարհի մեծ մասը և նրա ամբողջ կենտրոնական մասը այսքան դարեր անցնելուց հետո էլ դեռ անծանոթ է մնում, և բնախույզներից ոմանց երկարատև քննություններից հետո միայն հազիվ հազ սկսել է քիչ-քիչ ճանաչվել Աֆրիկան, որին հին առակը կնքել է որպես նորանոր հայտնաբերծությունների արտադրող, նոր աշխարհի գյուտից հետո անգամ ծանոթ էր միայն իր ծովեզրյա մասերով և ահա չորս դար է, իսկ ավելի ճիշտ՝ ավելի քան քառասունչորս դար է, որ նրա կենտրոնի մեծ մասը, ասես թանձր խավարով պատած՝ գաղտնիք է մնում անգամ գիտնականների համար։

Եթովպիական և Եգիպտական ժողովուրդների հրաշակերտներն ու սխրալի ձեռակերտներն անգամ, որոնց հռչակն ու անունը տարածված էր ամենուրեք, կամաց-կամաց թոթափում են դարերի ավազն ու փոշին և երեքհազարամյա մեռելություն ունեցող զբմբռված մարմինները աստիճանաբար ի հայտ գալով՝ այդ ձևով դիմադիր են կանգնում մահվանը, որից, չնայած իրենց ամբողջ արվեստին, նրանք չկարողացան խուսափել, և ներկայացուցիչներն են հանդիսանում մի անմահության, որն աղոտ կերպով կարողացել էին նշմարել դեռ այն ժամանակ։ Նրանց բուրգերի և սֆինքս-

ների հսկայակերտ ու վեհաշուք քարաշեն կառուցվածքների, նրանց մեհյանների ու պալատների ճակատների վրա, նրանց կոթողների ու քարակերտ հուշարձանների վրա, տեսնվում են խեղճ ու նանրահավատ մտքի նշաններ, կատվի և եգիպտական քաջահավի, սողունների և բզեզների պատկերներ և այս՝ փառապանծ փարավոնների մահարձանների վրա։ Ո՞վ հնություններովդ պարծեցող աշխարհ, այդքան և այդպիսի անթիվ հուշարձաններով հիացնում ես ինձ, բայց չես հագեցնում. քո աշխարհակալ և աշխարհաշեն Ռամզեսներն ու Սեթովները,[5] այո՞, թողեցին հետքեր և կոթողներ մինչև Տավրոս և Կովկաս, բայց ոչ հիացողների սրտերի մեջ։ Ավելի շուտ մահվան, քան թե կենդանության հիշատակներ են դրանք, և թեպետ շատ-շատերը ցանկացան կերպարանել անմահությունը,— ես այդ չեմ ժխտում,— բայց նրանք այնքան թանձր ստվերներով նկարագրեցին ճշմարտությունը, որ չկարողացան կամ չկամեցան վերցնել ճշմարտության մռայլ քողը նրա վրայից և դեմ հանդիման նայել այդ սքանչելիքին. դրա համար էլ ինձ համար ունայնությամբ անցնող որոտաձայն հողմեր են եգիպտոսը և իր դրացիները։ Եվ դո՞ւք էլ, ով գեղատեսիլ կույսերի քաղաքներ և ալիքների տիրուհիներ, Տյուրոս և Սիդոն[6] ու զորությամբ հզորագույնդ Կարքեդոն, որ հանդգնեցիք Հռովմի և Մակեդոնացու դեմ ոտքի ելնել և իշխել նրանց վրա, որ ծովերի և ցամաքների վրա մաքս էինք դնում, այժմ ծովերի ու ցամաքների միջև խորտակված և ավաղի տակ թաղված ավերակներ եք դարձել, ինչպես փշրված սափորներ, մնալով միայն խորհրդավոր նշանաձողեր նավաստիների համար և բնակարան թշվառների համար։

Ոչինչ ավելի չեմ գտնում մեզ ավանդված նաև Ասիայի ամենահարուստ և ամենահզոր ինքնակալների կողմից անգամ, որոնք մի ժամանակ, որպես մի մի երկրավոր աստվածություններ, իրենց ոսկե գահն էին դրել Եփրատի և Տիգրիսի հովիտների միջև և պըղընձաձույլ ցանցով նվաճած ունեին հեռավոր ազգերին ու աշխարհներին, լեռնցիներին ու դաշտայիններին, երկրամիջյաններին ու ծովեզրյաններին. էգեյան ափերից սկսած մինչև երկնահաս Եմաոնը, Կովկասի ապստամբ սարերից մինչև Արուայիկների ամայի ավազուտները, մինչև խաղաղական օվկիանոսի անդունդները։ Երկու հազար տարիների տարածության ընթացքում, բռնապետները իրար ձեռքից հափշտակեցին միապետի գավազանը և սոսկ անդառնալի իշխանության հրամանով՝ փոփոխեցին իրենց արքունի գա-

հանիստները, երբեմն Քաղան, երբեմն Նինվե, երբեմն Բաբելոն կամ Եկբատան և երբեմն Շոշ. համաշխարհային ճոխության մի-մի կենտրոններ, որտեղ, ասես ոսկեղեն խողովակի միջով, հոսում ու դիզվում էր աշխարհիս ամբողջ հարստությունն ու պերճությունը և իր բազմապատիկ դյութանքներն էր տարածում նվաճված ազգերի և ցեղերի հարյուրավոր գավառների մեջ։ Գավառներից յուրաքանչյուրի տերերն ու իշխանները, այդ բռնապետների ամբարտավանությունից մի տեսակ հարկադրաբար մղվելով,— այն բռնապետի, որն իր վաթսունվեց կանգունանոց ոսկեղեն պատկերը դրեց Դեերայի դաշտի մեջ, որպեսզի որոշված պահին, երբ միաձայն հնչեն զանգակների ամենաբարբառ ձայները, գան երկրպագության արարողություն կատարելու,— խռնվում ու կուտակվում էին այդտեղ քաղաքներից ու հեռավոր սահմաններից եկած իրար անծանոթ մարդիկ, որոնք իրար չէին ճանաչում, երբեք իրար լեզու չէին լսել, գալիս էին այդ պատկերի առջև երեսնիվայր գետին ընկնելու համար, կամ թագավորի դռան առջև մինչև լույս սպասելու արևի ծագելուն, նման ալիքների այն բարբարոս խառնամբոխին, որը հրավից հոսելով, փակվում է ծովածոցի մեջ։ Եվ այս ամենը, մի քաղդեացու կամ ասորու սրտի փափագն ու քմահաճույքը կատարելու համար, որը ուրիշ մարդկանցից ոչինչ ավելի չունենալով (բացի մոլեգին ամբարտավանությունից) իրեն կարծում էր ամբողջ մարդկության կյանքին և կամքին իշխան, և իր հոգու խորքում նրանց համար վա՜շ, վա՜շ էր ասում։ Եվ սակայն սրանք էլ անցան ու չկարողացան հաստատուն մնալ՝ ոչ բարձրաբերձ անդրիները, ոչ էլ նրանց կանգնեցնող հպարտասիրտները, չնայած դրանք ձուլված էին ոսկուց և արծաթից, պղնձից և երկաթից, այլ որովհետև, ըստ մարգարեի խոսքի, քանի որ կանգնած էին խեցեղեն սրունքների և ոտքերի վրա, չկարողացան դիմանալ այն վիթխարի հսկային երկար ժամանակ կրելուն։ Եվ ահա բլուրից մի փոքրիկ քար չ գլորվում ցած և թավալգլոր գալով՝ բախվում է վիթխարի հսկային։ Գետինը թնդում է, տեսնողները զարհուրում են, և տեղնուտեղը լուծվում է այդ վիթխարու պատճառած աշն ու սարսափը, նման այն ստվերին, որը խուսափում-փախչում է, երբ ոստաշատ կաղնին տապալվում է կացինների հարվածներից։ Ինչպես հանդուգն երիտասարդները, մրցելով իրենց զորավոր հակառակորդների հետ, հաղթում են կամ պարտվում, այդպես էլ՝ մեկ առ մեկ ընկան Ասուրն ու Բաբելը, Քաղդեացին ու Մարը, Պարսիկն ու Պահլավը,

Հելլենն ու Հոռոմը, կոխոտված դարերից և նվաստագույն ալգերից։

Եվ անապատասուն կիսամերկ մի տաջիկ, կամ ցեղապետ մի վաշկատուն, կամ քրդի մի ձագ, այսօր հեծած գեղակերտ սյան ծայրին կամ նստած եռաղիմակ պատկերների վրա (մարդագեմ, ցլագլուխ և արծվաթև) կամ Արեգակի տաճարների կիսաքանդ դրռների հովանում՝ ծխում են անփույթ ու անտարբեր հեշտաբեր ծուխը, ասես դրանով կամենալով ցույց տալ մարդկային ձեռակերտների ծխի նման ցնդելը և մշտապես հաստատուն համարված իրերի և մարդկանց անհաստատությունը։ Ո՜վ աշխարհների մեծակառույց քաղաքամայրեր, հարյուր դռներով, բարձրաբերձ բուրգերով և թանձրը պարիսպներով՝ Բաբելոն, Նինվե, Պալմիրա, Պերսեպոլիս, Թեբե և Մեմֆիս, Սլաք և Բաալբեք, դուք, հազարավոր լեղուներով ելումուտ անող բյուրավորների հանգրվաններ, ինչո՞ւ եք մնացել այդպես անմոռունչ, ինչո՞ւ եք կանգնել անշարժ, ո՜վ մեծամեծ ազգերի մեծագիր մահարձաններ։ Ո՜վ ժողովուրդների սին վաստակներ և ժամանակների վիժվածքներ, ո՜վ ունայն երկունքներ սրտերի և մտքի ծնունդների։

Որքա՜ն քիչ էին այն ավնիվները, որոնք մտաբերեցին ճշմարտ գեղեցկությունը իրենց՝ արդեն ստեղծած կամ դեռ մտքում հղացած ստեղծագործությունների մեջ դնելու մասին։ Իսկ ավելի քան քիչ էին այնպիսիները, որոնք իրենց աչքերը երկրից վերև բարձրացրեցին, տեսնելու համար իրենց գլխից վերև եղածները։ Եվ արդեն եզակիներն էին, որոնք կարողացան պատռել այս երկրի նյութական շրջապատը և հասնել աներևույթին։ Ամբողջ երկիրը,— ասում է Սուրբ գիրքը,— հազար տարվա կյանքից հետո ընկղմվեց ջրերի անդունդի մեջ, խեղդամահ անելու և փչացնելու համար ամբողջ մարդկությանը, որովհետև նրանք միայն մարմնեղեն էին, այսինքն մտածում ու հոգ էին տանում սոսկ մարմնական հաճույքների մասին և փույթ չէին տանում առ անմարմնականն ու հոգևորը։ Քստմնելի՜ աղետ, անչափելի կորուստ։ Բայց ավա՜ղ, մարդկությունը նորից ծնվելով ու բազմանալով, չբժշկվեց իր նախկին ախտերից, և նույն կրքերը, կրքերից բռնագույները, տարփանքները, թագավորում են սրտերի վրա, բանալով ներքին սաստիկ մի պատերազմ, ավելի սաստիկ, քան արտաքին ամենախուժդուժ կռիվները, քան զենքով կատարվող ամենաահեղ նախճիրները։ Սրով խոցվածները բազմաթիվ են, իսկ սիրուց խոցվածները՝ անթիվ. առաջինը խոց է, իսկ երկրորդը՝ վերք։ Ահավասիկ հսկաներից հը-

զորագույնը թուլացած՝ Դալիլայի թևերի մեջ.[7] մարդկանցից ամենահիմաստունը՝ Տյուրոսի դստեր հրապույրներից թակարդված. դյուցազուններ՝ պարտված փափկիկ օրիորդներից. նույնիսկ աստվածներ և երկնքի զավակներ՝ խարդավանված այդ նույն աղետից։ Դու իսկ,— հիշում եմ և դողում,— դու իսկ, հոգի և սիրտ կրողներից ամենից վեհադույնը, որին աստված հավաստեց որպես իր սրտի մարդը, դու էլ զարնվեցիր այդ սլաքով, սլաք, որն սկզբում մարդկության նախամոր ծոցից դուրս թռչելով, խփեց առաջին մարդուն և թունավորեց նրա ծննդի ամբողջ սերմը։ Բանակների քանի խմբեր և գնդեր, զինավառ և ասպազեն, քանի արշավանքներ անապատների և բնակավայրերի մեջ, ավազակություններ ծովերի վրա, ցամաքային պաշարումներ, խրամատային շրջափակումներ քաղաքների մոտ և պարիսպների փլուզումներ, արյան հորդահոս հեղեղներ և արտասուքի գետեր,— հափշտակելու համար սարփածուին կամ նրան իր տարփուհուն հասցնելու համար։ Տարփուհու, որի համբավը թերևս ավելի մեծ էր, քան իր գեղեցկությունը, ինչպես ցանկությունը՝ քան վայելքը, որը թերևս մի ամոթալի դիշերվա մեջ արագորեն սպառեց ամեն ինչ և ցայդալույսի ստվերը փարատեց տասը տարիների նրա ցանկալի ակնկալությունը։[8] Իմացան հզորներն ու աշխարհակալներն անդամ, թեպետ և ուշացումով, որ ըմբիշներին և գազաններին հաղթողներն անդամ, պարտվում են այդ կակղամարմին կենդանուց և չկա ավելի հաստ ու երկար շղթա, քան սիրո փոկի վարակիչ կապերը, որն իրար հետ դղրթայելով տկարին ու զորավորին, քաշելով տանում է սարեր ու դաշտեր, կամ մինչև մահ գերություն, կամ ավելի հեռուն, դեպի մշտնջենավոր մահը։ Եվ բյուրավորներից հազիվ մեկն է լինում, որը կարողանում է կտրել շղթաները կամ ընդամենը կաշկանդված լինելով այլ ոչ թե կապկված՝ ազատվել ողջանդամ։

Դե թող հիմա ճգնեն քերթողներն ու թատերգակները, Իլիական ու Էնեական հակներգությունների մեջ փառաբանելու սիրային դյուցազուններին։ Հիմարներն ու իմաստունները Սող խառն ի խուռն վազեն դեպի թատրոնները, տեսնելու համար սիրուց վիրավորվածների տեսարաններն ու կերպարանքները, որն այնպես գիտեն ծածկել բանաստեղծներն իրենց բազմազիսի հանճարներով, և նվաճների ներդաշնակությունը քաղցրացնեն շողոքորթությամբ, որտեղ փայփայելով՝ ամոքեն իրենց սիրտը իրենք իրենց խաբելու համար։ Բայց Սոֆոկլեսների և Կոռնելների ամբողջ արվեստն ան-

գամ չի կարող ծածկել մարդուս սրտի խեղճությունն ու ունայնությունը։

Բայց որովհետև վտանգը հասարակական է, կամ որովհետև բովանդակ մարդկային բնությունը տեսակ-տեսակ ախտերով ու կրքերով վարակված է, տմարդություն կլինի սրտի վերքերին չցավակցելը։ Սիրո հանցանքը գեթ ավելի ներելի է, քան ոխակալությունը, քանզի առ սերը՝ սիրտն ինքն է ձգտում, իսկ առ ոխակալությունը՝ միտքն է սրտին մղում։ Սիրուց վիրավորվածներին ահա խնամում են ու կենդանացնում թեթևամիտ վիպասանները, իսկ ատելության վերքերն ու հարվածները, որոնք ագահության կամ փառասիրության, կամ որևէ հարստության հետևանքով են լինում, ո՞վ կհանդգնի գովել, եթե չի կամենում ինքն իրեն խայտառակ անել։ Չկա պատերազմի գործից ավելի ամոթալի գործ, չկա մարդու մեջ դրանից ավելի անմարդկային բան, մանավանդ եթե մեկը քննի պատճառներն ու արդյունքները, այդ գործի պատրաստությունն ու վախճանը։ Նայի՛ր այն դաշտավայրերին, որտեղ հրուշակավոր ճակատամարտերն են մղվել, սկսած Նինոսի օրերից մինչև Նապոլեոն. անցի՛ր Քսերքսեսի, Աղեքսանդրի, Հաննիբալի, Կեսարի, հոռվմեական հազարավոր զորավարների բանակների միջից, Եվրոպայի և Ասիայի բյուրավոր ցեղերի զինվորական ճամբարներից, հյուսիսային հրոսակների և անապատաչու սկյութացիների ու թաթարների վաշտերի միջից, առաջին, միջին և վերջին դարերի անչափ ու անհաշիվ բոլոր զինվորականությունների միջից, և տես, թե սարսափած ինչպես պիտի զարմանաս, որ մարդկային միտքը վաղնջական ժամանակներից մինչև այսօր, ավելի շատ տիրելու և սպանելու հետամուտ է, քան աճեցնելու և կյանք տալու։ Ավա՜ղ այնքան դալար հասակներին, որոնք հնձվեցին երկրի դալարության վրա, փչացնելով հասունության պտուղը։ Եղբայրն իր եղբորն է բաղում, հայրը՝ որդուն, բազում կոտորածներ են լինում՝ հաճախ մեկ մարդու քմահաճույքի համար և ճարտար անդրիագործները տանջվում են ու քրտնում, հուշարձաններ ու մահարձաններ կանգնեցնելու համար մարդկային կոտորածի այդ հրամանատարներին։ Եգիպտոսից, Նինվեից ու Հռոմից մնացած քանդակների ու արձանների մեծագույն մասը և արդի ազգերի հիշատակարանները պատերազմներն են ներկայացնում, հաղթանակներն ու պարտությունները, դերիներին ու գերողներին, զորավարներին ու զոհվածներին. մարդկանց համար մեծություն են նրանք, ովքեր ավելի գազանաբար էին ջախջախում

մարդկային բաղմությունները։ Եվ փեսայի ու հարսի հույսերից կողոպտված գարնան ծաղիկները հյուսված կախվում են սառը բուրգերից և աշխարհակալների ու հաղթող կոչվածների կոթողներից։ Ավա՜ղ, մի մարդու անունը բավական է, որպեսզի մոռացվի տարիներ տևած պատերազմների տառապանքը։ Սեթևեթ մի համբավ լռեցնում է գյուղերի ու քաղաքների խոր հառաչանքը, և հանիրավի շռայլված մի պատիվ ճգնում է կոծկել դաշտերում և ագարակներում հեղված արյան անբավ ծովերի փաստը, ինչպես նաև դիակների այն շիղջակույտերը, որոնք նետված են նրանց տակ ու ծածկված աճապարանքով. ասես թե աշխարհիս ամենավայելչագույն արարածը՝ մարդը, ամենից ավելի գարշելին լինի։

Բայց պիտի ասեն, թե մի՞թե իզուր են գործել մեր նախնիները. և խոտա՞ն պետք է համարենք այն մարդկանց վաստակն ու հրոչակը, որոնք պատերազմեցին հայրենիքի համար, լինեն նրանք ողջ թե մեռած։ Ա՜հ, սրբազան է արդարև հայրենիքը և խորագույն է նրա նկատմամբ ունեցած զգացումը։ Նվիրական է հայրենիքի սեղանը՝ կրոնի սեղանից հետո, մանավանդ թե՝ անբաժան են իրարից այդ երկու սեղանները, թե որ զգոն հայրենասիրությամբ են կատարված այդ փառաբանված գործերը։ Քանզի կատարյալ չէ այն գործը, որն իր վրա չունի անմահության կնիքը։ Կրոնն է, որ այստեղ, արեգակի ներքո, անջինջ կերպով կնքում և պսակում է մարդկային գործը և այն արեգակից էլ վերև է բարձրացնում։

Հիանում ու զրվատում եմ քեզ հետ ե՛ս էլ, ով կորովաբանդ Ատտիկեցի,[9] նրանց, որոնք քաջաբար ընկան Պլատեայի և Սալամինայի դաշտերում, Մարաթոնի և Քերոնեայի մեջ, նրանց, որոնց նմանները կան ամեն կողմում և ամեն ազգի մեջ։ Ես էլ իմ ձայնը միացնում հռետորների և բանաստեղծների փառաբանություններին և չեմ արհամարհում հայրենիքի նահատակների պատվին կանգնեցված կամարները։ Ավելի զգացված հոգով պիտի կամենայի հոչակել նրանց անունները, եթե այն հեռավոր աշխարհի մեջ, որտեղ գնացել ու հանգչում են նրանց հոգիները, այս երկրից նրանց հասներ իրենց անվան փառաբանության համբավը։ Քանզի այն աշխարհից, որտեղ նրանք կան, եթե չի արձագանքվում նրանց համար մեր երգած տոնական երգերը, ուրեմն կամ մեր արածը, կամ նրանցը ճշմարիտ գործ չէ։ Իզուր են ճգնում գուսանները, վիպասանները ու բոլոր երգերի նվագարանների և որոտընդոստ փողերի արվեստավորները, որովհետև գեթ մի վանկ այնքան աղա-

զակներից, որոնք թնդացնում են մեր քաղաքներն ու դաշտերը, չի կարողանում կտրել-անցնել հավիտենականության սահմանները, որտեղ հարգվում են միայն իսկական գործերի արդյունքները և ոչ թե վայրիվերո կերպարանքները։ Հողմի ահագնագոչ շաչյունը ավելի ազդու, ավելի խոր իմաստ ունի այն ժամանակ միայն, երբ գովողների բերանից մինչև գովվածների ականջը ճանապարհ կա բացված։ Առաքինությունն է միայն այս տեղից հանդերձյալի սահմանն անցնող նվիրակը։ Ո՜վ փառապանծ Հելլադա և Լատիոն և ձեզ նման ուրիշներ։ Երբ լսում եմ ու տեսնում ձեր հայրենասեր քաջերի թողած հրաշակերտները, տրոփում ու դղրդում է նաև իմ սիրտը... բայց իսկույն էլ հանդարտվում է։ Ինձ ի՞նչ օգուտ եթե՝ ինչպես չեմ կարող զգայություն տալ ձեր պղնձյա ու մարմարյա արձաններին, այնպես էլ չեմ կարող երբեք ազդել ձեր իսպառ ցամաքած սրտերի վրա. կամ թե այս անցավոր կյանքից հետո չկարողանամ հանդիպել ձեզ, որ անցաք, կանխելով ինձ։ Ձեր Ծղիսեան հովտից ավելի բարձրագույն ու սրբագույն մի տեղ եմ խնդրում ես ազնիվ հոգիների համար։ Աղնվագույն և զգոնագույն են ինձ համար հեզահոգի սրտերի աշխատանքը, խաղաղակյաց արվեստագետի աշխատանքի արդյունքը, որոնք ընդօրինակելով բնության բնաբույս գեղեցկությունները, ջանացին այդ նույնը տպավորել տախտակների, քարերի և մետաղասալերի վրա, օգնական առնելով զանազան անոթներ և նյութեր, որոնք հայտնաբերել էին նրանց նախորդած հնարամիտ արվեստագետները. և իրար հետ հարմարակցելով նյութն ու եռանդը, ձեռակերտ կոթողների ըստեղծողներ հորջորջվեցին՝ ըստ արվեստների զանազան ճյուղերի, ինչպիսիք էին պատկերահանությունը, անդրիագործությունը, բնակատեղիների ճարտարապետությունը և ցամաքների ու ջրերի վրայով գնացող ճանապարհաշինությունը։ Ավելի ինձ հիացնում է մտքի և մատների ծնունդ այն արվեստը, որը պարիսպներ է բարձրացրել, անդնդախոր հեղեղատների և լայնատարած գետերի վրա կամուրջներ է ձգել, բարձր ու գեղականգուն կոթողներ է կանգնեցրել, երկնքի աննյութ գմբեթի դեմ բարձրացրել է քարակերտ գմբեթներ, քանդակներ է արել սոսկավիթխար քարերի հսկա զանգվածների վրա, կենդանիների կերպարանքներ դրոշմելով այնտեղ և ամեն մի նյութ, կարմիր թե փափուկ կակղեցնելով ու տաշելով, ծառայեցրել է շինության ու պերճանքի համար. քան թե այն պատճառները, որոնց համար կառուցվեցին ու կանգնեցին այդ ձեռա-

կերտ հրաշալիքները, որոնց բեկորների և ավերակների վրա դարերն են հիանում։ Որովհետև շատ անգամ, մի որևէ բռնապետի կամ մի մեծահարուստի քմահաճ ամբարտավանությունը կամ փոքրոգի գորովն է, որը դրդել է կանգնեցնել դրանց՝ անշուշտ թե՛ զբրկելով և թե՛ բռնանալով, իսկ արվեստագետը, առանց այդ ցանկանալու, իր գիտությամբ քողարկել ու ծածկել է նրա անգիտությունը։ Ահա սրանք են անցյալ դարերի և աղգերի վաստակների ակներևագույն մնացորդները և մարդու կարողության վկայությունները։

Բայց բարի եղնք ասել, թե բնությունից ավելի էլ ի՞նչ կարող են մեզ համար արտապատկերել այդ մանրադրվագ արձաններն ու քանդակները, որոնք մարդկային ճարտարության ամենակատարյալ գործն ու հիշատակն են համարվում. և շատերը, քան թե քչերն են, որոնք ոչ միայն չեն էլ կարողանում հասնել բնական օրինակին, այլև եղծում են նրա իսկատիպ պատկերի պարզությունը։ Ամենանրբամիտ և նրբամատ համարված արվեստագետներն անգամ, Ֆիդիասներն ու Ապելեսները, Սանցիոն ու Կանովան[10] ընդամենը պատճենահանողներ են և իրական բնապատկերի կարիատողներ, արվեստագետներ, որոնք ոչ իսկ կարողացան Ոլիմպիոսը դղրդացնող համարված Արամազդի հսկայահասակ արձանի ոտքերից մեկն անգամ շարժել տալ և ոչ էլ խաժակն Աթենասի արտևանունքները թրթռացնել, թող թե իրենց կերտած ու կոփած աստվածների երակների բաբախումը կամ մկանների շարժումն առաջացնել, որտեղ ազատորեն ճեմում էին մժեղներն ու ճիճուները. միայն գեղեցկության անշունչ ու անշարժ նշմարները կարողացան պատկերել նրանք անձև զանգվածի վրա, սլացիկ ազդեցություն թողնելով տեսնողների վրա և այն էլ ամենքի համար ոչ ղգալի։

Ձեռքի արվեստներից ավելի վեհ եմ համարում մտքի հանճարներին, որոնք արձակ կամ ոտանավոր ձևով, ճառերի, երգերի և նվագների մեջ են հեղում իրենց հոգու իսկաբուխ բերքն ու ծնունդը, որը գուրգուրված է մտքի և սրտի պաշտպանությամբ. և ուրիշ մարդկանց համար ծածկվածը, անըմբռնելին ու անհասանելին, նրանք դյուրագյուտ ու հեշտությամբ մերձենալի են դարձնում։ Դրա հետևանքով էլ՝ նրանք շատ մեծ են ու պիտանի, որովհետև սովորեցնում են իրենց անկարող մերձավորին, կամ մեկնաբանում են բնության օրինաչափությունները, մտքի գաղտնիքները և մանավանդ՝ բարոյականի սկզբունքները։ Դրա հետևանքով զարդանում

է ներքին մարդը, հարստանում է, կազդուրվում՝ բարձրանալով այս անցավոր աշխարհից ավելի ու ավելի վերև, բարձրանալով դեպի ճշմարտությունը։

Գ

Ճշմարտությո՞ւն, ճշմարտությո՞ւն, ահա մտատանջող առեղծվածի լուծումը։ Ահա մարդկության նպատակակետը և երկրից երկինք ձգված կամուրջը։ Այս է մտքի թռիչքը, սրտի ասպարեզը, հոգու աթոռը։ Բայց ավա՜ղ, որքան բազմաքանակ են այն փնտրողներն ու փորձողները և որքան քիչ են հասնողներն ու գտնողները։ Եվ առհասարակ, այն գտնելու ու վայելելու հաճույքից դրկված եմ տեսնում մարդկային մի վիթխարի բազմություն, որը կրթվել է մարմնական կրքերի առածումով, շահատակություններով և կռիվներով, աշխարհի նվաճումներով և հափշտակություններով, մատների և գործերի արվեստի ճարտարապետության հրապուրանքներով։

Կան ուրիշներ էլ, որոնք ուսուցիկ ճառերով, սնամեջ ու ճոռոմ հռետորություններով և օձալեզու, մեղրածոր խոսքերով հոգին ու միտքը կաշկանդած ու վարակած՝ չեն կարող համարձակորեն խոյանալ այնտեղ, որտեղ նրանց խոյանալ է դրդում իրենց ներքին գաղտնի զորությունը։ Դրանից դրդված իմաստասիրների մի ամբողջ դասակ, բոլորի առաջն ընկած, ընթացավ մարդկության կեռմանաշատ ճանապարհներով, որպես առաջնորդ և միջնորդ ռամիկ բազմության համար՝ գտնելու և ցույց տալու կյանքի ճանապարհը, այդ բազմությանը մեծ և երանելի վախճանին հասցնելու համար։ Մի գործ, մանավանդ թե մի իղձ ցանկալի և բաղում անգամ գովելի, թե որ հաջողեին և ոչ թե օտարոտի ու այլանդակ գաղափարներ սերմանեին ուրիշների մտքերում և փոխանակ հեռացնելու տգիտության ինքնածին բույսը, աճեցնեին մոլության կամավոր տունկը։ Կամ խաբված և խաբելով, կամ տեսնելով որոնելիք ճշմարտության նշույլները և դրա դեմ բարբաջելով՝ նրանք դեպի ստությունն էին դիմում և կամ մոտենալով ճշմարտությանը և հազիվ քողարկված ձևով նրան նկատելով, անկատար վանկերով գովերգում էին նրան, սակայն ոչ իսկական ճշմարտությանը հասան և ոչ էլ կարողացան այն ճշտորեն արտաբերել։

Բայց եկ համարենք, թե ակադեմականների գեղեցիկ գյուտերը,

ճեմարանականների խորիմաստ վճիռները կամ Սոկրատի և Պյութագորասի ավանդությունները և Զինացի, Հնդիկ և Պարսիկ իմաստասերների օրինախառն պատգամները, համընդհանուր տարածում և ընդունելություն գտած լինեին, ինչպես որ մարդկության ոչ սակավ մասն է ընդունել այդ օրենքներն ու վարդապետությունները բոլոր այն երկրներում, որտեղ որ դրանք քարոզվել են։ Դրանցից ի՞նչ շահեց և ի՞նչ է շահելու աշխարհը։ Մի՞թե լուսավոր արևելքի զավակները չէին, որոնք երեք, չորս հազար տարի հետո էլ խարխափում էին տգիտության խավարում, հետևելով իրենց հնացած իմաստուններին՝ Զրադաշտին, Մանուին, Կոնֆուցիոսին[11] և սրանց նմաններին, ինչպես նաև աստվածախառն գո և անգո Բուդդային և Բրահմային[12]։ Ինքը՝ Հունաստանը, մեր թվարկությունից չորս կամ հինգ հարյուրյակ առաջ, իր ամենապայծառ դարում, երբ բարգավաճում էին մտքի և ձեռքի ամեն տեսակ հանճարներ, ո՞ր աստիճան ճշմարտության կարողացավ հասնել և իր հետ էլ մարդկությանը հասցնել։ Եթե մի Սոկրատ կամ մի Պլատոն կարծեցին, թե կարողացել են գտնել ճշմարտությունը, քանի՞ հազարներ էլ եղան, որոնք նրանց համար մոլեխինդն ու խեցակույտը իբրև վարձատրություն էին պատրաստում։ Նաև այն մեծ ու հզոր Հռոմը, ամեն ինչ հափշտակող և ամեն լավություններին գայթ ի գայթ հետևող Հելլադան, ի՞նչ վաստակեցին հունական հանճարի հինգ հարյուր տարվա աշխատանքներից, բացի իրենց համաշխարհային ինքնակալությունը հաստատելուց և կշռադատված ու արդարացի քաղաքական օրենքներ տալուց իրենց տիրապետության ներքո գտնվող բոլոր երկրների ազգերին։ Կարողացա՞վ հյուսիսի և արևելքի բարբարոս, հետամնաց խուժանից ազատել իր նախնիների դորությունն ու պատիվը։ Եվ մանավանդ՝ կարողացա՞վ մոլության խուժդուժ բանակից ազատ պահել ժողովրդի բարքերը։ Մի՞թե խաղալիք, գերի և զոհ չեղավ օտար ազգերից ու զենքերից ավելի, իր միջից բուսնած ընտանի ախտերին ու մոլություններին։ Եթե նրանց կողքին կանգնած չկային Պլատոններ ու Զենոններ, մի՞թե պակաս մտահաս էին Կատոնն ու Կիկերոնը, Սենեկան, Տակիտոսը, Պլինիոսն ու Կվինտիլիանոսը և ուրիշները, որոնք այդ ամենին ականատես էին։ Հելլենական փիլիսոփաների՝ ինչպես բնագիր, այնպես էլ լատիներեն լեզվով թարգմանված մատյանները իրենց ձեռքի տակ պատրաստ չունեի՞ն։ Եվ մի՞թե ավելի քան նրանց գիտությունը, իրենց առջև չունեին հազարամյա դարերի երկարատև փորձը։ Մերթ ընդ

մերթ հափշտակելով արքայական ծիրանին ու թագը, զանազան կեսարներ ու Օգոստոսներ հանդես եկան՝ հալածելու համար իրենց ծովածավալ պետության սահմաններն ասպատակողներին, նորից թոցնելու համար հռովմեական արծիվներին, այն ժամանակ հայտնի աշխարհների մինչև վերջին ծայրը և շատ թե քիչ, այդ բանը կարողացան անել էլ։ Իսկ ինչո՞ւ չեկավ-չհայտնվեց և ոչ մեկը, ոչ դրանից առաջ և ոչ էլ հետո, որպեսզի ասեր համարձակորեն և ի լուր աշխարհի. «Եկե՛ք բոլորդ էլ իմ հետևից»,. կամ՝ «Գնացե՛ք այն ճանապարհով, որը ես եմ բանում և կհասնեք կյանքի նպատակին. օ՜ն ուրեմն, գործեցեք ինձ նման և պիտի ապրեք հավիտյան...»։

Ո՜հ, ոհ, այս ի՞նչ աշխարհածուփ փոթորիկ է, որը լռեցնում է հելլենների և հռոմների հրաշալի ճառերը։ Փիլիսոփաների, մոգերի և քրմերի բոլոր ճեմարաններն ու լսարանները, մահարձանների և բռնակալ թագավորների կառուցած անառիկ պարիսպների նման՝ խորտակվում են և լռության ու արհամարհանքի են դատապարտվում։ Եվ ունայնաշունչ քամին, պտուտակվելով կյանքի անապատի մեջ, փչում է հողմավար, հայտնելով հզոր թե անշոր, գիտուն թե անգետ բոլոր ազգերի ու լեզուների գործի և խոսքի նանրամիտ լինելը։ Քամին անցնում է, գալիս է ու գնում և հանապազ տարածվում է ունայնության նույն աղաղակը։

Ուրեմն մարդը ունայնությունը հաստատելու համա՞ր է ծընվել։ Աշխարհիս վրա մի վայրկյան միայն երևալու և ապա՝ ժամանակների անպառնալի խորքերը իսպառ ու անհետ անցնելու համա՞ր։ Հեռո՜ւ տարեք ինդրեմ այդ գաղափարը։ Անկարելի է, որ կորչի նա, ով որ կամենում է մնայուն լինել։ Անկարելի է, որ չքանա նա, ով արդեն ճանաչել է հավիտենականությունը կամ վրիպի գեղեցիկին ու ճշմարիտին հասնելու իր հույսի մեջ։ Ու թեպետ այս անցավոր կյանքի պբաղումներով ու ախտերով ավել կամ պակաս չափով վարակված՝ նա շարունակում է քայլել մոլորվածի նման, սակայն մի ներքին ձայն, նույն ինքը կենցաղի ունայնությունը քարոզող ձայնը, անդուլ կերպով մղում է նրան դեպի իրականը, անանցը, հանդերձյալը։ Եղծվելու ընդունակ բոլոր արարածներն անգամ իրենք են քարոզել ու քարոզում անեղծանելին։ Խոտը և վայրի մոշենին, լեռնային ծաղիկն ու մորենու պտուղը, ինչպես նաև Լիբանանի մայրիները, երկնքի աստղերը, Ալպերի լեռնապարերը և օվկիանոսի փրփրաբաշ թիկունքը, անեղի հետ ծանոթու-

թյունն ու մեր կյանքի իմաստն իրար շղթայող մեկ մեկ տարրեր են։ Եվ որովհետև բազմաթիվ ցանկություններ, զբաղմունքներ ու անհեթեթություններ կարողացան գրավել շատերի մտքերը և ասես թանձրամած մեգի մեջ պտտացրեցին այն, մեգ, որտեղ տարուբերվում էին բովանդակ դարերն ու ազգերի տոհմերը, ինչպե՞ս կհանդուրժեր հավիտենական Բանը խսպառ հրաժարվել իր ձեռակերտ հրաշքով մարմին ստացած արարածից։ Հնարավո՞ր է, որ պայծառ լույսը չպատռի տգիտության խավարը գեթ սակավամասն ճառագայթումով։

Անաստղ գիշեր երբեք չի եղել տարածված ամբողջ մարդկության վրա։ Երբեք ճշմարտությունը չի խափանվել կամ քողարկված չի մնացել ամբողջ երկրի վրա ընդհանրապես, այլ աղոտաղոտ ցոլացել ու փայլփլել է մերթ այս և մերթ այն կողմերում, կամ հրաշքներով ու երկնքի մեջ երևալով, կամ արդարամիտ մարդկանց քարոզներում և կամ էլ նրանց գրավոր խոսքի մեջ։

Այս բոլորի մեջ վեհագույնը հանդիսացավ Սինայի ամայության մեջ Եբրայական ազգի առաջնորդը, նա, որ առաջինը քարեղեն տախտակի վրա դրոշմեց և հավիտենական էջերով տվեց ճշմարտության խոսքը, այն լեզվով կակազը, բայց բոլոր ճարտասաններից, բանաստեղծներից, վիպասաններից ավելի հրաշաբանը, մարգարեն ու իշխանը. նա, որ այդ բոլոր շնորհներն ուներ գերազանցորեն շատ ավելի քան մյուսները, ամենայն դովասանքի արժանի և աննման այն այրը՝ Մովսեսը, որի հոգին կրողները և նրան հետևողները հազարավոր տարիներ շարունակ հայտնատեսներ կամ մարգարեներ էին կոչվում։ Սակայն սրանք էլ և նույնիսկ եռամեծն այն նախամարգարեն, չկարողացան առաջնորդ ու ղեկավար լինել, բայց եթե մարդկության ամենափոքրիկ մի խմբի՝ Իսրայելի զավակներին և այն էլ դայթ ի գայթ հազիվ տասնհինգ դար կարողացան պահպանել ճշմարտության առկայծող ճրագը։ Մինչև որ նույն ինքը՝ օրենքների հավատարիմ հեղինակը, որին աստված իր ամենատես աչքով տեսել էր հեռվից և որը մտքով կարողացել էր թափանցել աստվածության իմանալի մասերի խորքը, ինքն էլ զգաց, որ թեպետ և վերահասու էր եղել ճշմարտությանը, բայց չէր կարողացել ամբողջովին բովանդակել այն և ոչ էլ դրոշմել իր մերձավորների ու հեռավորների մտքի մեջ։ Այս նախամարգարեն ահա, խոստովանեց, որ իրենից ավելի գերագույն մի անձ միայն կարող էր այդ անել և ասաց. իր ժամանակին մե-

ծագույն մի մարգարե պիտի հայտնվի, նրան լսեցեք և նրանից սովորեցեք կատարյալ ճշմարտությունը։

Դարձյալ դանդաղորեն սահեցին-անցան դարերը, հայտնվեցին Իսրայելի մարգարեները, երևաց հոգեքնար Բեթղեհեմացին, հյուսեց ամենից ավելի նուրբ և ալնիվ սաղմոսները, բարձրացրեց հոգին, խորացրեց սիրտը, գերերկրյա զգացումներով լցրեց աշխարհը. կռահեց, որ իր շառավղից է ծագելու Մովսեսի նախագուշակածը և ապա անցավ գնաց իր հայրերի մոտ։ Հայտնվեց և նախանձախույզ Թեզբացին և որպես կրակի արվեստագետ, փչեց իր բորբոքիչ խոսքերը, շանթահարեց չլսողներին և չկարողանալով հանդուրժել իր հակառակորդներին, լծեց իր հրեղեն կառքն ու նժույգներին ու հեռացավ անծանոթ աշխարհները։ Եկավ և Ամովսի որդին, որպես վկայություն կոչելով երկնքին ու երկրին, խոսեց բարձրագույն և գեղեցկազարդ բաներ, բայց անագորույն մարդկության կողմից միջահատվելով, մահացավ։ Եկավ և ողբասացիկն այն Երեմիան, իր գորովալից խոսքերով խանդաղատեց տեղացուն ու օտարին, և շարահոգի մարդիկ նրան ջրհորը նետելով, մահվան դատապարտեցին։ Առաջ եկավ և ցանկալի այրն այն Դանիելը և շուտափույթ կերպով հավաստեց, որ ոչ ինքը և ոչ էլ առաջինը կամ վերջինը մարգարեներից պիտի կարողանային կենդանություն և անմահություն տալ հոգուն, այլ միայն այն մեկը, որը գալու էր յոթն անգամ յոթանասուն տարի հետո և այս ձևով տնանկ ու տառապյալ մարդկությանը հույսով դարեր սպասեցրեց...

Արա՜գ անցիր արդ, ժամանա՜կ. թող վերանա հույսի պատրվակը, փարատվի խավարի քողը, և բաց դեմքով երևա ճշմարտությունը, ինչպես արեգակը լուսաբացի պարզության մեջ։ Ելի՛ր, հայտնվիր և դու, ով դարեր շարունակ սպասվածդ, ազդարարի՛ր քո մասին աշխարհին, որպեսզի մարդիկ կյանք առնեն։ Վերջապես լրացավ ժամանակը, հասավ նախորոշված վայրկյանը... Ահավասիկ նա. մարգարեների գուշակածը, նահապետների երազածը, նախամարդու համար խոստացվածը և ամբողջ մարդկության՝ կարոտով սպասվածը։ Պաղեստինյան մի փոքրիկ գյուղից, հովիվների հյուղակից, ծնված մի անծանոթ աղչկանից, որը, սակայն, ի հավիտենից քաջածանոթ էր երկնքին, ինչպես անբիծ ցողունից ծնված մի պայծառ ծաղիկ մենավոր մի հովտում, և որպես լուսավոր մի աստղ մթապատ գիշերվա անամպ երկնքի վրա, կամ ինչպես մի արեգակ ծովի ու երկնքի հատման տարածքում, նա անձայն ու

անշշուկ հեզապարելով վեր բարձրացավ և իր համասփյուռ ճառագայթներով լցրեց երկնքի ու երկրի միջոցը։ Ամբողջ մարդկությունը կենսատու մի զորություն զգաց ու հասկացավ, որ ոչ հղորները, ոչ իմաստունները, ոչ գեղեցկուհիներն ու մեծահարուստները, որոնց վրա նա երբեմն հույսեր ուներ, բավական չէին սրտի բժշկության և հոգու կենսատվության համար։ Եվ մարգարեներն անգամ չէին կարող կտրել-անցնել կրքերի ու ցավերի այն խորությունները, որտեղ կարող էր հասնել ամենատեսի անվրեպ աչքը և հրաշագործ ձեռքը միայն։ Եվ այդպիսի մեկն էր, որ պիտի գար և արդեն իսկ եկել էր մեզ այցելության, ինքը՝ Գերագույն ճշմարտությունը։

Դ

Գերագույն բա՜ն, ահա մարդկանց կողմից սպասվածը և մարդկության ակնկալիքը, քանզի նրա իսկ ստեղծածն ու նրա արարածն էր մարդը։ Նա միայն քաջ գիտեր մարդու կարևոր պետքերը և հարկավոր դարմանումները, այն, ինչ Իսրայելի մարգարեները աղոտ կերպով հազիվ կարողացան նշմարել ու գուշակել, և հեթանոս իմաստուններն ու արևելքի օրենսգետները ավելի թանձր մշուշի մեջ երազեցին ու իրենց բոլոր իմաստությամբ հանդերձ չկարողացան բացատրել, այլ հաստատեցին միայն, թե պետք էր որ կենդանի մի միտք լինի, բայց թե ինչպիսին, չիմացան։ Մինչև որ «Ճշմարտությունն ի երկնից երևեցավ» ինչպես որ կանխորոշել էր Դավիթը և աճելով երկրից ասաց ինքն իր համար՝ «Ե՛ս եմ ճշմարտությունն»։ Այն ժամանակ լռեցին թե՛ մարգարեները և թե՛ պլատոններ։ Եվ ձկնորս մի պատանյակ, հիացնող համարձակությամբ մոտենալով այն աստվածորեն սքանչելիին, որ որպես մարդ էր ապրում իր նմանների մեջ, գորովանքով փարվեց նրան, հավաստեց այդ և աղաղակեց թե. «Տեսաք և ձեռք մեր շոշափեցին ի վերայ Բանին կենաց» և դեռ է՛լ ավելի բարձրաձայն գոչեց. «Ի սկզբանէ էր Բանն և Բանն էր առ աստված և աստուած էր Բանն... Եւ Բանն մարմին եղեւ և բնակեցաւ ի մեզ»։

Սքանչելի՜ է այս անդորրությունը, որն այժմ զգում եմ ես։ Ինչպե՜ս խաղաղվում են ցանկություններիս հուզումնալից խռովքները, որքա՜ն հեշտագին ցնծում է երբեմնի տագնապած սիրտս։ Ինչպե՜ս հանկարծակի մեղմացար ու թուլացար, ո՜վ հողմդ սաստկագոչ, այլևս ականջս չես կոծում քո խառնաձայն և սրտաբեկ

մռնչյուններով։ Եվ ոչ էլ ծովը, իր սուր սուլոցներից խելագարված, չի ալեկոծվում պատառ-պատառ լինելով՝ մերթ լեռնանալով և մերթ անդունդներ բանալով, և ոչ էլ իր սպիտակափայլ շղարշով պատված՝ պարում է, կաքավում ու թռչկոտում, դեպի իր ամոթիած ափերը նետվելով։ Եվ ոչ էլ դևերից հալածվածի կամ հուսահատվածի նման, այս կողմ կամ այն կողմ են զարկվում եղևնուս կողերը, ոչ էլ հովի շնչից տագնապած մարգագետինների միապաղաղ երեսները թվում է թե կամենում են թողնել իրենց տեղն ու փախչել։ Ու որքա՜ն հեզությամբ համբուրվում են ծիլերն ու ծաղիկները, ոստերն ու տերևները, ծովն ու ավազը, օդն ու գետինը, երկիրը և երկինքը։

Իրենց բոլոր դարաններից և պատսպարաններից դուրս եկած զանազան կենդանիները օդի մեջ և դաշտերի վրա իրենց կյանքի բնատուր հրահանգներին են հետևում։ Ահա թփերի ու տերևների վրա հեզապար ճախրում են նկարաթև թիթեռնիկները, ահա շտապում է փութաջան մեղուն իր անուշարար վաստակն առնելու, ամենուրեք խայտում ու բզզում են միջատները։ Պուրակներում գրտնվող թառերից, անտառներից, քարանձավների խորխորատներից լսվում են ոստերի վրա նստած հրեշտակների ձայները։ Անդորրաբեր նվագների մի քաղցր ներդաշնակություն է հնչում բովանդակ բնության մեջ...

Թող գնա ուրեմն, հեռանա և հանգչի հոգնած և հոգնեցնող ահավոր հողմը «Արի՛ հյուսիսի և ե՛կ հարավ»։ Պապանձվիր և դո՛ւ, անապատի սրտասարսուռ ձայն, որ կանչում ու գոչում էիր, թե՝ «Ամենայն մարմին խոտ է». համայն մարդկությունը արդեն նման է ոտքի տակ կոխան եղած վայրի խոտի, կամ թոթափվող ծաղկի։ Ամենաշատը՝ մի անգամ էլ աղաղակիր, թե ամեն ինչ անցողիկ է և լուռ կաց։

Ահա լսվում է դարերի և մարդկանց կողմից այնքան տենչանքով սպասվածի-ձայնը. ձայն հեզ և հզոր։ Նրա ճշմարտությունը կազմում է երկրի հիմքը, և խաղաղությունը ցածրացնում է սրտի աղմուկները, և մարդկային հոգին նրանով է նշմարում իր կյանքի ճանապարհորդության կրկնակի շավիղները։ Ամենայն ինչ, որ վեր ի վար հուզված ու խռովված էր, հանկարծակի մի այլակերպությամբ հանդարտվում է և խաղաղվում, և այդ բոլորի վրա փայլում է Գերագույն բանականության կնիքը։ Այսուհետև չկա ոչ մեկը, չկա ոչինչ գեղանի և պիտանի կամ հզոր ու հանճարեղ, որն իր վրա

չունենա նրա շնորհների կնիքը։ Բոլոր այն վայրերին, որտեղ չի կպել նրա տիեզերաստեղծ ձեռքը, անհնար է, անկարելի է, որ այնտեղ ճշտություն և ներդաշնակություն լինի։ Ով որ այն աստվածամարդուց չի առել նորոգության շունչը, տակավին հնության կերպարանք ունի և ոչնչանում է ապականության մեջ։ Խեղեղեն էին Նաբուգոդոնոսորի՝ վաթսուն կանգունանոց արձանի հիմքերը և ճիճուներն էին, որոնք ներսից ճարակում էին դարեհյան Բահաղի գեղակերտ արձանը։ Ամեն գույնի տակ կա նրան դալկացնողը, ամեն գեղեցկության տակ՝ տգեղացնողը, ամեն կերտվածքի մեջ իր փչացնողը։ Իրեն միաստվածան աշխարհակալ էր կարծում Օգոստոս Օկտավիանոսը և փակել տվեց պատերազմի նշանը հանդիսացող Յանոսի մեհյանը[14]. մինչդեռ ավելի ընդարձակ էին բացվում Աստղիկի և նրա գարշելի քույրերի ու եղբայրների տաճարի դռները մոլությունների և պղծությունների առջև։

Իզուր էին ճգնում կեսարները քառասուն բյուր լեգիոնների բանակներով, պրետորներով և հյուպատոսներով, պաշտպանել իրենց կայսրությունների ընդարձակածավալ սահմանները։ Իզուր էին ջանում, ասես մի մեծ կավանոթի կանթերից բռնած, շղթայել ու կաշկանդել աշխարհը, որը, լպրծուն գնդակի նման սահելով, փախչում էր նրանց արյունոուշտ ձեռքերից։ Վերջին ճիգերն էին թափում Ավրելիոսները, Տակիտոսները և Դիոկղետիանոսները, իրենց վերջին հռովմեացի զորավարներով և վերջին լատին ու հույն իմաստասերներով. գնալով ավելի էր հեռանում նրանցից թե պետությունը և թե գիտությունը։ Կեսարների ամրակուռ ապարանքները դղրդալով տապալվում են։ Ամենահաղթ Հռոմը և արքայական ժողովուրդը կենաց ու մահվան կռիվ են մղում արևելքի և հյուսիսի վայրագասուն բնակիչների դեմ, որոնք, հարձակվելով կայսրության ճամբարապատ սահմանների վրա, սպրդում են ներս, դեպի երկրի սիրտը և պարտության մատնում նրան. իսկ Գալիլացի ձկնորսները և Տավրիացի խորանակարները գնում և իրենց վրաններն էին խփում նրանց աշխարհամուտ դռների առջև։ Սրանք կործանվում են և հողաթավալ են լինում, իսկ վեր է խոյանում և կանգուն է մընում ձկնորս Պետրոսի երկնագմբեթ տաճարը՝ երկրային կառույցներից վեհագույնն ու մեծագույնը, հավաքելու համար այնտեղ ամեն ազգ ու ցեղ. տաճար, որն ասես աստծու կողմից հյուսված մի ցանց լինի, որսալու համար մարդկանց՝ հավիտենական կյանքի համար։

Ոչ Կյուրոսին և ոչ էլ Կեսարին, ոչ Ալեքսանդրին և ոչ էլ Քրսերքսեսին, այլ միայն Հիսուսին տրվեց երկնքի և երկրի բոլոր իշխանությունները։ Եվ ոչ թե Պյութագորասները, Սոկրատներն ու Արիստոտելները, այլ նա միայն կարողացավ ասել. «Ճշմարտությունն այդ ե՛ս եմ». «Գնացե՛ք այսուհետև, աշակերտեցեք զամենայն հեթանոսս... ուսուցե՛ք նոցա պահել զամենայն՝ զոր ինչ պատվիրեցի ձեզ։ Եվ ահավասիկ ե՛ս ընդ ձեզ եմ զամենայն աւուրս, մինչեւ ի կատարած աշխարհի»։ Եվ ապա. «Երկինք և երկիր անցցեն և բանք իմ ոչ անցանիցեն»։ Ամենևին չեմ զարմանում, որ այսպիսի համարձակ խոսքից հետո, ապշում և պապանձվում են իմաստասերների կաճառները, որ Աթենքները սարսռում են և մուսաները լռելյայն խույս են տալիս և ամպածրար Ոլիմպոսը սարսռելով գետին է տապալվում։ Դպրոցները՝ դպրոցների փոխարեն, դարերը՝ դարերից հետո, ազգերն ազգերից և պետությունները պետություններից հետո, գալիս ու փոփոխվում են շարունակ, երկիրը զանազան ձևափոխություններ է ստանում, այլագունում է երկինքը, և միայն Գերագույն բանականությունն է որ կա ու մընում է անփոփոխ ու անայլայլելի։ Ո՞վ բանական մարդ, դու որ պետք է խորհրդածել և սիրել գիտենաս, արի, տես և սքանչացիր այս գործի ու գործողի վրա։ Եկե՛ք իմաստուններ և իմաստակներ, հավատացյալներ և անհավատներ, քննեցեք և զարմացեք, թե ինչպես, սկսած այն ժամանակվանից, երբ երևաց Հիսուսը, գրեթե երկու հազար տարի է, որ ամեն ինչ խառնվում է ու պտտվում բնության շրջանակի մեջ և Նա է միայն, որ անշարժ է ու անփոփոխ, որպես ամեն ինչի կենտրոնը՝ իր վարդապետությամբ և եկեղեցով։ Ահա տասնևինը դար է, որ մի յոտա անգամ չի պակասել նրա ավետարանից և ոչ էլ գեթ մի օրենք է խախտվել նրա ուխտից. ընդհակառակն, տարի առ տարի ավելի է ծավալվում նրա վարդապետությունը և հասնում է տիեզերքի ծագերը։ Նրա կտակարանները խորտակում են ամբարշտության թումբերը և նահանջաբեկ տեղի են տալիս իմաստասեր կոչվածների սեթևեթ ստությունները։ Անցնում ու գնում են ժամանակներն ու նրանցից ծնված զանազան մտահղացումները և ոչինչ նորահրաշ, որ լինի այս ուսմունքի նման, չեն կարողանում ստեղծել ո՛չ նրանից մեծ, ո՛չ նրան հավասար և ոչ էլ այնպիսին, որ կարողանա նրա հետ համեմատության կշռի վրա լինել, ճիշտ այնպես, ինչպես չի կարող համեմատություն լինել այս եղևնու տարածականության ու բարձրության

և նրա բնին կպած չոր ոստերի միջև։ Դեռ լսվում են, այո, բաղում բռնակալների, իմաստունների և տեսաբանների անունները, որոնք զերծվել են ժամանակի ալիքներից, ինչպես մեծ նավաբեկությունից, բայց այդ ամենն ի՞նչ են այն ՄԵԿԻ հանրաճանաչ անունի մոտ. չէ՞ որ հանուն ՆՐԱ էր, որ «Ծունր կրկնի, երկնաւորաց, երկրաւորաց և սանդարամետականաց»։

Ով որ այս ընդունի, նրա հոգու խորքում առմիշտ կդրոշմվի ՆՐԱ անունը, իսկ անգամ նրանք, ովքեր չեն ընդունում, չեն կարողանում այդ անունն իսպառ ջնջել իրենց հոգուց։ Այդ անունը պաշտում է բարեպաշտը, մերժում է ամբարիշտը, նրա մասին երկբայում է թեթևամիտը, քննության քուրայով անց է կացնում փիլիսոփան, իսկ նա կա ու մնում է ամեն փորձության նկատմամբ անայլայլ, բոլորի ձեռքը մեկնված է առ նա, և նրա ձեռքը՝ դեպի բոլորը։ Նրանք, ովքեր որ չեն ընդունում և չեն հանդուրժում ՆՐԱՆ, նա նրանց էլ է տալիս իր շնորհներից և ոչ իսկ նրանց, ովքեր հրաժարվում են ու հակառակվում, պակասեցնում է իր շնորհները։ Այսպես, ոմանք ճշմարտությամբ և ոմանք էլ ստությամբ նրան դավաճանողներն են, և մեկն օգտվում է, իսկ մյուսը՝ տուժում։ Ծագում է արեգակի նման և առավել քան արեգակը, իր մշտապայծառ լույսով լցնում է բովանդակ տիեզերքը. և ոչ ոք չի կարող հակառակվել նրան, անգամ եթե փակի իր աչքերը։ Ավելի հեշտ է խավարեցնել արեգակի լուսատու աղբյուրը, քան նվազեցնել Հիսուսի շնորհների մի փոքրիկ նշույլը։

Հիմա պիտի հարցնես, հեղհեղուկ սրտով մարդ, թե որտեղի՞ց է Գերագույն Բանին այս զորությունը, կամ նրան ո՞վ տվեց այդ իշխանությունը։ Կամ ինչպե՞ս, ինչի՞ց ելնելով նա և միայն նա է աշխարհիս տնօրենը և մարդկության բախտի բանալին և ոչ թե մի ուրիշը, ոչ իրենից առաջվաններից և ոչ էլ հետագաներից։

Ով որ հավատում է, թե ի սկզբանե նա էր ԲԱՆԸ, նա բնավ չի տարակուսի, թե՝ «Որ ի վերուստն գայ, ի վերոյ է քան զամենայն», թե հրաշալին պետք է հրաշալիքներ գործի, ճշմարիտը պետք է ճշմարտություններ արտաբերի այնպես, ինչպես լույսից լույս է բխում, և կրակից՝ կրակ։ Միայն աստվածն է, որ կարող է աստվածային բաներ անել։ Եվ ի՞նչ կա ավելի աստվածային, քան ապականված մարդու անբիծ էությունը վերահաստատելը։ Նախկին իմաստասերներից և ո՞ր մեկը չհավաստեց, թե ապականված է մարդկության սիրտը, և հանճարներից ո՞ր մեկը չխոստովանեց իր

պարտությունը այն բժշկելու գյուտի մեջ. ո՞ւմն այնքան երկար դարեր սպասելով մնացին նահապետների հոգիներն ու երկյուղած մարդկանց սրտերը. կամ ինչի՞ վրա են հիմնված այս ավելի նոր և զգոն ժամանակների ազգերը, իրենց այսքան անբավ մատյաններով, հուշարձաններով, մշակութային արժեքներով, որոնք շատ ավելի սրբագույն և ազնվագույն են, քան հեթանոսների բոլոր դրպրությունները, և ավելի հզոր են, քան բոլոր սյուներն ու հենարանները, որոնք կոչված են վերանայելու համար անառողջ սրտերն ու մտքերը։ Եթե այս ամենը ոմանց ականջների համար դեռ անհավատալի է թվում, նրանց այդ ականջներին չի՞ հնչում արդյոք մարդկության բնության մշտամռունչ բողոքի ձայնը, որը ողբալով իր երջանկությունից զրկվելը և խոստովանելով իր սրտի զգացումների այլայլումները՝ ինչպես չարի ու բարու մի խառնարան, բարձրշկություն և ագատագրություն է խնդրում իր ինքնաբուխ սխտերից։ Եվ դու ինքդ էլ, ո՛վ մարդ, մի՞թե չես զգում քո ներսում այդ խառնակությունն ու խռովքը։ Որտեղի՞ց է քո այդ վսեմությունը, որով հաճախ հավակնում ես գերմարդկային էակ կարծել քեզ ու ճախրել բարձունքներում և այդ նվաստությունը, որով առավել քան անբանները ճղփում ես անպատշաճ բաների մեջ։ Փառքի և ամոթի այդ ի՞նչ հակընդդեմ մրցապայքար է քո մեջ և մի՞թե կարող ես խաբել քո գիտակցությանը։ Եվ մանավանդ, եթե փոքր ինչ թափանցենք սրտիդ խորքերը, նրա ծալքերի տակ չե՞նք տեսնի ամբողջ մարդկության՝ պես-պես ախտերով վիրավորված և վարակված սիրտը և ամբողջ մարդկությունը չի՞ ճանաչի իր մեջ նաև քեզ, որպես կնոջից ծնված յուրաքանչյուր մեկին, խաղալիք իր կամա և ակամա կրքերի։ Եվ եթե իրոք այդքան խոր եղծվել ու զեղծվել էր մարդկությունը, պետք չէ՞ր, արժանի չէ՞ր, որ նա բժշկվել փափագեր, որը, եթե այդքան երկար ժամանակամիջոցում չհաջողվեց նրան, նշանակում էր, որ նա ինքը չէր կարող դարմանել ու կենդանացնել իրեն, և կարոտ էր վեհագույն մեկի, գերբնական մի էության սատարմանը։ Քանի որ Սոկրատներն ու Պլատոնները, Աբրահամներն ու Մովսեսները չկարողացան հասարակության փրկության հարուցիչները լինել, քանի որ իրենք էլ անարատ ու առանց հոգևոր վերքերի չէին, պետք էր այնուհետև դիմել համայն մարդկության արարիչին։

Բայց տեսեք, չնայած այն բանին, որ դրսից, ուրիշ մի աշխարհից եկավ բժիշկը, բայց բժշկության դեղը նույն իր՝ մարդկու-

թյան բնության միջից հայտնաբերվեց։ Ինչպես որսորդը, ձկան մսից խայծ պատրաստելով, որսում է ձկներին, այնպես էլ աստվածությունը մարդուն վերստին փրկել կարողանալու համար նրա բնությունն օգտագործեց իբրև խայծ Գերագույն Բանականության մեջ և խաչի կարթով որսաց իր գեղեցիկ ձեռակերտը կենցաղի աշխարհակուլ ծովի միջից։

Զարմանալի՜ բան. աստված իջած և խառնված մարդկությանը, և մարդկությունը՝ բարձրացած մշտնջենավոր էության անմատչելի խորքերը։

Դեռ դանդաղո՞ւմ ես խոնարհվել և ընդունել այս ամենը, ո՜վ հպարտ գլուխ, ո՜վ կցկտուր փիլիսոփա, և ծաղրո՞ւմ ես Քրիստոսի՝ այնքան հավաստի և տիեզերագրավ ուսմունքը։ Իսկ քո այդքա՜ն փառաբանված իմաստասիրությունը քանի՞ հոգու կարողացավ ամբողջ սրտով համոզել և մանավանդ՝ քանի՞ հոգու խիղճն ու ներքին խռովքը հանգստացրեց։ Կարծում ես, թե քո այդ ազատամիտ վարդապետություններին հետևողներ ունես. գիտե՞ս արդյոք, թե նրանք ինչպիսի նկարագիր ունեն, որտեղ են քո այդ առաքինագործների հոծ խմբերը, ուր են նրանց գաղափարախոսների ատյանները, որոնք են նրանց գործած սքանչելիքները, քանի հատ են այն մարտիրոսները, որոնք իրենց արյամբ վավերացրեցին այդ ուսմունքը, քանի հոգի են ձեր այդ դավանության գաղափարախոսներն ու ուսուցիչները։ Կարո՞ղ ես ինձ մատնացույց անել, կամ ունե՞ս արդյոք այնպիսիները, որպիսիք դաս առ դաս եկեղեցին քո առջևն է հանում, այսինքն՝ քահանայապետներ, վարդապետներ, ուսուցիչներ, քարոզողներ, նահատակներ ու վկաներ, որոնք իրենց արյունով ու կյանքով նվիրաբերված լինեին ձեր այդ նոր հավատին. նահատակներ, որոնցից ամեն մեկի արարքները կարող են գերազանցել քերթողների կողմից դյուցազներգված հերոսներին։ Իրո՞ք դու կարծում ես, թե այդքան բյուրավոր մարդիկ ու կանայք՝ ամեն հասակի, ամեն դասակարգի և այդքան երկար դարերի ընթացքում, նրանք, որոնք այդպիսի մաքուր վարք ունեին և այդքան ուսում ու գիտություն, մտքով մոլորված էին, անձով ապշության մատնված, որ իրենք իրենց այդպիսի մահվան ու չարչարանքների ենթարկեցին, և քո ու քո նմանե՞րն էին միայն, որոնք խելքով առողջ էին ու լուսամիտ։ Վա՜յ այդ մեծամիտ կատարելությանը, որին հասել եք այդքան հեշտությամբ ու դյուրագյուտ հնարքներով, և կամայական մտածություններով, էլ չեմ

ասում՝ նաև այդքան խառնակ վարքով։ Եվ սակայն, ոչ մի տեղ ես չեմ տեսնում այնպիսի մի բան, որ աչքիս առաջ հաներ ձեր ուխտի միաբանությունն ու հաստատունությունը։ Չկա ոչ մի հիշատակարան ձեր մեծամեծ գործերի հավաստիականության, ոչ մի ակնհայտ նշան ձեր գաղափարների սկզբունքների հաջողության և հաղթության, որը կարողանամ ախոյան կանգնեցնել Գերագույն Մտքի նշանի դեմ. նշան, որն ամենուրեք կանգնած լինելով՝ կա և երևում է համարձակորեն և կանդնեցնում է ու կասեցնում ամեն ինչ։

Ե

Բազում անգամներ նստելով դաշտերի և ծովերի վրա իշխող սարերի բարձրադիր լանջերին, կամ մի որևէ մենավոր բլուրի վրա, ինչպես ահա այժմ, սիրում եմ շուրջս նայելով հիանալ բնության և մարդու հրաշագործությունների վրա։ Այս կամ այն կողմից մեկընդմեջ կանգնած լեռներն ու բարձրավանդակները խափանում են համայնապատկերիս մի մասը, սակայն այն, ինչ մնում է, դարձյալ անսահման է թվում։ Թիկունքիս կողմից բարձրացած աղեղնաձև բլուրների շարքը, ինչպես անբիծ ճակատը պսակող մահիկներ, ի վերջո, ցածրանալով մարում է ընդարձակ հովիտների գոգում, որոնց վրա իր կամարակապ շրջափակն է ձգել բյուրեղյա երկինքը։ Եվ այնտեղ, որտեղ իրար են կցվում երկնակառույց գմբեթն ու երկրագնդի հաղթահատակ տարածքները, նշմարվում է լուսակերտ մի գիծ, անծայրածավալ ծովի մի փոքրիկ մասը, ծովի, որն ավելի ու ավելի է ընդարձակում տեսարանը և վերացնում է միտքը դեպի աչքի համար անհասանելի սահմանները։

Բայց իմ աչքերի համար իբրև սփոփանք, և սրտիս համար որպես հիացում, այս լեռների ու ձորերի միջև զետեղված ձորադաշտակի տարածությունն անգամ շատ է թվում։ Այն մերթ երևում է ինձ որպես մի մեծ և բազմազան սրահ երկնքի կապույտ ձեղունի ներքո, որտեղ սպիտակագեղ և լուսակիզ ամպերի ծրարները, շատրվանների և վարագույրների նման ծածանվելով, վերևից հովանի են անում գյուղերին ու ագարակներին, կամ էլ երևում է կանաչաթուխ կաղամախիների և եղևնիների և պտղասեր ծառերի թանձրացած ծովի նման, որը տարածվում է բազմամարդ քաղաքների մեջ։ Սպիտակ պատերով եկեղեցիների կողքին բարձրացող

երկնասլաց զանգակները ինձ երևում են որպես մի-մի առագաստներ, ամրացված բարձրացված կայմարի վրա, որոնք առաջ են վարում հրաշալիորեն զարդարված նավերի տորմիղները և նրանց համար նավահանգիստ են ծառայում մեծանիստ ավաններն ու աշտարակաղարդ հեռավոր քաղաքները. իսկ նրանց անցած ճանապարհը սպիտակ հետքերով երկար ակոսներ լինի կարծես, նման մայրաքաղաքների լայնարձակ պողոտաներին։ Եվ որքան որ տարվում եմ այդպիսի մտածմունքներով, այնքան ավելի ճշգրիտ եմ համարում երևույթը և ինձ հաճախ թվում է, թե մարդկային այս բոլոր ձեռակերտները, որոնք ցիրուցան սփռված են այս դաշտի երեսին, կամ ամբողջ դաշտն իսկ, իր շինություններով ու տնկիներով, համրաքայլ նավարկելով գնում է դեպի ընդարձակածավալ ծովը, դեպի հեռավոր աշխարհները և անծանոթ եզերքները։

Խորհում եմ նաև այսքան շեն և անշեն վայրերի ընդարձակության վրա սփռված մարդկանց հույզերի և ձեռքերի ու սրտի շարժումների մասին, մարդիկ, որոնք երևում են այժմ առջև և որոնցից մի ծպտուն անգամ չի հասնում ականջիս, որպեսզի գեթ փոքրինչ կարողանամ իմանալ, թե նրանք այնտեղ ինչ հոգսեր ունեն և ինչ են անում։ Եվ չկարողանալով հաղթահարել այս աննշան բանն անգամ (որն ինքնին արդեն մեծ բան է), դեռ շատ ավելի մեծ բաների է ձգտում իմ միտքը, այս լեռնապարերից ու պատվարներից էլ ավելի այն կողմ, լեռներ, որոնք, սահմաններ լինելով գավառների և աշխարհների միջև, ինձնից թաքցնում են ազգերի թաղավորությունները. ծովերից էլ այն կողմ, որի հազիվ մեկ եզրագիծն եմ տեսնում փայլուն ծղոտի նման։ Միտքս ցանկանում է թափանցել բազմաժխոր մայրաքաղաքների սահմաններից էլ այն կողմ, երկրի կենտրոնը, ժողովուրդների զանգվածների մեջ, երկրիս պետությունների ու աշխարհների մեջ, լինեն նրանք խաղաղ թե խռովահույզ այս երկնքի տակ...

Բայց երբ տկարանում է զգայական տեսողությունս, միտքս էլ է տկարանում իր հետաքննող խուզարկությունների մեջ և ի վերջո, նորից եմ վերադառնում այն մերձավոր սահմաններին, որոնք ավելի որոշակի են երևում։ Եվ մինչդեռ բնության և շինությունների այս բոլոր զանազանությունները՝ հերկված ագարակները, բազմամարդ քաղաքներն ու գյուղերը, բլուրների կողքերին ու լեռների լանջերի վրա սփռված հանգրվանատներն ու ամառանոցները, որոնք կարծես քնի լուռ ու մունջ անդորրի մեջ լինեն, կամ մոռացության

գիրկն ընկղմված,— ահա գրավում են սրտիս ու մտքիս ուշադրությունը ամեն կողմ տնկված այն պարզունակ քառաթև նշանները, որոնք ասես հովանի և պահապան լինեն այն ամենին, ինչ որ տեսանելի է և նշմարելի։

Նույնիսկ այստեղ, թիկունքիս կողմից բարձրացող այս սրածայր լեռան կատարին, գոսացած ծառի նման կանգուն մի խաչ է նշմարվում, նույնպես նաև այս քարակարկառ ժայռաշեղջերի ամենաբարձր գագաթին, որտեղ ամենահանդուգն լեռնագնացն անգամ հազիվ կարող է ոտք դնել, կանգնած է նա՝ միակ ձեռակերտը, այնքան ջանքերի և տաժանակիր վերելքների միակ վկան, կոթողված ձյան և սառույցի մեջ, ամպրոպների մրուրի մեջ, որտեղ չի կարող հասնել ոչ սրծիվն անգամ և ոչ էլ անդղը (որովհետև այդտեղ չկան ոչ կենդանության և ոչ էլ բուսականության նշույլներ), և այնտեղ է ահա, որ բարձրանում է Հիսուսի նշանը, ասես կյանքի և մահվան միջնաճանապարհին և միաժամանակ այդ երկուսին էլ հաղորդակից։ Ահավասիկ այս թամբաձև լեռների երկու գագաթներին էլ մեկական մենավոր խաչեր կան. նույնը նշմարում եմ նաև հանդիպակաց լեռնաբլրի վրա, գեղարդի և սպունգակիր եղեգի նշանների հավելվածով հանդերձ. Հիսուսի հիասքանչ տնօրինության նշանները, ինչպես պատմում են ավետարանները։ Քանի՞ անգամ, մահասարսուռ քարակարկառների վրա, որտեղ կարծում էի թե ես եմ առաջին անգամ ոտք դնողը, գտել եմ այդ նույն նշանը, կամ կանգնեցված, կամ քարի վրա քանդակված, չգիտեմ անգամ թե քանի տարիներ ու դարեր առաջ, կամ թե ում ձեռքով և ինչ հիշատակի համար։ Արդյոք մի բազմաչարչար ճամփորդ է այն թողել, ի ընդգծումն այդտեղից իր անցնելուն, կամ իր ընկերոջ հիշատակի՞ համար, որն այդտեղ հասնելով, մահվան է հանդիպել և թաղվել է կամ մոտակա պատշաճավոր մի տեղում, կամ նրա մարմինը այնտեղից վերցնելով՝ բերել են իր հայրենի հողը կամ մերձակա բնակավայրը։

Եվ ի՞նչ են այնտեղ, տաճարի հովանու ներքո ծվարած և անշուք պատով ուրիշ ագարակներից անջատված այդ անհրապույր տարածքում գտնվող և իրար վրա խիտ առ խիտ հավաքված մեծ ու փոքր խաչանշանները, որոնք տեղ են գտել գյուղացիների չբերկած հողամասերի վրա. այն գյուղացիների, որոնք մերձակա դաշտերում աշխատելով, այժմ հանդչում են նրանց կողքին վերջին քնով, փոքր-ինչ հեռու իրենց խրճիթներից, որտեղ առաջին անգամ

բացեցին աչքերը դեպի կյանքի լույսը։ Երեք ապարակներ՝ կյանքի, աշխատանքի և մահվան, իրար կողք-կողքի և երեքն էլ հովանավորված հիսուսական միևնույն նշանով։ Նույնն է նաև շինություններով հարուստ ու բազմաբնակ ոստաններում. ամենամեծ շենքերի գլուխներին և աշտարակների ծայրերին ասես թագ կապած՝ երևում է այդ նշանը, կարծես թե բոլորը ի վերուստ լինի ստացված։ Ուշադիր զննիր շրջակայքդ, և ուրիշ նշաններից շատ ավելի հաճախակի պիտի տեսնես այդ նշանը՝ բնակելի և անբնակ տեղերում, ճանապարհների գլխին ու խաչմերուկներում, սահմանաբաժան քարերի ու աղբյուրների վրա, ագարակներում ու արգելանոցներում, ժողովրդական և անհատական շինությունների վրա։ Եվ ավելի տիրական տեսքով՝ հավատացող մարդկանց բազմության վրա, արքաների թագերի և դշխուհիների ապարոշների վրա, դրոշակների ձողափայտերի գլխին և թանկագին պատվանշանների վրա, իշխանների և սպաների կրծքի վրա, զինվորականների ուսերի երախակալների վրա, օրիորդների գեղալանջ պարանոցների կամարակապ մանյակների և երիտասարդների խրոխտ պարանոցների վրա, անփորձ կույսի կոկորդի, հարսի շղարշի և փեսայի ճարմանդի վրա և անապատաբնակ միայնակյացի մեջքի վրա. նա, որը թողնելով աշխարհն ու այն ամենը ինչ աշխարհինն է, այդ միայն վերցրեց իր հետ՝ Գերագույն Մտքի անհրաժեշտ նշանը, որպես կյանքի համար անսպառ պաշար և երկնագնաց ճանապարհի ցուպ։ Եվ երբ ավարտվի այդ ճանապարհը և մեծի ու փոքրի, լինի դա թագավոր թե ճգնավոր, զգայական ընկալումից անհետանա այս բազմաբաղ աշխարհը, այդ քառաթևն է միայն, որը լուրջ և խաղաղ պիտի հանգչի կյանքի բոլոր հաճույքներից դադրած սրտերի վրա. ապացույց մահվան հանդեպ տարած հաղթության և հանդերձյալ հարության։ Այսքան մեծահանդես, մեծազոր, ամենահաս ու ամենակալ է Գերագույն նշանը. նշան բարձր և խորախորհուրդ, որի ծայրը երկրից երկինք է տարածվում, իսկ բնարմատը կոխում է դժոխքի դռան վրա։ Արևելքից արևմուտք տարածված նրա թևերը ընդգրկում են ամբողջ մարդկությունը՝ գգվելով հավատացյալներին, դեպի իրեն քաշելով անհավատներին, գիտունների համար մի մի զմայլեցուցիչ խորհուրդ հանդիսանալով, անգետների համար՝ քաջալերություն, դայթակղվածների համար՝ փրկություն։ Սա քեզ համար էլ, ո՞վ համառող իմաստակ, որ խելապատակդ ես տանջում. մի անլուծելի առեղծված է հանդիսանում։ Եթե գեթ մեկ ան-

գամ կարողանաս ուղիղ դատել, ապա կհասկանաս թե ինչպես եղավ, որ ոչ հելլենական հանճարը, ոչ լատինական լեգիոնները, ոչ հյուսիսի հրոսակները, ոչ ոսկու կախարդական սարերը և ոչ էլ բռնակալների ահեղասաստ հրամանները չկարողացան անել այն, ինչը կարողացավ և արեց այս մահարոց և ամենաբարդ գործիքը. աշխարհներ տիրեց, նվաճեց վայրագներին ու հեզաբարոներին, բարբարոսներին ու աննշաններին, հույներին ու գոթերին, արամացիներին ու արիացիներին։ Նա չի նմանվում բազմաբյուր բանակներին ու նորասքանչ զինվորականություններին և ոչ այնքան թշնամուն կոտորելով է հաղթում ու տիրում, որքան իր անձը մշտնջենապես դեպի զոհողության մղելով, սրտեր է գերում և սիրո շղթաներով կապելով, տանում է իր հետևից։ Եթե Հիսուսի և նրա հետևորդների գործերը իրավ զարմանալի են, ինձ համար մեծագույնս զարմանալի է նրանց վրա քո չզարմանալը, ով իմաստասեր կոչվածդ։

Դեռ այն ժամանակ, ավետարանի քարոզչության սկզբից, այդ բոլորը գուշակելով հավաստեց նրա մեծագույն քարոզիչ Պողոսը, թե՝ իսկապես այս գործը աշխարհիս իմաստունների աչքին հիմար բան պիտի երևա, որովհետև այսքան մեծ և տիեզերահռչակյալ մի վարդապետություն պետք է որ կամ սարսափելի մոլորություն լինի, կամ էլ անբավ իմաստություն։ Կարելի է դատել և ընտրություն կատարել այդ երկուսի միջև՝ քննելով ավետարանի արդյունքները. դյուրին է տեսնել, թե ինչպիսին էր աշխարհը նրա քարոզչության սկզբին և ինչ եղավ անմիջապես հետո։ Ինչպիսի անարգ կեղտաջրի մեջ գահավիժած՝ թավալում էր մարդու սիրտը և հանկարծ ինչպիսի սրբության նա կարողացավ բարձրանալ։ Եթե իմաստասերը սրանք քննելուց հետո էլ դեռ պիտի համառի դուրս մնալ հիսուսական գավթից, թող նրա համար լինի «ճառ խաչին՝ հիմարություն, այլ փրկելոցս մեզ... աստծու զորություն և աստուծո իմաստություն»։ Այս խոսքերով աշխարհի աչքի առջև զորացան տկարները, և իմաստնացան հիմարները և փոռձեցին ու անցան այնպիսի շավիղներով, որ ոչ հռչակավոր գիտունների աչքն էր նըշմարել և ոչ էլ հանրահռչակ զորավարների ոտքն էր կոխել։ Որքան էլ որ կուտակվեն դարերը, նրանցից և ոչ մեկը, և ոչ էլ անցած գեթ մի տարին չի անցնելու առանց այդ վաղնջական օրերի ուշադիր քննության, որտեղ անջնջելի կերպով դրոշմված են մնում Հիսուսի աշակերտների՝ այդ սակավաթիվ և երկչոտ, կոպտատարազ ու

անտուն մարդկանց հետքերն ու գործերը, որոնց գործերին իրենց մեծությամբ հավասարազորը չկա երկրի վրա։ Նրանք իրենց անձը հեզաբար մահվան տվեցին Գերագույն Բանի ամենահեզ օրենքների համար և մարդկային բազմություններ ու ազգեր շրջեցին իրենց հայրենատուր հնադարյան կարծիքներից ու հավատներից դեպի նոր հավատը և այն՝ ամենևին առանց բռնության, առանց հրապուրանքների ու նենգությունների։ Ինչպես այն տկար և չնչին էակները, որոնց բնախոսը չգիտե որդեր անվանել թե զեռուններ, թե բույս կամ բորբոս, որոնք օվկիանոսի անդունդներից, կետերի բազմության և ամեհի ալիքների խառնիճաղանջի միջից անշփոթ հանդարտությամբ վերև են բարձրանում՝ իրար բախվելով, իրար վրա կուտակվելով ու իրար ժխտելով, մինչև ծովի անայլայլ երեսը և դրանից էլ դեռ ավելի վեր, որպեսզի իրենցով պարսպանման կենդանածին ապառաժներ ձևացնեն, արգելարգիթ խութեր դառնան, և ճեպընթաց նավերի համար խորտակիչներ հանդիսանան։

Հռովմեական ինքնակալության բռնապետական զորությունը կարծեց, թե մեկ հարվածով կարող է արմատախիլ անել նորաստեղծ փիլիսոփայական ուսմունքը, ինչպես այն հողագործը, որը պոկում է իր պարտեզի միջից մոլախոտը։ Եվ չնայած իր ամբողջ ուժին ու տարածած սարսափին, ոչ միայն այդ անել չկարողացավ, այլ ոչ իսկ կարողացավ պաշտպանել հեթանոսության ընդարձակածավալ անդաստանները, որտեղ ամենայն արագությամբ աճում էր երկնավոր մշակի ցանած սերմն ու աստիճանաբար գրավում այգին։ Բովանդակ աշխարհիս հաղթողներն ու ճնշողները իրենց բոլոր զենքերն ու զորությունը, իրենց հին ու նոր մեքենաներն ու քքստրմնելի տանջանքները, որոնց նմանը դեռ ոչ մի ժամանակ չէր երևացել, ուղղեցին քրիստոնյաների անզեն ու անդիմադիր խաղաղաբարո հոտի դեմ։ Հուրն ու սուրը, ձեթն ու ձյութը, արգելապարաններն ու մեխերը, ջլափոկերն ու երկաթը, վերջապես, ամեն տեսակ տարր ու առարկա, դարձան գործիքներ վրեժի, կյանքեր մաշեցնելու ու կտտանքների համար։ Հաղարավորներ ու բյուրավորներ էին ընկնում թագավորների ու բռնակալների հալածանքներից, սակայն նոր ուսմունքը ոչ միայն չէր նվազում, այլ ընդհակառակը, օր օրի վրա աճում էր ու բազմապատկվում. ասես թե թափված արյան ամեն մի շիթը, երկրի ընդերքն ընկած ցորենի հատիկի նման, մեկի փոխարեն երեսուն, հարյուր պտուղ էր աճեցնում և անուշաբույր ծխի նման ծավալվելով, անարգել մտնում էր

շեններն ու քաղաքները, ամայի անապատներն ու աշխարհասասան ապարանքները և նույնիսկ հալածող կայսրերի ոսկեձեղուն պալատները։ Նոր ուսմունքը ամեն պայմաններում և ամեն տեղում յուրացվում ու ուսումնասիրվում էր, ամեն աշխարհամասում նա կանգնեցնում էր Գերագույն Բանականության նշանը, ամեն գահավորակի վրա և տաճարում վերաբազմում էր նպաստքով։ Փլավյանների շրջանատարած ամֆիթատրոնը լվանում էր նահատակների արյունով, Մեկենյան բազմաստվածյա ամենապաշտ մեհյանը փոխում էր միանձյա պաշտամունքի տաճարի, ամենուրեք տարածում էր Գերագույն Բանականությունը։

Հաճելի է ինձ համար այսուհետև էլ սքանչանալ քո ջանադիր քարոզների վրա, ով Պետրոս, հիանալ քո եռանդուն վարդապետություններով, ով Պողոս, զմայլվել քո նորալուր սիրաբանություններով, ով Որդիդ Որոտման. գաղափարախոսներ, որոնց չկարողացան ընդդիմաբանել հին և նոր փիլիսոփաներից և ոչ մեկը։ Եվ եթե եղան մարդիկ, որոնք ծպտուն հանեցին, նրանք էլ շուտով լռեցվեցին քրիստոնեության ջատագովների կողմից։ Հիանում եմ նաև Գերագույն Բանի ու նրա լսարանի մտավոր ծառաների և վարդապետների դասակարգության և դաս առ դաս հաջողության վրա, որն այդպես է տևում ահա արդեն տասնինը դար շարունակ. ահա կենաց ճշմարտության խոսքը գետի նման բխում է անայլայլակ աղբյուրից և առանց պղտորվելու, առանց սպառվելու, անընդհատ հարստանալով վտակներով, առաջ է գնում։ Հիացնում է ինձ նաև նահատակների անթիվ խմբերի տեսիլները՝ ոչ միայն հասուն մանկանց, այլև դեռատի պատանիների, փափկասուն կանանց ու օրիորդների և պարկեշտ կույսերի. նրանք, որոնք սարսափահար էին լինում անգամ սահող արկերից կամ շրշյունով ընկնող տերևից, ինչպե՞ս էին կարողանում աներկյուղ ու վստահ կանգնել խոժոռադեմ դատավորների ատյանի առջև, ըմբիշների մարտահրապարակում, վայրի ցուլերին և առյուծներին դեմ-հանդիման, շիկացած կասկարայի և եռացող կաթսաների վրա, կարողանում էին կաքավել մերկ նեբրանների տակ փռված փշերի ու մեխերի վրա, ասես թե դրանք ծաղիկների ու տերևների հույլեր լինեին։ Նետված լինելով հնոցի մեջ, նրանք ասես ամառանոցի հովոցներում լինեին, խարույկի մեջ այրվելով՝ իրենց մատաղ մատներով կայծակներ էին հավաքում իրենց նազելի գլուխներին պսակ կազմելով, իբրև առհավատչյա այն երկնավոր ու անթառամ պսակին, որը հոգու աչ-

քերով նրանք արդեն շատ մոտ էին տեսնում։ Մեռնելով երկրի վրա, նրանք անմահանում էին երկնքի և երկրի մեջ և հազարավոր կյանքերից շատ ավելի նախամեծար էին համարում իրենց անբիծ կուսությունը։ Ինչպես սրանց նմաններին, այնպես էլ ուրիշներին, թեև չկարողացավ ընկճել արյունախանձ սուրը, այլ նրանք ուրիշ տեսակ անարյուն և ամենօրյա զոհաբերություններով ողջակիզեցին իրենց բովանդակ կյանքը։ Հանդարտիկ վանքերի և մոռացված կուսաստանների մեջ ապաստանելով, զգայարանները մշտնջենավոր մեռելության դատապարտելով, հանապազօրյա ճգնություններով ու հսկումներով, նրանք անբիծ ու անարատ պահեցին իրենց փափկիկ շնորհները։ Երկուսն էլ սխրալի, երկուսն էլ մեծահաղթ. նրանք որոնք արյունով, իբրև վարդերով պճնվեցին, և սրանք, որոնք առանց արյան, ասես ճերմակ շուշաններով սպիտակեցին. գերագույն քաջազունների և հսկաների արժանի մի գործ՝ կատարված տկար և դյուրաբեկ մարմիններով, ի հիացումն հեթանոսների, համոթ իմաստասերների և ի խրախույս առաքինիների։

Արժան է և իրավացի է պատիվներից մեծագույնը ընծայել նրան, որը երկրի վրա կատարվող ամենագերագույն, ամենահրաշալի և ամենափրկիչ գործն է իր վրա հանձն առել. անմահի մեռելությունը և մահկանացուների աներկբա փրկությունը։ Այս հիշատակի առջև մոռացության է դատապարտվում ամեն մի այլ հիշատակ, անհետանում են աշխարհիս բոլոր պեսպես երևույթները. ինչպես օրինակ այս պահին, երբ արեգակը խոնարհվում է լեռների պատվարների հետևը, նվաղում են դիշերվա տեսարանները և, նուրբ մթության նսեմ մի քող աստիճանաբար տարածվելով շուրջս, ծածկում է այնտեղ գտնվող ամեն մի կերպարանք։

Զ

Ես էլ եմ ողջունում քեզ, սուրբ խաչ, այս մենավոր վայրում, այս երեկոյի լռության մեջ, քեզ, որ մայր մտած արեգակի փոխարեն լուսավորում ես մեզ իմանալի լույսով։ Բոլոր հավատացյալների հետ միասին ես էլ եմ երկրպագում քո մեջ պարփակված Գերագույն իմաստասիրությանը. նա, որը քեզ օգտագործեց իբրև զենք, իբրև գաղափարի գավազան, իբրև փրկության գործիք և իբրև այս աշխարհը վարելու ղեկ և թողեց այն իր եկեղեցում որպես հույսի նշան և լույսի լապտեր մեր այս խավար կենցաղում։

Դու, նահատակներին քաջալերողը, վշտացածներին սփոփողը, տառապանքներից ընկճվածներին մխիթարողը, ճշմարտության խորհուրդը փնտրողը, նորահավատ երիտասարդների իրոկումների առարկան, կույսերի պարանոցային մարգարտազարդը, ծերունիների հոգևոր գավազանը, տարիքի բոլոր չափերի համար զորավիգը։ Դու մոլորությունների պարիսպները տապալող բաբան, որ փոշիացրեցիր Արամազդի տաճարները և կործանեցիր Աստղիկի ընծայարանները, որ կործանեցիր ամբարտավանների գահավորակները և բարձրացրեցիր աշխարհիս արհամարհվածներին ու ստորացվածներին։ Միայն դու ես, որ կարողանում ես մարել քենն ու ոխը, սրտի հնոցի սլեսպես ախտերի գարշ եռքը ու այնտեղ, փշերի ու հողակոշտերի վրա, կարողանում ես աճեցնել հեզությունը, ողջախոհությունը, և ընկերահաշտության համբույրը։ Քո շնորհիվ նույն ամոլում ի մի են լծվում ամեհի առյուծն ու հեղահամբույր եզը, կատաղի ինձն ու ուլը, և գայլն ու գառը միևնույն արոտավայրում հանգիստ են առնում։ Քո շնորհիվ են կատարվում գաղափարի անբացատրելի խորհուրդները, դու ես մաքրում ախտերի սկզբնաբները և մարդկանց հրեշտակների կարգն ես դասում, ընտրյալների ճակատին որպես կնիք ես դրվում, հովանավորում ես նրանց կենցաղային փորձություններում, կյանքեր ես ղեկավարում, վտանգներն ես փարատում, կարողանում ես ամոքել մահը և, կտրելով հավիտենականության անդունդները, դափնիներով ու պսակներով պճնված քո մարտիրոսներին տանում-հասցնում ես հավերժի երանական կայանը...

Այնտեղ շուտափույթ կերպով շտապում է հասնել և իմ հոգին, որին այժմ իսկ ապավինել է ամբողջ հոգով։ Իմ կյանքի մայրամուտի այս օրերին, ինձ էլ հիշիր, ով Գերագույն, ինչպես որ հիշել ես առաջին օրը։ Ինձ էլ հիշիր, ով Մեծդ, քո բոլոր հավատացյալների թվում, արքայության մեջ...

Բայց մի՞թե միայն նրանց համար եկար-հայտնվեցիր, ով Ճըշմարտացիդ, որոնք քո ուսմունքի լույսով են ծնվել։ Մի՞թե չկա հույսի և գթառատության և ոչ մի մասնիկ նրանց՞համար, որոնց տակավին դեռ չի հասել քո քաղցրալուր խոսքի ձայնը։ Մի՞թե կորել են հավիտենապես, և կորսվելու են առանց փրկության ապագերի այնքան մեծ քանակները, որոնք քո հայտնվելուց առաջ կամ հետո, ծնվել ու սերվել էին արդեն հիսուն դար։ Ա՜հ, մենք վստահ ենք քո գթասրտությանը, ով Գերագույն, որովհետև եթե նույնիսկ ըստ

քո ասածի՝ մենք մարդիկս որ չար ենք և գիտենք բարի պարգևներ հայթայթել մեր սերունդներին, քանի անգամ ավելի դու, որ բոլորիս հայրն ու պահպանողն ես, չպիտի անտես առնես և նրանց, որոնք գնացին քո այն լույսի ճանապարհով, որը դու վառել էիր նրանց մտքում։ Ժամանակին հայտնվեցիր որպես փրկիչ, բայց փրկելու համար դու ժամանակի պետք չունես։ Մեղքերի թանձրացած խավարը և ծայրածավալ մոլորությունները ճեղքելով, դու որպես մի լույս ծագեցիր աշխարհի վրա, դո՛ւ, որ լույս էիր արևակից ու լույսից էլ առաջ։ Դու ես միակ պատարագն ու պատարագողը, բովանդակ աշխարհի ղոհը և հավիտենական քահանան։ Դու ես ստեղծել մարդուն, ըստ քո բնական պատկերի, և քո ստեղծածին նյութական պատկեր ես հագցրել, որպեսզի բանսարկուից խաբվածին և մահվան դատապարտվածին քո մարդկային տանջանքներով, մահով և աստվածախառն վարքաղծով ազատես մշտնջենավոր կորստից։ Եվ այս հույսի առհավատչյան այլևայլ ապացուցումների ու գուշակությունների միջոցով հայտնելով նահապետներին ու արդարներին, դու եկար, և քո նշանակած ժամին այն իրականացրեցիր։ Այդ հույսով էր, որ հանդիստ առան և սպասողական վիճակում մնացին երկյուղածների հոգիներ, որոնք սկսած աշխարհի սկզբնավորումից, և ոչ միայն Աբրահամի սերունդները այլև բազում հեթանոս ազգեր, անսայթաք գնացին առաջ, բնատուր օրենքի այն լույսի նշույլի հետևից, որն արդեն տպավորվել էր նրանց հոգու մեջ, և որը հիմա, պետք է փրկության մուտքի դուռ լինի քո լույսից զրկվածների ու հեռավորների համար։ Դու ես բոլոր հոգիների միակ հույսը և քո շնորհիվ է փրկվելու նա, որն իր արարիչին է փնտրում։ Միայն դու ես համաշխարհային միջնորդը կյանքի ու մահվան, գոյատևողի ու հանդերձյալի, մարդու և աստծու միջև, քանզի դու ինքդ թե՛ մարդ ես և թե՛ աստված։

Ո՞վ մոտակա և հեռավոր երեկ, ո՞վ վաղ՝ առանց երեկի, որ դեռ նոր ես գալու, ո՞վ երկու հավիտենականությունների միջև ընկած արագընթաց դու այսօր։ Ո՞վ Գերագույն Բանականություն, որ լցրել ես համապարփակ անցյալը, լցնում ես նաև ներկան և լցնելու ես ապագան ու հանդերձյալը. քեզ համար չկա երեկ և վաղ, անցյալ ու գալիք, այլ մշտապես կա միայն ներկան՝ անսկիզբ ու անվախճան։ Ո՞վ հավիտենականության անդունդ, որի մեն-մի շիթն անգամ, ավելի մեծ է, քան ծովերի բոլոր ընդարձակությունները և դարերի շարքը. ո՞վ ժամանակի անվերջություն,

որը չունի ոչ սահման և ոչ ծայր, ոչ հատակ և ոչ առաստաղ, ոչ կետ և ոչ էլ կենտրոն։ Անսահման երեկ և մշտնջենավոր վաղ, որից սարսափում է իմ հոգին, խռովում է մտածողությունս և ես սարսափահար ապավինում եմ ներկային. և դո՜ւք, որ ներկայացնում եք Բանի երեկն ու վաղը, կանգնած եք որպես երկինք հասնող վիթխարի բարձրությամբ այստեղ ու այնտեղ կառուցված հսկայական սյուներ, որոնց արանքից գալիս ու անցնում է ժամանակը՝ հավիտենականությունից դեպի իսկական հավիտենականությունը, ինչպես մեծ ծովերը դեպի մեծ օվկիանոսը։ Եվ ես, որ հիմա այդ սյուների միջև եմ կանգնած, մի պահ տատանվում եմ անձկությամբ, նրանց նման, որոնք ինձնից առաջ են եկել, կամ որոնք ինձ հետ են և կամ որոնք ինձնից հետո են գալու, որպեսզի գնանանցնեն անվախճան հավիտենականության գիրկը։

Ոչինչ կայուն և հաստատուն չկա այս անցավոր աշխարհում, մեր այս երկու կյանքերի խաչմերուկի վրա, այլ կա միայն անհողդողդ մի վեմ, բարձրացած անդունդների վրա. ժամանակից հորձանք առած ամեն մի ալիք բախվում է նրան և փշուր-փշուր դարձած խորտակվում է։ Եվ այդ վեմն էր ինքը՝ Գերագույն Բանականությունը, բազմած իր եկեղեցու գահին, որը նա հաստատել էր երկրի վրա, նման փոքրիկ կղզյակի վրա ալիքներով շրջապատված ձկնորսների տնակին։

Արդ կա՛ Հիսուս Քրիստոսը՝ հավիտենական ճշմարտությունը և բոլոր դարերն ու մարդիկ անցնում են նրա առջևով, նայում է նա ազգերի վրա, որոնք եկել են և նրանց բոլորի վրա դնում է իր նրշանի կնիքը։ Եվ ավազուտ կղզյակի որսորդի նման՝ իր մանրահյուսակ ուռկանով մշտապես ցանցում է մարդկային հոգիները, կյանքի այս խառնակուլտ ալիքների միջից, որտեղ դարան մտած դեռևս շարունակում է դեգերել մարդադավ վիշապը՝ թեպետ վիրավոր և օրհասական, դատապարտված ու արտաքսված աշխարհիս իշխանությունից, որի վրա նա մի ժամանակ բռնացել էր։

Է

Արդ՝ էլ ինչի՞ համար է ձեր խռովքը, ով կենցաղասերներ, որ այդպես կառչել եք նյութին ու աշխարհին. ինչի՞ համար է ձեր այդ հուսակտուր կոծը։ Ինչո՞ւ եք վերներից թռչում, ո՞վ ունայնամիտ իմաստասերներ. ինչի՞ համար եք այդպես տքնում և ըս-

տեղծաբանում, ո՞վ ընչաքաղցներ և մեղկության սիրահարներ. ինչո՞ւ եք հարստահարում, ո՞վ իշխողներ ու բռնակալներ. ինչո՞ւ եք սարսափահար դողդողում ու կասկածամտում, ո՞վ թերահավատներ ու վատասիրտներ։

Զուր է և դատարկամիտ ամեն մի գործ ու տեսություն, արվեստ ու հնարամտություն, գիտություն և օրենք, մտավոր դեգերումներ ու աշխարհիկ հոգսեր, ցանկություններ ու ցանկալիքներ և առ հասարակ ամեն ինչ, որոնք չունեն Գերագույն Բանականության համաձայնություն հոգին, որը չի կշռված նրա կշեռքով և չի նախորոշված նրա օրինաչափություններով։ Բոլոր գիտությունները պետք է փորձվեն նրա ճշմարտության հիման վրա, նրանից պետք է ելնի կյանքի և մահվան վճիռը, իսկ բոլոր հնարամտությունները, ճարտարապետություններն ու մարդկային բռնությունները եթե ի մի գան, եթե ամբողջ երկիրն իրար խառնվի, եթե անդամ հնար լինի, որ երկինքն էլ միաբանի երկրի հետ, դարձյալ չի բավարարի ցույց տալու համար որևէ այլ օրենք, քան ավետարանինը։

Եվ ուրեմն հեռու կաց և մի խանգարիր մեզ, ով ցնորքներով լցված գլուխ, թող բնության գաղտնիքների անել բավիղները և կյանքի պատահարները, մարմնական կրքերը, որոնց մեջ անօգուտ կերպով կամենում ես խելամուտ լինել քեզ տանջելով, թե ինչու է այս այսպես և այն այնպես, ինչ են նշանակում այս ու այն գաղտնիքները, որն է այս թանձր մթության պատճառը, ինչքան չնչին է մեր գիտեցածը և որքան անբավ է մեր չգիտցածը։ Մինչև ե՞րբ պետք է ինքդ քո անձը վատնես մտածականներիդ անելանելի բավիղների մեջ, մինչև ե՞րբ պետք է քո ներսում տագնապի սիրտդ, որն ահա մաշվել է և մոտ է սպառվելուն։ Ամեն շշնջյուն լսում ես և ամեն ձայն նկատի ես ունենում, իսկ ինչո՞ւ չես ունկնդրում քո ներսից եկող հանապազօրյա հարցման ձայնին, թե ինչ է քո կամեցածը, որից երբեք չես գոհանում։ Կարողացիր մի անգամ էլ դու գոռալ. ես ճշմարտությունն եմ կամենում, որպեսզի ճանաչեմ այն և վայելեմ։

Ահավասիկ քեզ շատ մոտ է ճշմարտության ձայնը, ահավասիկ Գերագույնը, որն ասում է. «Ես եմ», և եթե դու ինձ մոտ ես փնտրում ճշմարտությունը, ուրեմն թույլ տուր, որ քեզնից հեռու վանվեն ունայնամիտ մտածությունները։ Ինչո՞ւ համար մշտապես պտտվում ես շուրջը, իսկ կենտրոնին մոտենալ վախենում ես։ Ինչի՞ համար, ով թերահավատ, տարվում ես լսածիդ սին մար-

մաջով և դեգերում ես կրքերիդ խառնաշփոթ աղմուկի ոլորտներում. և ինչպե՞ս ես դու համարձակվում երբևէ երկմտել, թե երկրի վրա կա՞ արդյոք ճշմարտություն։ Մի՞թե հնարավոր է, որ լույսը ծածկվի, կամ չերևա արարչագործությունը. եթե անգամ անհետ կորչեն երկինքն ու երկիրը, ճշմարտությունը չի կարող կորսվել։ Որովհետև ես՝ ճշմարտությունս, ավելի առաջնային եմ, քան Արուսյակը, ես եմ մշտալույս առավոտի պայծառ աստղը։ Ես ի սկզբանե ավելի առաջնային եմ, քան բոլոր սկիզբները և դրանով իսկ՝ մշտապես անսկիզբի հետ էի և եմ, ինչպես լույսը՝ բխած լույսից, և գետը՝ աղբյուրից։ Ես Գերագույն Ճշմարտությունն եմ ու նրա որդին, և ամեն ինչով նրան հավասար և ես ու հայրս նույն գաղափարի կրողներն ենք։ Ամեն ինչ լինում է միայն իմ միջոցով և առանց ինձ ոչինչ չի լինում։ Դարերի և ազգերի համար այն փափագելին, որին հրեան անվանում է Մեսիա, հեթանոսը՝ Միջնորդ, իմաստասերը՝ Բան կամ Գերագույն Բանականություն, այդ ես եմ ահա, որ խոսում եմ ձեզ հետ և որ հնում բազում ձևերով ու բազում փաստարկներով խոսում էի ձեր հայրերի հետ և դարեր անցնելուց հետո ես ինքս մարդ դարձա և արդեն բացահայտորեն խոսեցի աշխարհի հետ։ Քանզի ես եմ էրական ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը։

Ես եմ միայն մարդկանց վերելքի ճանապարհը՝ երկրից դեպի երկինք, ես եմ կենաց վայրի դուռը և եթե մեկն ինձնով ներս մտնի, կգոյատևի առհավետ, կկարողանա ելումուտ անել և ուղեղի կերակուր գտնել։ Չնայած երկրային նվաստության հետևանքով չափավորված լինելով, ես անձուկ դուռ եղա և նեղ ճանապարհ, բայց, այնուամենայնիվ, այս դուռն է միայն, որ տանում է դեպի հավիտենական կյանքը։ Եկե՛ք իմ հետևից առանց երկմտելու, ինչպես հլու ոչխարները՝ իրենց հովվի հետևից, որովհետև ես մի քաջ հովիվ եմ, իսկ քաջ հովիվը իր անձը դնում է իր ոչխարների պաշտպանության համար։ Ես ունեմ նաև ուրիշ ոչխարներ էլ, որոնք այս գավթի մեջ չեն և ես պարտավոր եմ նրանց էլ բերել այստեղ, որպեսզի լսեն իմ ձայնը և դառնանք մեկ հոտ ու մեկ հովիվ։ Իմ ոչխարները լսում են իմ ձայնը, ես ճանաչում եմ նրանց, նրանք գալիս են իմ հետևից և ես նրանց կտամ կյանքի հավիտենականությունը, որպեսզի նրանք չկորչեն հավիտենաբար, որովհետև ով գալիս է առ ինձ, ես նրան չեմ արտաքսում ինձնից։ Ես եմ ճա-

նապարհը, ես եմ դուռը, ես եմ աներկյուղ հովիվը. քննիր, ներս մտիր, շտապիր փութով, ով վարանող միտք։

Ե՛ս եմ ճշմարտությունը, և այն ճշմարիտ լույսը, որը լուսավորում է նոր աշխարհ եկող ամեն մարդու. աշխարհ, որը ծածկված է մահառիթ մեղքերով, որոնք կյանքի վրա խավար են սփռում։ Բայց խավարն ինձ հասու չեղավ, որովհետև նույն այդ աշխարհի լույսը ես ինքս եմ։ Ով որ գալիս է իմ հետևից, նա արդեն չի գնա դեպի խավարը, նա կընկալի կյանքի լույսը։ Իսկ եթե մեկը գիշերով գնա, նա կսայթաքի ու վայր կընկնի, որովհետև իր հետ լույս չունի։ Կեղծուպատիր է մարդկային կյանքի ճանապարհը և շատ կարճ է ապրելու տևողությունը։ Մի որոշ, շատ փոքր ժամանակ դեռ լույսը ձեզ հետ է. գնացե՛ք, քանի դեռ ունեք այդ լույսը, որպեսզի խավարը ձեզ չհասնի, որովհետև ով որ խավարով է գնում, նա չգիտե, թե որտեղ է գնում։ Ես աշխարհին լույս տալու համար եմ եկել, որովհետև ամեն ոք, ով հավատում է ինձ, նա խավարի մեջ չի մնա։ Հանճարների բոլոր ճիգերն ու հնարամտությունները բավական չեն ճշմարտության գեթ մի կրակ վառելու համար, եթե-ի վերուստ կայծ չկա նրանց մեջ նետված։ Նույնիսկ նրանց և մարգարեների օրենքների բոլոր գիտությունները աստղերի նման նվազում են, երբ ծագում է Մեծ բանականության արեգակը, որովհետև օրենքները թեև Մովսեսի ձեռքով տրվեցին ժողովրդին, բայց շնորհքն ու ճշմարտությունը նրա միջոցով եղավ։ Եվ ապա՝ ես արդեն դրա մեջ եմ ծնվել և ինքս եմ հանդիսանում ճշմարտության վկայողը և ով որ իրեն ճշմարտության որդի է համարում, կլսի իմ ձայնը։ Մոտեցե՛ք ինձ, ով մտակույրներ և լույս առեք ինձնից, որպեսզի ամոթահար չմնաք։ Լուսավորվի՛ր, ով ստվերամած սիրտ, ճանաչիր քո վախճանը, տես քո ճանապարհը և գնա այդ ճանապարհով։

Ե՛ս եմ կյանքը. այն կյանքը, որն ի սկզբանե կար և որը գոյություն տվեց ամեն ինչին և որին հաղորդակից արեցի նաև մարդուն, արարչագործելով նրան իմ պատկերիս նման և նրան տալով անմահության շունչը։ Աստված չի ստեղծել մահը, այլ սատանայի արած խաբեությամբ էր, որ այն ծնվեց աշխարհիս մեջ և թագավորեց ամենուրեք՝ Ադամից սկսած մինչև նրա բյուրավոր սերունդները, բայց ես եկա, որպեսզի մարդիկ վերստին անմահություն ունենան։ Ոչ թե ապրեն առաջվա նման բազմապատիկ վտանգներով լի, այլ ավելի ամրապնդվեն հույսով, որ պետք է

վերափոխվեն դեպի երանական աշխարհները, դեպի հոգու իսկական անմահությունը։ Ես չեմ խափանել մարդուն մի անգամ պարտադրված երկրավոր մահը, այլ իր տանջալից հոգնությունների փոխարեն անդորր երեկոյի մի քուն եմ տվել նրան, որպեսզի առավոտյան աչքերը բանա շողակաթի գեղատեսիլ երանության մեջ։ Ես էլ եմ անցել մահվան փորձության միջով. իրապես և ոչ թե աներևույթ։

Ես, որ իմ բնության էությամբ անմահ էի, քո մահկանացու բնության նման մեռա և տապանի մեջ դրվեցի. ես, որ էի և եմ կյանքն ու հարությունը։ Ով որ հավատում է ինձ, կգոյատևի, անգամ եթե մեռնի և նա, որն իր մեջ կենդանություն ունի և հավատում է ինձ, հավիտենապես չպիտի մեռնի։ Ով մարդ, մի սարսափիր այսուհետև մահվանից, քանզի ես արդեն փշրել եմ նրա ժանիքները և նրա կծելը սոսկ մի համբույր տալ է արդարների համար։ Խոնարհիր քո գլուխը իմ՝ արդեն խոնարհված գլխի առջև և այդպես արձակիր վերջին շունչդ։ Մի սարսափիր գերեզմանից, որին դու ամենուրեք հանդիպում ես քո ոտքերի մոտ, քանզի ինձ էլ դրեցին մութ ու խոնավ գուբը, խավարի մեջ և հավիտենապես մնալու համարեցին։ Բայց ես, ցորենի մերկ ու մենակ հատիկի նման, մահվան հողի մեջ իջնելով, վերստին հարություն առա և հարություն տվեցի ինձ հետ միասին ու ինձնից հետո դարերի ընթացքում հասակ առ հասակ ննջեցյալներին։ Եվ այդ ժամանակվանից ահա ես կենդանի եմ, և դուք էլ ինձ հետ կենդանի պիտի լինեք։ Քանզի այս երկիրը թողած հոգին վերադառնում է իրեն արարչագործող Մեծ սկզբի մոտ, հավիտենապես մտնելու համար կենդանության աղբյուրը։

Ե՛ս եմ կյանքը. հավատա ինձ, ով մարմնական կրքերով ապականված հոգի և այսօր իսկ, ինձ հետ միասին կարող ես իմ արքայության մեջ լինել։ Քեզ փոքր ժամանակ է մնացել այս երկրավոր կյանքում պանդխտելու համար, և որպեսզի այդ կարճառոտ ճանապարհի վրա չվտանգվես, չընկնես, ե՛կ, ահա պատրաստել եմ քեզ համար հաց և իմ զորությամբ բխեցրած կենդանարար ջրի մի աղբյուր։ Քանզի անմահություն հրավիրվածներին անմահական կերակուր է վայել և ես ինքս, հրաշալի մի գոյափոխությամբ անքննելի կերակուր տվեցի ձեզ։ «Առեք կերեք այս է մարմինն իմ... հարբեք դրանով բոլորդ էլ, որովհետև դա իմ արյունն է»։ Ես եմ

կենսատու հացը և ով որ առ ինձ է գալիս, նա բնավ չի քաղցածանում և ով որ հավատում է ինձ, նա երբեք չի ծարավում...

Ես եմ երկնքից իջած կենսատու հացը. նա, ով որ ուտի այդ հացից, պետք է ապրի հավիտյան։

Ո՞վ մարդկային հոգի, պատկեր աստծու, պատկեր՝ ոչ թե ներկերի ստվերանկարով տախտակի կամ պատի վրա նկարված, այլ իրական և կենդանի. ինչո՞ւ ես հապաղում։ Շտապիր, աճապարիր և խառնվիր քո նախագաղափարի հետ ինչպես մի գույն՝ նրա նեղկերից, կամ մի ճառագայթ՝ նրա շողերից, կամ մի ճյուղ՝ նրա որդատունկից և առընդմիշտ մնա նրա մոտ։ Որովհետև, ես եմ, առաց նա որթատունկը ճշմարիտ և դուք նրա ճյուղերն եք։ Նա, որը հենված է ինձ վրա և ես՝ որ հենված եմ նրա վրա, նա է, որ առատ պտուղ պիտի տա, քանզի առանց ինձ, դուք ոչինչ անել չեք կարողանա։ Եթե հաստատուն մնաք և ընդունեք իմ խոսքերը, ինչ որ դուք ցանկանաք ու խնդրեք, կստանաք։

Լսո՞ւմ ես այս բոլորը, ով գերագույն ճշմարտությանը, բարուն, գեղեցիկին ու հավիտենականին փափագող հոգի։

Ը

Ո՞վ հրաշալի ու համաստիյուռ հանդարտություն, որ տարածված ես անսահմանության մեջ, որ լցնում ես իմ էությունը և տարածվում ես շուրջս։ Ժամանակի անսահմանությունից պոկված ինչպիսի՜ հիասքանչ վայրկյան... Գիշերը տարածվել է ու բռնել երկինքի ու երկրի միջոցը. գիշեր, որն իր մեջ ոչինչ չունի տխրեցնող ու վշտացնող, այլ մեղմ ու թափանցիկ մի մթություն է ասես, սփռված բնության երեսին, անորոշ ու աղոտ, ինչպես ակունքներով ու մարգարիտներով զարդարված քողը՝ ամոթխած ճակատի վրա։

Այնպե՞ս պայծառորեն են պսպղում աստղերի բույլերը լազուր երկնքի պարզության մեջ, և այնքա՜ն ողորկ ու քնքուշ է թվում նրանց միջև տարածված մանուշակագույն միջոցը։ Չկա այլևս ահավոր հողմը, որն ամբողջ օրվա ընթացքում որոտում էր այս վայրերի վրա և ծանր ու տանջալի խորհրդածություններով տագնապեցնում էր ինձ, այլ կա հովիկն ու զեփյուռը՝ զով ու հանդարտիկ, որոնք սրնգահար պատանիների նման աշխույժ կերպով խայտում են և թրթռում ներդաշնակորեն։ Եվ զարդարուն երկինքի հեզանազ հեղինակն ու դիցուհին, բոլորակերտ և գեղնա-

Հակինթ լուսինը, երկնքի ու ծովի՝ ասես համբուրվելու համար իրար կցված շրթունքների միջից բարձրանում է, հեռավոր հորիզոնների սերմերի վրայից, նորահարսի նազելիությամբ բանալով իր սիրավառ դեմքը, շուրջը լույս սփռելով վառում է աչքերիս լապտերը՝ բնության համատարած հրաշքները տեսնելու, և ինքն էլ, որպես այդ համընդհանուր ներդաշնակության դիցուհին, ղեկավարում է առհասարակ ծովերի, ցամաքների և օդի համանվագ երգերը։ Եվ ասես նոճիակերտ ու կապույտ ակնեղեններով պճնված կառքի նման, թավալեցնելով իր ոսկեզօծ ու խաղացկուն անիվները, դանդաղ բարձրանում է գիշերը։ Եվ ես ինքս էլ, բազմած գիշերվա գահավորակին, ասես թռչում եմ ու հեռանում դեպի տիեզերական անսահմանությունները, հեռու-հեռավոր աշխարհներ, բարու համբավի և սիրո հրավերի հետևից։

Ո՜հ, և ո՞ր հրավերն է ավելի սրտացունց, քան Միակի ձայնը, կամ ի՞նչ համբավ կա ավելի բարի, քան նրա ուսմունքը, որը երկընքի և երկրի պատգամն է։ Թող ուրեմն լռեն բոլոր արտաքին ձայները և հանդարտորեն խոսի միայն Գերագույն Ճշմարտությունը։ Նա է միայն, որ լսում է և իրականացնում, նման այն Մեծին, որը սավառնաթև բարձրացավ Քորեբի լեռան գագաթը, որտեղից տարածվում էր ճշմարտության մեղմ զեփյուռը...

Բազում գիտնականների աշխատություններ են անցել ձեռքիս տակից, և փոքր ի շատե տեղյակ եմ բանաստեղծների գործերին ու փիլիսոփաների պայքարներին։ Բանաստեղծների ու սոփեստների վայելչակարգ գրություններն ու նրբարվեստ խոսքերը ինձ էլ են հիացրել։ Բայց ավելի շատ խոսք ու աղմուկ գտա նրանց մեջ, քան թե իմաստ ու փաստ։ Նրանցից ոմանք որոշ հետք թողեցին իմ մտքում, որպես ունայնության արձագանքներ և դրա հետևանքով էլ հոգուս մեջ հաճախ հանկարծակիորեն, որոշ խոլական խոսքեր են ծնվում։ Իսկ Հիսուսի խոսքերը, որպես օդի հոսանքների անդադար շարժումը կամ կենսատու շունչը ոունգներում, հնչում է հոգուս մեջ՝ խոր ու բարձր, լայն ու երկայն, և շատ ավելի ազդու ու անդիմադրելի, քան աշխարհիս իմաստունների ու գիտունների բոլոր ճառերն ու գյուտերը։ Իհարկե նրանց մեջ կան մտքի փայլատակումներ ու ճաշակ, բայց հոգին ճարակող ու հագեցնող երանական կերակուր ես ուրիշ տեղ չեմ գտնում, բացի Գերագույն Բանի ուսմունքի մեջ։ Եթե աշխարհիս բոլոր մատյաններն ու հուշարձանները հրով ու սրով ջնջվեին հանկարծ, միայն նա բավական էր և է մարդկության

հոգևոր կարիքների և անկորուստ կյանքի փիլիսոփայական բա-
վիղները գտնել կարողանալու համար։ Հոգուս խորքում տպավոր-
ված է Անսկիզբն Անքննելի խոսքը, որը ես հիշում եմ և հիշելուց
երբեք չեմ դադարելու, թե՝ ես եմ ճանապարհը, ճշմարտությունը
և կյանքը, և առաքյալների խոսքը, թե Բացարձակ ճշմարտությունը
կար երեկ և այսօր, նույնը և հավիտյանը։

Արդ՝ այս ամենը գեթ մի որոշ ժամանակ ձեզ հիշեցնելը, երկ-
րավոր պանդխտությանս այս օրերում, ես իմ հոգու պարտքն եմ
համարում. ձեզ, որ ինձ նման պիտի թողնեք այս անցավոր աշ-
խարհի կյանքը, և որ ինչպես ես՝ երևի բազում անգամ ալեկոծվել
ու տանջվել եք մտքի հոգսերից ու ծփանքներից։ Եվ այդ ոչ թե
նրա համար, որ ինձ իբրև թե ավագագույնը համարելով, կամ որևէ
իշխանություն ունեցող հռչակելով, կամենում եմ իմ խոսքերը
ձեզ լսեցնել, կամ էլ որևէ նոր բան ունեմ ասելու, այլ որպես ըն-
կերն՝ իր ընկերոջը և եղբայրը՝ եղբորը, և պանդուխտն՝ իր պան-
դրխտակցին, ձեզ իմ ձեռքն եմ մեկնում և ձեր մեկնած ձեռքն եմ
ընդունում։ Խոսում եմ որպես մտերիմը մտերմի հետ և որպես
վիճակակիցը վիճակակցին, հաղորդում եմ իմ զգացումներն ու
իմացածները։

Կա՞ արդյոք խոսքերիս բարձրագեղ աճյունի ներքո գեթ մեկ
հատիկ բոցավառ կայծ, և կգտնվի՞ արդյոք մեկը, որին պետք լինի
այդ կայծը։ Իսկ մեկ կայծը երբեմն որքա՞ն և որպիսի խարույկ-
ներ է վառում և որպիսի՞ անտառներ կարող է հրդեհել։ Բավական
է ինձ, եթե կարողանամ մտքի գեթ մեկ ճրագ վառել, կամ գոնե
մեկ սրտի մարմրող պատրույգը արծարծել, և երջանիկ կլինեմ,
եթե գոնե մեկ միտք իմ խորհուրդների ներքո հուզվի և շարժվի,
մեկ սիրտ աշխուժանալով բաբախի, և հառաչի գեթ մի հոգի...

❦

Ո՜վ սքանչելի գիշեր, դու ազդիր, ինչպես հիմա ես ազդում
ինձ վրա, ազդիր նաև նրանց, որոնց ուղղում եմ իմ խոսքը. երևա
նրանց էլ քո բոլոր հանդարտությամբ և քո բոլոր շքեղությամբ,
ինչպես ինձ ես երևում այս պահին։

Ահա լուսեղեն լուծ ունեցող քո սայլերը խոնարհվում են դեպի
ծովը, բույլ առ բույլ աստղերը ելնում են լեռան թիկունքի հետևից
և, հեզասահ անցնելով քառաթև նշանի վերևից, մեկ առ մեկ իջ-

նում են այն ճանապարհի վրա, որը անշփոթ, անխոտոր տրված է ի սկզբանե։ Աճապարանքով սրանք ճանապարհ պիտի բանան այն մեծ լուսավորի համար, որը պայծառացնում է ցերեկը և ինձ էլ պիտի ազդարարեն, որ գիշերային ստվերների հետ մեկտեղ թողնեմ և իմ այս միայնարանն ու դառնամ դեպի ընկերներիս խումբը, լծվելու գործի և կենցաղի հետ կապված աշխատանքներին, բայց ոչ ամենևին վայրապար հոգսերին ու վհատեցուցիչ զբաղմունքներին։

Վաղը, նույն այս արեգակի տակ, դարձյալ պիտի բացվի նույն տեսարանը. այնտեղ լուվի քաղաքների աղմուկը, այստեղ՝ անբնակ վայրերի մեղմ շշնջյունը։ Եվ դարձյալ իր շտեմարաններից հարություն առնելով, կոգեկոչվի Եվրոսը՝[15] ջարդուկտոր անելու ծառաստանները, մոնչալու ալիքների մեջ, և փոթորկելու անապատները, բոլորին հասցնելով կենցաղի ընդունայնության աշխարհագույժ ձայնը։ Արդ՝ եթե դու էլ նրան հանդիպես, ով իմ երկրային պանդխտակից անցորդ, այս մենակյաց ծառի մոտ, այս քամու ժամանակ, այս անմարդաձայն միայնության մեջ, կանգնիր, նայիր, հանգիստ առ այստեղ մեկ կամ մի քանի վայրկյան, և դու էլ կրզգաս, կխորհես, կքննես և անհրաժեշտ եզրակացություններ կանես։

Արի, մի տատամսիր, ով իմաստասեր, որ քննելով քո նախնիների և ժամանակակիցների գիտություններն ու փորձը և դրանք խառնելով քո մտացածին հղացումներին, դեռ չես հավանում ուրիշների արածները և ճգնում ես մտքի ու հոգու համար նոր ճանապարհ գտնել. կամ ազատամիտ կոչվածների հետ միասին հիմնում ես կամքի և մտքի համար ավելի հավանական համարվող նոր ուսմունք։ Չէ՞ որ արդեն լսեցիր Բացարձակի խոսքերը. ասա հապա, ուրիշ տեղ հանդիպե՞լ ես այդպիսի վարդապետության, կամ օրենսդիրներից և աղանդապետներից ո՞ր մեկն արդյոք, ունենալով այդքան աղքատ և անպաճույճ վարք, կարողացավ այդպես համարձակ խոսել, թե ինքն է բանականությունը և լույսը, ճանապարհը և ճշմարտությունը, ամբողջ մարդկությանը կյանք ու հարություն տրվողը։ Ուրիշ էլ որտե՞ղ կարող էր լսվել այսպիսի հզոր և իմաստուն խոսք։ Կհամարձակվե՞ս արդյոք որոշ թեթևամիտների կամ կամակորների հետ միասին ասել, թե այդ ամենը խաբեբաների կամ խաբվածների գյուտն է։ Սակայն դու առավել պիտի զարմանաս, որ այնպիսի սինլքոր մարդկանց գրվածքները, ինչպիսիք էին Մատթեոսն ու Հովհաննեսը, մնալով մնում են ու հիացմունքի

դուռ են հանդիսանում գիտնականների ու քննախույզների բազմության սրտի ու մտքի համար և ոչ թե Սոկրատի, Պլատոնի և Քսենոֆոնի խոսքերը. սրանք, մարդկությունից սնված ու դաստիարակված Աթենական գիտություններով ու ուսմունքներով, նրանք՝ ընդամենը ճախճախուտների ձկնորսներ և քաղաքի մաքսավորներ։ Իսկ եթե հավակնես հավասար դասել Գերագույն Ճշմարտության ուսմունքը Բրահմայի ուսմունքի, Զրադաշտի, Մանուի կամ Մուհամմեդի[16] ուսմունքի հետ, նախասկզբում լավ կլշուիր ու չափիր նրանց ուսմունքներն ու նրանց վարքը, նաև նրանց հետևողների գործը, և դու կպատկառես, կամաչես։ Եթե կա քո մեջ ուղիղ սիրտ և անկաշկանդ միտք, ապա շատ չես հապաղի ճանաչելու համար Գերագույնին ավելի վեհ ու վեր, քան սոսկական մարդը։

Եվ դուք էլ, հավիտենական Բանը քննող իմաստասերներ, եկեղեցու քահանաներ և վարդապետներ, գեթ մեկ անգամ քննեցեք ձեր վիճակն ու աստիճանը այս երկրի վրա. երկրի, որտեղ ոչ թե պիտի առաջնորդվեք սուլերակերպ օրենքներով և դեգերեք մտքի առերևույթ տաճարներում, այլ պիտի հանդիսանաք Գերագույն ուսմունքի ճշմարիտ տարածողները և դրա համար պետք է կատարեք ամենահրաշ և ամենազոր պատարագը հանապազօրյա։ Նայեցեք ձեր առջև գտնվող զոհին, թե որքան է հեզ նա և որքան ահեղ, նայեցեք ապա ձեր ձեռներին և ձեր սրտին և տեսեք, թե նրանք որքան են ընկել սրբությունից և հանդարտությունից։ Ձեզ այլևս չեն օգնի ահարոնյան սպասքները, լվացումներն ու պահեցողությունները, այլ այստեղ անհրաժեշտ է սուրբ սիրտ և հոգի խոնարհ, մեռելությամբ կրթված մարմին, Մարիամ կույսի մաքրությունը, երկնավոր հոր կատարելությունը, անհրաժեշտ է օրինակ անսխալական, առաջնորդություն անաչառ, զգուշություն հարաժամ, երկյուղ առ անճիշտ վարդապետությունը և սեր՝ մատուցելու ձեռքերի վրա։

Դուք կերպարանավորում եք Հիսուսին և ոչ միայն նրա պաշտոնյաներն եք, այլև պաշտոնակիցներն ու նրա գործի կատարողները, նրա վարդապետության քարոզողներն ու պարզաբանողները։ Ուրեմն դուք պետք է ունենաք նրա հրակաթ հոգին՝ ակնթարթորեն բորբոքելու համար ունկնդրողներին, որպեսզի կարողանաք նրանց երկրից դեպի երկինք վերացնել։

Ոչ այնքան պետք է սիրելի ու սիրալի հանդիսանաք՝ եթե ան-

գամ սերովբեների թևերով սավառնելով հանդգնեք վերանալ դեպի Գերագույն Բանի խորքերը,— չեմ ասում, թե անմիտ հանդգնությամբ կամ ունայն հետաքրքրասիրությամբ,— որքան որ պետք է ջանաք Հովհաննեսի և Թովմասի նման հեզաբար խոսել և երկյուղածորեն մատուցել բացարձակ վարդապետությունը։ Ոչ այնքան առատաբառ որոտալ և անվերապահ դատաստաններ կարդալ, որքան դյուրամատույց անել առաքյալների և սրբազան հայրերի ավանդությունները։ Ոչ այնքան քրքրել կրոնի պարկեշտ քողը, և մերկանդամ ցույց տալ հավատը, որքան լցնել սրտերը նախահայտ ճշմարտության սիրով և խաղաղեցնել խուճապի մատնված խղճերը։ Երբ աշակերտները խնդրեցին Հիսուսին զորացնել իրենց հավատը, նա բավական համարեց մանանոխի հատիկի չափն անգամ, իսկ սիրո համար՝ անսահմանությունը որպես չափ ցույց տվեց, այսինքն, սրտի և մտքի ամենայն զորությունը մինչև վերջնագիծը։ Բարին սովորեցրեք. բայց խնդրում եմ, որ դուք էլ գնաք և սովորեք, թե ինչ բան է այն, որ՝ «Ողորմություն եմ ցանկանում և ոչ թե զոհ»։ Գովում եմ ձեր վարդապետությունը, բայց միշտ հիշեցնում եմ ձեզ եկեղեցու այն մեծագույն վարդապետի՝ Պողոսի խոսքը, որն ասում էր, թե ամեն մի վարդապետություն և գիտություն և մարգարեություն ի վերջո դատապարտված են խափանման, բայց սերն է միայն, որ անխափան է։ Սերն է օրենքների կատարելությունը, սերը բարձր է ամեն ինչից և բազում անգամ հայտնի է, որ գիտությունը զարգացնում է, իսկ սերը՝ հավիտենապես զարդարում։

Քանի որ դուք ճշմարտության վարդապետներ եք, ուրեմն անշուշտ պետք է իմանաք, որ ոչինչ չեք կարող ոչ ավելացնել այն ամենի վրա, ինչն առ այսօր ընդունել է եկեղեցին և ոչ էլ պակասեցնել. ապա թե ոչ, Պողոսի նզովքների տարափի տակ կընկնեք և նույնիսկ իր՝ Գերագույնի, որը գոյություն ունի երեկ և այսօր, նույնը և հավիտյան։

Այն եռամեծ փիլիսոփան, որն ամբողջ աշխարհի վարդապետն էր, երբեք չբազմեց Մովսեսի աթոռին, այլ նստում էր դալար խոտերի վրա և այդպես էր ուսուցանում։ Ջուներ նա ոչ նրբաքանդակ տաճարներ, ոչ պաղպաջուն հովոցներ, ոչ կառքեր և ոչ երիվարներ, պերճանքի և զարդարանքի ոչ մի նշաններ, ոչ սպասավորների ու փոքրավորների խմբեր և ոչ էլ իշխանական կարգին բնորոշ արտաքին օրենքներ կամ ձևեր։ Այլ նա ինքն էր անում ամեն ինչ և պատվիրում էր, թե ձեր միջի ամենից մեծը թող բոլորի ըս-

պասավորը դառնա, և ապա՝ ես ձեզ օրինակ տվեցի և ինչպես որ ես արեցի, նույնն էլ դուք արեք, այսինքն՝ միմյանց ոտքերը լվացեք և ոչ թե խփեք խեղճերի գլխին։ Ձեզ իշխանություն է տրվել ոչ թե նրա համար, որ դուք անտանելի և ծանր պարտավորությունների բեռներ դնեք ուրիշների վրա, այլ որպեսզի նախ դուք ձեր անձի վրա վերցնեք այն և ապա ուրիշների վրա դնեք նրա քաղցը լուծն ու թեթև բեռը։

Ձեզ գավազան է տրված ոչ թե հյուպատոսության, այլ հովվություն անելու համար, որպեսզի առաջնորդեք Քրիստոսի հոտը դեպի դալարագեղ արոտավայրերն ու հանգստարար ջրերը։ Երկնքի արքայության դռների բանալիներն ունեք այն ավելի լայն բանալու համար և ոչ թե փակելու, քանի որ նա ինքը, այդ բանալիները տվողը, ինքը պիտի գա այդ դռները բանալու և հեշտագնաց ճանապարհը ցույց տալու։ Ձեզ հրաման է տրված արծարծել մտքերի մարմրող պատրույգները այն գիտությունից, որը հագեցած է Գերագույն հեգիկ շնչով։ Որքան վեհագույն եք գահով և որքան բազմաթիվ է ձեզ վստահված հավատացյալ հոտը, այնքան մեծ պատասխանատվություն պիտի պահանջվի ձեզնից։ Հիսուսն է միայն ճանապարհն ու ճշմարտությունը և դա էլ ավանդել է մեզ ցույց տալ, այսինքն՝ նախ գործել ապա ուսուցանել։

Դուք էլ ինձ լսեցեք, ով աշխարհիս մեծամեծներ և վայելչանքի սիրահարներ, դուք, որ ձեր մեջ թաքնված թաքուն գիտակցությամբ իսկ հասկանում եք, որ ոչինչ չունեք և ոչինչ էլ իսկապես չեք կարող ունենալ ավելի, քան մի հետին ստրուկը։ Ձեր բոլոր մեծությունն ու շուքը ընդամենը պաճուճանքներ են և կաշկանդիչ պատրանքներ, որոնցից աղատ են աղքատները։ Ձեր շռայլությունը նման է ձեր գլխավերևում տարածվող հովանուն, որը մի հատիկի չափ անդամ կշիռ չունի և ոչ էլ կարելի է շոշափել։ Արդյո՞ք դուք նման չեք այս վիթխարի և հաստաբուն եղևնուն, որին աճեցրել են երկրի հողն ու երկնքի ցողը և հնարավոր է, որ պահպանեն դեռ երկար դարեր շարունակ։ Բայց եթե մի փայտահատ կամենար, մեկ օրվա, կամ մեկ ժամվա ընթացքում կկարողանար հիմնովին փչացնել այդքան երկար տարիների աշխատանքը, գետնին տապալելով այս հսկայաձև հասակը և ընդմիշտ լռեցնելով անապատի այս շեփորը։

Մարդու ճշմարիտ մեծությունը կայանում է իր ներքին անձը նորոգելու մեջ, որն անելու ճշմարիտ հնարանքները մեզ սովորեց-

թել է Հիսուսը, այն է՝ ատել աշխարհն ու իր սեփական անձը և սիրել ընկերոջը, որպես իր անձը։ Ոչ մի տեղ դեռ չի երևացել այնպիսի հզոր և հնարագետ անձնավորություն, որը կարողանար գերազանցել հասարակական բնավորություններին իր հզորությամբ, խայտալով անցնել ցավելի և երկյուղների միջով, բացազատվել կասկածներից, ազատ լինել մահվան սարսափից։ Նինոսն ու Նաբուգոդոնոսորը,[17] Ալեքսանդր Մակեդոնացին և Լենկ-Թիմուրը, որոնցից զարհուրում էր անգամ ամբողջ աշխարհը, այսօր մի փոքրիկ մանուկի չափ անգամ վախ չեն պատճառում. թե մեծերը և թե փոքրերը, միօրինակ խաղալիք են մահվան ձեռքին, եթե չասեմ նաև բախտի։

«Բոլոր գետերը չեն կարող ծովը լցնել» և ոչ էլ տենչանքները՝ սիրտը։ Կարելի է կտրել-անցնել ամբողջ վիթխարի օվկիանոսը և միայն մի փոքրիկ խողովակ թրջել, և ոչ նույնիսկ լցնել։ Անանցական է սիրտը և անցանելի բաներով չի հագենում, չի հանդարտվում։ Ձեր գանձը, ով ընչասերներ, երկնքի մեջ ժողովեցեք, որովհետև այնտեղ, որտեղ ձեր հարստությունն է, այնտեղ է գտնվում նաև ձեր սիրտը։ Իմացեք և դուք էլ, ով բռնակալներ, որ ամենևին էլ մեծ չի կոչվի նա, ով կկարողանա սանձել տիեզերքը, այլ նա, ով իր անձը կկարողանա դնել Հիսուսի ճշմարտության լծի ներքո։ Փորձեցեք այդ լուծը, և դուք կգտնեք այն, ինչ փնտրում եք. հանգիստը։

Ձեզ էլ եմ կարդում այն հրավերը, ովքեր, թոթափելով իրենց վրայից հոգսերի և մտածությունների ծանրությունը, սիրում են հաճույքների լողին հանձնել իրենց սիրտը, երերկոտ ալիքների վրա և նոսր օդի մեջ, անձկանոք գիմելով դեպի հեշտալին ու գեղանին։ Ձեր սրտի ազդումները չէ՞ որ գալիս են նաև ձեր հոգուց, որը ոչ միայն տենչում է բարին, այլև սիրում է գեղեցիկը։ Բայց գուցե դուք մոռանում եք այն հանգամանքը, որ չկա կատարյալ գեղեցկություն և բարություն, որը չլինի ճշմարիտ, քանզի դա է միայն մնայունը։ Այն, ինչ մնայուն չէ՝ անցողիկի տառապանքն ունի իր մեջ և հանդիսանում է կարծեցյալ վայելքի ապականիչը։

Արարածների մեջ ի՞նչ կա ավելի գեղեցիկ, քան մարդը և որի՞ գեղեցկությունն է այդքան դյուրությամբ եղծվում, քան մարդունը։ Մի վայրկյան համբերիր և դու, ով գեղատեսիլ օրիորդ, և ինքդ քեզ մի թաքցնիր քեզնից։ Որովհետև քեզ այնքան էլ ճիշտ ցույց չի տալիս քո հայելին, որի մեջ դու նայում ես, որքան ցույց է տալիս հոգուդ

ներքին հայելին՝ գիտակցությունը, թե ինչ ես, և ինչ պիտի լինես։ Կանգ առ, մի սարսափիր, ով Գերագույնի կնիքով կնքված ճակատ, մի հավերժահարս կամ երկնաստեղծ դիցուհի չես, այլ հողից մարմին առած մի կին։ Նույն այդ հողից են սնվում և վարդն իր փշերով և շուշանն իր դժնիկով և վաղ թե ուշ նույն հողին էլ վերադառնալու են։ Հարցրու ինքդ քեզ, թե ինչու ես այդքան հոգս ու խրնամք տածում դեմքիդ գեղեցկության նկատմամբ, չէ՞ որ եղծում ես քո բնատուր շնորհը այդ մուրացածո բաներով։ Եթե դիմափոշու կամ ակնաներկի կարիք ունես, ուրեմն դու գեղեցկություն գնող ես և ոչ թե այն ունեցող։ Իսկ եթե այն ունես ի բնե, ապա ինչո՞ւ ես անտեղի կերպով այդպես հետևում շպարով գեղեցկանալու այդ վաղաթառամ արվեստին։ Դու էլ ես արդեն զգում, որ այդ վաղանցիկ շնորհը երկար ժամանակ չի մնալու դեմքիդ վրա, այլ հնացած պատկերի ներկի նման պիտի թափվի-գնա կամ մի անգամից, կամ էլ փոքր առ փոքր։ Եվ այն դալար ծաղկի նման, որին առավոտյան կապում ես գլխարկիդ վրա և երեկոյան թառամելու պատճառով մի կողմ ես նետում, դու էլ ծաղկանց աշխարհի մեջ ազնվագույնդ, մի երեկո պիտի թառամես, և այն ժամանակ ո՞վ պիտի կարողանա նայել քո դեմքին...

Ուշիմ եղիր, օրիորդ, և պարկեշտությանդ գանձը մի վատնիր արվեստական և սնոտի գգվանքներին։ Եթե օրենքով լծակից ես քո ամուսնուն, տես, որ ուղիղ տանես կյանքի լուծը։ Հիշիր այն փափկասուն կույսերին, որոնք լուսավառված էին հավատի լապտերով և զարդարված էին անարատության պատմուճանով, որպեսզի երբ հնչի նրա գալստյան ձայնը, նրա, որ ասաց, ես եմ փեսան, դու էլ կարողանաս ընդառաջ ելնել, անթառամ օթևանի հանգրստարանը մտնել կարողանալու համար։

Եվ դու էլ, ով երիտասարդ, զարդ և պարծանք մարդկության, որ ըստ Սողոմոնի ասածի՝ ուրախ ես քո երիտասարդության համար և սիրում ես զվարճանալ քո ծաղիկ հասակով ու սրտով, դու էլ հիշիր, որ երիտասարդությունն անցավոր է և քեզ էլ կգան-կհասնեն տարիներ, որոնց համար պիտի ասես, թե ես դրանց չէի ըսպասում։ Ո՜հ, պիտի քանդվի նաև քո արծաթագործ լարը, պիտի խորտակվեն քո ոսկեհուռ մանյակները, պիտի փոշիանա և քո մարմնի այդ կավեղեն սափորը։ Հողը նորից հող պիտի դառնա և հոգին վերստին պիտի գնա առ Բարձրյալը, որը և այն տվել էր։

Երբեք քեզ չի՞ պատահել, որ անցնես այն ագարակի մոտով,

որը լի է մռայլատես և վայրի խոտերով։ Եվ ո՞վ է, որ հեռվից կամ մոտիկից չի անցել գյուղական եկեղեցիների դռան առջևից կամ բազմամարդ քաղաքների արվարձանների կողքից, որտեղ ոչ այնքան երկնաճոճ նոճիներն ու առ երկինք ձգված ուռենիներն են երևում, որքան խիտ դասավորված և երեք ճյուղամասերից բաղկացած անպաճույճ և անսաղարթ փայտերը։ Դրանք գերեզմանների խաչերն են, որոնցից սարսուռ է զգում վատամարդիների սիրտը և ներքին խրախույս՝ առաքինիների հոգիները։ Դրանք բոլոր տեսակի մատյաններից ավելի են լցված իմաստների պրակներով, որոնց ամեն մի տողը, այբուբենի ինչ տառով էլ որ սկսվի, միևնույն է, վերջանալու է Ո-ով։ Մարդկային ամեն հասակներ և վիճակներ կան այնտեղ պարտակված։

Եվ քանի՞ դեռաբողբոջ ծաղիկներ, արագ արագ թառամելով, իրենց հանգիստն են գտնում այնտեղ, որքա՞ն ակնահաճո և սքրտառուչ գեղեցկություններ. որքա՞ն փափուկ մարմիններ, որոնք գգվում և փայփայվում էին տարփածուների գրկում, այնտեղ ընկած են գարշահոտ։ Քանի՞ դեմքեր, որոնց մեկ անդամվա երևույթը ավելի արագորեն էր տպավորվում սրտում, քան թե լուսանկարի ժապավենի վրա, այնտեղ բոլորովին եղծվել են և աղավաղվել...

Ո՜հ, ոչ թե մեր անցողիկ մարմնին ու արյանը, այլ սրտին ու հոգուն է, որոնց անմեկին կերպով հարում է ճշմարիտ գեղեցկությունը։ Գերեզմանների արտաքին կերպարանքը խնամքով խաղաղեցնում է Գերագույնի նշանը. մինչև որ մյուս անգամ, իր վերջստին զանգահարությամբ հարություն տա տարրալույծ ու տարանջատ նյութերին՝ նյութական պատկերին աննյութը խառնելով, և նրանց բոլորին բաղձալի անմահությունը շնորհի։ Ահա թե ինչու մենք վախենում ենք և հուզվում, երբ անցնում ենք գերեզմանների կողքից, մանավանդ՝ երբ տեսնում ենք մատաղաշունչ մանուկի շիրիմը կամ ծաղկահասակ օրիորդի դամբանը, որոնք կորզված են իրենց ձյունափրփուր պարզությունից կամ հափշտակված հարսանյաց առագաստից, ինչքան որ դառնորեն ցույց են տալիս երկրավոր ակնկալությունների ունայնությունը, այնքան էլ պնդապես հաստատում են երկնավոր հույսը։

Որքա՞ն թշվառ պիտի լիներ տառապյալ ծնողների և սիրելիների վիճակը, եթե չլիներ վերակենդանության հույսը առաքինիների և անմեղների համար։ Այո, այո, նրանց համար, որոնք ապրեցին

և ննջեցին Քրիստոսի հետ և նրա հետ էլ պիտի զարթնեն. նրա հետ, որ ասաց. «Ես եմ հարությունը և կյանքը»։

Արդ՝ քեզ են ուղղված իմ խոսքերը, ով Գերագույն Բանին հավատացող, որ երդվել ես ապրել ու մեռնել նրա հավատի ներքո, ով էլ որ լինես դու, քրիստոնյա քույր կամ եղբայր, հիշիր, որ քո կյանքի մեջ մի օր էլ դու պիտի նստես այսպես մենավոր, պիտի խորհես այն օրերի մասին, որոնք չեն անցնում և առ որը կյանքիդ տարիները աստիճանաբար թավալգլոր տալով՝ քեզ էլ են մոտեցնում ու հասցնում այնպես, ինչպես քեզնից առաջ ու հետո եղած ամեն մի մարդու։ Հիշիր ուրեմն, ով իմ անծանոթ հոգեկից, որ հավատը առանց գործի մեռած է։ Հիշիր այս, քանզի ինչ որ տեսնում ու զգում ես, անցողիկ է, ինչպես որ անցել ու գնացել են քո նախնիների համար։ Ամենայն բան անցողիկ է, և միայն քո արած բարին, և միայն հանդերձյալ կյանքի հույսն է, որ մնայուն է և դրանք են, որ քեզ պիտի փրկեն երկրային աղետներից և կենցաղային գայթակղություններից։ Բարիքն ու հույսը երկու թևերով քեզ պիտի թռցնեն այն աշխարհը, ուր ոչ հրապուրանք կա, ոչ դավադրության որոգայթ և ոչ էլ մեղքի առիթ։ Այնտեղ մահ էլ չկա, ոչ սուգ կա և ոչ աղաղակ, ոչ ցավեր և ոչ էլ չարչարանք։ Մշտապես հիշիր, թե դու բնության մեջ նոր արարած չես և ոչ էլ այս աշխարհը սոսկ քեզ համար է արարչագործված, այլ եկող և գնացող յուրաքանչյուր մարդու նման, դու էլ ես տարված նույն այդ կրքերով ու տկարություններով։ Քեզնից առաջ շատերն են եղել և քեզնից հետո էլ դեռ շատերն են գալու, չնայած այն բանին, որ բոլորի համար միանման չի լինելու վերջը և հավիտենականությունը։ Քանզի չնայած այն բանին, որ առաքյալներից բոլորն էն ննջելու, բայց բոլորը չի, որ հարություն են առնելու, այն երանելիան հարությունը։

Նույնիսկ ինքը՝ Եռամեծը, որն այնպես քաղցրաբարբառ խոսում էր մարդկանցից ոմանց հետ, նրանց, ըստ իրենց կատարած գործի, ցույց տվեց իր աջակողմյան ոչխարների հոտի մեջ դասվելը և մյուսներին, իր ձախակողմյան այծերի հոտի մեջ տեղ ունենալը։ Ոմանց թռչել-երթալը առ հավիտենական կյանքը և ոմանց էլ,— ծանր է արդարև այս ինձ ասելը, բայց ես չեմ այդ ասողը,— հավիտենական տանջանքների մեջ երթալը...

Բայց դու մի՛ զարհուրիր, մի՛ քրթմնջա հավիտենական տանջանքների մասին լսելով։ Դու ի՞նչ գործ ունես չարության հեր,

երբ մշտապես բարին ես արարում։ Հետևի՛ր կյանքի իմաստուն խորհրդին, այսինքն՝ ավելի լավ է փրկության հույսը, քան թե կորստյան կասկածը։ Հիսուսն ինքը իր համապարփակ էությամբ դրեց կյանքի և հարության գրավականը և գեհենի սպառնալիքները և մահվան արհավիրքները, և ոչ թե մարդկանց կորստյան մատնելու համար, այլ նրանց զգուշության հրավիրելու։

Սթափվիր ուրեմն, ով անձն հավատացյալ, մնա քո այն բարձր աստիճանի վրա, որտեղ դրել է քեզ քո բանականությունը. եղիր այնպես, ինչպիսին քո կոչումն է և երևա որպես քրիստոնյա։ Բարձրագույն հոգով ծնվեցիր ավազանից՝ մնա նաև նրա սրբությամբ։

Մնում է քեզ մյուս ծնունդը միայն, ծնունդ մահով և երկունքով, երբ կդրվես դու դատգաղի օրորոցի մեջ ու կխոնարհվես դեպի գերեզմանի քնարանը, երբ կհասնի կյանքիդ շաբաթ երեկոն և կփութաս արթնանալ, երբ բացվի քո մեծ կիրակիի արշալույսը։ Քաջալերվիր, ո՜վ Գերագույն Բանականության կնիքով նշված հոգի. մեկ ակնթարթ է միայն այս կյանքն իր բոլոր ունայնություններով՝ թե վշտալի և թե ուրախաբեր երևույթներով հանդերձ, բայց անբավ է հանդերձյալը։ Փոքրածավալ է սրտիդ տարողությունը, բայց թող դա էլ քեզ բավարար լինի այս աշխարհում, որտեղից միևնույն է ոչինչ չես կարողանալու տանել հանդերձյալը, բացի քո հոգու կամքից։ Եվ եթե կարելի էլ լիներ ինչ-որ բաներ վաստակել ու պահել, դրանից ի՞նչ օգուտ կլիներ մարդուն, եթե անգամ տիրացած լիներ ամբողջ աշխարհին, բայց կորցրածլիներ իր անձը։ Ապրի՛ր որքան որ քեզ կյանք է տրված, բայց անհեթեթ բաների վրա քեզ մի՛ վատնիր։ Իմացի՛ր, ինչ որ ասում եմ. վատն այն չէ, որ դու պարապում ես կյանքի համար անհրաժեշտ պետքերով, այլ այն, որ խոլաբար փարվում ես մեղկ կենցաղավարությանն ու չես զբաղվում հոգին հարստացնող հոգսերով, քանի որ ֆիզիկապես ապրելու և անձը պահպանելու համար շատ քիչ բան է հարկավոր։ Ընտրիր Մարիամի հետ միասին նրա բաժինը՝ հոգուդ փրկության հոգսը, որը ոչ ոք չի կարող քեզնից հեռացնել և թող գարշ աշխարհիկը այն սիրողներին։ Եկ, մոտեցիր ուրեմն, գիր քո բազմահոգս ճակատն ու ալեկոծ սիրտը Գերագույնի ուսմունքի արտահայտությունը հանդիսացող այս նշանի վրա, փակիր աչքերդ օտարոտի ու անօգուտ հաճույքների նկատմամբ և պիտի կարողանաս գտնել այն հանգիստը, որին փոխարինող ոչինչ չկա...

Բայց կրճատվելով, ահավասիկ ամփոփվում է գիշերը իր բոլոր աստղաճամուկ զարդարանքներով և աստիճանաբար տարածվում է բեհեզ հագած արշալույսը։ Արդեն տեսնվում է արեգակը, որն արծաթե ճարմանդի նման երկնքի սրբամաքուր կրծքի վրա իրար է հանգուցում գիշերն ու ցերեկը։ Ցողերի մարգարտափայլ շիթերը փայլփլում են ճյուղերի ծայրերին և, շարաճճիաբար վայր սահելով, թրջում են իմ հագուստները։ Հեռաստաններից արդեն լսվում են թռչունների ճռվողյունները, և զովագին զեփյուռը, ավելի ու ավելի ուժ առնելով, երեկվա մահաշունչ հոգմի վերստին անդրադարձն է ազդարարում։

Ահա արևելքից շառագունում են ամպերը, և հանգարտաբարո մի առավոտ, ինչպես աստվածային տեսանելի մի շնորհ, տարածվում է լեռների ու դաշտերի վրա՝ անհունորեն գեղեցիկ, անհունորեն պայծառ։ Շուտով պիտի հանդես գա օրվա իշխանն ու թագավորը՝ հալարերանգ արևը, աշխարհին մի նոր օր էլ բերելու, մահկանացու կյանքի համար ժամանակի ուրիշ մի չափանիշ էլ ավելացնելու. ինչպես երեկ, առաջին օրը և ավելի առաջ ու ճանապարհ պիտի բանա գալիք վաղվա համար։ Եվ ի՞նչ փույթ մեզ համար երեկն ու վաղը, եթե մեզ գործելու համար միայն այսօրն է տրված։ Երեկը գնացողների համար է, վաղը՝ եկողների, իսկ մենք պետք է պինդ բռնենք այսօրվանից, աշխատելու և պատրաստելու համար մշտընջենավոր առավոտվա օրապարենը, հավերժական սիրո գործերը։ Առավոտն առավոտին կհաջորդի, և երեկոն՝ երեկոյին ու պիտի գա կենաց վաղորդայնը. իսկ ես, երեկն ու անցյալ օրը իրար խառնած, քիչ ժամանակ հետո արդեն գնացողների թվում պիտի լինեմ...

Ողջ եղիր և դու էլ, ով իմ պանդխտակից անցորդ եղբայր, որ քո այսօրվա վիճակում պիտի գաս ինձ նման մտորելու միայնակության այս հովանու ներքո, որտեղից ես արդեն հեռանում եմ, ուրիշ մի մենարան գնալու համար։ Որովհետև աշխարհն ինձ համար այսուհետև միայնություն է միայն և անապատ ահավոր։ Իմ սրտի ամբողջ լիությունը, ինչպես նաև երկնքի ու երկրի բովանդակությունը միայն նա է, որն ասաց, թե ինքն է ճանապարհն ու ճշմարտությունը, հարությունն ու կյանքը, բանականությունն ու լույսը, նույն ինքը՝ Բարձրագույն Մտածողությունն ու Գերագույն Բանականությունը, երեկ և այսօր, նույնը և հավիտյանս։

ԵՐԳԱԿ ՆԵՐՍԻՍՅԱՆՔ

Նո՞ր դար, կամ նախադուռն դարամտի (1900 թ.), արդեն որքան շշուկք, շփոթք ձայնից, գուշակությունք երկդիմիք, ավետիք և կսկիծք, հույսք և տարակույսք։ Եվ ո՞ր ատեն, ո՞ր տարի չեն լսվիր այսպիսիք, ո՞ր տարեմտին մարդկան բազմության սրտեր պեսպես տրոփմամբ չեն թնդար, ևս առավել՝ ավելի կամ պակաս մտածելով ի մուտս նոր դարու։ Թեև հազար լրագիրք ուզեն ծանուցանել այս առթիվ՝ այլևայլ աշխարհաց մեջ ըսված և լսված խաժամուժ համբավները, եղողը և ըլլալիքը չեն բավական։ Եվ ո՞ր գլուխ կրնար բովանդակել այնքան խառնիխուռն աղաղակները կամ փնտրել և ընտրել լրոց մեջ զնորալուրը։ Ոչ այնքան կամավոր ընտրությունն, որքան դիպվածականն է, որ շատ հեղ շատերու վրա ազդեցություն կամ տխրություն կունենա։ Եթե ոչ սրտերնին, կուհափշտակե մտքերնին և ի միջի այնքան ձայնից և համբավուց այն կըլլա հզորագույնն։

Այսպիսի դիպաց մեջ ի դարամտիս՝ կարծեմ թե բարեկիրթ ազգաց և ընկերությանց մեջ ի ներկայիս, երկու գլխավոր և այլակերպ շշուկք կամ համբավք հնչեն։ Մին՝ կատարյալ ԱՇԽԱՐՀԱԿԱՆ, ինչ որ սովորաբար կնշանակե բառս աշխարհ կամ աշխարհային, խնդական գուցե և խեթական։ Մյուսն կրնա ըսվիլ և իսկապես՝ ԳԵՐԱՇԽԱՐՀԻԿ։ Շատերն անշուշտ կոահեցին, որ մին այն է՝ մեծ աշխարհայնության կարապետ ֆռանկաց պատրաստությունն, ի հիշատակ քսաներորդ դարամտի քրիստոնեից, գերազանցորեն ԱՇԽԱՐՀԱՀԱՆԴԵՍ մի ներկայացնելու, իրենց մըշտաշառաչ մայրաքաղաքին մեջ։ Մյուսն ալ՝ գուշակեցին, որ դարավոր ՀՈԲԵԼՅԱՆ մի է, զոր գլուխ և քահանայապետն քրիստոնեից հրատարակեց ամենայն հպատակ հավատացելոց։ Այս երկու համբավյալ ըլլալիքն ի՞նչ են. գրեթե հասարակաց ծանոթ է, ժամանակն այլ պիտի ցուցնե եղածը և ավանդե հաջորդաց։ Ով որ փափագի հաղորդիլ այս աշխարհային և գերաշխարհիկ հանդիսից՝ գիտե իր ընելիքը և ոչ կամք մեր է, և ոչ նպատակ ասոնց վրա խոսելու։

Գրվածիս վերնագիրը կարդացողն պիտի զարմանա այսքան առաջաբանիս վրա և իրավամբ մակաբերե, թե անշուշտ գրողդ՝ այդ երկու մեծագոչ համբավներեն զատ, ուրիշ մ՝ այլ լսած պիտի ըլլա,

և իր վրա կերպով մի ավելի ազդած և դեռ այն ազդեցության ներքև ըլլա։ Այո՛, այո...

Եվ ո՞ր զգայուն սիրտ ունեցող հայ չի լսեր այդ տարիներն ի վեր հնչածը, այն անլուռ և, սոսկալով ըսեմ, անլռելի Նարեկյան ձայնն «Հառաչանաց հեծութեան...»[2], այն հայկական խփված բերանե, կերկերյալ կոկորդե, հեղձամղձուկ սրտե և հոգիե բխած աղերսը, հեկեկանքը, լացը, գոչումը, բողոքը, որ երկրիս չորս ծայրերուն սփռեցան և անոր խուլ արձագանքներով չհանգչած՝ նվաղյալ հույսով դեռ զերկինք թնդացնեն։

Այդ հանդերձյալ աշքիսաբուկ աշխարհահանդեսն իր բոլոր հանգամանոք և շքեղությամբ ի՞նչ պիտի արժե սրտախոց հայու մի առջև... այնքան երգոց և երաժշտաց որոտաձայն նվագք ի՞նչ պիտի զոյնն մեկ այրիացյալ նորահարսին, մեկ որդեկորույս մոր, մեկ ծնողազուրկ որբուկի, մեկ կողոպտյալ կույսի մի հեծեծանաց քով... Ո՞ր հայկական զբոսասեր աչք կրնա անհաղորեն զբոսնուլ այն անհամար և մեկ-մեկ դեղեցիկ տեսարանաց մեջ, երբ հիշե իր հարազատ քույրերու՝ աննման անգին զույգ սևորակ գոհարաց բրոնաբար մարմրիլը, մթննալը և շունչին հետ անդարձորեն անցնիլը... Ո՜վ անգութ գրչիս. ինչպե՞ս կրնաս քու ազգիդ, քու երկրիդ կրսկրծալի պատահարները նորոգել հիշողությանց մեջ... Ի՞նչ նորոգել, եթե չեն մոռացված, և ե՞րբ պիտի մոռցվին և այդ երբին վերջն ե՞րբ է։ Թող յուրաքանչյուր ազգայնո զայսպիսիս, եթե չես կարող օտարաց, բայց խրատ մի տուր մերայնոց, որք փափաղին զվարճանալ տեսարանոք աշխարհանդիսի, որ դոնեն մտնելու ատեն, դուրսը թողուն գոնե սրտերնուն կեսը։ Հապա մյուս կեսն ո՞ւր թողունք։ Թողո՞ւլ, այդ անկարելի պիտի ըլլա հայու, ՀՐԵ ազնիվ, գթած է սիրտն. թող պահե այն կեսը, գոնե կիսուն կեսը, իր կերպ կերպ կարոտյալ ազգայնոց։ Մերուն, այրվուն, որբին, տնանկին, կողոպտվածին, վիրավորին, կաղին և խեղին, մարմնով և սրտով, ըսենք նաև հոգվով կես ողջ կես մեռածին։ Եթե լույս աշխարհի առջև այսպիսի փորձանք չէր հանդիպած ազգիս՝ հավիտենական ամոթ չարաց, վայլե որ անվնաս մնացյալ կիսակատոր ազգն, գրության հավիտենական հիշատակ մի թողու նույն աշխարհի, ոչ առ ի ցույց, այլ ի դարման կոտորելոցն և կարոտալոցն։ Արդեն ըրած են զայդ ոմանք, թերևս և շատք պեսպես կերպով, ողորմությամբ, հանգանակոք, տրյուք ստակի և նյութոց, դաստիարակությամբք— խնամքով որբոց և այլն, սակայն դեռ ստեպ զանգատին լրագիրք,

թե ոչ սակավք ի կարող և ունևոր ազգայնոց՝ իրենց վայլածը չեն բրած, դեռ ըստ բավականին հայն հայուն չէ օգնած։ Ստո՞ւյգ է, թե անստույգ. հարկ է լռեցնել այս գանգատը...

Ի սկզբան բանիս հիշության երկու տիրող ձայնք դարամտիս. միույն վրա խոսեցանք, նկատելով հայկական հեծությունը, մյուսույն ակնարկելով հարևանցի՝ դարձյալ նկատմամբ մեր պատահարին, եթե ոչ կանոնավոր հոբելյան մի ապաշխարության, զոր քարոզել մեզի չինկնար, այլ վայելե հիշեցնել և հիշել (թեև հավատամք թե հիշած են գթոտ ազգայինք), որ այս երկրավոր հայրենիքե վեր երկնավոր հայրենյաց այլ ունին և Գերագույն հայր մի հասարակաց։ Եվ մինչ ձեռվնին կարկառեն առ եղբարս. այլ վերացնեն արտերնին հոգինին առ նա և ասա իրենց ազգակից բարեխոս սուրբս, և ոչ ոք թերահավատությամբ ըսե, թե շատ աղոթեցինք, աղաչեցինք, բողոքեցինք երկինս ի վեր և չեղանք լսելի։ Եվ ճշմարիտ է, որ ոչ միայն ամեն արտար աղաչանք, այլև ամեն մի հառաչանք մեր տառապելոց, ամեն մեկ կաթիլ արտասվաց և արյան մեր կերպ-կերպ զրկելոց, կոտորելոց և նահատակաց՝ իրենց վարձքն և փոխարենն պիտի ունենան և ոչ կրկնակի կամ տասնապատիկ, կամ հարյուրապատիկ, այլև անբավապատիկ։ Եվ զայս պետք է խնդրեմք և ընեմք, եթե նյութական օգնության չեմք ձեռնհաս կամ ոչ միշտ։

Գալով այդ մեր երբեմն ազգայնոց և այժմ հավասար այլոց՝ արքայության որդիք եղելոց, թեև ինչպես վերը հիշեցինք, ամենքն ալ քիչ թե շատ ընկերասեր և խնամոտ եղած են երկրի իրենց ազգայնոց, այլ ոմանք ավելի հատուկ կերպով և առավելությամբ։ Որոց նշանավորք եղած են որպես բազում մասամբք՝ այսպես և խնամոք ի վերա կարոտելոց, մեր երբյակ տոնելի ՆԵՐՍԵՍ ՀԱՅՐԱՊԵՏՔՆ, երկուքն կաթողիկոս, երրորդն արժանավոր այնմ վկայալ ի ժամանակակցաց, երբեմն ևս ի հորե կամ ի մորե ցեղակիցք և արյունակիցք.[3] անվանյալքն Ն. ՊԱՐԹԵՎՆ, Ն. ԿԼԱՅԵՑԻՆ, կամ ՇՆՈՐՀԱԼԻ և Ն. ԼԱՄԲՐՈՆԱՑԻՆ ՍԻՐԵԼԻ։ Այս մակդիրներն ընծայած են իրենց արդարադատ ազգայինք և կրնան տեսնել ցանոնք իբրև ի մի մարմնի՝ երեք սիրտ և հոգի, կամ մի սիրտ և հոգի երիս անձինս, այս ԵՐԲՅԱԿ ՆԵՐՍԻՍՅԱՆՍ։

Քիչ շատ, այլ ոչ ըստ բավականին կամ արժեից նոցա, գրված և ծանոթ են ասոնց վարքերն, զոր չէ հարկ և ոչ տեղվույս կրկնել, այլ միայն իրենց մեծության ակնարկ մի տալ և ազգայնոց վրա

գութ և խնամք հիշել, զորս և արժան էր ստեպ հիշել և իրենց փառաց և անվան նվիրել, ինչ որ կրնար իրենց ազգին սկիզբն և հանճարքն, մանավանդ այս կարոտելոց և կոտորելոց առթիվ։

Առաջին Ներսիսյանց, որ իրավամբք առաջնության և արդյանց Մեծն կոչվի, թոռն թոռի Գրիգոր Լուսավորչի և երկուքին միջոց եղած հայրապետներեն գործունյայն, հատկապես ՊԱՐԹԵՎ անվանք, որպես և իր որդին՝ Սահակ, թեև ամենքն այլ նույն տեղեն են, հայք ռամկորեն Պարթև կըսեն մեծդի և ուժով կտրիճ մարդկան։ Սուրբ Ներսեսի վրա այլ այս գաղափարս կա, մանավանդ որ ի սկզբան աշխարհիկ և զինվորական վիճակ ընտրեր էր և մեր Արշակունի թագավորաց զինակիր էր և պաշտոնյա։ Քահանայապետության ատենի վարքն և գործք այլ հաստատեն իր վրա այս գաղափարս և կրնար իր պատկերին ներքև սույուծ մի նշանագրել։ Բայց որքան արիասիրտ էր հզորաց առջև, այնքան փափկասիրտ առ տկարս և կարոտյալս, որ և մեր այժմյան խնդրելին է։ Եվ այս գութս ոչ միայն իր ակամա քահանայապետությունը հանձն առնելեն վերջը, այլև մինչդեռ թագավորի սենեկապետ էր՝ փայլուն զգեստներով, զենքով, նաև մայերով «մեծահասակ և վայելուչ երեսօք և ահագին տեսողաց»։ Այն ժամանակեն վկայե պատմիչն, որ էր «աղքատաց դարմանող և նեղելոց և զրպարտելոց բարեյոյզ ի թագաւորէն»[4] այսինքն բարիք, օգնություն, ներողություն խնդրեր ի թագավորեն, վասնզի թագավորեն կկախվեր անոնց կյանքն և ազատությունն։ Իսկ դարմանելն, անոնց նյութական կարոտության օգնելը, թեև կրնար դարձյալ թագավորեն խնդրել, բայց անոր ձեռքեն ելածն իր սրտեն ելած չէր համարիր։ Անոր համար կանդրադարձնե պատմիչը թե՝ «ՅԻՆՔԵՆԷ կերակրէր զորբս եւ զայրիս», իր հատուկ ծառայության վաստակի և ընտանյաց համար ունեցածեն կու տար, կերակրեր, հագվեցներ, մխիթարեր այդ պեսպես կարոտյալները և այն արիական պարթևական հասակին զինուց և զրահից ներքև ուներ իր պապուն՝ Հուսկան և պապուն պապուն՝ Ս. Գրիգորի սրտի կակղությունն այլ։ Իսկ երբ սուրբ օծության իրավամբն եղավ հայր հասարակաց հայության և տեր ժառանգության հայրապետաց, ձեռքերն և անոնցմե ավելի սիրտն ընդարձակեց իր որդիացյալ կարոտելոց վրա, ոչ պարզապես ողորմություն բաշխելով, այլ անոնց ապահով ապրելու և դագրելու տեղեր հաստատելով, յուրաքանչյուր կարոտի պիտույից համեմատ։ Որոնց ամենեն գլխավորքն-էին մարմնով վտանգյալք,

հիվանդքն, և ասոնցմե այլ ամենե նեղյալքն, ԲՈՐՈՏՔ զորս ՈՒՐՈՒԿ և ՊԻՍԱԿ անվանեին՝ ըստ իրենց մարմնոց վրա բորոտության ավելի կամ պակաս տարածվելուն։ Այնքան մեծ էր այս ողորմությունն՝ որքան մեծ և ամենամեծ համարվեր այս ցավս, ոչ մարմնոց միայն, այլև սրտից և հոգվոց ցավագնելոցն, վասնզի դեռ շատ տեղ ըստ հեթանոսական անդութ սովորության այդպիսի ախտացյալները յաղքն, գեղն, հասարակաց բնակութենե դուրս վռնդեին «և հալածէին յանբնակ տեղիս, զի մի՛ յայլս փոխեսցի ախտն»։ Եվ նոքա հեռանային ընտանութենե և եղբայրութենե և ի հարց և ի ամուսնոց... «և բաղումք լինեին գազանակոտորք, գետավէժք, ձիւնախեղդք և անգիտ կորնչէին»։ Ասոնց համար հարմար տուներ, դարմանոցներ շինել տվավ, ուր պահեր և բժշկվողները իրենց ընտանյաց դարձներ։ Այսմ մասին Ս. Ներսես եթե ժամանակավ առաջին չէ ի նրմանիսն, մի ի առաջնոց է։ Ուրիշ կարոտելոց համար այլ քաղաքաց և գեղերու մեջ ՀՅՈՒԻԱՆՈՑՍ հաստատել տվավ և ոչ միայն շենն տեղերու մեջ, այլև «ի գերծ տեղիս (շենքերե, տուներե հեռու) և ՅԱՆՑՍ ճանապարհաց և ի գլուխս լերանց ՊԱՆԴՈԿՍ շինել»։ Երկու դաս նվիրական անձանց համար այլ, այսինքն եկեղեցականաց և կրոնավորաց, իրենց վիճակին հարմար տուներ և վանքեր հաստատեց, զորս «ԵՊԻՍԿՈՊՈՍԱՆԻՍՏՍ և ԵՂԲԱՅՐԱՆՈՑՍ մեծամեծս և փոքունս» անվանե պատմիչն։ Այսպիսի տեղյաց թիվն հազարավոր էր, որո վրա պետք չէ զարմանալ, վասնզի Հայաստանի պես բարձրավանդակ և լերանց մեջ խոտորկտուր միջոցներե էին հիշյալ ԱՆՑՔՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՑ և հարկ էր Ալպյանց Ս. Բերնադոսի հյուրանոց վանորեից նման ապավինի տեղիք հաստատել, եթե ոչ այնպես մեծամեծ, այլ բազմաթիվ ըստ պատշաճի աշխարհին դրբից,[5] որ Ասիո արևելից և արևմտից միջանցք մի էր և է։ Այսքան տեղերու ապրուստ պատրաստել և պահել հնար չէր որ ինքն, միայն սուրբ հայրապետն ճարե, այլ բարեպաշտից օրինակ և հորդոր եղավ։ Ճարտար հնարք մ՝ այլ առաջարկեց, որ թագավորազունք և իշխանազունք իրենց գերեզմանները պատրաստեն վանորեից մեջ, որպեսզի իրենց հանգուցյալ ընտանյաց սիրով վանականաց ապրուստին օգնեն և իրենց ստացվածներեն մասն հանեն։ Այսպիսի կարգավորությամբք՝ վկայե պատմիչն, որ՝ «Ոչ ոք տեսանէր յաշխարհին Հայոց մուրացիկ, յաւուրսն Ներսիսի»։

Ի՞նչ բաղդ աղգի մի՝ այսպիսի հայր մ՝ ունենալ, ի՞նչ պայծառություն հայրենյաց մերոց և որպիսի՞ ժամանակ... այստեղ

թանձր մութ մ՝ այլ պատե ասոր վրա, թեև ավելի փայլեցնե Ներսիսի լույսը։ Իր այդքան գեղեցիկ, հոգի և մարմին դարմանող, պահպանող շինվածոց դիմաց, հանկարծ ի՞նչ կանգնի և որմն՞... Ո՞վ գարշելի սև հիշատակ, ԱՐՇԱԿԱՎԱՆ, որ խև և անամոթ կանգնողիդ անվամբ ամոթով և սգով պատես Ներսիսի սիրասուն սաները։ Որպիսի՞ հակադեմ կերպարանք և գործարանք... Ներսես Ա և Արշակ Բ։ Արդարև, գրեթե միշտ լույս և խավար իրարու հակառակին, բայց տերն մեր քաջալերե. «Լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ... խաւար նմա ոչ եղև հասու»։ Արշակ ինքզինքը ցածցուց, փճացուց, Ներսես այլ ավելի պայծառ, զորավոր և բարերար հանդիսացավ։ Անարգել և կողոպտյալ պայազատքն հայոց և բընութիյունն իսկ կամ հատուկ գետնին, ուր անօրենության և պղծության անունն կանգնեցավ, թոթափեցին, փլուցին այնպիսի չանվանելի շենքը, ուր Ներսիսի գթության նոր ասպարեզ բացվեցավ, այդ անապատացյալ տեղեն ծաղկներ, և իբրև «ի փշոց խաղողդ քաղելով, մեղաց ծնունդ անմեղ որբերը որթերով, կողովներով ժողովեց, դարմանեց. իր լույս կերպարանքն այլ ավելի ճառագայթեցավ։ Բայց թող իջնե մութն և խավարն այն հակադեմ սև երեսը ծածկելու և երանի՞ թե իսպառ ծածկած, թաղած մոռցված ըլլար ինա և անոր արժանի անարժան զավակը (Պասլ), որ մարդկորեն բոլորովին մթնցուց Ներսիսի կյանքը։ Հոգևորապես ամենեն պայծառափայլ պսակն ավելցուց անոր, նահատակաշնորհ մահվամբ, չնութացնելով զնա հավիտենական փառաց և վարձուց իր գթասիրությանը[6]։ Որով մենք այլ, ի մեր պարադայիս, խառն պարծանոք և կսկծանոք, ղինքն մեր երախտագետ եկեղեցվո մեջ երգողին հետ կրկնենք առ աստված։

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ. մականունն ամենապատշաճ կբացատրե լիովին զանձն և թվի ի հրեշտակե ընծայած քան ի մարդկանե։ Թթե մաքրությամբ վարուց, եթե հոգվույն եռանդյամբ և կրկին թևոք՝ աստվածսիրության և մարդասիրության, եթե մտաց պայծառությամբ և հարստությամբ հանճարո, եթե ճարտար գրչությամբ արձակ և ոտանավոր, եթե զգաստ և խոհական վարչությամբ քահանայապետական կարգին և եթե բանիվ և գրով սիրտ շահելու և հաշտեցնելու հաջողությամբ, և եթե մեծամեծաց՝ կայսերաց և եկեղեցվո առաջնորդաց հետ պատշաճապես քաղաքավարելու և եթե մանկանց ու ռամկաց հետ, ամենայն մասամբ և համեհայնի

Շնորհալի էր և երևեցավ Ներսես՝ Դ-ի համանուն կաթողիկոս, գեր-բապանց քան զբնավս, միանգամայն սրբությամբն և իմաստությամբ։ Որո նման կամ մերձավոր ոչ ոք ի հաջորդացն, իսկ ի նախորդաց՝ փայլեն սրբությամբն իր նախահարք ցեղին, Լուսավորիչն և որդիք և թոռունք, այլ ոչ գրավոր հանճարով, գոնե անոնցմե մընացյալ կամ չմնացյալ գրվածոց դատելով։ Հետ վախճանի Մեծին և Պարթևին, սուրբն Սահակա, միակ իրեն հետ բաղդատելվո, մինչև ի կաթողիկոսություն Ներսիսի, իբրև 727 տարի անցեր էր; և այսքան ժամանակի մեջ հայոց եկեղեցին իր հովվապետաց ոչ մեկուն նվիրած է սրբության անուն և տոն, թեև եղած են արժանավոր անձինք, և ոչ իրմե վերջը մինչև հիմա (1173—1900), որ չուգադիպությամբ նույնքան 727 տարիներ են*։ Գրավոր կամ հանճարո մասամբք այլ, թեև ունեցեր ենք փայլփլուն քանի մի նախորդ կաթողիկոս, Մանդակունի մի, Կոմիտաս մի, Հովհաննես Իմաստասեր մի և այլն, այլ ոչ ոք առաջ կամ հետո հավասարի կամ մոտենա մեր Կլայեցվույն՝ պեսպես շնորհաց և ոչ ոք քան նա երախտավոր եղած է հաստատուն և մնայուն արդյամբք, թե մեր եկեղեցվույն և թե մեր դպրության։ Եվ հայսմ մասին կրնամք իր մտավոր ծննդոց կամ արգասյաց շատն օրինակագիր (classigue կամ գերագույն գործոց chef d' oeuvre) համարիլ որք և ամենուն ծանոթ են, նաև ոչ սակավ օտարաց՝ իտալ կամ լատին թարգմանությամբք։ Որպիսիք իր հովվական կամ ԹՈՒՂԹՆ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ, ԹՈՒՂԹՔՆ առ հույնս, վասն միաբանության եկեղեցյաց, ԹՈՒՂԹՔՆ առ այլևայլ վիճակի անձինս, ՀԻՍՈՒՍ ՈՐԴԻՆ, ՀԱՎԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄՆ, երկրիս ամեն մասանց մեջ սփռված երևսունվեց լեզվով թարգմանյալ, ժամանակագրության լրումն, ՇԱՐԱԿԱՆՔ և ՏԱՂՔ, մասամբ և ՈՂԲՆ ԵԴԵՍԻՈ, նաև ռամկորեն ԱՌԱԿՔՆ կամ ՀԱՆԵԼՈՒԿՔ, թողլով հիշել զճառս կամ ներբողականս և զմեկնությունս սուրբ գրոց, ինչպես «Կաթողիկյա թղթոց», «Ավետարանի Մատթեոսի» և այլն[8]։ Ասոնք և այսպիսիք քիչ շատ ծանոթ և արժանապես հարգի են մերայնոց և զորս բացատրել չէ մեր հիմակու նպատակն։ Շատ տարիներով առաջ իր դարևոր հիշատակին գրքույկ մի հրատարակված է «Ներսես Շնորհալի և պարագա յուր» վերնագրով, որ է իր վարքն, ամեն մասամբ քննել ջանալով[9]։ Ծա-

---

*Մյուս ևս զուգադիպությամբ Շնորհալին վախճանած է ճիշտ 800 տարի հետ վախճանի Պարթևին (373—1173)։

կայն դեռ ինքն չէ բավական ճանչցված և ոչ իր գրածն և ըրածն, և գուցե փոքր մասն ըլլա մեր ճանչցած իր հանճարն և համբավն, որո քանի մի սխրալի նշույլք հայտնվեցան և հետ վերոհիշյալ գրոց հրատարակվեցան։ Որոնցմե գլխավոր կրնամք համարիլ այն Հռովմա քահանայապետին (Ինոովկենտիոսի Բ) թուղթն առ Գրիգորիս կաթողիկոս, եղբայր Ներսիսի, իբր համի 1131-ին գրված, մինչ Ներսես դեռևս ոչ երեսուն տարվան էր, այլ անդստին այնքան Շնորհալի, մինչև շնորհաց շողշողուն նշույլքն՝ ոչ միայն հասած առ տիեզերական հայրապետն Հռովմա, այլև կերպով մի շլացուցած զնա լսած համբավովն։ Որո համար թղթին թե՛ ի սկզբան կամ մեջն և թե՛ ի վերջն կկրկնե իր փափագը և գրեթե թախանձե, որ կաթողիկոսն հաճի ղրկել առ ինքն տեսնելու, լսելու, խոսելու իր արժանավոր եղբոր Ներսիսի հետ, զոր երևցնե թե լատիներեն այլ գիտեր, բայց ստուգիվ՝ լատին խաչակիրք, եկեղեցականք և ձիավորք, որք հաճախեին ի արևելս, լսած-տեսած անոր բազմակերպ շնորհքը, հռչակեր են ի Եվրոպա, ևս առավել ի գլխավոր կետն Հռովմ։ Այնքան թախանձանաց Պապին՝ դժվար էր որ մեր կաթողիկոսն անլուր մնա, բայց պարագայից և ճամբորդության դժվարությունք այլ կային, զոր նախահոդալով Պապն ավելցնե ի թղթին, հակառակ իր փափագանաց, որ եթե այդ պատճառավ կարելի ըլլա խավրել իրեն զՆերսես, խավրե կամ առջի խավրած Նվիրակը (Հովհաննես քահանայն) կամ ուրիշ լատինագետ մի։ Ոչ շատ տարի վերջ այլ (1146—47) կաթողիկոսն մեր խավրեց Նվիրակ առ քահանայապետն, որ էր այն ատեն Եվգինիոս Գ, զատ այլոց՝ եպիսկոպոս մի, որ մինչ Պապն իր հայրենյաց Պիզայի կաթողիկեին մեջ պատարագեր, տեսավ անոր վրա թևածող աղավնի կամ աղավնիներ, նշանակ Սուրբ հոգվույն և հռչակեց տեսածը. իսկ պապն խոնարհությամբ ըսավ, թե երևցածն տեսնողին արժանավորությունը կցուցնե և ոչ յուրը։ Միթե Ներսե՞ս էր այդ տեսանող Նվիրակն. եթե ինքն էր և եթե ոչ, իրեն սրբությանը վայելեր։ Իսկ մենք, եթե մեր տկար աչոք չեմք համարձակիր մեր Շնորհալին այսպիսի տեղ Նվիրակ տեսնել, սակայն հավանիմք, որ իր կենաց և վարուց շատ քիչ դեպքերը գիտեմք, և ոչ այս հայ եպիսկոպոսի Նվիրակությունը, ոչ պապին և կաթողիկոսին թղթակցությունը, ոչ Գրիգորիսի՝ ի Անտիոք և Երուսաղեմ ընդ լատինաց ի ժողովս նստիլը հիշած են պատմիչք մեր։ Կաթողիկոսաց՝ այն ատեն բնակարանքն ևս, լեռնապար լճակի մի մեջ (ի Ծովք) և ի

Հռոմկլա, դժվար մոտենալի տեղվանք, շատ բան ծածկեր են մեզմեն։ Այս հայտնի է, որ իր եղբոր երկար (իբր հիսունչորս տարի) կաթողիկոսության ատեն, ինքն Ներսես էր անոր աջ բազուկն, թարգմանն, դեսպանն, եկեղեցին վարդարողն, մանավանդ Շարականոքն, որո համար կոչվեցավ ԵՐԳՈՂՆ (բացի ի մյուս երկու մականվանց ԿԼԱՅԵՑԻ և ՇՆՈՐՀԱԼԻ) և ըստ առաջին, ամենայն ինչ հայրապետանոցին, որ է ըսել ամենահարմար կամ դարձյալ պարզաբար Շնորհալի։ Եթե ստիպվինք այդ պեսպես շնորհքներն հիշել և պարզել, հարկ էր շատ երկար գրել, զոր թողլով խնդրողաց գտնել ըստ մասին մեր վերագույն հիշած դրքին մեջ, դառնանք մեր բուն նպատակին, որ էր Ներսիսի գթասիրությունն և անով քրածն իր ազգայնոց։

Ներսիսի սիրտն այն կաղապարեն ձուլված է, որով ՈՂՈՐՄԱԾ մականվանյալ սուրբ և որով վերջի դարերուս հռչակելոց մեջ հրաշակագույնն Ֆրանչիսկոս Սալեզացի, այնքան գթած և քաղցր, որ համարձակ գրեր, թե չի կարծեր, որ աստուծմե զատ իրմե ավելի մեկն սիրե զմարդիկ, որպիսիք և ըլլան։ Իսկ Ներսես, այդ հրաշափառ և հանդուգն խոսքին փոխան՝ թերևս հրաշափառագույն երգած է և ուղղակի ըսած է աստուծո, խրատելով իմն «ԱՐԴԱՐՈՒԹԵԱՄԲ մի՛ դատեսցես, այլ ԳԹՈՒԹԵԱՄԲ քո քավեսցես»։ Այս խոսքս բավական է միայն հայտ հանդիման ցուցնելու իր սրտին գթության չափը, որ էր անչափ, և զայդ զրուցողն նույնպես կրնար ըսել համարձակ ընդ իր սիրելվույն Հիսուսի. «Ուսարուք յինէն, զի հեզ եմ և խոնարհ սրտիւ»։ Իր վերոհիշյալ թղթոց մեջ կան քանի մի՝ գրված առ այնպիսի անձն կամ անձինս, որք իսկապես ՀՐԵՇ կերևին մեզ՝ ՀՐԵՇՏԱԿԻ մի առջև, որ համարձակին այնպիսի մաքուր և քաղցր հոգի մի բամբասել և թշնամանալ։ Վկայեն պատմիչք մերձավորք ժամանակավ և գերագույն առաքինություն համարին և գրեթե անկարելի ջանքով ստանալն ի ամենագովելի հեզությունն, որով հավասարեցնեն Մովսիսի մարգարեի և զայն կրսեն ոչ երբեմն ցուցներ, «այլ զամենայն աւուրս կենաց իւրոց ոչ ումեք բարկացաւ և եթէ լինէր գործ յումեքէ արժանի բարկութեան, նաև ոչ սրտնէր կամ ցուցանէր բարկութիւն ինչ, այլ հեզ և քաղցրաձայն բանիւ ասէր. ԼՈ՞ՅՍ, եթէ ոչ յիս խնայէի՝ բարկանայի քեզ»։ Լո՞ւյս, ինչ եղեցիկ և հրաշալի բան։ Աստուծո առաջին ստեղծվածն է, Ներսիսի այլ սրտին առաջին և միշտ բխածը, զոր եթե բարկության արժանի անձանց կրսեր, որքա՞ն ևս այլոց, համենայն դեպս,

վանդի, կրսե խոհական պատմիչն, ինքն բոլորովին «հոգիացեալ էր և լուսաւորեալ աստուծային լուսովն, ԼՈ՞ՅՍ վերածայներ ամենեցունց, անուն՝ մեծի և փոքու»։ Այս փոքրիկներն են տղայք, զորս ամենն մարդ սիրե և գգվե, բայց Ներսես, թեպետև քան զամենայն ոք սիրեր զտղայս, բայց ոչ երբեք փաղաքշական կամ ըստ պատմչին ԱՆԿԱՏԱՐ (նվազական) անուն մի տվավ անոնց, այլ լույս և միշտ լույս։ Ոչ միայն խոսքով ցուցներ իր գութն և քաղցրությունը, այլ իրոք որեէ կերպիվ և նյութով, մինչև ամենն իրմե գըրված կամ մեկնություն մի խնդրողին առանց զլանալու գրեր և կուտար։ Իսկ նյութական տրից գալով՝ ողորմածությանն հարկատու չէր բավեր ունեցածն և ըստ վկա պատմիչին, «ի մանկութենէ բնաւորաբար սովորութեամբ ունէր զողորմութիւնն», իսկ երբ որ ելավ աթոռ հայրապետության՝ ըստ մեծի աստիճանին առավելության «Առաւելոյս և ի տուրսն աղքատաց, յայտնապէս և ի ծածուկ»։ Եվ զարմանալի ճշմարտությամբ մի կըներ այս ծածուկ ողորմությունը. հավատարիմ լրտեսներ ուներ քննելու, ճանչնալու այնպիսի անձինք, որ երբեմն ունեոր ըլլալով՝ աղքատացեր էին և ամչնային մուրանալ։ Ներսես ասոնց համար ՈՍԿՎՈ ԾՐԱՐՆԵՐ էր և գիշերանց լրտեսներն այն կարոտելոց տուներուն վրա հանել տալով, երդիքներեն և պատուհաններեն բնակարանաց մեջ ձգել կուտար, խստիվ պատվիրելով որ չիմացնեն մեկու մ՝ այլ այս գործը։ Ոչ պակաս այս աշխարհիկ կարոտներե կհոգար նաև աշխարհքե հրաժարյալ հոգևորականները, մանավանդ ծերերը և որեէ կերպով նեղյալները, տալով անոնց «ԴԱՀԵԿԱՆ և զգեստս ի պէտս կարեաց նոցա»։

Այսպիսի անուշ, փափուկ, գթած սիրտ ունողն թերևս կարծվի ոմանց, թե բնական կազմվածքի արգասիք է և տեսակ մի թույլ բնություն, որպես թե բարոյական կոչված առաքինությանց գըլխավորին ԱՐԻՈՒԹՅԱՆ պակասություն։ Սակայն ինքզինքը սանձելն և հեզացնել անուշցնել՝ ամենեն մեծ արիությունն է և այսպես ըրած և Ներսեսք և նմանիքն։ Վերև հիշված Սալեզացին, որ քաղցրաբարոյության ամենքն և ինքն իսկ վկայած է շատ կերպով, խոստովանած է ևս, քսանհինգ տարի աշխատեր է իր տաք բնավորությունը նվաճել և այն քաղցրությամբ վարել։ Մեր Ներսիսի համար այս չէ ըսված հայտնապես, այլ իր հեզությունը հիշողն ոչ միայն զայն ամենն առաքինութենե վեր կու կդնե, այլև «յոյժ դժուարին է,— կրսե,— երկրածնաց» (մարդկան) ջանքով ստանալ

զայս, իսկ անչանք՝ ոչ բնավ։ Ուրիշ գործերեն և գրվածներեն այլ հայանվի Ներսիսի արիական ոգին, այլ՝ զոր հեզությամբ լծեր էր։ Իրեն ամենեն դժվար պիտի ըլլար իր աթոռակցաց, այսինքն եպիսկոպոսաց հետ վարվիլն և հոգն, այլ անոնց պաշտոնի մեծությունն և ժողովրդյան վրա ազդեցությունն այնպես կարևոր գործ կճանաչեր, որ առանց լավ փորձելու այն աստիճանի ընծայելոց արժանավորությունը, չէր հանձն առնուր որևէ աղաչանաց ըսել և ձեռնադրել, որով իր յոթնամյա կաթողիկոսության ատեն միայն յոթն եպիսկոպոս ձեռնադրեր է։ Եթե Ներսես Լամբրոնացվո հայրն, մեծ իշխանն ՕՇԻՆ և Կիլիկիո մեծագույն իշխանն ԹՈՐՈՍ Ռուբինյան հակառակ էին վինքով և իրավմամբ և ոչ ոք կրնար հաշտեցնել, Շնորհալին իր հեռավոր մենաստանեն թուղթով, միանգամայն արծվո և աղավնվո թևոք անոնց կայանքը, զորությամբ և հեզությամբ բանիցն ոչ միայն հաշտեցուց, այլև խնամեցուց։ Իր գրվածք և երգարանք մեղր բխեն, բայց երբ Եղեսիո անպարտ ջարդն և ավերն ողբա՝ գիտե Եղիայի հոգվով կրակներ իջեցնել և որպիսի՞ կրակներ, բռնավորաց և բարբարոսաց վրա։ Այլ օրինակ և վսեմական նշանակ մի է իր մեծոգության և պարթևական արձան առ Մանվել կայսր (որո հետ թղթակցեր) խավրած ընծայն. ոչ էր սաղմոս և ժամագիրք և ոչ իսկ միջագետաց բուսական բերքերեն կամ հովվական պարարտությենե, այլ աչքը քիչ մ՝ այլ հեռու դարձնելով, մոտավոր կես դաշտ կես անապատեն, խլեց երկու-երեք անթև թռչուն, կայսերավայել արաբիկ նժույգ օդապարիկ, անոնց հետ նաև այն ատենեն և մինչև հիմա անվանի գործված, կիտված, լարված ծանրագին աղեղներ, որ ի հարկին գործածե, ուր որ արիություն պետք է։ Անով և առջի ըրածներն այլ հիշելով կրնանք ըսել, թե Ներսես, Շնորհալին Ներսես, գիտեր կատարել հրամայածը «Տուք զկայսերն՝ կայսեր և զաստուածոյն՝ աստուծոյ»։

Արդ մնա քեզ, ո՞վ ամենաշնորհ հայր մեր, տալ և մեզ քու հետին զավակացդ և թոռանց մեր պետքերը, զոր հավատամք, թե լավ ճանչնաս, վմեզ ամենալույս աչոքդ և ներես թոթովանացս մեզի սովորեցուցած Արևգալի երգդ, մեկ մ՝ այլ երգե հո՞ն, հո՞ն, ուր որ ես հիմա, առաջի ամենամեծ երրորդության, «Լո՞յս, երբեակ և մի, անբաժանելի սուրբ երրորդութիւն»։ Իսկ եթե համարիս պատշաճ՝ գրդե ժպտելով նորահրաշ կարմիր պսակավորդ իր «Հազարաց և երեսնից թիւ ընդ վեցից» խմբովն, թե «Հայեցէք զխաղաղութիւն

ճշմարիտ վկայք նեղելոցս, յանօրինաց բռնութենե, զի ցնծասցուք հաղթանակաւ մարտի ձերոյ»։

ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ. ՍԻՐԵԼԻՆ. Եթե մասամբ իմն սա Ներսես Շնորհալվո ցեղին արյամբ և կաթով գոյացեր և սներ էր (ըլլալով որդի Շուշանա, դստեր Զորավարի հարազատ եղբոր Շնորհալվույն), կրնամք անտարակույս ըսել, թե իր մորը սուրբ հորեղբոր շնորհոքն սնավ, զարգացավ, նմանեցավ, քսան տարի անոր հովանավորության ներքև՝ հեռվեն և մոտեն, որմե տասնութ տարվան հասակին ձեռնադրվելով քահանա, նորեն ընդունեցավ զաղբյուրն շնորհաց, զոր և շատ կանուխ ի ծնե և կերպով մի հանդգնորեն ըսելով, նախքան զծնունդն ընդունած էր մորը ուխտով։ Իսկ երբ աշոքն տեսավ անոր լուսափայլ երեսը, վայելչությունը, շարժմունքը, որ ամեն տեսողքն այլ կղմայլեցներ, վայրկյան մի շփոթեցավ. արդյոք այդպիսի գեղեցկությունն և շնորհքը չէր կրնար ղայն սիրողաց պարգևել, ըստ աշխարհի օրինաց։

Ներսիսի Լամբրոնացվո վարքն այլ բավական ծանոթ է ազգայնոցս, ոչ միայն ի Հայսմավուրս, այլ գրված ըլլալով և ի մեր ժամանակս, ի օրագիրս և ի տեղագրությունս իր հայրենյացը[10], այլ, որ շատ սխրալի և հազիվ երբեք լսված է իր կենդանության ատեն, աննախանձ տեսողք և զարմացողք իր շնորհաց, ձրից, իմաստության, սրբության և հաջողակության, իրեն և ուրիշ գրոց հիշատակարանաց մեջ գրեցին վարքը, մինչև իրենց գրության տարին։ Իսկ հետ մահվանն՝ այնպես սրտառուչ գրած են մեծ և փոքր անձինք, ժամանակակիցք և կենսակիցք, մինչև ղընթերցողս այլ ի գութ ի փափագ և ի պաթծանս շարժեն և որք հիմա այլ քննեն և կշռեն իր ըրածները և գրածները, չեն կրնար չզարմանալ, չափշիլ, թե ինչպե՞ս մեկն հազիվ քառասունհինգ կամ քառասունվեց տարի ապրելով՝ այդքան այլևայլ տեսակ գործ ըրեր է[11] և այդքան հատոր հատոր գիրքեր գրեր և թարգմաներ։ Ինչպե՞ս ժամանակ գտեր է, թե անապատներու և վանքերու մեջ ապրիլ և առաջնորդել աշակերտաց և վարդապետաց, թե իր քեռվույն (Գրիգոր Տղայի) ձեռոք քսանհինգ տարվան արքեպիսկոպոս ձեռնադրվելով Կիլիկիո մայրաքաղաք Տարսոնի՝ առաջնորդել ընդարձակ թեմին, զատ ի հայոց և այլազգ ժողովրդյան։ Թե ի արքունիս և առ արքայազունս դեսպան և նվիրակ երթալ, պես-պես նպատակավ ի Կոստանդնուպոլիս, առ կայսր հունաց, նախ ի տղայությանն և հետո, քիչ առաջ քան

զմահն, առ եկեղեցական ժողով այն տիեզերական քաղքին, առ կայսրն Ալամանաց, ողջունարար ի մեծագործ Լևոնե մերմե, թեև առաջ քան ի դահն, ի դադաղն գտավ նա զմեծն այն Փրեդերիկ Ա, յուր վիճակի գետույն մեջ ջրախեղդ[12]։ Երբեմն ի Կիպրոս, երբեմն ի Անտիոք, ի տեսութիւն թագավորաց և բրնձաց[13] և շատ անդամ այցելու վանորեից Սեավ լերանց և կողմանց Ասորվոց, թող ուրիշ գործերն հանձնյալ Լևոնե և ի կաթողիկոսեն, որոց գլխավոր մի արժե համարել և հիշել իր աթոռանիստ քաղքին մեջ գումարված հայոց ընդհանուր եկեղեցական ժողովույն առաջնորդ և լեզու ըլլալն, այն հրաշալի ատենարանութիւամբն, որ մի է ի գերագույն գրվածոց նորա և հայկական դպրութեան։ Որո համար ի օտար հայագիտաց և թարգմանութիւնը կարդացողաց՝ ՀԱՅ ԿԻԿԵՐՈՆ կոչված է։ Նույնպես կրկին անգամ կոչվելու է և առ Լևոն գրած թղթույն համար[14]։ Այս հիշատակս ընդհատել տալով առջի ըսածնիս, ատիպն որ հիշենք ասոնց հետ և քանի մի ուրիշ շատ նշանավոր գրածը, ինչպես ընդարձակ Սաղմոսամեկնիչն, երիտասարդութեան ատեն գրած, ծերունազարդ մտոք, ոսկեղենիկ «Մեկնութիւնն պատարագի», «Ճառերն», գործք՝ որոց համար ըստ այժմու դատման՝ ի ճեմարանաց գիտնոց, կարժանանայր ոսկի մետալաց և առաջին մրցանակաց։ Ո՞ւր թողունք ուրիշ մեկնութիւնները, հարանց վարուց նոր շարադրութիւնն, թարգմանութիւնք ի հույն և լատին լեզվաց, մեծին Գրիգորի պապի «Դիալոկքն», լուծմունք խրթին բանից դրոց Սուրբ հարց, Գրիգոր Նարեկացվո, զոր շատ սերեր է, և «հրեշտակ ի մարմնի» կոչեր. ըստ այսմ կրնանք կոչել զինքն համահրեշտակ։ Թողունք և այլ պեսպես գրվածները, մանր և մեծ, շարականք, տաղք հոգեվորք և թարգմանութիւնքն ի լատին մաշտոցն, թագավորօրհնեքն և այլն[15]։

Ասոնք և այլ անհիշատակքն մեկտեղ ամփոփելով, կանգնեն քանի մի մեծածալ հատոր, որոց մեծութեան հետ զարմանալի է և այլևայլութիւն նյութոցն. նույնպես զարմանալի անոնց ընտրութիւնն։ Ինչ սուր հոգետես և իմաստասեր աչք ուներ՝ զհարկավորն և զպիտանին հոգալու, շատն անձամբ ճանաչելու, մասն մի այլ այլոց ձեռքով։ Արդ, զայս ամենայն աշխատութիւն և գործ, քաղաքական, եկեղեցական (որպես շենք և զարդք եկեղեցյաց վիճակին), վանականք, կրոնականք և դրավորականք ի մի գումարելով (իբրև Summa Sumarum) նորեն հիանանք և հարցնենք, թե ինչպե՞ս գտավ ժամանակ և ի՞նչ հնարք, այդ չափավոր կամ կարճ

կենաց մեջ այնքան գործելու այնպես լավ գործելու և գրելու։* Այս բանիս՝ երկու հնարք ցուցնեն զինքը ճանչցողք. մեկ մ՝ որ գրեթե ոչ ուտելու, և ոչ քնանալու կանցներ ժամանակը. իրեն ամենօրվա մի անգամ չոր ուտելիքը բերող սպասավորն, երկրորդ օր ամբողջ գտներ առջի օրը բերածը կամ կտորիկ մի միայն պակսած։ Իսկ քնո համար անկողին չէր մտներ, այլ աթոռի կամ տախտի մի վրա քիչ մի փափելով, հետ կենս գիշերի, շուտով կելներ, պատրաստությամբ կաղոթեր, ՊԱՏԱՐԱԳԵՐ, հոգար եկեղեցվո և հավատացելոց պետքը և որևէ ժամանակի միջոց մի գտնելով, կամ գրության և թարգմանության հետևեր, կամ իրեն հանձնված քաղաքական և կրթական գործոց։

Ստորագծեցինք զպատարագն, ոչ զի՝ ինչպես իր գրվածոց մեջ ամենեն նշանավորն է պատարագի մեկնությունն և ամեն քահանայի (որով և իրեն) մեծագույն գործ երևի, այլ զի այնպես պատարագեր Սիրելին Ներսես, որ կրնար ըսվիլ թե մեղր և կաթն կաթեցներ, մանավանդ թե բխեր և ոչ դադրեր։ ՄԵՂՐՆ էր հոգու հառաչանքն, որու արձագանքն լսվի դեռ, իսկ ԿԱԹՆ էր պատարագելուն ատեն սրտեն բխած և աչքերեն հորդած արտասունքն, զոր հարկ կըլլար երկու երեք անգամ սրբել և քամել լաթով կամ սպունգով, զոր շատ իրավամբք իր ձեռասուն սպասավորն այն հաշատուր «հեղեղ արցունք» կոչե։

Ավելորդ համարիմ որպես այլևայլ արժանյացն համար՝ ես առավել իր սրբության վրայոք երկարաբանել, զի այնքան հայտնի է մտացված, որքան ավելորդ ապացուցանելն, թե արեգակն լուսավոր է։ Բայց եթե մեկն կույր է, ավա՜ղ ըսեմ այնպիսի կուրության, որ զՇնորհալին այլ մեղադրեր է, Լամբրոնացվույն ալ եղան մեղադրողք.[16] կարդա՛ թե կուզես սորա թուղթն առ Լևոն։ Այլ ես ոչ այնքան ժամանակակից նախանձորդն ավաղեմ, որքան իմ ժամանակիս, եթե դեռ գտվի այդպիսի ոմն։

Այլ մենք գանք մեր գրության բուն նպատակին, որ լռելյայն իսկ գուշակվի, թե մեկն, որ այդքան սուրբ և աստվածասեր ըլլա, որքա՜ն այլ ընկերասեր և գթասեր այլ կըլլա։ Զայդ ոչ միայն իր վարքն, գրվածքն, աղոթքն վկայեն, այլև հատուկ գործքն և գոր-

* Հիշեք, որ նյութական գրչությամբ երկու անգամ ամբողջ Աստվածաշունչ գրքերն ընդօրինակեր էր, և ինչվան հիմա գտվին այլևայլ սուրբ գրոց և սուրբ հարց գործք, իր մատներովը գրված։

ծոց ականատեսքն։ Իր հայրն Օշին, անգամ մի իրեն տվեր էր Ե-
ղիսուն հազար ոսկի, որո մի երրորդ մասը Ներսես իր եկեղեցվո
պիտույից գործածեց, նույնչափ երկրորդը գրավորական պիտույից,
իսկ մյուս երրորդն աղքատաց և կարոտելոց նվիրեց և հետո, ինչ
որ թե հայրենի ժառանգութենե թե վիճակին պտղեն կամ բարեպաշ-
տից տուրքով կընդուներ, իր ամենեն կարևոր և հարկավոր ծախքն
համարեր այսպիսյաց տալ և հոգալ։ Եվ ինչպես իր վրա ականատես
սքանչացողն գրե «Ամենայն ուրեք զկարոտեալսն կերակրէր հանա-
պազորդ ողորմածութեամբ. հայր որբոց լինելով և խնամակալու
այրեաց. հիւանդաց և բանտելոց այցելու. յորս՝ զամենայն զգոյսն
իւր ծախէր։ ...Ի մեծ եկեղեցւոյն Տարսոնի յամենայն չորեքշաբթի
և ուրբաթ բաշխէր հաց և բակլայ եփեալ՝ անձանց չորեքհարիւր,
անխափան, հանապազ»[17]։

Անիրավություն և անարդանք համարիմ ավելի երկարելն այս
նյութիս վրա, որ է իսկ խնդիրս ի ժամանակիս և կնքեմ ոչ այնքան
ասելով թե «Որ ունիցի ականջս լսելոյ, լուիցէ», որքան թե որ ունիցի
սիրտ զգայուն, զգայցե, և որ ունի հոգի սիրահուր վառեսցի և
վառեսցե, գթալով ի ազգակիցսն կարոտյալս, որբս, այրիս, ի տր-
ենանկս, ի բանտյալս, աքսորյալս և հալածյալս, որքան և սիրտն
դրդիցե և ձեռն կամ քսակն բավիցե։

Իսկ քեզ ի՞նչ ասեմ, կնքելով այս հարևանցի գրվածս, ո՜վ
արժանապես անվանյալդ և գոյացյալ սիրելիդ մարդկան։ Եթե այն-
քան ճարտար էիր դու երկրիս վրա ի խոսելն, ի գրել և ի գործել,
հոգուտ և ի սեր ազգայնոցդ և օտարաց, մինչև ինքնին ստիպել
խոստովանելու թե տեսողք և լսողք, օտարք, քան թե ազգայինք
վկայեն, ատենին ամենեն մեծհոգի, հզոր և սրատես ազգայինդ՝
ՄԵԾԱԳՈՐԾՆ ԼԵՎՈՆ։ Եվ հիրավի, ահա լրացան յոթ հարյուր տա-
րիք, և չեղավ ոք ազգիս, հավասար կամ նման քեզ[18]։ Իսկ եթե ես չեմ
իշխեր քո սիրելվույդ՝ Նարեկացվո ըղձով թափանցել զհասարակաց
ամենասիրելին, համարձակիմ թափանցել քեզ, վկայալդ ՍԻՐԵԼԻ,
որ փոխան այն ազի հեզեզ արտասունքներուդ, այժմու իսկալույս
աչաց մարգարտափայլ կաթիլ մի կաթես քո համապգի վտանգելո-
ցըս վրա, անհայր, անմայր ՈՐԲՈՑ և անորդի որբացելոց։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ղևոնդ Ալիշանի չափածո և արձակ ստեղծագործությունների ներկա ժողովածուն ընդգրկում է «Երգք Նահապետի» հանրածանոթ շարքը, մի քանի բանաստեղծություններ «Նուագք» հինգհատորյա ժողովածվի երկրորդ («Մաղթունի») և երրորդ («Հայրունի») հատորներից, ինչպես նաև հայագիտության, ժողովրդական բանահյուսության, մանկավարժության, հրապարակախոսության, տեսական-փիլիսոփայական հարցերին նվիրված հոդվածներ, որոնք սփռված են Մխիթարյան միաբանության պարբերականի՝ «Բազմավեպի» տարբեր տարիների համարներում։ Բացի «Երգք Նահապետի» շարքից, որը տարբեր վայրերում մեկից ավելի հրատարակությունների է արժանացել (մեզ մոտ Երևանում, հրատարակվել է 1957 թ.), Ալիշանի մյուս գործերը ընթերցող հասարակությանն են ներկայացվում առաջին անգամ։

Քանի որ Ալիշանի արխիվը գտնվում է Վենետիկում և առ այսօր անմատչելի է մնում ոչ Մխիթարյան հայագետների համար, բնականաբար՝ ձեռքի տակ չենք ունեցել հատորում ամփոփված գործերի ձեռագրերը, և հիմք ենք ընդունել «Բազմավեպում» կամ «Նուագք»-ում տպագրվածները։ Փոքր-ինչ այլ է դրությունը, երբ խոսք է գնում Ալիշանի բանաստեղծությունների մասին։ Ամեն անգամ, նոր հրատարակության պատրաստելով իր բանաստեղծությունները և մանավանդ «Երգք Նահապետին» Ալիշանը կատարել է բազմաթիվ ուղղումներ, փոփոխել է ամբողջ բառեր ու արտահայտություններ, ավելի է ճշգրտել այս կամ այն միտքը։ Այդ աշխատանքը ցուցադրելու նպատակով համառոտակի ներկայացրել ենք նաև հարցի բանասիրական պատմությունը։

Տպագիր խոսքով հանդես գալով 19 տարեկանից, ընդհուպ մինչև իր արգասավոր կյանքի վերջը (81 տարեկան), Ալիշանը հաճախ փոփոխել է իր ստորագրությունը, ինչպես նաև հրատարակել է ոչ քիչ թվով հոդվածներ, որոնք անստորագիր են։ Հնարավոր թյուրիմացություններից խուսափելու համար ծանոթագրություններում մեծ մասամբ նշել ենք Ալիշանի ստորագրությունները, տալով նրանց փոփոխման հետ կապված համապատասխան բացատրականներ, իսկ անստորագիր գործերի առիթով, համառոտակի նշել ենք, թե ինչպես է կատարվել նրանց հեղինակային պատկանելության բացահայտումը։

Տարբեր հոդվածներում Ալիշանը անդրադառնում է նույն փաստին, իրագործ-

թությանը, մարդկանց և այլն։ Նման դեպքում, ընթերցողին հղել ենք դեպի տվյալ փաստի առաջին հիշատակությունը։ Օրինակ. ծանոթագրելով «Երրյակ Ներսիսյանք» հոդվածի՝ Պապ թագավորին վերաբերող հատվածը, նշել ենք. «Տե՛ս «Ազգային պակասություն մը...» № 7-ը»։ Սա նշանակում է, որ անհրաժեշտ է նայել «Ազգային պակասություն մը, որ առաջադիմության միջոցները կարգիլն» հոդվածի առթիվ տրված ծանոթագրության 7-րդ կետը։

Մեր կատարած բոլոր վերականգնումները վերցված են ուղղանկյուն [ ] փակագծերի մեջ։

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻԿ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպի» 1847 թ. № 12-ում (հունիսի 15), «Նահապետ» ստորագրությամբ։ Հետագայում արտատպվել է Ալիշանի բանաստեղծությունների հինգհատորյա ժողովածվի՝ «Նվագքի» Գ. հատորի («Հայրունի») ինչպես առաջին (Վենետիկ, 1858 թ. էջ 216—224), այնպես էլ երկրորդ (Անդ, 1867 թ. էջ 267—274) հրատարակություններում, ամեն անգամ լեզվաոճական բնույթի զգալի փոփոխություններով։ Հետագա արտատպությունների համար մշտապես հիմք է ընդունվել վերջին հրատարակությունը։ Բանաստեղծությունը գրվել է 1847 թ. մայիսի 12—13-ին։

1. Անուշաբույր ու լեռնային ծաղկի տեսակ, որն աճում է գերազանցապես ոտալանջերին և որը համապատասխանում է բրարիոն ծաղկատեսակին։
2. Ծփանքով, ալեկոծումով։
3. Շաղ գալով, թափթփվելով։
4. Շուտափույթ, շտապ, արագ-արագ։
5. Տվեց («Տալ» բայի բարբ. անց. կատարյալ ձևը)։
6. Միանգամից, իսկույն, մեկից։
7. Երգիչ-բանաստեղծ, բանասաց (պարակ.)։
8. Սորալով, հոսելով։
9. Քաղցրահամ և մեղրանման մի նյութ, որը գարնան ամիսներին իրենց տերևների վրա արտադրում էին որոշ ծառատեսակներ (հիմնականում՝ ընկուզենին) և որը ուտում էին Արևմտահայաստանի բնակիչները։ Այնտեղ այն կոչվում էր «գաբզպեն»։
10. Շուրջը դառնալով, շուրջբոլորը պտտվելով։
11. Հեզ, խոնարհ, քնքուշ։
12. Լոկ, միայն։
13. Միջնորդ, պատգամավոր։
14. Մատուռ, այսինքն՝ նահատակի գերեզմանի վրա կամ նրա պատվին կառուցված աղոթատեղի (օգտագործված է գրաբարի հոգն. ուղղական ձևը)։
15. Ապարանք, պալատ, նշանավոր շինություն։

ՀԱՑ ՀԱՅՐԵՆԻՔ

Առաջին անգամ հրատարակվել է «Նվագքի» Գ հատորում (Վենետիկ, 1858 թ., էջ 225—228), որտեղից էլ, լեզվաոճական բնույթի որոշ մշակումներից հետո

զետեղվել է նույն հատորի երկրորդ հրատարակության մեջ (Անդ, 1867 թ., էջ 275—278)։ Հետագա վերահրատարակությունների ժամանակ հիմք է ընդունվել այս վերջինը։

1. Էին։
2. Գեթ, դոնե։
3. Ճյուղ, ոստ։
4. Տե՛ս «Հայոց աշխարհիկի» № 1-ը։
5. Իրար հետ միասին, մեկտեղ, միաբան։
6. Կողմերից («Դեհ»— բարբ. կողմ)։
7. Ոչիարի բուրդը, որն արդեն կտրված է, մաքրված ու զտված։
8. Օգտակար, առողջարար։
9. Հաճախակի, միշտ, շարունակաբար։

ՈՂԲԱՄ ՉՔԵՋ, ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպ»-ում 1848 թ. № 16-ում (Օգոստոսի 15), «Նահապետ» ստորագրությամբ։ Լեզվառճական որոշ փոփոխություններով արտատպվել է «Նվագքի» Գ հատորի («Հայրունի») ինչպես առաջին (Վենետիկ, 1858 թ. էջ 229—237), այնպես էլ երկրորդ (Անդ. 1867 թ. էջ 279—288) հրատարակություններում։ Վերջինը մշտապես հիմք է ընդունվել հետագա արտատպությունների ժամանակ։ Բանաստեղծությունն Ալիշանը գրել է 1848 թ. մայիսի 30-ին։

1. Ներքև թեքված, ցած հակված։
2. Լերկ, անմազ, հերաթափ։
3. Խնայի՛ր. զթա՛, ամա՛ն (միջ)։
4. Ակնարկում է մեր Պատմահորը՝ Մովսես Խորենացուն։
5. Գավազան։
6. Արի, եկ, մոտեցիր։
7. Էլի, դարձյալ։
8. Տե՛ս «Հայոց աշխարհիկի» № 15-ը։
9. Ինչպե՞ս, ի՞նչ ձևով։
10. Թափառական, աստանդական։
11. Պատվարժան, հարգելի, հարգ ու պատվի արժանի։
12. Նահատակ, զոհ։
14. Բերդի աշտարակ, պարսպի վրայի գագաթ։
14. Տե՛ս «Հայոց աշխարհիկի» № 15-ը։
15. Փոքր սար («Սար» բառի բարբ. փոքրացված, քնքշացված ձևը)։

ՄԱՍԻՍՈՒ ՍԱՐԵՐՆ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպ»-ում 1849 թ. № 6-ում (Մարտի 15), «Նահապետ» ստորագրությամբ։ Լեզվառճական բնույթի զգալի փոփոխություններով արտատպվել է «Նվագքի» Գ հատորի («Հայրունի»), ինչպես առաջին (Վենետիկ, 1858 թ. էջ 238—245), այնպես էլ երկրորդ (Անդ. 1867 թ. էջ 289—296)

հրատարակություններում։ Հետագա արտատպությունների ժամանակ մշտապես օգտագործվել է վերջին հրատարակությունը։ Բանաստեղծությունը գրվել է 1849 թ. մարտի 2-ին։

1. Ակնարկում է Արտավազդի հայտնի լեգենդը, որն առավել անաղարտությամբ պահպանվել է Խորենացու մոտ։ Ըստ այդ լեգենդի, Արտավազդը շղթայակապ բանտված է Մասիսի խոր քարայրներից մեկում։ Հավատարիմ շները զոր ու գիշեր կրծում են նրա շղթաները, որպեսզի Արտավազդը դուրս գա և կործանի աշխարհը։ Բայց դարբինները, խփելով զնդանին, զորացնում են նրա շղթաները, և Արտավազդը մշտապես մնում է շղթայված ու բանտարկված։

2. Տե՛ս «Հայոց աշխարհիկ» № 12-ը։

Տե՛ս «Ողբամ զքեզ, հայոց աշխարհի» № 15-ը։

4. Կոնդ, արմատ։

5. Ծծումբ. ինչպես հայտնի է, այն օգտագործվում է կրակը բորբոքելու համար։

6. Լրիվ ձևը՝ «սարցնել», նեղ տեղում փակել, կաշկանդել։

7. Հենց, հենց որ։

8. Այստեղ՝ ականատես լինել, ասածը հավաստող լինել։

9. Տե՛ս «Հայոց աշխարհիկի» № 5-ը։

ՀՐԱԶԴԱՆ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպի» 1848 թ. № 20-ում (հոկտեմբերի 19) «Նահապետ» ստորագրությամբ։ Լեզվառճական բնույթի որոշ վերամշակումներից հետո զետեղվել է «Նվագքի» Գ հատորի («Հայրունի») ինչպես առաջին (Վենետիկ, 1858 թ. էջ 246—247), այնպես էլ երկրորդ (Անդ, 1867 թ. էջ 297—298) հրատարակություններում։ «Հրազդանը» Ալիշանը գրել է 1847 թ. մայիսի 29-ին։

1. Հարևան («Դրացի» բառի բարբ. քնքշացված ձևը)։

2. Մեն-մենակ, անտեր-անտիրական։

ԾՈՒՇԱՆՆ ՇԱՎԱՐՇԱՆԱ

Առաջին անգամ հրատարակվել է «Նվագքի» առաջին հրատարակության երրորդ՝ «Հայրունի» հատորում (Վենետիկ, 1858 թ. էջ 246—257), ապա՝ լեզվառճական բնույթի որոշ վերամշակումներից հետո զետեղվել է «Հայրունի» հատորի երկրորդ հրատարակության մեջ (Անդ, 1867 թ. էջ 299—308)։ Գրվել է 1857 թ. հոկտեմբերի 18-ին, և, ինչպես վկայում են ժամանակակիցները, եղել է Ալիշանի ամենասիրած գործերից մեկը։

1. Տոտիկներով, ոտիկներով։

2. Ճիշտ ձևը՝ բամբիշ. այստեղ՝ ազնվազարմ օրիորդ։

3. Բողբոջ։

4. Հետք, ոտնաթաթի թողած տեղը։

5. Սահման։

6. Տե՛ս «Հայոց աշխարհիկի» № 15-ը։

7. Դյուրաշարժ, ժիր, ճկուն (Միտ առ Նարեկացու «Ի վարդավառն» բանաստեղծության «Այն ճորտն էր ճօճ եւ ճապուկ» տողը)։

8. Լրաբեր, թարմ լուր բերող։

9. Փեսայի մոտիկ ընկերը, փեսաղբեր։

10. Գահ։

11. Հրամայես, կարգադրես։

12. Տե՛ս «Հայոց աշխարհիկի» № 12-ը։

13. Բայց, իսկ։

14. Լույս շողալ, լույս կաթել. կամենում է ասել, որ Սանդուխտի վրա շողացող սրի՝ ընդամենը մեկ փայլի փոխարեն, նրա վրա արդարության նաև երեք ուրիշ լույս էր շողում.

15. Նկատի ունի Սանատրուկ լեռը, որի անունն էլ կրում էր թագավորը։

ՊԼՊՈՒԼՆ ԱՎԱՐԱՅՐԻ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպի» 1847 թ. № 19-ում (հոկտեմբերի 1), «Նահապետ» ստորագրությամբ։ Արտատպվել է «Նվագքի» Գ հատորի («Հայրունի») ինչպես առաջին (Վենետիկ, 1858 թ. էջ 258—280), այնպես էլ երկրորդ (Անդ. 1867 թ. էջ 309—332) հրատարակություններում, զգալի փոփոխումներով։ Ալիշանի գործերից թերևս միակն է, որի վրա նա աշխատել է շատ երկար, հիմնավորապես փոփոխել է ամբողջ քառյակներ, ավելացրել է նորերը և այլն։ Գրվել է 1847 թ. հունիս-հուլիս ամիսներին։

1. Ինչպես, որպես։

2. Բարեխոսող, երգող։

3. Տե՛ս «Հայոց աշխարհիկի» № 6-ը։

4. Գորովագութ, գթոտ, սիրառատ։

5. Ակնարկված է հարդագողի ճանապարհը։

6. Կողմ։

7. Անքննելի, անբացատրելի, անմեկնաբանելի։

8. Արշավասույր իջնել, թափով ցած գալ։

9. Փող զարկել, փող հնչեցնել։

10. Ընդդիմադիր, խափանարար, ապստամբ։

11. Անառակ, ցանկասեր, վավաշոտ։

12. Հետևակ զորքը, հետևակայինները։

13. Երիտասարդ, ջահել։

14. Ճիշտ ձևը՝ գարգափումն. դղրդոց, թիկթիկոց։

15. Մաթել, խավարել. «Շունչը քաղվիլ». շունչը կտրվել, մահանալ։

16. Տապաստել. գետնով տալ, գետնին փռել, կործանել։

17. Աչք գցեց, նայեց։

18. Արագորեն փախչել, փութով հեռանալ, ճողոպրել։

19. Տե՛ս «Հայոց աշխարհիկի» № 11-ը։

20. Ինչպես պոեմի սկզբնական հատվածներում, այնպես էլ այստեղ Ալիշանը Վարդան Մամիկոնյանի և Եղիշեի կապակցությամբ մեջ է բերում կենսագրական

բնույթի ուշագրավ փաստեր, որոնք Եղիշեի «Վարդանանց պատմության» մեջ չկան։ Աղբյուրը՝ հանրահայտ «Ճառընտիրն» է, (Վենետիկ, 1722 թ., ճառ Ի, մասնագիտական գրականության մեջ հայտնի է «Եղիշեի ավանդական կենսագրություն» անունով), որի հաղորդած տվյալները այսօրվա բանասիրությունն ընդունում է որոշ վերապահությամբ։

21. Սանձից պոկված, սանձազերծված։
22. Պիրկ, ջղուտ։
23. Թարթավել. ընկղմվել, մխրճվել։
24. Ճիշտ՝ ձեր՝ մեղուշ. դուրեկան, քնքուշ։
25. Վա՜հ, ինչպե՜ս թե (բացականչ.)։
26. Բերանը օդով լի, այտերն ուռեցրած։
27. Տե՛ս «Հայոց աշխարհիկի» № 14-ը։

ՎԵՐՋԻՆ ԵՐԳ ՎԻՐԱՎՈՐ ԲԱՅԲՈՒԱՀԱՐԻՆ

Առաջին անգամ հրատարակվել է «Նվագքի» երրորդ՝ «Հայրունի» հատորի երկրորդ հրատարակության մեջ (Վենետիկ, 1867 թ. էջ 333—334)։ Բանաստեղծության գրության թվականն անհայտ է և ենթադրաբար կարելի է ասել, որ գրվել է 1848—49 թվականներին։

1. Տե՛ս «Հայոց աշխարհիկի» № 4-ը։
2. Փոքրիկ վահան, որ կռվողները կրում են իրենց ձախ թևի վրա (ճիշտ ձևը՝ ասպար)։
3. Տե՛ս «Հայ հայրենիքի» № 9-ը։

ԱՇՈՏ ԵՐԿԱԹ Ի ԾՈՎՈՒՆ ՍԵՎԱՆԱ

Առաջին անգամ հրատարակվել է «Նվագքի» երրորդ՝ «Հայրունի» հատորի առաջին հրատարակության մեջ (Վենետիկ, 1858 թ. էջ 281—287), ապա, լեզվաոճական բնույթի որոշ վերամշակումներից հետո գետեղվել է «Նվագքի» երկրորդ հրատարակության երրորդ հատորում (Վենետիկ, 1867 թ. էջ 335—341)։ Բանաստեղծության գրության թվականն անհայտ է։

1. Վատել. տկարանալ, թառամել։
2. Ուժեղ, զորավոր, խիզախ։
3. Կողմ (Տե՛ս «Հայ հայրենիքի» № 6-ը)։
4. Խփել, շրխկացնել։
5. Քարից, մետաղից կամ փայտից պատրաստված կլոր և ծանր առարկա, որը հատուկ հարմարանքի՝ պարսի (փոքրացված ձևը՝ պարսեռ, պարսատիկ), միջոցով նետում են թշնամու վրա։
6. Թաքստոց, ապաստարան։
7. Թակարդ, որոգայթ։
8. Պատասխան. «Պացիրուն մի չերետ» պատասխան չտվից, չպատասխանեց։
9. Զարմանաք (բարբ. անորոշ ձևը՝ արմքնալ)։

10. Սեանս լճի հարավում գտնվող ավան, որի կողմից, կղզու ուղղությամբ հանախ փչում է ուժեղ քամի։ Ավանի անունով քամին էլ կոչվում է (Սոթեր)։

11. Կրակից ստեղծված, հրաձույլ։

ՀԱՅ ՀԱՆՃԱՐ

Առաջին անգամ հրատարակվել է «Նվագքի» Գ հատորի («Հայրունի») երկրորդ հրատարակության (Վենետիկ, 1867 թ. էջ 342—345) մեջ։ Գրվել է 1863 թ. հուլիսի 5-ին։

1. Տարբեր ազգերից, զանազան ցեղերից։

2. Մնալու տեղ, պահվելու վայր, քարակերտ թաքստոց։

ԼՈՒՍՆԿԱՅՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՑ ՀԱՅՈՑ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպի» 1858 թ. № 4-ում (ապրիլ), ապա արտատպվել է «Նվագքի» առաջին հրատարակության՝ երրորդ, «Հայրունի» հատորում (Վենետիկ, 1858 թ. էջ 288—298)։ Լեզվաոճական զգալի փոփոխումներով՝ զետեղվել է «Հայրունի» հատորի երկրորդ հրատարակության մեջ (Վենետիկ, 1867 թ. էջ 346—356)։ Հրատարակելով բանաստեղծությունը «Բազմավեպի» խմբագրությունը կցել է մի փոքրիկ ծանոթագրություն, որտեղ առաջին անգամ պաշտոնապես հավաստվում է, որ «Նահապետ» կեղծանունը իսկապես պատկանում է Ղևոնդ Ալիշանին։

1. Թանկարժեք մնացորդ, մասունք։

2. Շարժիս, ցնցես։

3. Տե՛ս «Հայոց աշխարհիկի» № 15-ը։

4. Կլոր, շրջանաձև։

5. Հետևից. «Հետանց ծառերուն» նշ.՝ ծառերի հետևից։

6. Տե՛ս «Հայոց աշխարհիկի» № 14-ը։

7. Հեհարան, նեցուկ։

8. Պատիվ, տոնախմբություն, հանդիսություն։

9. Ինչպես, նման։

10. «Ընշանց տալ»— ցույց տալ, մատնացույց անել։

11. Տե՛ս «Պլպուլն Ավարայրի» № 1-ը։

12. Այստեղ՝ շատացնք, առատացնք։

Ի ՆԱԽԱԳԱՀՆ ՄԱՍԻՍ

Առաջին անգամ հրատարակվել է «Նվագքի» երրորդ հատորի առաջին հրատարակության մեջ («Հայրունի», Վենետիկ, 1858 թ. էջ 39—43), ապա, նույնությամբ արտատպվել է նույն հատորում, նրա երկրորդ հրատարակության ժամանակ (Անդ, 1867 թ. էջ 39—43)։ Երկու հրատարակություններում էլ գրության թվականը նշված է 1848, հայտնի է նաև գրության ամիսն ու օրը՝ մայիսի 31։

1. Երկրի ամենից ավելի տարեցը, ամենաավագը։

2. Ավելի կիրառելի՝ Իսկուհի (Ալիշանն օգտագործել է գրաբարյան հազվագյուտ ձևը). Տիրուհի, մեծարգո կին, դժխու։

3. Իմա՝ ամպ։

4. Անորոշ ձևը՝ աղիճ (հազվագյուտ՝ աղիջ)— մանկամարդ աղջիկ, նաժիշտ, կույս աղջիկ։

5. Ավելի ծանոթ ձևը՝ ստունգանել (Ալիշանն օգտագործել է գրաբարյան հազվագյուտ ձևը) անտեսել, արհամարհել, կարևորություն չտալ։

6. Իմա՝ երասխ. նույնն է Արաքս, Արազ։

7. Իմա՝ աստիճան. նախորդ դեպքերի նման Ալիշանն այստեղ էլ օգտագործել է գրաբարյան քիչ կիրառվող ձևը։

8. Շրջանաձև ալիքներով կենտրոնից հեռացող, կենտրոնից դեպի եզերքները կլոր ձևով բացվող։

ՔԱՋԱԿՈՐՈՎՆ ՄՈՒՇԵՂ Ի ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ ԶԻՐԱՒԱՅ

Առաջին անգամ հրատարակվել է «Նվագքի» առաջին հրատարակության երրորդ՝ «Հայրունի» հատորում (Վենետիկ, 1858 թ., էջ 98—101), «Ճակատամարտ Զիրաւայ եւ քաջակորովն Մուշեղ» վերնագրով։ Լեզվառճական որոշ մշակումներից հետո և նոր վերնագրով (տե՛ս վերևում) զետեղվել է «Հայրունի» հատորի երկրորդ հրատարակության մեջ (Անդ, 1867 թ. էջ 100—103)։ Բանաստեղծության գրության թվականը չհաջողվեց ճշտել։

1. Աշխետ, մոխրագույնին տվող սպիտակ։

2. Իմա. հսկայաքայլ։

3. Ավազակ, ելուզակ։

4. Նաև՝ գղջիկ, որ հանդիպում է ավելի հաճախակի. նիզակի կամ նետի պոչը, նրանց փայտամասը։

5. Նաև՝ Որմզդական հուր. սրբազան համարվող կրակ, որը պարսկական մեհյաններում պահվում էր անշեջ և որին երկրպագում էին։

6. Նկատի ունի Նպատ լեռը, որի վրայից հայկական ավագանին և հոգևոր դասը հետևում էր Զիրավի ճակատամարտին։

7. Տե՛ս «Ողբամ զքեզ, հայոց աշխարհ» № 2-ը։

8. Վանդել. արտաքսել, հալածել, վանել։

9. Փայլփլել, փայլ արձակել, հուրհրալ (անորոշը՝ ճողճել)։

ԵՐԳ ՈՒ ԳՆԱՑՔ ՋՕՐԱՑՆ ՀԱՅՈՑ...

Բանաստեղծությունը առավել հայտնի է իր առաջին տան առաջին երկու բառերով՝ «Բա՜մ. փորոտան»։ Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպի» 1850 թ. № 6-ում (մարտի 15), «Հ. Ղ. Մ.» ստորագրությամբ, որ նշանակում է Հայր Ղևոնդ Մարգարյան։ Ալիշանի հայրը երկու անուն ուներ՝ Պետրոս-Մարգար, և նույնիսկ պաշտոնական գրագրություններում գրվում էր Պետրոս-Մարգար Ալիշան ձևով։ Այս էր պատճառը, որ սկզբնական շրջանի իր գործերը Ալիշանը ստորագրում էր Հ[այր] Ղ[ևոնդ] Մ[արգարյան], իսկ եղբայրը՝ Սերովբեն, Սերովբե Պետրոսյան։

Բանաստեղծությունը լեզվաոճական զգալի փոփոխություններով արտատպվել է «Նվագքի» առաջին հրատարակության երրորդ՝ «Հայրունի» հատորում (Վենետիկ, 1858 թ. էջ 111—116), և ապա, նույն «Հայրունի» հատորի երկրորդ հրատարակության մեջ (Վենետիկ, 1867 թ. էջ 115—120)։ Գրվել է 1849 թ. հոկտեմբերի 26—27-ին, Իտալական ազգային հեղափոխության և Վենետիկում ծայր առած հերոսամարտերի թարմ տպավորության ներքո։ 1850-ական թվականներին այն երգի է վերածել Վենետիկի Ռափայելյան վարժարանի երաժշտության իտալացի դասատու Պիետրո Բիանկինին։ Բանաստեղծությունն ընդհանուր առմամբ, իսկ նրա առաջին տունը՝ մասնավորապես, բազում անգամ վերահրատարակվել է զանազան ժողովածուներում, ալմանախներում և երգարաններում։

1. Բո՛մ, որոտում են (հեղինակը «Բո՛մբ» նմանեցնում է թմբուկ խփելու ձայնին)։
2. Հրի նման բորբոքված, կրակի նման մոլեգնած։
3. Անորոշը՝ ճուճաղ. դժոխք։
4. Սանդարամետում բնակվող չար ոգիները, չարքերը։
5. Օդում, եթերում (օգտագործված է այդ բառի գրաբարյան հազվադեպ կիրառվող ձևը)։
6. Ընկրկել, հետ քաշվել, փախուստի դիմել։
7. Այստեղ՝ ոտնատեղերը, իրենց թողած հետքերը։
8. Բազմությամբ վրա տալ, խմբով հարձակում գործել։
9. Կումբ. վահանի կենտրոնական ուռուցիկ մասը։
10. Ջլապինդ, ամուր, պիրկ։
11. Նախճիր, խառնամբոխ, խաժամուժ։
12. Ոտքերը կապ ընկնելով, ոտքերը գիակներին փաթաթելով («Տոռն» նշ. պարան, հաստ թել)։
13. Աղեղնավորնե՛ր, աղեղնավո՛ր զինվորներ (հրամ.)։

Ի ԾՈՎԱԿԷ ԲԵՆԱԿԱՑ ԱՌ ԾՈՎԱԿՆ ԳԵՂԱՄԱՑ

Առաջին անգամ հրատարակվել է «Նվագքի» առաջին հրատարակության երրորդ՝ «Հայրունի» հատորում (Վենետիկ, 1858 թ. էջ 193—194)։ Նույնությամբ արտատպվել է նույն հատորի երկրորդ հրատարակության մեջ (Անդ, 1867 թ. էջ 194—195)։ Բանաստեղծությունը գրվել է 1856 թ. հուլիսի 5-ին։

1. Բենակ լիճը (ավելի հայտնի Գարդա անունով. Ալիշանն օգտագործել է պատմական անվանումը) գտնվում է Հյուսիսային Իտալիայում, Լոմբարդիայի և Վենետիկի մարզերի միջև և իր լեռնային բնույթի ու ալպիական կլիմայի պատճառով գասվում է Իտալիայի լավագույն հանգստավայրերի շարքը։
2. Հողալ. Ալիշանն օգտագործել է գրաբարյան քիչ կիրառվող ձևը։
3. Արշալույսի. անորոշը արշալուրշ, արշալուշ։
4. Քրոջը. ըստ Ագաթանգեղոսի, Տրդատ թագավորը վերակառուցեց Գառնին, դարձնելով այն ամրակուռ բերդ և ամառային հանգստատեղի և նվիրեց իր քրոջը՝ Խոսրովդուխտին։
5. Ակնարկում է հայ և վրաց միացյալ բանակների ճակատամարտը Իվանե Աթաբեկի գլխավորությամբ, 1225 թ. Խորեմի շահ Ջալալեդդինի զորքերի դեմ,

որի հետ կապվում էին գիվանագիտական մեծ հույսեր։ Այդ ճակատամարտում, սակայն, հայկական և վրացական միացյալ բանակները պարտվում են։

6. Ակնարկում է իրեն ուղեկցող շոգենավը։

ԱՌ ՀԱՐԱԶԱՏՆ ԻՄ, ԾՈՎԱՀՎԵԼՈՎ ԱՄԵՐԻԿԱ

Առաջին անգամ հրատարակվել է «Նվագքի» երկրորդ՝ «Մաղթունի» հատորի առաջին հրատարակության մեջ (Վենետիկ, 1857 թ. էջ 39—44), ապա, նույնությամբ, տեղ է գտել դարձյալ «Մաղթունի» հատորում, նրա երկրորդ հրատարակության ժամանակ (Վենետիկ, 1885 թ. էջ 34—40)։ Ամենուրեք ունի 1845 թ. նշումը։

Ինչպես հայտնի է, Ղևոնդ Ալիշանի կրտսեր եղբայրը՝ Սերովբե Ալիշանյանը (1822 թ. Պոլիս— 1903 թ. Անդ) 1845 թ. Պոլսից մեկնեց Ամերիկա, բնակություն հաստատեց նախ՝ Վաշինգտոնում, ապա Բոստոնում, և նոանդուն մասնակցություն ունեցավ տեղի հայկական համայնքի կյանքին։ Մասնագիտանալով դրամագիտության մեջ, 1847 թ. նա վերադարձավ Պոլիս՝ արդեն որպես ճանաչված դրամագետ և այդ բնույթի ուշագրավ հոդվածներով սկսեց հանդես գալ հայկական պարբերականներում։ Որպես այդ գործի քաջագիտակը, եղել է եվրոպական մի քանի դրամագիտական ընկերությունների պատվավոր անդամ։ Ղևոնդ Ալիշանի ինչպես այս, այնպես էլ հաջորդ՝ «Առ նույն» բանաստեղծությունը գրված է եղբորից բաժանվելու առիթով։

1. Տե՛ս «Հայոց աշխարհիկի» № 11-ը։
2. Ակնարկում է եղբոր՝ Պոլսից հեռանալը։
3. Կողմերից։
4. Փոթորիկ, ամպրոպ (հմմտ. ռուս. ураган)։
5. Ինձ։
6. Այն նավի անունն է, որով Ամերիկա էր ուղևորվում Սերովբե Ալիշանյանը։
7. Ի՛մ. Նյու-Յորք։
8. Առագաստ, լաթ։
9. Քրտնաշաղախ, քրտինքով պատված։

ԱՌ ՆՈՒՅՆ

Առաջին անգամ հրատարակվել է «Նվագքի» երկրորդ՝ «Մաղթունի» հատորում (Վենետիկ, 1857 թ. էջ 44—48), ապա նույնությամբ՝ նույն հատորի երկրորդ հրատարակության մեջ (Անդ, 1885 թ., էջ 39—43)։ Ամենուրեք ունի 1846 թ. նշումը։ Նվիրված է եղբորը՝ Սերովբե Ալիշանյանին, որն այդ ժամանակ գտնվում էր Ամերիկայում (Տե՛ս նախորդ բանաստեղծության ծանոթագրությունը)։

1. Միջանկյալ արգելք, երկուսի միջև կանգնած խափանիչ։
2. Տե՛ս «Առ հարազատն իմ...» բանաստեղծության № 3-ը։
3. Շարժումով։
4. Նկատի ունի եղբորը՝ Սերովբե Ալիշանյանին։
5. Իմ. անհպելի. անհասանելի, անմերձենալի։
6. Աղի-լեղի վայր, աղակալած տեղ։
7. Մեծած կտավհատի ծղոնը, հարդը։
8. Դիմում է, ազաչնորդվում է։

ԱՆՈՓԻ ՈՐՍՈՐԴ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավէպի» 1853 թ. № 15-ում (օգոստոսի 1), «Հ. Ղ. Ալ.» (իմա. Հայր Ղևոնդ Ալիշան) ստորագրությամբ։ Նույնությամբ արտատպվել է «Նվագքի» երկրորդ հատորի («Մաղթունի») ինչպես առաջին, (Վենետիկ, 1857 թ. էջ 142—146) այնպես էլ երկրորդ (Անդ, 1885 թ. 130—134) հրատարակություններում, առանց գրության թվականի։

1. Ավազան, ջրավազան։
2. Տե՛ս «Ողբամ զքեզ, հայոց աշխարհի» № 2-ը։
3. Ինչպես, որպես։
4. Տե՛ս «Պլպուլն Ավարայրիի» № 15-ը։
5. Ավելի կիրառվող ձևը՝ օրհասարակ. նշ.՝ ցերեկ։
6. Արևը մայր մտնելուն նախորդող պահը, իրիկնապահ։
7. Ժուռ գալ. շրջել, թափառել։
8. Տե՛ս «Պլպուլն Ավարայրիի» № 15-ը։
9. Այսինքն՝ խելքովդ պարծեցող, խելքիդ ճկունությամբ հպարտացող։
10. Ջարալեզու, նետի պես խոցող լեզու ունեցող։
11. Վնաս, աղետ. «զեան բերել» նշ.՝ վնաս տալ, աղետ պատճառել։
12. Այսինքն՝ անգործ-անբան, պարապ-սարապ։
13. Փոքր ձորակ, երկու լեռների միջև սեղմված նեղ հարթություն։

ԱՂԳԱՑԻՆ ԵՐԳԵՐՈՒ ԵՎ ՈՒՐԻՇ ԱՎԱՆԴՆԵՐՈՒ ՎՐԱ

Հոդվածաշարը, ինքնուրույն հոդվածների ձևով հրատարակվել է «Բազմավէպի» 1843 թ. № 21 (նոյեմբերի 1), 1845 թ. № 7 (ապրիլի 1), և № 16 (օգոստոսի 5), 1847 թ. № 6 (մարտի 15) և № 17 (սեպտեմբերի 1), 1848 թ. № 6 (մարտի 15), և № 10 (մայիսի 15) և վերջապես, № 22 (նոյեմբերի 15)-ում։ Հոդվածների մեծ մասն ունի «Հ. Ղ. Մ.» ստորագրությունը (Տե՛ս «Երգ ու գնացք գօրացն Հայոց...» բանաստեղծության ծանոթագրությունը), և միայն վերջինն է, որ նշված է հանրածանոթ «Նահապետ» ձևով։ Չնայած հոդվածների համեմատաբար ինքնուրույն բնույթին, բոլորը մի ընդհանուր ամբողջություն են կազմում։

1. Ակնարկված է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» հատկապես Առաջին գիրքը (Հայոց մեծերի ծննդաբանությունը»), որը շարադրելու համար Պատմահայրը լայնորեն օգտվել է ժողովրդական ավանդություններից (Հայկ-Բել, Արա Գեղեցիկ-Շամիրամ, Արտաշես-Սաթենիկ, Տորք Անգեղ և այլն)։ Հայտնի է Խորենացու՝ ավանդությունների նկատմամբ ունեցած միանգամայն գիտական մոտեցումը, որ նրանք «իրենց մեջ այլաբանաբար ճշմարտությունն են թաքցնում»։

2, 3, 4. Այս բանաստեղծություններն անգլերեն թարգմանությամբ և իրենց հայերեն բնագրերի հետ համատեղ, Ալիշանը զետեղել է իր կազմած և ծանոթագրած «Հայոց երգք ռամկականք» ժողովածուում (Վենետիկ, 1852 թ. էջ 13—24, 53—55)։ Մեզ մոտ դրանք բերված են կրճատումներով։

5. Նկատի ունի իր հոդվածը, որը հրատարակվել է «Բազմավեպի» 1843 թ. № 21 (նոյեմբերի 1)-ում։ Ներկա հոդվածաշարում այն կազմում է առաջին հատվածը։

6. Գալուստ Շիրմազանյան (նաև՝ Շիրմազանյան-Վարդանյանց. 1812—1891 թթ.)— Պատմաբան-բանասեր, բանահավաք, թատերական գործիչ։ Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան հայոց դպրոցը և մի շարք պաշտոններ վարելուց հետո 1864 թ. ընտրվել է Թիֆլիսի քաղաքագլուխ։ Շիրմազանյանի տանը, դեռ 1840-ական թվականներից, գործում էր կամավոր սկզբունքներով ստեղծված թատերական ինքնագործ մի խումբ, հանրահայտ «Շիրմազանյանի դարպասը» որտեղ տրվում էին հայերեն ներկայացումներ և խաղացվում էին հենց իր՝ Շիրմազանյանի պիեսները, որոնք, ժամանակակիցների վկայությամբ, նշանակալից ընդունելության էին արժանանում։ Մինչև իր կյանքի վերջը Շիրմազանյանը պատմա-բանասիրական բնույթի հոդվածներով շարունակում էր թղթակցել «Բազմավեպին» և համապատասխան բնույթի նյութեր ուղարկելով՝ օգնել Մխիթարյան միաբանության հեղինակներին։

7. Տե՛ս 2, 3, 4 ծանոթագրությունը։

8. Գրիգոր Նարեկացու բանաստեղծությունները սկզբնական շրջանում կոչվել են «երգեր»։ Դրա ապացույցն է, օրինակ, «Քառասնիցն» ոտանավոր-ակրոստիքոսը, որի տների առաջին տառերը («Մայրակապը») կազմում է «Գրիգորի է երգս այս» իմաստը։ Հետևելով իրենց այդ սկզբնական ձևին, Ալիշանը ևս նրանց կոչել է «երգեր»։ Մեր դասականի բանաստեղծությունների «Տաղ» անվանումը սկսվել է 13-րդ դարից։

9. Նկատի ունի Գրիգոր Նարեկացու «Տաղ հարության» և «Տաղ ծննդյան» բանաստեղծությունները և բերված է նրանց առաջին տողերը։

10. Ավելի ճիշտ՝ Ազբար-Ադամ («Ազբար» նշ.՝ բերանացի, անգիր)։ 19-րդ դարասկզբի հայ աշուղ, որի հայերեն և ադրբեջաներեն երգերը լայնորեն երգվում էին ժամանակին և հրատարակվում այլևայլ պարբերականներում ու ժողովածուներում։ Մնվել է 1816 թ. Փարաքյար գյուղում, ապա գալով Երևան, օրվա ապրուստը հոգալու համար սկսում է զբաղվել կոշկակարությամբ։ Մահացել է 1844 թ. Երևանում։

11. Այստեղ և նախորդ մի քանի դեպքերում, Ալիշանը հայկական ժողովրդական երգերը համեմատում է Նարեկացու ու Շնորհալու ստեղծագործությունների հետ և հաճախ պնդում, որ այդ երգերը ամբողջ հայ գրականության մեջ հավասարազորը չունեն և այլն։ Այս չափազանցությունը հասկանալի կըգառնա, եթե չմոռանաք, որ նախ՝ ժողովրդական այդ բառ ու բանն առաջին անգամն էր ներկայացվում հայ ընթերցող և գիտական հասարակայնությանը և ապա՝ Ալիշանն այն ներկայացնում էր, հակադրվելով ժամանակի տիրող մտայնությանը, ըստ որի դրանք սոսկ «ռամկական» ստեղծագործություններ են և հետևաբար զուրկ են որևէ արժեքից։ Որոշ, հասկանալի այս չափազանցությունները, իհարկե, հետագայում Ալիշանն ուղղեց (Տե՛ս «Հուշիկք հայրենյաց հայոց» հատ. Բ, Վենետիկ, 1921 թ., էջ 93—114, «Ազգային վիպասանություն» գլուխը)։

12. Այս քառյակն ունի «Նահապետ» ստորագրությունը։

ԱՄՍՕՑ ԲՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

Գեղարվեստական մանրապատումների այս շարքը հատվածաբար սկսում է հրատարակվել «Բազմավեպում», 1845 թ. № 7 (ապրիլի 1), № 9 (մայիսի 1), № 11 (հունիսի 1), № 13 (հուլիսի 1), № 15 (օգոստոսի 1), № 17 (սեպտեմբերի 1), № 20 (հոկտեմբերի 15), № 21 (նոյեմբերի 1), և № 23 (դեկտեմբերի 1)-ում, այսինքն, յուրաքանչյուր մանրապատում լույս է տեսել տվյալ ամսվա սկզբին։ ունի «Հ. Ղ. Մ.» ստորագրությունը (Տե՛ս «Երգ ու գնացք զօրացն Հայոց...» բանաստեղծության ծանոթագրությունը)։ Մանրապատումներից յուրաքանչյուրին «Բազմավեպում» հաջորդում է նույն այդ թեմային նվիրված գրաբար մի բանաստեղծություն որոնք հետագայում ի մի բերելով և ենթարկելով լեզվաոճական որոշ մշակման, Ալիշանը զետեղել է «Նվագքներին» առաջին՝ «Մանկունի» հատորում (Վենետիկ, 1857 թ. էջ 133—148), «Պատկերք ամսոց» խորագրով։ Այս գրաբար բանաստեղծությունները մենք դուրս ենք թողել։

1. Մինչև քսաներորդ դարի առաջին տասնամյակը Թուրքական ժամանակը եվրոպականի համեմատությամբ վեց ժամով հետ էր։

2. Նկատի ունի ամառային արևադարձը, այսինքն՝ գարնան վերջի ամենաերկար օրը, որը և համարվում է ամռան սկիզբը։

3. Ալիշանն այստեղ բերել է նույն բառի գրաբարյան թիչ կիրառվող բանաձևը։

4. Բերված է հայկական բառերի Թուրքերեն համարժեքները։

5. Հայերեն՝ պուտ, կամ ծափկոտրուկ. ուղղաձիգ ցեղունով և ապիտակ, գեղեցիկ ծաղիկով բույս։ Ալիշանը բերել է հունարեն անվանումը։

ԹԵ ՈՎ Է ՏՂՈՑ ԱՄԵՆԵՆ ՍԻՐԵԼԻ, ԶՈՐԱՎԱՐ...

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպի» 1845 թ. № 11 (հունիսի 1)-ում, «Հ. Ղ. Մ.» ստորագրությամբ (Տե՛ս «Երգ ու գնացք զօրացն Հայոց...» բանաստեղծության ծանոթագրությունը)։

1. Այստեղ և հետագայում «վարպետ» բառը գործածված է այժմյան «ուսուցիչ» իմաստով։ Արևմտահայ մի շարք հեղինակների նման, Ալիշանն էլ, բառացի թարգմանությամբ, օգտագործել է ֆրանսիական le maître *բառը։*

2. Տե՛ս, Платон. «Государство» *(«Сочинение в трёх томах, т. 3; М., 1971,* стр. *212—217)։ Ալիշանն անկասկած, ձեռքի տակ է ունեցել Պլատոնի՝ հիշյալ աշխատության հունարեն բնագիրը, քանի որ 1845 թվականին, այսինքն հոդվածի գրության ժամանակ, Մխիթարյանները Պլատոնի գործերից դեռ ոչինչ չէին թարգմանել։*

ԱՄԵՆԱՀԱՐԿԱՎՈՐ ՈՒՍՄՈՒՆՔ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպի» 1846 թ. № 11 (հունիսի 1)-ում, «Հ. Ղ. Մ.» ստորագրությամբ (Տե՛ս «Երգ ու գնացք զօրացն Հայոց...» բանաստեղծության ծանոթագրությունը)։

1. Նկատի ունի հոների թագավոր Աթիլլային։ Ինչպես հայտնի է, նրա հետ առաջին անգամ խաղաղության բանակցություններ սկսեց վարել Լևոն Առաջին պապը և կարողացավ հաջողության հասնել։

2. Տե՛ս Ա. Աբրահամյան. «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», Երևան, 1956։ Այնշանը ցիտատը բերել է Իմաստասերի «Հաղագս խրատու մանկանց...» աշխատությունից։

ԾԱՆԻՐ ԶՔԵԶ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպի» 1847 թ. № 5 (մարտի 1) և № 6 (մարտի 15)-ում, «Հ. Ղ. Մ.» ստորագրությամբ (Տե՛ս «Երգ ու գնացք զօրացն Հայոց...» բանաստեղծության ծանոթագրությունը)։

1. Ինչպես ավանդում է Պլատոնը, «Ծանիր զքեզ» («Ճանաչիր քեզ») արտահայտությունը գրված էր Հունաստանի Դելֆիք քաղաքում գտնվող Ապոլլոնի տաճարի ճակատին։

2. Գրիգոր Աստվածաբան-Նազիանզացի (II դար)— եկեղեցական պատմություն, մատենագետ։ Ուսումն առել է ժամանակի գրեթե բոլոր նշանավոր կենտրոններում (Կեսարիա, Պաղեստին, Ալեքսանդրիա, Աթենք) և գալով իր հայրենի Նազիանզա (Տիշտ ձեր՝ Անձիանձա) քաղաքը, ձեռնադրվել է հոգևոր առաջնորդ։ Նրա մի քանի ճառերից օգտվել է Մովսես Խորենացին իր «Հայոց պատմությունը» գրելիս։

3. Ինճիճյան Ղուկաս (1758—1833)— Վենետիկի Մխիթարյան միաբանության նշանավոր անդամներից, պատմաբան-բանասեր, աշխարհագրագետ, բանաստեղծ, խմբագիր։ Հիշարժան են նրա «Ազգասեր» (Վենետիկ, 1815 թ.), «Ստորագրություն հին Հայաստանյայց» (Անդ, 1822 թ.), «Դարապատում» (Անդ, 1825—1828 թթ., ութ մեծադիր հատորներ), «Հնախոսություն Հայաստանյայց աշխարհի» (Անդ, 1835 թ., երեք մեծադիր հատորներ) և այլ գործերը, որոնց գերակշիռ մասը, իր գիտական արժեքն ու նշանակությունը պահպանում է առ այսօր։ Սկսած 1808 թ. Ինճիճյանը Վենետիկում հիմնում է «Եղանակ Բյուզանդյան — բազմավեպ» խորագիրը կրող տարեգիրքը, որը նրա խմբագրությամբ հրատարակվում է մինչև 1820 թվականը (ընդհատումներով)։

4. Դրոզ, Ֆրանսուա-Քսավյե Յոզեֆ (1773—1850)— Ֆրանսիացի արձակագիր, բարոյագետ։ Նրա աշխատություններից՝ «Հռետորական արվեստի ուսումնասիրություն» (Փարիզ, 1799 թ.), «Երջանիկ լինելու արվեստի ուսումնասիրություն» (Անդ, 1806 թ.), «Ուսումնասիրություն գեղեցիկի մասին արվեստի մեջ» (Անդ, 1815 թ.) և ուրիշները գեղագետ-քննադատի հռչակ բերեցին նրան։ Դրոզի գեղագիտական ու բարոյագիտական տեսակետները ընդունում էին նաև Մխիթարյանները, որոնք հաճախ էին վկայակոչում նրան։

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ ԵՎ ԻՐ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպի» 1847 թ. № 10-ում (մայիսի 15), «Հ. Ղ. Մ.» ստորագրությամբ (Տե՛ս «Երգ ու գնացք զօրացն Հայոց...» բանաստեղծության ծանոթագրությունը)։

1. Խորենացու ծննդյան հիշատակված թվականը և մանավանդ նրա ապրած տարիները բանասիրությունն այսօր որոշ զգուշավորությամբ է ընդունում։ Ընդունված կարծիքն այն է, որ Պատմահայրը «ծնվել է 410 թվականի մոտ», իսկ նրա մահը «տեղի է ունեցել նույն դարի իննսունական թվականներին» (Տե՛ս Մ. Խորենացի, «Հայոց պատմություն» (հրատ. Ստ. Մալխասյանց), Երևան, 1940 թ. էջ XI, XXII).

2. Ըստ ճշտված տեղեկությունների, Խորենացին իր ուսման թերին լրացնելու համար հիմնականում սովորել է Ալեքսանդրիայում, իսկ հողվածում հիշատակված մյուս վայրերում եղել է իր ճանապարհորդության ընթացքում։

3. Կյուրեղ Ալեքսանդրիացի (վախճ. 444 թ.), հույն նշանավոր մատենագիր, հոգևորական-մշակութային գործիչ։ Ստացել է իր ժամանակի համար փայլուն կրթություն, հատկապես անտիկ գրականության, աշխարհիկ գիտությունների և աստվածաբանության բնագավառում։ 32 տարի (412—444) վարել է Ալեքսանդրիայի պատրիարքությունը, որտեղ աչքի է ընկել գրականությանն ու մատենագիտությանը խրախուսելու իր ջանքերով։ Ալեքսանդրիացու գործերի ժողովածուն հրատարակվել է 1508 թ. Փարիզում, դրանից էլ կատարվել է հայերեն թարգմանություններ, որը լույս է տեսել 1712 թ. Պոլսում, «Գիրք պարապմանց» խորագրով։ Ընդհանրապես՝ նրա մատենագիտական և կրոնական բնույթի աշխատությունները հայերեն թարգմանվել են դեռևս 8-րդ դարում։

4. Պապ Ալեքսանդրիացի (III դար) հույն աշխարհագրագետ-երկրաչափ։ Առաջին անգամ գիտաաշխարհագրական քննության ենթարկեց Պտղոմեոս Կլավդիոսի «Ալմագեստը» (տե՛ս ստորև) և տվեց երկրագնդի նոր չափագրությունը։ Տվել է իր ժամանակաշրջանի մի շարք աշխարհագրական վայրերի տեղագրությունը։ Նրա աշխատությունները մեզ չեն հասել։

5. Պտղոմեոս Կլավդիոս (II դար)— եգիպտացի աստղաբաշխ, մաթեմատիկոս, աշխարհագրագետ։ Ապրում ու գործում էր Ալեքսանդրիայում։ Ժամանակի աստղաբաշխական-երկրաչափական գիտելիքների ամրողջացումը հանդիսացող նրա աշխատությունը (հայտնի է «Ալմագեստ» անունով, 13 գիրք), նրա «Աշխարհագրությունը», որի ութ գրքերն էլ հասել են մեզ, մեծ արժեք են ներկայացնում նույնիսկ այսօր։ Հեղինակը տալիս է երկրագնդի վրա գտնվող մինչև ութ հազար վայրերի (որոնց թվում նաև՝ Պատմական Հայաստանի տարածքում գտնվող կետերի) գիտաաշխարհագրական նկարագրությունն ու բնութագիրը, օգտագործելով քարտեզագրական իր մշակած սիստեմը, որը մեր օրերում էլ մնում է ուժի մեջ և հայտնի է «Պտղոմեոսյան սիստեմ» անունով։ Գրել է նաև աշխատություններ մեխանիկայի վերաբերյալ, որոնք մեզ չեն հասել։

6. Այստեղ և վերևում, քաղվածաբար բերված են հատվածներ Խորենացու «Հայոց պատմության» յուրահատուկ վերջաբանը կազմող «Ողբից»։

7. Մխիթար Սեբաստացի (1676—1749)— կրթական-մշակութային գործիչ, բառարանագիր, թարգմանիչ, լեզվագետ։ Սկզբնական կրթությունը իր ծննդավայրի Ս. Նշան վանքում ստանալուց հետո մեկնում է Էջմիածին, ապա Սևան, որտեղ և ծնվում է ինքնուրույն հայագիտական միաբանություն ստեղծելու գաղափարը։ Երկարատև թափառումներից ու դժվարություններից հետո կարողանում է հիմնել (սկզբում՝ Պոլսում, ապա Վենետիկում) ինը հոգուց բաղկացած հայագիտական-բանասիրական քննության մի միաբանություն, որը նրա մահվանից հետո ստա-

նում է «Մխիթարյան» անվանումը և որը գոյություն ունի առ այսօր։ Սեբաստացու գրական-բանասիրական ծառայությունից ուշագրավ են «Տաղարան» բանաստեղծությունների ժողովածուն (Վենետիկ, 1727 թ.), «Քերականություն գրաբար լեզվի հայկազյան սեռի» (Անդ, 1730 թ.) «Բառգիրք հայկազյան լեզվի» (Անդ, 1749, 1769 թթ., երկու վիթխարի հատորներ) և այլն։

8. Խոսքը վերաբերում է Պատմահոր աշխատությունների առաջին ամբողջական ժողովածվին, որը հրատարակվել է Վենետիկում, «Մովսիսի Խորենացվո մատենագրությունք» խորագրով, մատենագիտական առաջաբանով ու ծանոթագրություններով։ Ալիշանը քիչ ներքևում թվարկում է ժողովածվում գետեղված գործերը, որոնցից մի քանիսի հարազատությունն այսօր կասկածելի է համարվում։

9. Սեն-Մարտեն, Անտուան-Ժան (1791—1832)— ֆրանսիացի արևելագետ, հայագետ, թարգմանիչ (հայերենից—ֆրանսերեն)։ Սկզբնական կրթությունն ստացել է իր ծննդավայր Փարիզի տարրական դպրոցում, ապա ավարտել է «Արևելյան կենդանի լեզուների ուսումնարանը», ի թիվս արևելյան այլ լեզուներ՝ հմտանալով նաև հայերենի մեջ։ Հայ հին գրականության հետ առնչվող բազմաթիվ հոդվածներով հանդես է եկել ֆրանսիական պարբերականներում։ 1822 թ. նա մի խումբ ֆրանսիացի արևելագետների հետ հիմնում է «Ասիական ընկերությունը», որը նույն թվականին էլ սկսում է հրատարակել իրենց տպագիր ամսագիրը «Ժուռնալ Ազիատիկ» անունով։ Այստեղ էլ Սեն-Մարտենը հրատարակում է Մովսես Խորենացու աշխատություններին նվիրված քննադատական հոդվածների շարքը, որն ակնարկում է Ալիշանը։

10. Ինճիճյանի մասին տե՛ս. «Ծանիր զքեզի» № 3-ը։

11. Բանասիրության համար գայթակղության քար է հանդիսացել Թովմա Արծրունու վերոհիշյալ վկայությունը, որից հայտնի է դառնում, որ Խորենացու «Հայոց պատմությունը» ունեցել է ևս մի գլուխ՝ չորրորդ գլուխը, որը մեզ չի հասել։ Բանասերների մի խումբ, որոնց թվում նաև Ալիշանը, գտնում էին, որ այդպիսի մի գլուխ կամ հատված եղել է, որտեղ նկարագրված է եղել Մեսրոպ Մաշտոցի գործը, նրա մահն ու թաղումը։ (Այդ կարծիքն Ալիշանը պաշտպանեց նաև հիսուն տարի հետո, իր «Հայապատում» աշխատության մեջ, Վենետիկ, 1901 թ., էջ 54—55)։ Իսկ բանասերների մյուս խումբը, թյուրիմացություն համարելով Արծրունու խոսքերը, պնդում է, որ չորրորդ գիրք ընդհանրապես չի եղել։ Հարցը հանգամանալից քննեց ակադ. Ստ. Մալիսյանցը ի վերջո եզրակացնելով, որ՝ «Դ. գրքի գոյությունը պետք է բացեիրաց մերժել, քանի որ ուրիշ ոչ մի հեղինակ նրան չի հիշում... այնպես որ Արծրունու մի անգամ հիշած Դ գիրքը պետք է համարել կամ թյուրիմացություն, կամ աղավաղություն» (Տե՛ս. Մ. Խորենացի, «Հայոց պատմություն», Ե., 1940, էջ XXIX)։

12. Ալիշանը բանավիճում է ֆրանսիացի արևելագետ Նիկոլայ Ֆրերեի (1688—1749) այն տեսակետի դեմ, որ Խորենացին իր պատմությունը գրելիս գերագնահատել է արևելյան աղբյուրները և անտեսել եվրոպական և մանավանդ հունական պատմիչներին. այդ պատճառով էլ Պատմահայրն, իբր, ընկել է խոշոր սխալների մեջ։ Ալիշանից քիչ հետո, այս տեսակետը հերքող հմտալից հոդվածաշարով հանդես եկավ Նորայր Բյուզանդացին։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՎԱՐԴԱՊԵՏ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպի» 1847 թ. № 14-ում (հուլիսի 15), «Հ. Ղ. Մ.» ստորագրությամբ, (տե՛ս «Երգ ու գնացք զօրացն Հայոց...» բանաստեղծության ծանոթագրությունը)։ Հոդվածը ստեղծագործական ատաղձ է հանդիսացել Ալիշանի համար «Հուշիկք Հայրենեաց Հայոցի» Բ. հատորում գտնվող «Սարկավագ Սոփեստես» գլուխը գրելիս (Վենետիկ, 1901 թ., էջ 248—273)։ Հոդվածին հաջորդում է «Բան առ ձագն... որ կոչի սարիկ» պեմը, որը դուրս ենք թողել։

1. Հովհաննես Սարկավագը հայկական մատենագիտության մեջ հայտնի է նաև «Հովհաննես Իմաստասեր», «Հովհաննես Սոփեստես», «Հովհաննես Պոետիկոս», «Հովհաննես Սարկավագ հռետոր» ձևերով։

2. Թույլ է տրված փոքրիկ անճշտություն. Փառիսոս գավառը Հովհաննես Սարկավագի ժամանակ գտնվում էր Գանձակ աշխարհի կազմում (այժմ՝ Սևանա լճից հյուսիս-արևելք)։

3. Ա. Աբրահամյան, «Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը», Ե., 1956, էջ 127 (մեջբերումը Իմաստասերի «Նորին Հովհաննեսի ամբաստանություն զանձնն» կենսագրականից)։

4. Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, «Համառոտ պատմություն», Վենետիկ, 1865, էջ 64—65։

5. Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 323, 329, 321։

6. Ակնարկում է Հովհաննես Սարկավագի «Յաղագս եղանակաց» աշխատությունը (Տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 252—254)։

7. Այս ավանդախառն պատմությունը Ալիշանը վերցրել է Կիրակոս Գանձակեցուց (Տե՛ս նշվ. աշխ., էջ 65)։

8. Բանասիրությունն ապացուցել է, որ Ալիշանի հիշատակած այս աշխատությունը երկու տարբեր գործեր են՝ «Մեկնություն տոմարի» և «Հաղագս անկյունավոր թվոց»։ Առաջինը տոմարագիտական բնույթ ունի, իսկ երկրորդը՝ մաթեմատիկական։ Երկու աշխատություններն էլ ամբողջությամբ հասել են մեզ։

9. Հովհաննես Սարկավագի այս «պատմությունը», որից ընդամենը երկու պատառիկ է հասել մեզ, եղել է հայ բանաստեղծների ու մատենագիտների անընդմեջ ուսումնասիրության առարկան։ Ուսումնասիրությունները, ցավոք, ապարդյուն են անցել։ Այս ամենի հանդամանալից քննությամբ զբաղվել է նաև պատմաբան Աշոտ Գ. Աբրահամյանը և հանգել այն հետևությանը, որ մեզ է հասել ոչ թե միևնույն գործի երկու պատառիկ, այլ երկու տարբեր աշխատությունների հատվածներ, հետևաբար «Հովհաննես Իմաստասերի պատմական աշխատություններից մենք ունենք ոչ թե մեկ, այլ երկու կորուստ» (Աշ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 35)։

10. Նկատի ունի Պուբլիոս Վիրգիլիոսի «Գեորգիկան», որն Արսեն Բագրատունու գրաբար չափածո թարգմանությամբ հրատարակվել է Վենետիկում, 1847 թ. «Մշակականք» խորագրով։ Թարգմանության առաջաբանում Բագրատունին տարբերակել է բուն հայկական ոտանավորները փոխառդեցություններից, բացահայտել է նրանց տաղաչափական առանձնահատկությունները և ուղիներ է առաջարկել հայկական-ազգային ոտանավորների հետագա զարգացման համար։ Հիմք ունենալով այդ ամենը, նա առաջին անգամ տեսություն զարգացրեց, որ Նարեկա-

ցու «Մատյան ողբերգության» ստեղծագործությունը համապատասխանում է հայկական ոտանավորների տաղաչափական օրինաչափություններին և հետևաբար այն պետք է որ չափածո գրված լինի։

ԾԱՏՈՒՐԻԱՆ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպի» 1848 թ. № 12-ում։ Ձեռագրած հոդվածն անստորագիր է, բայց պատկանում է Ղևոնդ Ալիշանի գրչին (Տե՛ս մեր հոդվածը. «Ալիշանի անստորագիր գործերը «Բազմավեպի» էջերում»։ «Պատմա-բանասիրական հանդես», 1978 թ. № 2)։

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՅՈՒԿ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպի» 1849 թ. № 1 (հունվարի 1) և № 3 (փետրվարի 1) համարներում, «Հ. Ղ. Մ.» ստորագրությամբ (Տե՛ս «Երգ ու գնացք զօրացն Հայոց...» բանաստեղծության ծանոթագրությունը)։

1. Ակնարկում է Ագաթանգեղոսի այն վկայությունը, ըստ որի Գրիգոր Լուսավորիչը Հայաստանում քրիստոնեություն տարածելուց և թագավոր Տրդատին «դարձի բերելուց» հետո նրա հետ սկսեց կրթական-մշակութային լայն գործունեություն ծավալել Հայաստանում (Դպրոցների բացում, գրատունների հաստատում, ձեռագրերի հավաքում ու բազմացում) և դրանով զարկ տվեց ազգային գիր-գրականությանը։

2. «Վարպետ» բառն այստեղ «ուսուցչի» իմաստ ունի (Տե՛ս «Թե ով է ազոց ամենեն սիրելի...» № 3-ը)։

3. Մելիտինե. այժմյան Մալաթիա քաղաքը։ Գտնվում է Եփրատ գետից արևմուտք, Կենտրոնական Թուրքիայում։ Հայ «Ընտիր տոքաներին» ուսումնասիրության մեկնելու այս ամբողջ պատմությունը Ալիշանը վերարտադրում է ըստ Կորյունի (Տե՛ս Կորյուն, «Վարք Մաշտոցի», Ե., 1941, էջ 66—67)։

4. Գլակա վանքի և Ջենոբ Ասորի վարդապետի (նաև՝ Ջենոբ Գլակ) հետ կապված այս ամբողջ պատմությունն Ալիշանը շարադրել է ըստ իր «Սոփերք Հայկականքի» (գիրք Ժ, Վենետիկ, 1854, էջ 59—73)։

ՄՈՎՍԵՍ ՔԵՐԹՈՂԱՀԱՅՐ ՀԱՅՈՑ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպի» 1849 թ. № 4-ում (փետրվարի 15), «Հ. Ղ. Մ.» ստորագրությամբ։ (Տե՛ս «Երգ ու գնացք զօրացն Հայոց...» բանաստեղծության ծանոթագրությունը)։

1. Մովսես Խորենացու՝ ինչպես հին քերականություն գրելու կամ մեկնելու, այնպես էլ երգեր մշակելու փաստը բանասիրությունն այսօր վերապահությամբ է ընդունում։

2. Տե՛ս Մ. Խորենացի. «Պատմութիւն Հայոց» (Վենետիկ, 1841, էջ 386) (Երկրորդ գրքի վերջ) և 198 (Ողբ)։

3. Հրավերք, հյուրասիրություն. Ալիշանն օգտագործել է գրաբարյան բիչ կիրառվող բառաձևը։

4. Խորենացու հետ կապված այս հուզիչ պատմությունը, որն առաջին անգամ գրել և հրատարակել է ինքը՝ Ալիշանը, բանասիրությունն այսօր հավանական է համարում։ Գալով Խորենացու երգած երգի՝ բերված խոսքերին, ապա նրա մի ավելի ամբողջական տարբերակը իր երաժշտական խազերի հետ, Երևանի Մ. Մաշտոցի անվան մատենադարանում հայտնաբերել և համապատասխան ծանոթագրություններով հրատարակել է երաժշտագետ-բանասեր Ն. Թահմիզյանը։

ԱԶԳԻՆ ՊԱԿՍՈՒԹՅԱՆՑ ԿԱՄ ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅԱՆՑ ՎՐԱ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպ» 1849 թ. № 5-ում (մարտի 1), «Հ. Ղ. Մ.» ստորագրությամբ (Տե՛ս «Երգ ու գնացք զօրացն Հայոց...» բանաստեղծության ծանոթագրությունը)։

1. Ակնարկում է իր հոդվածը, որը հրատարակվեց «Բազմավեպում» մոտ մեկ ամիս հետո, «Ազգասիրություն» խորագրով։

2. Ուտեստով կատարվող նվիրատվություն, հյուրասիրություն։

3. Տե՛ս Մ. Խորենացի, «Պատմութիւն Հայոց», Վենետիկ, 1841, էջ 10 (Գիրք Ա, գլ. Գ.).

4. Հայ ժողովրդի գոյության տոմարական այս հաշվարկումն Ալիշանը վերցրել է Միքայել Չամչյանից։ Ըստ նրա՝ Հայկ Նահապետը, որը համարվում է իր անունը կրող ազգության սկզբնավորողը, մահացել է մոտ 2600 թ. մեր թվարկությունից առաջ (Տե՛ս Մ. Չամչեան, «Պատմութիւն Հայոց», գիրք Ա, Վենետիկ, 1784 թ., էջ 65—67)։ Չամչյանի այս (և բազում ուրիշ) հաշիվները քննադատաբար ընդունվեցին դեռ իր ժամանակին, իսկ այժմ հասկանալի է, սոսկ պատմական արժեք են ներկայացնում։

ԱԶԳԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպ» 1849 թ. № 7 (ապրիլի 1), և 9 (մայիսի 1)-ի համարներում, «Հ. Ղ. Մ.» ստորագրությամբ, (Տե՛ս «Երգ ու գնացք զօրացն Հայոց...» բանաստեղծության ծանոթագրությունը)։

1. Ակնարկում է «Բազմավեպի» նախորդ համարում լույս տեսած իր «Ազգին պակսութեանց կամ կատարելութեանց վրա» հոդվածը։ Մեզ մոտ այն անմիջապես նախորդն է։

2. Ըստ ավանդության, Երուսաղեմի թագավոր Երոդեսը, իր քաղաքից դուրս գալիս, հանդիպում է շքեղ հագնված Աքիա Սիլոնացի մարգարեին և նրանից խորհուրդներ է հարցնում հետագա իր անելիքների վերաբերյալ։ Պատասխանի փոխարեն Աքիա Սիլոնացին պատառոտում է իր հանդերձը, բաժանելով այն տասներկու մասերի, և տասը մասը տալիս է Երոդեսին, հասկացնելով նրան, որ նա էլ այդ ձևով պետք է «պատառոտի» իր հարևանի՝ Սողոմոնի թագավորությունը, նրա մեծ մասին տիրանալ կարողանալու համար։

ԱԶԳԱՅԻՆ ՊԱԿԱՍՈՒԹՅՈՒՆ ՄԸ, ՈՐ ԱՌԱՋԱԳԻՄՈՒԹՅԱՆ...

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպ» 1849 թ. № 11-ում, (հունիսի 1), «Հ. Ղ. Մ.» ստորագրությամբ, (Տե՛ս «Երգ ու գնացք զօրացն Հայոց...» բանաստեղծության ծանոթագրությունը)։

1. Տե՛ս եզիշե. «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» (հրատ. Արսեն Բագրատունի) Վենետիկ, 1852 թ., էջ 9։

2. Տե՛ս «Ագաթանգեղեայ Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1914 թ., էջ 8։

3. Տե՛ս Մովսես Խորենացի, «Մատենագրութիւնք (Երկրորդ տպագրություն)» Վենետիկ, 1865 թ., էջ 182։

4. Նկատի ունի Հայաստանում հռչակված հայ հռետոր Պարույր Հայկազնին (Ալիշանը բերել է նրա անվան հունական ձևը), որի պատվին Հռոմում արձան էր կանգնեցված և որն ստացել էր «Թագավոր ճարտասանության» անունը։ Ապրել է մ. թ. 3—4-րդ դարերում, եղել է աղքատ հայ ծնողների զավակ։ Պարույր Հայկազնի մասին, այդ վերնագրով վիպակ ունի Բաֆֆին (Տե՛ս «Երկերի ժողովածու», հ. 4, ե., 1956, էջ 170—214)։ Նրանից գրավոր մեզ ոչինչ չի հասել։

5. Տե՛ս Մ. Խորենացի, «Մատենագրութիւնք (Երկրորդ տպագրություն)» Վենետիկ, 1865, էջ 6։

6. Տե՛ս Ներսես Լամբրոնացի, «Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ», Վենետիկ, 1847, էջ 527—528։

7. Տե՛ս Մ. Խորենացու նշվ. մատենագրությունը, էջ 228—229։ Խորենացու և Փավստոսի հետևությամբ՝ Ալիշանն էլ կրկնում է Պապ թագավորի հոռի վարք ու բարքի մասին տարածված միտքը, որը, սակայն, հետագա շրջանի բանասիրությունն ամբողջապես հերքել է։ Պապ թագավորի պատմական «մեղքն» այն էր, որ նա կամենում էր միասնական ու հզոր Հայաստան ստեղծել և դրա համար ձգտում էր որոշ չափով սահմանափակել թե՛ հայ հոգևորականության և թե՛ առանձին նախարարական տների իրավունքները, որոնք որոշ դեպքերում անհանդուրժելի չափերի էին հասել։ Եվ հնարավոր է, որ նա հասներ իր մտահղացման իրականացմանը, եթե կենտրոնախույս ուժերի դավադրության զոհը չդառնար։

8. Տե՛ս Ստեփաննոս Տարոնեցի Ասողիկ. «Պատմութիւն տիեզերական», Պետերբուրգ, 1885 թ., էջ 159։

ՇԻԼԼԵՐ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպի» 1851 թ. № 1-ում (հունվարի 1) և արտատպվում է անփոփոխ։ Չնայած հոդվածն անստորագիր է, բայց ապացուցված է, որ այն պատկանում է Ղևոնդ Ալիշանի գրչին (Տե՛ս Ա. Բաբայան, «Շիլլերը հայ գրականության մեջ և թատրոնում», Երևան, 1959 թ., էջ 92—93)։

1. Շիլլերների ընտանիքը 1765 թ. փոխադրվում է ամառանոցային Լյուդվիգսբուրգ քաղաքը։

2. Խոսքը վերաբերում է Շիլլերի «Ավազակներ» ողբերգությանը։

3. Նկատի ունի Շիլլերի «Սեր և խարդավանք» դրաման։

4. Շիլլերը 1785 թ. փոխադրվել է Դրեզդեն։

5. Շիլլերի ծանոթությունը գերմանացի բանաստեղծ-լեզվաբան, փիլիսոփա, պետական գործիչ Վիլհելմ Հումբոլդի (1767—1835) և ականավոր բանաստեղծ, արձակագիր ու մտածող Գյոթեի (1749—1832) հետ, դարձել է 1788 թ. Վայմա-

ռում. մի ծանոթություն, որը, մանավանդ Գյոթեի հետ, շատով վերածվել է սերտ բարեկամության։

6. Կանտ Էմմանուիլ (1724—1804)— գերմանացի փիլիսոփա, գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր։ Կանտի ուսմունքին ծանոթ ու համակիր էր նաև Ալիշանը, որի մի քանի առաջադիր գրությունները ընկած են նրա «Եղևնու ներքո» պատմա-փիլիսոփայական աշխատության հիմքում (Տե՛ս ներկա ժողովածուն)։

7. Նկատի ունի լեհահայ կրթական-մշակութային գործիչ, թարգմանիչ (գերմաներենից-լեհերեն) Հովհաննես Մինասյանին (1792—1849), որն առավել հայտնի է Յոզեֆ Դիոնիցի Մինասովիչ ձևով։ Նա ծնվել է Վարշավայում, հարուստ ու ազդեցիկ հայազգի գերդաստանում։ Սկզբնական կրթությունը ծննդավայրում ստանալուց հետո մեկնել է Գերմանիա և Լայպցիգում ստացել բարձրագույն իրավաբանական կրթություն, հիմնավորապես ծանոթանալով գերմանական գրականությանը և մասնավորապես Շիլլերի ստեղծագործություններին։ Ուսումն ավարտելուց հետո վերադառնալով իր ծննդավայրը, Յոզեֆ Մինասովիչը որպես իրավաբան արժանանում է մեկից ավելի պետական բարձր պաշտոնների և միաժամանակ Հռոմեական իրավունքի պատմություն է կարդում Վարշավայի Պետական համալսարանում։

Մինասովիչի ինքնուրույն ստեղծագործությունների ու թարգմանությունների ժողովածվի 4-րդ հատորը (Լիպսկ, 1844) նվիրված է Շիլլերի երկերի՝ բնագրից լեհերեն կատարված թարգմանությանը, որը նա կատարել է 1809—1843 թթ.։ Այդ հատորն էլ, անկասկած, ձեռքի տակ է ունեցել Ալիշանը։

8. «Բազմավեպ» հաջորդ համարում (№ 3, փետրվարի 1), Զևոնդ Ալիշանի՝ գերմաներեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակված է Շիլլերի «Շրջագայությունն» բանաստեղծությունը։

ՀՐԱՀԱՆԳ, ԶԲՈՍԱՆՔ ԵՎ ՍՓՈՓԱՆՔ ՀԱՍԱՐԱԿԱՑ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպի» 1854 թ. № 4 (փետրվարի 15), № 6 (մարտի 15), և № 12 (հունիսի 15)-ում, «Հ. Ղ. Ալ.» ստորագրությամբ։ Այս ժամանակվանից սկսած, Ալիշանը վերջնականապես սկսում է հանդես գալ նշված կամ ավելի լրիվ (Հ. Ղ. Ալիշան) ձևով, մինչև իր կյանքի վերջը։

1. Ակնարկում է Վենետիկը, որտեղ, Փարիզ և Լոնդոն կատարած իր ուղևորությունից հետո վերադարձել էր 1853 թ. մայիսին։ Ի թիվս հայագիտական-բանասիրական բնույթի այլևայլ աշխատանքների, Ալիշանին հանձնարարված էր «դարձի բերել» Փարիզի Մուրատյան վարժարանի տնօրեն Գաբրիել Այվազովսկուն և նրա համախոհներին, որոնք դիմադարձ էին եղել Մխիթարյան միաբանությունից։ Ալիշանը չի կարողանում իրականացնել իրեն տրված հանձնարարությունը, որի համար խստիվ դատապարտվում է Մխիթարյան միաբանության ղեկավարության կողմից։ Հողվածի սկզբում եղած ակնարկները վերաբերում են դրան։

2. Տե՛ս Կիկերոն Մարկոս Տուլղիոս, «Կատոն երեց կամ թե վասն ծերության (թարգ. Հովսեփ Գաթրճյան), Վիեննա, 1843, 40 էջ։

3. Նկատի ունի Գանիել Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզո», Բերնարդեն դը Սեն-Պիերի «Պաղ և Վիրջինիա» Եղիշե Գաֆթանճյանի «Ողիսարեթ, խաչակրաց ժամա-

նակեն վեպ մը» և Ֆրանսուա Ռբնե Շատոբրիանի «Ատալա, օրիորդն սիրազոհ» արձակ գեղարվեստական ստեղծագործությունները։ Այիշանի սույն հոդվածը գրվելու ժամանակ այդ գործերն արդեն կային հայերեն թարգմանված։

4. Տե՛ս Մովսես Խորենացի, «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1913, էջ 329, 341—343։

5. Խոսքը վերաբերում է Սկանդինավիայի և Մեծ Բրիտանիայի թագավոր Կանուտ (նաև՝ Կնուտ) Մեծին (995—1035)։ Վերջինս, հոր մահվանից հետո թագավոր դառնալով, կարողացավ նվաճել ամբողջ Դանիան, խլելով եղբորից նրան հատկացված երկրամասերը, ապա Նորվեգիան, Դանիան ու Բելգիան։ 1015 թ. Կանուտը իր ուժեղ և մարզված բանակի գլուխն անցած՝ կռվի ելավ Անգլիայի դեմ, և երկու տարվա կռիվներից հետո նվաճեց նաև Անգլիան։ Չնայած իր խստություններին, Կանուտ Մեծն աչքի էր ընկնում իր նվաճած երկրների ժողովուրդների նկատմամբ հոգատարությամբ, վճիռների ու որոշումների մեջ՝ ուղղամտությամբ։

6. Նկատի ունի հայոց Արտաշես Ա թագավորին, որն իսկապես, հոր կողմից Պարթև էր։ Իր քսանհինգ տարվա թագավորության ընթացքում նա աստիճանաբար նվաճեց ամբողջ Փոքր Ասիան և պատրաստելով վիթխարի նավատորմիղը, անցավ Հունաստան, այն ևս նվաճելու համար։ Առաջին իսկ ճակատամարտերը Հունաստանում պակակեցին նշանակալից հաջողություններով, բայց հակառակորդները կարողացան խոսվություններ հրահրել Արտաշես Ա-ի բանակում, և իրեն էլ դավադրաբար սպանել տվեցին։

Հատվածի վերջում Ալիշանը աշխարհաբար ազատ վերաշարադրությամբ բերել է Արտաշեսի հանրածանոթ խոսք-բաղձանքը («Ո՜ տայր ինձ զծուխ ծխանի, և զառաւօտն նաւասարդի...»)։

7. Տե՛ս Ստեփաննոս Սյունեցի, «Պատմութիւն տանն Սիսական», Մոսկվա, 1861, էջ 27—28)։

8. Նկատի ունի Ավարայրի ճակատամարտի հերոսին՝ Վարդան Մամիկոնյան զորավարին։

9. Այիգիերի Դանտեի հետ կապված այս միջադեպը հետևյալն է. 1300 թ. իտալացի հանճարը ընտրվում է իր ծննդավայրի հոգևոր առաջնորդ և սկսում է եռանդուն գործունեություն ծավալել ընդդեմ Վատիկանի բռնապետական նկրտումների և անձամբ ընդդեմ Բոնիֆացիոս 3-րդ պապի։ Բայց հակառակորդ կողմը հաղթանակում է և 1302 թվականին Դանտեն արտաքսվում է Ֆլորենցիայից։ Իր ծննդավայրի մաշող կարոտը սրտում, նա թափառում է ամբողջ Իտալիայով, լինում է անգամ Փարիզում, և ի վերջո հանգրվանում է Ռավեննայում (հս. արևելյան Իտալիա)։ 1316 թ., երբ Դանտեն արդեն համաշխարհային անուն ու հռչակ ուներ, նրան ներումն է առաջարկվում, բայց քանի որ պայմանները առավել քան վիրավորական էին, ապա Դանտեն մերժում է այդ շնորհը, ասելով այն խոսքերը, որը բերել է Ալիշանը։

ԱՋԳԱԽՆԱՄ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպի» 1862 թ. № 1 (հունվարի 1)-ում, «Հ[այր] Ղևոնդ վ[արդապետ] Մ[արգարի] Ալիշան» ստորագրությամբ

(Տե՛ս նաև «Երգ ու գնացք զօրացն Հայոց...» բանաստեղծության ծանոթագրությունը)։

1. Այստեղ և հետագայում կրկնված է ժամանակին տարածված և Ղուկաս Ինճիճյանի ու մանավանդ Միքայել Չամչյանի վավերացրած այն տեսությունը, ըստ որի Աստվածաշնչային դրախտը եղել է պատմական Հայաստանում (Ալիշանը իր «Հուշիկք...»-ում նույնիսկ նշում է նրա տեղը՝ Տիգրիս և Եփրատ գետերի միջև). համաշխարհային ջրհեղեղից հետո Նոյի տապանը հանգրվանել է Մեծ Մասիս սարի գագաթին, այդտեղ են իջել տապանարեկները՝ թե՛ մարդիկ և թե՛ կենդանիները, հետևաբար բանական կյանքը երկրագնդի վրա ծայր է առել Հայաստանից և այլն։ Այս տեսությունն այսօր սոսկ պատմական արժեք է ներկայացնում։

2. Ակնարկում է Ավարայրի ճակատամարտը, որը տեղի է ունեցել 451 թվականի մայիսի 26-ին, Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ պարսիկների դեմ։

3. Ակնարկում է Արգար դպիր Թոխաթեցուն, որը դիվանագիտական հանձնարարությամբ մեկնելով Հռոմ (և ձախողելով այդ հանձնարարությունը), անցավ Վենետիկ, և այնտեղ, 1564 թվականին հրատարակեց Սաղմոս, այսպիսով վերանորոգելով հայկական տպագրության գործը։

4. Մխիթար Սեբաստացու հիմնադրած միաբանությունը, որն սկզբում ուներ «Որդեգիր Կուսին, վարդապետ ապաշխարության» անվանումը, պաշտոնապես իր գոյությունն սկսեց 1701 թ. սեպտեմբերի 8-ին, Պոլսում։ Նրա կանոնադրությունը զանազան քննադատությունների ու ստուգումների հետևանքով Վատիկանը վավերացրեց միայն 1712 թվականին։ Հիմնադրի մահվանից շատ հետո միայն միաբանությունն ստացավ հանրածանոթ «Մխիթարյան» անվանումը։

ՆՇՄԱՐՔ ԵՎ ՆՇԽԱՐՔ Ի ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԻ

Առաջին անգամ սկսել է հրատարակվել «Բազմավեպում», 1869 թ. մարտից (№ 3), և անընդմիջաբար շարունակվել է մինչև տարվա վերջ, հետագայի տասը համարներում։ Ամսագրում ունի «Հ[այր] Ղ[ևոնդ] Մ[արգարի] Ալիշան» ստորագրությունը։ Այս գործից մեկ— երկու հատված (Կարին քաղաքին, Ջիֆթե Մինարեին, Մողրով ապարանքին վերաբերվող մասերը, Կարս քաղաքի տեղագրությունը) հեղինակը նույնությամբ օգտագործել է իր «Նշմարք հայկականք» աշխատության (Վենետիկ, 1870 թ.) համապատասխան բաժիններում, որն, ի դեպ, սույն ուսումնասիրության երկրորդ՝ առանձին գրքով հրատարակված մասն է։ «Բազմավեպում» տպագրված «Նշմարք և Նշխարք...»-ի առանձին չի հրատարակվել։

Իր գործն ավելի ընթերցիկ դարձնելու նպատակով, Ալիշանը դիմել է վերհուշի ձևով պատմելու՝ ժամանակին տարածված մեթոդին։ Հնարավոր շփոթությունից խուսափելու համար հիշեցնենք, որ Ալիշանը երբեք չի եղել պատմական Հայաստանում և բնականաբար չի տեսել այն բոլոր հիշարժան հնությունները ու հնագիտական արժեք ներկայացնող հուշարձանները, որոնց մասին այնպես ճշմարտացի ու հմտորեն պատմում է։

Ինչպես և նախորդ գեպքերում՝ Ալիշանն այստեղ էլ տեղանունները ու անձնանունները հիշատակելիս, մեծ մասամբ ընդգծում է, շակերտների մեջ գնելու փոխարեն (թեև հաճախ անում է այդ էլ), աշխատում է բերել անունների ավելի

ճիշտ, հետևաբար ավելի հին և իր ժամանակ արդեն սակով կիրառվող ձևերը (Սեավ ծով, Վոսփորոնի նեղուց, Կապան, Սելլուկ Թուրքերը, Էրզիրում Սմբրզանտ), բոլոր թվականները և անգամ տարեթվերը մեծ մասամբ գրում է հայերեն տառերով, խուսափելով արաբական թվանշաններ գործածելուց և այլն։ Փոփոխել այդ ամենը և «ուղղել» ըստ ընդունված ժամանակակից օրինաչափությունների, կընշանակեր աղավաղել Ալիշանի ինքնատիպ ու անկրկնելի լեզուն, ուստի հիշատակված բնույթի բոլոր առանձնահատկությունները պահպանել ենք նույնությամբ։

1. Ակնարկում է Կոստանդնուպոլիսը, որտեղ, ինչպես հայտնի է, 1820 թ. հուլիսի 6-ին ծնվել է ինքը։

2. Դիոգինես Սինոպեցի (414—323 թթ. մ. թ. ա.)— հույն փիլիսոփա, Անտիֆենեսի աշակերտը, ծագումով՝ անհայտ ու աննշան ընտանիքից։ Դիոգինեսը ներկայացուցիչն էր հունական փիլիսոփայության Կինիկների դպրոցի (հուն. «Կյուննս» որ նշ. «շուն»։ Այստեղից էլ այդ ուղղության հայերեն անվանումը՝ «Շնական փիլիսոփայություն»), որոնք ժխտում էին շքեղությունն ու պերճանքը, բոլոր տիպի վայելքները, պատճառաբանելով, որ դրանք խանգարում են ազատ մտածողությանն ու արտաքին աշխարհի անկանխակալ ճանաչմանը և փառաբանում էին ասկետիզմը։ Սակայն Դիոգինեսը ծայրահեղության հասցրեց այդ ուսմունքը՝ վայելքներն ու շքեղությունները ժխտելու բնագավառում (նա ապրում էր տակառում), և նույնիսկ սկսեց ժխտել ամուսնությունը՝ քարոզելով կանանց համայնացում, գիտությունները և, մասնավորապես՝ ճշգրիտ գիտությունները։ Ալեքսանդր Մակեդոնացու հետ նրա հանդիպումը իր տակառ-բնակարանի մոտ և նրա հանրահայտ պատասխանը թագավորին («Քո ստվերով մի՛ ծածկիր իմ արևը և հեռո՛ւ գնա») գիտությունն այսօր վերապահությամբ է ընդունում։

3. Արիանոս Փլաբիանոս (95—175 թթ.)— հույն պատմիչ, աշխարհագրագետ, գրող, հասարակական գործիչ։ Բացի նրա գրչին պատկանող «Ալեքսանդրի Անաբազիս» աշխատությունից (յոթ գիրք, ռուս. հրատ. 1862) և «Հնդկաստան» աշխարհագրական գործից (ռուս. թարգ. 1940) ուշագրավ է «Շրջագայություն Եվքսինյան Պոնտոսում» տեղագրական-ուղեգրական գործը, որտեղ նկարագրվում է Սև ծովի հարավային ափերը և որն էլ հիշատակում է Ալիշանը։

4. Տե՛ս Մովսես Խորենացի. «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1913, Գիրք երկրորդ, գլ. Ը։ Հետագա մեջբերումը նույն գլխից։

5. Անդ, գլ. ԺԳ։

6. Տե՛ս Ագաթանգեղոս, «Պատմութիւն հայոց» Թիֆլիս, 1909, էջ 16 (§ 19)։

7. Ակնարկում է 1856 թ. փետրվարի 18-ին, Պոլսում, սուլթան Աբդուլ-Մեջիդի հրատարակած «Արքայական հրովարտակը» («Խաթթի հումայուն»), որը կայսրության հպատակներին խոստանում էր հավասարություն, կրոնական խտրականության վերացում, կյանքի և գույքի հավասարության ճանաչում և պետականորեն պաշտպանություն, ոչ մուսուլմաններին՝ պետական բարձրագույն պաշտոնների հասնելու անկապտելի իրավունք և այլն, բայց որը Թուրքական ավագանու և բարձրաստիճան հոգևորականության բացահայտ ճնշման ներքո աստիճանաբար վերածվեց դատարկ թղթի կտորի։

8. Դավիթ Սալածորեցի (նաև՝ Դավիթ Որրիկ)— միջնադարի հայ բանաստեղծ, աղաղաստ։ Ծնվել է Կարնո գավառի Սալածոր գյուղում, եղել է հոգևորական։ Ի թիվս նրա անվամբ մեզ հասած այլևայլ տաղերի, նշանավոր է

«Գովասանք ծաղկաց» պոեմը (134 տող), որտեղ թվարկվում են հայկական տարածքում եղած ծաղկատեսակները, իրենց համապատասխան բնութագրականներով, և որը ձեռքի տակ է ունեցել Ալիշանը։ Հետագա շարադրանքում բերված ծաղիկների գիտական ուսումնասիրությանն Ալիշանը հանգամանորեն անդրադարձել է իր «Հայբուսակ կամ հայկական բուսաբառություն (Վենետիկ, 1895) աշխատության համապատասխան բաժիններում։

9. Տե՛ս Արիստակես Լաստիվերտցի, «Պատմութիւն», Վենետիկ, 1901, էջ 64 (գլուխ ԺԲ)։ Հետագա մեջբերումները նույն գլխից։

10. Տե՛ս Մովսես Խորենացի, «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1913, էջ 185 (Գիրք Բ, գլ. Մե)։

11. Եզր կաթողիկոս (6—7-րդ դար)— հասարակական-կրոնական գործիչ։ Մնվել է Պատմական Հայաստանի Նիգ գավառի Փառազնակերտ գյուղում, վրացական Հերակլ կայսեր հետ Կարինում գումարված ժողովում ընդունել է հայ և վրացի ազգերի գաղափարական ընդհանրությունը հավաստող նորաստեղծ տեսությունը։ Այդ անելն անհրաժեշտ էր երկու հարևան ազգերի միջև միասնական ճակատ ստեղծելու համար, որովհետև բյուզանդացիների ու արաբների նվաճողական սպառնալիքը կախված էր հայերի ու վրացիների գլխին։ Սակայն այդ քաղաքականությունը ձախողվեց, Եզր կաթողիկոսը բանադրվեց, ապա հալածանքների ենթարկվեց։

12. Գրիգոր Մագիստրոս Պահլավունի (990—1058), հայագետ-բանաստեղծ, փիլիսոփա, բանաստեղծ, հասարակական եռանդուն գործիչ։ Ունենալով հորեղբոր՝ Վահրամ Պահլավունու օժանդակությունը, պայքարել է Հայաստանի անկախության համար, թեև իրենից անկախ պատճառներով, այդ պայքարը հաջողությամբ չի պսակվել։ Եղել է ժամանակի ամենակրթված մարդկանցից մեկը և խոր հետք է թողել հայ մշակույթի պատմության մեջ։ Հայ փիլիսոփայական մտքի զարգացման ընթացքում եղած հարկադրական դադարից հետո նա կարողացել է վերականգնացնել այդ ընթացքի գիտական միտքը և նոր ուղիներ թելադրել նրան։ Հասանկալի՝ Գրիգոր Մագիստրոսի կողմից հիմնադրվելու, կամ նորոգվելու փաստը, ինչպես նաև քիչ հետո արվող պատումը նրա գերեզմանի տեղավայրի մասին, որն, ի դեպ, թեականորեն է հիշատակում նաև Ալիշանը, այսօրվա հայագիտությունն ընդունում է վերապահությամբ։

13. Համասփյուռ կամ Համասպրամ ծաղկի, «Մեր Հիպոկրատի», այսինքն՝ Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարություն» գրքից բերված ցիտատի և Այգորդ գյուղի մասին հանգամանորեն՝ տես Ղ. Ալիշան. «Հայաբուսակ կամ հայկական բուսաբառություն», Վենետիկ, 1895, էջ 354—356։

14. Տե՛ս Մովսես Խորենացի, «Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1913, էջ 109։

ԵՂԵՎՆՈՒ ՆԵՐԱՌ

Առաջին անգամ առանձին գրքույկով հրատարակվել է Վենետիկում, 1874 թ. խրթին գրաբարով։ Արևմտահայերեն թարգմանությամբ (թարգ. հ. Վահան Հովհաննիսյան) լույս է տեսել «Բազմավեպում» 1930—1931 թթ., և ապա՝ առանձին գրքով ու թարգմանիչի փոքրիկ առաջաբանով, 1930 թ.։ Նույնը՝ լեզվա-

ական որոշ շտկումներից հետո, 1944 թ. «Գրական ցոլքեր» մատենաշարով (№ 4)։

Արժանին հատուցելով Վ. Հովհաննիսյանին Ալիշանի այս բարդ աշխատությունը թարգմանությունը գլուխ բերելու համար, անհրաժեշտ է սակայն նշել, որ թարգմանիչը աշխատանքի ընթացքում թույլ է տվել որոշ անճշտություններ, որոնք աղավաղում են հեղինակի միտքը, ինչպես նաև կատարել է մեկից ավելի կրճատումներ, և այն էլ՝ դուրս թողնելով Ալիշանի փիլիսոփայական դատողությունները։

Ներկա թարգմանությունը կատարելիս աշխատել ենք խուսափել մեր նախորդի մոտ սպրդած լեզվա-ոճական բնույթի անճշտություններից, ինչպես նաև վերականգնել ենք բոլոր մեծ ու փոքր բացթողումները։

1. Ինչպես վկայում են ժամանակակիցները, Ալիշանը իր այս աշխատությունը, (կամ՝ գոնե նրա մեծագույն մասը) գրել է Վենետիկից արևմուտք գտնվող Վիչենցա ամառանոցային քաղաքը եզերող դեղատնային բնության մեջ։ Այդ էլ ակնարկված է այստեղ և հետագա շարադրանքի ընթացքում։

2. Ակնարկում է Հասունյան և Հակահասունյան պայքարը։ Այն ծայր առավ 1867 թ. երբ Պոլսում, զանազան ներելի ու աններելի միջոցներով կաթոլիկ հայոց պատրիարք ընտրվեց ազգությամբ ասորի Անտոն Հասունյանը։ «Արյունով օտար, սրտով պապական, հոգով ճիզվիտ» (Հ. Աճառյան), Հասունյանը վարում էր բռնությամբ հայ ազգը կաթոլիկացնելու, հետևաբար նրան ազգային բռնակալությունից զրկելու քաղաքականություն, որը մեծ փոթորիկ առաջ բերեց Պոլսի և այլ շրջանների հայության մեջ։ Ստեղծվեց Հասունյանին համակրողների («Հասունյաններ») և նրան հակադրվողների («Հակահասունյաններ») կուսակցություններ, որոնցից մանավանդ առաջինները չէին խուսափում պայքարի ամենակեղտոտ միջոցներից անգամ։ Ի վերջո պապը, տեսնելով, որ Հասունյանի վարած ձախլիկ քաղաքականությունը միայն վնաս է բերում գործին, 1880 թ. կանչեց նրան Հռոմ և կարդինալ օծելու պատրվակով ստիպեց հրաժարական տալ։

3. Նկատի ունի Հունաստանի արևելքում գտնվող Լիմնոս կղզին, որը քառասնամյա, եղել է միականների և վիթխարի ուժ ունեցող հսկաների՝ Կիկլոպների բնակավայրը և որի վրա մինչև այսօր էլ պահպանվել են կիկլոպյան բազմաթիվ կառույցներ։

4. Ակնարկում է հունական փիլիսոփա Պլատոնին (428—348 թթ. մ. թ. ա.)։ Վերջինս իր «Տիմեոս» և «Կրիտիաս» աշխատություններում հաղորդում է, որ Ատլանտյան օվկիանոսում եղել է վիթխարի մի կղզի (գուցե՝ աշխարհամաս) «Ատլանտիդա» անունով, որը բնակեցված է եղել մշակութային բարձր զարգացում ունեցող մի ժողովրդով, որոնց նա կոչում է «Ատլանտ»։ Կղզին և նրա բնակիչները երկրաշարժի հետևանքով Ատլանտյան օվկիանոսի հատակն են անցել։ Ատլանտիդայի լինել-չլինելու հետ կապված վեճերը շարունակվում են առ այսօր։

5. Ռամզես (ճիշտ ձևը՝ Ռամեսսու)— Եգիպտական հարստության տասներկու փարավոնների անուններ, որոնք թագավորել են շուրջ 500 տարի։ Առանձնապես նշանավոր էր Ռամզես 2-րդը (մ. թ. ա. 13-րդ դարի առաջին կես), որը կարողացավ միավորել Եգիպտոսը և հզոր պետություն դարձնել։ Ռամզես 2-րդ թագավորը Ասորիքում կռվի ելավ Խեթերի դեմ և հաղթեց նրանց, կառուցեց մի քանի հոյակապ հուշարձաններ (Լուքսորում, Հաբիդոսում)։ Սեթով (ավելի

հայտնի՝ Սեթ ձևով)— Եգիպտական դիցաբանության՝ պատերազմների և ուժի աստվածը, պտղաբերության աստված Օզիրիսի հակառակորդն ու նրան սպանողը։ Սեթովի անունով պատերազմ մղող եգիպտացիները նրա պատվին կառուցել էին մեկից ավելի հուշարձաններ, հիմնադրել էին քաղաքներ, որոնք այսօր ավերակ են։

6. Խոսքը վերաբերում է Փյունիկյան ժամանակվա երկու նշանավոր քաղաքներին, որոնցից Տյուրոսը (նաև՝ Տիր. Ալիշանն օգտագործել է հունական ձևը) մ. թ. ա. 3-րդ հազարամյակում շնորհիվ առևտրի և քաղաքում ծավալված արհեստների մեծ զարգացման հասավ։ Տյուրոսի անկումն սկսվեց մ. թ. 13-րդ դարում, երբ որպես վաճառաշահ քաղաք սկսեց բարձրանալ Սիդոնը (հիմն. մ. թ. ա. 3-րդ հազարամյակում) և աննախադեպ բարգավաճման հասավ։ Սիդոնը կործանվեց 15-րդ դարում, մուսուլմանական նվաճողների կողմից։ Երկու քաղաքներն էլ այժմ գոյություն ունեն փոքրիկ բնակավայրերի ձևով, «Սուր» և «Սայդ» անուններով։

7. Ակնարկում է Սամսոնին՝ Դալիլայի (նաև՝ Դալիդա) տարփածուին։ Ի պատասխան նրա տածած անսահման ու անպարփակ սիրուն Դալիլայի նկատմամբ, վերջինս կարողացավ իմանալ նրա վիթխարի ուժի գաղտնիքը և այդ մասին տեղեկացրեց Սամսոնի թշնամիներին։

8. Նկատի ունի հույն զորավար և քաղաքական-պետական գործիչ Մարկոս Անտոնիոսի (83—30 թթ. մ. թ. ա.) և Եգիպտոսի գեղեցկուհի թագուհու՝ Կլեոպատրայի սերը, որն, ի վերջո, կործանման հասցրեց երկուսին էլ։ Տարվելով շքեղաշուք Կլեոպատրայով, Անտոնիոսը մի կողմ թողեց պետական բոլոր գործերը, նրան նվեր տվեց ամբողջ նահանգներ իր նվաճած երկրներից, սկսեց օրեր ու ամիսներ անցկացնել զեխ զինարբուքներում։ Ի վերջո, թողնելով իր երկիրը, նա Կլեոպատրայի հետ փախավ Եգիպտոս, իր դեմ հարուցելով ամբողջ հռոմեական բանակի ու նրա զորավարների արդարացի զայրույթը։

9. Ակնարկում է Հոմերոսին։

10. Ֆիդիաս (5-րդ դար, մ. թ. ա.)—հույն հռչակավոր քանդակագործ, որի կերտած Զևսի արձանը՝ Աթենքի համանուն տաճարում, դասվում էր հին աշխարհի յոթ հրաշալիքների շարքը։ Ապելլես (4-րդ դ. մ. թ. ա.) հույն կենդանագիր-նկարիչ, որի գործերից մեզ ոչինչ չի հասել։ Եղել է մակեդոնական թագավորների պալատական նկարիչը։ Իր ժամանակ հայտնի է եղել նրա «Ջրից ելնող Աֆրոդիտեն» նկարը։ Սանցիո (ավելի ճիշտ՝ Սանտի) Ռաֆայել (1483—1520)— իտալացի հանրաճանաչ նկարիչ։ Կանովա Անտոնիո (1757—1822),— իտալացի նշանավոր քանդակագործ-նկարիչ, մշակութային գործիչ։

11. Զրադաշտ (Զարատուստրա)— կիսաառասպելական անձնավորություն, որը իրանական նոր՝ Զոռոաստրիզմ (ի՛մա. կրակապաշտություն) անունը կրող հավատի հիմնադիրը։ Մանու. հին հնդկական կրոնի՝ բրահմանիզմի հիմնադիրը։ Նրան վերագրվող օրենքների ժողովածուն (շուրջ 5500 տող), որով նախորդվում է անհատի անելիքները հասարակության մեջ, գրեթե ամբողջովին հասել է մեզ։ Կոնֆուցիոս (551—479 թթ. մ. թ. ա.) հին չինական փիլիսոփա, համանուն փիլիսոփայության հիմնադիրը։

12. Բուդդա (623—544 թթ. մ. թ. ա.)— Հին Հնդկաստանում ապրած կիսաառասպելական անձնավորություն, որը համարվում է համանուն կրոնական ուս-

մունքի՝ Բաղդիզմի (կեցության հիմքը մարմնական կատանքն է, որն ազնվացնում ու մաքրում է հոգին) հիմնադիրը։ Բրահմա. հնդկական երեք բարձրագույն աստվածներից մեկը, որի անվամբ էլ հետագայում ստեղծվեց կրոնա-սխոլաստիկական բրահմանիզմ (Բրահմա աստվածը ստեղծել է երկինքն ու երկիրը և բոլորը պարտավոր են ենթարկվել նրան, զոհ մատուցել) ուսմունքը։

13. Ակնարկում է Մարիամ աստվածածնին և շարադրում է Քրիստոսի ծննդյան աստվածաշնչային ավանդությունը։

14. Սկզբում՝ Գայոս Օկտավիանոս («Օգոստոս» այսինքն՝ «փառաշուք» անունը հետագայում շնորհվեց նրան, որպես հարգանքի տիտղոս)— Հռոմեական միապետ, հասարակական-պետական գործիչ։ Ճնշելով ընդդիմադիր ուժերին, նա ստեղծեց հզոր ու միասնական մի տերություն, իսկ Գերմանիայի, Իսպանիայի, Պանոնիայի (այժմ՝ Հարավսլավիա), Գալիայի նվաճումով հռոմեական կայսրությունը վերածեց ընդարձակածավալ տերության։ Հաղթանակներով աչքի ընկած Օկտավիանոսը, սակայն, դեմ էր պատերազմներին, և հրամայեց փակել Հռոմի այն տաճարի դռները, որի ներսում գտնվում էր պատերազմների աստծու՝ Յանոսի վիթխարի արձանը։

15. Ըստ հունական գիցաբանության քամիների աստված Էոլոսի իշխանության ներքո գտնվում էին չորս նշանավոր եղրայր-քամիներ, որոնց նա բաց էր թողնում ըստ իր ցանկության ու քմահաճույքի։ Դրանք էին Նուրոսը, Եվրոսը, Զեփյուռը և Բորեասը։ Սրանցից ամենակատաղին Եվրոսն էր, այրող ու խաշող խորշակը, որը իր գաժան շնչով ոչնչացնում էր ամեն մի կենդանի արարած, և ծաղկած բնությունը վերածում էր մեռյալ անապատի։ Այս է, որ ակնարկում է Ալիշանը։

16. Բրահմայի, Զրադաշտի և Մանուի ուսմունքների մասին, տես №№ 11 և 12-ը։ Մուհամեդ (576—632)— համանուն ուսմունքի՝ մահմեդականության հիմնադիրը։ Աղքատ ծնողների զավակ լինելով՝ ստիպված էր զանազան աշխատանքներ փոխել, ապրելու միջոցներ հայթայթելու համար։ Հրջեց ամբողջ արաբական թերակղզին։ 600-ական թվականներին իրեն հայտարարեց մարգարե և սկսեց քարոզել իր ուսմունքը (գոյություն ունի մեկ աստված, որին պետք է հավատալ անվերապահորեն, գրախտին արժանանալու համար և չհավատացողին պետք է ֆիզիկապես ոչնչացնել)։

17. Նինոս-կիսաառասպելական թագավոր, որն իբր հիմնադրել է ասորական պետությունը, տալով նրան աշխարհագրական ամենաընդարձակ տարածքը, սկսած Եգիպտոսից մինչև Հնդկաստան։ Ըստ ավանդության, ամուսնացած է եղել դարձյալ կիսաառասպելական թագուհու՝ Շամիրամի հետ, որն, ի վերջո, սպանել է նրան։ Նաբուգոդոնոսոր (605—562 թթ. մ. թ. ա.)— Բաբելական թագավոր, նշանավոր զորավար, հասարակական-մշակութային գործիչ։ Իր երկրի վրա արշավող հակառակորդներին ջախջախելուց հետո զարկ տվեց շինարարական աշխատանքներին, վերակառուցեց Բաբելոնը, որը շուտով համաշխարհային հռչակ ստացավ, սկսեց խրախուսել արվեստներն ու գիտությունները։ Նրանից մեզ հասել են մի շարք արձանագրություններ, որոնք վերծանվել և հրատարակվել են։

ԵՐԻՑԱԿ ՆԵՐՍԻՍՅԱՆՔ

Առաջին անգամ հրատարակվել է «Բազմավեպի» արտահերթ հավելված «Որբունի» պատկերազարդ բացառիկ ամսագրի 1900 թ. համարում։ Համարն ամբողջովին նվիրված է հայ որբերին (այստեղից էլ անունը) և ամսագրի վաճառքից ստացված հասույթը հատկացվել է նրանց կարիքներին։

1. Նկատի ունի 1900 թ. սկզբներին, Փարիզում, արվեստագետ Լուբեյի նախագահությամբ բացված Գեղեցիկ արվեստների և գիտության ցուցահանդեսը, որին համապատասխան ստեղծագործություններով (նկարչական և կիրառական արվեստ, քանդակագործություն և այլն) մասնակցում էին աշխարհի գրեթե բոլոր պետությունների ներկայացուցիչները։ Ցուցահանդեսը տևեց մի քանի ամիս և այլևայլ պարբերականներում մեծ դրվատանքի արժանացավ։

2. Ակնարկում է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը, որը սկսվում է «Ձայն հառաչանաց հեծութեան սրտի...» տողով։

3. Հարցի համառոտ պատմությունն այսպիսին է. Ներսես Լամբրոնացու մեծ պապը՝ Օշինը, տեղափոխվելով Գանձակի կողմերից Կիլիկիա և հաստատվելով Լամբրոնում, ունենում է մի որդի՝ Հեթում անունով։ Սրա դստեր հետ ամուսնանում է Վասիլը՝ Ներսես Շնորհալու ավագ եղբայրը։ Հետագայում Հեթումի տղան, դարձյալ Օշին անունով, կին է առնում Շնորհալու կրտսեր եղբոր՝ Շահանի Շահանդուխտ աղջկան։ Սրանցից էլ ծնվում է երկու զավակ, ավագը՝ Գրիգորիս, որը հետագայում դարձավ կաթողիկոս և կրտսերը՝ Սմբատը, որն ապագայի Ներսես Շնորհալին է։

4. Տե՛ս Մովսես Խորենացի, «Պատմութիւն հայոց»։ Թիֆլիս, 1913 թ., էջ 278—280։ Հետագա բոլոր մեջբերումներն ու վկայակոչումները կատարված են այստեղից։

5. Իտալիան Շվեյցարիային միացնող միակ լեռնային ու վտանգաշատ ճանապարհի միջին մասերում բարձրանում է Սուրբ Բեռնարդոս լեռը, որի վրա, դեռ 19-րդ դարի սկիզբներից, ստեղծվել էր այդ ճանապարհի վրա վթարվածներին (ձնաբուքի զոհ, մարմնական վնասվածքներ) օգնող մի ընկերություն։ Վերջիններս ունեին իրենց համապատասխան դեղամիջոցները, առաջին օգնության համար անհրաժեշտ պարագաները և նույնիսկ վարժեցված հատուկ շներ, վթարվածներին գտնելու համար։

6. Պապի վարք ու բարքի մասին տե՛ս «Ազգային պակասություն մը...», № 7-ը։

7. Ներսես Կլայեցին նույն Ներսես Շնորհալին է։

8. Ներսես Շնորհալու գործերի հրատարակություններից հիշատակելի են 1827 թ. Փարիզում («Ողբ Եդեսիոն» իր ծանոթագրություններով), 1838 թ. Վենետիկում («Նամականի»), 1865 թ. Էջմիածնում («Թուղթ ընդհանրական»), և 1873 թ. Վենետիկում («Թուղթք». իմա. ճառեր, կոնդակներ, բանավիճային բնույթի գործեր) լույս տեսածները։

9. Նկատի ունի իր աշխատությունը. «Շնորհալի և պարագա յուր» խորագրով (Վենետիկ, 1873 թ., 558 էջ)։

10. Ակնարկում է իր «Ներսես Լամբրոնացի» հոդվածը, որը հրատարակվել է «Բազմավեպում» (1874 թ. № 7—9) և «Սիսուան և Լևոն Մեծագործ» աշ-

խատությունը (Վենետիկ, 1885), որտեղ մի ամբողջ գլուխ (էջ 86—95) նվիրված է Համբրոնացուն։

11. Ներսես Համբրոնացու ծննդյան թիվը հիշատակվում է 1153 կամ 1154, իսկ մահը՝ 1198 թ.։ Ծննդյան թվականի հետ կապված անճշտության հետևանքով էլ Ալիշանը նրա տարիքը թեականորեն է հիշատակում։

12. 1190 թվականին, Կիլիկիայի թագավոր Լևոն Ա-ի հանձնարարությամբ, Համբրոնացին մեկնում է դեպի Պոլիս, ողջունելու հաղթականորեն առաջ շարժվող Ֆրիդրիխ I Բարբարոսսային, որը կռվի էր ելել Օսմանյան կայսրության դեմ, այն տապալելու նպատակով։ Լևոն Ա-ն հույս ուներ այդ առաքելության շնորհիվ նվաճել Գերմանական թագավորի համակրանքը և Թուրքիայի պարտությունից հետո (որը գրեթե վճռված էր),..բարեբաստիկ պայմաններ ապահովել Կիլիկիայի հայկական պետության համար։ Սակայն 1190 թ. հունիսի 10-ին, Փոքր Ասիայի Սալեֆա գետն անցնելիս, Ֆրիդրիխ 1-ը խեղդվեց գետում. հենց այն ժամանակ, երբ նրան հասավ Ներսես Համբրոնացին։

13. Իմա. պրինցների։

14. Խոսքը վերաբերում է Ներսես Համբրոնացու «Ատենաբանութիւն» և «Թուղթ առ Լևոն կայսեր» աշխատություններին, որոնք «լավ ապացույց են նրա հռետորական շնորհքին» (Մ. Արեղյան)։

15. Համբրոնացու գործերի ժողովածուն «Խորհրդածութիւնք» խորագրով, հրատարակվել է Վենետիկում 1847 թ. (557 էջ)։ Այստեղ էլ զետեղված են հոդվածում հիշատակված աշխատությունները։

16. Համբրոնում տիրող աշխարհիկ և հոգևոր կարգն ամրապնդելու նպատակով Ներսես Համբրոնացին սկսում է ինքնուրույն օրենքներ սահմանել երկրի՝ իր տնօրինության ներքո գտնվող տարածքում, ինչպես նաև՝ պատժել անհրնազանդներին։ Սրանք էլ բողոքագրով դիմում են Լևոն Ա թագավորին, որն իր հերթին, սաստելով հանդերձ բողոքողներին, խստություններ է կիրառում նաև Ներսես Համբրոնացու նկատմամբ։ Այս հանգամանքն էլ առիթ է հանդիսացել Համբրոնացու համար, գրելու իր «Թուղթ առ Լևոն կայսեր» հայտնի գործը (տե՛ս նաև № 14-ը)։

17. Տե՛ս Ալիշան, «Սիսուան և Լևոն Մեծագործ», Վենետիկ, 1885, էջ 91։

18. Նկատի ունի Կիլիկիայի հայկական պետության առաջին թագավոր Լևոն Ա Ռուբինյանին։ Վերջինս գահակալեց 1187 թ. և կարողացավ ճկուն դիվանագիտություն վարելով՝ բարեկամություն հաստատել խաչակիրների հետ, ապա գաշնակից ունենալ Հռոմի պապին և Թուրքական Սալահեդդին սուլթանին, ու նրանց օգնությամբ մեծ բարգավաճման հասցնել իր երկիրը։ Լևոն Ա-ն Կիլիկիայում զարկ տվեց գիտություններին, ստեղծեց մշակույթի մի քանի նշանավոր կենտրոններ (օր՝. Համբրոն, Պապերոն), ծավալեց շինարարական բուռն գործունեություն, որի համար ստացավ «Լևոն Մեծագործ» հարգանունը։ Նա վախճանվել է 1219 թ. մայիսի 8-ին, այսինքն Ալիշանի՝ սույն հոդվածը գրելու ժամանակվանից (1900 թ.) մոտ յոթ հարյուր տարի առաջ, թեև որ ակնարկված է։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3
«Երգք Նահապետի» 15
Բանաստեղծություններ «Մաղթունի» և «Հայրունի» հատորներից . . 76
Ազգային երգերու և ուրիշ ավանդներու վրա 99
Ամսոց բնական նշանները 114
Թե ով է տղոց ամենեն սիրելի, զորավոր և հարկավոր վարպետը . . 121
Ամենահարկավոր ուսմունքը 124
Մանիր գքեզ 125
Մովսես Խորենացի և իր հայոց պատմությունը 136
Հովհաննես Սարկավագ վարդապետ 145
Շատոբրիան 155
Ազգային հատուկ դաստիարակություն 156
Մովսես Քերթողահայր հայոց 165
Ազգին պակսության կամ կատարելության վրա 170
Ապգասիրություն 176
Ազգային պակասություն մը, որ առաջադիմության միջոցները կարգիլ 189
Շիլլեր 200
Հրահանգ, զրոսանք և սփոփանք հասարակաց 203
Ազգախնամ տեսչություն 223
Նշմարք և նշխարք ի Հայաստան աշխարհի 231
Եղևնու ներքո 297
Երրյակ նեյսիսյանք 352
Մանոթագրություններ 367

Ղևոնդ Ալիշան

ԵՐԿԵՐ

Гевонд Алишан

СОЧИНЕНИЯ

(проза и поэзия)

(На армянском языке)

Ереван — 1981

Խմբագիր՝ Ռ. Մ. Մուրադյան
Նկարիչ՝ Մ. Ռ. Սասոյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյալամիրյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Գ. Ավագյան
Վերստուգող սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան

ИБ № 3142

Հանձնված է շարվածքի 11. 09. 80։ Ստորագրված է տպագրության 2. 04. 1981 թ.։ Ֆորմատ 60×84 1/16։ Տպագրական թուղթ № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 20,9 հրատ. մամ., 23,25 պայմ. տպ. մամ.։ Տպաքանակ 51000։ Պատվեր՝ 1804։ Գինը 2 ռ։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-9, ул. Теряна, 91.